ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

# ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (19-ՐԴ ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹԹ. - 1914 Թ.)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1999

Արման Կիրակոսյան

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Բովանդակություն Տիտղոսաթերթ Առաջաբան
Գլուխ առաջին Գլուխ երկրորդ Գլուխ երրորդ Գլուխ չորրորդ Գլուխ հինգերորդ
Ամփոփում Գրականության ցանկ Բովանդակություն (ըստ աղբյուրի)

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության մեջ առանցքային և կարևորագույն տեղ է զբաղեցնում Արևմտյան Հայաստանի խնդիրը, որը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝«Հայկական հարց» անվան տակ: Հանդիսանալով Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, Հայկական հարցը կարևոր տեղ գրավեց միջազգային հարաբերություններում, մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականության մեջ, Օսմանյան կայսրությունում ազդեցության ոլորտների և նրա տիրույթների բաժանման համար նրանց պայքարում:

19-րդ դ. առաջին կեսին Օսմանյան կայսրությունը դարձավ Եվրոպայի մեծ տերությունների միջև քաղաքական և տնտեսական մրցակցության առարկա: Առաջնորդվելով սեփական շահերով և բացառելով մրցակիցների քաղաքական և տնտեսական առավելության հաստատումն Օսմանյան կայսրությունում, տերություններից յուրաքանչյուրը քողարկում էր իր ձգտումները կայսրության տարածքային ամբողջականության պահպանման իմաստազուրկ սկզբունքով, որն իրականության մեջ վերածվեց բազմազգ և բազմակրոն երկրի մասնատման և փլուզման երկարատև գործընթացի:

Մերձավորարևելյան քաղաքականության ամենից ակտիվ դերակատարներից էր Մեծ Բրիտանիան: Մինչև առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակաշրջանը բրիտանական դիվանագիտությունը հաջողությամբ իրագործում էր դեռևս 1830-ական թթ. իր առջև դրված գերխնդիրները, այն է՝ հաստատել Մեծ Բրիտանիայի քաղաքական և տնտեսական ազդեցությունն Օսմանյան կայսրության նկատմամբ և ապահովել նրա տարածքային ամբողջականության պաշտպանությունն այլ տերությունների, հիմնականում Ռուսաստանի նկրտումներից: Նպատակադրվելով զրկել Ռուսաստանն Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների ավանդական հովանավորողի իրավունքից, Մեծ Բրիտանիայի կառավարությունը ձգտում էր բարենորոգումների իրագործման միջոցով ապահովել Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսական հզորացումը, մահմեդականների ու քրիստոնյաների իրավունքների հավասարությունն ու բարեկեցությունը և կանխել նրա ոչ թուրք ժողովուրդների ազատագրական շարժումները:

Բարենորոգումների պարտադրման Մեծ Բրիտանիայի և մյուս տերությունների քաղաքականությունը ոչ միայն չէր նպաստում ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ արևմտահայության վիճակի բարելավմանը կամ ազատագրական շարժումների հաղթանակին, այլև էլ ավելի էր վատթարացնում նրանց վիճակը: Նպատակ ունենալով կանխել Մեծ Բրիտանիայի շահերին հակասող հայկական ինքնավար նահանգի կամ արտոնյալ շրջանի ստեղծումը, որը հետագայում կարող էր հայտնվել Ռուսաստանի ազդեցության ոլորտում և անջատվել Օսմանյան կայսրությունից, բրիտանական դիվանագիտությունն անօգուտ փորձեր կատարեց բարելավել արևմտահայության վիճակը բարենորոգումների իրագործման միջոցով: Գիտակցելով, թե ինչ դեր կարող է խաղալ Հայկական հարցը տերությունների քաղաքականության մեջ, 1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդի, իսկ 1915 թթ. երիտթուրքական կառավարությունները կազմակերպեցին արևմտահայության համընդհանուր կոտորածներ և տեղահանություն:

Այսպիսով, 1878-1914 թթ. ընթացքում Մեծ Բրիտանիայի կառավարությունների քաղաքականությունը որոշակի դեր խաղաց արևմտահայության ճակատագրում, որի ուսումնասիրությունն ու գիտական ընդհանրացումն ունի արդիական քաղաքական և կարևոր պատմագիտական նշանակություն: Թեև հայ պատմագրությունը զգալի աշխատանք է կատարել այդ շրջանի Օսմանյան կայսրության, Արևմտյան Հայաստանի, ազատագրական շարժման պատմության, Հայկական հարցում եվրոպական տերությունների քաղաքականության ուսումնասիրման բնագավառում, առ այսօր բացակայում էր հատուկ աշխատություն, ուր սկզբնաղբյուրների հիման վրա լուսաբանված լիներ բրիտանական քաղաքականությունն արևմտահայության խնդրում: Ներկա աշխատության մեջ փորձ է կատարված լուսաբանել և վերլուծել Մեծ Բրիտանիայի քաղաքականության ձևավորումն ու զարգացման հիմնական ուղղությունները Օսմանյան կայսրության, նրա ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, արևմտահայության հանդեպ, բրիտանական դիվանագիտության գործունեությունը, դերն ու նշանակությունը Հայկական հարցի արծարծման տարբեր փուլերում 19-րդ դարի 30-ական թթ. մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Գլխավորաբար Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության (Ֆորին Օֆիսի) արխիվային և հրապարակված փաստաթղթերի, անգլիական այլ աղբյուրների ու գրականության հիման վրա գրված ներկա աշխատությունը գալիս է ամբողջացնելու և ամփոփելու բրիտանական կառավարությունների քաղաքականությունը և դիվանագիտության գործունեությունը Հայկական հարցում մինչև առաջին համաշխահային պատերազմն ընկած ժամանակաշրջանում:

Հեղինակն աշխատել է Երևանի, Մոսկվայի, Լոնդոնի, Աթենքի գրադարաններում և արխիվներում, հավաքել, հետազոտել ու վերլուծել է աշխատության ժամանակագրական շրջանին վերաբերող մեծ ծավալի վավերագրական նյութեր, մասնավորապես, բրիտանական դիվանագիտության գրեթե ողջ գրագրությունը, որն արժեքավոր աղբյուր է հանդիսանում ոչ միայն Մեծ Բրիտանիայի, մյուս տերությունների, Օսմանյան կայսրության քաղաքականության, հայկական բարենորոգումների ծրագրերի մշակման և իրագործման գործընթացի, այլև արևմտահայության վիճակի և ազատագրական շարժումների ուսումնասիրության համար: Օգտագործված նյութերը պայմանականորեն կարելի է բաժանել հինգ խմբի:

Առաջին խմբին են պատկանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող Մեծ Բրիտանիայի Պետական արխիվում (Public Record Office) պահվող արտաքին գործերի նախարարության հ. 424. Գաղտնի լրագրություն, Թուրքիա (Confidential Print, Turkey), հ. 371. Արտաքին գործերի նախարարության քաղաքական գրագրություն (Foreign Office Political Correspondence), հ. 881. Արտաքին գործերին վերաբերող գաղտնի փաստաթղթեր (Confidential Papers Relating to Foreign Affairs) և կառավարության հ. 37. Կառավարական փաստաթղթեր, 1880-1914 (Cabinet Papers, 1880-1914) ֆոնդերի փաստաթղթերը: Ատենախոսն օգտագործել է նաև բրիտանական քաղաքականությանը վերաբերող ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվի «Փաստաթղթերի պատճենների և քաղվածքների հավաքածո» և հ. 57, ինչպես նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի (АВПР) Քաղաքական արխիվ (Политический архив) և Գրասենյակ (Канцелярия) ֆոնդերի նյութերը:

Աղբյուրների երկրորդ խումբը կազմում են 1854-1897, 1909, 1928, 1936, 1960 թթ. Լոնդոնում հրատարակված «Արևելյան փաստաթղթեր» (Eastern Papers) և «Թուրքիա» (Turkey)

դիվանագիտական, խորհրդարանական և այլ փաստաթղթերի ժողովածուները, որոնցում զետեղված վավերագրերի հիմնական մասը նույնպես գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Աշխատությունը գրելիս հեղինակը լայնորեն օգտագործել է միջազգային համաժողովներին և պայմանագրերին1, եվրոպական տերությունների հետ բանակցություններին2, բարենորոգումների իրագործմանը3, Օսմանյան կայսրության քրիստոնյա, մասնավորապես, հայ բնակչության վիճակին, Հայկական հարցին4

_____

1 Eastern Papers. Part VIII, IX. Protocol Signed at Vienna on the 8rd of April, 23rd of May, 1854, by the Representatives of Austria, France, Great Britain and Prussia. London, 1854; Eastern Papers. Part XVI. Instructions to Lord John Russell on Proceeding to Vienna. London, 1855; Protocol of Conferences Held at Paris Relative to the General Treaty of Peace. London, 1856; Turkey, No. 1 (1876-1877). Correspondence Respecting the Conference in Constantinople and the Affairs in Turkey. London, 1877; Turkey, No. 27 (1878). Further Correspondence Respecting the Preliminary Treaty of Peace between Russia and Turkey Signed at San-Stefano. London, 1878; Turkey, No. 36 (1878). Correspondence Respecting the Convention between Great Britain and Turkey of June 4, 1878. London, 1878; Turkey, No. 39 (1878). Correspondence Relating to the Congress of Berlin with thge Protocol of the Congress. London, 1878.

2 Eastern Papers. Part V. Communications Respecting Turkey made to Her Majesty`s Government by the Emperor of Russia, with the Answers returned to them. January to April 1853. London, 1854; Eastern Papers. Part XIII. Papers Relating to the Negotiations at Vienna on the Eastern Question. London, 1855; Eastern Papers. Part XV. Communications with the Austrian Government. London, 1855; Russia, No. 2 (1877). Correspondence Respecting the War between Russia and Turkey. London, 1877; German Diplomatic Documents. 1871-1914. Vol. 1, London, 1928; Lord Salisbury`s Conversations with the Tzar at Balmoral, 27 and 29 September, 1896. –—The Slavonic and Eastern European Review, 1960, vol. 34, No. 92.

3 Eastern Papers. Part XVII. Firman and Hatti-Sherif by the Sultan, Relative to Privilegies and Reforms in Turkey. London, 1856; Papers Relating to Administrative and Financial Reforms in Turkey. 1858-1861. London, 1861; Turkey, No. 17 (1877). Instructions Addressed to Her Majesty`s Embassy at Constantinople Respecting Financial and Administrative Reforms and the Protection of Christians in Turkey. 1856-1875, London, 1877; Turkey, No. 51 (1878). Correspondence Respecting Reforms in Asiatic Turkey, London, 1878.

4 Correspondence Respecting the Condition of Protestants in Turkey. 1853-1854. London, 1854; Eastern Papers. Part LXVII (1875-1876), London, 1883; Part LXVIII (1876-1877), London, 1884;

սահմանադրական շարժմանը5 վերաբերող բրիտանական դիվանագիտական փաստաթղթերը: Հարուստ փաստական նյութ են պարունակում նաև Երևանում, Մոսկվայում և Պետերբուրգում տպագրված փաստաթղթերի ժողովածուները6:

Արժեքավոր աղբյուր են հանդիսացել Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչներ և դիվանագետներ Կաննինգի, Դիզրայելիի, Գլադստոնի, Չերչիլի, սուլթան Աբդուլ Համիդի կենսագրությունները7, Վիկտորիա թագուհու նամակները, Ջեմալ փաշայի, Իսմաիլ Քեմալի,

_____

Reports received from Her Majesty`s Consuls Relating to the Condition of Christians in Turkey, London, 1861, 1867; Turkey: No. 15, 16 (1877), London, 1877; No. 1, 53, 54 (1878), London, 1878; No. 10 (1879), London, 1879; No. 4, 7, 23 (1880), London, 1880; No. 6 (1881), London, 1881; No. 1 (1889), London, 1889; No. 1 (1890), London, 1890; No. 1 (1890-1891), London, 1891; No. 1 (1892),

London, 1892; No. 1 (1895), London, 1896; No. 1, 2, 3, 8 (1896), London, 1896; No. 1 (1897), London, 1897; British Documents on the Origin of War. 1898-1914. Vol. X, London, 1936.
5 Turkey, No. 1 (1909). Correspondence Respecting the Constitutional Movement in Turkey. 1908. London, 1909.
6 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) /Պրոֆ. Ջ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ: Երևան, 1972; Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов / Под ред. проф. М.Г.Нерсисяна. Ереван, 1982; Сборник договоров России с другими государствами. 1856-1917. М., 1952; Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 – 10 мая 1914 гг. Петроград, 1915; Секретная записка русского посла в Лондоне Е.Е.Стааля о беседе с лордом Солсбери. – В кн.: Проблемы британской истории, М., 1973.
7 Malcolm-Smith E.F. The Life of Stratford Canning. London, 1933; Monypenny W.F. and Buckle G. The Life of Disraeli. Vol. VI; Jenkins R. Gladstone. London, 1996; Knaplund P. Gladstone`s Foreign Policy. New York, London, 1935; Magnus P. Gladstone. London, 1954; Cecil G. Life of Robert Marquis of Salisbury. London, 1921; Kennedy A. Salisbury. 1830-1903. Portrait of a

Սազոնովի, Փիրսի, Վիտտեի, Լամզդորֆի օրագրերն ու հուշագրությունները8:

Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը և բրիտանական դիվանագիտության գործունեությունը Հայկական հարցում, Օսմանյան կայսրության կառավարության հակահայկական քաղաքականությունը, արևմտահայության ծանր վիճակը լայնորեն լուսաբանվել են 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին Անգլիայում և ԱՄՆ-ում հրատարակված գրականության մեջ: Փաստագրական մեծ նյութ պարունակող բազմաթիվ հոդվածների և գրքերի հեղինակներ էին հասարարական, քաղաքական և կրոնական գործիչներ, միսիոներներ, դիվանագետներ, գիտնականներ, լրագրողներ և հրապարակախոսներ, որոնց աշխատությունների վերլուծությունը կարևոր նշանակություն է ունեցել բրիտանական դիվանագիտության դերը Հայկական հարցում ընդհանրացնելու գործում: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում Ջ.Էբբոտի, Լ.Էբբոտի, Է.Բլիսի, Ջ.Բրայսի, Ռ.Դեյվիի, Է.Դիլլոնի, Ու.Գլադստոնի, Է.Գոդկինի, Մ.Գյուլեսյանի, Հ.Հեփվորթի, Դ.Կալոպոտակեսի, Մ.Մակքոլի, Մ.Մանգասարյանի, Ջ.Մակդերմոտի, Է.Փիրսի, Թ.Պետերսոնի, Չ.Ռոբերտսի, Պ.Ռորբախի, Ջ.Ռասսելի, Ու.Սթեդի, Ու.Սթրայդի, Ա.Թերրելի, Չ.Ուիլյամսի, Ա.Ուիլյամսի, Չ.Վուդզի և այլոց հրապարակումները9:

_____
Statesman. London, 1953; Taylor R. Salisbury. London, 1975; Pears E. Life of Abdul Hamid. New York, 1917; Gilbert M. Winston S. Churchill. Vol. 3: 1914-1916. London, 1971.
8 Victoria Queen. Letters. Vol. II. London, 1926; Djemal Pasha. Memories of a Turkish Statesman, 1913-1919. London, 1922; The Memories of Ismail Kemal. London, 1920; Pears E. Forthy Years in Constantinople. London, 1915; Sazonov S. Fateful Years. New York, 1928; Витте С. Воспоминания. Т. 2, М., 1960; Из дневника В.Ламздорфа. – Вопросы истории, 1977, No. 6.
9 Abbott G. Turkey in Transition. London, 1909; Abbott L. Armenian Question. – The Outlook, 1896, vol. 54; Bliss E. Turkey and Armenian Atrocities. Philadelphia, 1896; Bryce J. Transcaucasia and Ararat. London, 1896; Davey R. Turkey and Armenia. – The Fortnightly Review, 1895, vol. 63; Dillon E. Armenia: An Appeal. – The Contemporary Review, 1896, vol. 69; Dillon E. The Fiasco in Armenia. – The Fortnightly Review, 1896, vol. 65; Gladstone W. Bulgarian Horrors and the Question of the East. London, 1876; Godkin E.L. The Armenian Resolutions. – The Nation, 1896,

Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրման համար կարևոր նշանակություն են ունեցել բրիտանացի, ամերիկացի և հույն պատմաբաններ Դ.Բիլզի, Դ.Բլեյսդելի, Կ.Քլեյթոնի, Ա.Կաննինգհեմի, Ռ.Դեյվիսոնի, Ու.Դաուսոնի, Ռ.Դուգլասի, Ջ.Գլիսոնի, Ջ.Գրենվիլի, Ջ.Հելլերի, Մ.Ջեֆերսոնի, Է.Քեդուրիի, Ու.Լանգերի, Ի.Լի Դուայթի, Պ.Մարշի, Ջ.Փարկի, Լ.Փենսոնի, Ռ.Սեթոն-Ուոթսոնի, Հ.Թեմփերլիի, Ք.Ուոքերի, Կ.Ուեբսթերի, Ռ.Զայդների, Գ.Պապադոպուլոսի արժեքավոր աշխատությունները:10

_____

vol. 62; Gulesian M. England`s Hand in Turkish Massacres. – The Arena, 1897, vol. 17; Hepworth H. Through Armenia on Horseback. London, 1898; Kalopothakes D. The Constantinople Massacre. – The Nation, 1896, October 8; Maccoll M. The Constantinople Massacre and its Lesson – The Contemporary Review, 1895, vol. 68; Mangasarian M. Armenia`s Impending Doom. – The Forum, 1896, vol. 21; McDermot G. The Great Assassin and the Christians of Armenia. – The Catholic World, 1896, vol. 64; Pears E. Turkey and its People. London, 1911; Peterson T. Turkey and Armenian Crisis. – The Catholic World, 1895, vol. 61; Roberts Ch. A Mother of Martyrs. – The Atlantic Monthly, 1899, vol. 83; Rohrbach P. The Contribution of the Armenian Question. – The Forum, 1900, vol. 29; Russell G. Armenia and the Forward Movement. – The Contemporary Review, 1897, vol. 71; Stead W. The Eastern Ogre; or St. George to Rescue. – The Review of Reviews, 1896, vol. 14; Stride W. The Immediate Future of Armenia; The Suggestion. – The Forum, 1896, vol. 22; Terrell A. The Interview with Sultan Abdul Hamid. – The Century Magazine, 1897, vol. 55; Williams A., Gabrielian M. Bleeding Armenia. Its History and Horrors. New York, 1896; Williams Ch. The Armenian Campaign. London, 1878; Woods Ch. The Danger Zone of Europe. London, 1911.

10 Beales D. From Castlereagh to Gladstone. 1815-1885. London, 1971; Blaisdell D. European Financial Control in the Ottoman Empire. New York, 1929; Bourne K. The Foreign Policy of Victorian England. 1830-1902. Oxford, 1970; Clayton C. Britain and the Eastern Question. London, 1971; Cunningham A. Stratford Canning and the Tanzimat. Chicago, 1968; Davison R. The Armenian Crisis, 1912-1914. New York, 1948; Dawson W. Richard Cobden and Foreign Policy. London, 1926; Douglas R. Britain and the Armenian Question. 1894-97. – The Historical Journal, 1976, No. 19; Gleason J. The Genesis of Russophobia in Great Britain. London, 1950; Grenville J. Lord Salisbury and Foreign Policy. London, 1964; Heller J. British Policy Towards the Ottoman

Սկզբնաղբյուրի արժեք են ներկայացնում քննարկվող շրջանում Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում լույս տեսած, Հայկական հարցին և եվրոպական տերությունների արևելյան քաղաքականությանը վերաբերող ժողովածուները11, Ա.Ամֆիտեատրովի, Ա.Վանդալի, Մ.Գուտորի, Լ.Կամարովսկու, Յ.Լազարևի, Ա.Տիրկովայի, Պ.Չիխաչյովի հոդվածներն ու գրքերը12:

_____

Empire. 1908-1914. London, 1983; Jefferson M. Lord Salisbury and the Eastern Question, 1890-1898. – The Slavonic and East European Review, 1960, vol. 39; Kedourie E. England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914-1921. London, 1956; Langer W. Diplomacy of Imperialism. 1890-1902. Vol. 1, New York, 1935; Lee Dwight E. Great Britain and the Cyprus Convention Policy of 1878. Cambridge, 1934; Marsh P. Lord Salisbury and the Ottoman Massacres. – The Journal of British Studies, 1972, Maj, vol. XI, No. 2; Park J. British Prime Ministers of the Nineteenth Century. London, 1950; Penson L. The Principles and Methods of Lord Salisbury`s Foreign Policy. – Cambridge Historical Journal, 1935, vol. 87-106; Seton-Watson R. Disraeli, Gladstone and the Eastern Question. New York, 1962; Temperley H. and Penson L. Foundations of British Foreign Policy from Pitt (1792) to Salisbury (1902). Cambridge, 1938; Walker Ch. The Survival of a Nation. New York, 1980; Webster C. The Foreign Policy of Palmerston: Britain, the Liberal Movement and the

Eastern Question. London, 1951; Zeidner R. Britain and the Launching of the Armenian Question. – International Journal of Middle East Studies, 1976, No. 7; Papadopoulos G. England and the Near East. 1896-1898. Thessalonika, 1969.
11 Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898; Положение армян до вмешательства держав в 1895 году. М., 1896.
12 Амфитетров А. Армянский вопрос. СПб, 1906; Вандаль А. Армяне и турецкие реформы. СПб, 1908; Гутор М. Новейшая история Турции и Персии. Тифлис, 1913; Камаровский Л. Восточный вопрос и его жертвы. – Новое слово, 1896, декабрь; Лазарев Я. Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна. Тифлис, 1895; Тыркова А. Старая Турция и младотурки. Петроград, 1916; Чихачев П.А. Великие державы и Восточный вопрос. М., 1970.

Օսմանյան կայսրության նկատմամբ Մեծ Բրիտանիայի և մյուս տերությունների քաղաքականության ուսումնասիրման գործում իրենց որոշակի ներդրումն են կատարել խորհրդային շրջանի պատմաբաններ Ն.Բոլխովիտինովը, Գ.Բոնդարևսկին, Բ.Բորյանը, Է.Գալեվին, Լ.Իստյագինը, Ե.Կուրղինյանը, Յ.Պետրոսյանը, Ֆ.Ռոտշտեյնը, Ա.Սիլինը, Ս.Սկազկինը, Ե.Տարլեն, Ի.Ֆադեևան, Վ.Խվոստովը, Վ.Շերեմետը, Օ.Շպարոն, Վ.Շպիլկովան13:

_____
13 Болховитинов Н. О позиции Солсбери в Восточном вопросе осенью 1896 г. – В кн: Проблемы британской истории, М., 1973; Бондаревский Г. Английская политика и международные отношения в бассейне Персидского залива (конец Х1Х – начало ХХ вв.). М., 1968; Борьян Б. Армения, международная дипломатия и СССР. Ч. 1, М.-Л., 1928; Галеви Э. История Англии в эпоху империализма. М., 1957; Истягин Л. Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по Армянскому вопросу, 1912-1914 гг. – В кн.: Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959; Кургинян Е. Европейская дипломатия и Армянский вопрос в 90-х годах Х1Х в. – Ученые записки Московского областного пединститута, 1968. Т. 191, вып. 9; Петросян Ю. Турция. – В кн.: Зарождение идеологии национально-освободительного движения. М., 1973; Ротштейн Ф. Международные отношения в конце Х1Х века. М.-Л., 1960; Силин А. Экспансия Германии на Ближнем Востоке в конце Х1Х в. М., 1971; Сказкин С. Конец австро-русско-германского союза. Т. 1, М., 1928; Тарле Е. Англия и Турция. Исторические корни и развитие конфликта. – Анналы, 1923, No. 3; Фадеева И. Османская империя и англо-турецкие отношения в середине Х1Х в. М., 1982; Хвостов В. Ближневосточный кризис 1895-1897 гг. – Историк-марксист, 1929, Т. 13; Шеремет В. Османская империя и Западная Европа. Вторая треть Х1Х в. М., 1986; Шпаро О. Захват Кипра Англией. М., 1974; Шпилькова В. Из истории проникновения

Աշխատության թեմային վերաբերող մի շարք խնդիրներ լուսաբանվել են հայ պատմաբաններ Ջ.Կիրակոսյանի, Գ.Հարությունյանի, Լ.Բայրամյանի, Ա.Կիրակոսյանի, Լեոյի, Հ.Ինճիկյանի, Ա.Համբարյանի, Գ.Գանգրունու, Ս.Մարկոսյանի, Լ.Մկրտչյանի, Հ.Վարդանյանի, Գ.Գալոյանի, Ռ.Կոջոյանի, Մ.Քոչարի, Ա.Նասիբյանի, Ե.Սարգսյանի, Ռ.Սաֆրաստյանի, Ս.Ստեփանյանի, Կ.Թարոյանի, Հ.Սիմոնյանի, Ս.Պողոսյանի, Մ.Սոմակյանի, Ռ.Հովհաննիսյանի, Վ.Քյուրքչյանի14 և ուրիշների կողմից:

_____
американского капитала в Турцию в Х1Х и начале ХХ века. – Ученые записки МГПИ, 1957, Т. С1Х, No. 6.
14 Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը: Երևան, 1978, 1980; Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դ. 90-ական թթ. – 1914 թ.): Ե.,

1982; Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը: Ե., 1967; Բայրամյան Լ. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում: Ե., 1982; Ինճիկյան Հ. Օսմանյան կայսրության անկումը: Ե., 1984; Գալոյան Գ. Պատմության քառուղիներում: Ե., 1982; Գանգրունի Հ. Հայ հեղափոխությունը Օսմանյան բռնատիրության դեմ (1890-1910): Բեյրութ, 1983; Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը: Հ. Ա: Փարիզ, 1934; Համբարյան Ա. Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914): ե., 1979; Պողոսյան Ս. Գոյատևման պայքարի քառուղիներում: Ե., 1988; Մարկոսյան Ս. Արևմտահայության վիճակը 19-րդ դ. վերջերին: Ե., 1968; Մկրտչյան Լ. Զեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ.: Ե., 1995; Սիմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը: Ե., 1986; Վարդանյան Հ. Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դ. վերջին քառորդում: Ե., 1967; Նասիբյան Ա. Բրիտանիան և Հայկական հարցը: 1915-1923: Բեյրութ, 1994; Арутюнян Г. Политика Англии в Армянском вопросе в 90-х годах Х1Х в. и позиция великих держав. – Вестник Ереванского университета, 1988, No. 2-3; Киракосян А. Великобритания и Армянский вопрос (90-е годы Х1Х века). Е., 1990; Коджоян Р. Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны. Дис., канд., ист., наук. – Е., 1989; Кочар М. Армяно-турецкие общественно-

Աշխատության մեջ օգտագործված աղբյուրների հինգերորդ խմբին են պատկանում Անգլիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի հասարակական-քաղաքական և գիտական հանդեսների նյութերը, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության բացահայտման, ինչպես նաև Հայկական հարցում մեծ տերությունների, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի դիվանագիտության գործունեության ուսումնասիրման գործում: Մասնավորապես, հեղինակը լայնորեն օգտագործել է «Spectator», «Contemporary Review», «Fortnightly Review» «Liberal Magazine», «Historical Journal», «Journal of British Studies», «Journal of Contemporary History», «Middle Eastern Studies», «Slavonic and East European Review» (Լոնդոն), «Outlook», «Review of Reviews», «Century Magazine», «Catholic World», «Nation», «Forum» (Նյու Յորք), «Arena», «Atlantic Monthly» (Բոստոն), «Вестник Европы» , «Новое слово», «Русский вестник», «Морской сборник» (Պետերբուրգ), «Анналы», «Историк-марксист», «Новая и новейшая история» (Մոսկվա) պարբերականների էջերում հրապարակված նյութերը:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից (21 ենթագլուխներով), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 517 էջ: Յուրաքանչյուր գլուխ օժտված է համապատասխան ծանոթագրություններով, ուր ընթերցողը անհրաժեշտ տեղեկություններ կարող է քաղել օգտագործված աղբյուրների, ինչպես նաև Հայկական հարցին առնչված Մեծ Բրիտանիայի

---

политические отношения и Армянский вопрос в конце Х1Х – начале ХХ в. Е., 1988; Саркисян Е. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти Х1Х и начале ХХ вв. Е., 1972; Сафрастян Р. Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. Х1Х в.). Е., 1985; Степанян С. Армения в политике империалистической Германии. Е., 1975; Тароян К. Народные движения в Сасуне и других районах Западной Армении в 90-х гг. Х1Х в.: Автореф. дис...канд. ист. наук.- Е., 1966; Sarkissian A. History of the Armenian Question to 1885. Urbana, 1938; Somakian M. Empires in Conflict: Armenia and the Great

Powers, 1895-1920. London, 1995; Hovannisian R. Armenia on the Road of Independence 1918. Berkeley-LA., 1967; Kurkjan V. A History of Armenia. New York, 1958.

և այլ տերությունների քաղաքական գործիչների ու դիվանագետների կյանքի և գործունեության մասին:

Արման Կիրակոսյան

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Բովանդակություն Տիտղոսաթերթ Առաջաբան
Գլուխ առաջին Գլուխ երկրորդ Գլուխ երրորդ Գլուխ չորրորդ Գլուխ հինգերորդ
Ամփոփում Գրականության ցանկ Բովանդակություն (ըստ աղբյուրի)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 19-ՐԴ ԴԱՐԻ 30-70-ԱԿԱՆ ԹԹ.

## 1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

18-րդ դ. վերջին -19դ դ. սկզբին Մեծ Բրիտանիան դարձավ աշխարհի առաջատար և հզոր արդյունաբերական ու առևտրական պետություններից մեկը: Նրա դիրքերն ամրապնդվեցին հատկապես նապոլեոնական Ֆրանսիայի պարտության արդյունքում, մասնավորապես, Վիեննայի վեհաժողովից հետո, երբ այն վերածվեց խոշորագույն գաղութատիրական տերության: 19-րդ դ. երկրորդ քառորդը բնութագրվում է բրիտանական գաղութատիրական քաղաքանության ակտիվացմամբ Հնդկաստանում, Չինաստանում, Աֆղանստանում, Նոր Զելանդիայում և Ավստրալիայում: Առաջ անցնելով մյուս տերություններից տնտեսական զարգացման մակարդակով, Մեծ Բրիտանիան ձգտում էր ամրապնդել իր առևտրաարդյունաբերական գերակշռությունը: Այդ նպատակի իրագործումն ուղեկցվում էր հարաբերությունների սրմամբ մյուս տերությունների և, մասնավորապես, Ֆրանսիայի հետ: Թեև վերջինս թուլացել էր, սակայն մնում էր Մեծ Բրիտանիայի հիմնական առևտրաարդյունաբերական և գաղութատիրական մրցակիցը, որին զսպելու խնդրում բրիտանական կառավարությունը փորձում էր համագործակցել Ավստրիայի և Պրուսիայի հետ, միաժամանակ ձգտելով հակադրել նրանց Ռուսաստանին: Խանդով վերաբերվելով մյուս տերությունների գաղութատիրական ծրագրերին, Մեծ Բրիտանիան կիրառում էր ուժերի հավասարակշռության պահպանման քաղաքականություն, որի հիմքում ընկած էր այնպիսի մի համակարգի ստեղծում, ուր եվրոպական պետությունները մշտապես զբաղված լինեին ուժերի վերախմբավորմամբ՝ իրենց սեփական միջավայրից ուժեղ մրցակից երևան չբերելու նպատակով1: Մեծ Բրիտանիան փորձում էր խուսափել որևէ եվրոպական տերության չափազանց

---

1 Bourne K. The Foreign Policy of Victorian England. 1830-1902. Oxford, 1970, p. 10; Temperley H.W.V. The Victorian Age in Politics, War and Diplomacy. Cambridge, 1928, p. 55.

հզորացումից և համապատասխանաբար իրականացնում նրա հանդեպ մերձեցման կամ թշնամության, սատարելու կամ ճնշելու քաղաքականություն:2

19-րդ դ. 30-ական թթ. սկսած աստիճանաբար աճում է Մերձավոր Արևելքի և Բալկանյան թերակղզու նշանակությունը եվրոպական տերությունների քաղաքականության մեջ, սրվում նրանց մրցակցությունը Օսմանյան կայսրության նկատմամբ քաղաքական և տնտեսական ազդեցություն հաստատելու նպատակով: Օսմանյան կայսրությունը գտնվում էր կարևորագույն ռազմավարական և առևտրական ճանապարհների քառուղիներում, որոնց նկատմամբ հսկողություն հաստատած յուրաքանչյուր եվրոպական պետություն կարող էր դառնալ աշխարհի հզորագույն տերություններից մեկը: Նման աշխարհաքաղաքական իրավիճակի ձևավորման արդյունքում Օսմանյան կայսրությունը դարձավ ուժերի հավասարակշռության եվրոպական համակարգի վճռորոշ օղակներից մեկը:3

Եվրոպական տերությունների մերձավորարևելյան քաղաքականության մեջ որոշակիորեն ձևավորվում է երկու էապես իրար հակասող միտում: Առաջինը՝ Օսմանյան կայսրության

տարածքային ամբողջականության պաշտպանությունն էր, նրա վերածումը տերությունների տնտեսահումքային կցորդի, ընդարձակ մի ծայրագավառի, որն ընկած էր եվրոպական մայր երկրների և նրանց աֆրոասիական գաղութների միջև: Երկրորդը՝ օսմանյան տարածքների բաժանումն էր կամ ազդեցության ոլորտների հաստատումը տերությունների միջև, նախքան նրանց անկախության ձեռք բերումը ազգային ազատագրական շարժումների արդյունքում: Այս երկու հակադիր ուղղությունների (հատկապես երկրորդի) իրագործումը պահանջում էր համագործակցություն բոլոր տերությունների միջև՝ հիմքում ունենալով եվրոպական հավասարակշռության պահպանման գաղափարը:4

Նապոլեոնի պարտությունից հետո Մեծ Բրիտանիան սկսում է դիտել Ռուսաստանը որպես Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանմանը պոտենցիալ վտանգ

---

2 Beales D. From Castlereagh to Gladstone. 1815-1885. London, 1971, p. 159.
3 Фадеева И.Л. Османская империя и англо-турецкие отношения в середине Х1Х в. М., 1982, с. 29; Тодорова М.Н. Англия, Россия и Танзимат. М., 1983, с. 49.
4 Шеремет В.И. Османская империя и Западная Европа. Вторая треть Х1Х в. М., 1986, с. 260.

ներկայացնող պետություն: Դեռևս 18-րդ դ. վերջին ռուս-թուրքական պատերազմների արդյունքում Ռուսաստանի տարածքային ձեռքբերումները սկսում են անհանգստացնել անգլիական իշխանություններին, վկայել Եվրոպայում նոր հզոր ուժի երևան գալու մասին: Սակայն երկու պետությունների ընդհանուր պայքարը Նապոլեոնի դեմ ժամանակավորապես ետին պլան մղեց ձևավորվող անգլո-ռուսական հակասություններն ինչպես Մերձավոր, այնպես էլ Միջին Արևելքում: Ռուսաստանի հաջողությունները 1826-1828 թթ. ռուս-պարսկական և հատկապես 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքում էլ ավելի սրեցին Մեծ Բրիտանիայի մտահոգությունը Ռուսաստանի հզորացմամբ և նրա ազդեցության ընդլայնմամբ հարավում, ինչպես նաև Հնդկաստանի անվտանգությանը սպառնացող «ռուսական վտանգով»:5 Հակառուսական դիրքորոշման ձևավորման մեջ ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև 1830 թ. լեհական ապստամբության ճնշումը: Սակայն Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության հակառուսական դիրքորոշումը վերջնականապես ձևավորվեց 1831-1833 թթ. թուրք-եգիպտական բախումից և, հատկապես՝ 1833 թ. Ունքյար-Իսքելեսիյում ստորագրված ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո: Վերջինս համարվում է ռուսական դիվանագիտության մեծագույն հաղթանակը, քանի որ այն ձեռք բերվեց ոչ թե պատերազմի, այլ թուրք-եգիպտական բախման արդյունքում, Ռուսաստանի ակտիվ միջնորդության շնորհիվ: Ռուսաստանը և Թուրքիան պարտավորվում էին մշտապես խորհրդատվություններ անցկացնել «իրենց փոխադարձ անդորրին և անվտանգությանը» վերաբերող հարցերի շուրջ, ինչպես նաև օգնել միմյանց երրորդ տերության հարձակման դեպքում: Պայմանագրի գաղտնի հոդվածով նախատեսվում էր, որ ռուսական կառավարության պահանջով Թուրքիան պարտավորվում է փակել նեղուցների մուտքն այլ պետությունների ռազմանավերի համար:6

18-րդ դ. 90-ական և 19-րդ դ. 50-ական թթ. միջև ընկած ժամանակահատվածում ռուս-թուրքական հարաբերությունները՝ պատերազմների կամ ուղիղ բանակցությունների միջոցով պայմանավորվածության ձեռք բերումն առանց երրորդ պետության

միջնորդության, հավասարակշռում էին միջազգային իրավիճակը Մերձավոր Արևելքում, Հարավ-Արևելյան Եվրոպայում, Փոքր Ասիայում և Անդրկովկասում: Դա վերաբերում էր

5 Gleason J.H. The Genesis of Russophobia in Great Britain . London, 1950, p. 12.
6 История дипломатии. Т. 1, М., 1959, с. 555.

երկու սևծովյան տերությունների ինչպես տնտեսական հարաբերություններին, այնպես էլ Բալկաններում ապստամբական շարժումների և Արևելյան Մերձսևծովյանի տարածքային խնդիրներին, Պաղեստինի քրիստոնեական սրբավայրերին:

Սակայն ռուս-թուրքական հարաբերությունները կազմում էին այդ տարածաշրջանում միջազգային հարաբերությունների զարգացման ընդհանուր պատկերի միայն մեկ մասը: Եվրոպայի առաջատար տերությունների այստեղ ամրապնդվելու ձգտումը, նրանց պայքարը Օսմանյան կայսրության նկատմամբ հսկողություն և ազդեցություն հաստատելու նպատակով առարկայորեն գործում էին վերջինիս և Ռուսաստանի մերձեցման դեմ: Նոր ռուս-թուրքական դաշինքի ուրվականը սկսել էր անհանգստացնել եվրոպական տերությունների և, առաջին հերթին, Մեծ Բրիտանիայի պետական գործիչներին:

Ամբողջ 18-րդ դ. ընթացքում Մեծ Բրիտանիան գրեթե հետաքրքրություն հանդես չէր բերում Օսմանյան կայսրության հանդեպ: Ավելին, 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում նա նույնիսկ աջակցում էր Ռուսաստանին՝ ռուս-անգլիական ավանդական առևտրական առնչությունների բերումով:

Օսմանյան կայսրության նկատմամբ բրիտանական նոր արտաքին քաղաքական գծի մշակումն ու ձևավորումը համընկավ այսպես կոչված «Փալմերսթոնի դարաշրջանի» հետ: Բավականին երկար ժամանակ լինելով արտաքին գործերի նախարար, իսկ այնուհետև՝ վարչապետ, Հենրի Ջոն Փալմերսթոնը7 փաստորեն ձևավորում էր Բրիտանական կայսրության արտաքին քաղաքականությունը: Հայտնի է Փալմերսթոնի հետևյալ արտահայտությունը, որը բնութագրում է Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության հետագա ողջ ընթացքը. «Համարել, որ այս կամ այն երկիրը պետք է դիտվի որպես Անգլիայի հավերժ դաշնակից կամ մշտական թշնամի, նշանակում է վարել կարճատես քաղաքականություն: Մենք չունենք հավերժ դաշնակիցներ, ինչպես և չունենք մշտական թշնամիներ: Հավերժ ու մշտական են միայն մեր շահերը և մեր պարտքն է պաշտպանել դրանք»:8

7 Փալմերսթոն (Palmerston) Հենրի Ջոն (1784-1865) - բրիտանացի պետական գործիչ և դիվանագետ: 1809-1828 թթ.՝ ռազմական նախարար, 1830-1834, 1835-1841, 1846-1851 թթ.՝ արտաքին գործերի նախարար, 1852-1855 թթ.՝ ներքին գործերի նախարար, 1855-1858, 1859-1865 թթ.՝ վարչապետ, 1859 թ.՝ վիգերի ղեկավար:
8 Hansard Parliamentary Debates. 3-rd Series. Vol. 97, London, 1848, p. 123.

Մերձավորարևելյան ուղղությունը Փալմերսթոնը համարում էր բրիտանական արտաքին քաղաքականության առաջնային և կարևորագույն խնդիրներից մեկը: Թեև հետագա տասնամյակների ընթացքում այդ քաղաքականության առաջնահերթ խնդիրներն ու մեթոդները փոխվում էին, սակայն մշտական էր մնում մի գործոն, որը սահմանում էր նրա

ընդհանուր ուղղության կայունությունը: Սկսած 19-րդ դ. 30-ական թթ. Մեծ Բրիտանիան հանդես է գալիս Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման օգտին և մշտապես հայտարարում, որ դեմ է նրա բաժանման որևէ ծրագրի:9 1833 թ. հուլիսին, անմիջապես ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո, Փալմերսթոնը հանդես եկավ հայտարարությամբ, որը սահմանեց Մեծ Բրիտանիայի հետագա քաղաքականությունը Օսմանյան կայսրության հանդեպ. «Անգլիայի շահերի և Եվրոպայում խաղաղության պահպանման տեսանկյունից բացարձակ նշանակություն ունի Օսմանյան կայսրության տարածքներից ու գավառներից անկախ պետությունների կազմավորման հարցը: Էական չէ, թե այդ հսկա կայսրության բնակչությունը մահմեդական է կամ քրիստոնյա. այդ խնդիրը պետք է լուծել ելնելով քաղաքական և ոչ թե կրոնական նկատառումներից...: Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը անհրաժեշտ են Եվրոպայի մնացած մասում անդորր, ազատություն և ուժերի հավասարակշռություն պահպանելու համար»:10

1833-1839 թթ. Փալմերսթոնի թուրքական քաղաքականությունը հետապնդում էր հետևյալ հիմնական նպատակները. ա/ թույլ չտալ Ռուսաստանի նոր միջամտություն թուրքական գործերին և վերացնել Օսմանյան կայսրության հանդեպ հովանավորության նրա իրավունքը. բ/ ուժեղացնել Մեծ Բրիտանիայի քաղաքական և տնտեսական ազդեցությունն Օսմանյան կայսրության հանդեպ, ապահովել նրա կախվածությունը բրիտանական իշխանություններից. գ/ապահովել ռազմական, տնտեսական, իրավական

---

9 Ռուս ականավոր գիտնական-արևելագետ Պյոտր Չիխաչովի (1808-1890) արտահայտությամբ, «Թուրքիայի ամբողջականությունը, որն առաջ է քաշվում որպես եվրոպական հավասարակշռության պահպանման անհրաժեշտություն, դիվանագիտության ամենաբարբարոսական և ամենաանբարոյական հնարանքներից մեկն է» (Чихачев П.А. Великие державы и Восточныи вопрос. М., 1970, с. 173):
10 House of Commons, 1833, July 11. Opinions and Policy of Palmerston. London, 1852, p. 246.

բնույթի, քրիստոնյա ժողովուրդների իրավունքներին վերաբերող բարենորոգումների իրագործումը կայսրությունում:

Հանդիսանալով Եվրոպայում սահմանադրականության հաստատման եռանդուն կողմնակից, Փալմերսթոնը ենթադրում էր, որ Օսմանյան կայսրությունում հարկավոր է անցկացնել այնպիսի բարենորոգումներ, որոնք իրագործվեին վերևից, սուլթանի իշխանության միջոցով: Նա հույս ուներ, որ բարենորոգումների իրագործման արդյունքում ավելի կարող ու կենսունակ դարձած Օսմանյան կայսրությունը կկարողանա որոշակի դեր խաղալ Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանման գործում: Փալմերսթոնը մշակեց և գործադրեց Օսմանյան կայսրության §անկախության և ամբողջականության¦ պահպանման այնպիսի «համոզիչ և տոկուն» քաղաքականություն, որը գոյատևեց մինչև 1914 թ.:11

Սկսած 1834 թ. Մեծ Բրիտանիան նպատակադրվել էր ստորագրել այնպիսի համաձայնագիր սուլթանական կառավարության հետ, որը չեզոքացներ 1833 թ. ռուս-թուրքական պայմանագիրը և նպաստեր բարենորոգումների իրագործմանն Օսմանյան կայսրությունում՝ բրիտանական դիվանագիտության հսկողության ներքո: Կատարելով Փալմերսթոնի հանձնարարականը, Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան

Փոնսոնբին հաղորդում էր Բարձր Դռանը, որ բրիտանական կառավարությունը և անձամբ Անգլիայի թագավորը պաշտպանում են Օսմանյան կայսրությունում ներքին բարենորոգումների իրագործման գաղափարը: Դեսպանը խոստանում էր ապահովել օսմանյան կանոնավոր բանակը նոր տեսակի զենքով և անգլիացի հրահանգիչներով, թուրք սպաներ ընդունել բրիտանական ռազմական ակադեմիաներում, ամրացնել Բոսֆորի պաշտպանունակությունը: Նույն ուղղությամբ Փալմերսթոնն աշխատում էր Անգլիայում թուրքական դեսպանության և, հատկապես, 1836 թ. Լոնդոն ժամանած սուլթանի դեսպան Մուստաֆա Ռեշիդ փաշայի հետ:12

_____

11 Kedourie E. England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914-1921. London, 1956, p. 10.

12 Шеремет В.И. Նշվ. աշխ., էջ 87: Ռեշիդ փաշա Մուստաֆա (1800-1858) - թուրք պետական գործիչ և դիվանագետ, Թանզիմաթի առաջին շրջանի բարենորոգումների նախաձեռնող և իրագործող: 1836-1839 թթ.՝ Մեծ Բրիտանիայում Օսմանյան կայսրության դեսպան, 1839-1841, 1846-1852 թթ. (ընդմիջումներով)՝ մեծ վեզիր:

Բրիտանական դիվանագիտության ջանքերն ապարդյուն չանցան: Թուրքական պետական գործիչները, սուլթանի ղեկավարությամբ, հիմնականում ընդունեցին այդ առաջարկները, ենթադրելով, որ դաշինքն աշխարհի հզորագույն տերության հետ և բարենորոգումների իրագործումն առաջին քայլն է կայսրության գոյության, պահպանման և եվրոպականացման ճանապարհին: Միաժամանակ Բարձր Դռանն անհանգստացնում էր Ռուսաստանի հնարավոր մերձեցումը Ֆրանսիայի հետ, որն աջակցում էր Եգիպտոսի փաշա Մոհամմեդ Ալիին:

1820 թ. կնքված անգլո-թուրքական առևտրական համաձայնագրի ժամկետը լրանալուց հետո սուլթանական կառավարությունը 1834 թ. դիմեց բրիտանական կառավարությանը՝ մաքսային ներմուծման սակացուցակը վերանայելու խնդրանքով: Փոխարենն առաջարկվում էր ընդլայնել Անգլիա արտահանվող թուրքական ապրանքատեսականու ցուցակը: Փալմերսթոնն ընդունեց թուրքական առաջարկները, սակայն հետզհետե սկսեց պայմանավորել այն քաղաքական բնույթի տարբեր պահանջներով: Օրինակ, նեղուցները բացել անգլիական ռազմանավերի համար, շոգեմեքենաներն ու բոլոր տեսակի զինամթերքը գնել Անգլիայից, անգլիական ռազմական մասնագետներ հրավիրել՝ օսմանյան բանակում աշխատելու համար, և այլն:13

Մուստաֆա Ռեշիդ փաշայի եռամյա գործունեությունը Եվրոպայում և, մասնավորապես, նրա ծառայությունը Լոնդոնում դեսպանի պաշտոնում, որոշակի ազդեցություն ունեցան նրա քաղաքական հայացքների, Օսմանյան կայսրությունում բարենորոգումների իրագործման անհրաժեշտության վերաբերյալ նրա դիրքորոշման ձևավորման վրա: Սուլթան Մահմուդ 2-րդին ուղղված զեկուցագրում նա ոչ միայն ուրվագծեց բարենորոգումների իրագործման հիմնական ուղղությունները համաձայն Փալմերսթոնի առաջարկների, այլև ներկայացրեց կոնկրետ միջոցառումների ծրագիր՝ կայսրության տնտեսության և, հատկապես, արդյունաբերության զարգացման ուղղությամբ: Այդ ծրագրի իրագործման նպատակով նա առաջարկում էր առաջին հերթին օգտագործել եվրոպական առաջատար պետությունների փորձը, ծառայության մեջ ընդգրկելով անգլիացի մասնագետների:14

13 Նույն տեղում, էջ 89:
14 Նույն տեղում, էջ 39:

1838 թ. օգոստոսին ստորագրվեց անգլո-թուրքական առևտրական պայմանագիր, որը նոր շրջանի սկիզբ նշանավորեց ինչպես բրիտանական արտաքին քաղաքականության, այնպես էլ թուրք բարենորոգիչների համար: Պայմանագիրը նախատեսում էր Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա ազատ առևտրի և թուրքական տարածքային ջրերով ու սևծովյան նեղուցներով ապրանքի անմաքս փոխադրության իրավունք, մենաշնորհի համակարգի և հարկադրական գնումների վերացում և այլն: Բրիտանիան առաջին եվրոպական պետությունն էր, որը ստացավ գյուղատնտեսական արտադրանքի և օգտակար հանածոների արտահանման իրավունք:15

Եթե 18-րդ դ. վերջին - 19-րդ դ. սկզբին Օսմանյան կայսրության արտաքին առևտրի մեջ գլխավոր դերակատարը Ֆրանսիան էր, ապա 19-րդ դ. 20-ական և, հատկապես, 30-40-ական թթ., Բրիտանիան գրավեց առաջին տեղն ինչպես առևտրական շրջանառության, այնպես էլ ներմուծման ծավալի չափով:16 1856 թ. դրությամբ Բրիտանիան Օսմանյան կայսրություն էր ներմուծում 141,3 մլն. ֆրանկի, իսկ արտահանում 80,0 մլն. ֆրանկի ապրանք (Ֆրանսիան համապատասխանաբար՝ 91,9 և 131,5):17 1820-40-ական թթ. ընթացքում Բրիտանիան կարողացավ իր հսկողության տակ առնել Օսմանյան կայսրության ողջ ապրանքաշրջանառության 31%-ը: 1851-1856 թթ. ապրանքի ներմուծման ընդհանուր արժեքաչափով այն գերազանցում էր Ֆրանսիային՝ 1,5, Ավստրիային՝ 1,9, Ռուսաստանին՝ 6 անգամով:18

Փալմերսթոնին չհաջողվեց կանխել Օսմանյան կայսրության և Եգիպտոսի միջև ծագած 1840-1841 թթ. երկրորդ բախումը: Սակայն նրա ակտիվ մասնակցությունը հակամարտության դադարեցման գործում սուլթանական իշխանությունների օգտին հնարավորություն ստեղծեց վերացնելու Օսմանյան կայսրության նկատմամբ բացառապես ռուսական ազդեցության հաստատման վտանգը: Այդ քաղաքականության արդյունքում բրիտանական կառավարությանը հաջողվեց համոզել տերություններին և օսմանյան իշխանություններին 1840 թ. հուլիսին ստորագրել քառակողմ (Մեծ Բրիտանիա, Ավստրիա,

15 Внешнеэкономические связи Османскои империи в новое время (конец ХУ111 - начало ХХ в.). М., 1989, с. 44.
16 Фадеева И.Л. Նշվ. աշխ., էջ 37:
17 Шеремет В.И. Նշվ. աշխ., էջ 50:
18 Внешнеэкономические связи..., с. 65.

Պրուսիա, Ռուսաստան), իսկ 1841 թ հուլիսին՝ հնգակողմ (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Պրուսիա) կոնվենցիաները Օսմանյան կայսրության հետ՝ սևծովյան նեղուցների օգտագործման վերաբերյալ: Համաձայն վերջին կոնվենցիայի, ոչ պատերազմական շրջանի համար նեղուցները փակվում էին որևէ պետության ռազմանավերի համար: Այսպիսով, նեղուցների օգտագործման ռեժիմն այսուհետ կարգավորվում էր բազմակողմ պայմանագրով, այլ ոչ թե շահագրգռված կողմերի՝ Ռուսաստանի և Թուրքիայի համաձայնության միջոցով: Ռուսաստանը փաստորեն մյուս

տերությունների հետ հավասար հիմքերի վրա մտավ միջազգային համաձայնությունների մեջ և զրկվեց Օսմանյան կայսրությանը հովանավորելու իր մենաշնորհ իրավունքից:19

1841-1846 թթ. Մելբուրն-Փալմերսթոն վիգերի կառավարությանը փոխարինեց տորիների կառավարությունը՝ Ռոբերտ Փիլի20 ղեկավարությամբ: Արտաքին գործերի նախարարությունը (Ֆորին Օֆիսը) գլխավորեց Ջորջ Աբերդինը21

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 1875-1878 թթ. ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
1. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1875-1877 թթ.

19-րդ դ. 70-ական թթ. Օսմանյան կայսրությունը խորը տնտեսական ճգնաժամ էր ապրում, գրեթե կանգ առավ վերափոխությունների իրագործման գործընթացը: Ընդունված վարչական բարենորոգումներն արտադրողական ուժի անհրաժեշտ աճ այդպես էլ չտվեցին, քանի որ դեռևս պահպանվում էին շահագործման հին ձևերը, որոնք զուգորդվում էին դաժան ազգային ճնշումներով: 1875 թ. հոկտեմբերին Բարձր Դուռը հայտարարեց իր ֆինանսական սնանկության մասին, այլևս ի վիճակի չլինելով վճարել պարտքի տոկոսները, որն արդեն գերազանցում էր 6 մլրդ. ֆրանկից: Արևմտաեվրոպական տերություններն էլ ավելի ուժեղացրին հսկողությունը կայսրության տնտեսության նկատմամբ, իրենց ենթարկելով երկրի շուկան, ֆինանսները, խեղելով կապիտալիզմի բնականոն զարգացումը: Հանդիպելով պահպանողական սուլթանական իշխանության և եվրոպական տերությունների կապիտալի դիմադրությանը, անհաջողությամբ ավարտվեցին սեփական արդյունաբերություն ստեղծելու փորձերը: 1874 թ. օսմանյան օրենքը օտարերկրյա քաղաքացիներին արդյունաբերական կոնցեսիա ձեռք բերելու իրավունք տվեց, ինչն անցյալում ստացված կապիտուլյացիոն առանձնաշնորհումներով հանդերձ զգալի առավելություններ էր տալիս նրանց՝ օսմանյան ազգային արտադրության նկատմամբ:1

Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական թուլությունը բացեիբաց օգտագործվում էր եվրոպական տերությունների կառավարությունների կողմից՝ սեփական շահերի և նպատակների իրագործման ճանապարհին: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր տիրանալ Արևելքի և Արևմուտքի միջև ընկած առևտրական ճանապարհներին, իր հսկողությունը սահմանել կայսրության նկատմամբ: Տերությունների, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև մրցակցությունն առանձնապես սրվեց 1869 թ. Սուեզի

---

1 Внешнеэкономические связи..., էջ 78-90:

ջրանցքի բացումից հետո: 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմում Ֆրանսիայի պարտությունն էլ ավելի ուժեղացրեց Մեծ Բրիտանիայի դիրքերը Միջերկրական ծովի արևելյան ավազանում: Ռուսաստանն իր հերթին փորձում էր օգտվել արևմտյան տերությունների հակասություններից՝ Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազգային ազատագրական պայքարին աջակցություն ցուցաբերելու միջոցով Բալկաններում իր ազդեցությունը վերականգնելու համար: Ինչպես այս հանգամանքն, այնպես էլ 1873-1875 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամն էլ ավելի սրեցին ռուս-բրիտանական հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքում:

Օսմանյան կայսրության նկատմամբ հսկողություն հաստատելու տերությունների մրցապայքարում իրեն ավելի վստահ էր զգում Մեծ Բրիտանիան՝ իր տնտեսական հզորության և գործուն դիվանագիտական աշխատանքի շնորհիվ: 1870-ական թթ. Օսմանյան կայսրության հետ Մեծ Բրիտանիայի առևտրական շրջանառությունը կազմում էր տարեկան 12-13 մլն. ֆունտ ստեռլինգ, Սուեզի ջրանցքով անցնող բեռների 80%-ը

փոխադրվում էր բրիտանական նավերի միջոցով, իսկ բրդի ներմուծումը Միջագետքից տաս տարվա ընթացքում 12 հազ. ֆունտ ստեռլինգից աճեց մինչև 199 հազ.:2

1874-1880 թթ. Մեծ Բրիտանիայում իշխանության գլուխ էր կանգնած պահպանողական կուսակցության ղեկավար Բենջամեն Դիզրայելին3: Այս ժամանակահատվածը պատմության մեջ հայտնի է որպես բրիտանական ծավալապաշտական քաղաքականության աննախադեպ գործուն շրջան, երբ Մեծ Բրիտանիայի կառավարությունը գաղութային պատերազմներ էր վարում Հնդկաստանում, Աֆղանստանում, Հարավային Աֆրիկայում, Իռլանդիայում և այլուր, ծրագրեր մշակում Սուեզի ջրանցքի, Եգիպտոսի և Կիպրոսի վրա իր իշխանությունը հաստատելու ուղղությամբ: Այսպես, 1875 թ., առանց խորհրդարանի իմացության, Դիզրայելիի կառավարությունը

---

2 Նույն տեղում, էջ 94-96:
3 Դիզրայելի (Disraeli) Բենջամեն, 1876 թ. լորդ Բիկոնսֆիլդ (1804-1881) - բրիտացի պետական և քաղաքական գործիչ, գրող, պահպանողական կուսակցության հիմնադիր և ղեկավար (1848-1881): 1837-1876 թթ.՝ խորհրդարանի համայնքների պալատի, 1876 թ.՝ լորդերի պալատի անդամ, 1852, 1858-1859, 1866-1868 թթ.՝ ֆինանսների նախարար, 1868, 1874-1880 թթ.՝ վարչապետ:

Եգիպտոսի նախավերջին տիրակալ Իսմաիլ փաշայից գնեց Սուեզի ջրանցքի բաժնետոմսերի շուրջ 40%-ը, հիմք դնելով Եգիպտոսի վրա Մեծ Բրիտանիայի հետագա տիրապետությանը:4

Օսմանյան կայսրությունում ստեղծված ծանր տնտեսական իրավիճակի և ներքաղաքական սուր պայքարի պայմաններում, որն ուղեկցվում էր թուրքական սահմանադրական շարժման վերելքով, Բարձր Դուռը փորձում էր ազգային-ազատագրական շարժումների ճնշման միջոցով քողարկել երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական բարդ խնդիրները, թուրքական բանակի, պաշտոնյաների և մտավորականության շրջանակներում լայն տարածում գտած սահմանադրականական տրամադրությունները փոխարինել սուլթանամետ, ազգայնամոլ, հակաքրիստոնեական կարգախոսներով: Սուլթանական իշխանությունների քաղաքական, տնտեսական և ազգային ճնշումների հետևանքով 1875 թ. հունիսին Բոսնիայում և Հերցեգովինայում ծագած հզոր հակաթուրքական ապստամբությունն առաջացրեց խորը միջազգային ճգնաժամ, որը դիվանագիտության պատմության մեջ հայտնի է որպես 1875-1878 թթ. Մերձավորարևելյան ճգնաժամ: Օսմանյան կայսրության փլուզման և նրա փլատակների վրա նոր, ռուսամետ դիրքորոշում ունեցող պետությունների առաջացման վտանգը վերածվեց միջազգային քաղաքականության, եվրոպական դիվանագիտության սուր մրցակցության խնդրի, որը սպառնում էր պատերազմի մեջ ներքաշել ողջ Եվրոպան: 1856 թ. Փարիզի վեհաժողովից 19-ը տարի անց պարզ դարձավ, որ Բալկաններում բարենորոգումների անցկացման վերաբերյալ սուլթանական իշխանությունների բոլոր խոստումները մնացին չիրագործված: Բուլղարիայում, Բոսնիայում, Հերցեգովինայում, Մոլդավիայում, Վալախիայում, Սերբիայում և Չեռնոգորիայում վիճակը ոչ միայն չբարելավվեց, այլև շատ ավելի վատթարացավ: Եվրոպական տերություններին տրված քրիստոնյա ժողովուրդներին հովանավորելու իրավունքը նրանց կողմից օգտագործվեց միմիայն Ռուսաստանի քաղաքականության սահմանափակման նպատակով:

Թեև Ռուսաստանի շահերն անմիջականորեն համընկնում էին բալկանյան ժողովուրդների ազատատենչ գաղափարներին, նրա գործողությունները սահմանափակվում էին Փարիզի պայմանագրի շրջանակներով: Բացի այդ, Ռուսաստանը դեռևս պատրաստ չէր նոր պատերազմի Օսմանյան կայսրության հետ: Այդ իսկ պատճառով ռուսական

_____
4 Ротштейн Ф.А. Международные отношения в конце Х1Х века. М. - Л., 1960, с. 27; Шпаро О. Б. Захват Кипра Англией. М., 1974, с. 27.

կառավարությունը փորձեց դիվանագիտական միջոցներով խաղաղեցնել իրավիճակը, համագործակցելով առաջին հերթին իր դաշնակիցների՝5 Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի հետ: Ավստրո-Հունգարական բազմազգ կայսրությունը վարում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանն ուղղված քաղաքականություն, քանի որ սլավոնական անկախ պետությունների ստեղծումը կարող էր վտանգել իր գոյությունը: Մշտապես հայտարարելով Արևելյան հարցում Գերմանիայի անշահախնդիր վերաբերմունքի և ռուսական կառավարության հետ բարեկամություն հաստատելու ցանկության մասին, կանցլեր Օտտո Բիսմարկն6 իրականում ձգտում էր պատերազմի մեջ ներքաշել Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը, սրել ռուս-բրիտանական և ռուս-ֆրանսիական հարաբերությունները:

_____
5 Երեք Կայսրերի Միություն - 1873 թ. Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միջև ստորագրված գաղտնի համաձայնագրեր ռազմական փոխօգնության վերաբերյալ: Ռուս-բրիտանական հակասությունները Միջին Ասիայում ստիպեցին ռուսական կառավարությանը համագործակցել Գերմանիայի հետ: Հանդիսանալով Ֆրանսիայի մշտական հակառակորդը, Գերմանիան, հնարավոր պատերազմում երկու ճակատից խուսափելու նպատակով, շահագրգռված էր ռուս-գերմանական հարաբերությունների բարելավման մեջ: Ավստրո-Հունգարիան իր հերթին ձգտում էր դաշնակցային կապեր ստեղծել Գերմանիայի հետ՝ Ռուսաստանի հետ Բալկանների համար հնարավոր պատերազմում, և, միաժամանակ, ձգտում էր պայմանավորվել Ռուսաստանի հետ՝ այդ տարածաշրջանում ազդեցության ոլորտների բաժանման հարցում: 1881 և 1884 թթ. ստորագրվեցին Միությունը երկարաձգող փաստաթղթեր, սակայն տերությունների միջև հակասությունների սրման հետևանքով 1885 թ. այն դադարեց գոյություն ունենալուց:
6 Բիսմարկ (Bismarck) Օտտո Էդուարդ Լեոպոլդ ֆոն Շյոնհաուզեն (1815-1898) - գերմանացի պետական գործիչ և դիվանագետ, իշխան: 1851-1859 թթ.՝ Պրուսիայի ներկայացուցիչ Գերմանական Միության բունդեսթագում, 1859-1862 թթ.՝ Պրուսիայի դեսպան Ռուսաստանում, 1862 թ.՝ Ֆրանսիայում, 1862-1867 թթ.՝ Պրուսիայի վարչապետ և արտաքին գործերի նախարար, 1867-1871 թթ.՝ Գերմանական կայսրության բունդեսկանցլեր, 1871-1890 թթ.՝ ռայխսկանցլեր:

Ի վերջո՝ Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Գերմանիան պայմանավորվեցին համատեղ դիվանագիտական քայլեր ձեռնարկել բալկանյան խնդրում: Այդ նպատակով 1875 թ. օգոստոսին նրանց հյուպատոսները սուլթան Աբդուլ Ազիզին սլավոնական բնակչության պահանջները բավարարող մի շարք առաջարկություններ ներկայացրեցին: Ստեղծվեց բոլոր տերությունների ներկայացուցիչներից բաղկացած միջազգային

հանձնաժողով, որը փորձեց միջնորդի դեր կատարել ապստամբների և իշխանությունների միջև: Արդյունքում, հոկտեմբերին և դեկտեմբերին սուլթանը հրովարտակներ հրապարակեց, ուր խոստանում էր լայն բարենորոգումներ անցկացնել ապստամբ շրջաններում: Սակայն վիճակն այդպես էլ չբարելավվեց, իսկ ապստամբությունն էլ ավելի տարածվեց:

Դեկտեմբերի 30-ին Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Դյուլա Անդրաշին7 «Երեք Կայսրերի Միության» անունից բալկանյան խնդրի խաղաղ կարգավորման ծրագիր ներկայացրեց տերություններին: Առաջարկվում էր, որ Փարիզի պայմանագիրը ստորագրած տերությունները դիմեն Բարձր Դռանը՝ ապստամբ շրջաններում բնակչության կյանքի տնտեսական, քաղաքական ու կրոնական պայմանների բարելավման պահանջով: Ֆրանսիան և Իտալիան անմիջապես ընդունեցին ծրագիրը: Այսուհետ ամեն բան կախված էր բրիտանական կառավարության որոշումից, սակայն Դիզրայելին չէր շտապում կանխարգելել ռուս-թուրքական հարաբերությունների բարդացումը: Բրիտանական դիվանագիտությունը նույնպես նպատակադրվել էր ներքաշել Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ միմյանց դեմ՝ նրանց թուլացումից առավելագույն օգուտ քաղելու նպատակով:

Դեռևս բալկանյան ապստամբության սկզբնական շրջանում արտգործնախարար Դերբին դեսպան Էլիոտին գրում էր (12 և 24 օգոստոսի), որ ամենից լավը կլիներ այն, եթե Դուռն իր սեփական ուժերով լուծեր ապստամբների հարցը, խուսափելով օտարերկրյա որևէ

---

7 Անդրաշի (Andrassy) Դյուլա Ավագ (1823-1890) - հունգարացի պետական և քաղաքական գործիչ, դիվանագետ: 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության մասնակից, 1867 թ. ավստրո-հունգարական համաձայնության նախապատրաստման մասնակից, 1867-1871 թթ.՝ Հունգարիայի վարչապետ և պաշտպանության նախարար, 1871-1879 թթ.՝ Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար:

միջամտությունից:8 Սակայն երբ Անդրաշիի առաջարկները ներկայացվեցին Դերբիին, բրիտանական դիվանագիտությունը սկսեց որոնել տերությունների համատեղ գործողություններում իր մասնակցության այնպիսի ձևեր, որոնք չկապեին նրան որոշակի պարտավորություններով: Մի կողմից Դիզրայելիին ձեռնտու չէր բալկանյան ճգնաժամի խաղաղ կարգավորումը, սակայն մյուս կողմից նա չէր կարող հաշվի չառնել Մեծ Բրիտանիայի և ընդհանրապես Եվրոպայի հասարակական կարծիքը, որը տերությունների կառավարություններից պահանջում էր խնդրի շուտափույթ լուծում: Միաժամանակ Գլադստոնի կողմից ղեկավարվող ուժեղ ընդդիմադիր լիբերալ կուսակցությունը շատ արագ էր արձագանքում պահպանողականների սխալներին, հարցերն անմիջապես ներկայացնելով խորհրդարանի քննարկմանը:

1876 թ. հունվար ամսվա ընթացքում բրիտանական կառավարությունը Էլիոտի միջոցով փորձում էր պարզել, թե ինչպես կարձագանքի Բարձր Դուռը Անդրաշիի առաջարկներին՝ Բրիտանիայի միանալու դեպքում: Դեսպանը բազմիցս զգուշացնում էր սուլթանական կառավարությանը, որ Բրիտանիայի մասնակցությունը տերությունների դեմարշին լուրջ բարդույթներ չի ստեղծի Թուրքիայի համար: Հունվարի 13-ին արտգործնախարար Ռաշիդ փաշան հայտնում է Էլիոտին. «Եթե ավստրիական առաջարկը բոլորովին անընդունելի չլինի, Դռան համար ցանկալի կլինի, որ Նորին Մեծության կառավարությունը միանար

տերությունների համատեղ հայտարարությանը»:9 Ի վերջո, Դերբին Անդրաշիի հարցումին պատասխանեց հունվարի 25-ին, Մեծ Բրիտանիայում Ավստրո-Հունգարիայի դեսպանին ուղղված իր նամակում: Ընդհանուր առմամբ ընդունելով ավստրիական առաջարկը, արտգործնախարարն իր դիտողություններն ու վերապահություններն էր հայտնում ծրագրի բոլոր հինգ կետերի վերաբերյալ, նշում, որ սուլթաններ Աբդուլ Մեջիդն ու Աբդուլ Ազիզն արդեն իսկ խոստացել էին համապատասխան բարենորոգումներ անցկացնել քրիստոնյա բնակչության համար:10

_____
8 Eastern Papers. Part LXVII (1875-1876). London, 1883, pp. 74-75.
9 Turkey No 2 (1876). Correspondence respecting Affairs in Bosnia and Herzegovina (1875-1876). London, 1876, p. 95.
10 Eastern Papers. Part LXVII..., pp. 92-96.

Փետրվարի 3-ին Օսմանյան կայսրությունում Ավստրո-Հունգարիայի դեսպան Զիչին, հինգ տերությունների դեսպանների ներկայությամբ, ընթերցեց Անդրաշիի առաջարկները Ռաշիդ փաշային: Գրավոր որևիցե փաստաթուղթ Բարձր Դռանն այդպես էլ չներկայացվեց: Տերությունների «պահանջների» կատարումից հրաժարվելու դեպքում սուլթանական կառավարության հանդեպ որևէ պատժամիջոց չէր նախատեսվում: Նույն օրն Էլիոտը գոհունակությամբ տեղեկացնում էր Դերբիին տերությունների ներկայացուցիչների համատեղ ելույթի մասին, նշելով, որ իր բնույթով այն իր մեջ ճնշում չի պարունակում և, «...հավանաբար, կքաջալերի Դռանը»:11

Սակայն սուլթանական կառավարությունը ոչ միայն մտադրություն չուներ բարենորոգումներ անցկացնել Բալկաններում, այլև ուժեղացրեց ճնշումն ապստամբ շրջանների հանդեպ: 1876 թ. ապրիլին իրավիճակն ավելի բարդացավ, թուրքական տիրապետության դեմ ապստամբեցին նաև Բուլղարիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի ժողովուրդները: Ի պատասխան Բարձր Դուռը սկսեց զորքեր կուտակել Սերբիայի և Չեռնոգորիայի սահմաններին: Այդ պայմաններում Ռուսաստանը դիմեց ավստրիական և գերմանական կառավարություններին՝ համատեղ գործողությունների ծրագիր մշակելու առաջարկով: Ապրիլի վերջին - մայիսի սկզբին Բեռլինում տեղի ունեցան Բիսմարկի, Անդրաշիի և Գորչակովի12 բանակցությունները, որոնց արդյունքում ստորագրվեց հուշագիր՝ Արևելյան հարցում տերությունների համատեղ գործողությունների վերաբերյալ: Մայիսի 13-ին հրապարակված հուշագրում Օսմանյան կայսրության կառավարությունից պահանջվում էր երկու ամսով զինադադար կնքել, բանակցությունների միջոցով համաձայնության հասնել ապստամբների հետ, ինչպես նաև՝ իրականացնել անհրաժեշտ բարենորոգումներ բոլոր տերությունների հյուպատոսների հսկողության ներքո: Փարիզի պայմանագրի հիմնադրույթներին ամբողջությամբ համապատասխանող հուշագիրը ներկայացվեց մյուս տերությունների քննարկմանը: Ֆրանսիան և Իտալիան որոշեցին անմիջապես միանալ

_____
11 Նույն տեղում, էջ 106:
12 Գորչակով Ալեքսանդր Միխայլովիչ (1798-1883) - ռուս դիվանագետ և պետական գործիչ, իշխան: 1824-1856 թթ.՝ դիվանագիտական ծառայություն Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Պրուսիայում, Ավստրիայում, Գերմանական Միությունում, 1856-1882 թթ.՝ արտաքին գործերի նախարար:

առաջարկությանը, սակայն բրիտանական կառավարությունն այն կտրականապես մերժեց: Դիզրայելին հրապարակավ հայտարարեց, որ Բեռլինի հուշագիրն ուղղված է Բարձր Դռան հեղինակության դեմ և մայիսի 24-ին կարգադրություն ստորագրեց Միջերկրականում տեղակայված բրիտանական ռազմական նավատորմը Կոստանդնուպոլիս ուղարկելու վերաբերյալ:13 Նույնիսկ երբ Վիկտորիա թագուհին տարակուսանք հայտնեց այդ կապակցությամբ,14 Դիզրայելին պատասխանեց. «...Նավատորմը հրաման չի ստացել ... պաշտպանել քրիստոնյաներին կամ թուրքերին, այլ՝ Ձերդ Մեծության կայսրությունը: Եթե Ձերդ Մեծությունը հավանություն տա Բեռլինի հուշագրին, ապա Կոստանդնուպոլիսը կգրավվի Ռուսաստանի կողմից, իսկ թուրքական նավատորմը կանցնի Ռուսաստանի հովանու ներքո»:15

Իրեն ապահով զգալով բրիտանական կառավարության հզոր աջակցության շնորհիվ, թուրքական իշխանությունը դաժանորեն ճնշեց բուլղարական ապստամբությունը, որի արդյունքում կոտորվեց շուրջ 30 հազ. մարդ:16 Թուրքական դաժան քաղաքականությունը Բալկաններում բողոքի ալիք բարձրացրեց Մեծ Բրիտանիայում, աննախադեպ սրվեց միջկուսակցական պայքարը Գլադստոնի և Դիզրայելիի կողմնակիցների միջև: Հուլիսի վերջին կառավարության արտաքին քաղաքականությունը խիստ քննադատության ենթարկվեց խորհրդարանի համայնքների պալատում և մամուլի էջերում: Գլադստոնն իր «Բուլղարական սարսափները և Արևելքի հարցը» գրքույկում գրում էր. «Որպես թագի և պետության հին ծառա ես աղաչում եմ, որպեսզի իմ հայրենակիցները...պնդեն և պահանջեն մեր կառավարությունից, որն առայժմ գործում էր մեկ ուղղությամբ, գործել այլ ուղղությամբ և, օգտագործելով իր ողջ ուժը, Եվրոպայի մյուս պետությունների հետ համագործակցաբար արմատախիլ աներ թուրքական իշխանությունը Բուլղարիայից..»:17 Բուլղարական իրադարձությունների առիթով Էլիոտն այդ օրերին գրում էր Դերբիին. «Ինչպես իմ, այնպես էլ

---

13 Seton-Watson R.W. Disraeli, Gladstone and the Eastern Question. A Study in Diplomacy and Party Politics. New York, 1962, p. 33.
14 Victoria Queen. Letters. Vol. II. London, 1926, p. 453.
15 Seton-Watson R.W. Նշվ. աշխ., էջ 35:
16 История дипломатии. Т. 2. М., 1963, с. 92.
17 Gladstone W.E. Bulgarian Horrors and the Question of the East. London, 1876, pp. 31-32.

անգլիական քաղաքական գործիչների մեծամասնության կարծիքով, 10 կամ 20 հազար բուլղար զոհերը սովորական երևույթ են այդ կիսաքաղաքակրթված ասիական երկրում... և այդ զոհերը չպետք է բավարար պատճառ հանդիսանան մեր շահերը պահպանող միակ ճիշտ քաղաքականությունը փոփոխության ենթարկելու համար»:18 Սակայն երբ այլևս անհնարին դարձավ դիմադրել ընդդիմության և հասարակական կարծիքի ճնշմանը, բրիտանական կառավարությունն ընտրեց մարտավարություն, որից նույնպես կարելի էր օգուտ քաղել: Էլիոտը հանձնարարություն ստացավ դատապարտել սուլթանական իշխանությունների գործողությունները Բուլղարիայում, նախազգուշացնելով, որ նման քաղաքականության կրկնությունը կարող է բարդությունների հանգեցնել: Դերբին հրահանգում էր դեսպանին (22 օգոստոսի և 5 սեպտեմբերի) հաղորդել Բարձր Դռանը, որ «այն համակրանքը, որ գոյություն ուներ Անգլիայում Թուրքիայի հանդեպ, ամբողջովին վերացել է Բուլղարիայում տեղի ունեցած աղետալի դեպքերի հետևանքով...և անգլիական

հասարակայնության բոլոր խավերի վրդովմունքը հասել է այնպիսի լարվածության..., որ ծայրահեղ դեպքում, եթե Ռուսաստանը Թուրքիային պատերազմ հայտարարի, Նորին Մեծության կառավարությունը անհնարին կհամարի միջամտությունն Օսմանյան կայսրության պաշտպանության նպատակով»:19

1876 թ. հունիսին Սերբիան և Չեռնոգորիան հարձակողական ու պաշտպանական դաշինք կնքեցին և պատերազմ հայտարարեցին Բարձր Դռանը: Բրիտանական դիվանագիտությունը բավականին հանգիստ ընդունեց այդ փաստը, քանի որ այն համապատասխանում էր իր առջև դրված հիմնական նպատակին՝ ռուս-թուրքական պատերազմի հրահրմանը: Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի դեսպան Պյոտր Շուվալովի20 հետ տեղի ունեցած զրույցի ընթացքում Դիզրայելին հետևյալ կերպ էր պարզաբանում իր դիրքորքշումը Բալկաններում ծագած պատերազմի վերաբերյալ.«Պատերազմը լինելու է դաժան, սակայն երկար տևել չի կարող: Եթե թուրքերը պարտվեցին, ապստամբ նահանգները

18 Seton-Watson R.W. Նշվ. աշխ., էջ 63:
19 Turkey No 1 (1876-1877). Correspondence respecting the Conference in Constantinople and the Affairs in Turkey. London, 1877, p. 159.
20 Շուվալով Պյոտր Անդրեևիչ (1827-1889) - ռուս պետական գործիչ ու դիվանագետ, կոմս: 1866-1874 թթ.՝ ժանդարմերիայի և կայսեր անձնական գրասենյակի 3-րդ բաժանմունքի պետ, 1874-1879 թթ.՝ Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան:

կստանան Ռումինիայի նման կարգավիճակ և Եվրոպան կմիջամտի միմիայն այդ որոշումը հաստատելու համար: Իսկ եթե, հակառակ դեպքում, թուրքերը հաղթեցին, Եվրոպան, անկասկած, իր ձայնը կբարձրացնի՝ կանխելու համար ծայրահեղություններն ու դաժանությունները, որոնց կարող են ենթարկվել քրիստոնյաները...»21

Թուրքական զորքերը շատ ավելի հեշտությամբ հաղթանակ տարան սերբական բանակի, քան Բոսնիայի և Հերցեգովինայի ապստամբ ջոկատների նկատմամբ: Օգոստոսի 26-ին իշխան Միլանը դիմեց Բելգրադում տերությունների հյուպատոսներին՝ միջնորդության խնդրանքով: Սակայն այդ օրերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ հեղաշրջում, որի արդյունքում սուլթան Մուրադ 5-րդին փոխարինեց իր կրտսեր եղբայրը՝ Աբդուլ Համիդ 2-րդը:22 Օգտագործելով իր ազդեցությունը նոր սուլթանի վրա, բրիտանական կառավարությունը սեպտեմբերի սկզբին եվրոպական տերություններին առաջարկեց համոզել Բարձր Դռանը զինադադար կնքել ապստամբների հետ և տերությունների համաժողով գումարել Կոստանդնուպոլսում՝ Արևելյան հարցը քննարկելու նպատակով: Բոլոր մեծ տերությունները համաձայնեցին բրիտանական առաջարկի հետ, սակայն սուլթանական կառավարությունը փաստորեն մերժեց այն, պահանջելով զինադադարի կնքման չափազանց խիստ պայմաններ:

Դերբիին ուղղված նամակում (4 սեպտեմբերի) Դիզրայելին ներկայացնում էր իր տեսակետներն Արևելյան հարցի հետագա զարգացման վերաբերյալ: Նա կասկած էր հայտնում բալկանյան ճգնաժամի շուտափույթ լուծման կապակցությամբ, համարելով, որ այն ձգվելու է մինչև գարուն, երբ Ռուսաստանն ու Ավստրիան կմտցնեն իրենց զորքերը

21 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 57:
22 Աբդուլ Համիդ II (1842-1918) - թուրք սուլթան 1876-1909 թթ.: Կառավարման սկզբնական շրջանում ներկայացել է իբրև բարենորոգումների և սահմանադրական կարգերի կողմնակից, 1876 թ. հռչակել է օսմանյան սահմանադրությունը: Սակայն 1878 թ. արձակել է խորհրդարանը, հաստատել դաժան վարչակարգ («զուլում»), դաժանորեն ճնշել բուլղարների, մակեդոնացիների, արաբների, հայերի ազատագրական շարժումները: 1894-1896 թթ. կազմակերպել է կայսրության հայ բնակչության համատարած ջարդ, որի համար ստացել է«կարմիր սուլթան» մականունը: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո հարկադրված վերականգնել է սահմանադրությունը, սակայն 1909 թ. հեղաշրջման անհաջող փորձից գահընկեց է արվել և աքսորվել:

Բալկաններ՝ Արևելյան հարցին վերջնական լուծում տալու նպատակով: «Իսկ եթե դա այդպես է, - շարունակում էր Դիզրայելին, - ապա խելամիտ կլիներ, եթե մենք մեր ձեռքն առնենք ղեկավարությունը»: Վարչապետը նախատեսում էր «Ռուսաստանի և Ավստրիայի միջև բալկանյան ավարի բաժանումը՝ Անգլիայի բարեկամական ծառայությունների միջոցով»: Մասնավորապես, նա ծրագրում էր Կոստանդնուպոլիսը վերածել չեզոք քաղաքի և ազատ նավահանգստի՝ Բրիտանիայի պաշտպանության և խնամակալության ներքո23: Սա փաստորեն Օսմանյան կայսրության բաժանման ծրագիր էր, ինչը հակասում էր պաշտոնապես հռչակված Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման Դիզրայելիի արտաքին քաղաքականությանը: Դերբիին ուղղված մի այլ նամակում (23 սեպտեմբերի) վարչապետը նշում էր, որ բրիտանական քաղաքականության և Թուրքիայի բաժանման գաղափարի միջև տարբերություն գոյություն չունի, քանի որ Մեծ Բրիտանիան ձգտում է միմիայն իր տիրապետության հաստատմանն Արևելքում:24

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում տերությունները բանակցում էին բալկանյան ճգնաժամի խաղաղ կարգավորման ուղղությամբ, սակայն շոշափելի արդյունքի այդպես էլ չհասան: Բրիտանական դիվանագիտությունն առաջ քաշեց ծրագիր, որի հիմնական կետերն էին. խաղաղություն Սերբիայի հետ ստատուս քվոյի սկզբունքի հիման վրա և տեղական ինքնավարություն Բոսնիայի, Հերցեգովինայի և Բուլղարիայի համար: Բոլոր տերությունները համաձայնեցին այդ ծրագրի հետ, սակայն ռուսական կառավարությունն առաջարկեց ավելացնել նաև կետ՝ տերությունների միացյալ նավատորմը Մարմարա ծով մտցնելու վերաբերյալ: Բրիտանական կառավարությունը կտրուկ կերպով մերժեց առաջարկը, քանի որ այն չէր համապատասխանում Դիզրայելիի գաղտնի ծրագրին: Այնինչ Աբդուլ Համիդը շարունակում էր ձգձգել խաղաղության գործընթացը. հոկտեմբերին, ժամանակավոր զինադադարից հետո, նորից վերսկսվեցին ռազմական գործողությունները: Օսմանյան կայսրությունում տիրող ազգայնամոլության և մահմեդական մոլեռանդության պայմաններում նոր թուրքական կառավարությունը չէր ցանկանում որևէ զիջումների գնալ ապստամբ շրջանների քրիստոնյա բնակչության պահանջները բավարարելու ուղղությամբ,

23 Monypenny W.F. and Buckle G. The Life of Disraeli. Vol. VI, p. 52.
24 Seton-Watson R.W. Նշվ. աշխ., էջ 88:

հայտարարելով մոտ ապագայում սահմանադրության հռչակման և դրա հիման վրա տարբեր բնագավառներում բարենորոգումների անցկացման մասին:25

Համաձայն ռուսական կառավարության հետ ձեռք բերված պայմանավորվածության, հոկտեմբերի 5-ին Դիզրայելին Փարիզի պայմանագիրը ստորագրած պետություններին առաջարկեց հրավիրել համաժողով Կոստանդնուպոլսում՝ Արևելյան հարցի քննարկման նպատակով: Դեկտեմբերի սկզբին Կոստանդնուպոլիս ժամանեցին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռումինիայի ներկայացուցիչները: Բրիտանական կառավարության ներկայացուցիչ էր նշանակված այդ ժամանակ Հնդկաստանի գործերի նախարար լորդ Ռոբերտ Սոլսբերին,26 որը Դիզրայելիից հատուկ հրահանգ էր ստացել՝ հակազդել Բարձր Դռանը հարկադրող տերությունների փորձերին:27 Բրիտանական դիվանագիտությունը ձգտում էր ամեն ինչ անել, որպեսզի սուլթանական կառավարությունը մերժի տերությունների բոլոր առաջարկները: Դա հնարավորություն էր տալու Բրիտանիային ձերբազատվել այն բոլոր պարտավորություններից, որոնք, մյուս տերությունների հետ մեկտեղ, նա իր վրա էր վերցրել Փարիզի վեհաժողովում: Նման քաղաքականության միջոցով բրիտանական դիվանագիտությունը փորձում էր պատերազմի մեջ ներքաշել Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը՝ նոր գաղութային տարածքներ ձեռք բերելու, Մերձավոր Արևելքում հզոր քաղաքական և տնտեսական ազդեցություն հաստատելու նպատակով:

Մինչ համաժողովի պաշտոնական բացումը, դեկտեմբերի 14-23-ը, եվրոպական տերությունների ներկայացուցիչները, Ռուսաստանի դեսպանության շենքում, դեսպան

---

25 История дипломатии. Т. 2. ..., с. 99-104.
26 Սոլսբերի (Salisbury) Ռոբերտ Արթուր Թալբոթ Գասքոյն-Սեսիլ (1830-1903) - բրիտանացի քաղաքական և պետական գործիչ: 1866-1867, 1874-1878 թթ.՝ Հնդկաստանի գործերի նախարար, 1878-1880 թթ.՝ արտգործնախարար, 1881 թ.՝ պահպանողականների ղեկավար լորդերի պալատում, այնուհետև պահպանողական կուսակցության ղեկավար, 1885-1886, 1886-1892, 1895-1902 թթ.՝ վարչապետ և մինչև 1900թ. միաժամանակ արտգործնախարար:
27 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 79:

Նիկոլայ Իգնատևի28 նախագահությամբ քննարկում էին բալկանյան ճգնաժամի խաղաղ կարգավորմանն ուղղված ռուսական նախագիծը: Բանակցություններն ընթանում էին մեծ դժվարությամբ, քանի որ Սոլսբերին վիճարկում էր Ռուսաստանի ներկայացուցչի յուրաքանչյուր առաջարկը: Ի վերջո, նրանք մշակեցին խաղաղության ընդհանուր պայմանները, համաձայն որոնց Սերբիան պահպանում էր իր նախկին ինքնավարությունը, Չեռնոգորիան ստանում էր փոքր տարածքային զիջումներ, Բոսնիան և Հերցեգովինան միավորվում էին մեկ մարզի մեջ, Բուլղարիան բաժանվում էր երկու մասի (Արևելյան և Արևմտյան), որոնք ստանում էին տեղական վարչակարգ ունենալու և կրոնի ազատության իրավունք: Վերը նշված բոլոր շրջաններում պետք է իրագործվեին քրիստոնյա բնակչության վիճակի բարեփոխություններ՝ տերությունների հսկողության ներքո: Դեկտեմբերի 23-ին, երբ տերությունների առաջարկներին ծանոթանալու նպատակով համաժողովին էր հրավիրվել Բարձր Դռան ներկայացուցիչը, հայտարարվեց Օսմանյան կայսրության առաջին սահմանադրության հռչակման մասին: Վերջինս պաշտոնապես մերժեց տերությունների առաջարկները, քանի որ սահմանադրությամբ նախատեսվում էր մահմեդականների և քրիստոնյաների իրավունքների հավասարեցում և լայնածավալ բարենորոգումների իրականացում:

Տերությունների ներկայացուցիչները շարունակեցին բանակցությունները Բարձր Դռան հետ, փորձելով համոզել ընդունելու համաժողովի կողմից մշակված խաղաղության ծրագիրը: Մասնավորապես, այդ ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկեց Սոլսբերին, թեև բրիտանական դիվանագիտությունը քաջատեղյակ էր սուլթանական իշխանությունների կողմից նախապատրաստվող «թատերական բեմադրության» մասին: Բրիտանիայի ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ նոր նշանակված մեծ վեզիր Միդհաթ փաշայի և Աբդուլ Համիդի հետ, քննադատեց նրանց դիրքորոշումը տերությունների քաղաքականության հանդեպ, սպառնաց դադարեցնել Մեծ Բրիտանիայի քաղաքական, տնտեսական և

---

28 Իգնատև Նիկոլայ Պավլովիչ (1832-1908) - ռուս դիվանագետ և պետական գործիչ, կոմս, գեներալ: 1856-1861 թթ.՝ դիվանագետ Մեծ Բրիտանիայում և Չինաստանում, 1861-1864 թթ.՝ արտգործնախարարության Ասիական դեպարտամենտի տնօրեն, 1864-1877 թթ.՝ դեսպանորդ, ապա՝ դեսպան Օսմանյան կայսրությունում, 1881-1882 թթ.՝ ներքին գործերի նախարար, 1882-1908 թթ.՝ Պետական խորհրդի անդամ:

ֆինանսական աջակցությունը: Սակայն Օսմանյան կայսրությունն այդպես էլ ոչ մի զիջման չգնաց և տերությունները ստիպված եղան 1877 թ. հունվարի 20-ին փակել Կոստանդնուպոլսի համաժողովը, հայտարարելով իրենց դեսպաններին ետ կանչելու որոշման մասին:29

Կոստանդնուպոլսից վերադառնալուց անմիջապես հետո իր մտերիմներին գրած նամակներում Սոլսբերին նշում էր Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման բրիտանական ավանդական քաղաքականությունից հրաժարվելու, սուլթանի տիրույթների բաժանման վերաբերյալ նախաձեռնություն հանդես բերելու մասին:30 Դիզրայելին նույնպես սկսել էր բացահայտորեն արտահայտվել Օսմանյան կայսրության մոտալուտ փլուզման վերաբերյալ: Նա Դերբիին ասում էր, որ բաժանումն անխուսափելի է և՝ «...այդ դեպքում մենք պետք է վճռական գիծ որդեգրենք ու հարմար պահին զավթենք այն, ինչն անհրաժեշտ է մեր կայսրության անվտանգության պահպանման համար»:31 Խոսքը գնում էր ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրության հաշվին տարածքային ձեռքբերումների, մասնավորապես՝ Կիպրոսին տիրանալու մասին: Միաժամանակ բրիտանական դիվանագիտությունը չէր ցանկանում խզել իր կապերը սուլթանական կառավարության հետ, զրկել նրան ավանդական բրիտանական օգնության հույսից, ինչը կարող էր պատճառ հանդիսանալ ռուս-թուրքական մերձեցման համար: 1876 թ. դեկտեմբերի վերջին Միդհատ փաշան հատուկ առաքելությամբ Լոնդոն ուղարկեց օսմանյան սահմանադրության մշակման գործում իրեն օգնաց, սուլթանի պատվիրակ Գրիգոր Օտյանին: Վերջինս պետք է պարզեր բրիտանական կառավարության դիրքորոշումը Ռուսաստանի հետ հնարավոր պատերազմի դեպքում: Դերբիի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ նա և Օսմանյան կայսրության դեսպան Մուսուրուս փաշան հայտարարեցին, որ սուլթանն անընդունելի է համարում համաժողովի որոշումներում տեղ գտած տերությունների հսկողությունն իր կայսրությունում անցկացվելիք բարենորոգումների գործընթացի նկատմամբ: Նկատի առնելով երկրի մահմեդական հպատակների գրգռվածությունը, թուրքական կառավարությունը նախընտրում է պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ: Դերբին

29 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 84-89; Восточный вопрос..., с. 210-213; История дипломатии. Т. 2..., с. 106-108.
30 Cecil G. Life of Robert Marquis of Salisbury. London, 1921, p. 132.
31 Seton-Watson R.W. Նշվ. աշխ., էջ 139:

խուսափեց որոշակի պատասխան տալուց, նշելով, որ այդ գործի մասին ամենից լավ կարող է դատել Բարձր Դուռը:32

Մտահոգվելով բրիտանական կառավարության նման անտարբեր վերաբերմունքից, սուլթանը որոշում է մեղմացնել իրադրությունը: Դերբիի հետ ունեցած իր հաջորդ հանդիպման (1877 թ. հունվարի 29-ին) ընթացքում Օտյանին ընթերցում է Միդհաթ փաշայի հեռագիրը, որում նշվում էր, որ սուլթանական կառավարությունն «ընդհանուր առմամբ, որքանով դա հնարավոր է, ընդունում է համաժողովի կողմից առաջարկված բարենորոգումները»: Միաժամանակ հույս էր հայտնվում, որ սուլթանական կառավարությունը նման դիրքորոշման դիմաց կունենա Բրիտանիայի «համակրանքն ու բարեկամությունը»: Դերբին պատասխանում է, թե տերությունների համաժողովը հետապնդում էր երկու հիմնական նպատակ. խաղաղության ապահովում Եվրոպայում և Օսմանյան կայսրության վարչական համակարգի բարելավում: Հատուկ նշելով, որ արտահայտում է միմիայն իր սեփական կարծիքը, արտգործնախարարն ասաց, որ սուլթանական իշխանությունների դիրքորոշման հետևանքով համաժողովը չհասավ իր նպատակին, ինչը հնարավորություն ստեղծեց, որ որոշ տերություններ օգտագործեին այդ հանգամանքը՝ Թուրքիայի դեմ պատերազմ հրահրելու նպատակով: Այնուհետև Օտյանն անդրադարձավ տերությունների կողմից առաջարկված ընդհանուր ներման խնդրին, նշելով, որ Միդհաթ փաշան մտադիր է այն իրագործել ինչպես թուրքերի, այնպես էլ քրիստոնյաների հանդեպ: Դերբիի այն հարցին, թե արդյո՞ք ներումը տարածվելու է նաև բուլղարական ջարդերի հեղինակների վրա, սուլթանի պատվիրակը պատասխանում է, որ այդ պարագայում բացառություն անելը շատ դժվար է լինելու: Դերբին խորհուրդ է տալիս չտարածել ներումն այն բանտարկյալների վրա, որոնք պատիժ են կրում ջարդերի իրագործման համար:33

Կոստանդնուպոլսի համաժողովի ձախողումից հետո բրիտանական դիվանագիտությունը փորձում էր պարզել Ռուսաստանի արտաքին քաղաքականության ապագա դիրքորոշումն Արևելյան հարցում: Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Լոֆտուսի հետ ունեցած հանդիպման (22 հունվարի) ժամանակ Գորչակովն ասում էր, որ

32 Eastern Papers. Part LXVIII (1876-1877). London, 1884, pp. 1094-1096.
33 Turkey No 15 (1877). Further Correspondence respecting the Affairs of Turkey. London, 1877, pp. 23-24.

Ռուսաստանը «եվրոպական համերգից» անջատ չի գործելու: Նա այն կարծիքին էր, որ Եվրոպան անարգանքի է մատնվել և չի կարող հանգիստ ընդունել այդ հանգամանքը, Եվրոպան «պետք է պաշտպանի իր պատիվը և անցնի հարկադիր միջոցների»: Դեսպան Իգնատևից ստացված տեղեկությունների համաձայն, Բարձր Դուռը շուտով առաջարկելու է ուղիղ բանակցություններ ռուսական կառավարությանը, սակայն Ռուսաստանը, Եվրոպայից անկախ, բանակցությունների սեղանի շուրջ չի նստելու Թուրքիայի հետ:34

Փետրվարի 15-ին Դերբին Լոֆտուսին տեղեկացնում էր ռուսական դեսպանի հետ ունեցած իր զրույցի մասին: Վերջինս նշում էր, որ Ռուսաստանն այսօր 500 հազարանոց բանակ ունի և պատրաստ է պատերազմի, սակայն նախընտրում է խնդրի խաղաղ կարգավորումը: Ռուսական կառավարությունը եվրոպական տերություններին առաջարկում է համատեղ քաղաքականության իրագործման միջոցով բարելավել Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության կացությունը: Եվրոպայի հսկողության և երաշխիքների սահմանումն այդ գործընթացի նկատմամբ, շարունակում էր դեսպանը, կբացառի Ռուսաստանի անկախ գործողությունների անհրաժեշտությունը:35

Հինգ օր անց Դիզրայելին Ռուսաստանի դեսպան Շուվալովին բացահայտորեն ակնարկեց, որ բրիտանական կառավարությունը պատրաստ է համաձայնության գալ ռուսական կողմի հետ՝ Օսմանյան կայսրության փլուզման պարագայում: Նա ասում էր. «Ռուսաստանը կարծում է, որ ինքը կարող է լուծել Արևելյան հարցը կամ միանձնյա գործողությունների, կամ երկու հարևան կայսրությունների միջև համաձայնության ճանապարհով: Դա անիրագործելի է. Անգլիայի ճակատագիրը չափազանց սերտորեն է կապված Արևելյան հարցի հետ, որպեսզի նրան հնարավոր լինի երկրորդ պլան մղել: Անգլիան խաղաղասեր երկիր է, սակայն՝ ուժեղ... Արևելյան հարցի խաղաղ լուծումը բացառապես կախված է Ռուսաստանի և Անգլիայի համաձայնությունից»:36

Այս պայմաններում Աբդուլ Համիդը փորձեց շտկել իրավիճակը՝ միանձնյա բռնապետական ռեժիմ հաստատելով երկրում և ձգտելով վերականգնել խզված հարաբերությունները տերությունների, մասնավորապես, Բրիտանիայի և Ռուսաստանի հետ:

---

34 Նույն տեղում, էջ 22:
35 Նույն տեղում, էջ 139-140:
36 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 105-106:

Փետրվարի 5-ին ձերբակալվեցին և աքսորվեցին Միդհաթ փաշան ու նրա բոլոր կողմնակիցները, 28-ին Բարձր Դուռը շտապեց խաղաղություն կնքել Սերբիայի հետ, վերջինիս համար շատ բարենպաստ պայմաններով:

Մարտի սկզբին, Արևելյան հարցի խաղաղ կարգավորման նպատակով, եվրոպական տերությունների մայրաքաղաքներ մեկնեց Իգնատյևը: Գերմանիան, Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան անմիջապես ընդունեցին ռուսական առաջարկները: Մարտի 9-ին, Ֆրանսիայում բրիտանական դեսպան Լայընզի հետ տեղի ունեցած զրույցի ընթացքում Իգնատյեվը նշում էր, որ ռուսական կառավարությունը ձգտում է պահպանել խաղաղությունը՝ Եվրոպայի «միացյալ գործողությունների» և Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի միջև «սիրալիր փոխըմբռնման» միջոցով: Նրա կարծիքով, «կիսավեր» վիճակում գտնվող Օսմանյան կայսրությունը պատերազմի դեպքում կարող է «քանդվել կտորների», ինչը վտանգավոր է Ռուսաստանի և Եվրոպայի համար: Իգնատևը Օսմանյան կայսրության վիճակը բնութագրում է որպես «էքստրեմալ» ինչը չափազանց մեծ վտանգ է ներկայացնում քրիստոնյա բնակչության համար: Ռուսական կառավարությունն առաջարկում էր տերություններին՝ Լոնդոնում ստորագրել արձանագրություն, որն իր մեջ պետք է պարունակեր Կոստանդնուպոլսի համաժողովի ընթացքում մշակված ծրագիրը, և այնուհետև ներկայացվեր Բարձր Դռանը:37

Մարտի 13-ին Դերբին Լոֆտուսին տեղեկացնում էր այն մասին, որ Շուվալովը ներկայացրեց իրեն վեց տերությունների կողմից ստորագրվելիք արձանագրության նախագիծը: Փաստաթղթում նշված էր, որ Կոստանդնուպոլսի համաժողովի մասնակից տերությունները, նպատակ ունենալով Արևելյան հարցի խաղաղ կարգավորումը, հաստատում են իրենց ընդհանուր շահագրգռվածությունն Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության վիճակի բարելավման խնդրում և դիմում Բարձր Դռանը՝ համապատասխան բարեփոխումներ իրագործելու խնդրանքով: Տերությունների դիվանագիտական ներկայացուցիչներն Օսմանյան կայսրությունում պետք է հսկողություն սահմանեն բարեփոխումների գործընթացի նկատմամբ: Իսկ եթե տերությունների հույսերը չարդարացան և քրիստոնյաների վիճակը չբարելավվեց, իրենց իրավունք է վերապահվում դիմել այնպիսի

37 Turkey No 15 (1877)..., pp. 172-173.

միջոցների, որոնք «կապահովեն քրիստոնյա բնակչության բարեկեցությունը և համընդհանուր խաղաղության շահերը»38

Համոզված լինելով, որ Աբդուլ Համիդը մերժելու է տերությունների կողմից ներկայացված առաջարկները, քանի որ հակառակ պարագայում կորցնելու է իր հեղինակությունը մահմեդական բնակչության շրջանում, Իգնատևի և Շուվալովի հետ ունեցած երկար բանակցություններից հետո, մարտի 31-ին, Դերբին, Մեծ Բրիտանիայում տերությունների դեսպանների հետ միասին, ստորագրում է արձանագրությունը:39

Ելույթ ունենալով այդ օրերին թուրքական խորհրդարանի բացմանը, Աբդուլ Համիդը հայտարարեց, որ իր քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու կայսրության ընդհանուր վիճակի բարելավմանը, Թանզիմաթի բարեփոխումների իրագործմանը, ինչպես նաև՝ ‘իմ կայսրության արժանապատվության և անկախության պաշտպանությանը’:40 Ապրիլի 9-ին սուլթանական կառավարությունը հայտագիր ներկայացրեց տերություններին, որում, իր ափսոսանքը հայտնելով այն հանգամանքի համար, որ Եվրոպան քննարկում է Օսմանյան կայսրության ներքին հարցերը, մերժեց տերությունների բոլոր առաջարկները: Օսմանյան կայսրությունում բրիտանական ժամանակավոր հավատարմատար Նասսաու Ժոկելինին ուղղված նամակում (12 ապրիլի) Դերբին տեղեկացնում էր իր հանդիպման մասին Մուսուրուս փաշայի հետ: Բարձր Դռան հայտագրին ծանոթանալուց հետո արտգործնախարարը պատասխանում է, որ երկու կառավարությունների մոտեցումներն այնքան հակադիր են, որ քննարկումն անիմաստ է և բրիտանական կառավարությունն այլևս անզոր է կանխելու անխուսափելի պատերազմը:41

Լոնդոնի արձանագրության մերժումից անմիջապես հետո ընդհատվեցին ռուս-թուրքական դիվանագիտական հարաբերությունները, իսկ ապրիլի 24-ին կայսր Ալեքսանդր 2-րդը ստորագրեց Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելու իր հրովարտակը:

38 Նույն տեղում, էջ 194-195:

39 Նույն տեղում, էջ 297-298:
40 Նույն տեղում, էջ 286:
41 Նույն տեղում, էջ 355:

## 2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՍՏ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1875-1877 թթ. ընթացքում, թուրքական իշխանությունների կողմից արևմտահայության հանդեպ իրագործվող ճնշման քաղաքականության ուժեղացմանը զուգընթաց, մեծանում է բրիտանական դիվանագիտության հետաքրքրությունն Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում տիրող իրավիճակի, քրիստոնյա բնակչության դրության նկատմամբ: Եթե մինչ այդ բրիտանական դիվանագիտական փաստաթղթերում հիմնականում տեղ էին գտնում Լիբանանի քրիստոնյաների կամ սլավոնների կացությանը, Բարձր Դռան և տեղական իշխանությունների կողմից նրանց հանդեպ կիրառվող քաղաքականությանը վերաբերող նյութեր, ապա սկսած 70-ական թթ. կեսերից արևմտահայության վիճակն ու նրա նկատմամբ արդեն իսկ որոշակի քաղաքականություն դարձած թուրք պաշտոնյաների և քուրդ ֆեոդալական վերնախավի ճնշումները, հարստահարությունները, հրկիզումներն ու սպանությունները դառնում են բրիտանական դիվանագետների ուշադրության առարկա:

Համաձայն բրիտանական հյուպատոսների զեկուցագրերի, արևելյան վիլայեթների քրիստոնյա բնակչության և, մասնավորապես, հայերի վիճակը ոչ միայն չէր փոխվել, այլև ավելի էր վատթարացել: 1875 թ. հուլիսի 19-ին Էրզրումում բրիտանական հյուպատոս, հայազգի Զոհրապը տեղեկացնում էր Դերբիին, որ վիլայեթը գտնվում է «սարսափելի վիճակում», Հաթթը Հումայունն այստեղ այդպես էլ չիրագործվեց, այս «դժբախտ երկիրը» ղեկավարելու նպատակով մայրաքաղաքից ուղարկվող պաշտոնյաների գործողությունների գլխավոր շարժառիթներն են քրիստոնյաների հանդեպ մոլեռանդությունը, դաժանությունն ու անպարկեշտությունը, սովորական երևույթ են դարձել հայերի սպանությունները, երիտասարդ աղջիկների բռնաբարությունները, ունեցվածքի թալանը:42

Հակահայկական քաղաքականության բնորոշ դրսևորումներից էին նաև սովորական դարձած հրկիզումները, որոնց ժամանակ ոչնչացվում և թալանվում էր հայերի ունեցվածքը, խաթարվում առևտուրն ու արտադրահարաբերությունների գործընթացը: Այսպես, 1876 թ.

---

42 Turkey No 16 (1877). Reports by Her Majesty`s Diplomatic and Consular Agents in Turkey respecting the Condition of the Christian Subjects of the Porte. 1865-1875. London, 1877, pp. 142-145.

դեկտեմբերին հրդեհվեցին և մահմեդական խուժանի ու թուրք զինվորների կողմից կողոպտվեցին Վան քաղաքի հայերին պատկանող 250-ից ավելի (հայ պատմագրության տվյալների համաձայն՝ 500-ից ավելի) խանութներն ու կրպակները: Տուժած հայերը հերթական անգամ բողոքագիր ներկայացրին Բարձր Դռանը, սակայն այն, ինչպես միշտ, մնաց անպատասխան:43

1876 թ. դեկտեմբերի 11-ին փոխհյուպատոս Ալֆրեդ Բիլիոտտին Տրապիզոնից հաղորդում էր դեսպան Էլիոտին շրջանի Շանա և Սամառուկսա գյուղերում տեղի ունեցած հարկահավաքների չարաշահումների առիթով անցկացված հետաքննության արդյունքների մասին: Թեև թուրք պաշտոնյաների չարաշահումների փաստերը հիմնականում հաստատվել էին, նահանգապետի կողմից փոխհյուպատոսին տրված բացատրությունների համաձայն, կայսրության բոլոր շրջաններում հայերը, «եսասիրական դրդապատճառներից» ելնելով, հատուկ չափազանցնում են իրողությունը: Ըստ փաշայի, հայերի նման կեցվածքն ուղղված է առանց այդ էլ դժվարին պայմաններում գտնվող կառավարության դեմ և կարող է հասցնել «ցավալի բարդությունների»: Բիլիոտտիի կարծիքով, թեև նահանգապետն ինքն է չափազանցնում սպասվող վտանգը, սակայն «անկեղծ է իր տեսակետներում»:44

Դեկտեմբերի 26-ին Զոհրաբը զեկուցում էր Դերբիին, որ շրջանի հայ գյուղացիների և առևտրականների վիճակն օրըստորե ավելի է ծանրանում, իսկ թուրք պաշտոնյաներն ու ոստիկանությունը ոչ միայն գործուն միջոցներ չեն ձեռնարկում նրանց պաշտպանելու մահմեդական խուժանի հրկիզումներից ու թալանից, քրդերի և զինվորների հարձակումներից, հարկահավաքների հարստահարություններից, այլև հաճախ իրենք են կազմակերպում և ղեկավարում անօրինականությունները:45

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, եվրոպական դիվանագիտության գործուն քայլերը՝ արևելյան ճգնաժամի լուծման ուղղությամբ, զգալի ազդեցություն ունեցան հայ ժողովրդի ինքնագիտակցության զարթոնքի, ազգային գաղափարախոսության ձևավորման, արևմտահայությունը թուրքական լծից ազատագրելու ձգտումների վրա: 1876 թ. վերջերին Կոստանդնուպոլսի Հայոց ազգային ժողովը քննարկում

43 Turkey No 15 (1877)..., p. 3.
44 Նույն տեղում, էջ 5-6:
45 Նույն տեղում, էջ 8:

էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման նպատակով եվրոպական տերություններին և Ռուսաստանին դիմելու հարցը: Դեկտեմբերին պատրիարք Ներսես Վարժապետյանը դիմեց եվրոպական տերությունների ներկայացուցիչների համաժողովին՝ նրա միջամտությունը խնդրելով Հայաստանի վիճակը բարելավելու, Բարձր Դռնից բալկանյան շրջանների նման առանձնաշնորհումներ պահանջելու համար: Այդ օրերին պատրիարքը բրիտանական դեսպան Էլիոտին ասում էր, որ հայ բնակչության դրությունն ավելի լավ չէ ապստամբ սլավոնների վիճակից, նույնիսկ՝ ակնարկում էր ապստամբական շարժում սկսելու մասին: Սոլսբերիին փոխանցելու համար դեսպանին ներկայացվեց Լոնդոնում հրատարակված անգլիացի քահանա Քրթիսի՝ Հանուն Թուրքիայի հայերի: Հայերն ու Արևելյան հարցը՝ գրքույկը:46 1877 թ. հունվարի 26-ին Ժոկելինը Դերբիին տեղեկացնում էր, որ դեսպանաժողովի ընթացքում Էլիոտը ստացել էր ուղերձներ երկրի բողոքական, հայ, հայ-կաթոլիկ համայնքներից և Թուրքիայում բնակվող բրիտանական քաղաքացիներից, որոնց բովանդակությունը գրեթե չէր տարբերվում միմյանցից: Քրիստոնյա համայնքներն իրենց երախտագիտությունն էին արտահայտում Մեծ Բրիտանիային, որը բոլոր մեծ տերությունների շարքում ամենից գործուն ջանքերն է գործադրում կայսրության քրիստոնյաների վիճակի բարելավման գործում:47 Սակայն

հայկական խնդրի վրա համաժողովի հատուկ ուշադրությունը հրավիրելու փորձերն այդպես էլ արդյունք չտվեցին:

Հունվարի 22-ին Բիլիոտտին հաղորդում էր Դերբիին, որ արևելյան ճգնաժամը, տերությունների միջամտությունն ու Կոստանդնուպոլսի համաժողովը զգալի ազդեցություն են ունեցել կայսրության արևելյան շրջանների բնակչության տրամադրությունների ու գործելակերպի վրա: Թուրքերի շրջանում նկատվում են «անկեղծ հայրենասիրության և կրոնական խանդավառության նշաններ, երկու զգացում, որոնք մշտապես խառնված են մահմեդականների սրտերում»: Չպետք է մոռանալ, շարունակում է փոխհյուպատոսը, որ կրոնը հանդիսանում է ներկայիս թուրք բնակչության հետերոգեն մասնիկները կազմող հիմնական կապող օղակը, թեև սխալ կլինի մտածել, որ թուրքերը, բացի մոլեռանդությունից, զուրկ են այլ «լավ զգացմունքներից»: Այսպիսով, մահմեդական բնակչության

---

46 Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.) ..., էջ 54-55, 60-61:
47 Turkey No 15 (1877) ..., p. 67.

հայրենասիրության հիմքում ընկած է կրոնը: Բիլիոտտիի կարծիքով, քանի եվրոպական տերություններից մեկը կամ մի քանիսը «կանգնած են թուրքերի կողքին», նրանց հայրենասիրությունը «ամբողջական զարգացում ձեռք չի բերում», սակայն այն հասնում է իր «բարձրագույն աստիճանին այն պահին, երբ նրանք այն տպավորությունն են ստանում, որ բոլոր քրիստոնյա տերությունները լքել են իրենց» և դավադրություն են նախապատրաստում իրենց դեմ: Փոխհյուպատոսի համոզմամբ, թուրքերը արյունարբու չեն և քրիստոնյաներին չեն հալածում հավատքի պատճառով, սակայն «ատում են ռուսներին», որոնք քրիստոնյաներին օգտագործում են որպես պատրվակ՝ կայսրության ներքին գործերին միջամտելու նպատակով: Այս հանգամանքը քրիստոնյա բնակչությանը «զզվանքի առարկա է» դարձնում «թուրքերի աչքում»: Ներկայումս, շարունակում էր Բիլիոտտին, թուրքերն այնպիսի պատրաստակամություն են հանդես բերում միացյալ Եվրոպային դիմադրելու ուղղությամբ, որ դեռևս չեն արտահայտում իրենց թշնամանքը քրիստոնյա բնակչության հանդեպ: Սակայն եթե եվրոպական տերությունները փորձեն ճնշում գործադրել նրանց երկրի նկատմամբ, ապա մահմեդականների ողջ զայրույթը թափվելու է քրիստոնյաների վրա և հետևանքները լինելու են «շատ ավելի սարսափելի, քան երբևիցե արձանագրված դաժանությունները»:48

Ինչ վերաբերում է քրիստոնյաներին, գրում էր փոխհյուպատոսը, ապա նրանք հիմնականում այն կարծիքին են, որ եթե բոլոր եվրոպական տերությունները շրջվեն Թուրքիայի դեմ, իրենց անվտանգությանը մեծ վտանգ է սպառնալու: Սակայն նրանք շարունակում են հուսալ և նույնիսկ համոզված են, որ Բրիտանիան ամեն պարագայում կանգնելու է Թուրքիայի կողքին: Ավելին, նշում էր Բիլիոտտին, քանի որ Եվրոպան զբաղված է այսօր միմիայն սլավոնների խնդրով, կայսրության այս շրջանի քրիստոնյաներին ոչինչ չի մնում, քան կանգնել թուրքերի կողքին: Դիվանագետի համոզմամբ, շրջանի բոլոր քրիստոնյաները՝ ուղղափառ, լուսավորչական, կաթոլիկ կամ բողոքական, բացասաբար են տրամադրված ռուսական իշխանությունների դեմ: Անդրադառնալով մասնավորապես հայերին, Բիլիոտտին նշում էր, որ նրանք դեռևս

որոշակի հույսեր են տածում «վերածնելու» իրենց ազգությունը Թուրքիայում, երբ Ռուսաստանում նման սպասելիքներ ունենալ չեն

---

48 Նույն տեղում, էջ 65:

կարող՝ Բոլորը, - գրում էր փոխհյուպատոսը, - կարծես թե գերադասում են նույնիսկ ներկայիս թուրքական իշխանությունը ռուսական վարչակարգին՝:49

Միաժամանակ բրիտանական հյուպատոսական գործակալները շարունակում էին տեղեկություններ հաղորդել խորացող ճգնաժամի մասին կայսրության արևելյան շրջաններում: Հունվարի 30-ին Զոհրաբը հաղորդում էր Էլիոտին Բիթլիսի շրջանում տիրող խուճապի մասին, որն առաջացրել էին քրդերի շարունակական հարձակումները քաղաքների և գյուղերի վրա, թալանն ու կողոպուտը, բռնաբարություններն ու սպանությունները: Հյուպատոսի կարծիքով, քրդերն օգտվում են տեղական իշխանությունների թուլությունից և անկազմակերպվածությունից, իրավիճակը վերահսկելու նրանց անկարողությունից: Վալի Սամիհ փաշայի խոստովանությամբ, երկիրը գտնվում է «մեծ վտանգի» առջև և քանի որ իր իշխանությունը սահմանափակ է, ժողովուրդն ինքը պետք է մտածի քրդերից պաշտպանվելու միջոցների մասին:50

Կոստանդնուպոլսի համաժողովի ձախողումն ու մեծ տերությունների դեսպանների մեկնումը երկրից բացասական անդրադարձ ունեցան կայսրության արևելյան շրջանում ստեղծված կացության վրա: Բիլիոտտին հաղորդում էր Դերբիին (7 փետրվարի), որ նորությունն իմանալուց հետո տեղի թուրք փաշան հայտնվել է «մեծ անհանգստության»մեջ: Նա խոստովանում էր փոխհյուպատոսին, որ կառավարությունը, ձգտելով հսկողության տակ պահել մահմեդական բնակչությանը, երբեմն նույնիսկ չափազանցնելով իրավիճակը, վախեցնում էր նրան Եվրոպայի հնարավոր դժգոհության վտանգով: Իսկ ներկայումս, երբ Եվրոպայի դժգոհությունը դարձել է իրականություն և սուլթանական կառավարությունը «կորցրել է հարկադրելու այդ ուժեղագույն լծակը», մահմեդականները, զգալով որ այլևս կորցնելու ոչինչ չունեն, կարող են դառնալ անկառավարելի:51

Մարտի կեսերին վատթարանում է Էրզրումի վիլայեթի քաղաքների և գյուղերի հայ բնակչության վիճակը: Քրդերի հարձակումներին ավելանում են թուրք սպաների և զինվորների կողմից կազմակերպվող թալանն ու կողոպուտը, բռնաբարություններն ու սպանությունները: Զոհրապը տեղեկացնում էր Դերբիին (15 մարտի), որ Էրզրում քաղաքում

---

49 Նույն տեղում, էջ 65-66:
50 Նույն տեղում, էջ 146-147:
51 Նույն տեղում, էջ 147:

քրիստոնյաների հալածանքն օրեցօր մեծանում է, քրիստոնեությունը բացահայտորեն հետապնդվում է, իսկ կառավարությունն ու տեղական իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկում զինվորականության հանցագործությունները կանխելու համար: Վիլայեթի գյուղերն ամբողջությամբ գտնվում են սպաների և զինվորների տնօրինության ներքո:52

Մարտի 20-ին Բիլիոտտին հաղորդում էր Դերբիին, որ Գյումուշհանեի ողջ տարածքում զինվորականության կողմից կատարվում են «լուրջ չարաշահումներ» քրիստոնյաների հանդեպ:53

Մարտի 27-ին Դերբին հատուկ շրջաբերական է իջեցնում հյուպատոսական ներկայացուցիչներին, որում մասնավորապես հանձնարարվում էր ժամանակին և ստույգ տեղեկատվություն հաղորդել քրիստոնյա բնակչության հանդեպ իրագործվող յուրաքանչյուր բռնության դեպքի մասին, ընդհուպ մինչև դեպքի վայրն այցելելու պայմանով:54

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, փոքրասիական ճակատում տեղի ունեցող ռազմական գործողությունները մեծ վնաս հասցրին արևմտահայությանը: Սուլթանական կառավարության և տեղական իշխանությունների թողտվության ու հրահրման պայմաններում Վանի, Բիթլիսի, Մոսուլի և Դիարբեքիրի շրջաններում կանոնավոր թուրքական զորքի բռնագրավումներին հետևում էին քրդական անկանոն հրոսակախմբերի կողոպուտն ու վայրագությունները: Հունիսի 28-ին Զոհրաբը Մեծ Բրիտանիայի նոր դեսպան Հենրի Լեյարդին55 զեկուցում էր Վանի շրջանում տիրող իրավիճակի մասին: Հեծելազորային ջոկատ կազմավորելու նպատակով Վան քաղաքում հավաքված քրդերը տեղական թուրք իշխանություններից ստացել էին 800 հրացան և ռազմաճակատ մեկնելու փոխարեն ցրվել շրջանի ողջ տարածքով, թալանել ու ավերել գրեթե բոլոր գյուղերը: Ընդ որում, նշում էր

---

52 Նույն տեղում, էջ 306:
53 Նույն տեղում, էջ 308-309:
54 Նույն տեղում, էջ 270:
55 Փորձառու դիվանագետ Օստին Հենրի Լեյարդը օգտվում էր վարչապետ Դիզրայելիի անսահման վստահությամբ: Նրան հանձնարարված էր ամրապնդել Մեծ Բրիտանիայի ազդեցությունը սուլթանական իշխանությունների վրա, նկատի առնելով այն հանգամանքը, որ Լեյարդը նախկին դեսպան, «թուրքերի մեծ բարեկամ» Կաննինգի աշխատակիցն էր և աշակերտը:

հյուպատոսը, «ավերումի գործը կատարվել էր այնքան հիմնովին, որ գյուղացիները մնացել են առանց սննդի և ներկայումս սնվում են սարերում հավաքած արմատներով»: Ըստ Զոհրաբի, աղետն այնպիսի ծավալներ է ընդունել, որ Վանի վալին թույլտվություն է ստացել ժողովրդին բաժանել կառավարության համար ամբարված ցորենը: Հյուպատոսը գրում էր, որ Մուշի և Բիթլիսի շրջանները գտնվում են ոչ պակաս վատթար վիճակում: Նա համոզված էր, որ մյուս տարի այս շրջաններին սով է սպասում:56

Իր հերթին, հուլիսի 4-ի և 10-ի զեկուցագրերում Լեյարդը Դերբիին տեղեկացնում էր Վանի վիլայեթում տեղի ունեցող համատարած անկարգությունների, թալանի և սպանությունների մասին: Նա գրում էր, որ օգտվելով պատերազմական իրավիճակից, քրդական հրոսակախմբերը Խիզանի շեյխ Ջելալէդդինի գլխավորությամբ քանդում և թալանում են ողջ շրջանը: Հայկական պատրիարքի տեղեկությունների համաձայն, Վանի շրջանում թալանվել էր 25 հայկական գյուղ: Ըստ դեսպանի, Բարձր Դուռը որոշում է ընդունել բարձրաստիճան զինվորական հրամանատար ուղարկել Վան՝ քրդերի անկարգություններին վերջ դնելու և բնակչությանը պաշտպանելու նպատակով:57

Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դեպքերի ընթացքում պատրիարք Ներսեսը մշտական կապի մեջ էր բրիտանական դեսպանության հետ: Հուլիսի 24-ին նա հանդիպում ունեցավ Լեյարդի հետ՝ վանահայության վիճակը քննարկելու նպատակով: Պատրիարքը հաղորդեց դեսպանին, որ նահանջի ժամանակ ռուսական զորքերը հրդեհել են Ուչքիլիսայի (Բագավան) հայկական եկեղեցին և տարել իրենց հետ նրա առաջնորդին այն բանի համար, որ վերջինս հրաժարվել է հայ բնակչությանը սուլթանի դեն ոտքի հանելուց: Ներսեսի կարծիքով, այդ իրադարձությունը բացասաբար կարող է անդրադառնալ հայերի ռուսամետ զգացմունքների վրա, իսկ թուրքական իշխանությունները կարող են օգտագործել այդ փաստը՝ հայ բնակչությանը քրդերի հարձակումներից պաշտպանելու նպատակով:58 Նույն օրերին պատրիարք Ներսեսը նամակ է հղում անգլիկան եկեղեցու առաջնորդին, որում նկարագրում է արևմտահայության վիճակը և աջակցություն խնդրում Մեծ Բրիտանիայի

_____
56 Turkey No 1 (1878). Further Correspondence respecting the Affairs of Turkey. London, 1878, pp. 72, 150.
57 Նույն տեղում, էջ 43, 64:
58 Նույն տեղում, էջ 101:

ժողովուրդից ու եկեղեցուց: Նա տեղյակ էր պահում արքեպիսկոպոսին, որ որոշում է ընդունել հայկական դպրոցների ուսումնական ծրագրերում մտցնել անգլիական լեզվի ուսուցումը, խնդրելով եկեղեցու աջակցությունն այդ հարցում: Փոխանցելով պատրիարքի նամակը հասցեատիրոջը, Դերբիին ուղղված կից նամակում Լեյարդը նպատակահարմար էր գտնում հնարավորության դեպքում աջակցել նախաձեռնությանը, քանի որ անգլիական լեզվի և գրականության իմացությունը չափազանց օգտակար կլինի հայերի համար:59

Հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում Զոհրաբը շարունակում էր տեղեկություններ հաղորդել դեսպանությանը՝ Էրզրումի վիլայեթում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Օգոստոսի 21-ին նա հաղորդում էր Դերբիին քրդական հրոսակախմբերի կողմից Բայազետում կազմակերպված հայերի կոտորածի մասին: Իր տվյալների համաձայն, քրդերը սպանել էին 480 տղամարդ և փախցրել 340 տղա, աղջիկ և երիտասարդ կին:60

Չբավարարվելով բրիտանական հյուպատոսարանի զեկուցագրերով, օգոստոսի սկզբին Լեյարդը Դիարբեքիր, Վան, Բիթլիս և Մուշ է ուղարկում դիվանագետ Ռեսսամին՝ քրիստոնյա բնակչության դեմ քրդական հրոսակախմբերի գործողությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու նպատակով:61 Սեպտեմբերի 6-ին վերջինս Դիարբեքիրից գրում էր դեսպանին, որ քրիստոնյա և մահմեդական բնակչության միջև գոյություն ունեցող լարվածության հիմնական պատճառը տեղական թուրք պաշտոնյաների անկատար և անազնիվ գործունեությունն է: Քրիստոնյաները գանգատվում են, որ մահմեդականներն իրենց մշտապես անպատվում և վիրավորում են շուկաներում ու փողոցներում, «սպառնալով բնաջնջել նրանց որպես գյաուրների»: Ըստ Ռեսսամի, Սլիվանի շրջանի հայ բնակչությունն այն աստիճանի է ճնշվել և հարստահարվել քուրդ ավատականների կողմից, որ նրանց մեծամասնությունն այլևս ընդունել է ռուսական կողնորոշում:62

Ուսումնասիրելով կայսրության արևելյան շրջաններում ստեղծված իրավիճակը, հոկտեմբերի 15-ին Ռեսսամը Վանից զեկուցում էր Լեյարդին, որ քրդական հրոսակախմբերի

59 Նույն տեղում, էջ 85:
60 Նույն տեղում, էջ 287:
61 Նույն տեղում, էջ 137-138:
62 Նույն տեղում, էջ 399:

կողմից հայ բնակչության հանդեպ իրագործվող հարստահարությունների փաստերն ամբողջապես համապատասխանում են իրականությանը: Մասնավորապես, Դիարբեքիր, Սղերդ, Բիթլիս, Մուշ և Վան քաղաքներում տեղի են ունեցել հայերի ունեցվածքի համատարած թալան և սպանություններ: Ռուսական զորքերի էվակուացումից անմիջապես հետո քրդերը թալանել և ավերել են չորս հայկական շրջաններ՝ Ալաշկերտը, Ղարաքիլիսան, Դիադինը և Բայազետը, իրենց հետ տարել 250-300 հայ երեխա և կին: Ըստ բրիտանացի դիվանագետի, մահմեդական մոլեռանդությունն այստեղ հասել է իր գագաթնակետին, քրդերը հայերին ջիհադ (սուրբ պատերազմ) են հայտարարել, տեղի է ունենում իսկական ջարդ: Միաժամանակ Ռեսսամը նշում էր, որ թուրք փաշաներ Աբդեր Ռահմանը՝ Դիարբեքիրում և Հասանը՝ Վանում, իրենց հնարավորությունների սահմաններում, ամեն ինչ անում են հարստահարություններին վերջ դնելու համար:63

Նոյեմբերի 28-ին Թիֆլիսում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Ռիկետսը Դերբիին հաղորդում էր ռուս գեներալ Տեր-Ղուկասովի բանակի հետ, հիմնականում Ալաշկերտից և Բայազետից գաղթած 850 հայ ընտանիքների մասին: Ըստ հյուպատոսի, հայերի ընդհանուր թիվը կազմում էր մոտավորապես 4 հազ. 250 հոգի: Հայ ընտանիքներից 23-ին բնակեցրել են Սուրմալուում, 270-ին՝ Էջմիածնում, 152-ին՝ Նոր Բայազետում, 200-ին՝ Գյոկչայում, 87-ին՝ Երևանում, 119-ին՝ Ալեքսանդրապոլում: Փախստականներից ստացված տվյալների համաձայն, Բայազետի 216 հայ ընտանիքներից 80-ը գաղթել են Ռուսաստան, իսկ 136-ը՝ Պարսկաստան: Գաղթականների մեծամասնությունը մտածում է կրկին հայրենիք վերադառնալու մասին, սակայն միմիայն Ռուսաստանի կողմից այն գրավված լինելու դեպքում:64

Բրիտանական դիվանագիտական աղբյուրների համաձայն, 1877-1878 թթ. պատերազմի, քրդական հրոսակների վայրագությունների ու ավերումների, ինչպես նաև թուրքական իշխանությունների կողմից իրագործվող Բալկաններից՝ թուրքերի, իսկ Կովկասից՝ չերքեզների և լեզգիների՝ Արևմտյան Հայաստանում ծրագրված բնակեցման հետևանքով, 1878 թ. Օսմանյան կայսրության արևելյան վեց վիլայեթներում հայերը կազմում էին

63 FO 424/62, No 245/1, pp. 142-145.
64 Turkey No 1 (1878) ..., pp. 533-534.

ընդհանուր բնակչության 35%-ը65: Ամերիկացի պատմաբան Ռոբերտ Զայդների կարծիքով, միայն այդ փաստը բավական էր, որպեսզի մեծ տերությունները «զսպեին հայերի անջատողական ձգտումներն ու Օսմանյան կայսրության զանազան քրիստոնյա փոքրամասնությունների շարքում դասեին նրանց «ամենից ոչ արտոնյալ» դիրքում»:66

## 3. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1877-1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Պատերազմի ընթացքում բրիտանական կառավարության կողմից հայտարարված չեզոքությունն ամենևին էլ կատարյալ չէր, այն կրում էր պայմանական և սպասողական բնույթ: 1877 թ. մայիսի 1-ի հայտագրում Դերբին հայտարարում էր, թե քանի որ Ռուսաստանի գործողությունները հակասում են Փարիզի (1856) և Լոնդոնի (1871) պայմանագրերի դրույթներին, որոնց համաձայն բոլոր տերությունները պարտավորվել են հարգել Օսմանյան կայսրության անկախությունն ու տարածքային ամբողջականությունը, Մեծ Բրիտանիայի կառավարությունը հավանություն չի տալիս ռուսական կառավարության որոշմանը:67 Մեկ օր առաջ մամուլում հրապարակվել էր՝Մեծ Բրիտանիայի հռչակագիրը չեզոքության մասին՝, որի բովանդակությունից նույնպես ակնհայտ երևում էր, որ բրիտանական կառավարությունը պաշտպանելու է Օսմանյան կայսրությանը:68 Եվ իրապես, պատերազմի ողջ ընթացքում բրիտանական դիվանագիտները քաջալերում էին սուլթանական կառավարությանը, մասնագետները՝ կառուցում ռազմական ամրություններ Բալկաններում և Արևմտյան Հայաստանում, իսկ սպաները թուրք զինվորներին ու նավաստիներին սովորեցնում էին

65 Zeidner Robert F. Britain and the Launching of the Armenian Question. - International Journal of Middle East Studies, 1976, No 7, p. 468.
66 Նույն տեղում, էջ 468-469:
67 Eastern Papers. Part LXVIII (1876-1877) ..., pp. 840-841.
68 Նույն տեղում, էջ 857-863:

ռազմական գործողությունների վարման ժամանակակից մեթոդներին և Բրիտանիայից ստացվող նոր զենքի տիրապետմանը:69

Այս ամենը հույս էր ներշնչում սուլթանական կառավարությանը, որ օրերից մի օր Բրիտանիան պատերազմ է հայտարարելու Ռուսաստանին, ինչը հաղթանակ է բերելու Օսմանյան կայսրությանը: Սակայն արտաքին քաղաքականությունը մշակելիս Դիզրայելին անպայմանորեն հաշվի էր առնում բազմաթիվ ներքին գործոնները: Ընդդիմությունը քննադատում էր կառավարությանը Թուրքիային աջակցելու համար, ազգայնական շրջանակները պահանջում էին պատերազմ հայտարարել Ռուսաստանին, իսկ արևելյան առևտրի հետ գործ ունեցող խոշոր բուրժուազիան կողմնակից էր չեզոքության քաղաքականությանը: Ի վերջո, հաղթեց վերջին գործոնը: 1877 թ. մայիսի 6-ին դեսպան Շուվալովին հասցեագրված նամակում Դերբին փոխանցում էր բրիտանական կառավարության դիրքորոշումը: Ակնհայտորեն հայտարարվում էր, որ Բրիտանիան կշարունակի հետևել չեզոքության քաղաքականությանը, հետևյալ պայմաններով. 1/ Սուեզի ջրանցքը պետք է շարունակի անխափան կերպով ապահովել Եվրոպայի և Ասիայի միջև կապը: «Ջրանցքի կամ նրա մատույցների շրջափակման յուրաքանչյուր փորձ դիտվելու է որպես սպառնալիք Հնդկաստանին և լուրջ վնաս է հասցնելու աշխարհի առևտրին». 2/ բացառել նույնիսկ պատերազմի նպատակով Եգիպտոսի վրա հարձակումը կամ նրա ժամանակավոր գրավումը, ինչը կարող է վնաս հասցնել եվրոպական երկրների առևտրական և ֆինանսական շահերին. 3/ Մեծ Բրիտանիան թույլ չի տա Կոստանդնուպոլսի անկումը կամ նրա «անցումը ներկա տերերից այլ ձեռքի տակ». 4/ բրիտանական կառավարությունը թույլ չի տա սևծովյան նեղուցների կարգավիճակի

մասին գոյություն ունեցող համաձայնությունների փոփոխություն. 5/ «Իրադարձությունների ընթացքը կարող է ցույց տալ, որ հնարավոր է լինեն այլ շահեր, օրինակ՝ Պարսից ծոցում, որոնք նա (բրիտանական կառավարությունը - Ա.Կ.) պարտավոր է պաշտպանել»:70 Այսպիսով, բրիտանական կառավարությունը մեկ անգամ ևս շեշտում էր իր չեզոքության պայմանականության մասին, ցույց տալիս սուլթանական

69 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 118:
70 Russia No 2 (1877). Correspondence respecting the War between Russia and Turkey. London, 1877, pp. 1-2.

կառավարությանը, որ պետք չէ անհանգստանալ ոչ մայրաքաղաքի, ոչ նեղուցների, ոչ էլ բրիտանական այլ շահերի մասին:

Ռուսական կառավարությունն իր պատասխանն ամփոփեց Շուվալովին ուղղված Գորչակովի նամակում (18 մայիսի), որը դեսպանը ներկայացրեց Դերբիին: Այն ամբողջապես ընդունում էր բրիտանական կառավարության պայմանները, նշելով, որ «վարելու է պատերազմը մինչև այն սահմանները, որոնք անհրաժեշտ են նպատակի իրագործման համար...»: Բրիտանական կառավարությունն իր կողմից, ասվում էր փաստաթղթում, պետք է անկեղծորեն նկատի առնի այն «հատուկ շահերը», որոնց համար Ռուսաստանը «մեծ զոհողությունների է ենթարկվում այս պատերազմում»: Ռուսական քաղաքականության նպատակը կայանում է «թուրքական իշխանության տակ գտնվող քրիստոնյաների ողբալի վիճակին և դրա հետևանքով հարատև դարձած անհանգստությանը վերջ դնելու բացարձակ անհրաժեշտության մեջ»: Նշվում էր, որ Եվրոպան նույնպես տառապում է գործերի նման վիճակից և հույս էր հայտնվում, որ «բարեկամ ու դաշնակից տերությունների հետ համագործակցաբար կայսերական կառավարությունը կջանա հասնել ցանկալի ավարտին»:71

Պատերազմի առաջին շրջանում բրիտանական կառավարությունը բավականին հանգիստ էր ընդունում ռուսական բանակի հաջողությունները: Մայիսի կեսերին Ռուսաստանի արևելյան բանակը՝ գեներալ Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ, գրավեց Արդահանը, սկսվեց Կարսի պաշարումը: Բալկանյան ճակատում հունիսի կեսերին ռուսական բանակն անցավ Դանուբը և վերցրեց Շիպկայի լեռնանցքը: Սակայն մեծ ուժեր կենտրոնացնելով արևելյան և արևմտյան ռազմաճակատներում, թուրքական հրամանատարությունը կարողացավ մինչև նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները հետաձգել իր պարտությունը:

Այդ ընթացքում բրիտանական կառավարությունը փորձում էր հանգստացնել երկրի գրգռված հասարակական կարծիքը: Հուլիսին Միջերկրական ծովում գտնվող բրիտանական նավատորմը հրաման ստացավ կուտակվել Բեզիկյան ծովախորշում, կառավարությունը խորհրդարանից 2.5 մլն ֆունտ ստեռլինգ պահանջեց լրացուցիչ ռազմական ծախսերի համար, որոշում ընդունվեց 1500 զինվոր ուղարկել Մալթա:72 Բրիտանական կառավարության

71 Նույն տեղում, էջ 3-4:
72 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 130-131:

նման ռազմատենչ քայլերը նպատակ էին հետապնդում մի կողմից վախեցնել Ռուսաստանին, թույլ չտալ վերջինիս հետագա առաջխաղացումը, իսկ մյուս կողմից ոգևորել սուլթանական կառավարությանը: Այդ շրջանի Դիզրայելիի նամակները թագուհուն և դեսպան Լեյարդին, ինչպես նաև իր ելույթները կառավարության նիստերում վկայում են, որ վարչապետը հանդես էր գալիս որպես Ռուսաստանին պատերազմ հայտարարելու կողմնակից: Այսպես, օգոստոսի 15-ին, կառավարության հերթական նիստի ընթացքում, պատասխանելով Դերբիի հարցապնդմանն այն մասին, որ պատերազմը սկսելու համար Մեծ Բրիտանիան դաշնակից չունի, Դիզրաելին հայտարարեց, թե բացի Թուրքիայից այլ դաշնակիցներ չեն պահանջվում: «Մենք տիրակալ ենք ծովում, - շարունակում էր նա, - և առանց որևէ դժվարության կարող ենք անցնել Հայաստանի վրայով և սպառնալ Ռուսաստանի ասիական տիրույթներին»:73 Լեյարդին ուղղված նամակներից մեկում (6 օգոստոսի) վարչապետը նշում էր. «...Ես վճռականորեն որոշել եմ պահպանել, եթե դա հնարավոր է, Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը: Թուրքերն ապացուցել են անկախության իրենց իրավունքը...և ես դեռ հույս ունեմ պատերազմի ավարտից հետո տեսնել Դուռը որպես Եվրոպայի կողմից ճանաչված, այլ ոչ թե արհամարհված տերություն: Եթե հաջորդի երկրորդ կամպանիան, ես մեծ հույսեր ունեմ, որ մեր երկիրը կմիջամտի ու իր վետոն կհայտարարի կործանարար պատերազմին և գաղտնի բաժանումի սև ծրագրերին...»:74 Իրականում բրիտանական կառավարությունը որոշել էր չմիջամտել, մինչև որ պատերազմից ակնհայտորեն պարտություն կրած Օսմանյան կայսրությունը օգնություն հայցի Մեծ Բրիտանիայից: Վերջինս էլ դիվանագիտական աջակցություն հանդես կբերի Բարձր Դռանը՝ տարածքային փոխհատուցում պահանջելու պայմանով:

Աշնանն իրավիճակը պատերազմի թատերաբեմում փոխվեց: Հոկտեմբերի 15-ին ռուսական զորքերը ջախջախեցին Մուխթար փաշայի արևելյան բանակը, նոյեմբերի 18-ին գրավեցին Կարսը, իսկ Էրզրումը ռուսներին հանձնվեց 1878 թ. փետրվարի 10-ին՝ զինադադարի պայմաններով: Արևմտյան ռազմաճակատում գեներալ Գուրկոյի ջոկատը դեկտեմբերին հաղթահարեց Բալկանյան լեռնաշղթան և հունվարի 4-ին գրավեց Սոֆիան:

_____
73 Seton-Watson R.W. Նշվ. աշխ., էջ 218:
74 Նույն տեղում, էջ 218-219:

1878 թ. հունվարի 15-17-ը տեղի ունեցած Ֆիլիպոլսի ճակատամարտից հետո ռուսական բանակը գրավեց Ադրիանապոլիսը և ընդհուպ մոտեցավ Կոստանդնուպոլսի մատույցներին:

Կարսի անկումն ու Արևմտյան Հայաստանի մի մասի գրավումը ռուսական բանակի կողմից չափազանց մեծ անհանգստություն պատճառեցին բրիտանական դիվանագիտությանը: 1877 թ. դեկտեմբերի 4-ին Դերբիին ուղղված գաղտնի զեկուցագրում Լեյարդը գրում էր, որ Ռուսաստանի կողմից Հայաստանի տարածքի մի մասի գրավումը դիպչում է Անգլիայի շահերին: «Եթե Ռուսաստանը գրավի Հայաստանը, - շարունակում էր դեսպանը, - ապա դա շատ խիստ կվնասի Անգլիայի շահերին ու ազդեցությանն Արևելքում և նման զարգացումը խոչընդոտելու նպատակով մենք պետք է ձեռք առնենք բոլոր անհրաժեշտ միջոցները: Այս առիթով մենք պետք է դիմենք յուրաքանչյուր եվրոպական տերության օգնությանն ու աջակցությանը»:

Ըստ Լեյարդի, Ռուսաստանի կողմից Հայաստանի գրավումը կունենա հետևյալ բացասական հետևանքները.

1/ Կարսի անկումն ու Հայաստանի գրավումը կբերեն այն կարծիքի հաստատմանը, որ Ռուսաստանի ուժն անառարկելի է, իսկ Բրիտանիան հնարավորություն չունի խոչընդոտելու ռուսական առաջխաղացմանն Արևելքում: Այն մեծ ազդեցություն կունենա մահմեդական հասարակական կարծիքի վրա ողջ Ասիայում և չափազանց մեծ վտանգ կներկայացնի Հնդկաստանում բրիտանական իշխանության համար.

2/ Հայաստանի կամ նրա մի մասի գրավումը, որի կազմում կմտնեն Կարսը, Բաթումը և Վանը, Ռուսաստանին առավելություններ կտա Թուրքիայի կամ Պարսկաստանի հետ ապագա պատերազմում, հնարավորություն կստեղծի նրա համար հսկողություն սահմանելու Վրաստան, Պարսկաստան և Թուրքիա տանող ճանապարհների վրա: Այդ դեպքում տեղի կունենա մյուս եվրոպական տերությունների հետ Ռուսաստանի քաղաքական և տնտեսական հարաբերությունների ամբողջական փոփոխություն: Եթե նույնիսկ Էրզրումն ու Տրապիզոնը չհայտնվեն Ռուսաստանի ձեռքում, ապա նրա տիրապետումը Բաթումին ու Կարսին, հնարավորություն կտա դա անելու յուրաքանչյուր հարմար պահի: «Ունենալով Հայաստանն իր ձեռքում, նա կդառնա Փոքր Ասիայի և Տիգրիսի ու Եփրատի հովիտների իսկական տերը»: Եթե Ռուսաստանը չի կարող Հնդկաստան բանակ ուղարկել Միջին Ասիայի կամ ծովի միջոցով, ապա Բաթումի և Հայաստանի գրավման դեպքում նա մեծ դյուրությամբ հնարավորություն կունենա դա անելու Կասպից ծովի հարավում գտնվող Պարսկաստանի

տարածքով: Ինչպես Պարսկաստանում, այնպես էլ Հայաստանում ռուսական զորքերին կդիմավորի բարեկամաբար տրամադրված բնակչությունը, ինչը չի կարելի ասել Միջին Ասիայի թուրքմենների մասին: Այդ իսկ պատճառով Բաթումն ու Հայաստանը այդպիսի կարևոր նշանակություն ունեն Ռուսաստանի համար.

3/ Իհարկե, կարելի է մտածել, որ եթե Սուեզի ջրանցքն այժմ գտնվում է Բրիտանիայի ձեռքում, արժե՞ արդյոք լրջորեն մտածել Հնդկաստան տանող այլընտրանքային ճանապարհի մասին: Դա, իհարկե, ավելի ձեռնտու է, քան Սիրիայի, Միջագետքի, Տիգրիսի ու Եփրատի հովիտներին տիրապետելը: Սակայն Հայաստանի գրավումը Ռուսաստանի կողմից կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ նեղուցների նկատմամբ բրիտանական հսկողության համար: Այդ իսկ պատճառով Բրիտանիային անհրաժեշտ է այլընտրանքային ճանապարհ ունենալ դեպի Հնդկաստան՝ Հայաստանի և Տիգրիսի ու Եփրատի հովիտների միջոցով: «Այդ իսկ պատճառով մեզ ձեռնտու է, որպեսզի այդ տարածքները մնան միմիայն թուրքերի ձեռքում: Առաջին քայլը, որը մենք պետք է ձեռնարկենք պատերազմում խաղաղություն ստորագրելուց հետո, դա Թուրքիային համոզելն է՝ սկսել Կոստանդնուպոլիս - Պարսից ծոց երկաթգծի կառուցումը».

4/ Հայաստանի գրավման հետևանքները ծանր անդրադարձ կունենան բրիտանական առևտրի վրա: Ներկայումս Տրապիզոնով և Էրզրումով իրագործվող բրիտանական առևտուրը ստիպված պետք է անցնի Բաթումով: Դա նշանակում է, որ բրիտանական ապրանքն ու արտադրանքը ենթարկվելու է ծանր հարկման, եթե ոչ սահմանափակումների:75

Դեսպան Լեյարդի զեկուցագրում արտահայտված մտքերը փաստորեն որոշիչ դեր խաղացին Հայկական հարցում բրիտանական դիվանագիտության քաղաքականության ձևավորման գործընթացում: Նման դիրքորոշումը բացարձակապես նկատի չէր առնում արևմտահայության և կայսրության այլ փոքրամասնությունների կացությունն ու շահերը: Հետագայում բրիտանական դիվանագիտությունն ամեն ինչ արեց, որպեսզի ռուսական բանակի կողմից Արևմտյան Հայաստանի մի մասի գրավումը փոխարինվի այդ շրջանում բարենորոգումների իրագործման հանդեպ եվրոպական մեծ տերությունների ընդհանուր հսկողությամբ, ինչը, բացի ողբերգությունից, ոչինչ չտվեց արևմտահայությանը:

_____
75 FO 424/63/124, No 1444. Secret. Mr. Layard to the Earl of Derby. Constantinople, December 4, 1877, pp. 86-89.

1878 թ. հունվարի 31-ին Ադրիանապոլսում ստորագրված զինադադարից անմիջապես հետո բրիտանական դիվանագիտությունն անցավ ակտիվ գործողությունների՝ Ռուսաստանի ռազմական հաջողությունների արդյունքները հնարավորին չափ կրճատելու, Օսմանյան կայսրության իրավունքները պաշտպանելու դիմաց Մերձավոր Արևելքում առավելություններ ստանալու և իր օգտին տարածքային զիջումներ ապահովելու ուղղությամբ: Բրիտանական կառավարության հաշվարկների համաձայն, ինչպես Օսմանյան կայսրությունն, այնպես էլ Ռուսաստանը գտնվում էին ուժասպառ վիճակում, և եկել էր այն պահը, երբ Բրիտանիան պետք է թելադրեր իր պայմանները: Մինչև Բեռլինի համաժողովի ավարտն ընկած ժամանակաշրջանը բրիտանական դիվանագիտության գործողություններն ուղղված էին այդ գերխնդրի լուծմանը:

Փետրվարի սկզբին բրիտանական խորհրդարանի համայնքների պալատում բանավեճեր էին ընթանում կառավարության և ընդդիմադիր կուսակցության ղեկավար Գլադստոնի ու նրա համախոհների միջև: Ռազմական նախարար Հարդը 6 միլիոն ստեռլինգ էր պահանջում՝ Օսմանյան կայսրությունը Ռուսաստանից փրկելու նպատակով: Ի վերջո, համայնքների պալատը քվեարկեց գումարը հատկացնելու օգտին: Մարտական վիճակի բերվեց բրիտանական նավատորմը, Հնդկաստանից 7 հազ. զինվոր տեղափոխվեց Մալթա: Նման քայլերով բրիտանական կառավարությունը փորձում էր ցույց տալ, որ հակված է մինչև վերջ պաշտպանելու Օսմանյան կայսրությունը: Սակայն նա չէր կարող այդ անել բացահայտորեն, քանի որ նրա ընդդիմադիրները ժամանակին մեծ աղմուկ էին բարձրացրել թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված բուլղարական կոտորածները մերկացնելու ուղղությամբ: Դա էր հիմնական պատճառը, որ Դիզրայելիի գործողություններում զուգակցվում էին ճկուն դիվանագիտական քայլերն ու Ռուսաստանի դեմ ուղղված սպառնալիքները:76

Ռուս-թուրքական բանակցություններն ընթանում էին Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի դիվանագիտության ճնշման տակ՝ նեղուցներում բրիտանական նավատորմի ռազմացույցերի պայմաններում: Բրիտանական կառավարությունը դեմ էր, որ պատերազմի արդյունքների շուրջ բանակցություններն ընթանան միայն պատերազմող կողմերի միջև,

_____
76 Կիրակոսյան Ջ. Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և անգլիական դիվանագիտությունը. - Բանբեր Երևանի Համալսարանի, 1878, Հ. 1, էջ 88:

համարելով, որ համաձայն Փարիզի պայմանագրի և Լոնդոնի կոնվենցիայի դրույթների, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվող որևէ համաձայնագիր պետք է հաստատվի եվրոպական տերությունների կողմից: Մարտի 3-ին Սան-Ստեֆանոյում ստորագրված ռուս-թուրքական խաղաղության պայմանագրով Բարձր Դուռը ճանաչում էր Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի անկախությունը, ստեղծվում էին ինքնավար Բուլղարիա, Բոսնիա և Հերցեգովինա, Ռուսաստանին էին անցնում Բեսարաբիայի մի մասը, Կարսը, Արդահանը, Բայազետը, Բաթումը, Օլթին, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը, Խումարը: «Նկատի առնելով այն, - գրված էր պայմանագրի 16-րդ հոդվածում, - որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:77 Թեև առաջին անգամ Հայաստան անվանումը և հայերը հիշատակվում էին միջազգային դաշնագրում, ակնհայտ է, որ ռուսական դիվանագիտությունը մտադրություն չուներ պայքարելու Արևմտյան Հայաստանի ինքնավարության համար, ինչպես դա տեղի ունեցավ բալկանյան ժողովուրդների պարագայում: Ռուսաստանը սահմանափակվեց միմիայն արևմտահայերին հովանավորողի և գրավված տարածքներում բարենորոգումների իրագործմանը հսկողի դերով: Սակայն, արձանագրելով ռուսական բանակի հեռանալուց հետո հայերի համար ստեղծվելիք վտանգը, Ռուսաստանի կառավարությունը միջազգային իրավունքի ուժ էր հաղորդում Բարձր Դռան կողմից Հայաստանում բարենորոգումներ իրագործելու անհրաժեշտությանը:

Այդ օրերին մեծ ոգևորություն ապրող Կոստանդնուպոլսի հայ ազգային մարմինների ներկայացուցիչները հանդիպումներ էին ունենում ռուս և անգլիացի դիվանագետների հետ՝ Արևմտյան Հայաստանի համար ինքնավարություն պահանջելու նպատակով: Մարտի 18-ին Լեյարդը Դերբիին հաղորդում էր պատրիարք Ներսես հետ տեղի ունեցած իր հանդիպման

---

77 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923): Երևան, 1972, էջ 92:

մասին: Պատրիարքը Դերբիին հասցեագրված նամակ էր հանձնել դեսպանին, որն արտահայտում էր հայերի դիրքորոշումը ներկա քաղաքական իրավիճակում: Լեյարդը նախարարին հիշեցնում է պատրիարքի դիրքորոշումն անցյալ տարի, երբ նա պնդում էր, թե հայ ժողովուրդը բավարարված է թուրքական իշխանությամբ և նախընտրում է մնալ նրա, քան թե Ռուսաստանի կառավարման ներքո: Նա նույնիսկ հայտարարում էր հայերի թուրքական բանակում ծառայելու և կայսրության տարածքը պաշտպանելու պատրաստակամության մասին: Սակայն երեկ, շարունակում էր դեսպանը, Ներսես պատրիարքը հայտարարեց, որ Ռուսաստանի ռազմական հաջողությունները, Հայաստանի մեծ մասի գրավումը, Եվրոպական Թուրքիայի քրիստոնյա բնակչության համար նախատեսված ինքնավարությունը և, մասնավորապես, ռուս-թուրքական նախնական պայմանագրում տեղ գտած Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ հոդվածի հանգամանքը կտրուկ կերպով փոխեց իրավիճակը: Ըստ

պատրիարքի, հայերն այսօր ատում են մահմեդական իշխանությունը, որը չկարողացավ ապահովել հայ բնակչության անվտանգությունը քրդերի հարձակումներից Վանի վիլայեթում և Բայազետի շրջանում: Եթե հայերը չկարողացան հասնել իրենց արդար պահանջների իրագործմանը եվրոպական միջամտության ճանապարհով, նրանք կդիմեն Ռուսաստանին և կպայքարեն այնքան ժամանակ, մինչև վերջինս անեքսիայի չենթարկի Հայաստանը: Արդեն իսկ այսօր Հայաստանի բնակչության մեծ մասը պատրաստ է գաղթել Ռուսաստան: Պատրիարքը համոզված էր, որ հայերի պահանջը ինքնավար քրիստոնյա կառավարման մասին քննարկվելու է վեհաժողովում և որ Եվրոպան պաշտպանելու է ինքնավար հայկական մարզի ստեղծման հարցը: Այդ առիթով պատրիարքը դեսպանին ցույց է տալիս Բիսմարկին ուղղված իր նամակը: Լեյարդի այն հարցին, թե հայերն ինչ են պատկերացնում Հայաստան անվան տակ, պատրիարքը պատասխանում է, որ նկատի ունի Վանը և Սեբաստիան, Դիարբեքիրի մեծ մասը և Կիլիկիան: Բրիտանական դեսպանը նշում է, որ այդ բոլոր շրջաններում մահմեդականները կազմում են բնակչության մեծամասնությունը: Ներսեսը պատասխանում է, որ այդ շրջանների մահմեդականները ևս դժգոհ են սուլթանական կառավարությունից և կնախընտրեն քրիստոնեական իշխանություն, որը կապահովի նրանց կյանքի և ունեցվածքի անվտանգությունը:

Զրույցի վերջում Լեյարդն իր կասկածն է հայտնում առ այն, որ առաջիկա վեհաժողովը քննարկելու է այդ հարցը: Պատրիարքը հայտարարում է, որ այդ դեպքում հայերը ոտքի

կկանգնեն թուրքական կառավարության դեմ և կհասնեն Հայաստանի անեքսիային Ռուսաստանի կողմից:

Այդ առիթով իր մտահոգությունն արտահայտելով Դերբիին, դեսպանը նշում է, որ Օսմանյան կայսրության փլուզումը ցանկալի իրադարձություն կարող է հանդիսանալ որոշ պետությունների համար, սակայն Մեծ Բրիտանիան լրջորեն պետք է նախապատրաստվի դրա հետևանքներին: Իր համոզմամբ, Ռուսաստանին ենթակա և Սիրիային սահմանակից Հայաստանի ստեղծումը անընդունելի երևույթ է Բրիտանիայի շահերի համար: «Ինքնավարությանը կհետևի Ռուսաստանի անեքսիան», - եզրակացնում է դեսպանը:78

Նախարարին ուղղված հերթական գաղտնի զեկուցագրում (20 մարտի) Լեյարդը հաղորդում էր սուլթանական կառավարության մեջ բարձր պաշտոն զբաղեցնող մի հայի հետ իր ունեցած հանդիպման մասին: Վերջինս տեղեկացրել է դեսպանին, որ հայ համայնքի մի քանի ղեկավարների հետ միասին սահմանադրություն է նախապատրաստում նոր հայկական «ինքնավար մարզի» համար, որը պետք է ներկայացվի վեհաժողովի քննարկմանը: Նա որևէ դժվարություն չէր տեսնում «հայկական պետության» կազմավորման գործում, ընդունելով սակայն, որ որոշակի առարկություն կարող է ծագել նրա կազմում Կիլիկիան ընդգրկելու հարցում, թեև այդ շրջանը ժամանակին անկասկած, պատկանել է Հայաստանի թագավորությանը: Նա ավելացրել էր, որ եթե վեհաժողովը մերժի հայերի պահանջները, ապա նրանք ամբողջապես կհակվեն Ռուսաստանի կողմը և ավելի կնախընտրեն ռուսական անեքսիան, քան թուրքական իշխանության շարունակումը: Ըստ հայազգի պաշտոնյայի, հայերն ակնկալում են Մեծ Բրիտանիայի աջակցությունը վեհաժողովի ընթացքում:

Զեկուցագրի վերջում դեսպանը գրում էր. «Ես այնքան էլ չքաջալերեցի այցելույիս հնադարյան Տիգրանի թագավորության վերականգնման ծրագիրը, ոչ էլ խոստացա նրա

սահմանադրությունը ներկայացնել Չերդ պայծառափայլության նպաստավոր քննարկմանը»:79

Այդ օրերին Լեյարդը շարունակ զգուշացնում էր Դերբիին, որ հայերի շարժումն ինքնավար Հայաստան ստեղծելու նպատակով լուրջ հետևանքների կբերի և առաջին հերթին

_____
78 FO 424/68/639, No 365. Confidential. Mr. Layard to the Earl of Derby. Constantinople. March 18, 1878, pp. 346-348.
79 FO 424/68/644, No 383. Confidential. Constantinople, March 20, 1878, p. 354.

հարված կհասցնի Մեծ Բրիտանիայի շահերին: «Կասկած չկա, - նշում էր դեսպանը մարտի 25-ին, - որ Անգլիան ցանկանում է բնականոն կառավարման հաստատում, կյանքի և ունեցվածքի անվտանգության ապահովում ինչպես հայերի, այնպես էլ մահմեդական և քրիստոնյա այլ համայնքների համար՝ թուրքական իշխանության ներքո. սակայն այլ բան է կիսաանկախ մարզի ստեղծումը, որն ուշ թե շուտ դուրս է գալու Թուրքական կայսրության կազմից և կախման մեջ ընկնելու Ռուսաստանից»: Հայերն արժանի են Անգլիայի ուշադրությանն ու աջակցությանը, շարունակում էր դեսպանը, նրանց համար պետք է ինչ-որ մի բան անել վեհաժողովի ժամանակ՝ լավ կառավարում ապագայում և պաշտպանություն քրդական ցեղերից: Ըստ Լեյարդի, հայերը աշխատասեր ժողովուրդ են, գլխավորապես զբաղված են գյուղատնտեսությամբ, բարիդրացիական հարաբերություններ ունեն թուրք բնակչության հետ, որը նույնպես տառապում է քրդերի դաժանությունից: Կոստանդնուպոլսում և ուրիշ մեծ քաղաքներում նրանք դառնում են հաջողակ դրամատերեր և առևտրականներ, նրանցից ոմանք պատասխանատու պաշտոններ ունեն Բարձր Դռան մեջ, զբաղվում են կարևոր քաղաքական խնդիրներով: Մայրաքաղաքի հայերը խոսում են թուրքերեն և ավելի լավ հարաբերությունների մեջ են թուրքերի հետ, քան հույները: Ուստի, եզրակացնում է բրիտանական դեսպանը, Դռան շահերից է բխում ամեն կերպ աջակցել և արդարացի վերաբերվել հայերին, բավարարել նրանց պահանջները և, այսպիսով, թույլ չտալ նրանց շրջադարձը դեպի Ռուսաստան: Ինքնավարության շնորհումը մի նահանգի, որը ներկայումս անկարող է ինքնակառավարման, հնարավոր է ավելի վատ, քան լավ հետևանքներ ունենա, որոնք հեռու են նպաստավոր լինելուց բրիտանական շահերի համար:80

Լեյարդի դիրքորոշումն իր որոշիչ ազդեցությունն ունեցավ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հանդեպ Մեծ Բրիտանիայի քաղաքականության ձևավորման վրա: Այդ ընթացքում Դերբին որևիցե կողմնորոշում կամ ցուցում չտվեց դեսպանին հայկական խնդրի վերաբերյալ, քանի որ ընդհանուր առմամբ, և, հնարավոր է նաև այս հարցում, չէր կիսում Դիզրայելիի խիստ ռազմատենչ հակառուսական քաղաքականության պոռթկումն անմիջապես Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից հետո: Մարտի 28-ին Դերբին հրաժարական տվեց, նրան փոխարինեց Սոլսբերին, որը լիովին պաշտպանում էր

_____
80 FO 424/69/107, No 401. Confidential. Constantinople, March 25, 1878, pp. 54-55.

Դիզրայելիի վարած քաղաքականությունը և այդ թվում՝ դեսպան Լեյարդի դիրքորոշումն Արևմտյան Հայաստանի հանդեպ:

## 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումով արևելյան ճգնաժամը մտավ իր վերջին և եզրափակիչ փուլը: Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականությունը նպատակաուղղվեց Բալկաններում և Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի պատերազմական ձեռքբերումների դեմ, Օսմանյան կայսրությունից իրեն համար առավելագույն օգուտ քաղելու, պատերազմի ընթացքում չեզոքություն հանդես բերելու համար փոխհատուցում ստանալու խնդրին: Ռուս-թուրքական պայմանագրի պաշտոնական տեքստը ստանալուց անմիջապես հետո (23 մարտի) Լոնդոնում ստեղծվեց հատուկ կոմիտե, որը մշակեց և կառավարության քննարկմանը ներկայացրեց իր եզրակացությունը պայմանագրի հոդվածների վերաբերյալ: 16-րդ հոդվածի մասին նշվում էր. «...Նախատեսված բարելավումներն ու բարենորոգումները պետք է երաշխավորվեն մի պարտավորությամբ, որ ստանձնելու են բոլոր տերությունները և ոչ թե միայն Ռուսաստանը, և որ դրանք պետք է...դրվեն բոլոր տերությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի հսկողության տակ: ...Ինչ վերաբերում է Հայաստանում տարածքային կորուստների փոխհատուցմանը, ...պետք է եռանդուն ջանքեր գործադրվեն դեպի արևելք այնքան հեռու ետ մղելու նախատեսվող անեքսիայի արևմտյան սահմանները, որքան թույլ է տալիս Տրապիզոնից Պարսկաստան տանող ներկա առևտրական ճանապարհը Թուրքիայի տարածքում պահելու համար»:81

Բրիտանական կառավարությունը քննարկեց ռուս-թուրքական պայմանագրի խնդիրը մարտի 27-ին կայացած հատուկ նիստում: Վարչապետն առաջարկեց դիմել խորհրդարանին՝

_____

81 Temperley H.W.V. and Penson L.M. Foundations of British Foreign Policy from Pitt (1792) to Salisbury (1902). Cambridge, 1938, pp. 369-370.

պահեստի զորակոչ կազմակերպելու, հայտարարել Մեծ Բրիտանիայի զենքի դիմելու պատրաստակամության մասին, ինչպես նաև Հնդկաստանում տեղակայված զորքի միջոցով գրավել Կիպրոսը և Իսկենդերունը՝ Հայաստանում ռուսական ձեռքբերումները չեզոքացնելու նպատակով: Կառավարության դիրքորոշումն իր արտահայտությունը գտավ նոր նշանակված նախարար Սոլսբերիի բրիտանական դեսպաններին ուղղված և տերություններին հասցեագրված շրջաբերականում, ուր խստագույնս քննադատվում էին 1856 և 1871 թթ. պայմանագրերին հակասող Սան-Ստեֆանոյում ստորագրված փաստաթղթի բոլոր դրույթները, պահանջվում այն քննարկել եվրոպական վեհաժողովում: Վիճարկելով մեծ Բուլղարիայի ստեղծումը, մեղադրելով ռուսական կառավարությունն Արևելքում տիրապետող դիրքեր գրավելու մեջ, Սոլսբերին նշում էր. «Հայաստանի պատվարների ձեռքբերումը կապահովի այդ շրջանի բնակչության անմիջական կախվածությունն այդ տերությունից..., իսկ Տրապիզոնից Պարսկաստան անցնող խոշոր եվրոպական առևտուրը... կխափանվի ռուսական կառավարության ցանկության դեպքում՝ նրա առևտրական համակարգի արգելակիչ խոչընդոտների միջոցով»:82

Ապրիլի 13-ին Շուվալովը Սոլսբերիին հանձնեց Գորչակովի պատասխանը բրիտանական շրջաբերականին, ուր ռուսական կողմը ներկայացնում էր իր հակադիր տեսակետները

հիմնական հարցերի շուրջ: Ռուս արտգործնախարարը մասնավորապես նշում էր, որ Ռուսաստանի ձեռքբերումները Հայաստանում կրում են միմիայն պաշտպանական, երկրի անվտանգությունն ապահովող բնույթ և հանդիսանում պատերազմի բնական հետևանքներ: Եթե Մեծ Բրիտանիան, շարունակում էր Գորչակովը, ցանկանում էր փրկել Թուրքիան, ապա նա պետք է համաձայներ ռուսական դիվանագիտության նախկինում արված առաջարկների հետ, և այդ իսկ պատճառով նա այսօր հիմք չունի անտեսելու Ռուսաստանը, որն արյուն է թափել ներկայիս հաջողություններին հասնելու համար:

---

82 Walker Christopher J. Armenia. The Survival of a Nation. New York, 1980, p. 112. 1876 թ. տվյալներով Տրապիզոն-Բայազետ ճանապարհով իրականացվող բրիտանական առևտրի ծավալը բավականին մեծ թիվ էր կազմում: Մեծ Բրիտանիա կատարվող արտահանումը Պարսկաստանից կազմել էր 104 հազ. 081 ֆունտ ստեռլինգ, ներմուծումը Բրիտանիայից Պարսկաստան՝ 754 հազ. 764 (Williams Charles. The Armenian Campaign. A Diary of the Campaign of 1878 in Armenia and Koordistan. London, 1878, p. 361):

Գորչակովն իր զարմանքն է հայտնում առևտրական ճանապարհի կետի վերաբերյալ, ընդգծելով, որ տարբեր առիթներով բրիտանական կառավարության շատ անդամներ հայտարարել են, որ եթե նույնիսկ Ռուսաստանը գրավի Էրզրումը և Տրապիզոնը, բրիտանական շահերին վտանգ չի կարող սպառնալ: Ռուս արտգործնախարարն իր պատրաստակամությունն է հայտնում քննարկելու բոլոր վիճելի հարցերը եվրոպական տերությունների վեհաժողովում:83

Մեծ հակառուսական աղմուկ բարձրացնելով խորհրդարանում և մամուլում, սպառնալով պատերազմական գործողություններ սկսել Ռուսաստանի դեմ, բրիտանական կառավարությունը նպատակադրվել էր տարածքային և քաղաքական զիջումներ կորզել ստեղծված իրավիճակում: Որպես տարածքային փոխհատուցում նախատեսված էր Կիպրոսը, որը հետագայում պետք է դառնար հենակետ՝ Մերձավոր և Միջին Արևելք ներթափանցելու նպատակով: Այդ ծրագիրը բրիտանական դիվանագիտությունը պատրաստվում էր իրագործել Օսմանյան կայսրությունում՝ իր հսկողության ներքո բարենորոգումների իրագործման միջոցով: Ապրիլին դեսպան Լեյարդը գրում էր Սոլսբերիին, որ անգլիական շահերին համապատասխանում էր Թուրքիայի ընդհանուր բարենորոգումն ու ամրապնդումը, մի կողմ թողնելով զանազան ազգությունների «զգացական տեսությունները»: Նրա կարծիքով, լավ կազմակերպված կառավարման համակարգի գոյության դեպքում Թուրքիան սքանչելի բանակ կունենա և կկարողանա դիմագրավել հայկական բարձրավանդակի վրայով դեպի հարավ ձգտող ռուսական տարածմանը:84

Ապրիլի կեսերին Դիզրայելին և Սոլսբերին որոշում ընդունեցին առանձին բանակցություններ սկսել ռուսական կառավարության հետ՝ մինչև եվրոպական վեհաժողովի բացումը որոշակի համաձայնության հասնելու նպատակով: Մշակվեց բրիտանական կառավարության դիրքորոշումը, որի հիմքում ընկած էին հետևյալ հիմնական կետերը. 1/ անկախ բուլղարական պետության տարածքը չպետք է տարածվի Բալկանյան լեռնաշղթայից հարավ. 2/ եթե Ռուսաստանը կարողանա պահպանել իր ձեռքբերումներն Ասիայում, ապա

---

83 Turkey No 27 (1878). Further Correspondence respecting the preliminary Treaty of Peace between Russia and Turkey signed at San-Stefano. London, 1878, pp. 8-9.
84 Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)..., էջ 176:

Մեծ Բրիտանիան պետք է ստանա այնպիսի տարածքային փոխհատուցում, որի միջոցով պաշտպանվեն նրա ասիական շահերը:85 Պարզաբանելով այդ դիրքորոշումը ապրիլի 21-ին թագուհուն ուղղված իր նամակում, Սոլսբերին նշում էր, որ Մեծ Բրիտանիան պետք է պատրաստ լինի զիջել Կարսը Ռուսաստանին՝ Բալկանները Օսմանյան կայսրության հյուսիսային սահման ճանաչելու պայմանով, սակայն եթե Բաթումը նույնպես մնաց ռուսների ձեռքում, «մենք պետք է գրավենք այնպիսի կղզի կամ կայան Փոքր Ասիայի ափին, ինչը հնարավորություն կտա չեզոքացնել Ռուսաստանի ներկայությունը Հայաստանում»:86

Ապրիլի վերջին Սորսբերին տեղեկացրեց Շուվալովին կառավարության որոշման մասին և ռուսական կողմի քննարկմանը ներկայացրեց ռուս-բրիտանական արձանագրության նախագիծը: Նախնական քննարկումից անմիջապես հետո դեսպանը մեկնեց Սանկտ-Պետերբուրգ՝ ռուսական կառավարության համաձայնությունը ստանալու նպատակով: Այդ ընթացքում դեսպան Լեյարդը ակտիվ գործունեություն էր ծավալել Կոստանդնուպոլսում, փորձելով համոզել սուլթանական կառավարությանը Հայաստանում անհապաղ բարենորոգումներ իրագործելու անհրաժեշտության մասին: Մայիսի 11-ին Սոլսբերիին ուղղված զեկուցագրում նա գրում էր. «Ներկա պայմաններում կարևոր է, որ Դուռն ամեն ինչ անի, իր ուժերի ներածին չափով, ապացուցելու հայերին, որ ապագայում երաշխավորելու է նրանց համար արդարացի կառավարում, զրկելով Ռուսաստանին նրանց կողմից միջամտության հնարավորությունից կամ «Հայկական հարցի» (այս տերմինն առաջին անգամ է հանդիպում բրիտանական փաստաթղթերում - Ա.Կ.) բարձրացումից, ինչը նոր բարդությունների աղբյուր կարող է դառնալ Թուրքիայի համար»: Դեսպանը զեկուցում է նախարարին մեծ վեզիրի հետ իր ունեցած հանդիպման մասին, ուր խորհուրդ է տալիս անհապաղ միջոցների դիմել՝ Էրզրումի և Դիարբեքիրի հայկական բնակչությանը քրդերի հարձակումներից պաշտպանելու նպատակով: Ըստ Լեյարդի, նա իր պատրաստակամությունն է հայտնել հատուկ հանձնարարություններով Հայաստան ուղարկել բարձր պաշտոնյա Ալի Շևֆիկ բեյին, հրաման է արձակել զինվորական ղեկավարներին զենք կիրառել քրդերի դեմ, պատժել ամեն տեսակի անկարգությունների հեղինակներին: Զեկուցագրի վերջում դեսպանը դիմում է Սոլսբերիին՝ Դիարբեքիրում

---

85 Cecil G. Նշվ. աշխ., էջ 242:
86 Seton-Watson R.W. Նշվ. աշխ., էջ 410:

հյուպատոս և փոխ-հյուպատոս նշանակելու առաջարկությամբ, որոնք պետք է իրականացնեն սուլթանական իշխանությունների կողմից կատարվող միջոցառումների հսկողությունը:87

Հայտնվելով ոչ բարենպաստ միջազգային պայմաններում, Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի միացյալ ճնշման տակ, ռուսական կառավարությունը որոշում ընդունեց զիջումների գնալ և բանակցություններ վարել բրիտանական կառավարության հետ:

Մայիսի 23-ին, Լոնդոն վերադարձած Շուվալովը սկսեց քննարկել Սոլսբերիի հետ բրիտանական առաջարկները: Արդյունքում Սոլսբերին և Շուվալովը ստորագրեցին գաղտնի «Արձանագրություն Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան-Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին», որը փաստորեն նվազեցրեց Ռուսաստանի հաջողությունները պատերազմում, դարձրեց ռուս-թուրքական խաղաղության պայմանների հարցը միջազգային քննարկումների առարկա: Ռուսական կառավարությունը հրաժարվում էր միացյալ Բուլղարիա ստեղծելու իր մտադրությունից, իսկ Արևմտյան Հայաստանում վերադարձնում որոշ գրավված տարածքներ: Արձանագրության 7-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման վերաբերյալ Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրում «...պարունակվող խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից», իսկ 10-րդ հոդվածով Ալաշկերտի հովիտը և Բայազետ բերդաքաղաքը վերադարձվում էին Օսմանյան կայսրությանը՝ «քանի որ այդ հովիտը հանդիսանում է դեպի Պարսկաստան տանող տրանզիտային մեծ ճանապարհ և թուրքերի աչքում ունի հսկայական նշանակություն»: Ռուսաստանը հավաստիացնում էր բրիտանական կառավարությանը, որ ապագայում Ռուսաստանի սահմանը չի ընդարձակվի Ասիական Թուրքիայի կողմից» :88 Փաստորեն Բեռլինում գումարվելիք վեհաժողովը եվրոպական տերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևակերպելու էր բրիտանա-ռուսական արձանագրության արդյունքները:

Անմիջապես արձանագրության ստորագրումից հետո Սոլսբերին համապատասխան հրահանգ է իջեցնում Լեյարդին: Նա գրում էր, որ բրիտանական կառավարությունը չի կարող անտարբեր վերաբերվել Ասիական Թուրքիայի խնդիրներին: Այդ շրջանը բնակեցված է

87 FO 424/70/587, pp. 360-361.
88 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 100:

զանազան դավանանք ունեցող, ինքնավարության և անկախության ձգտումներից զուրկ տարբեր ժողովուրդներով, որոնք, ըստ նախարարի, կարիք ունեն միայն սուլթանի արդար կառավարման: Բաթումի, Կարսի և Արդահանի թողնումը Ռուսաստանի ձեռքում նշանակում է, որ նա շարունակելու է տարբեր տեսակի բանսարկություններ և սադրանքներ կազմակերպել՝ երկրի վիճակը ապակայունացնելու և Օսմանյան կայսրությունը վերջնականապես քայքայելու նպատակով: Ըստ Սոլսբերիի, բրիտանական կառավարությունը չի պատրաստվում ռազմական միջոցների դիմել՝ Ռուսաստանի կողմից գրավված տարածքները Թուրքիային վերադարձնելու համար, քանի որ դա շատ թանկ ձեռնարկում է: Ասիական Թուրքիայում օսմանյան կառավարման կայունացման միջոց կարող էր հանդիսանալ պայմանավորվածության ձեռքբերումը Ռուսաստանի հետ այն մասին, շարունակում էր Սոլսբերին, որ նրա հետագա ոտնձգությունները Ասիայի թուրքական տարածքների հանդեպ կկանխվեն ուժի օգտագործումով: Արտգործնախարարը հանձնարարում էր դեսպանին պաշտոնապես հայտարարել Բարձր Դռանը, որ Բրիտանիան չի զբաղվելու կայսրության ասիական տարածքների պաշտպանությամբ, մինչև որ չստանա երաշխիքներ քրիստոնյաների և այլ հպատակների համար անհրաժեշտ բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ: Այդ նպատակով անհրաժեշտ է հսկողության տակ պահել Բարձր Դուռը: Կարևոր է, որ բրիտանական զորքերը դիրք գրավեն Փոքր Ասիայի և Սիրիայի ափերի մոտ: Այդ նպատակների համար

Կիպրոսը կարող էր հանդիսանալ ամենից հարմար վայրը: Անհրաժեշտ է հավաստիացնել սուլթանական կառավարությանը, որ Կիպրոսի գրավումը Բրիտանիայի կողմից երաշխավորելու է Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը: Սոլսբերին ուղարկում է Լեյարդին Կիպրոսի հարցին վերաբերող բրիտանա-թուրքական համաձայնագրի նախագիծը և հանձնարարում ներկայացնել այն Բարձր Դռան քննարկմանը:89

Լեյարդն անմիջապես անցավ աշխատանքի՝ սուլթանին և նրա կառավարությանը համոզելու ուղղությամբ: Արդեն իսկ մյուս օրը նա հեռագրում էր Սոլսբերիին, որ պատրաստ է իր վրա վերցնել պայմանագրի ստորագրման պատասխանատվությունը: Դեսպանն առաջարկում էր ժամանակ չկորցնել, օգտագործել երկրում տիրող խառնաշփոթ իրավիճակը

89 Turkey No 36 (1878). Correspondence respecting the Convention between Great Britain and Turkey of June 4, 1878. London, 1878, pp. 1-2.

և Աբդուլ Համիդի ծանր հոգեկան վիճակը՝ բրիտանական կառավարության համար շահեկան այդ փաստաթուղթը ստորագրելու նպատակով: Լեյարդի և սուլթանի միջև կայացած գաղտնի բանակցությունների արդյունքում, հունիսի 4-ին, վերջինս իր մոտ հրավիրեց մեծ վեզիր Սավֆետ փաշային և հրամայեց ստորագրել պայմանագիրը: Երբ Սավֆետ փաշան փորձեց առարկել, դեսպանը նրան ասաց. «Եթե օսմանյան կառավարությունը չստորագրի պայմանագիրը, ապա անգլիացի լիազոր ներկայացուցիչները վեհաժողովի ընթացքում չեն ձգտելու փոխել խաղաղության պայմանները: Ավելին, անգլիական կառավարությունը կգրավի Կիպրոսն իր նավատորմի միջոցով, առանց Բարձր Դռան թույլտվության»: Եվ մեծ վեզիրը ստիպված եղավ ստորագրել Կիպրոսի կոնվենցիան՝ «Պաշտպանական դաշինքն Անգլիայի և Թուրքիայի միջև»:90

Համաձայն փաստաթղթի առաջին հոդվածի, «եթե Ռուսաստանն իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում Նորին Կայսերական Մեծություն Սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պետք է որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ Նորին Կայսերական Մեծություն Սուլթանի հետ՝ զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար: Ի փոխհատուցում Նորին Կայսերական Մեծություն Սուլթանը խոստանում է Անգլիային՝ մտցնել անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք հետո պիտի մանրամասնաբար որոշվեն երկու պետությունների միջև և որոնք նպատակ ունեն Դռան քրիստոնյա և այլ հպատակների բարվոք կառավարումը և պաշտպանությունը խնդրի առարկա եղած երկրներում և որպեսզի Անգլիան իր պարտականությունը կատարելու համար հարկավոր եղած միջոցներն ապահովի, Նորին Կայսերական Մեծություն Սուլթանը հավանություն է տալիս նույնպես, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից»:91

Այսպիսով, պայմանավորվածություն ձեռք բերելով Ռուսաստանի կառավարության հետ և համոզված լինելով, որ նա նոր պատերազմ սկսելու հնարավորություն և մտադրություն չունի, բրիտանական դիվանագիտությունը խորամանկորեն ստիպեց Աբդուլ Համիդին զիջել Կիպրոսը, դրանով իսկ ապահովելով Մեծ Բրիտանիայի ազդեցության տարածումը

90 Шпаро О.Б. Նշվ. աշխ., էջ 194-195:
91 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 104:

Միջերկրականի արևելյան մասում: Բրիտանական կառավարությունը հանդես եկավ Օսմանյան կայսրության դաշնակցի, նրա ասիական տարածքների պաշտպանի դերում: Արևմտյան Հայաստանը փաստաթղթում չէր հիշատակվում, իսկ բարենորոգումների խնդիրը արծարծված էր ընդհանրապես քրիստոնյաների և կայսրության այլ հպատակների առումով: Այսպիսով, ճնշված ժողովուրդների ինքնավարության ձգտումներին բրիտանական դիվանագիտությունը հակադրում էր Օսմանյան կայսրությունն ամբողջապես բարենորոգելու ծրագիրը, խոչընդոտում նրանց ազատագրության գործը: Այդ օրերին դեսպան Լեյարդը և թուրք սահմանադրականները ճնշում էին գործադրում Կոստանդնուպոլսի հայ ղեկավարների վրա, պահանջելով հրաժարվել Օսմանյան կայսրությունից բաժանվելու կամ նույնիսկ տեղական ինքնավարության հասնելու գաղափարներից:

Երբ վերջնականապես հայտնի դարձավ, որ Սան-Ստեֆանոյի նախնական համաձայնագիրը դրվելու է եվրոպական տերությունների վեհաժողովի քննարկմանը, հայ ազգային մարմինները որոշեցին անմիջականորեն դիմել տերությունների կառավարություններին, հատուկ պատվիրակություն ուղարկելով Եվրոպայի մայրաքաղաքներ: Պատվիրակության ղեկավար նշանակվեց արքեպիսկոպոս Մկրտիչ Խրիմյանը: Կառավարություններին ներկայացնելու նպատակով նախապատրաստվեց ծրագիր, համաձայն որի կայսրության հայաբնակ շրջաններում ստեղծվում էր վարչական ինքնավարություն տերությունների հսկողության ներքո: Համաձայն Ներսես պատրիարքի դիրքորոշման, երախտապարտ լինելով Ռուսաստանին, հարկավոր էր ապահովել Մեծ Բրիտանիայի բարյացակամությունը և միացյալ Եվրոպայի միջամտությամբ իրագործել ազգային ինքնավարության գաղափարը: Սակայն հայ ազգային իշխանությունների կողմից որդեգրած գիծը անիրականանալի էր, քանի որ բրիտանական դիվանագիտությունը զբաղվում էր հայերի խնդրով միմիայն Ռուսաստանի ծրագրերը խափանելու, նրա առաջխաղացումը կանխելու նպատակով: Փաստորեն հայերի միջոցով իրագործվում էր Լեյարդի ծրագիրը՝ Արևմտյան Հայաստանն Օսմանյան կայսրության տիրապետության ներքո պահելու մասին:92

92 Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)..., էջ 220-221:

Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Հռոմ և Փարիզ, հանդիպումներ ունեցավ Իտալիայի ու Ֆրանսիայի արտգործնախարարների հետ, այնուհետև ժամանեց Լոնդոն: Մեծ Բրիտանիայի փոքրաթիվ, սակայն բավականին գործուն հայ համայնքի ջանքերի շնորհիվ պատվիրակությունը հանդիպեց անգլիական եկեղեցու առաջնորդ Քենտրբերիի արքեպիսկոպոսին, ընդդիմադիր կուսակցության ղեկավար Գլադստոնին, արտգործնախարար Սոլսբերիին, Էդինբուրգի հերցոգին, բրիտանական խորհրդարանի մի շարք պատգամավորների, բազմաթիվ լրագրողների և այլն: Վարչապետը չընդունեց հայ պատվիրակներին, իր քարտուղարի միջոցով փոխանցելով, որ չափազանց զբաղված է և առաջարկելով իրենց հետաքրքրող խնդրով դիմել արտգործնախարարությանը: Մայիսի

10-ին պատվիրակությանն ընդունեց Սոլսբերին: Խրիմյանն արտգործնախարարին ներկայացրեց Ներսես պատրիարքի կողմից ստորագրված մարտի 1-ի կոնդակը, որտեղ վերջինս դիմում էր Մեծ Բրիտանիային՝ քրիստոնյա հայերին օգնելու, հայկական գավառներում ինքնավարություն ստեղծելու խնդրանքով: Ընդունելով դիմումը, Սոլսբերին հայկական խնդրի ապագան պայմանավորեց միայն տերությունների առաջիկա վեհաժողովով, վստահեցնելով, որ հայերի համար ապահովվելու է բարեկեցություն, ազատություն և խաղաղություն երաշխավորող վարչաձև:93

Հունիսի սկզբին, հայկական պատվիրակության հանդիպումների և հայ համայնքի գործունեության արդյունքում, Հայկական հարցն առաջին անգամ քննարկվեց բրիտանական խորհրդարանի համայնքների պալատում: Ելույթ ունեցած խորհրդարանականներ Կարնարվոնը և Շեֆտսբյուրին ներկայացրեցին արևմտահայության ծանր վիճակը, նշեցին, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը հավասար իրավունքներ չի ապահովում կայսրության բոլոր քրիստոնյաների համար, պահանջեցին բրիտանական կառավարությունից՝ Բեռլինի վեհաժողովի աշխատանքի ընթացքում պաշտպանել հայերի իրավունքները, ինչպես նաև նպաստել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործմանը: Պատասխանելով

93 Sarkissian A.O. History of the Armenian Question to 1885. Urbana, 1938, pp. 78-79; Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)..., էջ 98-104; Բայրամյան Լ. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում: Երևան, 1982, էջ 104-106; Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը: Հ. Ա.: Փարիզ, 1934, էջ 88:

խորհրդարանականների հարցապնդումներին լորդերի պալատում, Սոլսբերին անհնարին էր համարում հայ բնակչության համար հատուկ բարենորոգումների իրականացումը՝ հայերի ցրվածության և մահմեդականների հնարավոր բացասական հակազդեցության պատճառով: Արտգործնախարարի կարծիքով, Հայկական հարցի լուծումը շատ ավելի բարդ է, քան բալկանյան սլավոնների խնդիրը, ուստի հնարավոր միակ ելքը կայանում է Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումներ իրականացնելու մեջ:94

Հունիսի 13-ին Բեռլինում բացվեց եվրոպական տերությունների վեհաժողովը: Մեծ Բրիտանիայի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները Գերմանիայի կանցլեր Բիսմարկի նախագահությամբ ուղիղ մեկ ամիս վերաքննության էին ենթարկում Սան-Ստեֆանոյի պայմանագրի պայմանները՝ դրանք 1856 թ. Փարիզի և 1871 թ. Լոնդոնի պայմանագրերի հիմնադրույթներին համապատասխանացնելու, այսինքն միջազգայնացնելու նպատակով: Այդ նպատակով Բեռլին էին ժամանել նաև Ռումինիայի, Հունաստանի, Սերբիայի, Չեռնոգորիայի, Իրանի և Կոստանդնուպոլսի Հայոց ազգային ժողովի պատվիրակությունները, որոնք սակայն վեհաժողովում իրավահավասար մասնակցության իրավունք չստացան, բավարարվելով տերությունների ներկայացուցիչների հետ առանձին հանդիպումներով: Միայն հունական և ռումինական պատվիրակություններն իրավունք ստացան ելույթներ ունենալու վեհաժողովի առանձին նիստերում:

Բրիտանական թագուհու որոշմամբ Բեռլինի վեհաժողովում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներ նշանակվեցին Դիզրաելին, Սոլսբերին և Գերմանիայում դեսպան լորդ Օդո Ռասսելը:95 Հունիսի 8-ին Ռասսելին ուղղված նամակում Սոլսբերին գրում էր, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված Օսմանյան կայսրության ասիական տարածքների ռուսական անեքսիան, ինչը բավականին վնասակար հետևանքներ կարող է ունենալ Մեծ Բրիտանիայի շահերի համար, թվում է, լուրջ հակազդեցության առարկա չի դառնալու մյուս եվրոպական տերությունների կողմից: Իհարկե, շարունակում է արտգործնախարարը, այնքան էլ դժվար չի լինելու ստիպել Ռուսաստանին զգալի զիջումների

_____
94 Hansard`s Parliamentary Debates, 1878. Vol. 240, pp. 1242-1246.
95 Turkey No 39 (1878). Correspondence relating to the Congress of Berlin with the Protocol of the Congress. London, 1878, p. 1.

գնալու գրավված տարածքների հարցում, որոնք ներառնում են նաև Տրապիզոնից Թավրիզ տանող առևտրական ճանապարհը: Սակայն ամեն դեպքում, նշում էր Սոլսբերին, վստահություն չկա, որ Ռուսաստանը հոժարակամորեն զիջումների կգնա Բաթումի, Կարսի կամ Արդահանի հարցում, ինչպես նաև հնարավոր է, որ Բրիտանիայի փաստարկները վեհաժողովի ընթացքում ցանկալի աջակցություն չստանան մյուս տերությունների կողմից: Սոլսբերին դեսպանին հանձնարարում է մինչև վեհաժողովի բացումը և նրա ընթացքում աշխատել այդ ուղղությամբ տերությունների ներկայացուցիչների հետ, քանի որ պատերազմական գործողությունների հետևանքով գրավված տարածքների անեքսիան կարող է վիժեցնել կայսրության ապագա կայունացման գործընթացն ու թուլացնել թուրքական կառավարության դիրքերը:96

Վեհաժողովի բացման ժամանակ արտասանած իր առաջին ելույթում Դիզրայելին հայտարարեց, որ բրիտանական պատվիրակությունը ժամանել է Բեռլին կարգավորելու թուրքական սուլթանի գործերը և հնարավորություն տալու նրան դրսևորել իր իշխանությունն Օսմանյան կայսրությունում: Ռուսական պատվիրակության ղեկավար Գորչակովն իր խոսքում փորձում էր ապացուցել, որ Ռուսաստանի գլխավոր նպատակն է՝ ապահովել ու երաշխավորել ինքնավար գոյավիճակ Օսմանյան քրիստոնյա ժողովուրդների համար:97

Հունիսի 13-ից մինչև հուլիսի 4-ը վեհաժողովի նիստերին քննարկվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի Բալկաններին և սևծովյան նեղուցներին վերաբերող հոդվածները: Բրիտանական և ավստրո-հունգարական պատվիրակությունների ճնշման տակ Բուլղարիան բաժանվեց երկու մասի. Բալկանյան լեռնաշղթայից հյուսիս ընկած շրջանում ստեղծվեց անկախ բուլղարական պետություն, իսկ Բալկաններից հարավ գտնվող Արևելյան Ռումելիան մնաց Օսմանյան կայսրության կազմում: Ռուսաստանին հաջողվեց պաշտպանել Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի անկախությունը: Մեծ Բրիտանիայի պատվիրակների պնդումով Ավստրո-հունգարական կայսրության մաս կազմեցին Բոսնիան և Հերցեգովինան:98

_____
96 Նույն տեղում, էջ 2-3:
97 Նույն տեղում, էջ 13:

98 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 106-126:

Հույն-թուրքական հարաբերությունների քննարկման արդյունքում որոշվեց, որ եթե Օսմանյան կայսրությունն ու Հունաստանը փոխհամաձայնության չհասնեն սահմանների ճշտման հարցում, տերություններն առաջարկելու են իրենց միջնորդությունը բանակցությունների ընթացքում:99 Բրիտանական պատվիրակության դիրքորոշումը բալկանյան և, մասնավորապես, հունական հարցում, դժգոհություն առաջացրեց սուլթանական կառավարության մոտ: Այդ օրերին Լեյարդը Դիզրայելիին և Սոլսբերիին գրում էր, որ թուրք կառավարող շրջանակները բավականին լուրջ կասկածանքով են սկսել վերաբերվել Մեծ Բրիտանիայի դիվանագիտության քայլերին, մտածելով, թե Բեռլինի վեհաժողովում այն իրագործում է տերությունների միջև գոյություն ունեցող կայսրության բաժանման գաղտնի համաձայնությունը: Դեսպանը հաղորդում էր, որ Բարձր Դուռը որոշում է ընդունել հետաձգել Կիպրոսի փոխանցումը Մեծ Բրիտանիային՝ մինչև վեհաժողովի ավարտը: Որոշումը պատճառաբանվում էր նրանով, որ այդ դեպքում Ռուսաստանը կհրաժարվի կայսրության ասիական տարածքները վերադարձնելուց, իսկ մյուս տերությունները, հնարավոր է, կպահանջեն այլ տարածքային զիջումներ սուլթանի տիրույթների հաշվին:100

Դիզրայելին և Սոլսբերին ծայր աստիճան զայրացել էին թուրքական կառավարության վարքագծի վրա: Օսմանյան կայսրության ասիական տիրույթների հարցի քննարկումից երկու օր առաջ Սոլսբերին գրում էր Լեյարդին, որ բրիտանական կառավարությունը դիտում է Բարձր Դռան դիրքորոշումը որպես՝ աղաղակող դավաճանություն և սև ապերախտություն՝ այն ջանքերի հանդեպ, որոնք գործադրվում են Թուրքիայի փրկության նպատակով: Բրիտանիան հետագա քայլեր չի ձեռնարկելու Բարձր Դռան օգտին, շարունակում էր նախարարը, մինչև որ սուլթանը չստորագրի Կիպրոսի վերաբերյալ հրովարտակը: Սոլսբերին հրահանգում էր դեսպանին տեղեկացնել սուլթանին Բրիտանիայի դիրքորոշման մասին և՝ ջանք ու սպառնալիք՝ չխնայել հրովարտակն անհապաղ ստորագրել տալու համար:101

---

99 Նույն տեղում, էջ 116:
100 Lee Dwight E. Great Britain and the Cyprus Convention Policy of 1878. Cambridge, 1934, pp. 97-98.
101 Նույն տեղում, էջ 98:

Միաժամանակ բրիտանական պատվիրակության համար չափազանց կարևոր էր, որ Կիպրոսի պայմանագրի գոյության մասին չիմացվի մինչև Բաթումի կարգավիճակի և հայկական տարածքների հարցերի շուրջ որոշում ընդունվելու պահը: Այս իրավիճակը հնարավորություն էր տալիս Բրիտանիայի ներկայացուցիչներին մի կողմից նոր զիջումներ կորզել Ռուսաստանից, մյուս կողմից՝ ներկայանալ որպես Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության գլխավոր պաշտպան:

Հուլիսի 4-ին վեհաժողովի 12-րդ նիստի քննարկմանը դրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի Արևմտյան Հայաստանին վերաբերող հոդվածը: Համաձայնելով հոդվածի վերջին երեք տողերի հետ, որոնք ուղղված էին «...հայերին բարելավումներ և բարենորոգումներ շնորհելուն», Սոլսբերին պահանջեց կրճատել ռուսական զորքերին որպես բարենորոգումների իրագործման երաշխիք այդ տարածքում թողնելու վերաբերյալ

հոդվածի առաջին երեք տողերը: Հակառակ պարագայում նա կառաջարկի հայերին վերաբերող հոդված՝ նոր խմբագրությամբ: Տեղյակ պահելով ներկաներին, որ դեռևս պատրաստ չէ տվյալ հարցի քննարկմանը, Շուվալովն իր մտահոգությունն արտահայտեց այն մասին, որ մինչև խոստացված բարենորոգումների իրագործումը ռուսական զորքերի դուրսբերումը կարող է լուրջ անկարգությունների տեղիք տալ: Նա առաջարկեց հետաձգել քննարկումը՝ «Հայաստանի հարցն ավելի ամբողջությամբ քննելու» նպատակով:102

Հուլիսի սկզբին բրիտանական մամուլն անսպասելիորեն հրապարակեց Շուվալով-Սոլսբերի գաղտնի արձանագրության տեքստը: Մամուլն ու ընդդիմությունը մեծ աղմուկ բարձրացրին Լոնդոնում, մեղադրելով կառավարությանը և, մասնավորապես, Բեռլինում բանակցող պատվիրակությանը դավաճանության, Ռուսաստանի օգտին մեծ զիջումներ անելու մեջ: Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի պատվիրակությունների հանդիպումների ընթացքում բրիտանական կողմն, ի հակասումն Շուվալով-Սոլսբերի արձանագրության, պահանջեց Օսմանյան կայսրությանը վերադարձնել ոչ միայն Էրզրումը, Բայազետն ու Ալաշկերտի հովիտն, այլև Կարսը, Արդահանն ու Բաթումը: Սոլսբերին նշում էր, որ այդ տարածքների կորուստը չափազանց բացասական ազդեցություն կթողնի Ասիայում սուլթանի հեղինակության վրա: Նա նույնիսկ հայտարարում է Շուվալովին, որ ստիպված հրաժարական է տալու, քանի որ ինքն է ստորագրել փաստաթուղթը: Իսկ այդ դեպքում

102 Turkey 39 (1878)..., p. 186.

արձանագրությունը անվավեր կհամարվի և ռուսական կառավարությունը ստիպված կլինի հրաժարվել Բաթումից: Հուլիսի 6-ին, Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածի քննարկման ժամանակ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարը հայտարարեց, որ եթե Ռուսաստանը ամեն գնով որոշել է պահել Կարսն ու Արդահանը, ապա Անգլիան իրեն իրավունք է վերապահելու պաշտպանելու իր շահերն ու իր ազդեցությունը բնակչության նկատմամբ այնպիսի միջոցներով, որոնք նա հարմար կհամարի»:103

Իր կեցվածքով և, մասնավորապես, այս հայտարարությամբ Սոլսբերին փաստորեն նախապատրաստեց եվրոպական դիվանագիտությանը հաշտվելու Մեծ Բրիտանիայի կողմից Կիպրոսի ձեռքբերման փաստի հետ: Ռուսական պատվիրակության համար բրիտանական ներկայացուցիչների վարած գիծը ներկայանում էր որպես ուղիղ սպառնալիք: Շուվալովը ստիպված դիմում է Բիսմարկի միջնորդությանը, որը, ծանոթանալով ռուս-բրիտանական արձանագրության տեքստին, համոզում է Դիզրայելիին՝ ավելի չշիկացնել մթնոլորտը և սահմանափակվել եղածով: Նույն օրը, վեհաժողովի 14-րդ նիստում Շուվալովը հաստատում է Ռուսաստանի հրաժարումը ռուս-թուրքական պայմանագրով իրեն տրված Բայազետից ու Ալաշկերտի հովտից և հայտարարում Բաթումը ազատ նավահանգիստ (պորտո-ֆրանկո) դարձնելու իր կառավարության որոշման մասին: Անմիջապես հետո խոսք է վերցնում Դիզրայելին և հայտարարում, որ «ամբողջությամբ հավանություն է տալիս և ընդունում այդ առաջարկը, թեև Անգլիայի ցանկությունն էր, որ այդ ամրակետը մնար սուլթանի տիրապետության տակ»104

Այնուհետև վեհաժողովի 14-րդ նիստը շարունակում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի քննարկումը: Սոլսբերին բաժանում է ներկաներին և ներկայացնում հայերին վերաբերող հոդվածը նոր խմբագրությամբ: Հանելով տեքստից ռուսական զորքին

վերաբերող հատվածը, նա հոդվածի վերջում ավելացնում է Հայաստանում բարենորոգումները եվրոպական տերությունների հսկողությամբ իրականացնելու ձևակերպումը: Նա հայտարարում է, որ հայերի շահերը պետք է պաշտպանվեն և որ առաջարկության նպատակն է նրանց հույսեր տալ անհապաղ բարելավումների և միաժամանակ ապագա առաջադիմության համար: Վիճաբանելով Շուվալովի հետ բարենորոգումների անցկացման

_____

103 Նույն տեղում, էջ 207:
104 Նույն տեղում, էջ 208-209:

երաշխիքների հարցում, Սոլսբերին պնդում էր եվրոպական տերությունների համատեղ հսկողության անհրաժեշտության վրա: Ռուսական պատվիրակության դիրքորոշումը փորձեցին պաշտպանել Ֆրանսիայի ներկայացուցիչները, սակայն ի վերջո հաղթանակեց բրիտանական դիվանագետների տեսակետը:

Օսմանյան կայսրության պատվիրակության ղեկավար Կարաթեոդորի փաշան համաձայնեց, որ վերջին պատերազմի ընթացքում անկառավարելի ցեղերի կողմից տեղի են ունեցել լուրջ անկարգություններ, սակայն Բարձր Դուռն անհապաղ միջոցներ է ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ: Նա վստահություն էր խնդրում Բարձր Դռան կողմից ձեռնարկվելիք քայլերի հանդեպ և առաջարկում իր լրացումը՝ ներկայացված բրիտանական տեքստին. «Բարձր Դուռը կհաղորդի վեց տերություններին այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին»: Տեղի ունեցած քննարկման ընթացքում Շուվալովն ավելի նախընտրեց Սոլսբերիի ներկայացրած ձևակերպումը: Վեհաժողովին նախագահող Բիսմարկը թեև ընդհանրապես կասկած հայտնեց բրիտանական կողմի ներկայացրած հոդվածի «իրական զորության» վերաբերյալ, դժվար համարելով անկախ ցեղերի հանդեպ կիրառվելիք միջոցառումների իրականացումը, նա այնուամենայնիվ հանձնարարեց բրիտանական և թուրքական պատվիրակություններին՝ վերամշակել և վեհաժողովի հաջորդ նիստին ներկայացնել հոդվածի նախագիծը:105

Հայերին վերաբերող հոդվածի վերջնական խմբագրությունը ներկայացվեց Սոլսբերիի կողմից՝ բրիտանական և թուրքական պատվիրակությունների անունից, հուլիսի 8-ին, վեհաժողովի 15-րդ նիստի ընթացքում:106 «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»:107

_____

105 Նույն տեղում, էջ 210:
106 Նույն տեղում, էջ 225:
107 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 128:

Այսպիսով, բրիտանական դիվանագիտությանը հաջողվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով և զրկել Ռուսաստանին Արևմտյան Հայաստանում իր մենաշնորհի հաստատումից: Ընդհանուր

առմամբ բրիտանական դիվանագիտությունը կարողացավ Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին ընկած ժամանակահատվածում չեզոքացնել 1877-1878 թթ. պատերազմում Ռուսաստանի ռազմական հաջողությունները, ամրապնդել իր ազդեցությունն Օսմանյան կայսրությունում և նույնիսկ ձեռք բերել կարևոր հենակետ Արևելյան Միջերկրականում՝ Կիպրոս կղզին: Եթե 16-րդ հոդվածի համաձայն, ռուսական զորքի ներկայությունն Արևմտյան Հայաստանում կարող էր հանդիսանալ բարենորոգումների իրագործման իրական երաշխիք հայ բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, ապա 61-րդ հոդվածից չէր երևում, թե ինչպես են տերություններն իրականացնելու հսկողությունը Բարձր Դռան կողմից ձեռնարկված միջոցառումների հանդեպ: Սան-Ստեֆանոյի պայմանագրում հիշատակվում էր Հայաստան անվանունը, իսկ Բեռլինի պայմանագրում խոսվում էր միայն հայաբնակ մարզերի մասին: Կատարված փոփոխությունն իր մեջ լուրջ իմաստ էր պարունակում: Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն ընդհանրապես խուսափում էր Հայաստան աշխարհագրական անվանման օգտագործումից՝ ապագայում նույնիսկ ինքնավար շրջանի ստեղծումը բացառելու նպատակով: Թեև Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համապատասխան հոդվածներով Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության առարկա, այն երբեք չդադարեց Օսմանյան կայսրության ներքին խնդիր լինելուց: Օգտվելով բրիտանական քաղաքականության բարենպաստ դրսևորումներից, Օսմանյան կայսրության փոքրամասնությունների, մասնավորապես, արևմտահայության ծանր վիճակի հանդեպ եվրոպական տերությունների անտարբերությունից, 61-րդ հոդվածի ոչ հստակ, հեղհեղուկ ձևակերպումներից, անմիջապես Բեռլինի վեհաժողովից հետո սուլթան Աբդուլ Համիդը որդեգրեց հակահայկական քաղաքականություն՝ վարչական միավորների վերաձևման և հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման միջոցով «հայաբնակ մարզեր» հասկացությունը իսպառ վերացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1878-1892 ԹԹ.
1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 1878-1880 ԹԹ.

Բեռլինի վեհաժողովի որոշումները մեծ տեղաշարժեր արձանագրեցին Եվրոպայի քաղաքական կյանքում, կարևորագույն նշանակություն ունեցան օսմանյան լծից բալկանյան ժողովուրդների ազատագրման գործում: Անկախություն ձեռք բերեցին Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան, ինքնավարություն ստացան Բուլղարիան և Արևելյան Ռումելիան, Ռուսաստանին անցան Բեսարաբիան, Կարսը, Արդահանն ու Բաթումը, Ավստրո-Հունգարիան գրավեց Բոսնիան: Սակայն տարածքային այդ փոփոխությունները չլուծեցին Արևելյան հարցը, չթուլացրին միջազգային հարաբերությունների լարվածությունը: Ճգնաժամը և Բեռլինի վեհաժողովն ավելի սրեցին եվրոպական տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները: Ավստրո-գերմանական միության ստեղծման (7 հոկտեմբերի 1879 թ.) արդյունքում ամրապնդվեցին ռուս-ֆրանսիական հարաբերությունները, հիմք հանդիսանալով տերությունների ռազմական խմբավորումների ձևավորման համար, որոնք բախվեցին միմյանց հետ առաջին համաշխարհային պատերազմում:

Թեև վեհաժողովի ավարտից անմիջապես հետո սկսվեցին ռուս-բրիտանական բանակցությունները նեղուցներից բրիտանական նավատորմի և Կոստանդնուպոլսի մերձակայքից ռուսական զորքերի միաժամանակ ետքաշման կապակցությամբ, հարաբերությունները երկու պետությունների միջև մնում էին լարված: Օգտվելով հետպատերազմյան Ռուսաստանի ռազմական և տնտեսական ծանր վիճակից, բրիտանական կառավարությունը հաջողությամբ շարունակում էր Մերձավոր Արևելքում իր դիրքերի ամրապնդման քաղաքականությունը:

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի իրագործումը՝ սուլթանական կառավարությունից հայերի օգտին բարենորոգումներ պահանջելը, դարձել էր Դիզրայելիի

կառավարության առաջնահերթ խնդիրը: Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում նշանակվեցին բրիտանական հյուպատոսներ, որոնց հաղորդագրություններն ու զեկուցագրերը հայ բնակչության վիճակի և տեղական իշխանությունների գործելակերպի մասին Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից օգտագործվում էին Բարձր Դռանը մշտական լարվածության մեջ պահելու համար՝ նրանից նոր զիջումներ կորզելու նպատակով: Բրիտանական հյուպատոսներն ու փոխհյուպատոսները հիմնականում ռազմական հետախույզներ կամ ինժեներներ էին, որոնց հանձնարարված էր մանրամասնորեն ուսումնասիրել երկրի տեղագրությունն ու աշխարհագրությունը, բնակչության թվակազմն ու սովորույթները: Բրիտանական դիվանագիտության առջև խնդիր էր դրված կանխել Ռուսաստանի ազդեցության տարածումը Մերձավոր Արևելքում, ինչպես նաև՝ օգտագործելով Հայկական հարցը, խաղաղ ճանապարհով անջատել Եգիպտոսն Օսմանյան կայսրությունից:

Վեհաժողովի փակման անմիջապես հաջորդ օրը Լեյարդը հաղորդում էր Սոլսբերիին, որ Ռուսաստանը շարունակում է իրեն հատուկ բանսարկություններ կազմակերպել Ասիական Թուրքիայի հայերի շրջանում: Ըստ դեսպանի, ռուսական գործակալներն

ուղարկվում են հայաբնակ շրջաններ՝ սուլթանական իշխանության նկատմամբ դժգոհություն սերմանելու նպատակով, իսկ մայրաքաղաքի հայերի շրջանում արդեն գործում է ռուսամետ կազմակերպություն, ուր ընդգրկված են հայ համայնքի ազդեցիկ ղեկավար անդամներ: Մեկ շաբաթ առաջ պատրիարք Ներսեսը հայտարարել էր դեսպանին, որ երկար չի կարողանալու ղեկավարել պատրիարքարանը, եթե վեհաժողովը ոչինչ չանի հայերի համար, իսկ Բրիտանիան չստանձնի հայերի հովանավորությունը: Պատրիարքը պատրաստվում էր կոչ անել իր ժողովրդին ուշադրություն չդարձնել Ռուսաստանի բանսարկություններին և հավատարիմ մնալ սուլթանին: Լեյարդի համոզմամբ, ներկայիս պատրիարքի գործունեության շնորհիվ պատերազմի ընթացքում հայերը չապստամբեցին սուլթանի դեմ, սակայն համայնքի ռուսամետ ուժերն այսօր նրան մեղադրում են, թե սլավոններն ու կայսրության մյուս քրիստոնյաները կանգնեցին Ռուսաստանի կողքին և շուտով անկախություն կամ ինքնավարություն են ստանալու: Զրույցի ընթացքում Լեյարդը պատրիարքին բացատրել էր Կիպրոսի պայմանագրի դրույթները, համոզելով նրան, որ հայերի համար բարենորոգումների իրագործումը երաշխավորված է:1

_____
1 FO 424 / 72, No 211, pp. 160-161.

Դեսպանը նախարարին հաղորդում էր, որ հավաստի աղբյուրների տեղեկատվության համաձայն, Ռուսաստանն իրապես պատրաստվում է կայսրության հայերի շրջանում ստեղծել ռուսամետ կուսակցություն2, ինչպես նաև վերականգնել և Հայաստանի նոր մայրաքաղաք դարձնել Բեռլինի պայմանագրով իրեն անցած Անին: Ռուսական կառավարությունը պատրաստվում է բնակեցնել այստեղ շուրջ 10 հազ. հայերի և այդ նպատակով նրա գործակալներն արդեն իսկ սկսել են քարոզել թուրքահայերին հեռանալ երկրից և տեղափոխվել Ռուսաստան:3

Օգոստոսի 8-ին Սոլսբերին հանձնարարում է Լեյարդին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի Բարձր Դուռը, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և Կիպրոսի պայմանագրի դրույթների համաձայն, անմիջապես սկսի բարենորոգումների իրագործման գործընթացն Ասիական Թուրքիայում: Արտգործնախարարը գրում էր, որ այս հարցում չի կարելի ժամանակ կորցնել, քանի որ մահմեդականներն այդ շրջաններում մեծամասնություն են կազմում, իսկ քրիստոնյաները ցրված են: Ուստի բարենորոգումների իրագործումը կարող է բացասական հետևանքներ ունենալ: Սոլսբերին անհրաժեշտ է համարում. 1/ կայսրության ասիական շրջաններում ստեղծել գործուն ժանդարմերիա, որը պետք է ղեկավարվի եվրոպացի սպաների կողմից. 2/ Ասիական Թուրքիայի հիմնական քաղաքներում՝ Իզմիրում, Էրզրումում, Դիարբեքիրում, Հալեպում, Դամասկոսում և Բաղդադում, հիմնել կենտրոնական դատարաններ, որոնց ենթակայության տակ լինեն շրջանային դատարանները: Յուրաքանչյուր կենտրոնական դատարանում պետք է աշխատի եվրոպացի իրավաբան, որի համաձայնությունը պարտադիր պետք է լինի յուրաքանչյուր գործի համար: Ըստ նախարարի, նման համակարգը դրական արդյունքներ ունեցավ Հնդկաստանում. 3/ բոլոր վիլայեթներում նշանակել եվրոպացի հարկահավաքներ, որոնք պատասխանատու լինեն շրջանի եկամուտների համար և իրավունք ստանան վերացնելու տասնորդը: Սոլսբերիի կարծիքով, ինչպես վալին, այնպես էլ դատավորը և հարկահավաքը պաշտոնի պետք է նշանակվեն սահմանափակ ժամկետով:4

2 Նույն տեղում, էջ 161:
3 FO 424 / 73, No 394, p. 247.
4 Turkey, No 51(1878). Correspondence Respecting Reforms in Asiatic Turkey. London, 1878, pp. 1-4.

Օգոստոսի 21-ին Լեյարդը նախարարին տեղեկացնում էր, որ բարենորոգումների իրագործման անհրաժեշտության վերաբերյալ հայտագիր է ներկայացրել Բարձր Դռանը և մեծ վեզիր Սավֆետ փաշայի հետ քննարկել է բրիտանական կառավարության առաջարկները: Վերջինս խոստացել էր առաջարկներն անմիջապես ներկայացնել սուլթանին ու նախարարների խորհրդին և պատասխանել դեսպանին: Զրույցի ընթացքում Սավֆետ փաշան կարծիք է հայտնում, որ եվրոպացի սպաների ղեկավարությամբ ոստիկանություն ստեղծելու առաջարկը վստահաբար չի ընդունվելու: Երկրորդ առաջարկի մասին վեզիրն ասում է, որ նշված քաղաքներում դատարաններ արդեն գոյություն ունեն, խնդիրը միմիայն վստահելի և բանիմաց մասնագետներ նշանակելն է: Ինչ վերաբերվում է եվրոպացիներին, ապա նրանք անպայմանորեն պետք է խոսեն թուրքերեն, քանի որ ժողովուրդը բացասաբար կընդունի օտարերկրյա պաշտոնյաների նշանակումը և կհամարի այն որպես միջամտություն երկրի ներքին գործերին: Սավֆետ փաշայի կարծիքով, տասնորդի համակարգի վերացումը նույնպես չի ընդունվի, քանի որ բնակչությանը ձեռնտու է հարկը վճարել ապրանքով, քան դրամով: Պաշտոնյաների նշանակման ժամկետներ սահմանափակելու մասին նա առարկություն չուներ, սակայն նշեց, որ դժվարությունը կայանում է մասնագետների պակասի մեջ: Լեյարդի կարծիքով, առարկությունների պատճառը նախարարների խորհրդի դիրքորոշումն է, որն ընդհանրապես դեմ է բարենորոգումներ անցկացնելու գաղափարին, համարելով այն կայսրության նկատմամբ եվրոպական տերությունների ազդեցության ամրապնդման միջոց: Ինչ վերաբերում է Սավֆետ փաշային, ապա դեսպանը նրան համարում է առաջադեմ, լիբերալ գաղափարների տեր անձնավորություն:5

Մի քանի օր անց Լեյարդը ներկայացնում է բրիտանական կառավարության առաջարկները սուլթան Աբդուլ Համիդին: Վերջինս դեսպանին խնդրում է իր երախտագիտության հավաստիքները փոխանցել Մեծ Բրիտանիայի կառավարությանը՝ իր երկրի հանդեպ ցուցաբերվող մտահոգության համար: Նա դեսպանին տեղյակ է պահում, որ շուտով հրովարտակ է ստորագրելու իրավաբանական դպրոց հիմնելու վերաբերյալ՝ բարենորոգումների իրագործման գործընթացը համապատասխան մասնագետներով ապահովելու նպատակով: Զրույցի վերջում սուլթանը խնդրում է, որ բրիտանական

5 Նույն տեղում, էջ 4-5:

կառավարությունը վարկ տրամադրի Օսմանյան կայսրությանը, ինչպես նաև շնորհակալություն է հայտնում Մեծ Բրիտանիայի վարչապետին և արտգործնախարարին՝ վերջին ելույթներում իր հասցեին արտահայտած բարի խոսքերի համար: Աբդուլ Համիդը գտնում է, որ Մեծ Բրիտանիան Թուրքիայի իրական դաշնակիցն է:6

Սեպտեմբերի 14-ին Լեյարդը հաղորդում է Սոլսբերիին, որ համաձայն փոխհյուպատոս Ալֆրեդ Բիլիոտտիից ստացված տեղեկատվության, Էրզրումի վիլայեթի հայությունը խուճապահար վիճակում է ռուսական զորքերի դուրսբերումից հետո հայկական ջարդերի

կազմակերպման վերաբերյալ տարածված լուրերի պատճառով:7 Մինչ այդ, սեպտեմբերի 10-ին, հյուպատոս Լայալը Թիֆլիսից հաղորդել էր արտգործնախարարին, որ մի քանի հազար հայեր Ալաշկերտից և Ղարաքիլիսայից անցել են սահմանը և ներկայումս գտնվում են Երևանի շրջակայքում:8 Դեսպանն անմիջապես հանդիպում է ունենում սուլթանի հետ և զգուշացնում նրան Հայաստանից ռուսական զորքերի դուրսբերումից հետո քրիստոնյա բնակչության հնարավոր ջարդի սպառնալիքի կապակցությամբ: Ըստ դեսպանի, հայերի շրջանում մեծ խուճապ կա, շատերը ցանկություն են հայտնում ռուսական զորքերի հետ անցնել սահմանը: Լեյարդը սուլթանից պահանջում էր անհապաղ միջոցներ ձեռնարկել հայերի պաշտպանության համար, ինչպես նաև հայազգի նշանակել վալիի պաշտոնում: Աբդուլ Համիդը Լեյարդին խոստանում է համապատասխան միջոցներ ձեռնարկել և նրա ներկայությամբ հանձնարարություն է տալիս Սավֆետ փաշային: Սուլթանը միայն չի ընդունում վալիի պաշտոնում հայազգի նշանակելու գաղափարը, նշելով, որ ներկայիս պաշտոնյան հեղինակավոր քուրդ է, որը մեծ ազդեցություն ունի քրդական բնակչության շրջանում:9

Երկու օր անց Լեյարդը հաղորդում էր Սոլսբերիին, որ սպասվող հայկական ջարդերի լուրերը չափազանցված են և տարածվում են ռուսական գործակալների կողմից: Սակայն,

_____
6 FO 424 / 73, No 453, p. 273.
7 Turkey, No 53 (1878). Further Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1878, p. 165.
8 Turkey, No 54 (1878). Further Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1878, p. 49.
9 FO 424 / 74, No 281, p. 175.

ըստ դեսպանի, ամեն դեպքում հարկավոր է ժամանակ չկորցնել և ստիպել սուլթանական կառավարությանը անմիջապես սկսել բարենորոգումների իրագործումը, քանի որ, հակառակ պարագայում, Եվրոպայի հասարակական կարծիքը կրկին կարող է ընդունել հակաթուրքական դիրք: Լեյարդը համոզված էր, որ եվրոպական հասարակական կարծիքի ճնշման տակ Բարձր Դուռը կարող է զրկվել բրիտանական կառավարության աջակցությունից: Այս ամենը բրիտանական դեսպանը փորձել էր բացատրել Սավֆետ փաշային: Վերջինս պատասխանել էր, թե Բարձր Դուռը չափազանց մտահոգված է ստեղծված իրավիճակով և ձգտում է ամեն ինչ անել հնարավոր բարդություններից խուսափելու համար: Լեյարդը Սոլսբերիին առաջարկում է կրկին Հայաստան գործուղել հյուպատոս Զոհրապին, որը միշտ կարողացել է լեզու գտնել տեղական իշխանությունների հետ:10

Սեպտեմբերի 19-ին Լեյարդը տեղեկացնում էր Սոլսբերիին, որ իր հետ ունեցած վերջին զրույցից անմիջապես հետո սուլթանը վալի Իսմաիլ Հաքքի փաշային հանձնարարել էր միջոցներ ձեռնարկել հայ բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Վալին պատասխանել էր, որ հայերի սպասվող ջարդերի մասին տարածվող լուրերը չափազանցված են և որ ինքն անձամբ պատասխանատվություն է կրում նրանց ապահովության համար: Դեսպանն իր համոզմունքն էր հայտնում նախարարին, որ ռուսներն ամեն ինչ անում են Հայկական հարցում Եվրոպայի դերը նսեմացնելու, հայերին թուրքական իշխանությունների դեմ պայքարի հանելու, խուճապային իրավիճակ ստեղծելու համար:11

Նույն օրը Լեյարդը հանդիպում է պատրիարք Ներսեսի հետ և տեղյակ պահում նրան սուլթանական կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների մասին: Վերջինս իր անվստահությունն է հայտնում Բարձր Դռան խոստումների հանդեպ, նշելով, որ միակ իրական միջոցը՝ դա հայազգի վալիի նշանակումն է Հայաստանում: Բրիտանական դեսպանը պատասխանում է, թե դրա ժամանակը դեռևս հասունացած չէ: Իր կարծիքով, ներկայիս առաջնահերթ խնդիրը Փոքր Ասիայում կարգ ու կանոնի վերականգնումն է՝ քրդական ցեղերը զինաթափելու և հսկողության տակ պահելու միջոցով:12

10 Turkey, No 53 (1878)..., pp. 201-202.
11 FO 424 / 74, No 388, p. 246.
12 FO 424 / 74, No 503, p. 322.

Սեպտեմբերի 25-ին Սոլսբերին տեղեկանում է Ռուսաստանում բրիտանական դեսպանությունից, որ ռուսական կառավարությունը քայլեր է ձեռնարկում արևմտահայերի գաղթն Արևելյան Հայաստան կանխելու ուղղությամբ: Որպես օրինակ էր բերվում սեպտեմբերի 11-ին «Սանկտ-Պետերբուրգ» ամսագրում տպագրված գեներալ Լազարևի արևմտահայերին ուղղված դիմումը, որտեղ նա կոչ է անում չլքել հայրենի տները և համոզված լինել, որ Բեռլինի պայմանագիրը ստորագրած Ռուսաստանն ու մյուս տերություններն ամեն ինչ անելու են հայերին աջակցելու համար:13

Բեռլինի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո պարզ դարձավ, որ տերությունները ոչ միայն չեն կարողանալու կյանքի կոչել 61-րդ հոդվածը, այլև՝ ապահովել արևմտահայության անվտանգությունը, կանխել նրա արտագաղթը: Բիլիոտտին Սոլսբերիին հաղորդում էր, որ սեպտեմբերի 15-ին 65 հոգուց կազմված մահմեդականների մի հրոսակախումբ թալանել և հրկիզել է Սպեր նահանգի Խոտրրջուր գյուղը: Փոխհյուպատոսի տվյալներով, հրկիզվել է գյուղի 800 տներից 150-ը և եկեղեցին, սրի է քաշվել հայ բնակչության մի մասը:14 Այդ առիթով Բիլիոտտին հանդիպում էր ունեցել Տրապիզոնի վալի Յուսուֆ փաշայի հետ, պահանջել դատել և պատժել մեղավորներին:15 Այս և այլ դեպքերի կապակցությամբ բրիտանական հյուպատոսարան հայերի ներկայացրած բողոքագրերը Բիլիոտտին մշտապես ուղարկում էր արտաքին գործերի նախարարություն:16

Հոկտեմբերի 12-ին Լեյարդը Սոլսբերիին տեղեկացնում էր, որ Խոտորջրի հայերի կոտորածի կապակցությամբ զրույց է ունեցել Սավֆետ փաշայի հետ: Վերջինս շնորհակալություն էր հայտնել դեսպանին տեղեկատվության համար և խնդրել, որպեսզի Բիլիոտտին շարունակի իր «ամբողջական զեկույցները բոլոր նման դեպքերի վերաբերյալ», խոստանալով անմիջապես ձերբակալել մեղավորներին և պատժելու մասին հրամաններ իջեցնել տեղական իշխանություններին:17

13 Turkey, No 53 (1878)..., p. 222.
14 Turkey, No 54 (1878)..., p. 45.
15 Նույն տեղում, էջ 124:
16 Նույն տեղում, էջ 187-188:
17 Նույն տեղում, էջ 88:

Հոկտեմբերի 11-ին հյուպատոս Հենդերսոնը Հալեպից հաղորդում էր Լեյարդին այնտեղ կատարված հայերի համատարած սպանությունների մասին (70-ից ավելի), նշելով, որ իշխանությունները միջոցներ չեն ձեռնարկում հանցագործներին բանտարկելու և պատժելու ուղղությամբ:18 Իր հաջորդ զեկուցագրում հյուպատոսը տեղեկացնում էր Հալեպի վալի Քյամիլ փաշայի Զեյթուն կատարած այցելության մասին, որի ժամանակ նա ձերբակալել և իր հետ Հալեպ էր տարել 19-ը հայ կին և երեխա, ինչն առաջացրել էր տեղի ոչ միայն քրիստոնյա, այլև արաբ բնակչության զայրույթը:19

Չնայած Օսմանյան կայսրությունից ստացվող տագնապալից տեղեկություններին, Սոլսբերին, թաքցնելով ճշմարտությունը նույնիսկ Ռուսաստանում դեսպան Լոֆտուսից, հոկտեմբերի 16-ին գրում էր նրան, որ ռուսական զորքերի դուրսբերման ընթացքում տեղի ունեցող քրիստոնյաների ջարդերի փաստերը ստուգելու նպատակով արևելյան շրջաններ գործուղված բրիտանական սպաների զեկուցագրերի համաձայն, թուրքական իշխանությունների կողմից ձեռնարկված «արդյունավետ» միջոցառումների շնորհիվ երկիրը գտնվում է խաղաղ վիճակում: Արտգործնախարարը դեսպանին հանձնարարում է պահանջել ռուսական կառավարությունից վերսկսել զորքերի դուրսբերման գործընթացը, քանի որ այլևս այն հետաձգելու պատճառ չկա:20

Հոկտեմբերին Էրզրումում Մեծ Բրիտանիայի նոր հյուպատոս է նշանակվում կապիտան Հենրի Տրոտտերը, որին հետզհետե սկսում են անվանել Քրդստանի հյուպատոս: Նա փորձված հետախույզ էր, ծառայել էր բրիտանական գաղութային զորքերի կազմում Բոմբեյում և Բենգալիայում, ծանոթ էր Արևմտյան Հայաստանին, ուսումնասիրել էր երկրի կացությունը: Լեյարդը նրան հրահանգում էր (22 հոկտեմբերի), որ իր գործունեության հիմնական խնդիրն է վիլայեթում տիրող իրավիճակի, Ռուսաստանի կողմից Բեռլինի պայմանագրի պարտավորությունների կատարման, ռուսական զորքերի դուրսբերումից հետո հայ բնակչության դրության մասին դեսպանությանն ու կառավարությանն ամբողջական տեղեկատվություն տրամադրելը: Հայ բնակչության անվտանգությանը սպառնալիք

---

18 Turkey, No 1 (1880). Correspondence Respecting the Comission sent by the Porte to Inqure into the Condition of the Vilajet of Aleppo. London, 1880, p. 1.
19 Նույն տեղում, էջ 4:
20 Turkey, No 54 (1878)..., p. 68.

ստեղծվելու դեպքում Տրոտտերն անմիջապես պետք է տեղեկացներ դեսպանությանը և տեղական իշխանությունների հետ համագործակցելով ջարդը կանխելու և անկարգությունների կազմակերպիչներին պատժելու միջոցներ ձեռնարկեր:21

Սոլսբերիին ուղղված հոկտեմբերի 24-ի և 30-ի զեկուցագրերում Լեյարդը ներկայացնում և վերլուծում է Սավֆետ փաշայի պատասխանը բարենորոգումների իրագործմանը վերաբերող բրիտանական առաջարկներին: Ընդհանուր առմամբ անբավարար գնահատելով Բարձր Դռան պատասխանը, դեսպանը համարում էր, որ երկրում տիրող ներքաղաքական պայմաններում այն իր մեջ պարունակում է նաև դրական կողմեր: Ըստ Լեյարդի, ինչպես նախարարների խորհրդի մեծամասնությունը, այնպես էլ երկրում զգալի ազդեցություն ունեցող շատ պաշտոնյաներ դեմ են օտարերկրյա պետության միջամտությանը կայսրության ներքին գործերին և գնահատում են բրիտանական

առաջարկները որպես ոտնձգություն սուլթանի ինքնիշխան իրավունքների և պետության անկախության դեմ, ինչպես նաև՝ առաջին քայլ՝ Բրիտանիայի կողմից Ասիական Թուրքիայի տարածքների նկատմամբ «հսկողություն և ուղիղ պրոտեկտորատ» հաստատելու, իսկ հետագայում «անեքսիայի» ենթարկելու ուղղությամբ:

Իր պատասխանում Բարձր Դուռը համաձայնում է ժանդարմերիայի ստեղծման գաղափարին, սակայն համարում է, որ եվրոպացիները կարող են աջակցել նրա կազմակերպմանն, այլ ոչ ղեկավարման գործին: Հիմնականում ընդունելով դատարանների բարեփոխման առաջարկը, սուլթանական կառավարությունը մերժեց եվրոպացի դատավորներ նշանակելու գաղափարը, հիմնավորելով, որ նրանք չգիտեն լեզուն, սովորույթները և օրենքները: Փոխարենը պատրաստակամություն էր հայտնվում օգտագործել եվրոպացիներին հրահանգիչների պաշտոններում, որոնք պետք է հսկեին դատարանների գործունեությունը բոլոր վիլայեթներում: Բարձր Դուռը դրականորեն էր արձագանքել հարկային համակարգի բարեփոխության առաջարկին, նշելով սակայն, որ այն պետք է նախ փորձարկում անցնի մեկ կամ երկու շրջանում: Լեյարդը դրական էր գնահատում կառավարության պատասխանը վերջին առաջարկի մասին, որը վերաբերվում էր բարձր

_____
21 FO 424 / 76, No 20, pp. 28-29.

պաշտոնյաների պաշտոնավարման ժամկետների սահմանափակմանը: Սուլթանն անձամբ ինքն էր առաջարկել սահմանել հինգ տարվա ժամկետ:22

Նոյեմբերի 8-ին Բիլիոտտին արտգործնախարարին հաղորդում էր, որ հայ բնակչությանն այստեղ հուզում է Էրզրումում ծագումով հայ վալի նշանակելու հարցը: Փոխհյուպատոսը ցանկալի չէր համարում նման նշանակումը, ինչպես նաև ընդհանրապես ինքնավար Հայաստանի ստեղծումը, քանի որ հայերն Անատոլիայում բնակչության փոքրամասնություն են կազմում: Նման հարցադրումները, Բիլիոտտիի կարծիքով, Ռուսաստանի բանսարկությունների հետևանքներն են: Նա համոզված էր, որ բարենորոգումները կարող են իրագործվել միմիայն Բրիտանիայի ուժեղ ճնշման ներքո, մասնավորապես, Հայաստանում բրիտանական զորքերի ներկայության պայմաններում. «բրիտանական սպաների կողմից ղեկավարվող շրջանն այնպիսի առավելություններ կունենա, որ այստեղ կհավաքվեն ոչ միայն Օսմանյան կայսրության ուրիշ շրջանների, այլև Ռուսաստանի ու Պարսկաստանի հայերը» Փոխհյուպատոսը գրում էր, որ միայն այդ պայմաններում հայերը կկարողանան կազմել բնակչության մեծամասնությունը:23

Էրզրում հասնելուն պես Տրոտտերը գրում էր Սոլսբերիին (13 նոյեմբերի), որ անցյալ տարվա համեմատ քաղաքում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել՝ վերականգնվել են պատերազմի ընթացքում քանդված տները, հայերի շնորհիվ ծաղկում է ապրում առևտուրը: Միաժամանակ, նշում էր հյուպատոսը, քուրդ ավազակները շարունակում են թալանել ու սպանել գյուղերի բնակիչներին՝ տեղական իշխանությունների թողտվության և անկարողության պայմաններում: Ըստ Տրոտտերի, ռուսական զորքի հետ միասին Ալաշկերտի հովտից հեռացել է 2-ից 3 հազ. հայ ընտանիք, սակայն նրանցից 250-ը կրկին վերադարձել են հայրենիք: Հյուպատոսի տեղեկությունների համաձայն, ռուսական օկուպացիայի ժամանակ ռուս բանակի հայազգի գեներալ Լազարևը Կարսում, մայոր Կամսարականը Էրզրումում (զինվորական նահանգապետի տեղակալ), լեյտենանտ

Նիկողոսովը և Ալաշկերտի նահանգապետ Առաքելովը մեծ հեղինակություն էին վայելում հայ բնակչության շրջանում:24

_____
22 Turkey, No 51 (1878)..., pp. 7-8, 12-16.
23 FO 424 / 76, No 554, pp. 405-407.
24 Turkey, No 10 (1879). Correspondence Respecting the Condition of the Population in Asia Minor and Syria. London, 1879, pp. 1-3.

Դեկտեմբերի 2-ին Լեյարդը Սոլսբերիին հաղորդում էր, որ իր նախաձեռնության արդյունքում Սավֆետ փաշան հրահանգ է իջեցրել՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել Քըղի շրջանի հայ բնակչության պաշտպանության համար: Որպես լիազոր ներկայացուցիչ շրջան էր ուղարկվել Օսման էֆենդին, որը պետք է պատժեր տեղի քուրդ բեյերին հայերին ճնշելու համար: Սակայն շրջանում աշխատող ամերիկյան միսիոներից ստացված տեղեկության համաձայն, հասնելուն պես նա կաշառվել էր բեյերի կողմից, իսկ քրիստոնյաների վիճակն այդպես էլ չէր փոխվել: Դեսպանի ստացած մի այլ հավաստի աղբյուրի համաձայն, շրջանի մեծահասակ մահմեդական Սուլեյման աղան, որը միշտ պայքարել էր հայերի իրավունքների համար, ձերբակալվել և ուղարկվել էր Երզնկա, ուր և մահացել էր: Այդ բոլոր փաստերը Լեյարդը ներկայացրել էր Սավֆետ փաշային, հայտարարելով, որ գործերի նման զարգացման դեպքում Բարձր Դուռը կհայտնվի բավականին ծանր կացության մեջ՝ բրիտանական կառավարության և հասարակական կարծիքի դիրքորոշման փոփոխության հետևանքով:25

Դեսպանի հրահանգի համաձայն, հյուպատոսները մշտապես տեղեկություններ էին հաղորդում տարբեր շրջաններում հայ բնակչության վիճակի մասին: Հենդերսոնը գրում էր (2 դեկտեմբերի) Այնթապից, որ քաղաքի բնակչությունը հասնում է մինչև 40 հազ., որից 15 հազ. քրիստոնյաներ են, նրանցից 5 հազ.՝ բողոքական: Հյուպատոսը տեղեկացնում էր ամերիկյան միսիոներների կողմից այստեղ կառուցված քոլեջի, հոգևոր սեմինարիայի և օրիորդաց դպրոցի, նրանց ակտիվ գործունեության մասին: Քաղաքում գործող յոթ բողոքական եկեղեցիներից մեկը անգլիկան էր, մյուսները՝ պրեսբիտերական: Հենդերսոնը նկարագրում էր Այնթապի հայության բարեկեցիկ վիճակը, որոնք հիմնականում զբաղված են բամբակի, օճառի, գինու, թութունի առևտրով:26 Տրոտտերը հաղորդում էր (21 դեկտեմբերի) Դիարբեքիրից հայ բնակչության ծանր վիճակի, քրդերի կողմից կազմակերպվող մշտական թալանի և սպանությունների մասին: Հյուպատոսն առաջարկում էր փոխհյուպատոսներ նշանակել Դիարբեքիրում, Էրզրումում, Խարբերդում, Վանում, Բիթլիսում կամ Մուշում:27

_____
25 FO 424 / 77, No 249, pp. 210-211.
26 Turkey, No 1 (1880)..., pp. 6-7.
27 FO 424 / 79, No 546 / 1, pp. 474-476.

Դեկտեմբերի 21-ին Լեյարդը հանդիպում է ունենում Աբդուլ Համիդի հետ, որի ժամանակ քննարկում է բրիտանական կառավարության կողմից առաջարկված բարենորոգումների իրագործման խնդիրը, նշելով, որ դա անհրաժեշտ է առաջին հերթին Մեծ Բրիտանիայի հասարակական կարծիքը հանգստացնելու համար: Համաձայնելով դեսպանի հետ, սուլթանը խնդրում էր, որ բրիտանական կառավարությունը վարկ տրամադրի Բարձր Դռանը՝ բարենորոգումներն իրագործելու նպատակով: Դեսպանը պատասխանում է, որ

Բրիտանիայի կառավարությունն ու ժողովուրդը կաջակցեն սուլթանին այդ հարցում, եթե համոզվեն բարենորոգումների իրականացման Բարձր Դռան անկեղծ ցանկության մեջ, ինչն այդքան կարևոր է երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Աբդուլ Համիդը պատվի խոսք է տալիս Լեյարդին, որ ջանք չի խնայի այդ ուղղությամբ:28

Սակայն ոչ բրիտանական դիվանագիտության ակտիվության, ոչ էլ սուլթանի և Բարձր Դռան խոստումների արդյունքում այդպես էլ էական փոփոխություններ տեղի չունեցան: 1879 թ. ընթացքում արևմտահայության վիճակն ավելի վատթարացավ: Հունվարի 5-ին Տրոտտերը Սոլսբերիին զեկուցում էր Դիարբեքիրի շրջակայքի գյուղերը կատարած իր ճամբորդության մասին: Հյուպատոսի վկայությամբ, արդեն երկու տարի է, ինչ ամբողջ վիլայեթում անօրինականություն է տիրում, իսպառ բացակայում են կյանքի և ունեցվածքի պաշտպանվածության տարրական նորմերը: Նա նկարագրում է Թիմար (50 ծուխ) և Դհեր (400 ծուխ) հայկական գյուղերի կիսաքանդ վիճակը Հուսսեյն բեյի կողմից ղեկավարած քրդական հրոսակախմբի հարձակումներից և թալանից հետո:29

Հենդերսոնը գրում էր (6 հունվարի) դեսպանին Հալեպից, որ Մարաշի և Զեյթունի հայ բնակչության վիճակը չափազանց վատթարացել է՝ հիմնականում առանց պատճառի Մարաշում (բնակչության 30 %-ը՝ այսինքն 10 հազարը հայ են) բանտարկված են 200-ից ավելի հայեր, այրված է հայերի 300 տուն: Ըստ Հենդերսոնի, ոչ մի ռուսական բանսարկության հետք այստեղ գոյություն չունի30, թեև վալի Քյամիլ փաշան հունվարի 19-ին իրեն այցելած բրիտանական դեսպանության առաջին քարտուղար Էդուարդ Մալլետին ասում էր, որ հայերը պատժվել են, քանի որ քաղաքական նկատառումներով

28 FO 424 / 79, No 48, pp. 45-47.
29 Turkey, No 10 (1879)..., pp. 15-17.
30 Turkey, No 1 (1880)..., p. 11.

ապստամբություն էին կազմակերպել սուլթանի իշխանության դեմ:31 Զեյթունում և Մարաշում տեղի ունեցած դեպքերի առիթով Լեյարդը խիստ նամակներ է գրում (4,20,22 հունվարի) արտգործնախարար Կարաթեոդորի փաշային, ուր նշում է. «...Դժվար է պատկերացնել թուրքական իշխանության ներկայացուցիչների, բարձր կարգի պաշտոնյայի և նրա ենթակաների կողմից իրագործվող դաժանության, հալածանքի և մոլեռանդության ավելի խայտառակ օրինակներ...»: Դեսպանը պահանջում է անհապաղ միջոցներ ձեռնարկել պատժելու Քյամիլ փաշային և նրա ենթականերին:32 Հունվարի 23-ին Լեյարդին հասցեագրված նամակում Սոլսբերին կառավարության գոհունակությունն էր հայտնում Բարձր Դռանը ներկայացված գրության բովանդակության կապակցությամբ, հանձնարարելով նրան շարունակել պատիժ պահանջել այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք ճնշման քաղաքականություն են վարում քրիստոնյաների հանդեպ:33

Փետրվարի 3-ին Լեյարդը տեղեկացնում էր Սոլսբերիին, որ Բարձր Դուռը որոշում է ընդունել երկու հանձնաժողով ուղարկել Փոքր Ասիայի արևելյան շրջանները՝ քրիստոնյա բնակչության վիճակն ուսումնասիրելու և տեղի ունեցած դեպքերի հետաքննություն կատարելու նպատակով: Հանձնաժողովները բաղկացած են լինելու թուրք և հայ պաշտոնյաներից, որոնցից մեկը այցելելու է Էրզրում և Վան, մյուսը՝ Դիարբեքիր և Հալեպ: Դեսպանը դիմել էր մեծ վեզիր Հայրեդդին փաշային և Կարաթեոդորի փաշային բրիտանական հյուպատոսներին նույնպես հանձնաժողովների կազմում ընդգրկելու

խնդրանքով, սակայն մերժվել էր այն պատճառաբանությամբ, որ այդ պարագայում նման անցանկալի պահանջով կդիմեն նաև մյուս տերությունները: Արտգործնախարարը տեղեկացնում էր Լեյարդին, որ Ռուսաստանը պատրաստվում է Բուլղարիայի օրինակով բարձրացնել Հայկական հարցը, դեսպան Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկին34 արդեն դիմել է

---

31 Նույն տեղում, էջ 19-20:
32 Նույն տեղում, էջ 9-10, 20-21:
33 Նույն տեղում, էջ 10:
34 Լոբանով-Ռոստովսկի Ալեքսեյ Բորիսովիչ (1824-1896) - իշխան, ռուս դիվանագետ: 1856-1859 թթ.՝ Թուրքիայում Ռուսաստանի դեսպանության խորհրդական, 1859-1863 թթ.՝ հավատարմատար Թուրքիայում, 1867-1878 թթ.՝ ներքին գործերի նախարարի օգնական, 1878-1879 թթ.՝ դեսպան Թուրքիայում, 1879-1882 թթ.՝ դեսպան Մեծ Բրիտանիայում, 1882-

Բարձր Դռանը 61-րդ հոդվածի կատարման կապակցությամբ դեսպանությանը տեղեկատվություն տրամադրելու պահանջով:35

Հենդերսոնը (23 փետրվարի) և Մարաշում ԱՄՆ փոխհյուպատոս Հենրի Մարդինը (22 փետրվարի) բրիտանական դեսպանությանն ուղղված իրենց հաղորդագրություններում Զեյթունի դրությունը բնութագրում էին որպես՝ ողբալի՝: Շրջապատված լինելով թշնամաբար տրամադրված մահմեդական գյուղերով, Զեյթունի 10 հազ. քրիստոնյա բնակչությունը գտնվում է անապահով վիճակում, թալանի և ջարդի նպատակով մշտական հարձակման վտանգի առջև: Վալին դիտավորյալ ուշացնում է նոր կայմակամի նշանակումը, համարելով, որ նրա կյանքն այնտեղ վտանգված կլինի: Ըստ Հենդերսոնի, Քյամիլ փաշան որոշել է՝ կառավարության հեղինակությունը վերականգնելու՝ պատրվակով զորք մտցնել Զեյթուն: Հենդերսոնը վախենում էր, որ ոչինչ չի կարողանալու անել հայ բանտարկյալների վիճակը բարելավելու ուղղությամբ, քանի որ վալին հայտարարել էր, որ նա ամեն ինչ անելու է հայերին բանտում պահելու համար և արդեն իսկ հարցը լուծել է մեծ վեզիրի, արդարադատության և ներքին գործերի նախարարների հետ: Վալին մեղադրում էր Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին Զեյթունի հայությանն ապստամբության կոչ անելու մեջ:36

Մարտի սկզբին Բարձր Դուռը ժամանակավոր հավատարմատար Մալլետի միջոցով բրիտանական կառավարությանը խոստանում է պաշտոնից ազատել Հալեպի վալիին, եթե հանձնաժողովը հաստատի Զեյթունի հայ բնակչության հանդեպ նրա կողմից կատարված բռնությունների փաստերը: Մալլետը դիմում է մեծ վեզիրին Մարաշի և Հալեպի բանտերում գտնվող անմեղ հայերին ազատ արձակելու խնդրանքով: Վերջինս պատասխանում է, որ նրանք մեղադրվում են թուրք պաշտոնյաների սպանության մեջ, որի փաստը պետք է քննության առնվի հանձնաժողովի կողմից: Զրույցի վերջում Մալլետն առաջարկում է

---

1895 թթ.՝ դեսպան Ավստրիայում, 1895 թ.՝ դեսպան Գերմանիայում, 1895-1896 թթ,՝ արտաքին գործերի նախարար:
35 FO 424 / 80, No 317, pp. 265-266.
36 Turkey, No 1 (1880)..., pp. 32-34.

տարանջատել Զեյթունի դեպքերը Հայաստանում իրագործվելիք հիմնական բարենորոգումներից:37

Մարտի 18 և 27-ին Մալլետին հասցեագրված նամակում պատրիարք Ներսեսը խնդրում էր օգնել հայ ժողովրդին, ապահովել Բեռլինի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրագործումը, հույս հայտնելով, որ Եվրոպայի քրիստոնյա տերությունները օժանդակելու են Թուրքիայի քրիստոնյա բնակչությանը:38 Պատասխան նամակում Մալլետը հավաստիացնում էր պատրիարքին, թե բրիտանական կառավարությունը «չի հրաժարվում ոչ Բեռլինի պայմանագրով և հունիսի 4-ի կոնվենցիայով նախատեսված, ոչ էլ մարդկության առաջ ունեցած իր պարտավորություններից, որոնք հանդիսանում են քրիստոնյա կառավարության պարտականությունը»:39

Մարտի 19-ին Մալլետը հաղորդում էր Սոլսբերիին, որ վերջապես Բարձր Դուռը ազատեց Քյամիլ փաշային Հալեպի վալիի պաշտոնից և պաշտոնակատար նշանակեց քաղաքի պարետ Օմեր փաշային:40 Ըստ Հենդերսոնի, շրջանի ողջ հայությունը շնորհակալություն է հայտնում բրիտանական կառավարությանը՝ աջակցության համար:41 Պատասխան հեռագրում Սոլսբերին հանձնարարում էր շարունակել աշխատանքը Զեյթունում տեղի ունեցած դեպքերի հետաքննությունն արագացնելու ուղղությամբ:42

Ապրիլի 3-ին Մալլետը տեղեկացնում էր Սոլսբերիին, որ Հալեպի նոր նշանակված վալի Ղալիբ փաշան, Զեյթունի դեպքերի հետաքննության հանձնաժողովի անդամներ Մահզար փաշան և Նուրյան էֆենդին ֆրանսիական փոստատար շոգենավով վերջապես մեկնեցին Ալեքսանդրետ՝ Հալեպ հասնելու նպատակով: Դեսպան Լեյարդի հանձնարարությամբ, հանձնաժողովն ուղեկցում էր բրիտանացի սպա լեյտենանտ Չերմսայդը:43

---

37 Նույն տեղում, էջ 28-29:
38 FO 424 / 82, No 36 / 1, p. 29; Turkey, No 10 (1879)..., pp. 69-70.
39 FO 424 / 82, No 36 / 2, p. 30.
40 FO 424 / 81, No 520, p. 375.
41 Turkey, No 1 (1880)..., p. 48.
42 Նույն տեղում, էջ 30:
43 Նույն տեղում, էջ 42:

Ապրիլի վերջին բրիտանական կառավարությունը գնդապետ Վիլսոնին նշանակում է Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս Անատոլիայում: Ապրիլի 24-ին նրան հասցեագրված նամակում Սոլսբերին գրում էր, որ Կիպրոսի կոնվենցիան մեծ հնարավորություն է տվել Օսմանյան կայսրությանը բարեկարգելու երկրի վարչական կառույցը և բարելավելու Ասիական Թուրքիայի ժողովուրդների դրությունը: Նախարարը հանձնարարում էր հյուպատոսին ուսումնասիրել բնակչության բոլոր շերտերի վիճակը, օժանդակել տեղի թուրք իշխանություններին, մշտապես տեղյակ պահել բրիտանական կառավարությանը և դեսպանությանը հայերով բնակեցված շրջաններում կարգ ու կանոն հաստատելու և բարենորոգումներ իրագործելու իշխանությունների միջոցառումների մասին:44

Մայիսի 3-ին Բարձր Դռանը հասցեագրված հայտագրում բրիտանական դեսպանությունն իր գոհունակությունն էր հայտնում Զեյթունում և Մարաշում օրինականություն

հաստատելու ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած միջոցառումների կապակցությամբ: Նշվում էր, որ Քյամիլ փաշային պաշտոնից ազատելը, Ղալիբ փաշայի նշանակումը և հանձնաժողովի անկողմնակալ հետաքննությունը վերականգնել են քրիստոնյա բնակչության վստահությունը իշխանությունների հանդեպ և կանխել անկարգությունների շարունակման վտանգը: Հետաքննության արդյունքում պարզվել էր, որ Զեյթունի դեպքերը Քյամիլ փաշայի վարչակարգի անօրինականության և կաշառակերության հետևանքն էին:45

Մայիսի 6-ին Աբդուլ Համիդը հրավիրում է Լեյարդին ճաշի, որի ժամանակ տեղեկացնում դեսպանին, որ բարենորոգումների ծրագիրն արդեն պատրաստ է և շուտով ներկայացվելու է նախարարների խորհրդի քննարկմանը, նշելով միաժամանակ իրագործման դժվարությունների, հիմնականում իր նախարարների բացասական վերաբերմունքի մասին:46 Մեկ շաբաթ անց Բարձր Դուռը հատուկ հանձնաժողով է կազմում Էրզրումի վիլայեթի և հարևան շրջանների հայ բնակչության վիճակն ուսումնասիրելու նպատակով, ուր ընդգրկված էին Յուսուֆ փաշան և Սարգիս էֆենդին: Բրիտանական կառավարությունն ուղեկցող է նշանակում Տրոտտերին: Մայիսի 12-ին վերջինիս ուղղված նամակում Լեյարդը

44 Turkey, No 10 (1879)..., p. 63.
45 Turkey, No 1 (1880)..., pp. 56-57.
46 FO 424 / 83, No 399 / 1, pp. 283-284.

տեղեկացնում էր, որ այդ որոշումն ընդունվել է սուլթանական կառավարությունից համաձայնություն ստանալուց հետո: Դեսպանը հյուպատոսին հրահանգում էր ստուգման արդյունքներն ազատորեն քննարկել հանձնաժողովի անդամների հետ, ուսումնասիրել տեղի քրիատոնյա բնակչության վիճակը, ուշադրությամբ լսել և արձանագրել քրիստոնյաների բողոքները: Քանի որ հանձնաժողովի հիմնական խնդիրը կայանում է բարենորոգումների իրագործման ծրագիր մշակելու մեջ, նշում էր Լեյարդը, Տրոտտերը պետք է օգտագործի իր ազդեցությունն ու բոլոր հնարավորություններն այդ շրջանների կյանքի բոլոր կողմերն ընդգրկող և բոլոր ազգությունների շահերն արտահայտող փաստաթուղթ պատրաստելու հարցում: Դեսպանը ցուցում է տալիս հյուպատոսին մշտապես հիշել այն մասին, որ բրիտանական կառավարության քաղաքականությունը կայանում է սուլթանի իշխանության ներքո կայսրության բոլոր հատվածների միավորման, բոլոր ժողովուրդների բնականոն, արդար և հավասար կյանքի ապահովման մեջ:47

Բրիտանական կառավարության դիրքորոշումը հստակորեն սահմանված է այդ օրերին (21 մայիսի) Լեյարդին ուղղված Սոլսբերիի նամակում. ՝Մեծ Բրիտանիան դիվանագիտական ջանք չի խնայելու Ասիական Թուրքիայի ժողովուրդների համար լավ կառավարում ապահովելու գործում՝:48

Անատոլիայում գլխավոր հյուպատոսի իր պարտականություններին անցնելուց անմիջապես հետո Վիլսոնն առաջարկ է ներկայացնում նոր հյուպատոսների թեկնածությունների վերաբերյալ. Կոնյա՝ 11-րդ հուսարական գնդի կապիտան Սթյուարտ, Կեսարիա և Ադանա՝ 47-րդ գնդի կապիտան Հարրի Կուպեր, Կաստամունի՝ գրենադերական գվարդիայի գնդապետ Ուիլլիերս, Բրուսա՝ թագավորական ինժեներային զորքերի լեյտենանտ Չերմսայդ:49

Մայիսի 31-ին Լեյարդը նամակ է ստանում պատրիարք Ներսեսից, ուր վերջինս խնդրում է բրիտանական կառավարության միջամտությունը բարենորոգումների շուտափույթ

47 FO 424 / 83, No 527 / 1, p. 390.
48 FO 424 / 83, No 660, p. 498.
49 Turkey, No 10 (1879)..., p. 63.

իրականացման գործում: Նրա կարծիքով, Մեծ Բրիտանիան պետք է պնդի ինքնավար հայկական մարզ կազմավորելու հարցում, Արևելյան Ռումելիայի կարգավիճակի օրինակով:50

Հունիսի 5-ին, Սոլսբերիի հանձնարարության համաձայն,51 բրիտանական դեսպանությունը հայտագիր է ներկայացնում Բարձր Դռանը, ուր նշվում էր, որ, չնայած առաջին դրական տպավորություններին, Զեյթունի իրադարձությունները հետաքննող հանձնաժողովը վերադարձավ Հալեպ առանց վիճակը բարելավող որևէ իրական քայլ կատարելու: Հակառակը, հանձնաժողովի գործողություններն իրականում ամրապնդեցին քրիստոնյաների վախը և ուժեղացրին մահմեդականների ատելությունը նրանց նկատմամբ: Հանձնաժողովը որոշում ընդունեց Զեյթունում կառուցել մեծ զորանոց: Դեսպանությունն իր բողոքն էր արտահայտում այդ կապակցությամբ և հույս հայտնում, որ Բարձր Դուռն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի քրիստոնյաների վիճակը բարելավելու ուղղությամբ:52

Սոլսբերիին ուղղված գաղտնի զեկուցագրում (12 հունիսի) Լեյարդը գրում էր, որ համաձայն բրիտանական հյուպատոսներից և հայ պատրիարքից ստացված հավաստի տեղեկատվության, Ասիական Թուրքիայի արևելյան վիլայեթներում վիճակը մնում է անփոփոխ՝ անիշխանություն, կյանքի և ունեցվածքի անպաշտպանվածություն, վատ վերաբերմունք քրիստոնյաների հանդեպ: Ավելին, Բարձր Դռան կողմից ստեղծված հանձնաժողովների գործունեությունն ավելի վատթարացրեց իրավիճակը: Դեսպանի համոզմամբ, Բուլղարական հարցի օրինակով, Օսմանյան կայսրությունում հետզհետե ձևավորվում է Հայկական հարցը. ՝Ներկայումս Փոքր Ասիայում սկսում են դրսևորվել նույնանման բանսարկություններ, որոնց նպատակն է հայկական ազգության ձևավորումը (՞) և այնպիսի մի վիճակի ստեղծումը, որին կհետևի քրիստոնեական բողոքն ու եվրոպական միջամտությունը: Ես կրկին և կրկին անգամ զգուշացրել եմ թուրք նախարարներին, որ եթե նրանք չշտապեն Բեռլինի պայմանագրի և հունիսի 4-ի կոնվենցիայի հայերին վերաբերող պայմանների կատարման, ինչպես նաև քրիստոնյաների պաշտպանության և Թուրքիայի ասիական նահանգների բարելավված ղեկավարման ուղղությամբ անհրաժեշտ

50 Նույն տեղում, էջ 91-93:
51 Turkey, No 1 (1880)..., p. 65.
52 FO 424 / 84, No 216 / 1, pp. 282-283.

միջոցառումների իրականացման հարցում, ապա...սուլթանը կհայտնվի որոշ տարածքների կորստի վտանգի առջև»:53

Հունիսի 20-ին Լեյարդը հանդիպում է պատրիարք Ներսեսի հետ և հավաստիացնում նրան, որ պատրաստ է, իր հնարավորությունների սահմաններում, անել ամեն ինչ՝ հայերի և կայսրության մյուս քրիստոնյաների իրավունքները պաշտպանելու և նրանց համար արժանի կառավարում ապահովելու հարցում: Միաժամանակ դեսպանը հայտարարում է պատրիարքին, որ չի մասնակցելու կայսրության քաղաքական իրավիճակը ապակայունացնող որևէ խաղերի մեջ և թույլ չի տալու գցել սուլթանի հեղինակությունը: Նա նախազգուշացնում էր, որ նման բանսարկությունները կարող են միմիայն վատթարացնել հայերի վիճակը և խորհուրդ է տալիս համայնքի կյանքի պայմանները բարելավելու նպատակով դիմել բացառապես օրինավոր բոլոր միջոցներին: Տեղեկացնելով Սոլսբերիին իր հանդիպման մասին, դեսպանը համոզված կերպով նշում էր, որ կան ազդեցիկ մարդիկ, որոնք փորձում են պատրիարքին ներքաշել հայերի արդար իրավունքներին վնասող բանսարկությունների մեջ:54

Հունիսին-հուլիսին Հայկական հարցը քննարկման առարկա էր դարձել բրիտանական խորհրդարանի լորդերի պալատում: Հունիսի 27-ի իր ելույթում լորդ Կարնարվոնը քննադատում է Դիզրայելիի քաղաքականությունը Հայկական հարցում, նշելով, որ Բարձր Դուռը խաբում է բրիտանական կառավարությանը, 61-րդ հոդվածը չի կատարվում, իսկ հայաշատ վայրերն ուղարկված հանձնաժողովները թաքցնում են իրերի իրական վիճակը, տեղական իշխանությունների և քրդերի ճնշումն ու բռնությունները: Պատասխանելով նրան, Սոլսբերին ասում է. «Ես բաժանում եմ այն կարեկցանքը, որ լորդ Կարնարվոնը ցուցաբերում է հայ ժողովրդի նկատմամբ, բայց և բոլորովին մերժում եմ այն պատասխանատվությունը, որ նա գցում է կառավարության վրա»: Նա խոստանում էր շարունակել սուլթանական կառավարությունից բարենորոգումներ պահանջել հայերի համար:55

_____
53 FO 424 / 84, No 287, p. 241.
54 FO 424 / 84, No 486, pp. 387-388.
55 Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.): Երևան, 1980, էջ 103:

Հուլիսի 1-ին Սոլսբերիին ուղղված հերթական զեկուցագրում Լեյարդը տեղեկացնում էր պատրիարք Ներսեսից ստացված նոր նամակի մասին, ուր վերջինս իր դժգոհությունն էր հայտնում, որ բրիտանական կառավարությունը ձևակերպել է Տրոտտերին որպես Մեծ Բրիտանիայի հյուպատոս ոչ թե Հայաստանում, այլ Քրդստանում: Դեսպանը գրում էր. Ես մի քանի անգամ արդեն հրավիրել եմ Ձեր ուշադրությունն այն փորձերի վրա, որոնք սկսում են ձեռնարկվել այսօր Ասիական Թուրքիայում ինչ-որ «Հայաստան» ստեղծելու ուղղությամբ, որը Եվրոպան կամ Ռուսաստանը պետք է վերածեն ինքնավար շրջանի և, ի վերջո, անկախ պետության: Սակայն դա չի նշանակում, որ Դուռը չի կարող չխանգարել նման փորձերին այն բանից հետո, ինչ տեղի ունեցավ իր հետ Եվրոպական Թուրքիայում: Նա չի ճանաչելու «Հայաստան» անվանման տակ ոչ այդպիսի շրջան, ոչ էլ վիլայեթ, այդ անունը նրան հայտնի չէ և նա, իհարկե, էկզեկվատուրա (կառավարության թույլտվություն հյուպատոսի համար) չի տա հյուպատոսին պատրիարքի կողմից պահանջված անվան

տակ: Նմանապես մենք կարող էինք էկզեկվատուրա խնդրել «Հրեաստանի» համար: Ինչևէ, ես բազմիցս նախազգուշացրել եմ Դռանը, որ եթե նա անմիջապես չիրագործի իր կողմից խոստացված բարենորոգումները սուլթանի ասիական տիրույթներում, չապահովի այդ ժողովուրդների պաշտպանությունը, ինչպես նաև արդար և իրավահավասար կառավարումը, հայ և մյուս ազգությունների հարցերը շարունակելու են թուլացնել Նորին Մեծության հեղինակությունը և պակասեցնել նրա տարածքները՝:56

Հուլիսի 7-ի առավոտյան Լեյարդը զրույց է ունենում Կարաթեոդորի փաշայի հետ, որի ժամանակ առաջարկում է պայմանականորեն ազատ արձակել բանտարկված զեյթունցիներին և բանակցություններ սկսել ապստամբների ղեկավար, իշխան Պապիկ Ենիտունյանի հետ՝ Զեյթունի քրիստոնյաներին բավարարելու և մահմեդական բնակչության ավազակային հարձակումներից նրանց զերծ պահելու համար: Հակառակ դեպքում, նշում էր դեսպանը, արյուն է թափվելու, ինչը, Բուլղարիայի օրինակով, առաջացնելու է համապատասխան վերաբերմունք Եվրոպայի հասարակական կարծիքի շրջանում և ստեղծելու լուրջ բարդություններ Թուրքիայի համար: Լեյարդը Կարաթեոդորի փաշայի ուշադրությունն է հրավիրում բրիտանական խորհրդարանի լորդերի պալատում լորդ Կարնարվոնի կողմից սկսված Հայկական հարցի քննարկումների վրա, որոնք վկայում են

56 Turkey, No 10 (1879)..., p. 105.

հայերի հանդեպ տարվող քաղաքականության նկատմամբ երկրում ձևավորվող մեծ հետաքրքրության մասին: Ելնելով այդ հանգամանքից, դեսպանը կրկին անգամ շեշտում է անհապաղ բարենորոգումների իրագործման անհրաժեշտությունը: Արտգործնախարարը պատասխանում է, թե Բարձր Դուռը լրջորեն քննարկում է բարենորոգումների ծրագիրը, որն այնուհետև կհաստատվի սուլթանի կողմից և կիրագործվի:57

Երկու օր անց, հայերի ծանր վիճակին վերաբերող նոր տեղեկություններ ստանալով իր հյուպատոսներից, Լեյարդը խիստ հայտագիր է ներկայացնում Բարձր Դռանը: Բրիտանական կառավարությունը Դռան հատուկ ուշադրությունն էր հրավիրում սուլթանի հայազգի հպատակների«անտանելի հալածանքների» վրա և հույս հայտնում, որ նա կատարելու է իր խոստումները կայսրության բոլոր հպատակների, անկախ նրանց ազգային ծագումից և դավանանքից, խաղաղ կյանքի և պաշտպանվածության ապահովման մասին: Փաստաթղթում նշվում էր, որ կայսրության արևելյան շրջաններում հեղինակություն են վայելում միմիայն քուրդ աղաներն ու բեյերը, որոնք հիմնականում զբաղված են թալանով և քրիստոնյա բնակչության հալածանքով:58

Դեսպանին ուղղված հուլիսի 10-ի նամակում Սոլսբերին նշում էր, որ Օսմանյան կայսրության արևելյան նահանգների բարենորոգումների իրագործման հետաձգումը մեծապես անհանգստացնում է բրիտանական կառավարությանը: Արտգործնախարարը դրականորեն է գնահատում Լեյարդի կողմից տարվող աշխատանքն այդ ուղղությամբ, հանձնարարելով նրան շարունակել ճնշում գործադրել սուլթանի նախարարների վրա:59 Պատասխան նամակում դեսպանը գրում էր. «Ես հավատացած եմ, որ Դուռն այժմ համոզվել է հայերի համար ինչ-որ բան անելու բացարձակ անհրաժեշտության մեջ և

վստահ եմ, որ մենք հասնելու ենք մեր նպատակին՝ բարենորոգումների իրագործմանը: Ես ինձնից կախված ամեն ինչ անում եմ գործն ավարտին հասցնելու համար»:60

Այդ ընթացքում բրիտանական հյուպատոսները շարունակում էին զեկուցել դեսպանին և արտգործնախարարին Բարձր Դռան կողմից Էրզրում և Զեյթուն ուղարկված

57 FO 424 / 85, No 210, p. 116.
58 Turkey, No 10 (1879)..., pp. 106-107.
59 Նույն տեղում, էջ 103:
60 FO 424 / 85, No 172, p. 95.

հանձնաժողովների գործունեության մասին: Հուլիսի 7-ին Տրոտտերը գրում էր, որ Էրզրում հասնելուն պես հանձնաժողովի անդամները, վիլայեթի բնակչության համամասնական թվից ելնելով (ըստ պաշտոնական տվյալների, վիլայեթի տղամարդկանց թիվը կազմում էր 252 811, որոնցից 197 768-ը՝ մահմեդական, 55 043-ը՝ քրիստոնյա) ընտրեցին 38 հոգուց բաղկացած խորհրդատվական հանձնաժողով, որոնցից 10-ը՝ քրիստոնյա (7 հայ լուսավորչական, 1 հայ կաթոլիկ, 1 հույն), 28-ը՝ մահմեդական: Համաձայն Տրոտտերի, բարենորոգումները պետք է իրագործվեն կառավարության կողմից մշակված վիլայեթի նոր կանոնադրության և բնակչության կարծիքների ու առաջարկների հիման վրա, վալիի աջակցությամբ: Այն բարենորոգումները, որոնք կհակասեն վիլայեթի կանոնադրությանը, պետք է ներկայացվեն կառավարության քննարկմանը: Տրոտտերը տեղեկացնում էր հանձնաժողովի հանդիպման մասին տեղի հայ համայնքի պատվիրակության հետ, որը ներկայացնում է իր առաջարկը բարենորոգումների վերաբերյալ: Այն նախատեսում էր մահմեդականների և քրիստոնյաների հավասար ներկայացուցչություն վարչական մարմիններում, նոր ստեղծվող ժանդարմերիայի եվրոպացի ղեկավարի և պաշտոնյաների նշանակում, հայերենի պաշտոնական օգտագործում, տասանորդի վերացում:61

Հուլիսի 17-ին բրիտանական դեսպանությունը հերթական հայտագիրն է ներկայացնում Բարձր Դռանը բարենորոգումների իրագործման կապակցությամբ, այս անգամ Էրզրումի վիլայեթում ստեղծվելիք ժանդարմերիայի կազմում եվրոպացիների ընգրկման առիթով: Փաստաթղթում նշվում էր, որ արդյունավետ ժանդարմերիայի կազմակերպումն Էրզրումի վիլայեթում բրիտանական կառավարությունը համարում է «մասնավորապես ցանկալի»՝ շրջանի անբավարար վիճակի և տեղի մահմեդական ցեղապետերի կողմից իրագործվող քրիստոնյա բնակչության հալածանքի պատճառով: Դեսպանությունը հույս է հայտնում, որ Բարձր Դուռը, համաձայն իր տված խոստումի, կօգտագործի եվրոպացի սպաների փորձը ժանդարմերիայի կազմակերպման գործում:62

Իր հաջորդ զեկուցագրում (25 հուլիսի) Տրոտտերը նշում էր, որ ինչքան շատ է ինքը խորանում հանձնաժողովի գործունեության մեջ, այնքան պակաս հույս է իրեն ներշնչում

61 Turkey, No 4 (1880). Correspondence respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1880, pp. 1-2.
62 Turkey, No 10 (1879)..., p. 118.

ժամանակին և կատարյալ բարենորոգումների իրագործումը: Հյուպատոսը հաստատում էր իր կարծիքը հետևյալ փաստարկներով. 1/ հանձնաժողովի անդամներին լիազորություն էր տրված նոր քրեական և քաղաքացիական դատարանների փոխնախագահների և անդամների թեկնածություններ ընտրել, սակայն վալին, նույնիսկ առանց խորհրդակցելու, ինքը կատարեց այդ փոփոխությունները. 2/ հանձնաժողովի անդամները հրահանգ էին ստացել ազատել պաշտոններից վիլայեթի վարչական խորհրդի հին անդամներին և, նոր կանոնակարգի համաձայն, անցկացնել նոր ընտրություններ, սակայն շուտով այդ կարգադրությունը չեղյալ համարվեց և ընտրությունների վերահսկման իրավունքը կրկին անցավ վալիին, ինչը նշանակում էր, որ նախկին կաշառակեր անդամները նորից ստանձնելու էին իրենց պաշտոնները. 3/ հանձնաժողովի անդամները լիազորություն էին ստացել պաշտոններից ազատել վիլայեթի ոչ իրազեկ և կաշառակեր պաշտոնյաներին, սակայն վերջերս վալին, առանց խորհրդակցելու հանձնաժողովի հետ, մի քանի կայմակամ է ազատել աշխատանքից, փոխարինելով նրանց իր սեփական թեկնածուներով. 4/ հանձնաժողովին իրավունք էր վերապահվել ուսումնասիրել հարկահավաքի համակարգն ու նրա կիրառման ձևերը և, գործող օրենքների սահմաններում, կատարել համապատասխան բարելավումներ, սակայն վալին վերջերս հրահանգ է ստանում Բարձր Դռնից՝ հարկահավաքը նախկին ձևով կատարելու վերաբերյալ: Տրոտտերի կարծիքով, Կոստանդնուպոլսից ստացված վերջին հրահանգները հատուկ նպատակաուղղված են հանձնաժողովի անդամների իշխանության նվազեցմանը, այսինքն, ստատուս քվոյի պահպանմանը վիլայեթում:63

Միաժամանակ Հենդերսոնն ու Չերմսայդը Հալեպից հաղորդում էին Լեյարդին (12 հուլիսի) Զեյթունի իրադարձությունները հետաքննող հանձնաժողովի անդամ Մազհար փաշայի սխալ գործելակերպի մասին, որը շարունակ գրգռում էր մահմեդական բնակչությանը քրիստոնյաների դեմ և, փաստորեն արտահայտելով Կոստանդնուպոլսի մոլեռանդ խավի շահերը, ծայր աստիճան սրում իրավիճակը շրջանում:64 Այդ առիթով դեսպանն անմիջապես մեծ վեզիրի մոտ է ուղարկում դիվանագետ Ալֆրեդ Սենդիսոնին: Լսելով դեսպանության բողոքը, նա պատասխանում է, թե Բարձր Դուռը մշտապես հայտնվում է դժվարին կացության մեջ, քանի որ բրիտանական դիվանագետների բողոքների պատճառով ոչ մի թուրք

63 Turkey, No 4, (1880)..., pp. 3-4.
64 FO 424 / 85, No 365 / 1, pp. 206-207.

պաշտոնատար անձ չի կարողանում անվտանգ և հանգիստ կատարել իր պարտականությունները: Նա նույնպես հայտարարում է, որ թուրք պաշտոնատար անձի հասցեին արված մեղադրանքն առաջին հերթին պետք է ստուգվի, քանի որ շատ դժվար է այս տարածության վրա հաստատել նրա հանցավորությունը: Սակայն խորհրդակցելով արտգործնախարարի հետ, մեծ վեզիրը որոշում է անմիջապես նախարարների խորհրդի նիստ հրավիրել և քննարկել Զեյթունի հարցին լուծում տալու նպատակով արտակարգ լիազորություններով օժտված բարձրագույն կոմիսար նշանակելու խնդիրը: Վերջինիս պետք է իրավունք վերապահվի պատժելու Մազհար փաշային կամ այլ թուրք պաշտոնյաների, որոնք իրենց սխալ են դրսևորել Զեյթունի հարցում:65

Սոլսբերիին ուղղված հուլիսի 15-ի զեկուցագրում Տրոտտերը գրում էր, որ իր պաշտոնը՝ «Քրդստանի հյուպատոս», բացասական հակազդեցություն է առաջացնում մասնավորապես հայ բնակչության շրջանում, որպես ապացույց բերելով Կոստանդնուպոլսի մամուլում լույս տեսած հոդվածները: Նրա կարծիքով, այդ հարցում անհրաժեշտ է հաշվի առնել հայերի շահերը և, ավելին, բարենորոգումների իրագործման խնդրում բրիտանական կառավարությունը պետք է համագործակցի նրանց հետ: Թուրքական պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, Էրզրումի շրջանի մահմեդական տղամարդկանց թիվը կազմում էր 197 768, ոչ մահմեդականներինը՝ 55 043, իսկ Վանի շրջանում՝ համապատասխանաբար 126 208 և 97 555: Տրոտտերը համոզված էր, որ քրիստոնյաների թիվը հատուկ նվազեցված է շուրջ 40 %-ով: Բրիտանական հյուպատոս Թեյլորի հաշվարկների համաձայն, Էրզրումի և Վանի շրջաններում բնակվում են 442 500 թուրքեր, 848 000 քրդեր, 200 500 ղըզըլբաշներ, 649 000 քրիստոնյաներ: Նկատի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայերն իրենց ակտիվ մասնակցությունն են բերում շրջանների հասարակական կյանքում, Տրոտտերն առաջարկում էր հյուպատոսությունն անվանել Թուրքահայաստանի և Քրդստանի, իսկ եթե դա անընդունելի է՝ Ասիական Թուրքիայի արևելյան շրջանների կամ բաժանել հյուպատոսական տարածքն Արևելյան ու Արևմտյան Անատոլիայի շրջանների և համագործակցել հայ բնակչության հետ բարենորոգումների իրականացման գործում:66 Հետաքրքիրն այն է, որ մինչ այդ Տրոտտերը

65 FO 424 / 85, No 365 / 4, pp. 208-209.
66 Turkey, No 10 (1879)..., p. 123.

ստորագրում էր իր զեկուցագրերը որպես Քրդստանի հյուպատոս, իսկ այս անգամ դրված էր միայն իր ստորագրությունը:

Տրոտտերի առաջարկի կապակցությամբ Լեյարդը Սոլսբերիին գրում էր (1 օգոստոսի), որ «Հայաստան» անվան տակ Բարձր Դռնից բրիտանական հյուպատոսի համար էկզեկվատուրա խնդրելն անցանկալի է, քանի որ նման շրջան Թուրքիայի քաղաքական բաժանման մեջ գոյություն չունի: Պարզ է, շարունակում էր դեսպանը, որ Հայկական հարցի հրահրման ուղղությամբ սկսված բանսարկությունները նպատակ ունեն ստիպել Եվրոպային ինքնավարություն պահանջել հայերի համար: Լեյարդն անհրաժեշտ էր համարում ամեն կերպ խանգարել նման միտումի զարգացմանը: Նա նշում էր, որ եթե «Քրդստանի հյուպատոս»անվանումը վիրավորական է հայերի համար, ապա, անկասկած, կարելի է այլ անվանում գտնել, սակայն թեև «Քրդստան» արտահայտությունն օգտագործվում է քրդերով բնակեցված երկրի համար, դա չի նշանակում, որ Դուռը պետք է արտոնյալ շրջան ստեղծի նրանց համար: «Իմ կարծիքով, - գրում էր Լեյարդը, - նման հանգամանքներում որևէ փոփոխություն կատարելու կարիք չկա»:67

Վանում փոխհյուպատոս Քլեյթոնին ուղղված հուլիսի 24-ի նամակում Տրոտտերը նշում էր տեղի բնակչության՝ քոչվոր և նստակյաց քրդերի ու հայերի թվաքանակի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալներ ձեռքբերելու անհրաժեշտության մասին, ինչը շատ կարևոր է բարենորոգումների իրագործման համար: Իր համոզմամբ,«թուրքական պաշտոնական տվյալները շատ տկար են և հավատ չեն ներշնչում»: Օրինակ, ըստ պաշտոնական տվյալների, Մուշի շրջանի հայ տղամարդկանց թիվը կազմում էր 48 հազ.,

իսկ հայ եպիսկոպոսի համաձայն՝ 120 հազ.: Տրոտտերը հանձնարարում էր Քլեյթոնին թվական տվյալների ճշգրտման և բարենորոգումների իրագործման հարցերում համագործակցել Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս Կամսարականի հետ:68

Հուլիսի 29-ին Լեյարդը երեք ժամ տևողությամբ զրույց է ունենում Աբդուլ Համիդի հետ: Նա հայտարարում է սուլթանին, որ արդեն մեկ տարի է անցել Կիպրոսի համաձայնագրի ստորագրման օրվանից, սակայն սուլթանական կառավարության կողմից ոչինչ չի արված նրա պայմանների կատարման ուղղությամբ: Բրիտանական կառավարությունը զարմացած է,

67 FO 424 / 86, No 198, pp. 147-148.
68 Turkey, No 10 (1879)..., pp. 124-125.

նշում էր դեսպանը, որ 1878 թ. հունիսին Բարձր Դռան տված «որոշակի հավաստիացումները» դեռևս կատարված չեն: Սուլթանը կրկին անգամ խոստանում է Լեյարդին շուտով իրագործել բարենորոգումները, նշելով միաժամանակ, որ պատերազմի արդյունքում առաջացած տնտեսական և ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև լուրջ միջազգային խնդիրները թույլ չեն տալիս իրեն ընդհուպ զբաղվելու բարենորոգումների իրագործմամբ: Նա պատվի խոսք է տալիս Լեյարդին, որ իր կողմից բրիտանական կառավարությանը խոստացված բարենորոգումները շուտով կիրագործվեն, ավելացնելով, որ այդ ուղղությամբ «պարտադիր ցուցումներ է» տվել իր նախարարներին: Միակ դժվարությունը նա տեսնում է տասանորդի վերացման մեջ, նկատելով, որ բրիտանական կառավարությունը նույնպես չի կիրառել այդ միջոցը Կիպրոսում:

Հաջորդ օրը Լեյարդը նույն խնդրի շուրջ զրույց է ունենում մեծ վեզիրի հետ: Վերջինս տեղեկացնում է դեսպանին, որ սուլթանն արդեն իրեն համապատասխան ցուցումներ է տվել, և հավաստիացնում, որ շուտով անհապաղ միջոցներ են ձեռնարկվելու բարենորոգումների իրականացման ուղղությամբ:69

Համոզվելով, որ սուլթանի խոստումներն անհիմն են և նման դիվանագիտական քայլերով այլևս անհնար է հասնել նպատակի, Լեյարդը ցուցում է տալիս ծովակալ Հորնբիին Միջերկրականի բրիտանական նավատորմը դուրս բերել Մալթայից և ուղևորվել դեպի Լեմնոս կղզի, ուր և սպասել հետագա ցուցումների: Հուլիսի 31-ին Սոլսբերիին ուղղված գաղտնի հեռագրում դեսպանն առաջարկում էր, որ իրեն իրավունք վերապահվի հանձնարարել ծովակալին նավատորմը մտցնել Կոստանդնուպոլիս, եթե սուլթանը չկատարի իր խոստումները:70 Պատասխան հեռագրում Սոլսբերին իր համաձայնությունն էր տալիս դեսպանի առաջարկին:71

Դեռևս հունիսի 27-ին բրիտանական խորհրդարանի լորդերի պալատում Սոլսբերին հայտարարել էր. «Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա ներկայումս Թուրքական կայսրության...պետական գործիչներից... բաղկացած հանձնաժողով է աշխատում, որը պետք է քննարկի և զեկուցի Փոքր Ասիայում իրագործվելիք բարենորոգումների վերաբերյալ»: Այդ

69 FO 424 / 86, No 197, pp. 144-147.

70 FO 424 / 86, No 2, p. 1.
71 FO 424 / 86, No 11, p. 3.

կապակցությամբ օգոստոսի 1-ին Էրզրումից Սոլսբերիին գրած նամակում Տրոտտերը նշում էր, որ հնարավոր է և հանձնաժողովի անդամները նույնիսկ ամենից անկեղծ ու ազնիվ և լավագույն մտադրություններով օժտված գործիչներ են, սակայն համոզված է, որ նրանց զեկուցագիրը բարենորոգումների հարցում իրական առաջընթաց չի արձանագրելու՝ Դռան կողմից տրված սահմանափակող հրահանգների պատճառով: Հյուպատոսը անիրականանալի է համարում կառավարության կողմից բարենորոգումների իրագործումն այս երկրում, «առանց որակյալ և ազնիվ եվրոպացի պաշտոնյաների ներկայության»: «Ինչքան շատ թուրք պաշտոնյա եմ ես ճանաչում և որքան ավելի լավ եմ ծանոթանում երկրի վիճակին ու բարենորոգումների իրագործման ճանապարհին հանդիպող խոչընդոտներին, - գրում էր Տրոտտերն արտգործնախարարին, - այնքան ավելի եմ համոզվում, որ այլ իրական լուծում լինել չի կարող»:72

Տրոտտերի կարծիքը մեկ անգամ ևս հաստատվեց օգոստոսի 2-ին Մուշից ստացված փոխհյուպատոս Քլեյթոնի զեկուցագրով: Վերջինս նկարագրում էր Մուշի շրջանի հայկական գյուղերի ծանր վիճակը, ոչ միայն քրդերի, այլև թուրք պաշտոնյաների, կանոնավոր բանակի սպաների և զինվորների կողմից կատարվող մշտական հարձակումները, թալանը, ջարդն ու սպանությունները: Քլեյթոնը նշում էր. «Ես չեմ տեսնում արտասահմանյան բանսարկության ախտանիշներ, սակայն թվում է, թե հայերը վերջերս ավելի քաջատեղյակ են դարձել եվրոպական ժողովուրդների վիճակին, ազատության և հավասարության գաղափարներին, և պարզ է, որ իրենց ներկայիս կացությունը անտանելի պետք է համարեն»:73

Սոլսբերիին հասցեագրված օգոստոսի 8-ի զեկուցագրում Տրոտտերը գրում էր, որ համաձայն հանձնաժողովին ներկայացված բարենորոգումների ծրագրի հայկական նախագծին, հայերը պետք է ստանան վիլայեթի պաշտոնների ճիշտ կեսը, քանի որ քոչվոր քրդերը չեն կարող ներկայացված լինել տեղական իշխանության մարմիններում: Ըստ հյուպատոսի, հայերի պահանջները հիմնված են պաշտոնական տվյալներից զգալի կերպով տարբերվող բնակչության թվի հաշվարկի վրա, համաձայն որի վիլայեթի քրիստոնյա տղամարդկանց թիվը կազմում է 195 500, թուրքերինը՝ 185 000, նստակյաց և քոչվոր քրդերինը՝ 112 500, եզդիներինը՝ 3 000: Ըստ Տրոտտերի, չբավարարվելով բարենորոգումների նախագծի

_____
72 Turkey, No 4 (1880)..., p. 8.
73 Նույն տեղում, էջ 28:

քննարկումների արդյունքներով, հայերը որոշել են այլևս չմասնակցել հանձնաժողովի աշխատանքներին:74

Օգոստոսի 10-ին Լեյարդը հերթական հայտագիրն է ներկայացնում Բարձր Դռանը՝ Էրզրում և Վան ուղարկված հանձնաժողովի աշխատանքի վերաբերյալ: Փաստաթղթում նշվում էր, որ բավականին եռանդուն և օրինավոր սկսելով իրենց աշխատանքը,

հանձնաժողովի անդամները, հանդիպելով տեղական իշխանությունների դիմադրությանը, օժտված լինելով սահմանափակ լիազորություններով ու իշխանությամբ, և, չունենալով Կոստանդնուպոլսի լիարժեք աջակցությունը, ներկայումս «վիատության» մեջ են և նման պայմաններում չեն կարող իրագործել սուլթանի«բարի մտադրությունները՝ քրիստոնյա հպատակների դրության բարելավման ուղղությամբ»:75

Հուլիսի 31-ին Քլեյթոնը հաղորդում էր Մուշից, որ տեղի հայ բնակչությունն իր դժգոհությունն է հայտնում շրջանում Կարսից և Բաթումից գաղթած 3-ից 4 հազ. մահմեդականներ վերաբնակեցնելու տեղական իշխանությունների որոշման վերաբերյալ: Ընդ որում, հայերը դեմ էին նրանց վերաբնակեցմանը ոչ թե քաղաքում, այլ գյուղերում, ինչն, ըստ իրենց, կարող էր մեծ վնաս հասցնել գյուղացիությանը:76

Սեպտեմբերի 10-ին Բայազետի հայ բնակչությունը խնդրագիր է ներկայացնում հանձնաժողովի անդամներին, ուր նկարագրում է հայերի վիճակը պատերազմից առաջ և հետո: Նշվում էր, որ պատերազմից առաջ Բայազետի բնակչությունը բաղկացած էր 200 քրիստոնյա և 400 կամ 500 մահմեդական ծխերից, հայերն ու մահմեդականներն ապրում էին խաղաղ և ունևոր կյանքով: Պատերազմի ժամանակ, երբ ռուսական բանակը հեռու չէր սահմանից, հայերն ու թուրքերը ստեղծեցին համատեղ խորհուրդ, ուր որոշվեց, որ անհրաժեշտության դեպքում նրանք փոխադարձաբար պաշտպանելու են իրար: Երբ ռուսական բանակը մտավ Բայազետ, բոլոր մահմեդականներն ապաստանեցին հայերի տներում, սակայն զգալով ռուսների խաղաղ մտադրությունները, վերադարձան իրենց տները և շարունակեցին բնականոն աշխատանքը: Ռուսական բանակի հեռանալուց հետո տեղի թուրք և քուրդ բնակչության կողմից սկսվեց հայերի ունեցվածքի թալանն ու ջարդը, որի

---

74 Նույն տեղում, էջ 15-16:
75 Նույն տեղում, էջ 15:
76 Նույն տեղում, էջ 27:

արդյունքում սպանվել և վիրավորվել է 800 մարդ, հայերի մեծամասնությունը գաղթել է Պարսկաստան: Խնդրագրում ասվում էր, որ «եթե նման իրավիճակը շարունակվի, ապա մեր ազգի համընդհանուր բնաջնջումը շատ էլ հեռու չէ մեզանից» Հայերը դիմում էին սուլթանին՝ «...խղճահարությամբ մոտենալ մեր վիճակին և բարելավել մեր չքավոր ու դժբախտ կացությունը»:77

Տրոտտերին հասցեագրված հերթական զեկուցագրում (10 սեպտեմբերի) Քլեյթոնը Վանից գրում էր, որ վերջերս հանդիպում է ունեցել Թիֆլիսից ժամանած երկու ռուսահայի հետ, որոնք մտադիր են հիմնել ուսուցիչների պատրաստման և գյուղատնտեսական դպրոցներ: Նրանց վկայությամբ, սահմանամերձ շրջանների հայ գյուղացիությունը հույսով է նայում Ռուսաստանին, որն, ինչպես դա տեղի ունեցավ բուլղարների պարագայում, փրկելու է հայերին ներկայիս տառապալից վիճակից: Ըստ Քլեյթոնի, ռուսահայերը հասկանում են, որ Ռուսաստանից այլևս աջակցություն ստանալու հույս չկա, իսկ տեղի կրթված հայերը ներկայումս չեն ձգտում ինքնավարության, մտածելով միմիայն արևմտահայության անվտանգության՝ թալանից և ջարդից խուսափելու, մահմեդականներին հավասար

իրավունքներ ունենալու մասին: Նրա կարծիքով, «Թուրքիայում հայերն ունեն մտավոր և բարոյական ազատություն, սակայն ճնշված են ֆիզիկապես. Ռուսաստանում նրանք ունեն նյութական բարեկեցություն, սակայն ստրուկ են բարոյապես և մտավորապես»:78

Սեպտեմբերի 23-ին Հաճընի հայությունը բողոքագիր է ներկայացնում հանձնաժողովին, որը բաղկացած էր հետևյալ կետերից. 1/ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքում սպանված է 10-ից ավելի և վիրավորված 55 հայ, գողացված է 6 հազ. թուրքական լիրայի արժողությամբ անասուն և ապրանք. 2/ քաղաք տանող ճանապարհների անվտանգությունն ապահովված չէ. 3/ թուրք պաշտոնյաները վիրավորում են քրիստոնյաներին, նրանց կոչում «գյաուր», քրիստոնյայի վկայությունը չի ընդունվում դատարանների կողմից. 4/ թեև Հաճընն քաղաքի 8 հազ. 500 բնակիչներից 8 հազ. հայ են (հավանաբար միայն տղամարդկանց թիվը, քանի որ 1915 թ. տվյալներով Հաճընն ունեցել է 35 հազ. բնակիչ, որոնցից 25-30 հազ.՝ հայեր - Ա.Կ.), կառավարական պաշտոնյաներից միայն գանձապահն է հայ. 5/ քանի որ քաղաքի մեծամասնությունը քրիստոնյաներ են, կայմակամը

---

77 Նույն տեղում, էջ 107-109:
78 Նույն տեղում, էջ 78-79:

պետք է քրիստոնյա լինի. 6/ կառավարությունը բռնագրավել է հայերին պատկանող ջրաղացը և երեք խանութ, որոնց եկամուտով նախկինում հայերը հոգում էին եկեղեցու և դպրոցի կարիքները. 7/ քաղաքի բնակչությունը կարիք ունի բժշկի, փոստի և հեռագրատան. 8/ հաշվի առնելով շրջանի հողի քարոտ և անբերրի որակը, նվազեցնել հարկերի չափը:79

Խարբերդի հայերն իրենց հերթին նամակ էին ներկայացրել (26 սեպտեմբերի) հանձնաժողովին, ուր նկարագրվում էր շրջանի վատթար վիճակը: Սակայն հանձնաժողովի նախագահ Աբեդին փաշան նամակն ընկալել էր որպես իր հասցեին արված քննադատություն և մերժել էր այն ընդունել:80

Չնայած բրիտանական հյուպատոսների և փոխհյուպատոսների հաղորդագրություններին հայ բնակչության վատթարացող վիճակի, տեղական իշխանությունների, զինվորականների և քրդական հրոսակախմբերի կողմից կազմակերպվող կեղեքումների, թալանի և սպանությունների մասին, սեպտեմբերի 29-ին, իր հյուպատոսներին ուղղված գաղտնի նամակում Սոլսբերին գրում էր, որ Թուրքիայի հայերի շրջանում նկատվում է հայկական ինքնավարության ստեղծման գաղտնի շարժում: Նա հանձնարարում էր մանրակրկիտ ուսումնասիրել խնդիրը և մշտապես տեղյակ պահել իրեն հայ բնակչության տրամադրությունների, ինչպես նաև Ռուսաստանի հանդեպ նրա դիրքորոշման մասին:81

Հոկտեմբերի 1-ին Տրոտտերը գրում էր Սոլսբերիին, որ իշխանությունները բարենորոգումների շարժումն օգտագործում են անհնազանդ քուրդ ցեղապետերից ազատվելու նպատակով: Ըստ հյուպատոսի, կառավարության որոշման համաձայն, նրանք պետք է աքսորվեն Ալբանիա, սակայն ներկայումս հաջողությամբ բանակցում են Բարձր Դռան հետ՝ տեղում մնալու համար: Տրոտտերը նշում էր, որ իր տեղեկությունների

համաձայն, քրդերը սպառնում են ոչնչացնել հայերին, որոնք հանդիսանում են իրենց ղեկավարների հանդեպ իշխանությունների դժգոհության պատճառը: Միաժամանակ հյուպատոսը հաղորդում էր, որ Բալուից և Խարբերդից ստացված տեղեկությունների համաձայն, հայերն

79 Նույն տեղում, էջ 100:
80 Նույն տեղում, էջ 97:
81 FO 424 / 87, No 393, p. 337.

այստեղ անպաշտպան վիճակում են, տեղական իշխանությունները բացարձակապես ոչինչ չեն անում թալանից և սպանություններից նրանց ապահովելու հարցում:82

Սոլսբերիին ուղղված իր հաջորդ զեկուցագրում (7 հոկտեմբերի) Տրոտտերը տեղեկացնում էր, որ Կարսի, Արդահանի և Կաղզվանի շրջանների շուրջ 10 հազ. մահմեդական ընտանիքներ ցանկություն են հայտնել տեղափոխվել Թուրքիա: Ռուսական կառավարությունն, ըստ հյուպատոսի, նպատակ ունի առաջին հերթին փոխարինել նրանց ռուսներով և կազակներով, խոչընդոտելով հայերի վերաբնակեցմանն այդ տարածքներում: Միաժամանակ նշվում էր, որ 1828-1829 թթ. այս տարածքում բնակեցված շուրջ 2 հազ. հայ ընտանիքներ նույնպես ցանկանում են վերադառնալ Ալաշկերտի դաշտավայրում իրենց լքած տները, սակայն ռուսական կառավարությունն այդ թույլտվությունը նրանց չի տալիս:83

Սեպտեմբերին Տրոտտերը հանձնարարում է կապիտան Էվերետին այցելել Ալաշկերտ, Ղարաքիլիսա, Դիադին և Բայազետ՝ հայ բնակչության վիճակն ուսումնասիրելու նպատակով: Հոկտեմբերի 7-ին վերջինս զեկուցում էր հյուպատոսին, որ պատերազմի ընթացքում շրջանը հինգ անգամ գրավվել է թուրքական և ռուսական բանակների կողմից, որոնց ժամանակ բնակչությունից վերցվել է մեծ քանակությամբ մթերք: Միաժամանակ, ինչպես հայ, այնպես էլ թուրք բնակչությունը թալանի, կողոպուտի և սպանությունների է ենթարկվել քրդական ոչ կանոնավոր հեծելազորի և հրոսակախմբերի, ինչպես նաև տեղի իշխանությունների կողմից: Ներկայումս, ըստ Էվերետի, շրջանը գտնվում է ավազակների և ավարառուների ձեռքին, որոնք անպատիժ կերպով շարունակում են կեղեքել տեղի հայ բնակչությանը: Էվերետը համոզված էր, որ առանց եվրոպացի պաշտոնյաների ներկայության և մասնակցության շրջանում անհնարին է իրագործել որևէ բարեփոխում, քանի որ փոփոխության յուրաքանչյուր փորձ կարող է պատճառ դառնալ ճնշումների նոր դրսևորման համար:84 Հիմնվելով Էվերետի տեղեկությունների վրա, հոկտեմբերի 25-ին բրիտանական դեսպանությունը հերթական հայտագիրն է ներկայացնում Բարձր Դռանը, ուր նշվում էր, որ թուրք պաշտոնյաների և քրդերի վերաբերմունքը հայերի հանդեպ այլևս անընդունելի է:

82 Turkey, No 4 (1880) ..., p. 85.
83 Նույն տեղում, էջ 90-91:
84 Նույն տեղում, էջ 105-107:

Զարմանք էր հայտնվում, թե ինչպես է Բարձր Դուռը հանդուրժում իր սեփական շահերի և մարդկության դեմ կատարվող արարքները:85

Հոկտեմբերի 23-ին Լեյարդը պաշտոնական այցելություն է տալիս նոր նշանակված վարչապետ Սաիդ փաշային: Նշելով, որ վերջինս «պաշտոնի է կոչվել չափազանց ճգնաժամային պահին», դեսպանն իր համոզվածությունն է հայտնում, որ եթե լուրջ և արագ միջոցներ չձեռնարկվեն կայսրության բոլոր հատվածներում տիրող անիշխանության վիճակը շտկելու, Եվրոպային խոստացված բարենորոգումներն իրագործելու, հայ հպատակների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, ապա կառավարությունը, սուլթանի գահը և ընդհանրապես Թուրքական կայսրությունը կարող են հայտնվել մեծ վտանգի առջև: Լեյարդը զգուշացնում է Սաիդ փաշային, որ բրիտանական կառավարությունն այլևս չի կարող հանդուրժել Ասիական Թուրքիայի քրիստոնյա բնակչության ճնշումն ու կեղեքումը, Անգլիայի և Թուրքիայի միջև ստորագրված պայմանագրի պայմանների խախտումը: Այնուհետև դեսպանն այցելում է նույնպես նոր նշանակված արտաքին գործերի նախարար Սավաս փաշային և կրկին անգամ ներկայացնում բրիտանական կառավարության դիրքորոշումը: Երկուսն էլ վստահեցնում են Լեյարդին, որ անպայմանորեն կատարելու են բրիտանական կառավարությանը տրված խոստումները:86

Հանդիպումների հաջորդ օրը Լեյարդը նոր հայտագիր է ներկայացնում Բարձր Դռանը: Փաստաթղթում նշվում էր, որ դեսպանությունը պարբերաբար տեղեկատվություն է ստանում բրիտանական հյուպատոսներից քրդերի և տեղական իշխանությունների կողմից Հայաստանի և Քրդստանի հայերի հանդեպ իրագործվող դաժանությունների մասին, ինչը բացասական անդրադարձ կարող է ունենալ բրիտանական կառավարության, խորհրդարանի և հասարակական կարծիքի Բարձր Դռան նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի վրա: Հույս էր հայտնվում, որ Բարձր Դուռը, քանի դեռ ուշ չէ, գործուն միջոցներ կձեռնարկի վիճակը շտկելու, քրիստոնյաների անվտանգությունն ապահովելու, նրանց և մահմեդական հպատակների իրավունքները հավասարեցնելու ուղղությամբ:87

_____

85 Նույն տեղում, էջ 170:
86 Նույն տեղում, էջ 118-119:
87 Նույն տեղում, էջ 118:

Հաջորդ որը Լեյարդը հանդիպում է ներքին գործերի նախարար Նեդիմ փաշայի հետ և կրկին ներկայացնում բրիտանական կառավարության պահանջը՝ բարենորոգումների շուտափույթ իրագործման անհրաժեշտության մասին: Սակայն այս անգամ դեսպանը խստագույնս պահանջում էր Հայաստանում Գերագույն Կոմիսար նշանակել անգլիացի Բեքիր փաշային, հակառակ պարագայում սպառնալով ցուցում տալ բրիտանական նավատորմին՝ մոտենալ Կոստանդնուպոլսին: Իրականում Լեյարդն արդեն կարգադրել էր ծովակալ Հորնբիին՝ դուրս բերել նավատորմը Մալթայից նոյեմբերի 5-ին: Այս վերջին հանգամանքով մտահոգված թուրք նախարարը խոստացավ օգտագործել իր ողջ ազդեցությունը սուլթանի վրա, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:88 Աբդուլ Համիդն անմիջապես դեսպանի մոտ է ուղարկում Մյունիր բեյին, որը սուլթանի անունից խնդրում է չեղյալ հայտարարել բրիտանական կառավարության որոշումը: Իր բանագնացի միջոցով սուլթանը հաղորդում էր Լեյարդին, որ, ստորագրելով Կիպրոսի կոնվենցիան,

համոզված էր, որ իր ինքնիշխան իրավունքները հարգվելու են, սակայն երբ բրիտանական կառավարությունը որոշում է կայացրել ստիպողաբար Գերագույն Կոմիսար նշանակել Բեքիր փաշային, իրավունք է վերապահում միջոցներ ձեռնարկել իր կայսրությունը պաշտպանելու նպատակով:89 Նոյեմբերի 1-ին Լեյարդը Սոլսբերիին առաջարկում էր ժամանակ տալ Աբդուլ Համիդին բարենորոգումների իրագործման ուղղությամբ որոշակի քայլեր կատարելու համար և հետաձգել նավատորմի դուրս բերումը Մալթայից ևս 15-20 օրով:90

Նոյեմբերի 4-ին Սոլսբերիին այցելում է Մեծ Բրիտանիայում Օսմանյան կայսրության դեսպան Մուսուրուս փաշան: Նա խոստանում է, որ կայսրության քաղաքականության մեջ որևէ փոփոխություն տեղի չի ունենա, բարենորոգումները կիրագործվեն առանց հապաղման, իսկ Բեքիր փաշան կնշանակվի ժանդարմերիայի անկախ հրամանատար Քրդստանում՝ պայմանով, եթե բրիտանական նավատորմը մուտք չգործի թուրքական ջրերը: Սոլսբերին ընդունում է դեսպանի հավաստիացումները և խոստանում, որ սուլթանի կողմից իր խոստումները կատարելու դեպքում բրիտանական նավատորմը կմնա Մալթայում:91 Նույն օրը

_____
88 FO 424 / 88, No 340, p. 253.
89 FO 424 / 88, No 427, p. 314.
90 FO 424 / 89, No 17, p. 13.
91 FO 424 / 89, No 60, p. 56.

Լեյարդը տեղեկացնում էր Սոլսբերիին, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները այցելել են Թուրքիայի արտաքին գործերի նախարարին և խորհուրդ տվել, որ Բարձր Դուռն առանձնակի նշանակություն չտա Բրիտանիայի կողմից ուժի ցուցադրությանը: Նրանք նշել են, թե պատմությունը վկայում է, որ եթե որևէ եվրոպական տերություն ցանկանում է ինչ որ մի բան ստանալ Թուրքիայից, ռազմանավեր է ուղարկում թուրքական ջրերը:92

Սոլսբերին գրում էր Լեյարդին (6 նոյեմբերի), որ բրիտանական կառավարության կարծիքով, եվրոպացի սպայի նշանակումը որպես Փոքր Ասիայում ժանդարմերիայի անկախ հրամանատար հանդիսանում է բարեփոխումների իրագործման կարևորագույն պայման և հանձնարարում գործուն կերպով աշխատել այդ ուղղությամբ:93 Նա նշում էր (9 նոյեմբերի), որ եթե մյուս տերությունները համաձայն չլինեն Բեքիրի նշանակմանը, ապա կարելի է համաձայնել նաև ավստրիացի, գերմանացի կամ ֆրանսիացի սպաների նշանակման հետ:94

Նոյեմբերի 10-ին Լեյարդը երկարատև զրույց ունեցավ Աբդուլ Համիդի հետ: Վերջինս հավաստիացնում էր դեսպանին, որ Մեծ Բրիտանիան շարունակում է մնալ Օսմանյան կայսրության լավագույն բարեկամն ու դաշնակիցը, սակայն նավատորմի տեղաշարժի վերաբերյալ որոշումը վշտացրեց իրեն և խանգարեց բարենորոգումների նախագծի վերջնական հաստատմանը, ինչը ներկա պայմաններում կարող էր գնահատվել որպես սպառնալիքի տակ ընդունված քայլ: Սուլթանն առաջարկում էր, որ բրիտանական կառավարությունը պաշտոնական հայտարարությամբ չեղյալ համարի նավատորմի տեղաշարժի վերաբերյալ որոշումը: Պատասխան խոսքում դեսպանը կրկին անգամ զգուշացնում էր սուլթանին, որ բրիտանական կառավարությունը բավարարված չի կարող

համարել իրեն այնքան ժամանակ, մինչև որ Բեքիրը չնշանակվի որպես Հայաստանում կամ այլ անհանգիստ շրջանում ժանդարմերիայի անկախ հրամանատար:95 Նոյեմբերի 12-ին Սոլսբերին գրում էր Լեյարդին. «Երբ նա կհանձնի Ձեզ Բեքիրին Փոքր Ասիայում 5 հազ. մարդուց ոչ պակաս թիվ ունեցող ժանդարմերիայի անկախ հրամանատար նշանակելու մասին իր ֆերմանը, այն ժամանակ միայն առարկություն չի լինի Ձեր կողմից նրան գրավոր

92 FO 424 / 89, No 71, p. 62.
93 FO 424 / 89, No 77, p. 62; No 99, p. 69.
94 FO 424 / 89, No 100, p. 69.
95 FO 424 / 89, No 117, p. 80.

հայտարարություն հանձնելու վերաբերյալ... Առանց նման նախազգուշական միջոցների դիմելու նա կծիծաղի մեզ վրա»:96

Նոյեմբերի 12-ին Նեդիմ փաշան Լեյարդի մոտ է ուղարկում ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար, հայազգի Արթին Դադյանին: Վերջինս դեսպանին է տրամադրում կառավարության քննարկմանը ներկայացված բարենորոգումների հիմնադրույթները: Լեյարդը խնդրում է հաղորդել նախարարին, որ նա կբավարարվի միայն այն դեպքում, երբ կհրապարակվի բարենորոգումների մասին սուլթանի հրամանագիրը և կձեռնարկվեն նրա իրագործման առաջին քայլերը: Միաժամանակ դեսպանը հայտնել էր Դադյանին, թե վերջին ժամանակաշրջանի թուրքական մամուլի որոշակի հակաբրիտանական ուղղվածությունը վկայում է, որ Բարձր Դուռն ու ռուսական դեսպանությունը բանակցություններ են վարում երկու երկրների միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: «Ես Ձեզ պետք է զգուշացնեմ, - ասում էր Լեյարդը, - եթե դա համապատասխանում է իրականությանը և Դուռը փորձում է ներգրավվել «ռուսական քաղաքականության» ոլորտը, դա կընկալվի որպես կառավարությունում նրա (այսինքն Նեդիմ փաշայի - Ա.Կ.) ներկայության արդյունք և նա կկրի հետևանքների ողջ պատասխանատվությունը»: Դադյանը պատասխանել է, թե Նեդիմ փաշան լիազորել է իրեն հավաստիացնելու դեսպանին, որ ամեն կերպ խոչընդոտելու է Ռուսաստանի հետ դաշինք կնքելու սուլթանի, Դռան կամ կողմնակի փորձերին: Լեյարդը հարցրել է Դադյանին, թե արդյոք Նեդիմ փաշան տեղեկություն ունի՞ սուլթանի և ռուս դեսպանի հանդիպման մասին: Դադյանը պատասխանել է, որ ռուս դեսպանը խորհուրդ էր տալիս սուլթանին նշանակություն չտալ Անգլիայի ծովային սպառնալիքներին:97

Երկու օր անց Աբդուլ Համիդը Լեյարդի մոտ է ուղարկում Մյունիր բեյին, որը հայտնում է նրան, որ կառավարության կողմից երաշխավորված բարենորոգումների անհապաղ իրագործման վերաբերյալ հրամանագիրը պատրաստվում է և շուտով կհրապարակվի: Ըստ Մյունիր բեյի, սուլթանը մտադիր է նաև բնակչության վիճակն ուսումնասիրելու և ժանդարմերիան ղեկավարելու նպատակով Փոքր Ասիա գործուղել Բեքիրին:98

96 FO 424 / 89, No 133, p. 133.
97 FO 424 / 89, No 310, pp. 253-254.
98 FO 424 / 89, No 188, pp. 139-140.

Նոյեմբերի 21-ին Աբդուլ Համիդը ճաշի է հրավիրում Լեյարդին և երկարատև զրույց ունենում նրա հետ: Սուլթանը հավաստիացնում է դեսպանին, որ չի պատրաստվում որևէ հարաբերությունների մեջ մտնել Ռուսաստանի հետ, խոստանում է մի քանի օրից Բեքիրին ուղարկել Դիարբեքիր, օժտելով նրան լիարժեք լիազորություններով, ինչպես նաև որոշել է Էրզրումի վալի նշանակել Ռուստեմ փաշային: Լեյարդը հայտնում էր Սոլսբերիին, որ բավարարված է զրույցի արդյունքներով և Բարձր Դռան հետ հարաբերությունների նկատվող առաջընթացով:99

Այդ ընթացքում բրիտանական դեսպանությունը նոր վկայություններ է ստանում հայ բնակչության գնալով ավելի վատթարացող վիճակի մասին: Այսպես, նոյեմբերի 17-ին Հալեպում բրիտանական հյուպատոս Հենդերսոնը ուղարկում է Մուշի, Վանի ու այլ շրջաններից գաղթած 1520 հայ լուսավորչականների կողմից ստորագրված և Լեյարդին հասցեագրված խնդրագիրը, ուր նկարագրվում էր տեղական իշխանությունների ճնշումից և քուրդ հրոսակախմբերի հարձակումներից տառապող հայ բնակչության վիճակը:100

Նոյեմբերի 22-ին Քլեյթոնը հաղորդում էր Վանից հայ բնակչության անհանգիստ վիճակի մասին, ինչը սովի, մշտական թալանի և տեղական իշխանությունների վերաբերմունքի հետևանքն է, այլ ոչ թե ռուսական գործակալների գործունեության արդյունքը: Նրա կարծիքով, հայերը հավատը կորցրել են բարենորոգումների իրականացման գործում բրիտանական կառավարության կարողությունների նկատմամբ և մինչև մյուս տարվա գարուն հնարավոր է դիմեն Ռուսաստանի օգնությանը: Քլեյթոնի համոզմամբ, այդ հանգամանքն ամենևին չի բացատրվում Ռուսաստանի հանդեպ տածած հատուկ սիրով, այլ՝ նրանց անելանելի դրությամբ: Եթե հանձնաժողովների գործունեությունն անարդյունք ավարտ ունենա, իսկ բրիտանական ազդեցությունը չփոխի իրադրությունը, շարունակում էր փոխհյուպատոսը, ապա հայերը համոզվելու են, որ Բրիտանիայի փորձերը տապալվեցին, իսկ թուրքերն ու քրդերը կմտածեն, թե իրենց կարելի է ամեն ինչ անել: Քլեյթոնը վստահ էր, որ եթե ներկայումս Բրիտանիան չմիջամտի, ապա քրիստոնյաների վիճակն ավելի կվատանա և

---

99 FO 424 / 89, No 268, p. 224.
100 Turkey, No 4 (1880) ..., pp. 150-151.

Ռուսաստանը, համընդհանուր հավանության պայմաններում, իր ձեռքը կվերցնի նրանց պաշտպանության գործը:101

Վասպուրականի հայերի պատվիրակությունը խնդրագիր է ներկայացնում Քլեյթոնին, ուր նշվում էր, որ հայերի ներկա ծանր կացությունն ամբողջովին համապատասխանում է սուլթանական կառավարության շահերին, իսկ քրդերը՝ «լոկ հաջող գործիք են նրա ձեռքում», խոչընդոտ բարենորոգումների իրականացման ճանապարհին: Փաստաթղթում ասվում էր, որ հայերին ճնշում են կենտրոնական կառավարությունը, տեղական թուրքական իշխանություններն ու քրդերը: Կառավարությունը հրահրում է վերջիններին հայ բնակչության դեմ և երբ Եվրոպան պահանջում է կարգ ու կանոն հաստատել և բարենորոգումներ իրագործել, պատասխանում է, թե դրա համար անհրաժեշտ է փող և ժամանակ: Հայերը զենքի չեն դիմում միայն այն պատճառով, որ «Մեծ Բրիտանիան որոշել էր լուծել Հայկական հարցն առանց մարդկային զոհերի»: Սակայն վիճակն ավելի է

ծանրացել, հայերի համբերությունը սպառվել է, որի արդյունքում «ռուսական հավատն ընդունելու շատ վտանգավոր շարժում է ստեղծվել Վասպուրականի հայության շրջանում»: Խնդրագրի վերջում նշվում էր, որ հայերը կրկին անգամ դիմում են բրիտանական կառավարությանը աջակցության և օգնության համար:102

Ամփոփելով հյուպատոսություններից ստացված տվյալները, նոյեմբերի 23-ին Լեյարդը երկարաշունչ նոր հայտագիր է ներկայացնում Բարձր Դռանը, ուր նկարագրում է «Հայաստանի քրիստոնյա բնակչության վիճակը, քրդերի և, որքան էլ ցավալի է դա հաստատել, շատ պարագաներում նաև թուրքական իշխանությունների կեղեքումները», հանձնաժողովների անարդյունք գործունեությունը, բրիտանական հյուպատոսների օգուտ չտվող ջանքերը: Դեսպանը Բարձր Դռան «լուրջ ուշադրությունն է հրավիրում» ներկայացված փաստերի վրա և հույս հայտնում, որ այն, առանց ժամանակ կորցնելու, «արդարության և փոխհատուցման միակ հույս հանդիսացող» բարենորոգումներ կիրագործի կայսրության քրիստոնյա հպատակների վիճակը բարելավելու և նրանց տառապանքներին վերջ դնելու համար:103

_____
101 FO 424 / 106, No 13 / 2, pp. 28-29.
102 FO 424 / 106, No 13 / 4, pp. 29-31.
103 Turkey, No 4 (1880) ..., pp. 158-160.

1879-1880 թթ. ձմռան ամիսներին հայ բնակչության վիճակն ավելի վատթարացավ, Վանում փոխհյուպատոս Քլեյթոնի վկայությամբ (17 դեկտեմբերի), սովամահության դեպքերը հայերի շրջանում դարձել են սովորական երևույթ: Քլեյթոնը Տրոտտերին տեղեկացնում էր նախկին հայ պատրիարք, Վանի հոգևոր առաջնորդ Խրիմյանի շրջանները կատարած իր այցելության մասին, որի ընթացքում նա քարոզում էր համբերություն ու չափավորություն, նշում, որ հայերը պետք է խաղաղության և բարեկամության մեջ ապրեն հարևան ժողովուրդների հետ և չապավինեն Ռուսաստանի կամ Մեծ Բրիտանիայի օգնությանը: Ըստ փոխհյուպատոսի, նրա քարոզները մեծ ազդեցություն ունեցան քաղաքի հայ բնակչության վրա, սակայն դժվարությամբ կընկալվեն գյուղացիության կողմից, որն անհամբեր սպասում է ռուսների ժամանմանը:104 1880 թ. փետրվարի 2-ին Լեյարդին ներկայացված գաղտնի զեկուցագրում Քլեյթոնը գրում էր, որ հայ բնակչությունն ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի Ռուսաստան: Փոխհյուպատոսի բազմաթիվ զրույցների ժամանակ հայերը պնդում էին, որ թեև կնախընտրեին Մեծ Բրիտանիայի օգնությունն ու հովանավորությունը, սակայն ռուսներն ավելի մեծ հետաքրքրություն են հանդես բերում Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության հանդեպ, քան անգլիացիները: Ըստ Քլեյթոնի, հայերը չեն կարող աչք փակել այն իրողության վրա, որ Ռուսաստանն ազատություն է տվել բուլղարներին, իսկ Մեծ Բրիտանիան դեռևս ոչինչ չի արել քրիստոնյաների վիճակը բարելավելու ուղղությամբ:105

Սոլսբերիին ուղղված իր հերթական գաղտնի զեկուցագրում (31 հունվարի) Լեյարդը տեղեկացնում էր, որ ռուս-թուրքական սահմանի ճշտման թուրքական հանձնաժողովի անդամ Ցայա փաշան, մայրաքաղաք վերադառնալուն պես բրիտանական հյուպատոսական աշխատողների գործունեության վերաբերյալ Մեծ Բրիտանիայի համար ոչ բարենպաստ զեկույց է ներկայացրել Բարձր Դռանը: Այնտեղ նշվում էր, որ ամեն առիթով իրենց միջամտությամբ նրանք փաստորեն դուրս են բերում երկիրը թուրքական

իշխանությունների հսկողությունից, հրահրում քրիստոնյա բնակչությանը սուլթանական կառավարության դեմ: Նա զգուշացնում էր Դռանը, որ գործերի նման ընթացքը կարող է հանգեցնել շատ լուրջ հետևանքների: Թուրք պաշտոնյան համոզված էր, որ Ռուսաստանի ներկայիս կեցվածքն

104 FO 424 / 106, No 47 / 6, p. 90.
105 FO 424 / 106, No 123 / 1, p. 247-248.

ավելի է համապատասխանում Թուրքիայի շահերին, քան Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը:106

Կայսրության արևելյան վիլայեթների ընդհանուր վիճակի հետ ծանոթանալու, տեղական իշխանությունների, ժանդարմերիայի և ոստիկանության հետ առնչվող խնդիրներն ուսումնասիրելու նպատակով հունվարի 19-ին Էրզրում ժամանեց սուլթանի կողմից նշանակված հատուկ հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված էին Բեքիրը և Սաիդ փաշան:107 Փետրվարի 1-ին Լեյարդին ուղղված գաղտնի նամակում Բեքիրը նշում էր, որ տեղի հայ ղեկավարների շրջանում գերակշռող են «ամբիցիոզ գաղափարներն ապագայի մասին, որոնք գործնականում ոչ միայն անիրականանալի են, այլև վտանգավոր հենց իրենց շահերի համար»: Նա անհեթեթ էր համարում հայկական ինքնավարության գաղափարը, քանի որ հայերն ամենուրեք կազմում էին բնակչության փոքրամասնությունը: Ըստ Բեքիրի, հայերի շրջանում գոյություն ունեցող քարոզչությունը միմիայն տրամադրում է իշխանություններին իրենց դեմ, իսկ ինքնավարություն ստանալու դեպքում նրանք կհայտվեն շատ ավելի վատ վիճակում, քան ներկայումս, քանի որ ամբողջապես կընկնեն քրդերի տիրապետության ներքո:108

Ամերիկյան միսիոներ Ռոբերտ Չամբերսը տեղեկացնում էր Էրզրումում բրիտանական փոխհյուպատոս Էվերետին, որ հայ գյուղացիության շրջանում բավականին բարյացակամ տրամադրություններ են տիրում Ռուսաստանի հանդեպ, որոնք շատ ավելի ուժեղացան վերջին երկու-երեք ամիսների ընթացքում, երբ ի հայտ եկավ Անգլիայի անկարողությունը՝ լուծելու բարենորոգումների իրագործման և իրենց կյանքի պայմանների բարելավման խնդիրը: Ըստ միսիոների, թեև հայերը կնախընտրեն, որ իրենց վիճակը վերահսկվի Անգլիայի կողմից, սակայն ներկա իրավիճակում, երբ այն ոչինչ չկարողացավ անել այդ ուղղությամբ, նրանք պատրաստ են դիմելու Ռուսաստանի կամ այլ տերության օգնությանը:109

Փետրվարի 17-ին Լեյարդը գրում էր Սոլսբերիին, որ Բարձր Դուռը երբևիցե չի համաձայնելու հայազգի վալի նշանակել Էրզրումում, քանզի դա դիտվում է որպես առաջին

106 FO 424 / 106, No 58, p. 112.
107 FO 424 / 106, No 87, p. 203.
108 FO 424 / 106, No 94 / 1, pp. 201-202.
109 FO 424 / 106, No 91 / 1, p. 195.

քայլ հայկական ինքնավարության ուղղությամբ: Դեսպանի կարծիքով, հայերի իրական շահերը պահանջում են, որ նրանք չբարձրացնեն ինքնավարության հարցն Արևելյան

Ռումելիայի օրինակով, քանի որ այն կառաջացնի մահմեդական բնակչության զայրույթը: «Շատ հավանական է, - նշում էր Լեյարդը, - որ այդ ամենի հետևանքով սկսվի արյունալի պայքար, եթե ոչ հայերի համատարած կոտորած, ինչը կարելի կլինի դադարեցնել միմիայն Ռուսաստանի կողմից ռազմական միջամտության դեպքում, իսկ դա կավարտվի, ամենայն հավանականությամբ, հայերի կլանումով նրա տիրապետության ներքո և նրանց ազգության կորըստով...»: «Բարձրացնել ներկայումս հայկական ինքնավարության հարցը, - շարունակում էր Լեյարդը, - նշանակում է միայն սրել Դռան կասկածները, ինչն, իմ անձնական կարծիքով, կբերի հետագա բարդությունների և չի նպաստի Անգլիայի և Գերմանիայի կողմից ձեռնարկված փորձերին՝ հայերի պաշտպանության իրական և արդյունավետ միջոցների իրագործման, ինչպես նաև՝ նրանց կողմից բնակեցված շրջանների վարչական մարմիններում նրանց արդարացի մասնակցության ապահովման խնդրում»:110

Փետրվարի կեսերին Ներսես Վարժապետյանը հանդիպում է ունենում Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի դեսպանությունների ներկայացուցիչներ Սենդիսոնի և Տեստայի հետ: Ըստ Սենդիսոնի, պատրիարքը ներկայացրել է տարբեր անընդունելի առաջարկներ, ինչպիսիք են՝ անգլիացի, գերմանացի կամ հայազգի նահանգապետի նշանակումը, միջազգային եվրոպական հանձնաժողովի ստեղծումը, Արևելյամ Ռումելիայի օրինակով Հայաստանին ինքնավար կարգավիճակի շնորհումը: Հայազգի նահանգապետի պաշտոնի համար պատրիարքն առաջարկում էր Նուբար փաշայի, Գրիգոր Օտյանի, Ստեփան փաշայի և Կոստանդ փաշայի թեկնածությունները: Արտահայտելով իրենց կառավարությունների դիրքորոշումը, Սենդիսոնն ու Տեստան անընդունելի են համարում պատրիարքի բոլոր առաջարկները: Նշելով, որ հայկական ինքնավարության հարցը չի ընդունվելու ոչ Բարձր Դռան, ոչ էլ եվրոպական տերությունների կողմից, Տեստան ասում էր, որ Գերմանիան ոչ մի ուղիղ շահ չունի Թուրքիայում և գործելու է միմիայն սուլթանի քրիստոնյա հպատակների արդար իրավունքները պաշտպանելու ողղությամբ:111

110 FO 424 / 106, No 81, pp. 174-175.
111 FO 424 / 106, No 81 / 1, pp. 175-177.

Մարտ և ապրիլ ամիսների ընթացքում բրիտանական հյուպատոսություններն Օսմանյան կայսրությունում շարունակում էին դեսպանությանն ու արտգործնախարարությանը հաղորդել արևմտահայության ծանր վիճակի մասին: Այսպես, ապրիլի 3-ին Էվերետը գրում էր Լեյարդին Էրզրումից, որ Ալաշկերտի շրջանի գյուղերում սովից մահացել է 100-ից ավելի հայ:112 Նկարագրելով Սեբաստիայի հայ գյուղացիության ծանր վիճակը, հյուպատոս Վիլսոնը համոզված էր, որ շուտով կայսրությունում տեղի կունենան լուրջ անկարգություններ, քանի որ տեղական թուրք իշխանությունները դեռևս ոչինչ չեն ձեռնարկել Բուլղարիայից և Արևելյան Ռումելիայից այստեղ գաղթած մահմեդական փախստականների վերաբնակեցման ուղղությամբ: Շատ տեղերում չերքեզ փախստականները գրավել և մշակում են տեղի գյուղացիների հողատարածքները: Ըստ Վիլսոնի, միայն Ադաբազարում կուտակվել էր 15-20 հազ. չերքեզ փախստական:113

1880 թ. գարնանը ակնհայտ դարձավ, որ Դիզրայելիի և Սոլսբերիի կողմից մշակված Էգեյան ծովից մինչև Հնդկաստան ընկած երկրները «խաղաղ ներթափանցման» ճանապարհով Մեծ Բրիտանիային հպատակեցնելու քաղաքականությունն իրեն չարդարացրեց: Ռուսական դիվանագիտությունը կարողացավ խափանել

պահպանողական կառավարության ծրագրերն Աֆղանստանում և, մասնավորապես, Օսմանյան կայսրությունում, որտեղ բրիտանական դիվանագետները չկարողացան համոզել սուլթանին բանակ մտցնել Արևելյան Ռումելիա և գաղտնի պայմանագիր ստորագրել սլավոնական պետությունների դեմ, ինչպես նաև ճնշում գործադրելու և նավատորմի գործոնն օգտագործելու միջոցով ապահովել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պայմանների իրագործումը: Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ դաշինքի վերաստեղծմանն ուղղված բանակցությունների միջոցով Ռուսաստանը կարողացավ չեզոքացնել Մեծ Բրիտանիայի շեշտված հակառուսական քաղաքականությունը: Դրան ավելացած անհաջող ներքին քաղաքականությունը, չարդարացված եկամտահարկերի բարձրացումն ու 1879 թ.

112 Turkey, No 23 (1880). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1880, pp, 145-146.
113 Նույն տեղում, էջ 146-148:

անբերրիությունն էլ ավելի խորացրին պահպանողական կառավարության ճգնաժամը:114 Մարտի 6-ին Դիզրայելին ստիպված էր արձակել խորհրդարանը:
2. ԳԼԱԴՍՏՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ 1880-1885 ԹԹ.

1880 թ. ապրիլին կայացած խորհրդարանական ընտրությունները շահեց լիբերալ կուսակցությունը: Նրա ղեկավար Գլադստոնը գլխավորեց կառավարությունը, իսկ Գրենվիլը՝ Ֆորին Օֆիսը: Նույն ամսին մահացավ Դիզրայելին, պահպանողական կուսակցության ղեկն անցավ Սոլսբերիին:Նախընտրական պայքարի ընթացքում Գլադստոնը քննադատում էր պահպանողական կառավարության գաղութատիրական արտաքին քաղաքականությունը, խոստանալով ժողովրդին սկզբունքորեն նոր խաղաղասեր ուղղություն, որի հիմքում ընկած պետք է լինի «եվրոպական համերգի» գաղափարը՝ խաղաղության ապահովման նպատակով եվրոպական վեց տերությունների համատեղ և համաձայնեցված գործողությունները: Այդ ենթատեքստում քննադատվում էր նաև Դիզրայելիի քաղաքականությունը Հայկական հարցում: 1879 թ. նոյեմբերի 25-ին Էդինբուրգում արտասանած իր ծրագրային ելույթում Գլադստոնը նշում էր. ՝Եվրոպայում մենք գրավեցինք Կիպրոս կղզին...: Ֆրանսիայի հետ համատեղ ստանձնեցինք Եգիպտոսի իրական կառավարումը և, հնարավոր է, ընդլայնելով մեր հարավային տիրույթներն Աֆրիկայում, մենք կհասնենք պորտուգալացիների հարավային սահմանին: Մենք պարտավորվեցինք մեզ վրա վերցնել Թուրքիայի կառավարման բարելավման պատասխանատվությունը ոչ միայն Փոքր Ասիայում, այլ ողջ Ասիայում, քարտեզի այդ հսկայական տարածքի վրա, որն ընդգրկում է նաև Արաբիայի հիմնական մասը...: Կառավարման բարելավումն ապահովելուց բացի մենք պարտավորվեցինք պաշտպանել Թուրքիայի հայկական սահմանը Ռուսաստանից, ուր հասնելու համար հարկավոր է անցնել մի քանի հարյուր մղոն բանակի համար անհասանելի լեռնաշղթաներ ցամաքով կամ հակառակ պարագայում մի քանի հազար մղոն ծովով...՝: Նա

114 Виноградов К.Б. Науменков О.А. На службе британского колониализма (Страницы политической биографии лорда Солсбери). - Новая и новейшая история, 1981, No 1, с. 134.

հայտարարում էր, որ իշխանության գալու դեպքում «խուսափելու է ոչ անհրաժեշտ պարտավորություններից, որոնք կարող են խճճել» Անգլիան:115 Հայկական հարցի պարագայում դա նշանակում էր եվրոպական տերությունների համատեղ և համաձայնեցված գործողությունների միջոցով ստիպել սուլթանական կառավարությանը կատարել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պարտավորությունները:

1880 թ. ապրիլի 27-ին Լեյարդը հաշվետվություն է ներկայացնում նոր արտգործնախարարին՝ բրիտանա-թուրքական հարաբերությունների և Օսմանյան կայսրության ներկայիս վիճակի մասին: Նա նշում էր, որ վերջերս սուլթանի մոտ որոշակի դժգոհություն է նկատվում Մեծ Բրիտանիայի քաղաքականության նկատմամբ, որը սկսվեց Բեռլինի վեհաժողովի ժամանակ Ավստրիայի կողմից Բոսնիան և Հերցեգովինան գրավելու վերաբերյալ բրիտանական առաջարկից և ավելի խորացավ 1879 թ. հոկտեմբերին, երբ բրիտանական նավատորմին հրահանգ տրվեց մտնել թուրքական տարածքային ջրերը: Սակայն, չնայած այդ ամենին, գրում էր դեսպանը, սուլթանն, իր շահերից ելնելով, հակված է բարեկամական հարաբերություններ պահպանել Բրիտանիայի հետ: Ըստ Լեյարդի, մինչև վերջերս նման դիրքորոշում ունեին նաև կայսրության ասիական շրջանների քրիստոնյա հպատակները, ուր, Կիպրոսի կոնվենցիայի պայմանների համաձայն, Բրիտանիայի հսկողության ներքո պետք է իրագործվեին համապատասխան բարենորոգումներ: Էրզրումի, Վանի և Դիարբեքիրի հյուպատոսություններից ստացված տեղեկատվության համաձայն, հայերը մասնավորապես հուսահատվել են Բրիտանիայի բարենորոգումների քաղաքականությունից և այդ դժգոհությունները ներկայումս օգտագործում է Ռուսաստանը, որը ծրագրում է գրավել Ասիական Թուրքիայի տարածքները՝ հայերի միջոցով:116

Համաձայն հաշվետվության, Սոլսբերիի 1878 թ. օգոստոսի 8-ի նամակով բրիտանական կառավարությունն առաջարկել էր Բարձր Դռանը անհրաժեշտ բարենորոգումներ իրագործել հայերով բնակեցված շրջաններում, որն ընդունվել էր մեծ վեզիր Սավֆետ փաշայի նույն թվականի հոկտեմբերի 24-ի հայտագրով: Ծրագիրը նախատեսում էր եվրոպացի սպաների կողմից ղեկավարվող ժանդարմերիայի կազմավորում, շրջաններում

115 Park J. H. British Prime Ministers of the Nineteenth Century. Policies and Speeches. New York, London, 1950, p. 286.
116 Turkey, No 7 (1880). Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1880, pp. 2-3.

ֆինանսական և իրավական եվրոպացի տեսուչների նշանակում, վալիների կամ նահանգապետերի պաշտոնի ժամկետի սահմանափակում հինգ տարով և այլն: Սակայն այս ընթացքում նշված կետերից ոչ մեկը չկատարվեց: Տեղերում իրավիճակն ուսումնասիրելու և բարենորոգումները նախապատրաստելու նպատակով Բարձր Դուռը մահմեդական և քրիստոնյա պաշտոնյաներից բաղկացած հանձնաժողովներ ուղարկեց շրջաններ, բայց նրանց գործունեությունը ոչ միայն ցանկալի արդյունք չունեցավ, այլև շատ դեպքերում վատթարացրեց դրությունը, մահմեդական բնակչությանը տրամադրեց քրիստոնյաների դեմ: Սուլթանը խոստացել էր նաև նշանակել Բեքիր փաշային Քրդստանի և Էրզրումի ու Վանի նահանգների ժանդարմերիայի գերագույն հրամանատար: Սակայն, ըստ Լեյարդի, նա իր խոսքը չկատարեց, նշանակեց նրան հանձնաժողովի ղեկավար, որն այցելեց Փոքր Ասիա, Միջագետք ու Սիրիա և զեկուցագիր ներկայացրեց շրջանների իրավիճակի և ժանդարմերիայի կազմակերպման անհրաժեշտության մասին:117

Դեսպանը գրում էր, որ այս ընթացքում օգտագործել էր բոլոր հնարավորությունները, ընդհուպ մինչև սպառնալիքներ, որպեսզի Բարձր Դուռը կատարի իր պարտավորությունները: Նա մշտապես նախազգուշացրել է նախարարների և այլ պաշտոնյաների կաշառակերության, քրիստոնյա բնակչության ծանր վիճակի մասին, ինչը կարող է բերել երկրի մասնատմանը, սակայն բոլոր իր առաջարկները փաստորեն չեն ընդունվել: Սուլթանը մշտապես խոստումներ է տվել, մինչդեռ գործն այդպես էլ տեղից չի շարժվել: Լեյարդի կարծիքով, եթե Մեծ Բրիտանիան իրապես ցանկանում է փրկել այս երկիրը կործանումից, նա պատրաստ պետք է լինի նույնիսկ սպառնալիքներից շատ ավելի հեռու գնալ: Նա համոզված էր, որ Դռան ներկայիս վարքագծի իրական պատճառն այն է, որ սկսած ռուս-թուրքական պատերազմի վերջից սուլթանն ընկել է «մոլեռանդ և հակաեվրոպական շրջանակի» ազդեցության տակ, որի կարծիքով, բարենորոգումների իրականացումն ու կայսրության եվրոպականացումը կբերեն երկրի վերջնական կործանմանը:118

Ըստ Լեյարդի, վերջին երկու տարիների ընթացքում հայերի վիճակը ոչ միայն չի բարելավվել, այլ ավելի է վատթարացել: Հայերն իրենց բոլոր հույսերը կապում էին բրիտանական քաղաքականության հետ, սակայն ներկայումս հուսահատվել են և մտածում

117 Նույն տեղում, էջ 4-5:
118 Նույն տեղում, էջ 5-6:

են ինքնավար, եթե ոչ կիսաանկախ Հայաստան ստեղծելու մասին: Այդ ուղղությամբ աշխատում են Կոստանդնուպոլսում և Եվրոպայում գործող կոմիտեները և հայկական մամուլը: Դեսպանի համոզմամբ, նկատի առնելով այն հանգամանքը, որ շրջանների մեծամասնությունում հայերը կազմում են բնակչության փոքրամասնությունը, նման ծրագրերի իրագործման յուրաքանչյուր փորձ կարող է ունենալ բավականին ծանր հետևանքներ: «Քրդերի գործոնի անտեսումը, - նշում էր Լեյարդը, - վտանգավոր հիմարություն է: Փոքր Ասիայի մահմեդականներն ակնառու կերպով համոզվեցին, թե ինչ բախտի արժանացան իրենց եղբայրները Եվրոպական Թուրքիայի ինքնավար քրիստոնյա շրջաններում: Ինքնավարության վերաբերյալ հայերի պահանջը կբերի կոտորածի, որին անմիջապես կհետևի Ռուսաստանի միջամտությունը»:119

Արդեն իսկ ծանոթանալով և անմիջապես համակերպվելով նոր կառավարության արտաքին քաղաքական գծին, Լեյարդը նշում էր, որ Օսմանյան կայսրության խնդրում Բրիտանիան պետք է համագործակցի կամ համաձայնեցնի իր գործողությունները մյուս եվրոպական տերությունների հետ: Իր կարծիքով, «... երկիրը կտրուկ և արագ անկումից...կարող են փրկել միայն բարենորոգումները, որոնք պետք է իրագործվեն եվրոպական հսկողության ներքո»:120

Գլադստոնի կառավարության նոր արտաքին քաղաքական գիծն անմիջապես իր արտահայտությունը գտավ մայիսի 4-ին եվրոպական հինգ տերություններում բրիտանական դեսպաններին ուղղված Գրենվիլի շրջաբերական նամակում: Ֆորին Օֆիսի նոր ղեկավարը նշում էր, որ «եվրոպական շահերից ելնելով հարկավոր է վերացնել Բեռլինի պայմանագրի որոշ պայմանների կատարման հետ կապված հապաղումը և այդ

առնչությամբ ամենից լավ ազդեցությունը կարող են ունենալ տերությունների համատեղ ջանքերը»: Բրիտանական կառավարությունն առաջարկում էր տերություններին հանձնարարել իրենց ներկայացուցիչներին Կոստանդնուպոլսում նույնական հայտագրեր ներկայացնել թուրքական կառավարությանը՝ Հունաստանի, Մոնտենեգրոյի (Չեռնոգորիայի) և Հայաստանի հետ առնչվող պարտավորությունների ամբողջական կատարման խնդրով: Հայկական հարցի առնչությամբ նամակում նշվում էր. որ բրիտանական կառավարությունը

119 Նույն տեղում, էջ 7:
120 Նույն տեղում, էջ 8:

համոզվել է, որ Բարձր Դուռը ոչինչ չի արել 61-րդ հոդվածի կատարման ուղղությամբ, միջոցներ չեն ձեռնարկվել տերությունների հսկողությունն ապահովելու խնդրում: Ըստ Գրենվիլի, քանի որ Հայաստանի վիճակը շարունակում է մնալ անտանելի, բրիտանական կառավարությունը համարում է, որ հոդվածը «մեռած տառ» մնալ չի կարող և միմիայն տերությունների «համատեղ ճնշումը» կարող է ստիպել Դռանը կատարել պայմանագրի իր պարտավորությունները:121

Այսպիսով, ակնհայտ դարձավ, որ բրիտանական կառավարությունը հեռանում է Դիզրայելիի և Սոլսբերիի կողմից վարած Օսմանյան կայսրության միանձնյա պաշտպանության քաղաքականությունից, մոտենում Ռուսաստանի և մյուս տերությունների դիրքորոշմանը:

Մայիսի 6-ին Գրենվիլը տեղեկացնում էր Լեյարդին բրիտանական կառավարության որոշման մասին՝ վերջինիս դեսպանի պաշտոնից ազատելու և նրա փոխարեն խորհրդարանի անդամ Ջորջ Գոշենին122 նշանակելու մասին: Հանձնարարելով դեսպանին հաղորդել այդ մասին սուլթանին, նախարարը գրում էր. «Բարձր գնահատելով Ձեր մեծ կարողություններն ու անխոնջ գործունեությունը, ...Նորին Մեծության կառավարությունը համարում է, որ անհրաժեշտ է օգտվել առիթից և հասկացնել տալ սուլթանին և Դռանը..., թե ինչ մռայլ է պատկերացնում Նորին Մեծության կառավարությունը Օսմանյան կայսրության ներկայիս իրավիճակը, ինչպես նաև ծանոթացնել նրա որոշման հետ՝ մյուս տերությունների հետ համատեղ համառորեն պահանջել Դռնից կատարելու Բեռլինի պայմանագրով նախատեսված իր պարտականությունները Հունաստանի, Մոնտենեգրոյի և Հայաստանի հանդեպ»:123

Մայիսի 18-ի իր նամակում Գրենվիլը Գոշենին ծանոթացնում էր կառավարության որոշման հետ՝ Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների, Թուրքիայում ստեղծված լուրջ կացության պատճառով նրան հատուկ դեսպան նշանակելու մասին, հանձնարարում

121 Նույն տեղում, էջ 1-2:
122 Գոշեն (Goscen) Ջորջ - բրիտանացի ֆինանսիստ, քաղաքական գործիչ և դիվանագետ: 1880-1881 թթ.՝ դեսպան Թուրքիայում, 1886-1892 թթ.՝ գանձատան կանցլեր, 1895-1900 թթ.՝ ծովակալության առաջին լորդ:
123 Նույն տեղում, էջ 8:

տերությունների ներկայացուցիչների հետ համատեղ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Հունաստանի, Մոնտենեգրոյի և Հայաստանի հարցերում, մանրամասնորեն ներկայացնում Հայկական հարցի նախապատմությունը, 61-րդ հոդվածի բովանդակությունը, Դիզրայելիի կառավարության փորձերն այն իրագործելու ուղղությամբ, Բարձր Դռան կողմից ընդունված անօգուտ և վնասաբեր միջոցառումները, հայ բնակչության ծանր վիճակը: Ըստ նախարարի, բրիտանական կառավարությունը պատկերացնում է բոլոր այն դժվարությունները, որոնք կապված են կայսրության տարբեր շրջաններում բարենորոգումների իրագործման հետ: Իր կարծիքով, բարենորոգումներն ավելի դյուրին է իրագործել քրիստոնյաների կողմից բնակեցված և եվրոպական քաղաքակրթության ազդեցության տակ գտնվող շրջաններում, «սակայն գործնականում անիրականանալի են վայրի մահմեդական ցեղերով բնակեցված լեռնային շրջաններում»: Գրենվիլն արտահայտում էր կառավարության համոզվածությունը, որ տերությունների համատեղ գործողությունների միջոցով հնարավոր կլինի իրագործել բարենորոգումների ծրագիրը, մասնավորապես, վերականգնել կարգ ու կանոնը, ապահովել ինչպես մահմեդականների, այնպես էլ քրիստոնյաների կյանքի և ունեցվածքի անվտանգությունը: Այդ ամենն, ըստ նախարարի, հնարավոր կլինի իրականացնել ժանդարմերիայի կազմակերպման, բնակչությանն անկանոն հարկերից ազատելու, պաշտոնյաների նշանակման համակարգի արդիականացման միջոցով: Թեև բրիտանական կառավարությունը որոշել էր Հայկական հարցում գործել համատեղ մյուս տերությունների հետ, այնուամենայնիվ Գրենվիլը Գոշենին հանձնարարում էր տեղյակ պահել սուլթանին և Բարձր Դռանը կառավարության դիրքորոշման մասին, նշելով, որ այդ խորհուրդները կրում են «բարեկամական բնույթ» և բխում Թուրքիայի շահերից:124

Հունիսի 1-ին Գրենվիլը հաղորդում էր Գոշենին, որ Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունները համաձայնել են Բարձր Դռանը միաժամանակ նույնական հայտագրեր ներկայացնելու բրիտանական կառավարության առաջարկին, ուր պետք է պահանջ ներկայացվի Հունաստանի, Մոնտենեգրոյի և հայերով բնակեցված շրջաններին առնչվող պայմանագրային պարտավորությունները կատարելու վերաբերյալ: Նախարարը դեսպանին հանձնարարում էր տերությունների ներկայացուցիչների հետ համատեղ

124 Նույն տեղում, էջ 8-12:

նախապատրաստել և համապատասխան հայտագիր ներկայացնել սուլթանական կառավարությանը:125

Տերությունների համաձայնության արդյունքում հունիսի 18-ին Բարձր Դռանը նույնական հայտագրեր ներկայացվեցին դեսպանների կողմից: Մասնավորապես արտաքին գործերի նախարար Աբեդին փաշային ուղղված Գոշենի հայտագրում նշվում էր, որ «Բեռլինի պայմանագրի որոշ պայմանների կատարման առնչությամբ տեղի ունեցած հապաղումը պատճառ հանդիսացավ, որ այն ստորագրած տերությունների միջև կայանա մտքերի փոխանակություն: Այդ քայլի արդյունքում նրանք հաստատեցին այն հանգամանքը, որ Եվրոպայի շահերից ելնելով, պետք է վերջ դնել հապաղմանը, ինչպես նաև եզրակացրին, որ նրանց ջանքերի միավորումը կապահովի 1878 թ. հուլիսի 13-ի պայմանագրի պայմանների կատարումը»:

Թուրք-հունական և թուրք-մոնտենեգրական սահմանների ճշտման հարցերի հետ համատեղ հայտագրերում բարձրացվեց նաև 61-րդ հոդվածով նախատեսված հայերին վերաբերող բարենորոգումների իրագործման խնդիրը: Նշվում էր, որ Բարձր Դռան կողմից ոչինչ չի արված այդ ուղղությամբ, 61-րդ հոդվածի դրույթները դարձել են «մեռած տառ», իսկ հայերով բնակեցված շրջանների վիճակը շարունակում է մնալ «անտանելի»: Տերություններն այն համոզմանն են եկել, ասվում էր բրիտանական դեսպանի հայտագրում, որ «միմիայն համատեղ և մշտական ճնշումն իրենց կողմից կարող են ստիպել Բարձր Դռանը կատարել իր պարտականություններն այդ կապակցությամբ: Այսպիսով, Նորին Մեծության կառավարությունը, որպես Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերություն, պահանջում է պայմանագրի 61-րդ հոդվածի ամբողջական և անհապաղ կատարում և կոչ է անում Նորին Կայսերական Մեծության կառավարությանը մանրամասնորեն տեղեկացնել այն միջոցների մասին, որոնք կձեռնարկվեն հոդվածի պայմանների ամբողջական կատարման ուղղությամբ»:126

Հունիսի 17-ին Գոշենը հանդիպում է Աբեդին փաշայի հետ՝ Հայկական հարցի քննարկման նպատակով: Դեսպանի կարծիքով, Սրվազի (Սեբաստիայի) վալիի պաշտոնում նա դրսևորել էր իրեն որպես կարող և գործունյա անձնավորություն: Զրույցի ժամանակ

---

125 Նույն տեղում, էջ 12:
126 FO 424 / 99, No 449 / 2, pp. 231-232.

Աբեդին փաշան նշում է բարենորոգումների իրագործման անհրաժեշտության, ոստիկանության անկատարության, վարչական չարաշահումների գոյության մասին: Նա Գոշենին ծանոթացնում է իր ծրագրին, որը ներկայացրել էր նախարարների խորհրդի քննարկմանը: Նա առաջարկում էր վիլայեթների կազաները բաժանել միատարր բնակչություն ունեցող 7-8 գյուղերից բաղկացած համայնքների, որոնց կվերապահվի մյուդիր (համայնքապետ) ընտրելու և փոքր ոստիկանական ջոկատ ունենալու իրավունք: Նախարարը ծրագրում էր նաև բոլոր վիլայեթներում ստեղծել երդվյալ ատենակալների դատարան, որը բաղկացած լիներ երկու քրիստոնյայից և երկու մահմեդականից: Ըստ Աբեդին փաշայի, բարենորոգումների իրագործման նպատակով անհրաժեշտ է ներգրավել եվրոպացի սպաների, մասնավորապես, ժանդարմերիայի կազմակերպման գործում:

Հանդիպումից անմիջապես հետո Գոշենն այցելում է հայ պատրիարքին: Վերջինիս կարծիքով, Հայկական հարցի միակ լուծումը կարող է հանդիսանալ մի մեծ շրջանի ստեղծումը՝ հինգ տարով նշանակված քրիստոնյա նահանգապետի ղեկավարությամբ: Հայկական շրջանն անպայմանորեն պետք է գտնվի Եվրոպայի կամ, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի հովանավորության ներքո: Դեսպանի հարցադրմանը, թե հայերը մեծամասնություն չեն կազմում այդ տարածքի մեծ մասի վրա, պատրիարքը պատասխանում է, որ քրդերին հարկավոր չէ հաշվի առնել, քանի որ նրանք քոչվորի կյանք են վարում և լինում են շրջանում միայն վեց ամիս:127

Այդ ընթացքում բրիտանական հյուպատոսություններն Արևմտյան Հայաստանում շարունակում էին մանրամասնորեն ուսումնասիրել երկրի վիճակը, բնակչության քաղաքական կողմնորոշումը, ազգային հատկանիշներն, ավանդույթներն ու սովորույթները: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հյուպատոսական տեղեկանքներն ու զեկուցագրերը հայերի և նրանց վիճակի մասին, որոնց

բովանդակությունն առանց փոփոխության ենթարկելու ներկայացնում ենք ընթերցողի գնահատականին: Գլխավոր հյուպատոս Վիլսոնի կազմած «Անատոլիայի և անհրաժեշտ բարենորոգումների մասին» տեղեկանքում (16 հունիսի) նշվում էր, որ Անատոլիայի հիմնական քրիստոնյա ժողովուրդներն են հայերն ու հույները, որոնք նույնքան ատում են միմիանց, որքան թուրքերին: Հայերը բաժանված են լուսավորչականների, կաթոլիկների և բողոքականների, որոնք սովորաբար

127 Turkey, No 23 (1880) ..., pp. 227-228.

գտնվում են առճակատման վիճակում միմյանց նկատմամբ: Սակայն ոչ միայն կրոնական խմբերն են բանսարկություններ նյութում միմյանց հանդեպ, այլև նույնիսկ լուսավորչականներն են հազվադեպ միախմբվում տեղական քաղաքականության յուրաքանչյուր հարցի շուրջ: Հյուպատոսը գրում էր, որ հայի բնավորությունը «չափազանց բարդ է և դժվարամատչելի», գյուղացիությունը ողջամիտ է, խելացի, տնտեսող, աշխատասեր և մշտապես ձգտում է օգուտի, սակայն բացարձակ անկիրթ է, անառակ, մոլեռանդ, անհանդուրժող և ամբողջապես գտնվում է անկիրթ, անգետ ու դյուրազգաց հոգևորականության ազդեցության ներքո, որը դեմ է ամեն տեսակի կրթությանն ու առաջադիմությանը: Քաղաքի հայերը իրատես են, խելացի և մտավորական, եսասեր և հպարտ, մակերեսորեն կրթված: Գրեթե բոլոր քաղաքներում առկա է լավ կրթված մարդկանց փոքր տոկոս, որոնք զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ:

Ըստ Վիլսոնի, «հարևանությունը, հին ավանդույթները, կրոնական հարաբերությունները կողմնորոշում են հայերին դեպի Ռուսաստան, որոնք լավ գիտեն, որ իրենց խելքն ու գործնականությունը, սերը ստի, լրտեսության և բանսարկությունների հանդեպ, անսահման ագահությունը քաղաքական նպատակներով բարձր է գնահատվում Ռուսաստանի կողմից: Հայերն այսօր երազում են Լորիս Մելիքովի, իրենց առասպելական թագավորների և մահմեդականների հանդեպ ռևանշի մասին»: «Թույլ տուր հային աշխատանքային հաջողության հասնի, կամ թույլ տուր աշխատի, առևտրով զբաղվի ու դրամ վաստակի և նա կդադարի քաղաքականապես վտանգավոր լինելուց», - համարում էր հյուպատոսը: Միաժամանակ Վիլսոնը գրում էր, որ հայերի բնավորության որոշ հատկանիշներ՝ խիզախությունը, ինքնավստահությունը, կայուն ապրելու ցանկությունը, հիմք են տալիս եզրակացնելու, որ նրանք ունեն անհրաժեշտ բոլոր հատկությունները ինքնակառավարման համար: Չնայած այն հանգամանքին, որ հայերը շուտ վիրավորվող են, սիրում են վիճել յուրաքանչյուր առիթով, նրանք ունեն մեծ առևտրական կարողություններ և ազգային ոգի, որը պահպանվել և գոյատևել է դարավոր հալածանքների ընթացքում:128

Վիլսոնի կարծիքով, հայկական շարժումը շատ վտանգավոր է և նպատակաուղղված է ներկայիս թուրքական իշխանությունների դեմ, քանի որ հայերը ցանկանում են գրավել թուրքերի տեղը: Այդ իսկ պատճառով Բարձր Դուռը պետք է հասկանա բարենորոգումների

128 FO 424 / 106, No 246 / 1, pp. 453-454.

իրագործման անհրաժեշտությունը: Հայերը հիասթափված են բրիտանական կառավարությունից, քանի որ Կիպրոսի կոնվենցիայի պարտավորությունները

կատարված չեն, սակայն այդ զգացումը խորը արմատ չունի և նրանք շնորհակալ կլինեն յուրաքանչյուրին, ով կազատի նրանց անվերջ կեղեքումներից: Ըստ հյուպատոսի, երկիրը չի կարող դուրս գալ ներկայիս ճգնաժամից, ինչպես նաև իրագործել բարենորոգումներ Անատոլիայում, առանց ուժեղ արտաքին ճնշման:129

Հունիսի 25-ին Տրոտտերին ուղղված գաղտնի զեկուցագրում Էվերետը բաժանում էր արևմտահայանը երեք հիմնական դասի: Առաջին դասին է պատկանում բնակչության մեծամասնությունը՝ ոչ կրթված գյուղացիությունը, որն արտաքնապես չի արտահայտում իր զգացմունքներն ազատության հանդեպ, քանի որ գտնվում է տերտերների ազդեցության տակ և զենք կրելու իրավունք չունի: Սակայն նրանք բոլորը համոզված են, որ ազատության ժամը շուտով գալու է և կարծես թե սպասում են ազդանշանի՝ ակտիվ գործողությունների անցնելու համար, առայժմ միայն բողոքներ ներկայացնելով իրենց քահանաներին և օտարերկրյա հյուպատոսներին: Երկրորդ դասն, ըստ Էվերետի, կաթոլիկներն են և պաշտոն ունեցող հայերը, որոնք դատապարտում են ծայրահեղ գործողությունները և խոսում միայն բարենորոգումների անհրաժեշտության մասին: Հայերի երրորդ մասին Էվերետը դասում է կրթված լուսավորչականներին, որոնք «հայրենասիրական կամ ամբիցիոզ» շարժառիթներից դրդված ձգտում են իրականացնել հայրենակիցների ազատագրման գաղափարը և պայքարի բարձրացնել առաջին դասին պատկանող գյուղացիությանը: Նրանք սերտ կապերի մեջ են գտնվում Կոստանդնուպոլսի «կոմիտեի» հետ, որի ցուցումներն ուղարկվում են բոլոր շրջանային «կոմիտեներին»:

Ինչպես նշում էր Էվերետը, ներկայումս հայերը սպասում են Մեծ Բրիտանիայի կամ մյուս տերությունների որոշմանը Հայաստանի ապագայի վերաբերյալ: Նրանք հույս ունեն, որ միմիայն ինքնավարությունը կարող է փրկել հայերին հալածանքներից, ինչպես նաև՝ ապահովել բրիտանական առևտրի անվտանգությունը: Միաժամանակ, այնքան էլ վստահություն չտածելով եվրոպական օգնության հանդեպ, հայերը շարունակում են նախապատրաստել ժողովրդին: Ժողովրդին կրթելու պատրվակով Կոստանդնուպոլսից պարբերաբար հրահանգիչներ են ուղարկվում, որոնց Էվերետը համարում է «կենտրոնական

---

129 Նույն տեղում, էջ 454-455:

կոմիտեի քաղաքական գործակալներ»: Նրանց հիմնական նպատակներն են. 1. հայրենասիրական գաղափարների տարածումը, կազմակերպվածության և միասնականության ապահովումը. 2. ժողովրդի զինումը. 3. թուրքական իշխանությունների դեմ պայքարելու նպատակով քուրդ ղեկավարների հետ համագործակցության հաստատումը:

Ըստ Էվերետի, ներկայումս հայերը սպասում են, թե ինչ քայլեր է ձեռնարկելու Եվրոպան Հայկական հարցում: Եթե տերությունները գործնական քայլեր չձեռնարկեն, հայերը կհրահրեն անկարգություններ՝ Ռուսաստանի կամ մյուս տերությունների միջամտությունն ապահովելու նպատակով: Էվերետի կարծիքով, երկու տարուց հետո հայերը պատրաստ կլինեն իրագործելու իրենց գաղափարը:130

Հունիսի 28-ին Գոշենը հանդիպում է ունենում Աբեդին փաշայի հետ և քննարկում Հայաստանին և բարենորոգումներին վերաբերող հարցեր: Նախարարը տեղեկացնում է

դեսպանին, որ ներկայումս նախարարների խորհուրդը քննարկում է տերությունների հայտագիրը և ուսումնասիրում կայսրության արևելյան շրջանների բնակչության թվակազմի վիճակագրական տվյալները: Աբեդին փաշան իր համոզվածությունն է հայտնում, որ պաշտոնական տվյալները զգալիորեն տարբերվելու են հայ պատրիարքի կողմից ներկայացված տեղեկություններից: Նա Գոշենին տեղեցացնում է նաև, որ պատրաստվում է նախարարներին առաջարկել երկու անգլիացի սպայից և թուրք պաշտոնյաներից բաղկացած հանձնաժողով կազմել՝ վիլայեթների վիճակն ուսումնասիրելու նպատակով: Դեսպանն իր հերթին առաջարկում է հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև հայերի, սակայն Աբեդին փաշան չի ընդունում գաղափարը, նախընտրելով նույնիսկ թողնել միայն անգլիացիներին: Զրույցի վերջում նախարարը հավաստիացնում է Գոշենին, որ բարենորոգումներն անպայմանորեն իրագործվելու են, սակայն ինքնավարության պահանջը կտրականապես մերժվելու է, քանի որ հայերը բնակչությամ մեծամասնություն չեն կազմում:131

Հունիսի 30-ին Գոշենին հասցեագրված գաղտնի նամակում Գրենվիլը գրում էր, որ բրիտանական կառավարությունը մտադիր չէ իրագործելու Կիպրոսի կոնվենցիայով նախատեսված Փոքր Ասիայում բրիտանական հյուպատոսներին հատուկ լիազորություններ տրամադրելու մասին կետը, քանի որ այն հակասում է Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի

130 FO 424 / 107, No 2, pp. 2-4.
131 Turkey, No 23 (1880) ..., pp. 248-249.

դրույթներին, ինչը վերաբերում է տերությունների հսկողությանը: Միաժամանակ նա չէր հրաժարվում սուլթանի ասիական տիրույթները Ռուսաստանից պաշտպանելու և բարենորոգումների հարցով սուլթանի հանդեպ համապատասխան ճնշում գործադրելու իրավունքից:132

Հուլիսի 1-ին Գրենվիլին հասցեագրված գաղտնի զեկուցագրում Դիարբեքիրում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս, հայազգի Թոմաս Բոյաջյանն իր տեսակետներն էր ներկայացնում հայկական բարենորոգումների կապակցությամբ: Դրանք են. 1/ Հայաստանի վիլայեթների ներկայիս բաժանումն այնպիսին է, որ նրանցից ոչ մեկում քրիստոնյաները բավականաչափ թիվ չեն կազմում, որպեսզի շրջանը կարողանա գլխավորել քրիստոնյա նահանգապետ: Քրդերը հիմնականում ապրում են սարերում, իսկ հայերը, գլխավորապես զբաղված լինելով գյուղատնտեսությամբ, մեծամասնություն են կազմում դաշտավայրերում: Անհրաժեշտ է միավորել Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի նման շրջանները և կազմել միասնական հայկական մարզ, որի մայրաքաղաքը կարող է լինել կամ Վանը, կամ Էրզրումը. 2/ ցանկալի է, որ մարզը սահմանված որոշակի ժամկետով գլխավորի քրիստոնյա նահանգապետ, որի տեղակալը պետք է լինի մահմեդական, իսկ շրջանների ղեկավարները նշանակվեն տեղի յուրահատկություններից ելնելով: Ցանկալի է, որ առաջին նահանգապետը լինի եվրոպացի. 3/ Թուրքիայի քաղաքացիական իրավունքը բավանին հաջող է, միայն անհրաժեշտ է որոշակի փոփոխություններ կատարել հարկահավաքի համակարգում. 4/ անհրաժեշտ է կազմակերպել ժանդարմերիայի ուժեղ համակարգ՝ եվրոպացի սպայի գլխավորությամբ. միջոցներ ձեռնարկել բնակչությանը քրդերի և չերքեզների հարձակումներից պաշտպանելու ուղղությամբ. 5/ դատավորները պետք է

հավասարապես նշանակվեն ինչպես մահմեդականներից, այնպես էլ քրիստոնյաներից. 6/ տարեկան եկամուտի 15-20 %-ը պետք է տրամադրել պետությանը, իսկ մնացած մասն օգտագործել տեղական տարբեր կարիքների համար. 7/ քրդերի մոտ գտնվող շուրջ 50 հազ. հրացանները պետք է հնարավորության սահմաններում բռնագրավվեն կառավարության կողմից. 8/ բարենորոգումները հարկավոր է իրագործել եվրոպական տերությունների խիստ հսկողության ներքո:133

_____
132 FO 424 / 106, No 248, p. 512.
133 FO 424 / 106, No 254, pp. 514-515.

Հուլիսի 6-ի առավոտյան Գոշենը Աբեդին փաշայից ստանում է տերությունների դեսպանների հայտագրի պատասխանը: Համոզված լինելով, որ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունների հետևանքով կայսրությանը լուրջ վտանգ սպառնալ չի կարող, Բարձր Դուռը սահմանափակվում էր պատասխան հայտագրում իրեն հատուկ դատարկ խոստումներով: Դեսպանը Գրենվիլին գրում էր, որ Աբեդին փաշայի առաջարկները չեն կարող բավարարել բրիտանական կառավարությանը, քանի որ արտահայտում են սուլթանական կառավարության հետադիմական մասի տեսակետը և կոնկրետ ոչ մի միջոցառում չեն պարունակում: Նշվում էր, որ Բարձր Դուռը ստեղծել է հանձնաժողով, որը մշակում է բարենորոգումներն իրագործելու և հայերի անվտանգությունն ապահովելու ծրագիր: Համաձայն հատուկ խեղաթյուրված պաշտոնական տվյալների, Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի, Էրզրումի և Սեբաստիայի հայերի թիվն իբր կազմում է բնակչության ընդամենը 17%-ը, մահմեդականներինը՝ 79%, այլ ազգություններինը՝ 4 %: Իսկ պատրիարքարանի տվյալներով, հայերի թիվը վեց վիլայեթներում կազմում էր 42.5 %, թուրքերինը՝ 17.4 %, քրդերինը՝ 20.7 %, այլ ազգություններինը՝ 19.4 %: Ըստ Գոշենի, ինչպես պաշտոնական, այնպես էլ պատրիարքարանի տվյալները չափազանցված են:134

Չբավարարվելով պատասխանով և համոզվելով, որ Բարձր Դուռը մտադիր չէ բարենորոգումների իրագործման միջոցներ ձեռնարկել, բրիտանական դիվանագիտությունը որոշում է կայացնում շարունակել տերությունների կողմից սուլթանի նկատմամբ ճնշում գործադրելու աշխատանքը: Հուլիսի 15-ին Գոշենը Գրենվիլի քննարկմանն է ներկայացնում տերությունների նոր հայտագրի առաջին տարբերակը, որին արդեն իր հավանությունն էր տվել Ֆրանսիայի դեսպանը: Միաժամանակ դեսպանն իր մտավախությունն էր հայտնում, որ առանց բնակչության ճիշտ թվական տվյալների իմացության, տերությունների ներկայացուցիչները չեն համաձայնելու ստորագրել որևէ փաստաթուղթ: Իր կարծիքով, «եթե հայերը հայտնվեն փոքրամասնության մեջ, ապա չափազանց վտանգավոր կլինի շնորհել նրանց իրավունքներ և սահմանակարգ, ինչը հնարավոր կլիներ միայն այն դեպքում, եթե նրանք կազմեին մեծամասնություն»:135

_____
134 FO 424 / 106, No 273, pp. 549-550.
135 Turkey, No 6 (1881). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1881, pp. 16-17.

Հուլիսի 24-ին Գրենվիլը տեղեկացնում էր Գոշենին, որ կառավարությունը համաձայնել է տերությունների ներկայացուցիչների կողմից Բարձր Դռանը նոր հայտագիր ներկայացնելու դեսպանի առաջարկին: Միաժամանակ նախարարը նշում էր, որ

կառավարությունը նպատակահարմար չի գտնում, որ հայտագրում տեղ գտնի սուլթանական կառավարության կողմից Կիպրոսի կոնվենցիայով նախատեսված կայսրության անվտանգության ապահովման դիմաց բարենորոգումների իրագործմանը վերաբերող պարտավորությունների չկատարման փաստը. դրա մասին անհրաժեշտ է խոսել թուրք ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում:136 Ինչ վերաբերում է հայտագրի նախագծում տեղ գտած երեք ամսվա ընթացքում մահմեդականների և քրիստոնյաների մարդահամարի անցկացման պահանջին, Գրենվիլը գտնում էր (29 հուլիսի), որ այն կհետաձգի ներկայումս այդքան անհրաժեշտ բարենորոգումների իրագործումը: Նախարարի կարծիքով, կարելի է սահմանափակվել զինակոչի ենթակա մահմեդականների և զինծառայությունից ազատվելու համար հարկ վճարող քրիստոնյաների թվային տվյալներով:137

Հաշվի առնելով Գրենվիլի դիտողությունները, Գոշենը ներկայացնում է հայտագրի նախագիծը տերությունների դեսպանների քննարկմանը: Օգոստոսի 10-ին դեսպանը զեկուցում էր, որ տերությունների ներկայացուցիչները հիմնականում համաձայնել են նախագծին և երաշխավորել իրենց կառավարություններին՝ հավանություն տալ փաստաթղթին: Որոշ առաջարկություններ ներկայացրել էր Ռուսաստանի դեսպան Նովիկովը, որոնց Գոշենը համաձայնել էր: Ըստ բրիտանական դեսպանի, հայտագիրն իրենից ներկայացնում է բարենորոգումների ծրագիր, որի ընդունումն ու իրագործումը Բարձր Դռան կողմից տերությունները համարում են անհրաժեշտ և պարտադիր: Փաստաթղթի միակ թույլ կետը Գոշենը համարում է երաշխիքների բացակայությունը: Նա նախարարին առաջարկում է տերությունների քննարկմանը ներկայացնել գնդապետ Վիլսոնի գաղափարը եվրոպական հանձնաժողով ստեղծելու մասին, որը բարենորոգումների իրագործման գործընթացի նկատմամբ հսկողություն սահմանելու միակ միջոցն է:138 Դեսպանը գրում էր

136 FO 424 / 107, No 14, p. 11.
137 Turkey, No 6 (1880) ..., pp. 19-20.
138 Նույն տեղում, էջ 40-41:

նախարարին (31 օգոստոսի), որ այդ կարծիքը կիսում են բրիտանական բոլոր հյուպատոսները:139

Սեպտեմբերի 4-ին, ելույթ ունենալով խորհրդարանի համայնքների պալատում, Գլադստոնը նշում էր, որ ժամանակները փոխվել են և Օսմանյան կայսրությունը կարող է իր ամբողջությունը պահպանել այն դեպքում, եթե իրագործի համապատասխան վարչական բարեփոխումներ: Նա հայտարարում էր. «Թուրքիայի գոյությունը երկարաձգելու և նրան արդարացնելու համար անհրաժեշտ է երկու գործ. առաջինը՝ որ Թուրքիան կատարի իր միջազգային պարտականությունները և երկրորդը՝ որ իրավացի և լավ օրենքներով կարողանա բարելավել իր հպատակ ժողովուրդների դրությունը»:140 Այդ օրերի Գլադստոնի հայտարարությունները բացահայտ սպառնալիք կարելի է համարել սուլթանական կառավարության դեմ, ինչը, սակայն, որևէ ազդեցություն չունեցավ կայսրության քաղաքականության վրա:

Ստանալով իրենց կառավարությունների համաձայնությունը, Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Ֆրանսիայի և Ավստրո-

Հունգարիայի դեսպանները սեպտեմբերի 7-ին ստորագրում և Բարձր Դռանն են ներկայացնում երկրորդ հայտագիրը: Փաստաթղթում նշվում էր, որ սուլթանական կառավարության հուլիսի 5-ի հայտագրում ներկայացված առաջարկները չեն համապատասխանում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի «ոգուն և տառին», հայերով բնակեցված շրջաններն ուղարկված հանձնաժողովները էական ոչ մի արդյունքի չհասան, հյուպատոսական զեկուցագրերի համաձայն, իրավական համակարգում բարեփոխություններ տեղի չեն ունեցել, ժանդարմերիայի ստեղծման և ոստիկանության բարեկարգման ծրագրերի վերաբերյալ տերությունները որևէ տեղեկություն չունեն: «Նույնիսկ այն ոճը, - գրված էր հայտագրում, - որով Բարձր Դուռը խոսում էր հայերով բնակեցված մարզերում կազմակերպված հանցագործությունների մասին, վկայում է, որ նա հրաժարվում է ճանաչել այդ շրջաններում գոյություն ունեցող անիշխանության աստիճանը կամ իրավիճակի լրջությունը, ինչը կարող է հանգեցնել, ամենայն հավանականությամբ, ընդարձակ շրջանների

---

139 Նույն տեղում, էջ 90:
140 Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.) ..., էջ 128-129:

քրիստոնյա բնակչության ոչնչացմանը... Հուլիսի 5-ի հայտագրում ոչ մի լուրջ առաջարկություն չէր արված չերքեզների և քրդերի կողմից միջադեպերը դադարեցնելու ուղղությամբ: Մտավախություն կա, որ նրանց կազմակերպած էքսցեսները հնարավոր չէ կանխել պարզ օրենքի կիրառումով: Բացառապես խստագույն միջոցները կարող են դադարեցնել այդ հալածանքը..., որը հանդիսանում է հայերի ունեցվածքի, պատվի և կյանքի համար վտանգ հանդիսացող շարունակական աղբյուրը»:141

Այնուհետև փաստաթղթում նշվում էր, որ տերությունների համար ցանկալի կլիներ, եթե բարենորոգումներն իրագործվեին կայսրության ողջ տարածքում, սակայն «շրջանների բնորոշ առանձնահատկությունն է՝ քրիստոնյա բնակչության գերակշռումը տարածքի մեծ մասի վրա, և եթե այդ գերակշռումը հաշվի չառնվի, ոչ մի բարենորոգում արդյունք ունենալ չի կարող»: Բարձր Դուռն այն կարծիքին է, որ անհրաժեշտ է հավասար պայմաններ ստեղծել հայերի և քրդերի համար: Հայտագրում այդ կապակցությամբ ասվում էր, որ անհնարին է նույն վարչակարգն օգտագործել նստակյաց բնակչության և կիսաքոչվոր ցեղերի համար: Տերություններն իրենց գոհունակությունն էին հայտնում Դռան այն առաջարկի կապակցությամբ, որը նախատեսում էր, որ համայնքի ղեկավարը պարտադիր պետք է ներկայացնի բնակչության կրոնական մեծամասնությունը, սակայն նման պայմանի բացակայությունը բարձր պաշտոնյաների նշանակման պարագայում, ինչպես նաև այն, որ համայնքների ղեկավարները նշանակվում են կենտրոնական իշխանությունների կողմից, այլ ոչ թե ընտրվում համայնքային խորհուրդների կողմից, դիտարկում էին որպես 61-րդ հոդվածով նախատեսված՝ տեղական կարիքների՝ ապահովման անտեսում:

Տերությունների ներկայացուցիչները եզրակացնում էին, որ սուլթանական կառավարության առաջարկները չեն համապատասխանում գոյություն ունեցող խնդրին, չեն կարող բավարարել այդ շրջանների բնակչության կարիքները և հիմնված չեն երկու կարևորագույն սկզբունքների՝ հավասարության և ապակենտրոնացման վրա: Բարձր Դուռը, նշվում էր հայտագրում, ամեն կերպ ձգտում է փոխել 61-րդ հոդվածի պայմանները,

կեղծելով հայ բնակչության տոկոսային հարաբերակցությունն այն աստիճանի, որ այն բացարձակապես տարբերվում է այլ աղբյուրներից և ընդունելի չէ տերությունների համար:

141 Turkey, No 23 (1880) ..., pp. 279-280.

Ուստի առաջարկվում էր. ստեղծել անկախ հանձնաժողով և շտապ կարգով անցկացնել շրջանների բնակչության մոտավոր մարդահամար, ապահովել հայերի կյանքի և ունեցվածքի անվտանգությունը, միջոցներ ձեռնարկել քրդերի հարձակումների դեմ, իրականացնել ֆինանսական, դատական և ոստիկանական համակարգերի վերափոխություն, նահանգապետերին տրամադրել անկախ գործելակերպ և ավելի մեծ պատասխանատվություն: Վերջում նշվում էր, որ բարենորոգումները պարտադիր կերպով պետք է իրագործվեն տերությունների հսկողության ներքո:142

Առաջին հայացքից թվում էր, թե բրիտանական նոր կառավարության տերությունների համատեղ գործողությունների քաղաքականությունը Հայկական հարցում պետք է որ ունենա դրական արդյունք և սուլթանական կառավարությունը, անհանգստացած լինելով եվրոպական համերշխությունից, վերջապես կիրագործի իր պարտավորությունները: Սակայն տեղի ունեցավ հակառակը: Հոկտեմբերի 3-ին տերությունների ներկայացուցիչներին հանձնված պատասխանում Բարձր Դուռը, բավականին գրգռված ոճով, անորոշ խոստումներ էր տալիս տերություններին, առանց որևէ էական առաջարկ կամ երաշխիք ներկայացնելու: Պատասխան հայտագիրը պարունակում էր հետևյալ յոթ կետերը. 1/ բնակչության անվտանգությունը և կարգ ու կանոնը պաշտպանելու նպատակով բարեկարգվելու են Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Դիարբեքիրի շրջանների դատարանները. 2/ կայսերական կառավարությունը որոշել է վերակառուցել ոստիկանությունն ու ժանդարմերիան. 3/ ժանդարմերիայի ղեկավարները նշանակվում են ռազմական նախարարության կողմից և կարող են ետ կանչվել տեղական իշխանությունների խորհրդով. 4/ համայնքների կազմակերպման ձևը մշակվելու է պետության շահերին համապատասխան, չորս ամսվա ժամկետում. 5/ շրջանների եկամուտների մի մասը օգտագործվելու է տեղական կարիքների համար. 6/ շրջանների իրավական պաշտոնյաների ընտրությունն ու նշանակումը կատարվելու է գոյություն ունեցող հատուկ կարգով. վարչական պաշտոնյաները նշանակվելու են կայսերական հրամանագրով, նահանգապետի առաջարկով. նահանգապետը իրավունք ունի ազատել աշխատանքից և նշանակել վարչական պաշտոնյաներին, բացառությամբ ոստիկանության և ֆինանսների ղեկավարների. 7/ սահմանադրական դատարանները

142 Նույն տեղում, էջ 280-282:

գործելու են կայսերական օրենսգրքին և գոյություն ունեցող օրենքներին համապատասխան:143

Տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները մի կողմից, իրական երաշխիքների և բարենորոգումների իրագործման հսկողության մեխանիզմների բացակայությունը մյուս կողմից անորոշ վիճակի առջև կանգնեցրին բրիտանական դիվանագիտությանը: Հոկտեմբերի 21-ի գաղտնագրում Գոշենն ակնկալում էր Գրենվիլից

նոր հրահանգներ Հայաստանի բարենորոգումների հարցում «հետագա քայլերի» մասին, նշելով. քանի որ սուլթանական կառավարությունը խուսափում է Բեռլինի պայմանագրով նախատեսված պարտավորություններից, տերությունները պարտավոր են քաղաքական նոր գիծ մշակել Օսմանյան կայսրության նկատմամբ:144

Հոկտեմբերի 18-ին Վիլսոնը հայկական բարենորոգումների վերաբերյալ իր տեսակետներն էր ներկայացնում էր Գոշենին: Նկատի առնելով այն հանգամանքը, գրում էր նա, որ բրիտանական կառավարությունը նպատակահարմար չի համարում տերությունների ուղիղ հսկողության յուրաքանչյուր ձևը հայերով բնակեցված շրջանների նկատմամբ, անհրաժեշտ է իմանալ, թե ինչքան հեռու կարող են գնալ տերությունները Բարձր Դռնից բարենորոգումների որոշակի ծրագիր պահանջելու հարցում: Եթե տերությունները պատրաստ են պահանջել նման ծրագիր, ապա անհրաժեշտ է նախապատրաստել օրենք կամ ստատուտ (կանոնագիրք) և որպես պահանջ ներկայացնել այն Բարձր Դռանը: Վիլսոնի կարծիքով, նման փաստաթուղթ կարող է պատրաստվել կամ տերությունների և Դռան ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողովի, կամ էլ բացառապես տերությունների ներկայացուցիչների խորհրդի կողմից: Նա առաջարկում էր պատրաստել այդ ծրագիրը Լիբանանի Հիմնական ստատուտի հիման վրա, նախընտրելով այն Կրետեի կամ Արևելյան Ռումելիայի կարգավիճակը սահմանող փաստաթղթերից: Լիբանանի ստատուտը բաղկացած է ընդամենը 18 հոդվածից և, ըստ Վիլսոնի, կարող է նույնպես ընդունելի լինել Հայաստանի համար: Նա ասում էր. «...Եթե տերությունները պատրաստ չեն Դռնից պահանջելու որոշակի ծրագիր, ապա ես քիչ հավանական եմ տեսնում բարենորոգումների իրագործման

143 Turkey, No 6 (1881) ..., pp. 179-180.
144 FO 424 / 107, No 167, pp. 292-293.

հնարավորությունները, որոնք օրեց օր դառնում են ավելի հրատապ, եթե անհրաժեշտություն կա երկիրը փրկելու անիշխանությունից»:145

Ամբողջովին համաձայնելով Վիլսոնի առաջարկին, Տրոտտերը միաժամանակ նշում էր, որ թուրքական կառավարությունն երբևիցե չի հանդուրժելու կիսաանկախ պետության ստեղծումը իր ավանդական թշնամու՝ Ռուսաստանի հարևանությամբ: Դեսպանին ուղղված իր հերթական զեկուցագրում (19 հոկտեմբերի) նա գրում էր. «...Մարդկության շահերից ելնելով ցանկալի է հնարավորին չափ շուտ լուծել կյանքի և ունեցվածքի անվտանգության ապահովման հարցը: Ամենուրեք գոյություն ունեցող վատ ղեկավարման և անիշխանության շարունակումը..., եթե չխանգարել դրան, ի վերջո դառնալու է երկրի քայքայման պատճառը և ուշ թե շուտ անխուսափելիորեն բերելու է Ռուսաստանի միջամտությանը»:146

Նոյեմբերի 9-ին Քլեյթոնը Վանից գրում էր Տրոտտերին, որ ամերիկյան միսիոներների տվյալների համաձայն, հայերի շրջանում զինվելու շարժում է սկսվել՝ թուրքերի դեմ ապստամբելու նպատակով, որը հովանավորվում է ռուս թագավորի կողմից, իսկ քրդերը պատրաստվում են ապստամբություն բարձրացնել պարսկական սահմանի մոտ՝ իբրև թե հայերի շարժումը սատարելու և թուրքական իշխանությունների ուշադրությունը շեղելու համար: Քլեյթոնը չի հավատում, որ այս ամենն այդքան հեռու է գնացել, իսկ հայերին սատարելու քրդական շարժումը համարում է անհեթեթություն: Սակայն նա համոզված էր,

որ ինչ-որ բան կատարվում է. «երիտասարդ հայկական կուսակցության տաք գլուխ ղեկավարները ոգևորող ճառեր են արտասանում և մարդիկ սկսել են համոզվել խոստացված բարենորոգումների անհուսության մեջ»: Քլեյթոնի կարծիքով, հայերը կորցրել են բոլոր հույսերը Եվրոպայից և, մասնավորապես, Անգլիայի օգնությունից և մտածում են միմիայն Ռուսաստանի աջակցության մասին: Ըստ Ալաշկերտից ստացված վկայության, ռուսահայերն այստեղ զենք են տեղափոխում և ջոկատներ կազմակերպում տեղի գյուղացիներից:147 Նմանատիպ տեղեկատվություն էր հաղորդում Էրզրումից նաև Էվերետը (24 նոյեմբերի): Նա գրում էր, որ վիլայեթի արևելյան և հարավային շրջաններում սկսվել է հայ գյուղացիությանը զինելու շարժում, ուսուցիչներն ու գործակալները քարոզչական աշխատանք են տանում

145 CAB 37 / 3, No 858, pp. 16-17.
146 CAB 37 / 3, No 866, p. 21.
147 FO 424 / 107, No 212, p. 385.

ռուսական կառավարության աջակցությամբ ժողովրդին ապստամբության բարձրացնելու ուղղությամբ (խոսքը գնում է Բեռլինի վեհաժողովից հետո հիմնված «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպության կողմից կազմակերպված շարժման մասին - Ա.Կ.): Ըստ Էվերետի, Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Օբերմյուլլերը իբր տեղեկացրել էր ամերիկյան մի միսիոների, որ այդ նպատակով Թիֆլիսում ստեղծված է հատուկ կոմիտե:148

Անհանգստացած այս և այլ աղբյուրներից ստացված տեղեկություններով, նոյեմբերի 16-ին Գոշենը կրկին դիմում է Գրենվիլին՝ Հայկական հարցի լուծման առնչությամբ որոշում ընդունելու վերաբերյալ: Նա համարում էր, որ ժամանակը եկել է մեկ անգամ ևս դիմելու տերություններին՝ համատեղ գործողություն կազմակերպելու հարցով: Եվ եթե նրանք այս անգամ հրաժարվեն կամ սահմանափակվեն միմիայն «անտարբեր աջակցությամբ», նշում էր դեսպանը, բրիտանական կառավարությունը կխուսափի միակողմանի պատասխանատվությունից:149

Դեկտեմբերի 13-ին Քլեյթոնը Տրոտտերին հաղորդում էր իր հանդիպման մասին հայկական մի նոր կազմակերպության անդամի հետ: Վերջինս նշում էր, որ Թուրքիայի հպատակ ժողովուրդների շրջանում այն համոզվածությունն է տիրում, որ Եվրոպան ոչինչ չի անելու այն ազգերի համար, որոնք զենքի չեն դիմում իրենց ազատագրման համար, և, ուստի, հույն-թուրքական պատերազմի դեպքում նրանք պետք է ոտքի ելնեն թուրքական իշխանությունների դեմ: Նա շարունակում էր, որ ռուսները ցանկանում են հայերին օգտագործել որպես պատնեշ մահմեդականության դեմ և պատրաստ են միավորել Հայաստանի երկու մասերը, ինքնակառավարման իրավունք շնորհել նրանց, պաշտպանել իրենց սահմանները: Ըստ Քլեյթոնի, այդ գաղափարները լայն տարածում են գտել հայ բնակչության շրջանում, քանի որ հայերը համոզված են, որ Եվրոպան և, մասնավորապես Մեծ Բրիտանիան, այլևս ոչնչով օգնել չեն կարող: Նրա կարծիքով, ցանկության դեպքում Ռուսաստանն իրապես կկարողանա ստեղծել հայկական ինքնուրույն մարզ, որն ապահովված կլինի հարուստ բնական պաշարներով և խելացի ժողովրդով: Սակայն իր զրուցակցին Քլեյթոնը պատասխանում է, որ «հայերը պետք է սպասեն և դիտեն ու եթե

148 FO 424 / 107, No 213, pp. 385-386.
149 CAB 37 / 4, No 895, p. 23.

Անգլիան և Եվրոպան չհասան իրենց վիճակի բարելավմանը, ապա նրանց համար ավելի լավ է մնալ նույն վիճակում, քան վտանգի ենթարկվել անհայտ մի բանի համար»:150

Դեկտեմբերի 27-ին Քլեյթոնը հանդիպում է Վանում Կամսարականի հետ, որը վերջերս այցելել էր Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Երզնկա, Էրզրում և Մուշ: Զրույցի ընթացքում նա հայտարարում էր, որ տեղյակ է տարածված այն խոսակցությունների մասին, թե իբր ինքը դրդում է հայերին ապստամբության: Նա նշում էր, որ, հակառակը, միշտ խորհուրդ է տվել հայերին չմտածել այդ ուղղությամբ, քանի որ նրանք ոչ խիզախ են, ոչ կազմակերպված, ոչ էլ զենք ունեն և ոչ միայն հաջողության չեն հասնի, այլև կարող են ոչնչացվել: Ըստ Կամսարականի, ներկայումս Բարձր Դուռը չի վստահում ոչ Մեծ Բրիտանիային, ոչ էլ Ռուսաստանին և հանձնարարել է տեղական իշխանություններին հետևել ինչպես ռուսական, այնպես էլ բրիտանական հյուպատոսների և փոխհյուպատոսների քայլերը:

Քլեյթոնը Տրոտտերին գրում էր, որ համաձայն տարածվող լուրերի, շրջանում շատ ռուսահայեր են հայտնվել, իսկ մի քանի շաբաթ հետո շուրջ 50 հազ. կազմող ջոկատներ իբր պատրաստ կլինեն անցնել թուրքական սահմանը: Նա անհրաժեշտ է համարում համոզել թուրք կառավարությանն անմիջապես իրագործել խոստացված բարենորոգումները, որոնք կբավարարեն հայերի պահանջները և կկանխեն ռուսական ազդեցության տարածումը:151 Նա նշում էր, որ իր կողմից ամեն ինչ անում է, որպեսզի համոզի հայ բնակչությանը չձեռնարկել գործողություններ, որոնք կարող են հայերին ռուսների ձեռքը գցել, քանի որ Մեծ Բրիտանիան բարենորոգումների իրագործման ճանապարհով շուտով բարելավելու է իրենց վիճակը:152

1881 թ. սկզբին բրիտանական դիվանագիտությունը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ Հայկական հարցում: Հունվարի 12-ին Գրենվիլը շրջաբերական է հղում իր դեսպաններին, հանձնարարելով մեծ տերությունների կառավարությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա և առաջարկել նրանց կրկին անգամ համատեղ բողոք ներկայացնել սուլթանական կառավարությանը՝ հայկական բնակչության հանդեպ իրագործվող քաղաքականության և Բեռլինի պայմանագրի պարտավորությունները

150 FO 424 / 122, No 32 / 1, pp. 55-56.
151 FO 424 / 122, No 35 / 1, pp. 58-59.
152 FO 424 / 122, No 35 / 2, pp. 59-60.

չկատարելու կապակցությամբ:153 Սակայն այս անգամ Մեծ Բրիտանիայի նախաձեռնությունը տապալվեց, քանի որ Գերմանիան և Ֆրանսիան մերժեցին առաջարկը, համարելով, որ դեռևս պետք չէ բարձրացնել Հայկական հարցը, քանի դեռ իր վերջնական լուծումը չի ստացել Հունական հարցը՝ հույն-թուրքական սահմանի ճշտումը:154 Հակառակ դրան, փետրվարի սկզբին Ռուսաստանի և Իտալիայի արտգործնախարարները հանձնարարում են Օսմանյան կայսրությունում իրենց դեսպաններին մյուս տերությունների ներկայացուցիչների հետ համատեղ հանդես գալ նոր հայտարարությամբ՝ հայկական բարենորոգումների իրագործման կապակցությամբ:155 Փետրվարի 14-ին Գրենվիլը հանձնարարում էր Ռուսաստանում բրիտանական դեսպանին

տեղեկացնել ռուսական կառավարությանը, որ Մեծ Բրիտանիան համաձայնել է Գերմանիայի և Ֆրանսիայի հետ՝ բարենորոգումների հարցով Բարձր Դռանը հայտարարություն ներկայացնելու հետաձգման առնչությամբ:156

Փետրվարի 9-ին Գոշենին հասցեագրված նամակում Գրենվիլը գրում էր, որ բրիտանական կառավարությունը չափազանց անհանգստացած է Օսմանյան կայսրությունում տիրող վիճակով, և, մասնավորապես, քրիստոնյա բնակչության դրությամբ, ինչը «լուրջ վտանգ է ներկայացնում Դռան հեղինակության համար»: Բրիտանական կառավարությունն այն կարծիքին է, նշվում էր նամակում, որ սուլթանը, հնարավոր է, նույնիսկ չգիտի արևելյան շրջաններում տիրող իրական վիճակի մասին: Ուստի դեսպանին հանձնարարվում էր տեղյակ պահել նրան ստեղծված իրավիճակի մասին, ինչպես նաև հայտարարել, որ ներկայիս կացության շարունակումը քրիստոնյաներին ստիպում է դիմել ծայրահեղ միջոցների: «Եթե քրիստոնյաներին հարգանքով վերաբերվեին, - գրում էր Գրենվիլը, - նրանք համբերատար կերպով կսպասեին, մինչև որ Դուռն իրականացնի բարենորոգումների մեծ ծրագիրը, սակայն նրանք բողոքում են, որ իրենց հետ վերաբերվում են արհամարանքով...»: Եթե Դուռը, շարունակում էր նախարարը, որոշում չընդունի բարենորոգումների իրական կատարման մասին, ապա գարնանը սահմանամերձ

---

153 FO 424 / 122, No 5, p. 7.
154 FO 424 / 122, No 23, p. 46.
155 FO 424 / 122, No 27, 28, p. 52.
156 FO 424 / 122, No 33, p. 56.

շրջաններում կարող են տեղի ունենալ այնպիսի անկարգություններ, որոնք «ծանրագույն հարված» կհասցնեն սուլթանի հեղինակությանը:157

Տրոտտերին ուղղված հերթական գաղտնագրում (15 փետրվարի) Քլեյթոնը գրում էր, որ ամերիկյան միսիոներներից ստացված տեղեկատվության համաձայն, Թիֆլիսից Վան ժամանած հայկական կոմիտեների գործակալները մեծ աշխատանք են տանում արևմտահայության շրջանում՝ թուրքական իշխանության դեմ ապստամբություն հրահրելու նպատակով: Նրանք լուրեր են տարածում, թե իբր ռուսահայերից կազմված 150 հազ. բանակը պատրաստ է շուտով անցնելու սահմանը, ռուսական կառավարությունը կանգնած է այդ շարժման ետևում, այն ցածր գներով զենք է վաճառում հայերին և միջամտելու է նրանց սպառնացող վտանգի դեպքում, արևմտահայության ապստամբությունը սկսվելու է աշնանը, երբ քրդական շեյխ Աբեյդուլլան կփորձի կազմակերպել քրիստոնյաների ջարդ և այլն:158 Քլեյթոնը համոզված էր (23 փետրվարի), որ Վան քաղաքի հայ ղեկավարները չեն պաշտպանում ապստամբության գաղափարը, քանզի վստահ են, որ ռազմական դիմադրություն ստանալուն պես ռուսահայերը լքելու են իրենց և հեռանան երկրից: Փոխհյուպատոսի կարծիքով, քաղաքի հայերը շարժումը չեն ղեկավարելու, իսկ գյուղացիներն առանց ղեկավարների երբեք չեն ապստամբի: Նա միաժամանակ նշում էր, որ դժվար է հաշվարկել, թե ինչ կարող է լինել, եթե գարնանը քրդերն անկարգություններ սկսեն:159

Մարտի 5-ին հյուպատոս Բիլիոտտին տեղեկացնում էր Գոշենին շրջանում ռուսահայ գաղտնի ընկերությունների գործակալների գործունեության մասին: Նա նշում էր, որ

Էրզրումում ռուս հյուպատոս Օբերմյուլլերը մի առիթով իրեն խոստովանել էր, որ Վանում փոխհյուպատոս Կամսարականը թուրքերի դեմ ապստամբություն բարձրացնելու գործուն աշխատանք է տանում իր հայրենակիցների շրջանում: Համաձայն չլինելով նման գործունեությանը, հյուպատոսը բողոք էր ներկայացրել իր կառավարությանը, սակայն շատ շուտով ինքն էր հեռացվել այդ պաշտոնից: Իսկ Տրապիզոնում Ռուսաստանի հյուպատոսի պաշտոնում նշանակվել էր Բելոցերկովեցը, որն, ըստ Բիլիոտտիի, Ռուշչուկում ռուսական

157 FO 424 / 122, No 29, p. 53.
158 FO 424 / 122, No 53 / 1, pp. 84-85.
159 FO 424 / 122, No 63 / 1, pp. 95-96.

հյուպատոսի պաշտոնում մեծ դեր էր խաղացել բուլղարական ապստամբության հրահրման գործում:

Բրիտանական հյուպատոսը համոզված էր, որ «Ռուսաստանը հող է նախապատրաստում Կովկասի կառավարությանը ենթակա տարածքների սահմանակից շրջանները գրավելու, որի համար պատրվակ գտնելը դժվար չէ»: Ըստ Բիլիոտտիի, հայերի և հույների համակրանքը Ռուսաստանի կողմն է, իսկ մահմեդականները, հակառակը, դեմ են Ռուսաստանին և «էական համագործակցություն հանդես կբերեն Անատոլիայի այդ շրջաններում բրիտանական ղեկավարման հաստատման գործում»:160 Հյուպատոսի այս տեսակետը տարիների ընթացքում փաստորեն հաստատվում է որպես բրիտանական արտաքին քաղաքականության քաղաքական ուղեգիծ: Թեև Մեծ Բրիտանիայի հասարակական կարծիքը մշտապես աղմուկ էր բարձրացնում քրիստոնյա հայերի օգտին, քննադատում ինչպես պահպանողական, այնպես էլ լիբերալ կառավարությունների արտաքին քաղաքականությունը, «ռուսական կողմնորոշման» պիտակ ստացած, իսկ իրականում խաղաղ, անվտանգ և ինքնուրույն կյանքի ձգտող արևմտահայությունը չէր ներգծվում բրիտանական դիվանագիտության խնդիրների մեջ: Ուստի հայ բնակչության աստիճանական անհետացումը Ռուսաստանին սահմանակից Օսմանյան կայսրության արևելյան շրջաններից անուղղակի կերպով համապատասխանում էր բրիտանական կայսրության շահերին:

Ծանոթանալով դեսպանի կողմից իրեն ուղարկված Արևմտյան Հայաստանում ռուսական բանսարկություններին վերաբերող հյուպատոսների զեկուցագրերին, ապրիլի 8-ին Գրենվիլը Գոշենին հանձնարարում էր կրկին սուլթանի ուշադրությունը հրավիրել Հայաստանից ստացված տեղեկությունների վրա և զգուշացնել, որ եթե նա չբարելավի հայ բնակչության վիճակը և չիրականացնի համապատասխան բարենորոգումներ, երկրում սկսվելու են անկարգություններ, որոնց արդյունքում հայերը դիմելու են Ռուսաստանի օգնությանը և ընկնելու են նրա ձեռքը:161

Դժգոհելով Հայկական հարցում Գոշենի անարդյունավետ գործունեությունից, մայիսի վերջին Գրենվիլը նրա փոխարեն նշանակում է Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան,

160 FO 424 / 122, No 54 / 1, pp. 85-86.
161 FO 424 / 122, No 6, p. 100.

փորձված դիվանագետ լորդ Ֆրեդերիկ Դաֆֆերինին:162 Հունիսի 24-ին, հանդես գալով 1878 թ. Կիպրոսի կոնվենցիային նվիրված խորհրդարանական քննարկումներին, Գլադստոնը հավաստիացնում էր, որ Մեծ Բրիտանիայի նոր դեսպանը «պետք է բարձր մակարդակով օգտագործի իր ազդեցությունն ու ջանքերը՝ կարևորագույն նշանակություն ունեցող Հայկական հարցը լուծելու նպատակով»: Մի քանի օր անց Գրենվիլին ուղղված նամակում բրիտանահայ համայնքի ներկայացուցիչները, նշելով լորդ Դաֆֆերինի դրական դերը Լիբանանի քաղաքական համակարգի հաստատման մեջ, հույս էին հայտնում, որ իր նոր պաշտոնում նա կկիրառի իր փորձը Հայաստանի համար նման վարչաձև ստեղծելու գործում, որը, Բեռլինի պայմանագրի համաձայն, կհոգա Հայաստանի բնակչության տեղական կարիքները, կապահովի կյանքի և ունեցվածքի անվտանգությունը:163

Հունիսի 28-ին նոր դեսպանը նախարարին տեղեկացնում էր Աբդուլ Համիդի հետ ունեցած իր առաջին հանդիպման մասին: Զրույցի ժամանակ սուլթանն իր ցանկությունն էր հայտնել ջերմ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու բրիտանական կառավարության հետ: Դաֆֆերինը հույս էր հայտնել, որ, Բեռլինի պայմանագրի պարտավորությունների համաձայն, Դուռն անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի հայ բնակչության վիճակը բարելավելու ուղղությամբ և այդ ճանապարհին առաջին քայլը պետք է հանդիսանա անկաշառ և վարչական աշխատանքի կարողություններ ունեցող նահանգապետների նշանակումը, որոնք կապահովեն բարենորոգումների իրագործումը: Ըստ սուլթանի, իր և բրիտանական կառավարության տեսակետներն այդ հարցում համընկնում են:164

Օգոստոսի 1-ին Դաֆֆերինը Գրենվիլին զեկուցում էր Հայկական հարցի առնչությամբ կատարած իր աշխատանքի, սուլթանի և մեծ վեզիր Սաիդ փաշայի հետ ունեցած իր

---

162 Walker J. Christopher. The Survival of a Nation. New York, 1980, p. 124.
Դաֆֆերին (Dufferin) Ֆրեդերիկ Տեմպլ Համիլտոն – լորդ, բրիտանացի քաղաքական գործիչ և դիվանագետ: 1879-1881 թթ.՝ դեսպան Ռուսաստանում, 1881-1884 թթ.՝ դեսպան Թուրքիայում, 1884-1888 թթ.՝ Հնդկաստանի փոխթագավոր, 1888-1891 թթ.՝ դեսպան Իտալիայում, 1891-1897 թթ.՝ դեսպան Ֆրանսիայում:
163 FO 424 / 123, No 13 / 1, pp. 17-18.
164 FO 424 / 123, No 6, p. 11.

հանդիպումների մասին: Նա նշում էր, որ արել է հնարավոր ամեն ինչ, որ համոզի Բարձր Դռանը բարենորոգումներն իրագործելու անհրաժեշտության մեջ, սակայն «...մտավախություն կա, որ իմ բոլոր ձեռնարկումները կարելի է համարել ընդամենը փորձնական քայլեր դժվարագույն խնդրի կարգավորման ուղղությամբ, որի լուծումը կախում ունի բազմաթիվ բարենպաստ հանգամանքներից, այդ թվում նաև իմ գործընկերների ուժեղ սատարումից...»: Ըստ դեսպանի, առաջին ոչ բարենանպաստ հանգամանքը ներկայումս ընթացող Միդհաթ փաշայի և նրա կողմնակիցների դատավարությունն է, երկրորդը՝ տերությունների ներկայացուցիչների մոտ այն տեսակետն է տիրում, որ Հայկական հարցի բարձրացումը ներկայումս նպատակահարմար չէ, քանի դեռ Թուրքիան դուրս չի բերել իր զորքերը ազատագրված հունական տարածքներից և չի ապառազմականացրել Մոնտենեգրոյի սահմանը և

երրորդը՝ Ռամադանը, որի ժամանակ ընդհանրապես անհնար է լուծել որևէ հարց: Դաֆֆերինն առաջարկում է ներկայումս որևէ լուրջ հարց չբարձրացնել Բարձր Դռան առջև, սահմանափակվելով միայն Դիարբեքիրի վալիին ու Բայազետի մյութեսարիֆին պաշտոններից ազատելու պահանջով:165

Սաիդ փաշայի հետ օգոստոսի 22-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Դաֆֆերինը կրկին անգամ նրա ուշադրությունն էր հրավիրում Հայաստանում բարենորոգումների իրագործման, ինչպես նաև դաժան, կաշառակեր և տգետ թուրք պաշտոնյաներից ազատվելու անհրաժեշտության վրա, որոնց գործելակերպից տուժում է ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական բնակչությունը: Դեսպանը ներկայացնում է նման պաշտոնյաների ցանկ, որոնց մասին տեղեկություններ էր ստացել բրիտանական հյուպատոսություններից:

Այնուհետև նա նշում էր, որ թեև կայսրության քրիստոնյաների վիճակը հատկապես անհանգստացնում է Եվրոպային, սակայն սխալ կլինի ենթադրել, թե մահմեդականների կացությունը նույնպես չի անհանգստացնում բրիտանական կառավարությանը: «Եվ եթե ինձ, - շարունակում էր Դաֆֆերինը, - հանձնարարված է պահանջել Դռնից այդ բարենորոգումները, ապա դա արվում է հիմնականում սուլթանի և Թուրքիայի շահերից ելնելով, այլ ոչ թե յուրահատուկ կրոնական խմբի ցրված անդամներին բացառիկ արտոնություններ տալու ցանկությունից: Եթե Հայաստան անվանումն ինչ որ տեղ և

165 FO 424 / 123, No 40, p. 66.

օգտագործվել է, ապա ավելի՝ աշխարհագրական իմաստով, քան ազգագրական, և Դուռը խորապես սխալված կլինի, եթե մտածի, թե իբր Եվրոպան կամ Անգլիան ձգտում են ստեղծել թշնամական կամ ագրեսիվ Հայկական կայսրություն Օսմանյան կայսրության ծոցում... Հակառակ Թեսալիայի հույների, Արևելյան Ռումելիայի և իշխանապետությունների բուլղարների, որոնք բնակվում են միատարր զանգվածներով, հայերը ցրված են այստեղ այնտեղ մեծամասնություն չկազմող առանձին խմբերով... Կատարյալ հիմարություն կլինի, եթե նրանց ազգություն համարվելու քաղաքական պահանջների խանդից կամ վախից ելնելով Դուռը հրաժարվի նրանց լավ կառավարում և հավասար իրավունքներ տրամադրելուց»: Դեսպանի համոզմամբ, Բարձր Դուռը պետք է բարելավի հայերի վիճակը և օգտագործի նրանց «խելքն ու կարողությունները» կայսրության շահերին ի նպաստ, քանի որ «ի տարբերություն սլավոնական ժողովուրդների և նույնիսկ հույների, թուրք և հայ ժողովուրդների միջև գոյություն ունի բնական համակրանք...»: Եվ եթե նրանց հանդեպ կրոնական մոլեռանդություն չհրահրվի, «հայերը կարող են դառնալ սուլթանի արևելյան տիրույթների ամենից ամուր պաշտպանը»: Հակառակ դեպքում, հայտարարում էր Դաֆֆերինը, Մեծ Բրիտանիան անտարբերությամբ դիտելու է, թե ինչպես է Ռուսաստանը ազատագրում հայ բնակչությանը թուրք փաշաների հալածանքից: Դեսպանը խնդրում է Սաիդ փաշային համոզել սուլթանին՝ Հայաստանի համար մեծ լիազորություններով օժտված կարող Գերագույն Կոմիսար նշանակելու հարցում:166

Այդ ընթացքում բրիտանական դիվանագիտությունը փորձում էր պարզել տերությունների դիրքորոշումը Հայկական հարցում: Օգոստոսի 24-ին Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Ուայնդհեմը Գրենվիլին հաղորդում էր արտգործնախարար Նիկոլայ

Գիրսի167 հետ տեղի ունեցած հանդիպման մասին: Նախարարի կարծիքով, փորձը ցույց է տալիս, որ թուրքերը լսող են, երբ տերությունները ցուցաբերում են միասնական կամք և համատեղ գործողությունների ցանկություն: Սակայն երբ նրանք նկատեն, շարունակում էր

166 FO 424 / 123, No 75, pp. 119-121.
167 Գիրս Նիկոլայ Կարլովիչ (1820-1895) - ռուս դիվանագետ: 1863 թ.՝ հավատարմատար Իրանում, 1869 թ.՝ հավատարմատար Շվեյցարիայում, 1872 թ.՝ հավատարմատար Շվեդիայում, 1875-1882 թթ.՝ արտգործնախարարի օգնական և ԱԳՆ ասիական դեպարտամենտի տնօրեն, 1882-1895 թթ.՝ արտաքին գործերի նախարար:

Գիրսը, որ որևիցե տերություն անտարբեր և սառը մոտեցում է հանդես բերում որևէ հարցի հանդեպ, Բարձր Դուռն ամեն ինչ կանի, որպեսզի խուսափի նրա լուծումից: Դեսպանը համոզված էր, որ Ռուսաստանը պատրաստ է պաշտպանել Մեծ Բրիտանիայի նախաձեռնությունները Հայկական հարցում:168

Երկու օր անց Գերմանիայում Մեծ Բրիտանիայի դեսպան լորդ Էմփթիլը Գրենվիլին տեղեկացնում էր արտգործնախարար Բուշի հետ ունեցած իր հանդիպման մասին: Վերջինս նշում էր, որ գերմանական կառավարությունը մտադիր չէ առաջնային դեր ստանձնելու Հայկական հարցում, սակայն հրահանգ է իջեցնելու Կոստանդնուպոլսում իր ներկայացուցչին՝ աջակցել խնդրի լուծման մեջ առավելագույնս շահագրգռված Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի յուրաքանչյուր նախաձեռնություն:169

Օգոստոսի 29-ին Դաֆֆերինը ձեռնարկում է տերությունների դեսպանների հանդիպում Կոստանդնուպոլսում, ուր ներկայացնում է բրիտանական կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում, տեղեկացնում իր կատարած աշխատանքի, սուլթանի, վարչապետի, արտգործնախարարի հետ ունեցած հանդիպումների մասին, ինչպես նաև շեշտում համատեղ մոտեցումների և գործողությունների մշակման անհրաժեշտությունը: Նա առաջարկում է դեսպանների հաջորդ հանդիպման ժամանակ քննարկել հետևյալ հարցերը. 1/ Հայկական հարցի ներկայացման հետաձգումը մինչև Հունական և Մոնտենեգրական հարցերի վերջնական լուծումը. 2/ բարենորոգումների իրագործման կապակցությամբ նոր հայտագրի ներկայացման անհրաժեշտությունը. 3/ նահանգապետներին պաշտոնից ազատելու, բարենորոգումների իրագործումը հսկելու իրավունքներով լիազորված Գերագույն Կոմիսարի նշանակումը. 4/ վատ համբավ ունեցող պաշտոնյաների անհապաղ հեռացումը. 5/ բրիտանական դեսպանության կողմից պատրաստված վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանի տարբեր քաղաքներում ու գյուղերում կատարված հանցագործությունների, թալանի և սպանությունների վերաբերյալ տեղեկանքի և 6/ Վիլսոնի ու Տրոտտերի բարենորոգումների նախագծի ներկայացումը:170

168 FO 424 / 123, No 77, pp. 124-125.
169 FO 424 / 123, No 78, p. 125.
170 FO 424 / 123, No 96, p. 142.

Դեռևս օգոստոսի 23-ին Վիլսոնը և Տրոտտերը Դաֆֆերինին ներկայացրել էին հետևյալ կետերից բաղկացած հուշագիրը. 1/ բարենորոգումները պետք է անցկացվեն հայերով բնակեցված շրջաններում. 2/ այդ շրջանները պետք է ընդգրկեն Էրզրումի, Վանի, Բիթլիսի,

Հաքյարի, Խարբերդի, Դերսիմի և Դիարբեքիրի (առանց Մալաթիայի սանջակի) վիլայեթները, Սեբաստիա վիլայեթի Սըվազ, Գարահիսար և Թոխաթ, Հալեպի վիլայեթի Մարաշ սանջակները և Ադանայի վիլայեթի Սիս սանջակի մի մասը. 3/ բարենորոգումների իրագործման գործընթացի հսկողությունն ապահովելու նպատակով հարկավոր է, տերությունների հավանությամբ, երեք տարի ժամկետով նշանակել երկու կոմիսար, որոնք պետք է օժտված լինեն լիակատար գործադիր իշխանությամբ: Նրանցից մեկի իրավասությունը կարող է տարածվել Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Հաքյարիի, իսկ մյուսինը՝ մնացած վիլայեթների վրա. 4/ երկիրը պետք է բաժանվի, ինչպես և ներկայումս, վիլայեթների, սանջակների, կազաների, նահիեների և կարիեների կամ մահալլեների. 5/ սուլթանի ուշադրությունը պետք է հրավիրել պաշտոնյաների ճիշտ ընտրության վրա, քանի որ բարենորոգումների անցկացման հաջողությունը կախված է վալիների անձնական հատկություններից. 6/ գոյություն ունեցող վիլայեթների վարչական խորհուրդները պետք է փոխարինվեն գլխավոր խորհուրդներով, որոնք հսկելու են վիլայեթի բոլոր ծախսերը և կազմված են լինելու համայնքների կողմից ներկայացված 18 վարձատրվող անդամից. 7/ վիլայեթի եկամուտների սահմանված տոկոսը պետք է հանձնվի պետությանը, իսկ մնացած մասն օգտագործվի տեղական կարիքների համար՝ գլխավոր խորհուրդների հսկողությամբ. 8/ սանջակների վարչական խորհուրդները պետք է վերացնել, սակայն պահպանել կազաների նման կառույցները, որոնք բաղկացած կլինեն համայնքները ներկայացնող 5 կամ 6 ներկայացուցչից. 9/ իրավական համակարգի բարենորոգումը պետք է նախատեսի դատական իշխանության փոխանցում մյուդիրներին և կայմակամներին, շարժական դատարանների ստեղծում, դատարանների և դատավորների թվաքանակի կրճատում, դատական ընթացակարգի պարզեցում, քրիստոնյա պաշտոնյաների նշանակում դատարաններում. 10/ օսմանյան բոլոր հպատակները հավասար պետք է լինեն օրենքի առջև, քրիստոնյաները իրավունք պետք է ստանան ծառայելու պետական հիմնարկներում. 11/ վիլայեթների կարգ ու կանոնը պետք է պահպանվի հավասարապես մահմեդականների և քրիստոնյաների կողմից կազմված ոստիկանության կամ ժանդարմերիայի կողմից. 12/ պետք է խստագույնս արգելվի կառավարական պաշտոնյաների, ոստիկանների, սպաների և

զինվորների ստիպողական ու անվճար բնակեցումը քաղաքներում և գյուղերում. 13/ բոլոր բնակավայրերում անցկացնել հողի և տան սեփականության վերագնահատում. 14/ նշանակել քոչվոր քրդերի և կառավարության միջև կապն ապահովող բարձր պաշտոնյա, որը պետք է լիազորված լինի ավազակներին և մարդասպաններին բանտարկելու և պատժելու իրավունքով:171

Սեպտեմբերի 9-ին Դաֆֆերինին ուղղված նամակում Գրենվիլը տեղեկացնում էր, որ վերջերս թագուհուն զեկուցել է Հայկական հարցում բրիտանական դեսպանության կողմից ձեռնարկված գործունեության մասին: Թագուհին իր գոհունակությունն ու համաձայնությունն էր հայտնել Հայկական հարցում դեսպանության կողմից որդեգրած քաղաքականությանը: Միաժամանակ նախարարը դեսպանի ուշադրությունը հրավիրում էր երկու սկզբունքային խնդիրների վրա: Առաջինը՝ լայն լիազորություններով օժտված կարող և ազնիվ գերագույն կոմիսարի կամ նահանգապետի նշանակումն է և երկրորդը՝ եկամուտների բաշխման հստակ համակարգի ստեղծումը: Գրենվիլը նպատակահարմար էր գտնում մահմեդականի նշանակումը գերագույն վարչական պաշտոնում, որը պարտադիր կարգով շրջապատված պետք է լինի քրիստոնյա ենթականերով և խորհրդականներով:172

Նույն օրը, բրիտանական դեսպանի նախաձեռնությամբ, Կոստանդնուպոլսում կայանում է տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների երկրորդ հանդիպումը, ուր քննարկվում են Հայկական հարցում տերությունների համատեղ գործողությունների հնարավորությունները: Բացելով համաժողովը, Դաֆֆերինն իր գործընկերների ուշադրությունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ 1880 թ. սեպտեմբերի 7-ին Բարձր Դռանը ներկայացված տերությունների հայտագիրը մնացել է փաստորեն անպատասխան, սուլթանական կառավարությունը միջոցներ չի ձեռնարկել Բեռլինի պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելու ուղղությամբ: Նա առաջարկում է նոր համատեղ հայտագիր ներկայացնել Բարձր Դռանը, որը պետք է հաստատի և կրկնի նախորդ հայտագրում ներկայացված տերությունների առաջարկները: Միաժամանակ, բրիտանական դեսպանն առաջարկում էր պահանջ ներկայացնել սուլթանին՝ արևելյան նահանգներում տիրող անիշխանության վերացման, քրիստոնյա

171 FO 424 / 123, No 105 / 2, pp. 151-153.
172 FO 424 / 123, No 101, pp. 144-145.

բնակչության կյանքի և ունեցվածքի անվտանգության ապահովման ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Դաֆֆերինի կարծիքով, նման երաշխիք Եվրոպայի համար կարող է հանդիսանալ մեծ լիազորություններով օժտված կարող պաշտոնյայի նշանակումը այդ շրջանների ղեկավարի պաշտոնում, որպես օրինակ բերելով 1861 թ. Ֆուադ փաշայի նշանակումը Սիրիայում: Նա առաջարկում էր Բարձր Դռան քննարկմանը ներկայացնել Մուխթար փաշայի և Ռաուֆ փաշայի թեկնածությունները, որոնք հավասարաչափ վայելում են ինչպես սուլթանի, այնպես էլ տերությունների հարգանքը:

Այնուհետև բրիտանական դեսպանն իր գործընկերների քննարկմանն է ներկայացնում Վիլսոնի և Տրոտտերի կողմից կազմված հուշագիրը, ինչպես նաև տեղեկանք՝ Հայաստանում տեղի ունեցող հանցագործությունների և թուրք պաշտոնյաների չարաշահումների վերաբերյալ: Դաֆֆերինի կարծիքով, բարենորոգումների ծրագիրը պետք է բավարարի ոչ միայն հայ և այլ քրիստոնյա համայնքների, այլև Օսմանյան կայսրության շահերը, փաստաթղթում հիշատակում անգամ չպետք է լինի շրջանների ինքնավարության կան կիսաանկախության մասին:

Դաֆֆերինի բոլոր հարցադրումներն արժանացան դեսպանների հավանությանը, բացառությամբ համատեղ հայտագրի ներկայացման առաջարկի: Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպաններ Նովիկովն ու Տիսսոն, նշելով, որ նոր հայտագիրը կարող է առաջացնել սուլթանի դժգոհությունը, առաջարկեցին սահմանափակվել միմիայն տերությունների ներկայացուցիչների բանավոր ներկայացումներով: Թեև Դաֆֆերինը փորձեց պաշտպանել իր առաջարկը, հայտարարելով, որ այն ծրագրի կարևորագույն կետերից մեկն է, մյուս դեսպանները համարեցին հայտագրի ներկայացումն այդ պահին ոչ նպատակահարմար: Արդյունքում Դաֆֆերինի առաջարկների հիման վրա մշակվեց համապատասխան հուշագիր՝ դեսպանների հարցադրումները սուլթանին և նրա կառավարությանը բանավոր ներկայացնելու նպատակով:173

Սեպտեմբերի 15-ին Դաֆֆերինը տերությունների դեսպանների կողմից մշակված առաջարկները ներկայացնում է Աբդուլ Համիդին: Սուլթանն իր մտահոգությունն է

հայտնում կայսրության արևելյան շրջանում տիրող իրավիճակով, խոստովանում, որ «դժբախտաբար Թուրքիայում կարող պաշտոնյաների սարսափելի պակաս կա» և խոստանում է իրագործել

173 FO 424 / 123, No 113, pp. 160-163.

ներկայացված առաջարկները: Արևելյան շրջաններ գերագույն կոմիսար ուղարկելու գաղափարը նա համարում է «գերազանց», հավաստիացնելով դեսպանին, որ մեկ ամսվա ընթացքում կիրագործի այն, եթե միայն իր ուշադրությունը չշեղեն կայսրության ֆինանսական դժվարություններն ու Եգիպտոսում տեղի ունեցող իրադարձությունները:174

Հոկտեմբերի 1-ին Դաֆֆերինը կազմակերպում է դեսպանների հերթական հավաք, ուր քննարկվում է Վիլսոնի և Տրոտտերի կազմած բարենորոգումների նախագիծը: Հանդիպման սկզբում Ռուսաստանի դեսպան Նովիկովը մտավախություն է հայտնում, որ գերագույն կոմիսարի նշանակման հարցում ճնշում գործադրելը կարող է թուլացնել տերությունների դիրքերը, որոնք միաժամանակ սուլթանից պահանջում են իրենց կողմից մշակված բարենորոգումների ծրագրի իրագործում: Բրիտանական դեսպանը պատասխանում է, որ միայն կարող և անկաշառ մարդու նշանակումն այդ պաշտոնում հնարավորություն կտա մաքրել երկիրը կաշառակեր և անգործունյա թուրք պաշտոնյաներից և իրական հսկողություն սահմանել բարենորոգումների իրագործման գործընթացի նկատմամբ:
Այնուհետև քննարկման առարկա դարձավ երկու կոմիսարների նշանակման անհրաժեշտության հարցը: Դաֆֆերինն այդ հանգամանքը բացատրեց նրանով, որ բարենորոգումների իրագործման շրջանը բավականին մեծ է և մեկ կոմիսարի համար դժվար կլինի անընդհատ ճամբորդել մեկ մասից մյուսը, մանավանդ ձմեռվա ամիսներին: Սակայն մյուս դեսպանները պնդում էին, որ ներկա պայմաններում դժվար կլինի երկու որակյալ թեկնածու գտնել այդ պաշտոնի համար, որոնք մշտապես խանգարելու և հակադրվելու են միմյանց: Բրիտանական դեսպանը առաջարկում էր այդ հարցին անդրադառնալ հետագայում և քննարկել նախագծի մյուս հոդվածները: Նկատի առնելով Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի շահերը Հայկական հարցում, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ տերությունները հյուպատոսական հատուկ առնչություններ ունեն հայկական շրջաններում, դեսպաններն առաջարկում են, որ Նովիկովն ու Դաֆֆերինը հաշվի առնեն քննարկման արդյունքում ի հայտ եկած դիտողությունները և լրամշակեն նախագիծը:175

174 FO 424/ 123, No 126, p. 176.
175 FO 424 / 123, No 151, pp. 203-205.

Մի քանի օր անց Դաֆֆերինի և Նովիկովի միջև տեղի ունեցած մասնավոր զրույցի ընթացքում վերջինս մտավախություն էր հայտնում, որ հայկական բարենորոգումների շուրջ կայացած դեսպանների հանդիպումների մասին լուրերի տարածումը կարող է մեծ հուզում առաջացնել հայերի շրջանում և ստեղծել նույնիսկ համընդհանուր ապստամբության վտանգ: Նման իրադարձության պարագայում, - շարունակում էր ռուս

դեսպանը, - ցանկանում ենք, թե ոչ, մենք պետք է միջամտենք մեր բանակներով՝ կարգ ու կանոնը վերականգնելու և առիթից օգտվող մահմեդական իշխանությունների կողմից քրիստոնյա բնակչությունը բնաջնջելու փորձերը կանխելու համար: Դաֆֆերինը չէր հավատում, որ դեպքերը կարող են այդ աստիճանի սրվել, վկայակոչելով հայ պատրիարքի հավաստիացումներն այն մասին, որ հայ համայնքը հանդես է բերելու «զուսպ և կարգապահ կեցվածք»:176

Շուրջ մեկ ամիս բրիտանական դեսպանը փորձում էր հանդիպում ունենալ Աբդուլ Համիդի հետ՝ կոմիսար նշանակելու վերաբերյալ պատասխան ստանալու ակնկալիքով, սակայն սուլթանն այդպես էլ չընդունեց նրան: Ի վերջո, նոյեմբերի 9-ին Դաֆֆերինը գրավոր պատասխան է ստանում սուլթանից, ուր ոչ մի ակնարկ չկար կոմիսար նշանակելու նրա մտադրության մասին: Նշվում էր, որ նախարարները մշակել և սուլթանի քննարկմանն էին ներկայացրել բարենորոգումների ծրագիր, որը ներկայումս վերադարձվել է Բարձր Դռանը՝ վերամշակելու և մի քանի օրից փաստաթուղթը կրկին սուլթանին ներկայացնելու համար: Սուլթանը դեսպանին հավաստիացնում էր, որ մեծ լրջությամբ է մոտենում հարցին, քանի որ մտահոգված է երկրի ապագայով և իր հպատակների շահերով:177

1881 թ. նոյեմբերի կեսերից բրիտանական դիվանագիտությանը զբաղեցնում է Զեյթունի խնդիրը: Նոյեմբերի 15-ին Դաֆֆերինը հանդիպում է Սաիդ փաշայի հետ, հայտնում իր կառավարության մտահոգությունը Զեյթունում ստեղծված իրավիճակի կապակցությամբ և ներկայացնում հարցին առնչվող հյուպատոս Վիլսոնի հուշագիրը: Սաիդ փաշան դեսպանին խոստանում է պաշտոնից ազատել Մարաշի նահանգապետին, նրա փոխարեն նշանակել շրջանի զինվորական հրամանատարին, ինչպես նաև ձեռնարկել միջոցառումներ, որոնք կարող են խաղաղեցնել ստեղծված իրավիճակը:178 Վիլսոնի

176 FO 424 / 123, No 152, p. 205.
177 FO 424 / 123, No 180, pp. 239-240.
178 FO 424 / 123, No 195, p. 248.

հուշագրում նշվում էր, որ 1879 թ. ի վեր սուլթանական կառավարությունն այդպես էլ համապատասխան բարեփոխումներ չիրագործեց շրջանում: Ներկայումս, ըստ հյուպատոսի, «Զեյթունի ժողովուրդը ձևավորել է կիսաբարբարոս և բացարձակ անօրեն, մի քանի մասի բաժանված համայնք, որոնք շարունակ վիճաբանում և կռվում են միմյանց հետ»: Վիլսոնի համոզմամբ, անհրաժեշտ է վերականգնել կարգ ու կանոնը Զեյթունում, քանի որ այն հանդիսանում է «հայ քաղաքական խռովության կենտրոնը», որտեղից հուզումը կարող է տարածվել այլ շրջանների վրա: Նա ներկայացնում է 12 կետից բաղկացած մի ծրագիր, որի փոխադարձ կատարումը կարող էր փրկել իրավիճակը:179

Նոյեմբերի 22-ին Նովիկովը և Դաֆֆերինը, վերջինիս առաջարկով, հանդիպում ունեցան արտգործնախարար Ասսիմ փաշայի հետ: Նրանք հայտնեցին տերությունների կառավարությունների մտահոգությունը կայսրության հայ բնակչության վատթար վիճակի կապակցությամբ, պահանջելով շուտափույթ կերպով իրագործել սուլթանի կողմից խոստացված գերագույն կոմիսարի նշանակումը: Նախարարը խոստացավ փոխանցել դեսպանների պահանջը սուլթանին:180

Այդպես էլ սուլթանից պատասխան չստանալով, դեկտեմբերի 3-ին Դաֆֆերինը նոր հայտագիր է հանձնում արտգործնախարարին, ուր մանրամասնորեն ներկայացնում է բրիտանական կառավարության դիրքորոշումը և դեսպանության խորհուրդներն ու առաջարկները Հայկական հարցի կարգավորման, բարենորոգումների իրագործման և գերագույն կոմիսար նշանակելու ուղղությամբ: Սակայն, նշվում էր փաստաթղթում, Բարձր Դռան կողմից, բացի տրված բազմաթիվ խոստումներից, այդպես էլ ոչինչ չարվեց, իսկ քրիստոնյա բնակչության վիճակն ավելի վատթարացավ: Դաֆֆերինը նախարարին խնդրում էր հանդիպում կազմակերպել սուլթանի հետ՝ Հայկական հարցի վերաբերյալ վերջինիս խոստումները հիշեցնելու նպատակով:181 Ներկայացնելով Գրենվիլին հայտագրի պատճենը, Դաֆֆերինը նշում էր, որ իր վրա դրված խնդրի դժվարությունը կայանում է նրանում, որ եվրոպական կառավարությունները հանդես են բերում բացարձակ անտարբերություն Փոքր Ասիայում տիրող իրավիճակի հանդեպ: Թեև տերությունների ներկայացուցիչները

179 FO 424 / 123, No 195 / 1, pp. 248-249.
180 FO 424 / 123, No 203, p. 259.
181 FO 424 / 123, No 213 / 1, pp. 263-264.

Կոստանդնուպոլսում, շարունակում էր բրիտանական դեսպանը, երբեք չեն հրաժարվել իր առաջարկներից և, անկասկած, ներկայացրել են սուլթանական կառավարությանը բոլորի կողմից համաձայնեցված հայտարարությունները, սակայն Բարձր Դուռը գիտակցում է, որ նրանցից ոչ մեկը լրջորեն չի մոտենում խնդրին:182

Դեկտեմբերի 6-ին Դաֆֆերինը գաղտնի տեղեկություն է ստանում փոխարտգործնախարար Արթին էֆենդիից այն մասին, որ Աբդուլ Համիդը մտադիր չէ որևէ քայլ ձեռնարկել հայկական բարենորոգումների իրագործման ուղղությամբ, մինչև չպարզի գերմանական կառավարության դիրքորոշումն այդ հարցում: Սուլթանը հատուկ այդ նպատակով Բեռլին էր ուղարկել իր ամենավստահելի մարդկանցից մեկին՝ քարտուղար Ռեշիդ փաշային: Նկատի առնելով այդ հանգամանքը, դեսպանն առաջարկում էր Գրենվիլին բարենորոգումների իրագործման և գերագույն կոմիսարի նշանակման հարցերում ճնշում գործադրել սուլթանական կառավարության վրա՝ Գերմանիայի միջոցով:183 Անմիջապես հաջորդ օրը նախարարը հանձնարարում է դեսպան Էմփթիլին՝ օգտագործել պահը և ապահովել գերմանական կառավարության համագործակցությունը Հայկական հարցում:184 Դեսպանը խնդրում է արտգործնախարար կոմս Հացֆելդին,185 հնարավորության դեպքում զրուցել այդ թեմայով Աբդուլ Համիդի անունից կայսր Վիլհելմին Նիշանի Իմթիյազ շքանշան հանձնելու նպատակով Բեռլին ժամանած Ռեշիդ փաշայի և Ալի Նիզամիի հետ: Դեկտեմբերի 8-ին Հացֆելդը հայտնեց Էմփթիլին, որ տեղի ունեցած զրույցի ընթացքում ոչ մեկը, ոչ մյուսը հստակ պատկերացում չդերսևորեցին Հայկական հարցի կապակցությամբ: Ռեշիդն ասաց, որ շուտով սուլթանը նշանակելու է Մուխթար փաշային գերագույն կոմիսար, սակայն Ալի Նիզամին, ընդհատելով նրան նշեց, որ ոչինչ տեղի չի ունենալու, քանի դեռ բրիտանական կառավարությունը շարունակում է ճնշում գործադրել այդ հարցում: Հացֆելդը նույնպես իր համոզվածությունն էր հայտնում, որ տերությունների ճնշման տակ սուլթանը

182 FO 424 / 123, No 213, pp. 262-263.
183 FO 424 / 123, No 215, pp. 264-265.
184 FO 424 / 123, No 207, p. 260.
185 Հացֆելդ-Վիլդենբուրգ (Hatzfeldt-Wildenburg) Փաուլ Մելխիոր - կոմս, գերմանացի դիվանագետ: 1879-1881 թթ.՝ դեսպան Թուրքիայում, 1881-1885 թթ.՝ արտգործնախարար, 1885-1901 թթ.՝ դեսպան Մեծ Բրիտանիայում:

երբեք զիջումների չի գնա: Իր կարծիքով, նրան պետք է ժամանակ տալ՝ բարենորոգումների և կոմիսարի նշանակման հարցում ինքնուրույն որոշում ընդունելու համար:186 Նույն կարծիքը դեկտեմբերի 19-ին հայտնում էր դեսպանին Բիսմարկը: Կիսելով բրիտանական կառավարության ցանկությունը՝ տեսնել Թուրքական կայսրությունը բարեկեցիկ և առաջադեմ, նա միաժամանակ կասկած էր հայտնում, որ ներկայումս շարունակ բարենորոգումներ պահանջելով սուլթանից հնարավոր է հասնել ինչ-որ մի բանի, քանի որ արտաքին ճնշումը միմիայն զայրույթ է առաջացնում նրա մոտ և, հետևաբար՝ գործընթացի ձգձգում: Ըստ Բիսմարկի, անհրաժեշտ է ժամանակ տալ սուլթանին՝ մեծ տերությունների կողմից իրեն արդեն իսկ ներկայացված խորհուրդներին անդրադառնալու համար:187

Սակայն բրիտանական դիվանագիտությունը չի հրաժարվում Հայկական հարցում Գերմանիայի հետ համագործակցության գաղափարից: 1882 թ. հունվարի 7-ին Բիսմարկի որդի Հերբերտը188, որն այդ ժամանակ աշխատում էր Լոնդոնի գերմանական դեսպանությունում, տեղեկացնում էր հորը Հայկական հարցի շուրջ Գրենվիլի հետ տեղի ունեցած զրույցի մասին: Վերջինս համոզված էր, որ եթե սուլթանական կառավարությունը վարչական բարեփոխումներ չիրագործի հայերով բնակեցված շրջաններում, ապա Օսմանյան կայսրության՝ հանկարծակի և վաղաժամ՝ անկումը անխուսափելի է: Նա առաջարկում էր գերմանական կառավարության հետ համագործակցաբար, հնարավոր երկար ժամկետով, երկարաձգել այդ իրադարձությունը՝ ելնելով սուլթանի շահերից և Թուրքիայի հզորացման անհրաժեշտությունից: «Մեր պահանջները Հայաստանի համար, - շարունակում էր Գրենվիլը, - իրականում շատ փոքր են: Մենք անկասկած ոչ մի տեսակի ինքնավարություն չենք ցանկանում և դիմել ենք միմիայն գերագույն կոմիսար նշանակելու հարցով, որը պետք է ուսումնասիրի այնտեղի իրավիճակը և վերացնի բոլոր աղաղակող խախտումները...Այսպիսով, ոչինչ արված չէ և մենք վախենում ենք, որ ռուսները կարող են օգտագործել Հայաստանի քրիստոնյաների շրջանում տարածված անբավարարվածությունը՝ իրենց սեփական նպատակների համար»:

186 FO 424 / 123, No 218, p. 266.
187 FO 424 / 123, No 235, p. 286.
188 Բիսմարկ (Bismarck) Հերբերտ - կոմս, գերմանացի դիվանագետ, Օտտո Բիսմարկի որդին: 1886-1890 թթ.՝ արտաքին գործերի նախարար:

Այդ կապակցությամբ Բիսմարկն ասաց, որ անկասկած սուլթանը «անհաղթահարելի վախ» ունի «բարենորոգում» բառի հանդեպ, որը ներարկվում է նրան իր շրջապատի կողմից, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ Հայաստանի բարենորոգումներից հետո

կարող է գալ Փոքր Ասիայի մնացած մասի, Մակեդոնիայի և Ալբանիայի հերթը, ինչը կնշանակի իր հեղինակության և բացարձակ իշխանության կորուստ:

Չլսելու ձևացնելով Բիսմարկի ասածը, Գրենվիլը շարունակում էր. «Թեև Ձեր հայրը պնդում է, որ Գերմանիան ուղղակի շահեր չունի արևելյան հարցերում, կասկածից վեր է այն փաստը, որ ներկայումս Գերմանիան մեծագույն ազդեցություն և հեղինակություն է վայելում Բոսֆորում: Եթե նա միանա Անգլիային սուլթանի հանդեպ նույնիսկ շատ չնչին ճնշում գործադրելու մեջ, սուլթանն անկասկած որոշում կընդունի գերագույն կոմիսար նշանակելու հարցում»:

Բիսմարկը պատասխանում է, թե իր հայրը հավատացած է, որ ներկայումս Բրիտանիայի շահերը պահանջում են խուսափել սուլթանի հանդեպ որևէ ճնշում գործադրելուց, քանի որ այն կհեռացնի իրենից և ավելի կթուլացնի Թուրքիան: Եթե սուլթանը քրիստոնյա տերությունների ճնշմանը ենթարկվելու հետևանքով գահընկեց արվի կամ սպանվի իր մոլեռանդ շրջապատի կողմից, բրիտանական կառավարության համար Օսմանյան կայսրության անցանկալի անկումը տեղի կունենա շատ ավելի շուտ:189

Գրենվիլի հանձնարարությամբ Վիեննայում Մեծ Բրիտանիայի դեսպան Հենրի Էլիոտը 1881 թ. դեկտեմբերի 27-ին հանդիպում է ունենում Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար կոմս Գուստավ Կալնոկիի190 հետ՝ Հայկական հարցում ավստրո-հունգարական կառավարության դիրքորոշումը պարզելու նպատակով: Նրա խոսքերով, Ավստրո-Հունգարիան որևէ հետաքրքրություն չունի ներգրավված լինելու այդ խնդրում, դեմ է Բարձր Դռան հանդեպ ուժի և ճնշման գործադրելուն և ամբողջությամբ կիսում է գերմանական կառավարության քաղաքականությունը: Ինչ վերաբերում է Ռուսաստանին,

189 German Diplomatic Documents. 1871-1914. Vol. 1. London, 1928, pp. 157-158.
190 Կալնոկի (Kalnoky) Գուստավ Զիգմունդ (1832-1898) - կոմս, ավստրո-հունգարացի պետական գործիչ և դիվանագետ: 1871-1874 թթ..՝ հավատարմատար Վատիկանում, 1874-1880 թթ.՝ հավատարմատար Դանիայում, 1880-1881 թթ.՝ դեսպան Ռուսաստանում, 1881-1895 թթ.՝ արտաքին գործերի նախարար:

շարունակում էր նախարարը, ապա նրանից «ջերմ աջակցություն» ակնկալել պետք չէ, քանի որ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը փաստորեն ուղղված է նրա դեմ, իսկ հայ բնակչության վիճակի բարելավման նման տարբերակը չի համապատասխանում իր շահերին: Կալնոկիի համոզմամբ, Հայաստանի բնակչության վիճակի բարելավումը կախում ունի միմիայն կարող նահանգապետերի նշանակումից:191

Այդ ընթացքում Դաֆֆերինը շարունակում էր իր հանդիպումները Կոստանդնուպոլսում: Դեկտեմբերի 25-ին թուրք արտգործնախարարը հավաստիացնում էր դեսպանին, որ սուլթանական կառավարությունը, վերջերս զբաղված լինելով հետպատերազմյան սահմանային և ֆինանսական խնդիրներով, ժամանակ չէր գտնում զբաղվելու Հայկական հարցով, սակայն ներկայումս պատրաստ է «կրկնապատկել իր եռանդը»՝ բարենորոգումների իրականացման գործում: Միաժամանակ նա ընդգծում էր, որ սուլթանը երբևիցե խոստում չի տվել գերագույն կոմիսարի անհապաղ նշանակման վերաբերյալ, քանի որ առաջինը՝ կայսրության պատմության ընթացքում նման

նշանակումներն իրենց չեն արդարացրել և երկրորդը՝ ձմեռը թույլ չի տա նրան տեղաշարժվել Հայաստանում: Ըստ նախարարի, սուլթանը որոշել է հրապարակել կոմիսարի անունը միայն այն ժամանակ, երբ որ պատշաճ կերպով մշակված կլինի բարենորոգումների ծրագիրը: Դաֆֆերինն իր «խորը հիասթափությունն» է արտահայտում այդ տեղեկությունների կապակցությամբ, նշելով, որ սուլթանն իրեն խոստացել էր նշանակումը կատարել մեկ ամսում, մինչդեռ այդ օրվանից անցել է արդեն շուրջ վեց ամիս, որոնց ընթացքում մարդասպանություններն ու կամայականությունները շարունակվել են:192

Չորս օր անց, սուլթանի հանձնարարությամբ, բրիտանական դեսպանին այցելում է իր առաջին սենեկապետ Մյունիր բեյը: Նա ամբողջապես կրկնում է Ասսիմ փաշայի ասածները, ավելացնելով, որ սուլթանը մտադրություն ունի ստեղծել կայսրության հեղինակավոր պետական պաշտոնյաներից բաղկացած Բարենորոգումների Գործադիր Խորհուրդ, որի որոշումները տեղերում պետք է իրագործեն կոմիսարը և նրա տեղակալները: Միաժամանակ Մյունիր բեյը Դաֆֆերինին զգուշորեն փոխանցում է բարենորոգումների ծրագիրը ոչ միայն հայերով բնակեցված շրջաններում, այլև Անատոլիայի բոլոր վիլայեթներում կիրառելու

191 FO 424 / 132, No 6, p. 9.
192 FO 424 / 132, No 12, pp. 11-12.

մասին սուլթանի կարծիքը: Դեսպանը պատասխանում է, որ չի կարող չհամաձայնել սուլթանի հետ կայսրության բոլոր հպատակների համար բարեկեցիկ կյանքի հավասար պայմաններ ապահովելու հարցում, սակայն խոսքն այստեղ գնում է արևելյան վիլայեթների հայ բնակչության ծանր վիճակի մասին, ինչն իր արտահայտությունն է գտել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածում:

Այնուհետև Մյունիր բեյն անդրադառնում է թուրք-բրիտանական հարաբերություններին, նշելով, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը ոչ բարեկամական և նույնիսկ թշնամական վերաբերմունք է հանդես բերում սուլթանի և Բարձր Դռան հանդեպ՝ Հունական, Մոնտենեգրական և Եգիպտական հարցերում: Ինչ վերաբերում է Հայկական հարցին, սուլթանական կառավարությանն անհանգստացնում է այն հանգամանքը, որ Մեծ Բրիտանիան միակ տերությունն է, որը ճնշում է գործադրում սուլթանի և Բարձր Դռան վրա, շտապեցնելով և ժամանակ չտալով նրանց լրջորեն զբաղվելու բարենորոգումների իրագործմամբ:

Դաֆֆերինը եզրակացնում է, որ, որդեգրելով ձգձգումների քաղաքականություն բարենորոգումների հարցում, օսմանյան կառավարությունը նպատակադրվել է խափանել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված «բարյացակամ մտադրությունները» հայերի վիճակը բարելավելու ուղղությամբ:193

Հունվարի 8-ին Գրենվիլը զրույց է ունենում Մեծ Բրիտանիայում Օսմանյան կայսրության դեսպանի հետ, որի ընթացքում բարձրացնում է Հայաստանում բարենորոգումների իրագործման խնդիրը: Նա նշում է. քանի որ սուլթանն ու իր կառավարությունը վերջերս զբաղված էին Հունաստանի և Մոնտենեգրոյի հետ սահմանային հարցերի

բանակցություններով, բրիտանական կառավարությունը խուսափում էր Հայկական հարցում որևիցե ճնշում գործադրելուց: Սակայն ներկայումս, շարունակում էր նախարարը, երբ Բարձր Դուռը համեմատաբար ավելի ազատ է, բրիտանական կառավարությունը պահանջում է իրագործել Հայաստանի համար նախատեսված բարենորոգումները, որոնք կենսական նշանակություն ունեն կայսրության համար, միաժամանակ ընդգծելով, որ ամենևին չի հավակնում սահմանափակել սուլթանի «ազատ նախաձեռնությունը» և պարտադրել հատուկ բարենորոգումների ծրագիր: Ըստ Գրենվիլի, բրիտանական կառավարությունն առաջարկում է միայն, որպես նախնական քայլ, լայն իշխանությամբ

193 Նույն տեղում, էջ 12-14:

օժտված հատուկ կոմիսար նշանակել այդ շրջանների համար: Նախարարն իր զարմանքն ու հիասթափությունն է արտահայտում թուրք դեսպանին այն բանի համար, որ սուլթանի կողմից Մեծ Բրիտանիայի դեսպանին մի քանի ամիս առաջ խոստացված այդ առաջարկը դեռևս կատարված չէ:194

Վերջապես հունվարի 14-ին Աբդուլ Համիդն ընդունում է Դաֆֆերինին: Զրույցի ընթացքում նա նշում է, որ Բեռլինի պայմանագրի պայմաններով ինքը պարտավորվեց ստեղծել ինքնավար մարզեր և զիջել տարածքներ: Ինչքան էլ ցավոտ էին այդ որոշումները կայսրության համար, շարունակում է սուլթանը, նրանք պարզ էին, որոշակի և հեշտությամբ իրականանալի, ինչը, սակայն, չի կարելի ասել պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված արևելյան շրջանների վարչական վերակառուցման մասին: Ըստ սուլթանի, հարցը պետք է լրջորեն մշակվի և ապա նոր կյանքի կոչվի, քանի որ սխալ ընդունված որոշումը կարող է աղետալի և անուղղելի դառնալ: Նա խոստովանում է, որ իրոք խոստացել էր դեսպանին մեկ ամսվա ընթացքում հատուկ պաշտոնյա նշանակել այդ շրջանների համար, սակայն մինչև օրս չի կարողացել թեկնածու ընտրել: Սուլթանը հավաստիացնում է Դաֆֆերինին, որ ներկայումս իր նախարարները մշակում են բարենորոգումների ծրագիր, որի հաստատումից հետո գերագույն կոմիսար է նշանակելու արևելյան շրջանների համար: Դաֆֆերինը հիշեցնում է Աբդուլ Համիդին, որ Մեծ Բրիտանիայի հասարակական կարծիքը և խորհրդարանը մեծապես հետաքրքրված են կայսրության քրիստոնյա և, մասնավորապես, հայ հպատակների դրությամբ և բրիտանական կառավարությունից հստակ ժամկետներ են պահանջում բարենորոգումների իրագործման վերաբերյալ: Գոյություն ունեցող անորոշությունն, ըստ դեսպանի, կարող է իր ազդեցությունը գործել երկու երկրների հարաբերությունների վրա:

Լսելով այդ, սուլթանը բարկացած պատասխանում է. «Ես, այս երկրի տիրակալս ասում եմ Ձեզ, որ մտադրված եմ իրագործել այն ծրագիրը, որն իմ կառավարությունը փոխանցել էր Եվրոպային իր հոկտեմբերի 3-ի հայտագրում: Թող անգլիական կառավարությունը համբերություն ունենա ու վստահություն ցուցաբերի իմ նկատմամբ...»:

Փոխանցելով զրույցի բովանդակությունը Գրենվիլին, Դաֆֆերինը առաջարկում էր երկուսից երեք ամիս ժամանակ տալ թուրքական կառավարությանն՝ իր իրական

194 FO 424 / 132, No 7, pp. 9-10.

մտադրություններն այդ հարցում արտահայտելու համար: Սակայն եթե մինչև գարուն գոհացուցիչ արդյունքներ չարձանագրվեն, շարունակում էր դեսպանը, բրիտանական կառավարությունը պետք է գործուն միջոցների դիմի՝ պայմանագրով նախատեսված հայ և քրիստոնյա հպատակների անվտանգությունն ու պաշտպանությունն ապահովելու պարտականությունները կատարելու համար:195

Միաժամանակ Դաֆֆերինն աշխատում էր Նովիկովի հետ Վիլսոնի և Տրոտտերի կողմից պատրաստված բարենորոգումների նախագծի վրա: Փետրվարի 9-ին նրանց կողմից վերամշակված և խմբագրված նախագիծը հաստատվում է տերությունների ներկայացուցիչների հերթական համաժողովում: Դաֆֆերինի կարծիքով, թեև բարենորոգումների այդ նախագիծը արմատական բնույթ չի կրում, այդուհանդերձ, նրա իրագործման դեպքում բնակչության վիճակը զգալիորեն կբարելավվի: Խոսքը գնում էր, ըստ դեսպանի, կյանքի և ունեցվածքի անվտանգության ապահովման, իրավական համակարգի բարեկարգման, տնտեսության զարգացման մասին:196

Դեսպանների հավանությունը ստանալուն պես նախագիծը ներկայացվում է տերությունների կառավարությունների քննարկմանը: Սակայն փետրվար-մարտ ամիսների ընթացքում պատասխան չստանալով ոչ Բարձր Դռնից, ոչ էլ տերություններից, բրիտանական դիվանագիտությունը կրկին անցնում է գործուն աշխատանքի: Մարտի վերջին Դաֆֆերինը դիմում է իր գործընկերներին՝ համատեղ գործողություններ ծավալել և ներկայացնել բարենորոգումների նախագիծը սուլթանական կառավարությանը: Բայց տերությունների ներկայացուցիչները և, մասնավորապես, Ավստրո-Հունգարիայի ու Գերմանիայի դեսպանները պատասխանում են, որ դեռևս չեն ստացել իրենց կառավարությունների համաձայնությունն այդ հարցի առնչությամբ:197

Հայկական հարցը քննարկելու նպատակով ապրիլի 21-ին Գրենվիլը կրկին իր մոտ է հրավիրում Հերբերտ Բիսմարկին: Նա նշում է, որ բրիտանական կառավարությունը հնարավորին չափ ժամանակ էր տվել սուլթանին Հայաստանում բարենորոգումներ իրագործելու հարցում, սակայն վերջինս այդպես էլ ոչ մի նախաձեռնություն հանդես չբերեց:

---

195 FO 424 / 132, No 22, pp. 39-41.
196 FO 424 / 132, No 37, pp. 50-51.
197 FO 424 / 132, No 75, pp. 101-102.

Սուլթանը նույնիսկ չկատարեց այդ շրջանների համար մահմեդական նահանգապետ նշանակելու իր խոստումը: Բրիտանական կառավարությունը շարունակում է մնալ այն կարծիքին, ասում է Գրենվիլը, որ Բեռլինի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրագործումը անհրաժեշտ է առաջին հերթին Թուրքական կայսրությունը փլուզումից փրկելու համար: Նախարարը կարևոր է համարում գերմանական կառավարության և, մասնավորապես, Կոստանդնուպոլսում իր ներկայացուցչի աջակցությունը:

Բիսմարկը պատասխանում է, թե գերմանական կառավարությունը կարող է միայն փորձել համոզել սուլթանին, որ Անգլիայի խորհուրդներն այս հարցում նպաստում են Թուրքիայի իրական շահերին: Ճիշտ է, շարունակում էր Բիսմարկը, որ Գերմանիան որոշակի ազդեցություն ունի Կոստանդնուպոլսում, ինչը օգտակար է «ընդհանուր խաղաղության» պահպանման համար, սակայն գերմանական կառավարությունը միաժամանակ գիտակցում է, թե որքան դյուրին և անցանկալի կլիներ այն կորցնել ներկա պայմաններում:198

Մայիսի 2-ին Դաֆֆերինը տեղեկացնում էր Գրենվիլին, որ տեղական մամուլի հաղորդագրությունների համաձայն, Սաիդ փաշան նշանակվել է Ասիական և Եվրոպական Թուրքիայում իրագործվելիք բարենորոգումների նախարար: Դեսպանի կարծիքով, թեև Սաիդ փաշան երկար տարիներ զբաղեցրել է Վառնայի, Լարիսսայի, Արշիպելագի (հունական կղզիների) նահանգապետի, մեծ վեզիրի պաշտոնները, 1880 թ. աշնանը մասնակցել է Փոքր Ասիա ուղարկված Բեքիր փաշայի հանձնաժողովի աշխատանքներին, մտավախություն կա, որ սուլթանի մտադրությունները բարենորոգումների իրագործման ուղղությամբ իրատես և լուրջ չեն, քանի որ ոչ իր բնավորության գծերով, ոչ էլ իր կարողություններով Սաիդ փաշան չի համապատասխանում այդ գործի համար:199

Այդ ընթացքում բրիտանական հյուպատոսները շարունակում էին տեղեկություններ հաղորդել դեսպանին Արևմտյան Հայաստանի բնակչության վատթարացող վիճակի, ինչպես նաև ծավալվող ազգային շարժման մասին: Ապրիլի 29-ին Տրոտտերը Դաֆֆերինին գրում էր, որ Բեռլինի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական կառավարությունն ավելի թշնամացավ սահմանամերձ շրջաններում բնակվող հայ քրիստոնյաների հետ, քանի որ դրա հետևանքով եվրոպական տերությունները հնարավորություն ստացան միջամտելու

198 FO 424 / 132, No 81, p. 115.
199 FO 424 / 132, No 89, p. 123.

կայսրության ներքին գործերին, իսկ քրիստոնյաները բացեիբաց սկսեցին աջակցություն հայցել նրանցից:200 Հունիսի 5-ին Էվերետը գրում էր Տրոտտերին, որ հայ տեղեկատուից ստացված տվյալների համաձայն, Էրզրումի, Մուշի և Վանի հայերի շրջանում ծավալվող շարժումը կրում է նախապատրաստական բնույթ, նպատակ ունենալով առաջին հերթին հայրենասիրության զգացում արթնացնել ժողովրդի մեջ: Ըստ նույն աղբյուրի, շարժումն այստեղ տարածվում է Ռուսահայաստանից, գաղտնի կերպով աջակցություն ստանալով ռուսական կառավարության կողմից, Ռուսաստանի միջոցով թուրքական լծից ազատագրվելու գաղափարը բավականին լայն տարածում է ստացել արևմտահայության շրջանում, այդ խնդրի հիմնական պատասխանատու գործակալն է Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս Կամսարականը: Այնուհետև նշվում էր, որ Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս գնդապետ Դեննետը քարոզում է հայերին, որ Անգլիան ոչնչով չի կարող օգտակար լինել նրանց, հայ ժողովրդին աջակցություն կարող է ցուցաբերել միայն Ռուսաստանը:201

1882 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին, որպես առիթ օգտագործելով եգիպտական ժողովրդի ազգային շարժումը և դրա հետևանքով եվրոպական ներդրումների ու քաղաքացիների պաշտպանության անհրաժեշտությունը, բրիտանական կառավարությունը ամբողջությամբ գրավեց Եգիպտոսը: Չնականորեն մնալով Օսմանյան կայսրության կազմում, Եգիպտոսը փաստորեն վերածվեց Մեծ Բրիտանիայի գաղութի: Այդ ընթացքում, զբաղված լինելով եգիպտական խնդրով և խուսափելով սուլթանական կառավարության վրա ավելորդ ճնշում գործադրելուց, բրիտանական դիվանագիտությունը ամբողջապես մոռացության էր մատնել Հայկական հարցը:

Նոյեմբերի 13-ին Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի ժամանակավոր հավատարմատար Ուայնդհեմը Գրենվիլին տեղեկացնում էր, որ վերջապես սուլթանի որոշմամբ ստեղծվել են երեք հանձնաժողովներ, որոնք պետք է մշակեն համապատասխանաբար ֆինանսական, իրավական և վարչական բարենորոգումների ծրագրեր: Առաջին հանձնաժողովի ղեկավար էր նշանակվել Պետական Խորհրդի նախագահ Ակիֆ փաշան, երկրորդինը՝ Շեյխ ուլ Իսլամը, երրորդինը՝ հանրային աշխատանքի

_____
200 FO 424 / 132, No 88 / 3, pp. 121-122.
201 FO 424 / 132, No 101 / 1, p. 134.

նախարար Հասան Ֆեհմի փաշան: Ըստ բրիտանական դիվանագետի տեղեկությունների, առաջին և երրորդ հանձնաժողովների կազմում ընդգրկված էին նաև Օսմանյան կայսրությունում ծառայության մեջ գտնվող երեք գերմանացի և մեկ ֆրանսիացի պաշտոնյաներ: Հանձնաժողովները ներկայացնելու են իրենց աշխատանքի արդյունքները նախարարների խորհրդին, որից հետո այն հաստատվելու է սուլթանի կողմից:202

Համաձայն Էրզրումում բրիտանական հյուպատոսից ստացված տեղեկությունների, դեկտեմբերի 8-ին թուրք իշխանությունների կողմից այստեղ հայտնաբերվել է հայ հեղափոխական շարժում, որի արդյունքում քաղաք մտցված զորքը ձերբակալել է շուրջ 40 հոգի (խոսքը գնում է ոստիկանության կողմից «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպության հայտնաբերման մասին - Ա.Կ.): Ըստ հյուպատոսի, ձերբակալությունները դեռևս շարունակվում են, քանի որ կասկածի տակ են գտնվում ավելի քան 700 հայեր:203 Լուրը ստանալուն պես Ուայնդհեմն անմիջապես այցելում է մեծ վեզիրին: Վերջինս հաստատում է դեսպանության տեղեկատվությունը, նշելով, որ Էրզրումում տեղի են ունեցել «որոշ թշնամական ոտնձգություններ», որոնք քաջալերվում են Ռուսաստանի կողմից: Հավատարմատարը նկատում է, որ այնքան ժամանակ, մինչև ժողովրդի դրության բարելավում տեղի չունենա, նման խռովարար բնույթ կրող շարժումները միշտ սպասելի են: Այդ է պատճառը, շարունակում է Ուայնդհեմը, որ բրիտանական կառավարությունը, չհետապնդելով որևէ շահ և անկեղծորեն ցանկանալով կայսրության ընդհանուր վիճակը բարեկարգ, իսկ բնակչության վիճակը բարելավված տեսնել, շարունակաբար պնդում էր բարենորոգումների իրականացման անհրաժեշտության վրա, սակայն սուլթանական կառավարությունն ուշադրություն չէր դարձնում այդ առաջարկներին: Սաիդ փաշան պատասխանում է, թե ամենևին չի կասկածում բրիտանական կառավարության անկեղծությանը, սակայն գոյություն ունեցող «ներքին խոչընդոտը» թույլ չի տվել կառավարությանն իրագործելու անհրաժեշտ

բարենորոգումները: Հավատարմատարի կարծիքով, Սաիդ փաշան նկատի ուներ սուլթանական պալատի բացասական ազդեցությունը գործընթացի նկատմամբ:204

_____
202 FO 424 / 132, No 135, p. 213.
203 FO 424 / 132, No 143, p. 219.
204 FO 424 / 132, No 147, p. 200.

Դեկտեմբերի 29-ին Ուայնդհեմը այցելում է Ներսես պատրիարքին: Վերջինս վստահեցնում էր Մեծ Բրիտանիայի հավատարմատարին, որ արևմտահայությունը նախընտրում է մնալ սուլթանի հովանու տակ և ինքն անձամբ երբեք չի ցանկանա տեսնել թուրքահայերին Ռուսաստանի բռնատիրական իշխանության ներքո: Պատրիարքն ասում էր, թե ինքն ամեն ինչ անում էր, որպեսզի համոզեր ժողովուրդին՝ մնալ համբերատար ու խաղաղ և չտարվեր հեղափոխական գաղափարներով, սակայն ներկայումս խոսքը գնում է կյանքի և մահվան մասին, երբ արևմտահայության վիճակի համեմատ ռուսահայերի կյանքը թվում է բարեկեցիկ և ազատ:205 Պատրիարքը հերքում է Էրզրումում հեղափոխական շարժման գոյությունը, նշելով, որ իշխանությունների մոտ կասկած են առաջացրել հայերի շրջանում տարածվող Երուսաղեմի վանքի պարտքի համար դրամ հավաքելու կոչերը:206 1883 թ. հունվարի 12-ին Էրզրումում բրիտանական հյուպատոսը տեղեկացնում էր հավատարմատարին, որ Բարձր Դուռը հանձնարարել է վալի Մուստաֆա փաշային գործ չհարուցել բանտում գտնվող հայերի դեմ և որոշ ժամանակ անց ազատել նրանց:207

Ապրիլի 5-ին Գրենվիլը հանձնարարում է արձակուրդում գտնվող Դաֆֆերինին Կոստանդնուպոլիս վերադառնալուն պես սուլթանի առջև կրկին բարձրացնել Հայաստանում բարենորոգումների իրագործման հարցը:208 Դեսպանի հերթական հանդիպումը սուլթանի հետ տեղի է ունենում մայիսի 10-ին, ուր զրուցակիցները բավականին երկար քննարկում են Հայաստանում տիրող կացությունը և բարենորոգումների իրագործման հարցը: Աբդուլ Համիդն անհնարին էր համարում կայսրության հայ հպատակների համար հատուկ արտոնությունների շնորհումը: Դաֆֆերինը պատասխանում էր, որ խոսքը չի գնում արտոնյալ շրջան ստեղծելու, կամ էլ հատուկ իշխանություն հաստատելու մասին, ինչը կարող է թուլացնել սուլթանի հեղինակությունը, այլ՝ այնպիսի պայմանների ապահովման, որոնցից հավասարապես կօգտվեն ասիական շրջանների տարբեր ազգություններին և կրոնական դավանանքներին պատկանող կայսրության հպատակները: Դեսպանը վստահեցնում էր սուլթանին, որ հայերը հավատարիմ կմնան կայսրությանը, եթե թուրքական

_____
205 FO 424 / 140, No 1, p. 1.
206 FO 424 / 140, No 2, p. 2.
207 FO 424 / 140, No 9 / 1, p. 9.
208 FO 424 / 140, No 17, p. 15.

կառավարությունը նրանց համար ստեղծի կյանքի բավարար պայմաններ, իրենց ազգային ինքնությունը, պատմական և կրոնական ավանդույթները պահպանելու հնարավորություն: Հակառակ պարագայում, շարունակում էր Դաֆֆերինը, Բուլղարիայի, Ռումելիայի, Սերբիայի, Բոսնիայի և Եգիպտոսի օրինակով այստեղ կարող են տեղի ունենալ այնպիսի դեպքեր, որոնց կհետևի այդ շրջանների գրավումը Ռուսաստանի

կողմից: Դեսպանը հիշեցնում էր Աբդուլ Համիդին 1878 թ. անգլո-թուրքական կոնվենցիան, որի համաձայն Մեծ Բրիտանիան պարտավորվել է պաշտպանել սուլթանի ասիական տիրույթները օտարերկրյա հարձակումից՝ Բարձր Դռան կողմից այդ շրջաններում անհրաժեշտ բարենորոգումների իրագործման դիմաց: Նա զգուշացնում էր սուլթանին, որ նման պայմաններում Բրիտանիան չի կարող կատարել իր պարտավորությունները: Ըստ Դաֆֆերինի, այդ նախազգուշացումը չափազանց անհանգստացրեց սուլթանին, որը շեշտված ջերմությամբ պատասխանեց, թե չէ՞ որ արդեն իսկ զիջել է բրիտանական կառավարությանը «հիասքանչ Կիպրոսի նահանգը»: Այնուհետև Դաֆֆերինը կրկին բարձրացնում է կոմիսարի նշանակման խնդիրը, նշելով, որ կառավարման ձևի նույնիսկ թեթև փոփոխությունը կարող է դրականորեն անդրադառնալ իրավիճակի վրա:209

Մայիսի 16-ին Էմփթիլը Բեռլինից Գրենվիլին հաղորդում էր Բիսմարկի հետ Հայկական հարցի շուրջ կայացած իր զրույցի մասին: Վերջինս հավաստիացնում էր դեսպանին, որ գերմանական կառավարությունը պատրաստ է համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ միջազգային տարբեր խնդիրներում, ինչպես նաև Բեռլինի պայմանագրի իրականացման գործում, բացի Հայկական հարցից: Բիսմարկի կարծիքով, Բեռլինի պայմանագիրը «բավականին շատ արյուն է վերցրել սուլթանից», իսկ տերությունների մշտական ճնշումը նսեմացնում է նրա հեղինակությունը իր հպատակների առջև և թուլացնում նրա իշխանությունը: Բիսմարկը շարունակում էր, որ Եվրոպայում խաղաղությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որոշ ժամանակ խուսափել Արևելյան հարցի վերաբացումից և չբարդացնել իրավիճակը «մանր հարցերով»: Նրա կարծիքով, հայերի ազգային ձգտումները կարող են հրահրել ռուսական քաղաքականության ակտիվացումը և նույնիսկ Հայաստանի ազատագրումը Ռուսաստանի կողմից, իսկ այդ դեպքում ոչ մի տերություն նրան այդտեղից չի կարողանա դուրս բերել: Էմփթիլը փորձում է համոզել Բիսմարկին, որ բրիտանական

209 FO 424 / 140, No 31, pp. 25-26.



կառավարությունը ոչ թե ճնշում է գործադրում, այլ, ելնելով ինչպես Բարձր Դռան, այնպես էլ հայ բնակչության շահերից, ձգտում է բարելավել այդ շրջանների դրությունը, քանի որ ներկայիս ծանր վիճակը հայերին կարող է ստիպել դիմելու Ռուսաստանի օգնությանը: Բիսմարկը, նշելով որ ինքը ատում է մարդասիրությունը քաղաքականության մեջ և, մասնավորապես, երբ խոսքը գնում է այլ պետությունների հպատակների վերաբերյալ, պատասխանում է, թե արդեն իսկ հանձնարարել է իր դեսպանին չեզոք դիրք գրավել Հայկական հարցում:210

Վիեննայում Մեծ Բրիտանիայի դեսպան Հենրի Էլլիոտի հաղորդագրության համաձայն (22 մայիսի), ավստրո-հունգարական կառավարությունը Հայկական հարցում ամբողջությամբ հետևում էր Գերմանիային: Արտգործնախարար Կալնոկին դեսպանին ասում էր, որ չի ցանկանում չարաշահել սուլթանի բարյացակամ վերաբերմունքը և վտանգի տակ դնել Ավստրո-Հունգարիայի աճող հեղինակությունը Կոստանդնուպոլսում:211

Չնայած Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի որդեգրած քաղաքականությանը, բրիտանական դիվանագիտությունը շարունակեց հետապնդել Հայկական հարցը: Հունիսի

կեսերին հավատարմատար Ուայնդհեմը տեղեկություն է ստանում, որ մեծ վեզիրից, պետական խորհրդի նախագահից, ներքին գործերի և արդարադատության նախարարներից կազմված կոմիտեն բարենորոգումների իրականացման վերաբերյալ զեկուցագիր է ներկայացրել սուլթանին: Հավաստի աղբյուրից ստացված լուրերի համաձայն, փաստաթուղթը բաղկացած էր երեք հիմնական կետերից. 1/ մունիցիպալ պաշտոնյաները պետք է ընտրվեն բնակչության կողմից կայսրության ողջ տարածքում. 2/ կատարվելու է Փոքր Ասիայի վիլայեթների վերաբաժանում. յուրաքանչյուր վիլայեթ բաժանվելու է երեքի կամ չորսի. 3/ ոստիկանության և ժանդարմերիայի աշխատանքի բարեկարգում:212

Հունիսի 28-ին Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոսի պաշտոնակատար Այրեսը Ուայնդհեմին հաղորդում էր, որ բանտարկված հայերի մի մասի դեմ ներկայացվել է հակակառավարական դավադրության մեղադրանք, նրանք դատապարտվել են տարբեր

210 FO 424 / 140, No 28, pp. 23-24.
211 FO 424 / 140, No 36, pp. 29-30.
212 FO 424 / 140, No 55, p. 47.



ժամկետների ազատազրկման, իսկ 16 հոգի ազատվել են բանտից:213 Տեղեկացնելով այդ մասին Գրենվիլին, Ուայնդհեմն առաջարկում էր չմիջամտել գործին, բարենորոգումների ընդհանուր խնդրին չվնասելու համար:214

Օգոստոսի սկզբին, տեղեկություններ ստանալով «հայերի կողմից Վանում կազմակերպված անկարգությունների» մասին, Ուայնդհեմը Ներսես պատրիարքի մոտ է ուղարկում թարգման Մարինիչին: Վերջինս պարզել էր, որ տեղական իշխանությունները պարտադրել էին տեղացի 13 հայտնի հայերի՝ ստորագրել սուլթանին ուղղված դիմումի տակ, ուր ողջ հայ բնակչության կողմից նշվում էր իրենց ապահով կյանքի, մահմեդականների և քրիստոնյաների հավասար իրավունքների, ոստիկանության լավ աշխատանքի, բարենորոգումների աննպատակահարմարության մասին: Դիմումը այնուհետև տպագրվել էր Կոստանդնուպոլսի թերթերում, որի հետևանքով Վանի հայությունը մեծ աղմուկ էր բարձրացրել: Այս տեղեկությունները հետագայում (26 օգոստոսի) հաստատվեցին Այրեսի կողմից:215 Պատրիարքը համոզմունք էր հայտնել, որ իրավիճակը Հայաստանում սկսեց վատթարանալ այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիան ստանձնեց Հայկական հարցի լուծումը և բարենորոգումների իրագործումը: Հայտնելով այդ մասին Գրենվիլին, Ուայնդհեմն առաջարկում էր, որ ներկա պայմաններում, երբ ոչ միայն Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, այլև Ռուսաստանն ու Ֆրանսիան ոչ մի պարագայում չեն ցանկանում զայրացնել սուլթանին, բրիտանական կառավարությունը չի կարող անհրաժեշտ ճնշում գործադրել Բարձր Դռան վրա՝ կայսրության արևելյան շրջանների վիճակի բարելավման խնդրով:216

Փաստորեն վերջին անգամ Դաֆֆերինը բարձրացրեց բարենորոգումների իրագործման անհրաժեշտության հարցը նոյեմբերի վերջին, օգտվելով այն առիթից, որ մեծ վեզիրն ու արտգործնախարարը տեղեկացրեցին իրեն Ռուսաստանի գաղտնի ռազմական

պատրաստությունների մասին Թիֆլիսում: Քանի դեռ, նշում էր դեսպանը, կայսրության արևելյան շրջանների քրիստոնյա հպատակները «դառնում են սարսափելի

213 FO 424 / 140, No 58 / 1, pp. 48-49.
214 FO 424 / 140, No 60, pp. 49-50.
215 FO 424 / 140, No 68 / 1, p. 62.
216 FO 424 / 140, No 62, pp. 54-55.



անօրինականության և անարդարության զոհ, ինչը ամայացնում է իրենց գյուղերը, անանցանելի դարձնում իրենց ճանապարհները և քայքայում վիլայեթները, նրանց արդարացի անբավարարվածությունն ու դժգոհությունը հրապուրիչ պատրվակ է հանդիսանալու ռուսական հարձակման համար»:217

1884-1885 թթ. ընթացքում, զբաղված լինելով գաղութատիրական պայքարով Աֆրիկայում, Միջին Ասիայում և Հեռավոր Արևելքում, լիբերալների կառավարությունն ընդհանրապես մոռացության մատնեց Հայկական հարցը: Օգտագործելով այն իր գաղութատիրական նպատակների, մասնավորապես, Եգիպտոսի գրավման համար, բրիտանական դիվանագիտությունը Գլադստոնի օրոք այդպես էլ չկարողացավ ապահովել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված հայ բնակչության իրավիճակի բարելավումը և Հայաստանում բարենորոգումների իրագործումը եվրոպական տերությունների հսկողության ներքո: Սկզբնական շրջանի նրա ակտիվությունը համատեղ գործողությունների ուղղությամբ հետագայում չպաշտպանվեց մյուս տերությունների կողմից, իսկ մշտական հիշեցումները հարցի լուծման առնչությամբ ոչ միայն չէին նպաստում հայ բնակչության կյանքի բարելավմանը, այլ ընդհակառակը, ավելի էին սրում գոյություն ունեցող իրավիճակը:

3. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1885-1892 ԹԹ.

1885 թ. հունիսից մինչև 1886 թ. փետրվարը Մեծ Բրիտանիայում իշխանության ղեկին էր գտնվում Սոլսբերիի պահպանողական կառավարությունը: Այդ ընթացքում Սոլսբերին ստանձնել էր նաև արտգործնախարարի պաշտոնը, իսկ Կոստանդնուպոլսում դեսպանությունը ղեկավարում էր արտակարգ դեսպանորդ Ուիլյամ Ուայթը:
1880-ական թթ. կեսերին Բալկանները շեղեցին միջազգային դիվանագիտության ուշադրությունը Աֆրիկայում և Ասիայում ծավալված գաղութատիրական պայքարից: 1885 թ. սեպտեմբերի 18-ին Արևելյան Ռումելիայի մայրաքաղաք Պլովդիվում տեղի ունեցավ ապստամբություն, որի արդյունքում բուլղար ժողովուրդը ազատագրվեց թուրքական լծից և հռչակեց երկու Բուլղարիաների միացումը, ինչը հակասում էր Բեռլինի վեհաժողովի՝ երկիրը

217 FO 424 / 140, No 99, p. 89.



բաժանելու վերաբերյալ որոշմանը: Ռուսական կառավարությունը, որը Բեռլինում պայքարում էր տերությունների հետ միացյալ Բուլղարիայի ստեղծման համար, այս

անգամ ոչ միայն չողջունեց կատարված փաստը, այլև բողոք ներկայացրեց պայմանագրի խախտման կապակցությամբ: Բուլղարական ճգնաժամը հատուկ քննարկման առարկա դարձավ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած տերությունների դեսպանների համաժողովում: Օգտագործելով ռուս թագավոր Ալեքսանդր 3-ի նման՝ Ռուսաստանին ոչ հատուկ քաղաքականությունը, Սոլսբերին փորձեց վերածել Բուլղարիան հակառուսական հենադաշտի: Բրիտանական կառավարությունը համոզեց սուլթանին ոչ միայն զորք չուղարկել Ռումելիա, այլև համաձայնագիր ստորագրել բուլղար իշխանի հետ: Թուրք-բուլղարական պայմանագրի համաձայն, Բուլղարիան իրավաբանորեն մնում էր բաժանված, սակայն փաստացի կերպով դառնում էր միավորված, քանի որ պետք է ղեկավարվեր մեկ կառավարության կողմից:218

Օգտվելով այն առիթից, որ տերությունները քննարկում են Բուլղարական հարցը, Լոնդոնում գործող «Հայ հայրենասիրական ընկերության» նախագահ Կարապետ Հակոբյանը և բրիտանահայ համայնքի 38 ներկայացուցիչներ նոյեմբերի 4-ին դիմում են Սոլսբերիին՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կատարման ընթացքը դեսպանների համաժողովի ժամանակ քննարկելու խնդրանքով: Խնդրագրում հույս էր հայտնվում, որ բրիտանական կառավարությունը, որը մշտապես «խորը մտահոգություն և ջերմ համակրանք է հանդես բերել Հայաստանի քրիստոնյա բնակչության ծանր վիճակի հանդեպ», մյուս տերությունների հետ համատեղ կապահովի Բեռլինի պայմանագրի պարտավորությունների կատարումը Օսմանյան կայսրության կողմից: Նշվում էր, որ նման խնդրանքով ֆրանսիական կառավարությանն է դիմել նաև ֆրանսահայ համայնքը:219

Նոյեմբերի 18-ին Հակոբյանը նամակ է ստանում Ֆորին Օֆիսից, ուր ասվում էր, որ բրիտանահայերի խնդրագիրն ուղարկվել է Կոստանդնուպոլսում բրիտանական կառավարության դիվանագիտական ներկայացուցչին՝ ի գիտություն: Նշվում էր, որ բրիտանական կառավարությունը նպատակահարմար չի գտնում Հայկական հարցի

---

218 Ротштейн Ф. А. Международные отношения..., с. 124-126; История дипломатии. Т. 2 ..., с. 236-240.
219 FO 424 / 142, No 34 / 1, pp. 42-43.

223

քննարկումը դեսպանների համաժողովում, որը գումարվել է հատուկ Արևելյան Ռումելիայի խնդրով:220 Միաժամանակ Սոլսբերին հանձնարարում էր Ուայթին՝ սուլթանի հայ հպատակների պահանջները բավարարելու հարցում «օգտակար արդյունք» ակնկալելու պարագայում ներկայացնել համապատասխան առաջարկներ:221 Նոյեմբերի 26-ին Ուայթը պատասխանում է Սոլսբերիին, որ ներկայումս փոքր իսկ հնարավորություն չի տեսնում Հայկական հարցի քննարկման համար, քանի որ բոլոր տերությունների ներկայացուցիչները հակված չեն ընդլայնելու համաժողովի աշխատանքի շրջանակները:222

Սոլսբերիի կառավարությունը գոյատևեց մինչև 1886 թ. փետրվարը, մինչև նույն թվականի հուլիսի վերջը Գլադստոնը կրկին անցավ իշխանության գլուխ: Արտգործնախարարի

պաշտոնը ստանձնեց լորդ Արչիբալդ Ռոզբերին223, իսկ Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան նշանակվեց Էդուարդ Թորնտոնը:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործմանը վերաբերող այդ շրջանի միակ փաստաթուղթը արտգործնախարարի հուլիսի 6-ի նամակն է դեսպանին: Ռոզբերին գրում էր, որ այժմ, երբ Բարձր Դռանն այլևս վտանգ չի սպառնում Արևելյան Ռումելիայի հեղափոխությունից և Հունաստանի թշնամական քաղաքականությունից, սուլթանի և իր նախարարների ուշադրությունը պետք է ուղղել դեպի ներքին բարենորոգումների հարցը, քանի որ Թուրքիայի ասիական շրջանների իրավիճակի բարելավումն անտեսել չի կարելի: Ըստ նախարարի, քանի որ ճգնաժամի ընթացքում այդ շրջանների քրիստոնյա համայնքները որևէ դժվարություններ չստեղծեցին սուլթանական կառավարության համար և ապացուցեցին իրենց հավատարմությունը սուլթանին, վերջինս, ի պատասխան, պետք է լուրջ ջանքեր գործադրի վարչական թերությունները վերացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ բարենորոգումների շարքում Ռոզբերին նշում էր հարկահավաքի և իրավական վարչակազմի բարելավումը, տեղական պաշտոնյաների ճիշտ ընտրությունը, կյանքի և ունեցվածքի

_____
220 FO 424 / 142, No 35, p. 43.
221 FO 424 / 142, No 36, pp. 43-44.
222 FO 424 / 142, No 37, p. 44.
223 Ռոզբերի (Rosebery) Արչիբալդ Ֆիլիպ Պրիմռոզ (1847-1929) - բրիտանացի քաղաքական և պետական գործիչ: 1886, 1892-1894 թթ.՝ արտաքին գործերի նախարար, 1894-1895 թթ.՝ վարչապետ, 1894-1896 թթ.՝ լիբերալ կուսակցության ղեկավար:



անվտանգության ապահովումը, բնակչության աշխատասեր և խաղաղ հատվածի պաշտպանությունը քրդերից:

Անդրադառնալով թուրք-բրիտանական հարաբերություններին, նախարարը գրում էր, որ քանի որ վերջին ճգնաժամի ընթացքում բրիտանական կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել Օսմանյան կայսրությունում խաղաղության և անդորրի ապահովմանը, Բարձր Դուռը պետք է իրագործի Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված իր պարտավորությունները: Բարենորոգումների իրագործման լուրջ փորձերի բացակայությունը, շարունակում էր Ռոզբերին, վտանգի աղբյուր կարող է հանդիսանալ Թուրքիայի ամբողջականության համար և ճգնաժամային պահին կարող է փոփոխության ենթարկել տերությունների բարեկամական տրամադրությունները կայսրության հանդեպ:

Միաժամանակ նախարարը նշում էր, որ բրիտանական կառավարությունը նպատակահարմար չի գտնում Բարձր Դռանը որևէ հատուկ նախագիծ առաջարկել կամ միջամտել այս կամ այն շրջանին, կրոնին և դասին վերաբերող խնդիրներին: Բրիտանական կառավարությունն, ըստ Ռոզբերիի, համաձայն է սուլթանի բազմիցս արտահայտած կայսրության թե եվրոպական, թե ասիական հպատակների համար կյանքի հավասար պայմաններ ստեղծելու ցանկության հետ:

Քանի որ 61-րդ հոդվածի իրագործման հարցը զգալի հետաքրքրություն է առաջացնում Մեծ Բրիտանիայի խորհրդարանում, շարունակում էր Ռոզբերին, բրիտանական կառավարությունը խուսափում է դիվանագիտական նամակագրության տպագրումից, ինչը կարող է անբարենպաստ տպավորություններ ստեղծել հասարակական կարծիքի շրջանում: Ըստ նախարարի, բրիտանական հասարակայնության «դժգոհությունն ու անբավարարվածությունը» խնդրի ընթացքով կարող է «մեծագույնս նպաստել և աջակցել օտարերկրյա ագրեսիային», ինչը կարող է վնաս հասցնել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությանը: Այդ շրջանների պահպանումը Թուրքիայի կազմում, ընդգծում էր նախարարը, հանդիսանում է Մեծ Բրիտանիայի կառավարության քաղաքականության կարևոր ուղղությունը:224

_____
224 FO 424 / 143, No 13, pp. 16-17.

225

Օգոստոսի 24-ին Թորնտոնը զեկուցում էր կրկին իշխանության գլուխ անցած Սոլսբերիի կառավարության անդամ, արտգործնախարար լորդ Ստեֆֆորդ Իդըսլիին225, որ, նախկին նախարար Ռոզբերիի կողմից իրեն տրված հանձնարարականի համաձայն, նպատակահարմար է գտել բարենորոգումների իրագործման կապակցությամբ հատուկ հուշագիր ներկայացնել Բարձր Դռանը: Սաիդ փաշան խիստ դժգոհություն է հայտնում փաստաթղթի բովանդակության կապակցությամբ, նշելով, որ Մեծ Բրիտանիան «շատ սխալ քաղաքականություն է» որդեգրել այդ հարցում, նկատի չառնելով բարենորոգումների իրագործման դժվարությունները և կառավարության կողմից այդ ուղղությամբ կատարված աշխատանքը: Նա ասել էր դեսպանին, թե բրիտանական հյուպատոսներն իրենց կառավարությանը մշտապես զեկուցում են այդ շրջանների վարչական թերությունների մասին, երբեք չանդրադառնալով տեղի ունեցած բարելավումներին:

Թորնտոնը պատասխանել էր, որ հուշագրում տեղ գտած խորհուրդները կրում են չափազանց բարեկամական բնույթ և նպատակ ունեն գործուն վարչաձևի հաստատման ու լիառատ ռեսուրսների օգտագործման միջոցով ապահովել Օսմանյան կայսրության հզորացումն ու զարգացումը: Դեսպանը Սաիդ փաշային խորհուրդ է տալիս լրջորեն ուսումնասիրել փաստաթուղթը և քննարկել այն հետագա հանդիպումների ընթացքում:

Թորնտոնը նախարարին տեղեկացնում էր, որ բազմաթիվ աղբյուրների, այդ թվում նաև Գերմանիայի դեսպանի տվյալների համաձայն, սուլթանն ու Բարձր Դուռը չափազանց դժգոհել և անհանգստացել են հուշագրի ներկայացման կապակցությամբ: Նկատի առնելով սուլթանական կառավարության գրգռված վիճակը, Թորնտոնն առաջարկում էր ներկա պայմաններում ընդհանրապես խուսափել բարենորոգումների հարցը բարձրացնելուց և անդրադառնալ միմիայն առանձին բացասական դեպքերին:226

Երեք օր անց Թորնտոնին ընդունում է մեծ վեզիր Քյամիլ փաշան: Նա տեղեկացնում է դեսպանին, որ սուլթանը բավականին ազդված է հուշագրի ոճից, որն «ավելորդ խիստ է»: «Ճիշտ է, - նշում էր Քյամիլ փաշան, - որ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր բարենորոգումներ իրականացնել Հայաստանում, սակայն պետք է նաև

225 Իդըսլի (Iddesleigh) Ստեֆֆորդ Հենրի - լորդ, բրիտանացի քաղաքական գործիչ: 1874-1880 թթ.՝ գանձատան կանցլեր, 1886-1887 թթ.՝ արտաքին գործերի նախարար:
226 FO 424 / 143, No 31, pp. 26-27.



հիշել, որ պայմանագիրը ստորագրվել էր թուրքական ներկայացուցիչների կողմից գրեթե ճնշման տակ, որ Թուրքիան այդ ժամանակ գտնվում էր այնպիսի դժվարին վիճակում, որ իր ներկայացուցիչները պարզապես ստիպված էին ստորագրել այն, ինչ որ իրենց կպարտադրվեր»:

Այնուհետև մեծ վեզիրը թվարկում է այն միջոցառումները, որոնք իրականացրել է Բարձր Դուռը Բեռլինի վեհաժողովից հետո. կանոնավոր դատարանների ստեղծումը կայսրության բոլոր շրջաններում, դպրոցների հիմնումը, ոստիկանական համակարգի կազմակերպումը և ավազակության առաջն առնելը: Ըստ Քյամիլ փաշայի, Բարձր Դուռը նախապատրաստվում է նոր միջոցառումներ իրականացնել այդ ուղղությամբ: Ճիշտ է, շարունակում էր մեծ վեզիրը, որ պայմանագրի պահաջներով Դուռը կատարվածի մասին պարբերաբար չէր տեղեկացնում տերություններին, սակայն դա սոսկ ձևականություն է, որն, իր կարծիքով, պետք է ներվի: Նա իր զարմանքն էր հայտնում Թորնտոնին այն փաստի առնչությամբ, որ Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերություններից միայն Մեծ Բրիտանիան է անհրաժեշտ համարում դիտողություններ անել բարենորոգումների խնդրի վերաբերյալ, երբ մնացած բոլորը բավարարված են ձեռնարկված միջոցառումներով:

Դեսպանը հավաստիացնում է Քյամիլ փաշային, որ բրիտանական կառավարությունը մտադրություն չի ունեցել վիրավորելու սուլթանի զգացմունքները, հուշագիրը բխում է Թուրքիայի հանդեպ տածած ազնիվ բարեկամությունից և նպատակ ուներ աջակցելու կայսրության հզորացմանն ու զարգացմանը: Թորնտոնն իր բավարարվածությունն է հայտնում բարենորոգումների իրագործման շրջանակներում Բարձր Դռան կողմից կատարված աշխատանքի կապակցությամբ:227

Իդըսլիի և Մեծ Բրիտանիայում Օսմանյան կայսրության դեսպան Ռուստեմ փաշայի միջև օգոստոսի 30-ին կայացած հանդիպման ժամանակ վերջինս իր կառավարության դժգոհությունն էր հայտնել Թորնտոնի կողմից հուշագիր ներկայացնելու կապակցությամբ: Նախարարը պատասխանել էր, որ դեսպանը ներկայացրել է փաստաթուղթն իր նախորդի «վերացական հրահանգների» հիման վրա, ցուցում չհարցնելով ներկայիս կառավարությունից:228

227 FO 424 / 143, No 32, pp. 27-28.
228 FO 424 / 143, No 29, p. 25.



Երկար ընդմիջումից հետո բրիտանական դիվանագիտությունն անդրադարձավ Հայկական հարցին 1888 թ. սկզբին: Փետրվարի 4-ին Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի նոր դեսպան Ուիլյամ Ուայթը229 գրում էր արտաքին գործերի նախարարի պարտականությունները կրկին ստանձնած Սոլսբերիին, որ վերջին երկու ամիսների

ընթացքում սուլթանական կառավարությունն ամենայն լրջությամբ քննություն է անցկացնում հայկական դավադրության փաստեր հայտնաբերելու ուղղությամբ, Կոստանդնուպոլսում ձերբակալվել են կասկածի տակ գտնվող հայեր, սուլթանը մտադիր է ռազմական դրություն մտցնել մի շարք հայկական շրջաններում: Ըստ դեսպանի, հայկական դավադրության վարկածը լոկ ենթադրություն է, որի մասին խոսվում է միմիայն սուլթանի պալատում:230 Որպես վկայություն նա իր զեկուցագրին կցում է Վանում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Ռասսելի իրեն ուղղված նամակը: Վերջինս գրում էր, որ Վանի վալին սարսափի մեջ է պահում շրջանի հայությանը, ձերբակալվել են քսանից ավելի հայեր, դեռևս առանց արդյունքի խուզարկության է ենթարկվում յուրաքանչյուր հայի տուն՝ փաստաթղթեր կամ գրականություն հայտնաբերելու նպատակով: «Ես կարող եմ հավաստիացնել Ձերդ Գերազանցությանը, - գրում էր Ռասսելը, - որ վալիի՝ հայերի հանդեպ նման բիրտ միջոցների կիրառումը չունի նույնիսկ ամենաչնչին պատճառը: Գոյություն չունի ոչ մի վկայություն, որ ներկայումս նրանք անհավատարմություն են հանդես բերում թուրքական կառավարության հանդեպ կամ բանսարկություններ կազմակերպում մի այլ կառավարության հետ՝ ազատություն ձեռք բերելու նպատակով»: Միաժամանակ փոխհյուպատոսը նշում էր, թե անկասկած հայերի շրջանում դեռևս հույսեր կան, որ Բեռլինի պայմանագիրը պետք է իրագործվի, ինչպես նաև կան մարդիկ, որ խորհուրդ են տալիս հայերին ցուցաբերել համբերություն և սպասել, սակայն նա «լիովին անհեթեթություն» էր համարում թուրքական կառավարության վախը Վանի հայերի հանդեպ:231

Մարտի 15-ին Հակոբյանը կրկին դիմում է Սոլսբերիին: Նամակում նշվում էր, որ Բարձր Դռան «անբացատրելի արհամարհանքը» Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով

229 Ուայթ (White) Էնդրյու Դիկսոն - բրիտանացի դիվանագետ: 1885-1886 թթ.՝ հավատարմատար Թուրքիայում, 1887-1891 թթ.՝ դեսպան Թուրքիայում:
230 FO 424 / 145, No 7, pp. 6-7.
231 FO 424 / 145, No 7 / 2, p. 8.



նախատեսված բարենորոգումների իրագործման հանդեպ «ծայրաստիճան անբարենպաստ...իրավիճակ է ստեղծել Հայաստանում»: Նկարագրվում էր սուլթանական կառավարության կողմից վերջին տարիների ընթացքում իրագործվող հակահայկական քաղաքականությունը, խնդրվում էր հանձնարարել բրիտանական դեսպանին և հյուպատոսներին անտարբերության չմատնել հայ ժողովրդի ծանր վիճակը, պահանջել Բարձր Դռնից բարենորոգումների իրագործում, և ներկայացվում էր տեղեկանք՝ 1885-1888 թթ. ընթացքում կատարված հայերի ձերբակալությունների մասին:232

Լոնդոնահայերից ստացված փաստաթղթերն ուղարկելով Կոստանդնուպոլսի բրիտանական դեսպանությանը, Սոլսբերին դեսպանին հանձնարարում էր զեկուցագիր պատրաստել հարցի առնչությամբ, ինչպես նաև առաջարկներ՝ սուլթանական կառավարությանը գործնական հարցադրումներ ներկայացնելու համար:233

Ուայթի կարծիքով (գաղտնի զեկուցագիր Սոլսբերիին, 30 մարտի), Աբդուլ Համիդի ուղեղում Հայաստան անվանումը զուգորդվում է Անգլիայի հետ և նա համոզված է, որ

Օսմանյան կայսրության յուրաքանչյուր անհաջողություն բրիտանական կառավարության բանսարկության արդյունքն է: Ըստ դեսպանի, սուլթանական պալատում գոյություն ունի պալատականների որոշակի մի խավ, որը «...մշտապես պատրաստ է թունավորելու սուլթանի ուղեղը մեր երկրի դեմ...»:234 Իսկ Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոսի պաշտոնակատար Վրատիսլոուն գրում էր Ուայթին (2 մարտի), որ մահմեդականների խանդն ու կասկածները քրիստոնյա բնակչության հանդեպ գնալով ավելի աճում են, քան՝ նվազում: Նրանց շրջանում տիրում է այն կարծիքը, որ քրիստոնյաները ներքաշված են կառավարության դեմ ուղղված բանսարկությունների մեջ: Դավադրությունը բացահայտելու նպատակով, շարունակում էր հյուպատոսը, նույնիսկ չնչին կասկածի, մասնավորապես, պատմական գրականություն, քարտեզներ և ազգային երգեր հայտնաբերելու դեպքում, նրանց անմիջապես ձերբակալում են, ներկայացնելով քաղաքական մեղադրանք:235

_____
232 Turkey, No 1 (1889). Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey. 1888-1889. London, 1889, pp. 1-2.
233 Նույն տեղում, էջ 4-5:
234 FO 424 / 145, No 40, p. 37.
235 FO 424 / 145, No 40 / 1, p. 38; No 48 / 1, pp. 42-43.

229

Վրատիսլոուն համոզված էր, որ թուրք իշխանությունների գործողություններն ամբողջապես անհիմն են, իսկ շրջանի հայ բնակչությունն ընդհանրապես մտադիր չէ հրահրելու որևէ շարժում:236

Հայկական հարցը քննարկելու նպատակով ապրիլի 30-ին Ուայթը հանդիպում է սուլթան Աբդուլ Համիդի հետ: Վերջինս նշում էր, որ այն, ինչ կատարվել է, արդյունք է «անկարգ և չարամիտ անձանց գործողությունների, որոնք ներկայումս համապատասխան պատիժ են կրում, քանի որ հայ ազգը հանդես է բերել ազնվություն և չի կարող ոչ կասկածի տակ դրվել, ոչ էլ մեղադրվել անվստահելիության մեջ»: Նա հավաստիացնում էր դեսպանին, որ չի ընդունում միայն կրոն չունեցող մարդկանց, հավասարապես հարգում է կրոնական բոլոր ուղղությունները և որպես ապացույց թվարկում էր հայերի անուններ, որոնք զբաղեցնում են կարևոր պաշտոններ: Սուլթանը հայերին բաժանում էր երեք խմբի. առաջինին պատկանողները ցանկանում են ստեղծել անկախ երկիր, սակայն կազմում են զգալի փոքրամասնություն, երկրորդ խումբն իր թվաքանակով ավելի շատ է և ձգտում է Ռուսաստանի մաս կազմել, իսկ մեծամասնությունը «բացարձակապես հավատարիմ է»:237

Ապրիլի 26-ին Հակոբյանը, Հայ հայրենասիրական ընկերության անունից նամակ է հղում Քենթրբերիի արքեպիսկոպոս Էդուարդ Քենթուարին, խնդրելով նրան Մեծ Բրիտանիայի կառավարությանն ու թագուուն փոխանցել «Հայաստանի կոչը», ուր փաստացի տվյալների հիման վրա նկարագրվում էր Օսմանյան կայսրության բնակչության ծանր վիճակը, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը: Արքեպիսկոպոսը նամակը հանձնում է Սոլսբերիին, նշելով, որ այն հավանաբար հիմնավորված է և կարող է «խորը համակրանք արթնացնել Անգլիայի քրիստոնյա համայնքների շրջանում, ինչպես նաև արտասահմանում»:238

Արքեպիսկոպոսին ուղղված մայիսի 21-ի գաղտնի նամակում Սոլսբերին գրում էր, որ Հակոբյանից ստացված փաստաթղթերն ուղարկված են դեսպան Ուայթին, որը ներկայումս պատասխան է ակնկալում բերված փաստերի վերաբերյալ: Միաժամանակ վարչապետը նշում էր, որ Մեծ Բրիտանիայի ջանքերը 61-րդ հոդվածի կատարման ուղղությամբ ապարդյուն կլինեն, եթե նրան չմիանան

236 Turkey, No 1 (1889) ..., p. 11.
237 Նույն տեղում, էջ 10:
238 Նույն տեղում, էջ 10-11:



պայմանագիրը ստորագրած մյուս տերությունները: Սոլսբերիի կարծիքով, նկատի առնելով Արևելքում ստեղծված կացությունը, և, ելնելով հայերի շահերից, ներկայումս ցանկալի չէ բարձրացնել այդ հարցը: Նա նաև խորհուրդ էր տալիս արքեպիսկոպոսին՝ զգուշություն հանդես բերել Հակոբյանին պատասխանելիս, քանի որ վերջինս պաշտոնյաներից ստացված նամակները սովորաբար հրապարակում է մամուլում:239

Մայիսի 28-ին Սոլսբերիին հասցեագրված գաղտնի զեկուցագրում Ուայթը գրում էր, որ յուրաքանչյուր պահ Հայկական հարցը կարող է ստանալ «անախորժ բնույթ»: «Գոյություն ուներ և դեռևս ունի գաղտնի քարոզչություն հայերի շրջանում, - շարունակում էր դեսպանը, - ինչպես նաև գոյություն ունեն ճնշման միջոցներ, ինչպիսիք են տնային խուզարկումները, ձերբակալություններն ու աքսորը: Թե այդ ճնշումն արդյունք է քարոզչության կամ հակառակը, վերջինս է պատճառն առաջինի՝ անհնար է հաստատել, սակայն Լոնդոնում և Փարիզում բնակվող որոշ հայերի կողմից տպագրվող հրապարակումները ոչ միայն չեն նպաստում հայերի և նրանց մահմեդական ղեկավարների միջև գոյություն ունեցող գրգռվածության նվազեցմանն, այլև ճիշտ հակառակը, ակնհայտորեն պատճառ են հանդիսանում դրա խորացմանը...Ես նկատում եմ, որ դժգոհությունն աճում է նույնիսկ Կոստանդնուպոլսում բնակվող և լավ դիրքեր զբաղեցնող հայերի շրջանում, ինչը համարում եմ աղետալի մի երևույթ: Որոշ հայրենասեր թուրք փաշաների շրջանում ես նմանապես նկատել եմ աճող մտահոգություն Ռուսաստանին սահմանակից շրջանների պատճառով և օգտվելով այդ առիթից փորձում եմ ոմանց ուշադրությունը հրավիրել հայերին հուսալքության հասցնելու վտանգի վրա՝ փոխանակ սուլթանի գավազանի տակ գտնվող այդ ժողովրդի վիճակը որոշակիորեն բարելավելու»: Ուայթին անհանգստացնում էր նաև այն հանգամանքը, որ վերջին տեղեկությունների համաձայն, ռուսահայերի կյանքում տեղի են ունեցել զգալի դրական փոփոխություններ, մասնավորապես՝ ազատությունների, կրթության և այլ բնագավառներում, որոնք իրենց ազդեցությունը կարող են ունենալ արևմտահայության մտայնության վրա:240

Բրիտանական հասարակայնությունն ու խորհրդարանի անդամներն ուշի ուշով հետևում էին Հայկական հարցի զարգացումներին, հարցումներ ներկայացնում

239 Նույն տեղում, էջ 13:
240 Նույն տեղում, էջ 15:

231

կառավարությանը: Հուլիսին Ջեյմս Բրայսը241 խորհրդարանի համայնքների պալատի քննարկմանը ներկայացրեց Բարձր Դռան կողմից Վանի շրջանում մեծ թվով չերքեզների վերաբնակեցման վերաբերյալ հարցումը: Օգոստոսի 2-ին Ուայթը Սոլսբերիին տեղեկացնում էր, որ մեծ վեզիրի և արտաքին գործերի նախարարի հայտարարությունների համաձայն, շուրջ 400 մահմեդական ընտանիքներ, որոնց ռուսներն անվանում են դաղստանցիներ, կամավոր կերպով հեռացել են Ռուսաստանից և ցանկություն են հայտնել ապրել Օսմանյան կայսրությունում: Սուլթանական կառավարությունն անմիջապես որոշում է կայացնում բնակեցնել նրանց Սեբաստիայի, Տրապիզոնի և Էրզրումի վիլայեթներում:242 Այդ կապակցությամբ Վանում փոխհյուպատոս Ռասսելը հաղորդում էր դեսպանին, որ վիլայեթում մահմեդականների բնակեցման մասին որևէ փաստ չունի, բացառությամբ Կոստանդնուպոլսի «Արևելք» հայկական թերթում հուլիսի 23-ին տպագրված տեղեկատվությանը:243

Սեպտեմբերի 24-ին Քենթրբերիի արքեպիսկոպոսը դիմում էր Սոլսբերիին Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության անվտանգությունը քրդական հարձակումներից ապահովելու պահանջով: Ամերիկյան միսիոներներ Մաքլինից և Բրաունից ստացված տեղեկությունների համաձայն, սկսած 1887 թ. ամառվանից քրդերը մշտական զինված հարձակումներ են կատարում պարսկական սահմանի մերձակա շրջաններում բնակվող հայ բնակչության վրա: Ըստ միսիոներների, այդ շրջաններում գործում են շուրջ 15 հազ. զինված

241 Բրայս (Bryce) Ջեյմս (1838-1922) - բրիտանացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան: 1874 թ.-ից՝ խորհրդարանի, 1880 թ.-ից՝ լիբերալ կուսակցության անդամ, 1886 թ.՝ փոխարտգործնախարար, 1894-1895 թթ.՝ առևտրի նախարար, 1905-1906 թթ.՝ Իռլանդիայի գործերով քարտուղար, 1907-1913 թթ.՝ դեսպան ԱՄՆ-ում: 1876 թ. հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, 1893 թ.՝ Անգլո-հայկական ասոցիացիան, այցելել է Հայաստան, Կովկաս, Զմյուռնիա և Կոստանդնուպոլիս, 1877 թ. հրատարակել «Անդրկովկասն ու Արարատը» գիրքը: Առաջիններից էր Անգլիայում, որ արձագանքել է 1915 թ. ցեղասպանությանը, ակտիվորեն մասնակցել բրիտանա-հայկական Կարմիր խաչի և Փախստականների հիմնադրամի ստեղծմանը: 1916 թ. հրապարակել է «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.» փաստաթղթերի ժողովածուն:
242 Նույն տեղում, էջ 18-19:
243 Նույն տեղում, էջ 22-23:

232

քրդեր, իսկ թուրքական իշխանություններն ամբողջապես մեկուսացրել են տարածքը, թույլ չտալով, որ որևէ տեղեկատվություն թափանցի Եվրոպա:244 Բրիտանական կողմի հարցադրմանն ի պատասխան դեսպան Ռուստեմ փաշան կառավարությանը ներկայացնում է հուշագիր, ուր ոչ միայն հերքում է միսիոներների փաստերը, այլև անվանում նրանց կեղծարարներ և պահանջում միջոցներ ձեռնարկել երկրից նրանց վտարելու համար:245 Սոլսբերիին ուղղված նոր նամակում (19 նոյեմբերի) Քենթրբերիի արքեպիսկոպոսը, չընդունելով թուրք դեսպանի բերած փաստարկները, նոր

տեղեկություններ է ներկայացնում քրդական հրոսակախմբերի գործողությունների մասին և խնդրում հանձնարարել դեսպանությանն ու համապատասխան հյուպատոսին՝ հետաքննություն անցկացնելու համար:246

Մեծ աղմուկ բարձրացրեց Լոնդոնում նաև Թուրքիայի հայ բողոքականների հանրագիրը մեծ վեզիրին, ուր փաստեր էր ներկայացվում թուրք իշխանությունների կողմից նրանց իրավունքները ճնշելու, համայնքի անդամներին ձերբակալելու վերաբերյալ:247 Այդ կապակցությամբ կառավարությանը բողոքներ է ներկայացնում Լոնդոնի Ավետարանչական ընկերությունը, պահանջելով ԱՄՆ և Գերմանիայի կառավարությունների հետ համատեղ ապահովել Օսմանյան կայսրության բողոքականների իրավունքների պաշտպանությունը:248 Դեկտեմբերի 10-ին Սոլսբերին գրում էր Ռուստեմ փաշային, որ ամերիկյան միսիոներների տեղեկությունները ամբողջությամբ հաստատվել են Թավրիզում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոսի և բրիտանացի երկու ճանապարհորդի կողմից: Նա պահանջում էր թուրքական կառավարությունից անհապաղ միջոցներ ձեռնարկել շրջանի հայ բողոքականների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ և անընդունելի էր համարում Բարձր Դռան պահանջը միսիոներներին երկրից արտաքսելու վերաբերյալ:249

---

244 Նույն տեղում, էջ 25-56:
245 Նույն տեղում, էջ 35:
246 FO 424 / 145, No 102, p. 101.
247 Turkey, No 1 (1889) ..., pp. 32-33.
248 Նույն տեղում, էջ 36-38:
249 Նույն տեղում, էջ 42:

233

Նոյեմբերի 27-ին Ռուստեմ փաշան իր կառավարության անունից պահանջում էր Սոլսբերիից միջոցներ ձեռնարկել Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» հայկական թերթի տպագրությունը դադարեցնելու համար, քանի որ այն «դժգոհության և անբարյացակամության կրքեր է հրահրում սուլթանի հայ հպատակների շրջանում»: Վարչապետը բացատրում է դեսպանին, որ բրիտանական կառավարությունը ոչ մի իրավունք չունի քաղաքական ինչ-ինչ խնդիրներից ելնելով դադարեցնելու որևէ հրատարակության տպագրությունը:250 Դեկտեմբերի սկզբին նույն խնդրանքով Ուայթին է դիմում նոր Հայոց պատրիարք Խորեն Աշըգյանը: Նա վախենում էր, որ Անգլիայի իր հայրենակիցների կողմից որդեգրած գիծը կարող է վատ անդրադարձ ունենալ սուլթանի տրամադրությունների վրա: Համաձայնելով նրա հետ և բացատրելով Անգլիայում մամուլի հանդեպ գոյություն ունեցող վերաբերմունքը, դեսպանը պատրիարքից խնդրում էր օգտագործել իր ազդեցությունը բրիտանահայերի վրա՝ զսպվածություն հանդես բերելու համար:251

Ընդունված սովորության համաձայն, նոր տարվա կապակցությամբ, 1889 թ. հունվարի 13-ին, բրիտանական դեսպանության թարգման Մարինիչն այցելեց Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին: Վերջինս խնդրում էր հաղորդել դեսպանին, որ հայ հոգևորականությունը միշտ հավատարիմ է եղել օսմանյան կառավարությանը և ուրախ կլիներ այսօր, եթե Բարձր Դուռը հանձնարարեր Ռուսաստանին սահմանակից շրջանների տեղական

իշխանություններին՝ «հաշտարար քաղաքականություն» որդեգրել հայերի հանդեպ: Այդ կապակցությամբ Ուայթը Սոլսբերիին առաջարկում էր առանց որևէ ներկայացումների, նույնիսկ ոչ պաշտոնական, այլ մասնավոր հնարավորությունների սահմաններում, աջակցել հայերին և նրանց պատրիարքին այդ հարցում:252 Սակայն փետրվարի վերջին, տեղեկություններ ստանալով հայերի հանդեպ կիրառվող քաղաքականության վերաբերյալ Վանում բրիտանական փոխհյուպատոս Ջորջ Դիվիից, Ուայթը որոշում է դիվանագետ Սենդիսոնի միջոցով այդ կապակցությամբ հուշագիր ներկայացնել սուլթանի առաջին քարտուղար Սյուրեյա փաշային: Հուշագրում փաստեր էին բերվում չորս տարի առաջ

250 FO 424 / 145, No 107, p. 106.
251 FO 424 / 145, No 108, p. 108.
252 FO 424 / 162, No 11, p. 8.



Վանում ստեղծված ոստիկանական հանձնաժողովի շեշտված հակահայ գործունեության մասին:253

Մարտի 29-ին Սոլսբերին Ուայթին տեղեկացնում էր փոխարտգործնախարար Ջեյմս Ֆերգյուսոնի և դեսպան Ռուստեմ փաշայի միջև կայացած զրույցի մանրամասները: Դեսպանը կրկին դժգոհում էր «Հայաստան» թերթում տպագրվող զրպարտչական բնույթի հայտարարությունների վերաբերյալ, ինչպես նաև իր կառավարության մտահոգությունն էր հայտնում խորհրդարանի համայնքների պալատում Հայկական հարցի շուրջ ծավալված քննարկումների առնչությամբ: Մասնավորապես թերթը գրում էր, որ թուրքական կառավարությունը ծրագրում է բնաջնջել հայերին և կոչ էր անում օրինական դարձնել բազմակնությունը: Ռուստեմ փաշան շարունակում էր, որ սուլթանը ցանկանում է արդար վերաբերվել իր հայ հպատակներին, սակայն նման փաստերը վնաս են հասցնում հայերի շահերին: Նա նշում էր, որ իր կառավարությունը գործուն միջոցներ է ձեռնարկել քրդական հարձակումների դեմ հայկական շրջաններում և դրա արդյունքում ներկայումս բարելավումները բավականին ակնհայտ են:

Ֆերգյուսոնը պատասխանում էր, որ չնայած այդ շրջաններից ստացվող տեղեկությունների համաձայն, հայերի վիճակը շարունակում է մնալ անմխիթար, բրիտանական կառավարությունը խուսափում է այդ հարցում Բարձր Դռան հանդեպ ճնշում գործադրելուց, հասկանալով առկա նրա բոլոր դժվարությունները: Նա կրկնում է, որ թեև ոչ բոլոր տպագրված տեղեկություններն են հավատ ներշնչում, սակայն վախենում է, որ «...հայերն իրոք տառապում են ոչ հավասար վերաբերմունքից, եթե ոչ անտեղի խստություններից»: Ֆերգյուսոնը նշում էր, որ ինքն անձնապես կողմնակից է Անգլիայի և Թուրքիայի միջև իրապես դաշնակցային հարաբերություններ հաստատվելուն, սակայն դրան խոչընդոտում է այն հանգամանքը, որ Բարձր Դուռը դեռևս չի կատարել իր պարտավորությունները վարչական բարենորոգումներ իրագործելու ուղղությամբ: Փոխնախարարն անհնարին էր համարում դադարեցնել խորհրդարանում տեղի ունեցող քննարկումները, քանի դեռ հայերի վիճակը շարունակում է մնալ անփոփոխ:254

253 Turkey, No 1 (1889) ..., pp. 55-56.
254 Նույն տեղում, էջ 57:

235

Մայիսի 25-ին Ուայթը Սոլսբերիին տեղեկացնում էր տարբեր չճշտված աղբյուրներից իրեն հասնող Մուշի շրջանում կազմակերպված հայերի ջարդի լուրերի մասին: Ըստ թարգման Մարինիչի զեկուցագրի, այդ առիթով պատրիարքարանի առջև տեղի էր ունեցել մայրաքաղաքի և այդ շրջանից ժամանած հայերի ցույց, որոնք բողոքում էին քրդական ցեղապետ Մուսա բեյի հակահայկական գործողությունների կապակցությամբ: Մարինիչի՝ տեղում հավաքած տվյալների համաձայն, հայերի ճնշման համար բանտարկված Մուսա բեյը կարողացել է ազատվել և ներկայումս, վրեժխնդիր հարձակումներ է գործում հայկական գյուղերի վրա, թալանում ունեցվածքը, բռնաբարում կանանց, հալածում և սպանում հայ գյուղացիներին: Դեսպանը Սոլսբերիին առաջարկում է հանձնարարել գնդապետ Չերմսայդին այցելել նշված շրջանները և զեկուցել տեղի ունեցածի մասին:255 Պատասխան հեռագրում (29 մայիսի) Սոլսբերին բրիտանական կառավարության մտահոգությունն էր հայտնում լուրերի կապակցությամբ, հանձնարարում ճշտել փաստերը և համապատասխան բողոք ներկայացնել Բարձր Դռանը՝ իրավիճակը բարելավելու և անվտանգությունն ապահովելու ուղղությամբ գործուն քայլեր ձեռնարկելու պահանջով:256

Հունիսի 15-ին արտգործնախարարի և բրիտանական դեսպանի միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ վերջինս հերքում էր կատարվածը, արդարացնում ինչպես տեղական իշխանություններին, այնպես էլ Մուսա բեյին, նշելով, որ վերջինս շուտով նույնիսկ ժամանելու է Կոստանդնուպոլիս:257 Հայտնելով իր կառավարության տեսակետն այդ հարցի կապակցությամբ Սոլսբերիին (26 հունիսի), թուրք դեսպանը միաժամանակ նշում էր, որ ջարդերի մասին հեքիաթները հորինվում են քաղաքական նպատակներով: Նա անհնարին էր համարում Բուլղարիայի օրինակով Հայաստանին որևէ կարգավիճակի շնորհումն այն պարզ պատճառով, որ հայերը փոքրամասնություն են կազմում շրջանում:258

Օգոստոսի սկզբին Ռուստեմ փաշան Սոլսբերիին է հանձնում Վանի 131 հայ բնակչի կողմից ստորագրված և մեծ վեզիրին հասցեագրված հեռագրի պատճենը, ուր նշվում էր, որ տեղի հայ բնակչությունը համամիտ չէ արտասահմանում գործող հայ հեղափոխական

255 Նույն տեղում, էջ 64-65:
256 Նույն տեղում, էջ 63:
257 Նույն տեղում, էջ 77-78:
258 Նույն տեղում, էջ 77:

236

կազմակերպությունների քաղաքականության հետ, քանի որ պատմության ընթացքում հայերը միշտ լավ են ապրել սուլթանի իշխանության ներքո, հնարավորություն են ունեցել խոսելու իրենց լեզվով, պահպանելու ազգությունն ու կրոնը, իսկ ներկայումս շարունակում են մնալ կայսրության հավատարիմ հպատակներ:259 Այդ կապակցությամբ Վանում փոխհյուպատոս Դիվին գրում էր, որ քննությունը ցույց է տվել, որ հեռագիրը կազմակերպվել էր Կարապետ Նաթանյանի, իր գաղափարակիցների և բարեկամների

կողմից և չի արտահայտում քաղաքի ողջ հայ բնակչության զգացմունքները: Ավելին, ըստ Դիվիի, հեռագրի տակ բերված ցուցակից շատերը չեն ստորագրել փաստաթուղթը, իսկ շուրջ 40 ազգանուններ ընդհանրապես անծանոթ են այստեղ:260

Օգոստոսի 29-ին Էրզրումում հյուպատոս, գնդապետ Չերմսաբդը Ուայթին է ներկայացնում Վան, Բիթլիս և Մուշ կատարած իր այցելության հաշվետվությունը: Համեմատելով տաս տարի առաջ իր տեսածի հետ, նա բավականին խաղաղ էր համարում երկրի վիճակը, նշում ճանապարհների անվտանգության հանգամանքը, գտնում, որ հանցագործությունների և բռնությունների թիվն ու հաճախականությունը զգալիորեն նվազել է, եթե հաշվի չառնվի վերջերս Մուշի շրջակայքում Մուսա բեյի կողմից կազմակերպված բռնությունները: Հյուպատոսի կարծիքով, թեև տնտեսական ճգնաժամը, քրդերի հարձակումները, քրիստոնյաների և մահմեդականների անհավասարությունն ու թուրքական վարչակարգի թերություններն ակնհայտ են, վերջերս եվրոպական մամուլում հրապարակվող նյութերը հայերի ճնշումների մասին կրում են քարոզչական բնույթ, զգալիորեն չափազանցված են և հիմնականում չեն համապատասխանում իրականությանը: Միաժամանակ Չերմսայդը նշում էր, որ Թուրքիան ոչինչ չի ձեռնարկել Բեռլինի պայմանագրով նախատեսված ասիական շրջանների իրավիճակը բարելավելու, մահմեդականների մոլեռանդությունը և նյութական ավելի բարվոք վիճակում գտնվող քրիստոնյաների հանդեպ գոյություն ունեցող խանդն ու նախանձը նվազեցնելու ուղղությամբ:

Նա հետևյալ կերպ էր բնութագրում հայերի մտայնությունը. նրանց կրթված հատվածը կողմնորոշվում է դեպի Արևմուտք և իրեն խորթ է համարում արևելյան քաղաքակրթությունը,

259 Turkey, No 1 (1890). Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey and the Trial of Moussa Bey. London, 1890, pp. 1-2.
260 Նույն տեղում, էջ 3:

237

ոչ կրթված դասակարգը հիմնականում հավատարիմ է օսմանյան իշխանությանը, թեև կարող է համակրել յուրաքանչյուր քրիստոնյա տերության, որը կվարի հակաթուրքական քաղաքականություն. գոյություն ունի հնուց եկած մրցակցություն և հակակրանք քրդերի ու մահմեդականների նկատմամբ: Գաղտնի ընկերությունների կազմավորումը Էրզրումում և այլ շրջաններում, շարունակում էր հյուպատոսը, զինյալ պայքարի կոչերը, ինչպես վերջին տարիների ընթացքում Վանում և այլուր տեղի ունեցած իրադարձությունները վկայում են հայերի դժգոհության մասին: Չերմսայդը հետաքրքիր էր համարում այն հանգամանքը, որ հայերը չէին խուսափում իրեն դիմելուց, խոսում էին իր հետ ընդհանուր թշնամու մասին այնպես, ինչպես կկիսվեին իրենց կառավարության ներկայացուցչի հետ և զարմանում էին, երբ ստանում էին վիատեցնող պատասխան: Չերմսայդը եզրակացնում էր, որ թեև կայսրության արևելյան շրջանների վիճակը դեռևս հեռու է բարեկեցության նույնիսկ սկզբնական ձևերից, այդուհանդերձ, վերջին տաս տարիների ընթացքում որոշակի առաջադիմություն է նկատվում քաղաքացիական վարչակարգի և ոստիկանության ձևավորման բնագավառներում:261

Սեպտեմբերի 14-ին Չերմսայդը գրում էր Ուայթին, որ բրիտանական խորհրդարանում տեղի ունեցող քննարկումները հիմնված են չափազանցված փաստերի վրա, իսկ Բրայսի հայտարարությունը համընդհանուր քրդական հարձակման մասին բավականին հեռու է ճշմարտությունից: Իր հայազգի տեղակալ Բոյաջյանի կարծիքով, անցյալի հետ համեմատած, նման հարձակումների թիվը բավականին նվազել է, իսկ զոհերը վերջերս հիմնականում քուրդ մահմեդականներ են: Ըստ հյուպատոսի, հայերի բնաջնջման ծրագրերի մասին տարածվող խոսակցություններն իրականությանը չեն համապատասխանում և այդ հարցում բացասական դեր է խաղում՝Հայաստան՝ թերթը:262

Բրիտանական դեսպանությունը մեծ ուշադրությամբ հետևում էր նոյեմբերին Կոստանդնուպոլսում սկսված Մուսա բեյի դատավարության ընթացքին և մանրամասն տեղեկություններ հաղորդում իր կառավարությանը: Մասնավորապես, նշվում էր բազմաթիվ իրավական խախտումների, Մուսա բեյի հանդեպ ցուցաբերվող մեծ հարգանքի, կալանքի տակ չգտնվելու, շրջաններից ժամանած հայ վկաների նկատմամբ վիրավորական

---

261 Նույն տեղում, էջ 17-21:
262 Նույն տեղում, էջ 22-23:



վերաբերմունքի մասին: Այդ կապակցությամբ նոյեմբերի 21-ին դեսպանությունը խիստ հայտագիր է ներկայացնում Բարձր Դռանը, ուր, նշելով տեղի ունեցող բոլոր խախտումների մասին, նույնիսկ պահանջում էր նյութապես օժանդակել հայ վկաների ընտանիքներին և ապահովել նրանց անվտանգությունը: Սակայն, չնայած բրիտանական դեսպանության գործուն միջամտությանը, դատարանի որոշմամբ Մուսա բեյին ներկայացված բոլոր մեղադրանքներն այդպես էլ չհաստատվեցին:263

Սոլսբերիի հանձնարարությամբ դեկտեմբերի 17-ին փոխարտգործնախարար Ֆերգյուսոնն ընդունում է հայ հասարակական-քաղաքական գործիչ, Լոնդոնում հրատարակվող «L`Armenie» թերթի խմբագիր Մինաս Չերազին: Ֆերգյուսոնը նրան համարում էր «խելացի և համակրելի» անձնավորություն: Չերազն ասում էր, որ ցանկություն ունի ծանոթանալու նաև դեսպան Ռուստեմ փաշայի հետ, որին հայերը համարում են Էրզրումի նահանգապետի ցանկալի թեկնածու: Նրա կարծիքով, Ռուստեմ փաշան Լիբանանում իրեն դրսևորել է որպես «վճռական և անկողմնակալ կառավարիչ» և հավաստի աղբյուրների համաձայն, վերջերս նույնիսկ փորձում էր համոզել մեծ վեզիրին, թե ինչ նշանակություն և դրական արդյունք կարող է ունենալ Թուրքիայի համար Մուսա բեյի արդար պատիժը: Հանդիսանալով Բեռլինի վեհաժողովում հայկական պատվիրակության անդամ և այդ իսկ պատճառով իրեն իրավունք վերապահելով խոսելու հայ ժողովրդի անունից, Չերազը նշում էր, որ մեծ սխալ է ենթադրել, թե իբր հայերն անկախություն կամ ռուսական տիրապետություն են ցանկանում: Առաջինի համար նրանք շատ տկար են, շարունակում էր նա, իսկ երկրորդը կարող է միայն դժբախտություն բերել, քանի որ Ռուսաստանը ճնշում է ազգությունն ու օտար կրոնը: Եթե սլավոնները բնականաբար ձգտում են կողմնորոշվել դեպի Ռուսաստան, ապա հայերի և ռուսների միջև զոյություն չունի ոչ ազգային, ոչ էլ կրոնական նույնություն: Որպես օրինակ նա բերում էր Կարսի հայկական եկեղեցին ուղղափառի վերածելու փաստը: Ըստ Չերազի, Արևելյան Հայաստանում ապրող իր

հայրենակիցները դեմ են և ատում են ռուսական իշխանությունը: Նա հույս ուներ, որ ապագայում, երբ թուրքերը կհեռանան Եվրոպայից, նրանք Ասիայում կստեղծեն թուրք-հայկական պետություն, սակայն ոչ խելամիտ էր համարում այն հանգամանքը, որ թուրքերը չեն օգտագործում հայերի իրական նվիրվածությունը: Նա հավատացած էր, որ սուլթանին շրջապատող կույր և մոլեռանդ

263 Նույն տեղում, էջ 33-34, 55, 80, 100-101:



մարդիկ դավաճանություն են համարում բարենորոգումներին վերաբերող յուրաքանչյուր առաջարկ և բրիտանական խորհուրդների մասին անմիջապես հայտնում են ռուսական դեսպանությանը, քանի որ Ռուսաստանը միշտ էլ դեմ է եղել Օսմանյան կայսրության բարեկարգման ծրագրերին:264

1890 թ. փետրվարին Էրզրումում նոր նշանակված հյուպատոս Կլիֆֆորդ Լլոյդը Ուայթին տեղեկացնում էր թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության հանդեպ կիրառվող գրաքննական խստությունների մասին: Օրինակ, շուրջ 30 հայեր մեղադրվել և ձերբակալվել էին «արգելված» գրականություն ունենալու համար, որի մեջ մտնում են Վենետիկում հրատարակված հայոց պատմության գրքերը, Հայաստան աշխարհագրական անվանումը պարունակող Ֆրանսիայում գնված քարտեզները և նույնիսկ ազգային երգերը:265

Թուրքական իշխանությունների քաղաքականության, քրդական հրոսակախմբերի հարձակումների, աղքատության և զրկանքների հետևանքով Ալաշկերտի դաշտավայրի բազմաթիվ հայ ընտանիքներ դեռևս 1889 թ, նոյեմբերին դիմել էին կառավարությանը՝ Պարսկաստան տեղափոխվելու խնդրանքով: Ուայթին ուղղված Լլոյդի զեկուցագրերի համաձայն (1890 թ. 14, 17, 28 փետրվարի, 6 մարտի, 1 մայիսի), Պարսկաստանում բնակություն հաստատել ցանկացող հայ ընտանիքների թիվը մարտի սկզբին հասավ 600-ի, այսինքն 4-4.5 հազ. հոգու: Դրական պատասխան ստանալով Թուրքիային սահմանակից պարսկական նահանգի իշխանություններից, հայերն արդեն որոշել էին շարժվել դեպի սահմանը, սակայն տեղի ոստիկանությունը թույլ չտվեց իրագործել նրանց մտադրությունը: Հետաքննություն կատարելու նպատակով Բարձր Դուռը երկու մահմեդականից և մեկ քրիստոնյայից բաղկացած հանձնաժողով էր ուղարկել շրջան, սակայն հյուպատոսն այդպես էլ չկարողացավ պարզել նրա գործունեության արդյունքները և այդ կապակցությամբ նահանգապետին տրված խորհուրդները: Ի վերջո ապրիլի վերջին շուրջ 200 գյուղացիներ, թողնելով իրենց գյուղերը, շարժվել էին դեպի պարսկական սահմանը, սակայն Բայազետից ուղարկված զինվորները ստիպողաբար վերադարձրել էին նրանց Ալաշկերտ:266 Ապրիլի 6-ին

264 FO 424 / 162, No 103, pp. 133-134.
265 Turkey, No 1 (1890-1891). Correspondence Respecting the Condition of the Population in Asiatic Turkey and the Proceedings in the Case of Moussa Bey. London, 1891, pp. 17, 24.
266 Նույն տեղում, էջ 21, 23-25, 36:

Լլոյդի և Էրզրումի վալիի միջև կայացած զրույցի ընթացքում վերջինս նշում էր, որ քրիստոնյաների անվտանգությունը կարելի է ապահովել միայն այն դեպքում, եթե կառավարությունը թույլ տա վալիներին երկրի տարբեր շրջաններում տեղակայված զորքերն օգտագործել քրդական ցեղերին հսկողության տակ պահելու նպատակով: Հյուպատոսի կարծիքով, միայն Կոստանդնուպոլսից ստացված ուղիղ հրամանների և վալիների միացյալ ու գործուն միջոցների շնորհիվ Քրդստանում կարելի է հաստատել իրական կարգ ու կանոն:267

Միաժամանակ Ուայթը մշտապես Սոլսբերիին տեղյակ էր պահում Ռուսաստանից Թուրքիա տեղափոխվող մահմեդականների մասին, որոնք բնակեցվում էին հիմնականում կայսրության կենտրոնական և արևելյան շրջաններում: Այսպես, մարտի 14-ին դեսպանը գրում էր, որ շուրջ 50 հազ. չերքեզներ ռուսական կառավարությունից թույլտվություն էին ստացել տեղափոխվել Թուրքիա: Սուլթանական կառավարությունը որոշում էր ընդունել բնակեցնելու նրանց Կոնյայի և Ադանայի նահանգներում:268

Բրիտանական կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում կայսրության արևելյան շրջանների թվաքանակի ուսումնասիրությանը: Մայիսի 26-ին Ուայթը Սոլսբերիին էր ներկայացնում կայսրության արդարադատության նախարարից և Լլոյդից ստացված տվյալները Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթների բնակչության մասին: Պաշտոնական տվյալների համաձայն, մահմեդականների թիվը կազմում էր 1մլն. 432.075, հյուպատոսարանի՝ 1 մլն. 233.402, իսկ քրիստոնյաներինը՝ համապատասխանաբար 512.372 և 566.297: Ըստ պաշտոնական տվյալների, մահմեդականները մեծամասնություն էին կազմում բոլոր վիլայեթներում, իսկ համաձայն Լլոյդի, քրիստոնյաները՝ միմիայն Վանի վիլայեթում՝ 155.988-ը 115.000-ի դիմաց:269

Հունիսի 20-ին Լլոյդը հաղորդում էր հավատարմատար Ֆեյնին քրիստոնյաների և մահմեդականների միջև Էրզրումում տեղի ունեցած ընդհարումների մասին: Միջադեպը սկսվել էր այն բանից հետո, երբ վալիի, քաղաքում տեղակայված զորքերի հրամանատարի և այլ պաշտոնյաների ներկայությամբ խուզարկության էին ենթարկվել Սանասարյան դպրոցն ու Ս. Աստվածածին եկեղեցին: Ի բողոք նման վերաբերմունքի, քաղաքի հայերը փակել էին

---

267 Նույն տեղում, էջ 29:
268 Նույն տեղում, էջ 24:
269 Նույն տեղում, էջ 38-40:

241

իրենց խանութներն ու դպրոցները և հեռագիր ուղարկել սուլթանին: Ի պատասխան դրան, հրազենով, փայտերով և քարերով զինված մահմեդական ամբոխը հարձակվել էր հայկական թաղամասերի վրա, սպանելով 10-12 և վիրավորելով 200-300 հայերի: Հայկական թաղամասերի մոտ գտնվող ամերիկյան և պարսկական հյուպատոսարանները ապաստան էին տվել զգալի քանակությամբ հայերի: Հյուպատոսների դիմումից հետո միայն իշխանությունները զորք էին տեղակայել հայկական թաղամասերում: Ըստ Լլոյդի, Էրզրումի հայերը գտնվում են սարսափահար վիճակում, քանի որ իշխանությունները

ձերբակալել էին մեծ թվով հայերի, իսկ մահմեդական խուժանն այդպես էլ մնացել էր անպատիժ:270

Հունիսի 27-ին Ռուստեմ փաշան Սոլսբերիին ներկայացնում է Կոստանդնուպոլսից ստացված պաշտոնական մի փաստաթուղթ, ուր Էրզրումում տեղի ունեցած իրադարձությունների ամբողջ մեղքը բարդվում է հայերի վրա:271

Համաձայնեցնելով Էրզրումի դեպքերի նկատմամբ իր դիրքորոշումը Ֆրանսիայի դեսպանի հետ, Ֆեյնը հանդիպում է մեծ վեզիրի հետ: Նա բավականին լուրջ և վտանգավոր է համարում իրավիճակը Էրզրումում, նշելով, թե ինչ ծանր հետևանքներով է հղի մահմեդականների և քրիստոնյաների միջև բախումների բռնկումը կայսրության ամբողջ տարածքով: Ֆեյնը մեծ վեզիրին ներկայացնում է Էրզրումում Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հյուպատոսների առաջարկները՝ իրավիճակը կարգավորելու և հետագա բացասական զարգացումներից խուսափելու ուղղությամբ: Հյուպատոսները մասնավորապես առաջարկում էին. 1/ ուժեղացնել Էրզրումի կայազորը մեկ գումարտակով Երզնկայից. 2/ ազատել ձերբակալված հայերին և ժամանակավորապես կասեցնել դատաքննությունը. 3/ կազմավորել հեծելազորային պահակախմբեր Էրզրումի շրջակայքում՝ այլ շրջաններ խուճապային լուրերի տարածումից խուսափելու նպատակով: Հավանություն տալով ներկայացված առաջարկներին, մեծ վեզիրը խոստանում է անմիջապես համապատասխան միջոցառումներ ձեռնարկել այդ ուղղությամբ:272

Սակայն հուլիսի 26-ին Ֆեյնը տեղեկացնում էր Սոլսբերիին, որ չնայած մեծ վեզիրի տված խոստումին, Էրզրումում ձերբակալված հայերն այդպես էլ չեն ազատվել բանտից: Այդ

270 Նույն տեղում, էջ 45-48, 51-53:
271 Նույն տեղում, էջ 50-51:
272 Նույն տեղում, էջ 53:

242

հարցի կապակցությամբ հավատարմատարը թարգման Սենդիսոնի միջոցով հուշագիր է ներկայացնում մեծ վեզիրին, խնդրելով իրավիճակը կարգավորելու համար կատարել տրված խոստումը: Մեծ վեզիրը պատասխանում է, թե մասնավոր խոստում չի տվել լուրջ մեղադրանքներով ձերբակալված մի քանի հայի ազատելու վերաբերյալ, սակայն հրահանգել է ժամանակավորապես դադարեցնել հետաքննությունը՝ ստեղծված իրավիճակը խաղաղեցնելու նպատակով: Նա հավաստիացնում էր բրիտանական դիվանագետին, որ Էրզրումում կատարված դեպքերի համար հավասարապես պատիժ են կրելու նաև մահմեդականները:273

Սեպտեմբերի վերջին միայն Էրզրումի իշխանություններն ազատում են ձերբակալված 28 հայերի, իսկ գլխավոր դատախազը հեռացվում է պաշտոնից՝ անմեղ մարդկանց ձերբակալելու պատճառով:274

Իր պարտականությունները կրկին ստանձնած Ուայթը օգոստոսի 1-ին մանրամասն տեղեկացնում էր Սոլսբերիին հուլիսի 27-ին Կոստանդնուպոլսի Գում Գափու թաղամասում տեղի ունեցած, հնչակյանների կողմից կազմակերպված ցույցի մասին: Նա

գրում էր, որ զգալի թիվ կազմող մայրաքաղաքի հայությունը վերջերս բավականին գրգռված է և զայրացած՝ արևելյան շրջաններից ստացվող տագնապալի լուրերի, Մուսա բեյի դատավարության արդյունքների և այդ ուղղությամբ պատրիարք Աշըգյանի անգործունեության պատճառով: Նշվում էր, որ ընդհատելով կիրակնօրյա պատարագը, մի խումբ հայեր փորձում են քաղաքական բնույթի փաստաթուղթ ընթերցել եկեղեցում և ստիպել պատրիարքին անմիջապես սուլթանին ներկայացնել հայերի պահանջները: Պատրիարքին պարտադրում են շարժվել ցուցարարների հետ դեպի սուլթանական պալատ՝ հայերի պահանջները սուլթանին ներկայացնելու համար: Ոստիկանությունն ու զինվորներն ընդհարվում են հայ ցուցարարների հետ, որի արդյունքում երկուստեք արձանագրվում են զոհեր: Ըստ դեսպանի, շատ շուտով, ձերբակալելով զգալի թվով հայերի և զորք տեղակայելով առաջնորդարանի շրջակայքում, իշխանությունները կարողանում են կարգ ու կանոն հաստատել Գում Գափույում: Ուայթը հատկանշական էր համարում այն փաստը, որ թուրքերի կողմից Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո սա առաջին դեպքն էր, երբ

273 Նույն տեղում, էջ 60-61:
274 Նույն տեղում, էջ 79:



մայրաքաղաքում քրիստոնյաները համարձակվում են դիմադրել զինվորներին:275 Իր հաջորդ զեկուցագրում (21 օգոստոսի) դեսպանը Սոլսբերիին գրում էր, որ ներկա պայմաններում ոչ նպատակահարմար է գտնում դեսպանության միջամտությունը ձերբակալված հայերի պատիժը մեղմացնելու ուղղությամբ, քանի որ որոշ տեղեկությունների համաձայն, Աբդուլ Համիդն ինքը հակված չէ մահապատժի ենթարկել մեղավորներին և այդ կապակցությամբ խորհրդակցություններ է անցկացնում մայրաքաղաքի ազդեցիկ հայերի հետ:276

Ըստ Լլոյդի, հայ բնակչության ներկայիս տառապանքներն ունեն հետևյալ հիմնական պատճառները. 1/ կյանքի և ունեցվածքի անպաշտպանվածություն. 2/ ազատությունների բացակայություն. 3/ մահմեդականների համեմատ ոչ հավասար կարգավիճակ: Միաժամանակ նա նշում էր, որ հայերի վիճակն ավելի են բարդացնում արտասահմանում տարածվող ու հրապարակվող հիմնականում անհիմն և կեղծ տեղեկությունները, որոնք չեն նպաստում խաղաղության հաստատմանը և ի չիք դարձնում Եվրոպայի ջանքերը արդարություն և լավ կառավարում ապահովելու ուղղությամբ:277

Այդ օրերին բրիտանական հասարակությունը բացատրություններ էր պահանջում կառավարությունից, հաճախակի էին դարձել Հայկական հարցի քննարկումները խորհրդարանում, Ֆորին Օֆֆիսն ու դեսպանությունը չէին հասցնում պատասխանել խորհրդարանի անդամների հարցապնդումներին: Օգոստոսի սկզբին կայացած Բրայսի և Ֆերգյուսոնի զրույցի ժամանակ վերջինս նշում էր, որ բրիտանական կառավարությունը երբևիցե այդքան մտահոգված չի եղել Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններով, որքան ներկայումս: Բրայսը պատասխանում է, որ այդ խոսքերը չեն համապատասխանում այն անտարբերությանը, որը բրիտանական կառավարությունը հանդես է բերում Թուրքիայում վատթարացող իրավիճակի նկատմամբ: Նա կանխագուշակում էր, որ հայերի շրջանում գոյություն ունեցող հուզումները շուտով

կբերեն «արյունալի ճնշումների», որոնց կհետևի Մեծ Բրիտանիայի համար այդքան անցանկալի Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավումը: Բրայսն առաջարկում էր Ֆերգյուսոնին չեղյալ հայտարարել 1878 թ. անգլո-թուրքական կոնվենցիան, քանի որ

275 Նույն տեղում, էջ 62-64:
276 Նույն տեղում, էջ 66:
277 Նույն տեղում, էջ 73, 81:

244

սուլթանական կառավարությունը հրաժարվում է կատարել Հայաստանում բարենորոգումներ իրագործելու իր պարտավորությունները: Բնականաբար Ֆերգյուսոնը մերժում է Բրայսի առաջարկը, պատասխանելով, որ կառավարությունը փորձում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ կայսրությունում տիրող իրավիճակը բարելավելու ուղղությամբ:278

Սեպտեմբերի 8-ին գնդապետ Սթյուարտը հաղորդում էր Թավրիզից Սոլսբերիին, որ տեղի հայությունը, որի թվաքանակը կազմում է 28 հազ. հոգի, զգալիորեն գրգռված է Էրզրումում և Կոստանդնուպոլսում տեղի ունեցած դեպքերից, նրանց շրջանում «անհեթեթ» խոսակցություններ են տարածվում Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի հայերի միավորման և«մեր թագավորությունը» ստեղծելու մասին: Բրիտանացի գնդապետի կարծիքով, հայկական պետության ստեղծումը «բացարձակապես անհնարին է», քանի գոյություն ունի Ռուսաստանը, ինչպես նաև այն պատճառով, որ հայերը որևէ տեղ բնակչության մեծամասնություն չեն կազմում: Ավելին, ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո նա ճամփորդել էր Թուրքիայի արևելյան շրջաններում և եկել այն եզրակացության, որ հայերն ամենուրեք կազմում են բնակչության փոքրամասնությունը, բացի Խարբերդի դաշտավայրից:279

Հոկտեմբերի 25-ին Լլոյդը Ուայթին զեկուցում էր ռուսահայ զինված խմբերի կողմից թուրքական սահմանը խախտելու և հայ բնակչությանը քրդական հարձակումներից պաշտպանելու դեպքերի վերաբերյալ: Նշվում էր նաև, որ ռուսական կառավարությունը մեծ քանակությամբ զենք է բռնագրավել և ձերբակալություններ կատարել՝ սահմանի խախտումները կանխելու նպատակով: Այս առիթով հյուպատոսը հանդիպում էր ունեցել Էրզրումի վալիի հետ և իր կառավարության մտահոգությունը հայտնել նման փաստերի կապակցությամբ: Նա հերթական անգամ վալիին առաջարկել էր միջոցառումներ ձեռնարկել հայ բնակչությանը քրդական հրոսակախմբերի հարձակումներից պաշտպանելու և մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասարությունն ապահովելու ուղղությամբ՝ հետագայում լուրջ քաղաքական բարդություններից խուսափելու համար: Վալին տեղեկացնում էր Լլոյդին, որ ներկայումս թուրքական իշխանությունները ուժեղացրել են

278 A Vanishing Treaty. - The Spectator, 1890, vol. 65, August 9, p. 172.
279 Turkey, No 1 (1890-1891) ..., pp. 78-79.

245

սահմանի հսկողությունը, ինչպես նաև ողջունում էր ռուսական կառավարության կողմից ձեռնարկված խիստ միջոցներն այդ ուղղությամբ:280

1891 թ. հունվարի 6-ին Սոլսբերին ընդունում է Սիսի Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ Գարեգին Եսայանին, որը Լոնդոն էր ժամանել Բրիտանիայի արքեպիսկոպոսին կաթողիկոսի ուղերձը փոխանցելու նպատակով: Նա տեղեկացնում էր վարչապետին, որ թուրքական իշխանությունների վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ գնալով ավելի է վատանում և եթե Մեծ Բրիտանիան, որը հայերի միակ հույսն է, ինչ-որ կերպ չմիջամտի, հայ բնակչությունը «կդադարի գոյություն ունենալուց»: Եսայանը շեշտում էր, որ հայերը ոչ թե անկախություն են հայցում, այլ խնդրում էր ապահովել կրոնի ազատություն և բնականոն կառավարում: Ըստ Եսայանի, ներկայումս Զեյթունի եպիսկոպոսը առանց որևէ պատճառի գտնվում է Մարաշի բանտում, թուրք զինվորները տեղակայված են եկեղեցում և հայերի տներում, պաշտոնյաները հայերին ստիպում են ընդունել մահմեդականություն, բժիշկները հայ երեխաներին պատվաստում են թունավոր դեղամիջոցներով, իսկ կաթողիկոսը տեղափոխվել է Իսկենդերուն՝ վտանգի դեպքում ծովով փրկվելու նպատակով: Եսայանը Սոլսբերիին խնդրում էր չհավատալ թուրք պաշտոնյաներին և գաղտնի քննություն կատարել շրջանում՝ իր ներկայացրած փաստերը ստուգելու նպատակով: Հանդիպումից անմիջապես հետո Սոլսբերին Ուայթին հանձնարարում էր Հալեպում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Թոմաս Ջագոյի միջոցով համապատասխան քննություն անցկացնել Զեյթունում:281

Հունվարի 19-ին Ուայթը Սոլսբերիին տեղեկացնում էր, որ իր, պատրիարքի և հայ կաթոլիկ առաջնորդի կողմից տարված աշխատանքի շնորհիվ սուլթանը, Սուրբ Ծննդի կապակցությամբ, բանտից ազատել էր 76 հայ քաղբանտարկյալների: Ըստ դեսպանի, այդ կապակցությամբ նա բազմաթիվ անգամ զրույցներ էր ունեցել մեծ վեզիրի հետ: Նույն օրն ազատված հայերը հավատարմության երդում էին տվել պատրիարքին, իսկ վերջինս նրանց կոչ էր արել լինել սուլթանին հնազանդ:282

---

280 Նույն տեղում, էջ 99-100:
281 FO 424 / 169, No3, p. 4.
282 Turkey, No 1 (1892). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey. London, 1892, p. 2.

246

Դիվիի հունվարի 12-ի հուշագրում մանրամասն վերլուծվում էին բրիտանական թերթերում Հայկական հարցին վերաբերող նյութերը: Նա համարում էր, որ 1890 թ. ընթացքում «Դեյլի Նյուզ»-ում «Անիշխանությունը, հուզումներն ու անկարգությունները Հայաստանում» խորագրի տակ տպագրված տեղեկությունների հիմնական մասը իրականությանը չեն համապատասխանում և ընթերցողին մոլորության մեջ գցելու նպատակ են հետապնդում: Մասնավորապես նա կեղծիք էր համարում սեպտեմբերի 16-ին «Անօրինականություն Հայաստանում» վերնագրի տակ տպագրված Իգդիրից ստացված նամակը, ինչպես նաև Գլադստոնին ուղղված Մինաս Չերազի գրությունը: Դիվին իրականությանը չհամապատասխանող և չափազանցված էր համարում օգոստոսի 20-ին և դեկտեմբերի 3-ին նույն թերթում տպագրված նյութերը Մուշում տեղի ունեցած հայկական

եկեղեցու պղծման, հայերի ջարդերի, թուրքական կառավարության կողմից քրդերին զենք բաժանելու դեպքերի մասին, ինչպես նաև այն պնդումները, թե իբր «ներկայումս թուրքերը նպատակադրվել են ամբողջապես բնաջնջել հայերին»:283

Էրզրումում հյուպատոսի պաշտոնակատար Չարլզ Հեմփսոնին ուղղված զեկուցագրերում (14, 31 հունվարի, 9 փետրվարի) Դիվին գրում էր, որ հայկական քարոզչությունը շրջանում նոր փուլ է թևակոխել, որը կայանում է «ազգային կարիքների համար» հարուստ հայերից դրամ շորթելու մեջ՝ սպառնալից բովանդակությամբ անանուն նամակներ հղելու միջոցով: Փոխհյուպատոսը թվարկում էր Վանի հարուստ հայերի անունները, որոնք ստացել էին նման նամակներ: Երկու շաբաթ անց քաղաքի իշխանությունները ձերբակալում են մի քանի երիտասարդ հայերի, որոնք տարածում էին նման նամակներ: Փետրվարի 4-ին շուրջ 100 հայեր, հիմնականում ձերբակալվածների բարեկամները, ցույց էին կազմակերպել քաղաքում, որի արդյունքում ձերբակալվեցին ևս մի քանի հոգի:284

1891 թ. ձմռան ամիսներին սուլթանական կառավարությունը ձեռնարկեց հիմնականում քրդական ցեղախմբերից կազմված «համիդիե» հեծելազորի կազմավորման աշխատանքները: Ընդհանուր առմամբ կազմվեցին շուրջ 33 հազ. հոգուց բաղկացած 30 նման

283 Նույն տեղում, էջ 10-12:
284 Նույն տեղում, էջ 12-14, 18:

247

գնդեր:285 Քրդական հեծելազորի ստեղծման միջոցով սուլթանական իշխանությունները նպատակադրվել էին կանխարգելել հայերի ազգային ազատագրական շարժման զարգացումը,286 զգալի փոփոխության ենթարկել ազգաբնակչության կազմը մահմեդականների օգտին այն շրջաններում, որտեղ նախատեսվում էր բարենորոգումների իրականացում, դիմագրավել ռուսական բանակի գործողություններին՝ Ռուսաստանի հետ հնարավոր պատերազմի դեպքում:

Հունվարի 30-ին Հեմփսոնը Էրզրումից հաղորդում էր Ուայթին, որ վիլայեթի զինվորական իշխանությունները կազակների օրինակով ստեղծում են քրդերից կազմված անկանոն հեծելազորային գնդեր: Քաղաքի իշխանությունները ընդունել և զրուցել են գրեթե բոլոր քրդական ցեղապետներին: Որոշվել էր, որ այդ նպատակով քրդերը պետք է օգտագործեն իրենց ձիերը, իսկ իշխանություններն ապահովեն նրանց զորանոցներով, հագուստով, սնունդով և զինամթերքով, ինչպես նաև տարին երկու անգամ կազմակերպեն զորավարժություններ: Ցեղապետները ստանալու են զինվորական կոչումներ, սակայն գնդապետից ոչ բարձր:287

Մարտին սուլթանը քրդական բոլոր ցեղապետներին հրավիրում է Կոստանդնուպոլիս՝ Սելանիքի տոնի առթիվ նրանց պատվին ընդունելություն կազմակերպելու նպատակով: Աբդուլ Համիդն ընդունում է հեծելազորային գնդերի հրամանատարներին մեծ պատվով ու շուքով և նվիրում նրանց կայսերական դրոշակներ, որոնց վրա նշված էին գնդերի անվանումներն ու ասույթներ Ղուրանից:288 Մայիսի 23-ին Տրապիզոնում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Լոնգուորթը տեղեկացնում էր դեսպանին, որ ավստրիական

՝Հելիոս՝ նավով Կոստանդնուպոլսից վերադարձած քուրդ ղեկավարները անմիջապես մեկնում են Էրզրում, ուր

285 Лазарев Я.Д. Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна. Тифлис, 1895, с. 27.
286 Ինչպես 1920 թ. հաստատում էր թուրք գործիչ Իսմաիլ Քեմալը, հայերը հանդիսանում էջն «կայսրության միակ ժողովուրդը, որը նպաստում էր ազատամիտ, իսկ սուլթանի տեսանկյունից կործանարար գաղափարների տարածմանը...՝ այսինքն թունավոր օձ, որի գլուխը պետք էր ջարդել» (The Memoirs of Ismail Kemal. London, 1920, p. 256):
287 Turkey, No 1 (1892) ..., p. 16.
288 Նույն տեղում, էջ 19, 37:

248

տեղակայված է թուրքական 4-րդ բանակը: Այստեղ նրանք մարզվելու են երկու ամիս՝ թուրք սպաների ղեկավարության ներքո:289

Փետրվարի 28-ին Հեմփսոնը Ուայթին հաղորդում էր հայ բնակչության չափազանց մեծ անհանգստության մասին: Ըստ հայերի, սուլթանական կառավարության այդ որոշումն ուղղված է իրենց և Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի դեմ: Իսկ քրդերը բացահայտորեն հայտարարում են, թե դա հատուկ արվում է հայերին ճնշելու նպատակով և իշխանությունների կողմից նրանց տրված են համապատասխան երաշխավորություններ այն մասին, որ հայերին հալածելու համար նրանք այլևս չեն պատժվելու:290 Նման տեղեկություններ էր հաղորդում Հեմփսոնին նաև փոխհյուպատոս Բոյաջյանը Դիարբեքիրից:291

Հունվարի 31-ին Ուայթը Սոլսբերիին գրում էր, որ հայ բնակչության ծանր վիճակի մասին հյուպատոս Հեմփսոնից ստացվող տեղեկությունների կապակցությամբ Սենդիսոնին հանձնարարվել էր հանդիպել մեծ վեզիրին և ծանոթացնել նրան փաստերին: Տեղի ունեցած զրույցի ընթացքում Սենդիսոնը բրիտանական կառավարության անունից պահանջում էր միջոցներ ձեռնարկել իրավիճակը բարելավելու ուղղությամբ, անհրաժեշտ համարելով հայերով բնակեցված շրջաններում կարող նահանգապետներ և իրավաբաններ նշանակելը:292

Իր հերթական զեկուցագրում (21 փետրվարի) Հեմփսոնը տեղեկացնում էր դեսպանին, որ չնայած հայ բանտարկյալների վերաբերյալ սուլթանի ներման հրամանագրին, Էրզրումի իշխանությունները ժխտում են նման որոշման գոյությունը և շարունակում հայերի ձերբակալությունները:293 Իսկ Ջագոն գրում էր Հալեպից (20 մարտի), որ Հալեպի և Ադանայի վիլայեթների բանտերում գտնվում են 101 հայ քաղբանտարկյալներ:294 Ըստ Հեմփսոնի, Ալաշկերտի տեր ու տիրական է դարձել քուրդ Հուսսեյն աղան, որը թալանում, սպանում և առանց մեղադրանքի բանտ է նստեցնում հայերին: Այդ կապակցությամբ մարտի 23-ին

289 Նույն տեղում, էջ 56:
290 Նույն տեղում, էջ 23:
291 Նույն տեղում, էջ 36:

292 Նույն տեղում, էջ 3-4:
293 Նույն տեղում, էջ 39-40:
294 Նույն տեղում, էջ 42:

249

Սոլսբերին դեսպանին հանձնարարում է ծանոթացնել մեծ վեզիրին Հուսսեյն աղայի գործողություններին վերաբերող փաստերին և պահանջել հետաքննություն կատարել ու հեռացնել նրան Ալաշկերտից:295 Թեև մեծ վեզիրը խոստանում է համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ, Հուսսեյն աղան, մյուս քուրդ ղեկավարների հետ միասին մեկնում է Կոստանդնուպոլիս սուլթանին հանդիպելու նպատակով և անարգել վերադառնում Ալաշկերտ:296

Ապրիլի 13-ին Բոյաջյանը Տրապիզոնից հաղորդում էր Հեմփսոնին հայերի շրջանում զենքի դիմելու և ազատության համար պայքարելու աճող համոզմունքի մասին: Հայերը վստահ են, գրում էր փոխհյուպատոսը, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պատրաստվում են օգնության հասնելու իրենց: Լուրեր են տարածվում, թե իբր այդ տերությունների սպաների կողմից ղեկավարվող 100 հազ. զինված և լավ պատրաստված հայերի բանակը գարնանն օգնության է հասնելու արևմտահայությանը: Բոյաջյանի կարծիքով, երիտասարդ տաքարյուն հայերի կողմից տարածվող նման կեղծ լուրերը շատ վտանգավոր են և կարող են անկանխատեսելի հետևանքների բերել:297

Մայիսի 2-ին Հեմփսոնը դեսպանին հաղորդում էր, որ Էրզրումի հայ ընտանիքների մի մասը սկսել է հեռանալ քաղաքից դեպի ռուսական սահման, իսկ մյուս մասը՝ դեպի Կոստանդնուպոլիս:298 Այդ երևույթի հիմնական պատճառներն, ըստ հյուպատոսի պաշտոնակատարի, իշխանությունների կողմից նրանց հանդեպ անարդարացի, մահմեդականների հետ համեմատ ոչ հավասար վերաբերմունքի մեջ են: Մասնավորապես նա նշում էր, որ 1875 թ. հաստատված կանոնակարգի համաձայն, քրիստոնյաները հավասար իրավունքներ էին ստացել կառավարական գրասենյակներում, դատարաններում, ոստիկանությունում և ընդհանրապես բոլոր հասարակական հիմնարկներում աշխատելու համար: Սակայն, ըստ Հեմփսոնի, այդ կանոնակարգը փաստորեն չի գործում, քանի որ Էրզրումի շրջանի ոստիկանությունում ծառայում է ընդամենը երեք քրիստոնյա, իսկ կառավարական գրասենյակներում՝ միայն երկուսը: Թեև Էրզրումի մահմեդական և

295 Նույն տեղում, էջ 25:
296 Նույն տեղում, էջ 37:
297 Նույն տեղում, էջ 47:
298 Նույն տեղում, էջ 45:

250

քրիստոնյա ընտանիքների թվաքանակի համեմատությունը երկուսը մեկի էր կազմում, հավաքվող հարկերի թիվը գրեթե հավասար էր: Ընդ որում, ըստ օրենքի, հավաքված գումարի հինգ տոկոսը պետք է գնար դպրոցների պահպանմանը, սակայն քրիստոնյա դպրոցներին ոչինչ չէր հասնում, իսկ քրիստոնյաները իրավունք չունեին հաճախելու

մահմեդական դպրոցներ: Հեմփսոնի տեղեկությունների համաձայն, նախկինում որևէ ճամփորդություն կատարելու համար մահմեդականներն ու քրիստոնյաները վկայականներ պետք է ներկայացնեին համապատասխանաբար իրենց համայնքների ղեկավարներից, սակայն ներկայումս կարգը փոխվել էր՝ քրիստոնյաներից պահանջվում էր նաև վկայական մահմեդական համայնքի ղեկավարությունից: Թեև կարող է թվալ, շարունակում էր Հեմփսոնը, որ այս ամենը չնչին հանգամանքներ են, սակայն հայերը բավականին զգայուն և հիվանդագին են ընկալում իշխանությունների նման վերաբերմունքը և հայտարարում են, որ առանց դիմադրության չեն կոտորվելու: Թեև Հեմփսոնը համոզված էր, որ իր կարողություններով վալիին կհաջողվի կանխել որևէ հուզում, սակայն իրավիճակը շրջանում համարում էր ճգնաժամային:299 Նա գրում էր դեսպանին (23 մայիսի), որ չնայած որոշ հայեր լուրեր են տարածում պատրաստվող հայկական ապստամբության մասին, այդ բանն անիրականանալի է և անհիմն, քանի որ հայերը հիմնականում շատ խաղաղ են և չունեն ոչ զենք, ոչ էլ համապատասխան ղեկավարներ: Ըստ Հեմփսոնի, շրջանի վիճակը լավ պատկերացնողի համար նման խոսակցությունները կարող են միմիայն ծիծաղ առաջացնել, սակայն թուրք իշխանությունները շատ լուրջ են ընկալում ապստամբության հնարավորությունը:300

Հուլիսի 11-ին Հակոբյանը կրկին դիմում է Սոլսբերիին Հայաստանում տիրող ծանր վիճակի կապակցությամբ, այս անգամ Գերմանիայի կայսրի Լոնդոն այցելության կապակցությամբ: Նշելով, որ սուլթանական կառավարությունը բացարձակապես ոչինչ չի արել Բեռլինի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ուղղությամբ, Հակոբյանն առաջարկում էր քննարկել Հայկական հարցը կայսրի հետ և համատեղ միջոցներ ձեռնարկել բարենորոգումների իրագործման նպատակով:301

---

299 Նույն տեղում, էջ 46-47:
300 Նույն տեղում, էջ 56-57:
301 FO 424 / 169, No 71, p. 82.

251

Սակայն Սոլսբերիի կառավարությունը ոչ միայն չքննարկեց Հայկական հարցը գերմանական կայսրի հետ, այլև՝ մինչև իր իշխանության հանձնումը լիբերալ կուսակցությանը 1892 թ., փաստորեն ոչ մի ինքնուրույն քայլ չձեռնարկեց կայսրության հայ բնակչության վիճակը բարելավելու ուղղությամբ, լոկ սահմանափակվելով բրիտանական հյուպատոսություններից ստացվող տեղեկատվության արձանագրությամբ: 1891 թ. ընթացքում հյուպատոսներ Ջագոն (Հալեպ), Հեմփսոնը (Էրզրում), փոխհյուպատոսներ Բոյաջյանը (Խարբերդ), Դիվին (Վան) շարունակում էին մանրամասն տեղեկություններ հաղորդել դեսպանությանն ու Ֆորին Օֆիսին կայսրության արևելյան շրջաններում կատարվող տագնապալի իրադարձությունների, իշխանությունների և քրդական հրոսակախմբերի կողմից հայ բնակչության հանդեպ իրագործվող ճնշման քաղաքականության փաստերի՝ սպանությունների, թալանի, ձերբակալությունների մասին:302

1892 թ. փետրվարի 24-ին, հիմնվելով Ադանայի եպիսկոպոս Վեհապետյանից և Հակոբյանից ստացված նամակներում բերված փաստացի տվյալների վրա, Քենտրբերիի արքեպիսկոպոսը խնդրում էր Սոլսբերիին բրիտանական դեսպանության միջոցով

քննություն կատարել և համապատասխան քայլեր ձեռնարկել Զեյթունի եպիսկոպոս Գարեգին Եսայանին բանտից ազատելու, ինչպես նաև արքեպիսկոպոս Խորեն Նար Բեյի կրոնական պարտականությունները վերականգնելու ուղղությամբ, որը սուլթանական կառավարության կողմից մեղադրվել էր Ֆրանսիայում բնակվող իր բարեկամի հետ «խռովարար» բնույթի նամակագրություն հաստատելու մեջ: Երեք օր անց Սոլսբերին հանձնարարում էր Օսմանյան կայսրությունում նոր նշանակված դեսպան Ֆրենսիս Քլեյր Ֆորդին303 պարզել և զեկուցել իրեն արքեպիսկոպոսի նամակում նշված փաստերի մասին:304

Մարտի 5-ին Հեմփսոնը հավատարմատար Ֆեյնին հաղորդում էր, որ Մուշում ձերբակալվել են մեծ թվով հայեր՝ ռուսական կառավարությանը խնդրագիր պատրաստելու և

302 Turkey, No 1 (1892) ..., pp. 61-62, 65, 67, 68-69, 75-76, 78-81, 107-108, 109-111:
303 Ֆորդ (Ford) Ֆռենսիս Քլեր - բրիտանացի դիվանագետ: 1887-1892 թթ.՝ հավատարմատար Իսպանիայում, 1892-1893 թթ.՝ դեսպան Թուրքիայում, 1893-1898 թթ.՝ դեսպան Իտալիայում:
304 Turkey, No 3 (1896). Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey. 1892-1893. London, 1896, p. 6.

252

2 հազ. ավելի ստորագրություններ հավաքելու մեղադրանքով: Ըստ Հեմփսոնի, ձերբակալությունների ընթացքում տեղի էին ունեցել համատարած անկարգություններ, արձանագրված են մահացածներ և վիրավորներ:305

Մարտի 17-ին Սոլսբերին Թուրքիայի ասիական շրջանների վիճակին վերաբերող հատուկ ցուցում է իջեցնում Ֆորդին: Դժվարությունների հանդիպելով Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունների հետ այս հարցում համատեղ գործողություններ կիրառելու հնարավորության հարցում, գրում էր Սոլսբերին, վերջին տարիներին բրիտանական կառավարությունը դադարել էր պահանջել Բարձր Դռնից 61-րդ հոդվածի պայմաններով նախատեսված ընդհանուր բարենորոգումների իրագործում, սուլթանի նախարարների ուշադրությունը հրավիրելով միմիայն բրիտանական հյուպատոսներից ստացվող վատ կառավարման և բռնությունների փաստերի վրա: Վարչապետը դեսպանին հանձնարարում էր շարունակել բրիտանական կառավարության այդ գիծը, ինչպես նաև, օգտագործելով յուրաքանչյուր հնարավորություն, պահանջել սուլթանական կառավարությունից՝ ելնելով Թուրքական կայսրության և մարդկության շահերից, վերականգնել սուլթանի քրիստոնյա հպատակների օրինական իրավունքները, նրանց կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ու քրդերի կողոպուտից նրանց պաշտպանությունն ապահովող քաղաքականության միջոցով: Սոլսբերին շեշտում էր, որ կայսրության քրիստոնյա բնակչության դժգոհությունն ու զայրույթը վնասակար ազդեցություն են թողնում Օսմանյան կայսրության բարեկեցության և կայունության վրա:306

Ապրիլ-հունիս ամիսների ընթացքում բրիտանական հյուպատոսությունները շարունակում էին տեղեկություններ հաղորդել տարբեր քաղաքների բանտերում գտնվող

հայ քաղբանտարկյալների մասին: Ապրիլի 22-ին հյուպատոս Ջագոն տեղեկացնում էր Ֆորդին, որ Զեյթունում ձերբակալված եպիսկոպոսը դատապարտվել է ցմահ բանտարկության, ուսուցիչը՝ հինգ տարվա և, ևս 23 հայեր՝ տարբեր ժամկետների ազատազրկման, իսկ տերտերը՝ մահապատժի: Ըստ հյուպատոսի, նրանց հարցը պետք է լսի նաև Կոստանդնուպոլսի գերագույն դատարանը: Տեղեկատվությունը ստանալուն պես, Սոլսբերին հանձնարարում էր դեսպանին ուշադրությամբ հետևել գործընթացին և որ դեսպանության

305 Նույն տեղում, էջ 9:
306 Նույն տեղում, էջ 8



ներկայացուցիչը անպայմանորեն մասնակցի լսումներին:307 Հունիսի 6-ին Ֆորդը պատասխանում էր Սոլսբերիին, որ դեսպանության ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստին մերժվել է թուրքական իշխանությունների կողմից: Դեսպանը հատուկ հանդիպում էր ունեցել այդ կապակցությամբ արտգործնախարար Սաիդ փաշայի հետ, տեղեկացրել նրան դատական գործընթացում տեղի ունեցած լուրջ խախտումների մասին և ներկայացրել համապատասխան հուշագիր: Հուշագրում բերվում էին բրիտանական հյուպատոսությունից ստացված իրավախախտումների վերաբերյալ փաստեր Հալեպում կայացած դատական լսումների ընթացքում: Նշվում էր, որ այդ գործը գտնվում է Բրիտանիայի հասարակական կարծիքի և պաշտոնական շրջանակների ուշադրության կենտրոնում և հույս հայտնվում, որ գերագույն դատարանն ընդունելու է արդարացի որոշում:308

Պահպանողական կառավարության հրաժարականից առաջ, հունիսի 10-ին, Լոնդոնի Հայկական հայրենասիրական ընկերությունն իր հերթական խնդրագիրն է ներկայացնում վարչապետ Սոլսբերիին: Փաստաթղթում նշվում էր. բրիտանական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներում՝ Կապույտ գրքերում տպագրված նամակագրությունն ու ընկերության կողմից ստացված տեղեկությունները վկայում են այն մասին, որ անցած տարիների ընթացքում Հայաստանում այդպես էլ ոչ մի բարեփոխում տեղի չի ունեցել, սուլթանական կառավարությունը չի կատարել իր պարտավորությունները ոչ միայն իր հայ հպատակների, այլև Մեծ Բրիտանիայի և ողջ Եվրոպայի հանդեպ: «...Դժվար է հասկանալ, - գրում էին խնդրագրի հեղինակները, - թե ինչ օրինական կամ հավանական հիմունքների վրա են հայերը, շարունակաբար և այդպիսի մեծ թվով ենթարկվում ձերբակալությունների, բանտարկությունների, աքսորի կամ պատժվում այլ կերպ՝ անհիմն դավադրության և պետական դավաճանության մեղադրանքով»: Հայերի ցանկությունը, նշվում էր փաստաթղթում, դա, Լիբանանի օրինակով, Հայաստանի ժողովրդի հավասարությունը, ազատությունն ու անվտանգությունն ապահովող վարչական համակարգի ստեղծումն է, ինչը չի հակասում ոչ միայն 1878 թ. Բեռլինի պայմանագրի, անգլո-թուրքական կոնվենցիայի, 1880 թ. դեսպանների համատեղ հայտագրի, այլև Գյուլհանեի Հաթթը Շերիֆի և 1856 թ. Հաթթը

307 Նույն տեղում, էջ 19:
308 FO 424 / 172, No 52 / 1, pp. 37-38.

254

Հումայունի սկզբունքներին: Հայերը հավատացած են, շարունակում էին փաստաթղթի հեղինակները, որ Հայկական հարցի լուծումը բրիտանական կառավարության պարտականությունն է, քանի որ պատմության ընթացքում Անգլիան շատ անգամ է Թուրքիային դուրս բերել «անհույս ճգնաժամներից»: Ըստ նրանց, բրիտանական կառավարությունն, ի դեմս Մեծ Բրիտանիայի դեսպանի, պետք է կարողանա փոխել 1878 թ. ի վեր շարունակվող Բարձր Դռան «կեղծ գաղափարներն ու կեղծ վերաբերմունքը» հայ հպատակների հանդեպ և ստիպել սուլթանական կառավարությանն իրագործել 1880 թ. տերությունների համատեղ հայտագրով առաջարկված հայկական բարենորոգումները: Եթե պաշտոնական տվյալների համաձայն, հայերը զգալի փոքրամասնություն են կազմում մահմեդական բնակչության համեմատ, հարցնում էին փաստաթղթի հեղինակներն, ապա ինչո՞ւ են թուրքական իշխանություններն այդքան վախեցած «խռովարար» հայերից, ինչո՞ւ են արգելում և այրում «Հայաստան», «հայկական թագավորություն և ազգ» բառերը պարունակող պատմական և կրոնական գրքերը, շարունակաբար ձերբակալում ազգային կամ հայրենասիրական երգեր ունենալու, հայերի վիճակը նկարագրող նամակներ գրելու համար: Հայերի փրկությունը խնդրագրի հեղինակները տեսնում էին միմիայն Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունների կողմից հայկական շրջանների նահանգապետի նշանակման մեջ:309

Սակայն ընկերությունն այդպես էլ պատասխան չստացավ Սոլսբերիից, քանի որ շուտով Անգլիայում իշխանության գլուխ անցավ Գլադստոնի լիբերալ կառավարությունը: 1886-1992 թթ. իր կառավարման ընթացքում պահպանողականները այդպես էլ էական ոչ մի քայլ չկատարեցին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և անգլո-թուրքական կոնվենցիայով նախատեսված հայերին վերաբերող պարտավորություններն իրագործելու ուղղությամբ, թեև երկու փաստաթուղթն էլ ծնվել էին Սոլսբերիի անմիջական մասնակցությամբ: Բրիտանական դիվանագիտությունը կառավարության նման քաղաքականությունն արդարացնում էր Բեռլինի պայմանագիրը ստորագրած մյուս մեծ տերությունների անտարբերությամբ և հակասություններով, այսինքն համատեղ գործողությունների կիրառման հնարավորությունների բացակայությամբ, ինչպես նաև, հայկական բարենորոգումներ պահանջելով՝ սուլթանի ինքնիշխանությունն ու

309 FO 424 / 172, No 54, pp. 41-43.

255

անկախությունը չվիրավորելու մտահոգությամբ: Այդ ընթացքում բրիտանական դիվանագիտությունը փաստորեն կատարում էր փաստերը արձանագրողի դեր, մերթ ընդ մերթ սուլթանական կառավարության ուշադրությունը հրավիրելով առանձին աղաղակող դեպքերի վրա: Բրիտանական դիվանագիտությունը չարձագանքեց նույնիսկ համիդիե հեծելազորի կազմավորման առնչությամբ, հնարավոր է գիտակցելով, որ սուլթանի ձեռքում այն կարող է դառնալ ոչ միայն հայ բնակչության դեմ ուղղված գործիք, այլև Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը ռուսական նկրտումներից պաշտպանող միջոց,որն ինքնըստինքյան կարող է իրագործել անգլո-թուրքական կոնվենցիայով նախատեսված բրիտանական կառավարության պարտավորությունները:

Լրացուցիչ տեղեկություններ

Տրամադրել է՝ Արման Կիրակոսյան։
HTML կոդավորում՝ Լինա Քամալյան։

Հեղինակային իրավունքները՝ Արման Կիրակոսյան։
Հրապարակված է հեղինակի թույլտվությամբ։ Առանց հեղինակի թույլտվության արտատպումը կամ հրապարակումը արգելվում է։
Տես նաև

Арман Киракосян — Великобритания и Армянский вопрос
Джон Киракосян — Младотурки перед судом истории

Արման Կիրակոսյան

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Բովանդակություն Տիտղոսաթերթ Առաջաբան
Գլուխ առաջին Գլուխ երկրորդ Գլուխ երրորդ Գլուխ չորրորդ Գլուխ հինգերորդ
Ամփոփում Գրականության ցանկ Բովանդակություն (ըստ աղբյուրի)

256

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ.
ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ
1. ԳԼԱԴՍՏՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1892-1894 թթ.

Մեծ Բրիտանիայի և եվրոպական պետությունների հասարակայնության լիբերալ շրջանակները, իսկ հետագայում նաև բրիտանական պատմագրությունը համարում էին Գլադստոնին մեծ պետական գործիչ, որն իր գործունեության ընթացքում մշտապես պաշտպանել է փոքր ժողովուրդների իրավունքները, կարեկցանքով վերաբերվել նրանց տառապանքներին: Իրականում նա մարդասիրության դիմակ էր հագնում միայն այն ժամանակ, երբ գտնվում էր ընդդիմության մեջ: 1890 թ. ունեցած իր ելույթներում նա պահանջում էր, որպեսզի կառավարությունը խստորեն նախազգուշացնի Բարձր Դռանը, որ անգլո-թուրքական կոնվենցիայի պարտավորությունների անտեսումը կարող է ստեղծել «արտակարգ լրջության իրավիճակ և հետևանքներ»:1 Հայտնի գիտնական և հասարակական գործիչ Էմիլ Դիլլոնը2 նույնիսկ նշում էր, որ, ելնելով Ռուսաստանի

աշխարհագրական դիրքից, «բարյացակամ տրամադրություններից», «քաղաքակրթական առաքելությունից»,

_____
1 A Vanishing Treaty..., p. 172.
2 Դիլլոն (Dillon) Էմիլ (1854-1933) – իռլանդացի գիտնական ու լրագրող, արևելյան լեզուների և համեմատական լեզվաբանության մասնագետ: 1880-ական թթ. աշխատել է Պետերբուրգի, Խարկովի համալսարաններում, Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, ուսումնասիրել է հայոց լեզուն և գրականությունը: Գրել է հայոց լեզվին նվիրված մի շարք աշխատություններ, թարգմանել հայկական սկզբնաղբյուրներ: 1895 թ., որպես Լոնդոնի «Դեյլի Տելեգրաֆ» թերթի թղթակից, եղել է Օսմանյան կայսրությունում, այցելել Արևմտյան Հայաստան: Հավաքել է մեծ քանակությամբ տեղեկություններ, հրատարակել է Հայկական հարցին վերաբերող հոդվածաշար:

257

ինչպես նաև «...քրիստոնեության, բարոյականության, մարդասիրության շահերից, ...լիբերալ կուսակցության հոչակավոր ղեկավարը Հայկական հարցի լուծման հնարավորությունը պահանջում էր տալ ռուսական կառավարությանը»3: Իր ելույթներում Գլադստոնը բազմիցս մեջբերում էր Փարիզի պայմանագիրը, համաձայն որի տերությունները երաշխավորում էին Օսմանյան կայսրության ամբողջականությունը, միաժամանակ պատասխանատվություն կրելով նրա ներքին խնդիրների համար: Գլադստոնի կենսագիր Փոլ Քնեպլենդի վկայությամբ, 1890-ական թթ. սկզբին նա բավականին անհանգստացած էր Հայաստանի դրությամբ, համարելով, որ ներկայումս միմիայն եվրոպական տերությունների համատեղ գործողություններով կարելի կլինի բարելավել հայերի կյանքի պայմանները: Գլադստոնի տեսակետը Թուրքիայում բարենորոգումների վերաբերյալ սահմանափակվում էր տեղական ինքնավարության ստեղծումով և «ազնիվ ու խելացի» նահանգապետների նշանակումով:4

Գլադստոնի իշխանության շրջանը համընկավ սուլթանական կառավարության կողմից հայ բնակչության կոտորածներ կազմակերպելու նախապատրաստման փուլի հետ: 1892 թ. Բարձր Դուռը պաշտոնապես արգելեց իր կողմից չհաստատված դպրոցների գործունեությունը: Այլ որոշման համաձայն, պետական ծառայության կարող էին անցնել միմիայն կայսրության այն հպատակները, որոնք ավարտել էին պետական, այսինքն մահմեդական ուսումնական հաստատություններ: Քրիստոնյաների դպրոցներին պատերազմ հայտարարելուց հետո սուլթանական կառավարությունն անցնում է ոչ մահմեդական գրականության «ոչնչացմանն ու բնաջնջմանը»: Արգելվեցին անգլիական գրականության այնպիսի դասականներ, ինչպիսիք են Շեքսպիրը, Բայրոնը, Միլթոնը, Սքոթը, ինչպես նաև Աստվածաշնչի այն գլուխները, ուր հանդիպում են «հալածանք», «խիզախություն», «ազատություն», «իրավունք», «միություն», «հավասարություն», «զենք», «հերոս», «կոտորած», «բռնապետություն» և այլ նման բառեր ու բառակապակցություններ: Համապատասխանաբար 1886 և 1892 թթ. Կոստանդնուպոլսում հրատարակվեցին «Պաշտպանություն» և «Համիդիե պարագլուխները» գրքերը, որոնք ուղղված էին քրիստոնեության և կայսրության քրիստոնյա ժողովուրդների դեմ: Այդ և նման մեծ տարածում ստացած ընդգծված հակաքրիստոնեական բնույթ կրող հրատարակությունները,

3 Lanin E.B. Armenia and the Armenian People. - The Fortnightly Reviw, 1890, vol. 54, p. 270.
4 Knaplund Paul. Gladstone`s Foreign Policy. New York, London, 1935, p. 159.

258

ինչպես նաև մայրաքաղաքի թուրքական մամուլում հրապարակված բազմաթիվ հոդվածները, հատուկ դեր պետք է խաղային մահմեդական մոլեռանդությունը բորբոքելու և հայ բնակչության կոտորածները կազմակերպելու գործում:5

Այսպիսով, ակնհայտ էր դառնում, որ թեև հայ բնակչության ծանր վիճակի հիմքում ընկած էին խորը քաղաքական, սոցիալ-տնտեսական և ազգային հիմքեր, սուլթանական կառավարությունը նպատակադրվել էր իր առջև ծառացած խնդիրները լուծել երկրի մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդությունը բորբոքելու, այն հայերի դեմ ուղղելու միջոցով:

Հունիսի 22-ին Էրզրումում Մեծ Բրիտանիայի նոր հյուպատոս Գոռեյվզը դեսպան Ֆորդին հաղորդում էր 4-րդ բանակի հրամանատար, գեներալ Զեքքի-փաշայի մասնակցությամբ քաղաքում կայացած շրջանի համիդիե քրդական հեծելազորի իսկական զինվորական ծառայության անցնելու պաշտոնական արարողության մասին: Ըստ հյուպատոսի, սուլթան Աբդուլ Համիդի հատուկ հրովարտակի ընթերցումից հետո տեղի ունեցավ զինվորական շքերթ, որին, կանոնավոր զորամասերի շարքին, մասնակցեցին շուրջ 1500 քուրդ հեծյալներ, որոնք զինված էին Մարտինի և Բերդան տեսակի հրացաններով: Մինչ այդ, հունիսի 10-ին, Զեքքի փաշան նման շքերթ էր ընդունել նաև Վանում: Իր ելույթում նա նշում էր, որ կառավարությունն արդեն կազմավորել է 20 հազ. հեծյալից բաղկացած քրդական 40 զորագունդ, որոնց հրամանատարությունը պետք է իրականացնեն կանոնավոր բանակից ընտրված 40 գնդապետներ և 150 կապիտաններ:6

Գլադստոնի կառավարությունը շարունակեց պահպանողականների որդեգրած գիծը Հայկական հարցում, անուշադրության մատնելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող արմատական փոփոխությունները, սուլթանական իշխանությունների հետզհետե սաստկացող հակահայկական քաղաքականությունը: Պատասխանելով արտաքին գործերի նախարար Ռոզբերիին ուղղված Մինաս Չերազի նամակին (17 հոկտեմբերի),

5 Maccoll Malcolm. The Constantinople Massacre and its Lesson. - The Contemporary Review, 1895, vol. 68, pp. 750-752.
6 Turkey, No 3 (1896) ..., pp. 33-34.

259

փոխնախարար Ֆիլիպ Քարրին7 գրում էր, որ ներկայումս Ռոզբերին անհրաժեշտություն չի տեսնում Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունների համատեղ քայլեր ձեռնարկելու մեջ: Ըստ Քարրիի, բրիտանական դեսպանությանն ու դեսպանին հանձնարարություն է տրված տեղական իշխանությունների կողմից հայերի հանդեպ տեղի ունեցած հալածանքի կամ անարդարության յուրաքանչյուր դեպքի առնչությամբ անհապաղ միջամտություն պահանջել Բարձր Դռնից: Ռոզբերիի կարծիքով, ներկայիս

պայմաններում նման քաղաքականությունը շատ ավելի արդյունավետ է, քան ձևական բնույթ կրող պաշտոնական ներկայացումները:8

Նոյեմբերի 11-ին Աբդուլ Համիդն իր մոտ է հրավիրում դեսպան Ֆորդին և հայտարարում, որ շուտով պատրաստվում է իրականացնել կայսրության ասիական շրջանների բարենորոգումների ծրագիրը: Նա դեսպանին տեղեկացնում էր, որ դեռևս մեկ տարի առաջ վստահելի պաշտոնյաներ էր ուղարկել հայերով բնակեցված շրջանները, որոնք մանրամասնորեն ուսումնասիրել են երկրի վիճակը և ներկայացրել իրեն ամբողջական զեկուցագիր, որի հիման վրա էլ պետք է իրագործվեն բարենորոգումները: Սուլթանը մտադրված էր գարնանը հատուկ լիազորություններով հանձնաժողով ուղարկել ասիական շրջանները՝ ժանդարմերիայի ու դատարանների գործունեությունը բարեկարգելու և ընդհանրապես անարդարության իրավական բոլոր խոչընդոտները վերացնելու նպատակով: Աբդուլ Համիդը Ֆորդին հավաստիացնում էր, որ անկեղծորեն ցանկանում է ապահովել իր բոլոր հպատակների «բարեկեցությունն ու երջանկությունը» և ձերբազատվել իր ներքին քաղաքականության «արտասահմանյան քննադատներից»:9 Նոյեմբերի 16-ին Ռոզբերին Ֆորդին հանձնարարում էր փոխանցել սուլթանին բրիտանական կառավարության շնորհավորանքները բարենորոգումների իրագործման կապակցությամբ որոշում ընդունելու

---

7 Քարրի (Currie) Ֆիլիպ - բրիտանացի դիվանագետ: 1888-1893 թթ. ՝ արտաքին գործերի նախարարի մշտական տեղակալ, 1893-1898 թթ. ՝ դեսպան Թուրքիայում, 1898-1903 թթ. ՝ դեսպան Իտալիայում:
8 FO 424/172, No. 98, pp. 75-76.
9 FO 424/172, No. 103, pp. 77-78.



համար, ինչը նպաստելու է «կայսրության հզորացմանն ու բոլոր հպատակների երջանկության ապահովմանը»:10

Սակայն Աբդուլ Համիդը ոչ միայն չկատարեց բրիտանական կառավարությանը տված իր հերթական խոստումը, այլև օգտագործեց 1893 թ. սկսված իրադարձություններն իր հակահայկական ծրագիրն իրագործելու համար: 1893 թ. հունվարի 19-ին կայսրության մի շարք խոշոր քաղաքներում՝ Ամասիայում, Մարզվանում, Չորումում, Թոխաթում, Յոզղատում, Անգորայում, Դիարբեքիրում և Սեբաստիայում, կենտրոնական շինությունների պատերին և հասարակական վայրերում միաժամանակ փակցվեցին և տարածվեցին հակասուլթանական բովանդակություն պարունակող թռուցիկներ: Պարսավագրում մասնավորապես նշվում էր, որ սուլթան Աբդուլ Համիդն այլևս անկարող է ղեկավարել կայսրությունը, լուծել երկրի առջև ծառացած խնդիրները, նրանից պահանջվում էր հրաժարվել գահից: Այդ իրադարձությունն անմիջապես օգտագործվեց իշխանությունների կողմից հայ բնակչության դեմ: Նշված համարյա բոլոր քաղաքներում սկսվեցին հայերի տների խուզարկություններ և համատարած ձերբակալություններ: Ըստ Տրապիզոնում բրիտանական հյուպատոս Լոնգուորթի տեղեկատվության, մեկ օրվա ընթացքում միայն Ամասիայում քաղաքի իշխանությունները ձերբակալել էին շուրջ 300 հայերի:11

Նույնիսկ այն ժամանակ արդեն ակնհայտ էր, որ այդ դեպքերը կազմակերպվել և իրագործվել էին կառավարության գործակալների կողմից՝ մահմեդական բնակչության շրջանում հակահայկական տրամադրություններ ստեղծելու և քրիստոնյաների համար արդարություն պահանջող եվրոպական տերությունների մոտ հայերի վարկը նսեմացնելու, նրանց դավադրության մեջ մեղադրելու նպատակով:12

Փետրվարի 26-ին Ֆորդը Ռոզբերիին հաղորդում էր, որ Սեբաստիայի վալին թռուցիկների տպագրման մեջ էր մեղադրել Մարզվանի ամերիկյան քոլեջի տնօրինությանը,

10 Turkey No. 3 (1896)..., pp. 42-43.
11 Նույն տեղում, էջ 63:
12 Bliss E.M. Turkey and Armenian Atrocities. Philadelphia, 1896, pp. 337-342; Gabrielian M.S. Armenia: A Martyr Nation. A Historical Sketch of the Armenian People from Tradition Times to the Present Tragic Days. New York, 1918, pp. 225-230.

261

ձերբակալել հայազգի ուսուցիչներ Թումայանին ու Գայայանին13 և բանտարկել ընդհանուր առմամբ շուրջ 2 հազ. հայերի: Մի քանի օր անց հրդեհվել էր քոլեջի օրիորդաց վարժարանի մասնաշենքը:14 Հյուպատոս Լոնգուորթի տեղեկության համաձայն, հրդեհն իրագործել էր Սեբաստիայի վիլայեթի ժանդարմերիայի փոխհրամանատարը:15

Նույն օրերին Անգորայում բրիտանական փոխհյուպատոս Նյուտոնը հաղորդում էր գլխավոր հյուպատոսի պաշտոնակատար Վռենչին քաղաքում տեղի ունեցած խուզարկությունների արդյունքում 50-60 հայերի ձերբակալության,16 իսկ Էրզրումում հյուպատոսի պաշտոնակատար Ֆիցմորիսը՝ Երզնկայի իշխանությունների կողմից ազգությամբ իտալացի Ջոզեֆ Գոլիտիի բանտարկության փաստերի մասին: Վերջինս մեղադրվում էր հայ հեղափոխականների հետ ունեցած իր կապերի մեջ: Ըստ Էրզրումի վալիի կողմից տրված բացատրության, Կոստանդնուպոլսի իշխանությունները հրահանգել էին ձերբակալության ենթարկել յուրաքանչյուր արտասահմանցու, որը կարող էր որևէ առնչություն ունենալ հայկական շարժման հետ: Ֆիցմորիսի կարծիքով, թուրքական իշխանությունների նման վարքագիծը լրջորեն ոտնահարում է արտասահմանցիների իրավունքները, որոնք երաշխավորված են համապատասխան պայմանագրերով:17

13 Թումայանը և Գայայանը հանդիսանում էին 1885 թ. Մարզվանի «Անատոլիա» քոլեջի ուսանողների կողմից ստեղծված «Փոքր Հայքի կազմակերպության» գաղափարական ղեկավարները: Կազմակերպության հիմնական նպատակներն էին պատմական Փոքր Հայքի, Կիլիկիայի և Սև ծովի ափամերձ հայաբնակ վայրերում ազատագրական գաղափարների տարածումը, ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացումը, ինքնապաշտպանության նախապատրաստումը: Կազմակերպությունը մասնաճյուղեր ուներ Եվդոկիայում, Մալաթիայում և Կեսարիայում: Մարզվանի մասնաճյուղը ստեղծել էր մի քանի զինված խմբեր, որոնք պայքար էին մղում թուրք և քուրդ ավազակախմբերի դեմ՝ անկախ ազգությունից պաշտպանելով աշխատավոր ժողովրդի շահերը:
14 Turkey No. 3 (1896)..., pp. 63-64.
15 Նույն տեղում, էջ 64-65:

16 Նույն տեղում, էջ 73-74:
17 Նույն տեղում, էջ 72-73:

262

Մարտի 26-ին Ֆորդը զրույց է ունենում արտաքին գործերի նախարար Սաիդ փաշայի հետ, որի ընթացքում վերջինիս ուշադրությունն է հրավիրում կայսրության հայերով բնակեցված շրջաններում տիրող «անբավարար» վիճակի վրա: Դեսպանը նշում էր, որ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության համաձայն, «Փոքր Ասիայի քրիստոնյա համայնքների հանդեպ շատ դեպքերում կիրառվում է դաժան, անարդար և ճնշման քաղաքականություն»: Նա խստորեն նախազգուշացնում էր նախարարին այն մասին, որ թուրքական կառավարությունը կարող է հայտնվել վտանգի առջև, եթե համապատասխան միջոցներ չձեռնարկի ճնշման քաղաքականությանը վերջ դնելու ուղղությամբ: Ֆորդը տեղեկացնում էր Սաիդ փաշային հայտնի դեպքերի առնչությամբ Անգլիայում ստեղծված «ճնշող տպավորությունների», խորհրդարանի անդամների կողմից պարբերաբար ներկայացվող հարցապնդումների մասին:

Սաիդ փաշան պատասխանում է, որ բրիտանական թերթերում տպագրված փաստերը մեծապես չափազանցված են և շատ դեպքերում ճշմարտությանը չեն համապատասխանում: Միաժամանակ նա չի մերժում հայերի շրջանում կատարված ձերբակալությունները, նշելով, որ կառավարության կողմից իրագործված արագ միջոցառումները դրական արդյունք ունեցան դեպքերի զարգացման վրա: Նախարարը դեսպանին խոստանում է տրամադրել այդ դեպքերի կապակցությամբ Անգորայի վալիի կողմից կառավարությանը ներկայացված ամբողջական զեկուցագրի անգլերեն թարգմանությունը:

Այնուհետև դեսպանը դիմում է նախարարին դեսպանության ռազմական կցորդ, երկրի իրավիճակին քաջատեղյակ և թուրքերենին տիրապետող գնդապետ Չերմսայդին արևելյան շրջաններ գործուղելու խնդրանքով: Ըստ Ֆորդի, Չերմսայդի անկողմնակալ զեկույցը արևելյան շրջաններում տիրող իրավիճակի վերաբերյալ կարող է օգտակար լինել նաև սուլթանական կառավարության համար: Սաիդ փաշան խոստանում է քննարկել հարցը մեծ վեզիրի հետ և պատասխանել Ֆորդին, միաժամանակ մտահոգություն հայտնելով, որ Չերմսայդի առաքելությունը կարող է նոր հույսեր տալ հայերին օտարերկրյա աջակցության վերաբերյալ և լրացուցիչ լիցք հաղորդել հայկական «ապստամբական շարժմանը»: Դեսպանը նշում է, որ չի կարող համաձայնել նախարարի նման կարծիքի հետ, քանի որ կցորդի առաքելության հիմնական նպատակը կայանալու է միմիայն դեպքերի և իրավիճակի քննություն կազմակերպելու մեջ, ինչը որևէ առնչություն ունենալ չի կարող «հայերի կարգավիճակին վերաբերող խնդրի լուծման» հետ:

263

Հանդիպման վերջում բրիտանական դեսպանը հիշեցնում է նախարարին սուլթանի կողմից մի քանի ամիս առաջ բրիտանական կառավարությանը տված խոստումի՝ արևելան շրջաններ բարենորոգումներն իրագործող հանձնաժողով գործուղելու կապակցությամբ:

Հաղորդելով Ռոզբերիին Սաիդ փաշայի հետ ունեցած իր զրույցի մանրամասները, Ֆորդը եզրակացնում էր, որ թուրքական կառավարությունը մի կողմից՝ հասկանում է հայերի վիճակի կապակցությամբ ստեղծված դրության ողջ լրջությունը, իսկ մյուս կողմից՝ փորձում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ «իրապես գոյություն ունեցող հեղափոխական շարժման հետագա զարգացումը կանխելու նպատակով»:18

Մարտի 31-ին Ֆորդը Ռոզբերիին հաղորդում էր, որ դատավարություն բացելու նպատակով թուրքական իշխանությունները Մարզվանի ամերիկյան քոլեջի ուսուցիչներ Թումայանին ու Գայայանին, ինչպես նաև սուլթանական կառավարության դեմ դավադրություն կազմակերպելու մեջ մեղադրվող շուրջ 800 հայերի տեղափոխել են Անգորա: Մի քանի օր անց Սաիդ փաշան տեղեկացնում էր Ֆորդին, որ սուլթանը ներում է շնորհել Կեսարիայի, Յոզղատի և Մարզվանի մեծ թվով հայերի, սակայն դավադրության հիմնական մասնակիցները կանգնելու են դատարանի առջև:19

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ֆորդի կողմից ապրիլի 7-ին Ռոզբերիին ուղղված գաղտնի զեկուցագիրը: Փաստաթուղթը հերթական անգամ վկայում է այն մասին, որ սուլթան Աբդուլ Համիդը բարենորոգումների իրագործման որևէ ցանկություն չուներ և մտադրված էր խնդիրը լուծել բռնի միջոցներով, հաշվի չառնելով նույնիսկ տերությունների հնարավոր միջամտությունը: Դեսպանը գրում էր, որ գաղտնի և վստահելի տեղեկատուի տվյալների համաձայն, ապրիլի 5-ին Աբդուլ Համիդն իր մոտ է հրավիրում և երկարատև զրույց ունենում փոխարտգործնախարար, հայազգի Արթին փաշայի հետ: Սուլթանը մեղադրում էր Կոստանդնուպոլսի նշանավոր հայերին և, մասնավորապես, պաշտոնյաներին «անկարգություններ բորբոքելու և արտասահմանում գործող հայկական կոմիտեների հետ համատեղ բրիտանական խորհրդարանում հարցեր հրահրելու մեջ»: Արթին փաշան կտրականապես մերժում է մայրաքաղաքի հայ համայնքի հանցավորությունն ու պատասխանատվությունը, նշելով, որ խնդրի լուծման միակ դեղամիջոցը հանդիսանում է

---

18 Նույն տեղում, էջ 70-71:
19 Նույն տեղում, էջ 74-75:



սուլթանի կողմից խառը հանձնաժողով կազմավորելը և արևելյան շրջաններ գործուղելը՝ իրավիճակն ուսումնասիրելու և անհրաժեշտ բարենորոգումներ իրագործելու համար: Սուլթանը պատասխանում է, որ նույնիսկ չնչին մտադրություն չունի նման հանձնաժողով ուղարկելու, քանի որ այն ավելի կբարդացնի իրավիճակը և առիթ կստեղծի տերությունների կառավարությունների համար՝ հարցին միջամտելու նպատակով: Աբդուլ Համիդն ավելացնում է, որ մտադիր է ինքնուրույն կառավարել իր երկիրը և բարդությունների առաջացման, նույնիսկ համընդհանուր կոտորածի դեպքում, նա չի հանդուրժի նրանցից նույնիսկ մեկի միջամտությունը: Նա հանձնարարում է Արթին փաշային զգուշացնել Կոստանդնուպոլսի նշանավոր հայերին, որ խնդրի բարդացման ամբողջ պատասխանատվությունն ընկնելու է իրենց վրա: Արթին փաշան, նկատելով, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ մոլեռանդության արտահայտությունները, աղերսում է սուլթանի առջև գթասրտություն հանդես բերել իր քրիստոնյա հպատակների նկատմամբ:20

Ապրիլի 10-ին Ֆորդն առաջարկում էր Ռոզբերիին հետաձգել Չերմսայդի գործուղումը, քանի որ այդ նախաձեռնությունն իր դրական արդյունքն ունեցավ սուլթանի կողմից Մարզվանի դեպքերի առնչությամբ ձերբակալված հայերին ներում շնորհելու հարցում: Միաժամանակ դեսպանն առաջարկում էր հանձնարարել Կոստանդնուպոլսում գտնվող հյուպատոս Գոեյվզին Էրզրում վերադառնալու ճանապարհին այցելել Անգորա, Յոզգատ, Կեսարիա, Սեբաստիա, Խարբերդ ու Դիարբեքիր և մանրամասն զեկուցագիր ներկայացնել «հայկական շարժման և ճնշման թուրքական մեթոդների» մասին:21

Մարզվանի քոլեջի մասնաշենքի հրկիզման և ուսուցիչների ձերբակալության հարցում բրիտանական դեսպանությունը համագործակցում և խորհրդակցում էր ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչության հետ: ԱՄՆ քաղաքական շրջանակները մեծ նշանակություն էին տալիս Հայկական հարցին, օգտագործելով այն որպես սուլթանի վրա ճնշում գործադրելու, ինչպես նաև կայսրության քրիստոնյա բնակչության նկատմամբ ամերիկյան ազդեցության հաստատման միջոց: Այդ ընթացքում Սպիտակ տանն ու սենատում ավելի հաճախ էին քննարկում Հայկական, քան Վենեսուէլայի հարցը:22 Թեև 19-

20 FO 424/175, No. 32, p. 32.
21 Turkey No. 3 (1896)..., p. 80.
22 Godkin E.L. The Armenian Resolutions. - The Nation, 1896, vol. 62, January 30, p. 93.



րդ դ. վերջում Մերձավոր Արևելքը չէր հանդիսանում ամերիկյան քաղաքական ազդեցության ոլորտ, ԱՄՆ կառավարությունն իր միսիոներների միջոցով23 հետզհետե հող էր նախապատրաստում ապագայի համար: Ամերիկյան միսիոներները հովանավորում էին քրիստոնյա փոքրամասնություններին, համապատասխան աշխատանք տանում նրանց ավետարանչական դարձնելու ուղղությամբ, տպագրում և տարածում գրականություն, հիմնում եկեղեցիներ, դպրոցներ24 և հիվանդանոցներ, բնութագրելով իրենց հարաբերությունները կայսրության քրիստոնյա հպատակների հետ որպես մշակութային, բարեգործական և առևտրական: Կայսրության քրիստոնյաների համար Ամերիկան մեծ երկիր էր, որն իրենց ուղարկում էր բարեգործներ, ուսուցիչներ և բժիշկներ: Ամերիկյան միսիոներության գործուն աշխատանքի հետևանքով 1891-1898 թթ. շուրջ 12 հազ. 500 հայեր գաղթեցին ԱՄՆ:25

Սուլթանական կառավարությունը մեծ կասկածանքով էր վերաբերվում ամերիկյան միսիոներների գործունեությանը, միաժամանակ համարելով ԱՄՆ-ն որպես երկրի տնտեսական զարգացմանն օժանդակող կարևոր գործոն: ԱՄՆ-ն վաճառում էր Թուրքիային

23 Ամերիկյան միսիոներության շարժումը դեպի Մերձավոր Արևելք սկսվեց 1819 թ., Ջեյմս Մոնրոյի նախագահության օրոք, երբ արտասահմանյան միսիաների ամերիկյան վարչությունը Օսմանյան կայսրություն գործուղեց քահանաներ Պլինի Ֆիսկին և Լևի Պարսոնզին՝ գործունեության հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով: Սկզբնական շրջանում միսիոներության գլխավոր նպատակն էր մահմեդականների կրոնափոխությունը, սակայն երբ շուտով հայտնի դարձան այդ նպատակին արագ

հասնելու դժվարությունները, միսիոներներն ուղղեցին իրենց ջանքերը տեղի քրիստոնյա համայնքների՝ հայերի, հույների, ղպտիների և այլոց՝հոգևոր վերանորոգմանը՝(De Novo J. American Interests and Policies in the Middle East. 1900-1939. Mineapolis, 1963, pp. 8, 11-12) :
24 1900 թ. տվյալներով, Օսմանյան կայսրությունում աշխատում էր 162 ամերիկյան միսիոներ՝ 900 տեղացի օգնականների աջակցությամբ: Ավելի քան 40 գիշերօթիկ դպրոցներում և 7 քոլեջներում ուսանում էջն 2 հազ. 700 տղա և աղջիկ, 15 հազ. երեխա՝ բազմաթիվ նախակրթարաններում (De Novo J. Op. cit., p. 9):
25 Mirak R. Armenian Emigration to the United States to 1915. - Journal of Armenian Studies, 1975, Autumn, vol. 1, pp. 33-34.

266

արդյունաբերական և գյուղատնտեսական մեքենաներ, հեծանիվներ և այլն: Տարեկան երկիր էր ներմուծվում ավելի քան 2 հազ. գութան:26 1900 թ. Թուրքիայից ԱՄՆ էր արտածվում 7 մլն. ամ. դոլարի ապրանք (մորթի, կաշի, գորգեր, միրգ, մատուտակի արմատ, ափիոն և այլն )27:

1893 թ. կոնգրեսին ներկայացված հերթական ուղերձում ԱՄՆ նախագահ Ստիվեն Քլիվլենդն անդրադարձավ թուրք-ամերիկյան հարաբերություններին՝ Մարզվանի քոլեջի հրկիզման կապակցությամբ: Նա մեղադրեց սուլթանական կառավարությունը մեղսակցության և «արտասավոր անտարբերության» մեջ, պահանջելով պատժել հանցավորներին և փոխհատուցել քոլեջին հասցված վնասը: Նախագահը տեղյակ պահեց նաև կոնգրեսին այն մասին, որ հանձնարարել է Թուրքիայում իր դեսպանին՝ պահանջել Բարձր Դռնից այսուհետ հարգանքով վերաբերվել հայազգի ԱՄՆ քաղաքացիներին:28

Ապրիլ ամսվա ընթացքում բրիտանական դեսպանությունը պարբերաբար տեղեկացնում էր նախարարությանը ԱՄՆ դեսպանության և սուլթանական կառավարության միջև ընթացող բանակցությունների մասին՝ Մարզվանի ամերիկյան քոլեջի մասնաշենքի հրկիզման կապակցությամբ: Ի վերջո կառավարությունը համաձայնում է փոխհատուցել վնասը և ապահովել քոլեջի գործունեության անվտանգությունը: Բարձր Դուռը խոստացավ նաև պատասխանատվության ենթարկել մեղավորներին:29 Ինչ վերաբերում է քոլեջի հայազգի բանտարկված ուսուցիչներին, ապա, ըստ դեսպան Ռուստեմ փաշայի կողմից Ռոզբերիին տրված բացատրության համաձայն, քննությունը պարզել է, որ Թումայանը հանդիսանում է հեղափոխական թռուցիկների հիմնական հեղինակներից մեկը և պետք է կանգնի դատարանի առջև: Ըստ դեսպանի, նրա հանցանքն ընդունվել է նաև ԱՄՆ դեսպանության և քոլեջի ղեկավարության կողմից:30 Մայիսի 6-ին փոխհյուպատոս Նյուտոնը հաղորդում էր Ֆորդին Անգորայից, որ դատավարության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը բերվել են այստեղ Մարզվանից՝ շուտով սկսվող դատավարությանը

_____
26 Гутор М.Д. Новейшая история Турции и Персии. Ч. 1, Тифлис, 1913, с. 67-68.
27 De Novo J. Op. cit., p. 16.
28 Հայք, 1893, 15 դեկտեմբերի, էջ 357:
29 FO 424/176, No. 53, p. 57.
30 FO 424/175, No. 51, p. 55.

267

ներկայացնելու համար: Ըստ Նյուտոնի, քննությունը պարզել էր, որ Թումայանը զբաղված էր հեղափոխական գործունեությամբ, հայտնի իրադարձություններից անմիջապես առաջ քարոզչական նպատակներով այցելել էր շրջանի 15 գյուղեր:31 Դատարանի առջև, որը կազմված է լինելու երկու թուրքից, հայ լուսավորչականից և հայ կաթոլիկից, կանգնելու էին, բացի Թումայանից և Գայայանից, ևս 51 հայեր, որոնք մեղադրվում էին կառավարության դեմ կատարած դավադրության փորձի մեջ: Նյուտոնը Ֆորդին հաղորդում էր, որ վալին պաշտոնապես հրավիրել է իրեն մասնակցելու դատավարությանը և հետևելու նրա ընթացքին: Նշելով, որ բավականին ջերմ հարաբերություններ է հաստատել վալիի հետ, Նյուտոնը տեղեկացնում էր նրա մասնակցությամբ հայկական շարժման ձերբակալված ղեկավարներից մեկի հետ տեղի ունեցած իր զրույցի մասին: Պատասխանելով փոխհյուպատոսի հարցերին, բանտարկյալը, առանց խուսափելու պատմել էր, որ ընկերվար է և ընկերվարական գաղափարները կայսրությունում տարածելու նպատակով Աթենքից ժամանել է Մերսին, իսկ այնուհետև Կեսարիա, որտեղ և ձերբակալվել է թուրք իշխանությունների կողմից: Նա հաստատեց, որ չի ճանաչում ոչ այս երկրի կառավարությունը, ոչ էլ նրա օրենքները: Ըստ Նյուտոնի, զրույցի ընթացքում բանտարկյալն իրեն պահեց համարձակ և անշփոթ, չթաքցնելով իր ընկերվարական գաղափարները, որոնք կիսում է բանտարկվածների մեծամասնությունը: Բրիտանական փոխհյուպատոսի կարծիքով, ազատ մնալու դեպքում նման մարդիկ կարող են մեծ վտանգ ներկայացնել երկրի համար:32

Մայիսի սկզբին, Անգորա ժամանելուն պես, հյուպատոս Գոռեյվզը հանդիպում է վալի Աբեդդին փաշային և մանրամասն զեկուցագիր ներկայացնում դեսպան Ֆորդին: Կասկած չկա, գրում էր նա, որ հայերի շրջանում գոհություն ունի «դժգոհության լայնատարած շարժում», որի կենտրոնն է Մարզվանը: Ձերբակալված հայերի ցուցմունքների համաձայն, շարժումը ֆինանսավորվում և ղեկավարվում է Աթենքում, Ժնևում, Մարսելում և Լոնդոնում գործող հայկական կոմիտեների կողմից, որոնք որոշակի քանակությամբ վճարված ագիտատորներ են ուղարկել Կենտրոնական Անատոլիայում գործելու նպատակով: Վերջիններիս հաջողվել էր հավաքագրել մեծ թվով երիտասարդ և տաքարյուն հետևորդներ

31 Turkey No. 3 (1896)..., p. 107.
32 Նույն տեղում, էջ 104:



ցածր դասակարգից: «Ինչպես սովորաբար պատահում է հայկական բանսարկության դեպքերում, - շարունակում էր Գոռեյվզը, - շուտով հայտնվում են տեղեկատուներ և կառավարական իշխանություններին հայտնի են դառնում մեղավորների անունների մեծամասնությունը»: Ըստ վալիի տեղեկությունների, մի շարք հանցագործություններ կատարելուց հետո, ինչպիսիք էին զինված հարձակումները հեռագրատների վրա, հայազգի տեղեկատուների սպանությունները և այլն, թռուցիկների տարածման կապակցությամբ իշխանությունները որոշեցին «մաքրել գործը», ձերբակալելով շարժման գործուն մասնակիցներին: Հնարավոր է, գրում էր հյուպատոսը, որ բանտարկվել են նաև շատ անմեղ մարդիկ, սակայն սուլթանի ներման շնորհիվ ներկայումս նրանք բոլորն ազատված են: Ըստ Գոռեյվզի, Աբեդդին փաշան չէր չափազանցնում շարժման նշանակությունը և դեմ էր արտահայտվում «ճնշման ոչ անհրաժեշտ դաժան միջոցներին»,

սակայն միաժամանակ նշում, որ այս դասը շատ կարևոր էր ապագայի համար: Վալին ծիծաղում էր այդ «մի խումբ դպրոցականների նման հեղափոխություն խաղացող տգետ թշվառների» վրա, որոնց պատրաստած ղեկավարները, գտնվելով արտասահմանում, ապահովել են իրենց անվտանգությունը:

Այնուհետև Գռեյվզը զրույց է ունենում Հնչակյան կուսակցության անդամ, բանտարկյալ Անտոն Ռշտունու հետ, որը հայտարարում է, որ իրենց նպատակն էր այնպիսի անկարգություններ ստեղծել երկրում, որոնք պետք է գրավեին աշխարհի ուշադրությունն ու հարկադրեին տերությունների միջամտությունը: Իսկ Թումայանն ասում էր հյուպատոսին, որ իշխանությունները շփոթել են իրեն, պատահաբար կամ դիտավորյալ, իր ազգական Արթին Թումայանի հետ, որը հանդիսանում է գաղտնի ընկերության ղեկավար:

Գռեյվզը բրիտանական կառավարության անունից դիմում էր Աբեդդին փաշային անաչառ արդարություն հանդես բերել մեղադրյալների հանդեպ, քանի որ Բրիտանիայի և եվրոպական մյուս տերությունների հասարակական կարծիքն ուշադրությամբ հետևում է Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձություններին:33

Մայիսի 24-ին Գռեյվզը Ֆորդին հաղորդում էր Սեբաստիայի վալի Խալիլ բեյի հետ ունեցած զրույցի մասին: Ըստ վալիի, հայկական խռովարար շարժում իրականում գոյություն ունի, սակայն պետության համար այն լուրջ վտանգ չի ներկայացնում, բացառությամբ այն

---

33 Նույն տեղում, էջ 105-106:



հանգամանքի, որ հետագայում այն կարող է դժվարությամբ կանխվող թշնամության մթնոլորտ ստեղծել երկրում: Վալիի կարծիքով, հայկական խռովության հիմնական տուժողները լինելու են հայերը, թեև Թուրքիայի թշնամիներն օգտագործելու են այդ փաստը կառավարության դեմ: Շարժման ղեկավարները, շարունակում էր թուրք պաշտոնյան, պետք է պատժվեն ավելի խիստ, քան իրենց մոլորված հետևորդները: Վալին նկատի ուներ գլխավորապես ամերիկյան քոլեջի ուսուցիչներ,«շարժման ղեկավար» Թումայանին և «նրա օգնական» Գայանանին, որոնք, չնայած տերությունների հնարավոր ճնշմանը, պատժվելու են ամենայն խստությամբ: Գռեյվզը պատասխանում էր, որ բրիտանական կառավարությունն այդ հարցում ճնշման որևէ նպատակ չի հետապնդում, այլ ցանկանում է, որպեսզի դատավարությունը տեղի ունենա արդար և բաց պայմաններում: Վալին դժգոհություն հայտնեց Սեբաստիայում ԱՄՆ հյուպատոս Ջյուեթի դիրքորոշման կապակցությամբ, որը թշնամական վերաբերմունք է ցուցաբերում և չի ցանկանում համագործակցել իշխանությունների հետ:

Զեկուցագրի վերջում հյուպատոսը նշում էր, որ Սեբաստիայի հայերի շրջանում իշխում է վտանգի զգացում, իսկ իշխանություններն իրականում չեն կարողանում հսկել իրավիճակն ու պայքարել «ուժեղ և լավ կազմակերպված գաղտնի ընկերության» հետ: Ըստ Գռեյվզի, այդ մասին են վկայում վերջերս տեղի ունեցած իշխանություններին ծառայող հայազգի տեղեկատուների սպանությունները: Հյուպատոսի կարծիքով, հայ

հեղափոխականների գործողություններն «ավելի նիհիլիստական և կործանարար, քան ազգային և հայրենասիրական միտում ունեն»:34

Հունիսի 16-ին դեսպանին ժամանակավորապես փոխարինած Արթուր Նիկոլսոնը35 տեղեկացնում էր Ռոզբերիին, որ Անգորայում բրիտանական փոխհյուպատոսի հաղորդագրության համաձայն, դատարանը դատապարտել էր Թումայանին, Գայայանին և 13 այլ հայ բանտարկյալների մահապատժի, 29 հոգու՝ ազատազրկման 2-ից 15 տարի ժամկետով, իսկ մնացածն ազատ էին արձակվել: Հավատարմատարը ցուցում էր ակնկալում

34 Նույն տեղում, էջ 127-128:
35 Նիլոլսոն (Nicolson) Արթուր (1849-1928) - բրիտանական դիվանագետ: 1893-1894 թթ. ՝ դեսպանորդ Թուրքիայում, 1895-1904 թթ. ՝ հավատարմատար Մարոկկոյում, 1906-1910՝ դեսպան Ռուսաստանում, 1910-1916՝ մշտական փոխարտգործնախարար:



կառավարությունից՝ դատապարտվածների ներման խնդրով զբաղվելու համար: Նույն օրը Ռոզբերին հեռագրում էր Նիկոլսոնին, որ բրիտանական կառավարությունը «խորապես մտահոգված է այդ նորություններով, որոնք ճնշող տպավորություն են առաջացրել այստեղ»: Նախարարն առաջարկում էր մինչև Բարձր Դռանը ներման մասին դիմումի ներկայացումը, մանրամասն ուսումնասիրել դատարանի որոշման արդյունքներն ու համապատասխան իրավական ընթացակարգը: Անմիջապես մյուս օրը հավատարմատարը պատասխանում էր, որ մահապատժի մասին տեղական դատարանների որոշումները սովորաբար հաստատվում են Կոստանդնուպոլսի վճռաբեկ ատյանի կողմից, սակայն քանի որ Անգորայի դատավարությունը համարվում էր հատուկ դեպք, այն հնարավոր է սովորական ընթացակարգ չանցնի: «Մենք հասկանում ենք, - գրում էր Ռոզբերին, - որ Անգորայում դատված հայերի դեմ ուղղված ցուցմունքները բոլորովին չեն համապատասխանում դատավճռին: Եթե ուսումնասիրելով այն, մենք գանք նույն եզրակացության, մեր պարտավորությունը պետք է լինի խստորեն պահանջել ազատ արձակել բանտարկյալներին: Դուք պետք է հաղորդեք Դռանը, որ դատավարության արդյունքներն առաջացրել են այստեղ ուժեղ տպավորություն և դուք հավատացած եք, որ դատավճիռը վերանայվելու է վճռաբեկ ատյանի կողմից»:36

Հունիսի 20-ին Նիկոլսոնը հանդիպում է ունենում մեծ վեզիրի հետ՝ դատավարության որոշման մասին բրիտանական կառավարության դիրքորոշումը ներկայացնելու և մեղադրյալների համար ներում խնդրելու նպատակով: Նա նշում էր, որ դատավճիռը մեծ աղմուկ է բարձրացրել Անգլիայում, եվրոպական երկրներում ու ԱՄՆ-ում և եթե սուլթանը չփոխի այդ որոշումը, հակաթուրքական զգացմունքներն ավելի են խորանալու: Մեծ վեզիրը պատասխանում է, որ վերջնական որոշում դեռևս ընդունված չէ, քանի որ հարցը պետք է նայվի Կոստանդնուպոլսի վճռաբեկ ատյանում: Իր բավարարվածությունը հայտնելով այդ կապակցությամբ հավատարմատարը հույս էր հայտնում, որ վճռաբեկ ատյանը ներում կշնորհի ամերիկյան քոլեջի ուսուցիչներին, ինչը բխում է Թուրքիայի շահերից:

Այնուհետև Նիկոլսոնը տեսակցում է արտգործնախարար Սաիդ փաշայի հետ և նրան նույնպես ներկայացնում բրիտանական կառավարության տեսակետները: Թուրք նախարարը խոստանում է, իր հնարավորությունների սահմաններում, ամեն ինչ անել՝

36 Նույն տեղում, էջ 129-130:



Անգլիայի հետ իր պետության «լավագույն հարաբերությունները» պահպանելու համար, քանի որ իր պարտականությունն է՝ ներկայացնել սուլթանին դատավարության կապակցությամբ տարբեր երկրների հակազդեցությունը: Նա նշում էր, որ եթե նույնիսկ վճռաբեկ ատյանը հաստատի Անգորայի դատարանի որոշումը, սուլթանը կարող է այն կասեցնել կայսերական հրովարտակով:

Հաշվի առնելով այդ վերջին հանգամանքը, հավատարմատարը նպատակահարմար չէր գտնում, մինչև վճռաբեկ ատյանի քննարկումը, Բարձր Դռանը ներկայացնել որևէ գրավոր փաստաթուղթ այդ կապակցությամբ:37

Նույն օրը Նիկոլսոնը հանդիպում է Արթին փաշայի հետ, որը շատ ավելի բաց էր արտահայտվում Անգորայի դատավարության կապակցությամբ, քան մեծ վեզիրն ու արտգործնախարարը: Նա չէր թաքցնում իր դժգոհությունը դատավճռի կապակցությամբ, նշելով, որ սուլթանի շրջապատից ոմանք զգալի ազդեցություն են գործադրում նրա վրա՝ մահապատիժն իրագործելու և տերությունների ներկայացուցիչների ճնշումներին չենթարկվելու նպատակով: Արթին փաշան վստահ էր, որ սուլթանը ներում է շնորհելու ուսուցիչներին, սակայն կողմնակից էր այն բանի, որպեսզի նա որոշում ընդունի իր նախաձեռնությամբ, այլ ոչ թե ճնշման տակ: Նիկոլսոնը խնդրում էր համոզել սուլթանին կասեցնել մահապատիժը, նշելով, որ այդ հարցում Անգլիայի բոլոր քաղաքական կուսակցությունները կարելի է համարել միավորված:38

Ծանոթանալով Նյուտոնի ներկայացրած Անգորայի դատավարության նյութերին, հունիսի 27-ին Ռոզբերին Նիկոլսոնին գրում էր, որ քանի որ դատավարության ընթացքում Թումայանի և Գայայանի դեմ որևէ վկայություն փաստորեն չի հաստատվել, բրիտանական կառավարությունը պահանջելու է սուլթանից անհապաղ ներում շնորհել նրանց: Բրիտանական կառավարությունը, շարունակում էր արտգործնախարարը, «չի կարող թաքցնել իր հիասթափությունը դատավարության ընթացքով և նրա արդյունքներով, ոչ էլ փորձելու է հսկողություն սահմանել դրա հետևանքով երկրում առաջացած վրդովմունքի նկատմամբ»:39 Երկու օր անց Ռոզբերին կրկնում է իր տեսակետը Ռուստեմ փաշային,

37 Նույն տեղում, էջ 135-136:
38 FO 424/175, No. 97, p. 108.
39 Turkey No. 3 (1896)..., p. 136.



պահանջելով ժամանակ չկորցնել և անհապաղ ներում շնորհել ու ազատ արձակել քոլեջի ուսուցիչներին:40

Հունիսի 29-ին Նիկոլսոնը հանդիպում է արտգործնախարարի և մեծ վեզիրին հետ ու կրկին անգամ փոխանցում բրիտանական կառավարության խիստ դիրքորոշումը Անգորայի դատավարության կապակցությամբ: Արտգործնախարարը պատասխանում է, որ դատավարության փաստաթղթերը նոր են ժամանել Կոստանդնուպոլիս և պահանջվում է մի քանի օր, որպեսզի նրանք քննության առնվեն վճռաբեկ ատյանի կողմից: Միաժամանակ նա իր մտահոգությունն է հայտնում դատավարության շուրջ Անգլիայում ստեղծված կրոնական մոլեռանդության մթնոլորտի կապակցությամբ: Պատասխանելով, որ Անգլիայում տիրող մոլեռանդությունը վերաբերում է միմիայն արդարադատությանը, Նիկոլսոնը խորհուրդ է տալիս շուտափույտ միջոցներ ձեռնարկել իրավիճակը խաղաղեցնելու նպատակով:

Մեծ վեզիրի այն հարցին, թե ինչու՞ է բրիտանական հասարակայնությունը միջամտում Թուրքիայի ներքին գործերին, դիվանագետը պատասխանում է, որ այն բացատրվում է քրիստոնյա հպատակներին վերաբերող Բեռլինի պայմանագրի պարտավորություններով: Մեծ վեզիրի մյուս հարցին, թե ինչ՞ կլինի, եթե վճռաբեկ ատյանը հաստատի Անգորայի դատարանի որոշումը, Նիկոլսոնը պատասխանում է, որ այդ դեպքում սուլթանն ինքը պետք է ներում շնորհի մեղադրյալներին, քանի որ դատավարությունն արդար չէր և մեղադրանքները չեն ապացուցվել: Մեծ վեզիրը ասում է, որ հնարավոր է և դժվար չէ մեղմացնել դատավճիռը, սակայն ազատ արձակել մեղադրյալներին անհնարին է: Հավատարմատարը խստորեն պատասխանում է, որ դատավճռի մեղմացումը անբավարար է համարվելու և չի ընդունվելու բրիտանական կառավարության և իր երկրի կողմից:41

Հունիսի 30-ին Ռոզբերիին հասցեագրված գաղտնի զեկուցագրում Նիկոլսոնը տեղեկացնում էր, որ արտգործնախարար Սաիդ փաշան բարեկամաբար խնդրում էր, որպեսզի բրիտանական կառավարությունը փորձի դադարեցնել հակաթուրքական քարոզչությունն իր երկրում, քանի որ սուլթանը մտադրված է ներում շնորհել բանտարկյալներին, սակայն պետք չէ, որ այն տեղի ունենա արտաքին ճնշման տակ:42 Մի

---

40 Նույն տեղում, էջ 137:
41 Նույն տեղում, էջ 145-146:
42 FO 424/175, No. 122, p. 123.

273

քանի օր անց մեծ վեզիրն ու արտգործնախարարը հայտնում են, որ թեև վճռաբեկ ատյանը հաստատել է Անգորայի դատարանի որոշումը, սուլթանը ներում է շնորհելու և արտաքսելու է Թումայանին և Գայայանին Օսմանյան կայսրությունից: Նիկոլսոնն իր բավարարվածությունն էր հայտնում այդ կապակցությամբ Ռոզբերիին, հույս հայտնելով, որ Բարձր Դուռը մեղմացնելու է նաև մյուս բանտարկյալների վճիռները:43

Բրիտանական դեսպանության ճնշման տակ սուլթանական կառավարությունը մեղմացնում է շատ բանտարկյալների դատավճիռները, սակայն այն հնարավոր չի լինում իրականացնել սպանությունների մեղադրանքով դատապարտված հինգ բանտարկյալի համար, որոնք օգոստոսի 1-ի առավոտյան կախաղան բարձրացվեցին Անգորայում:44

Օգոստոսի 2-ին բրիտանական խորհրդարանի համայնքների պալատը սկսում է քննարկել Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրագործվող հանցագործ քաղաքականության հարցը: Պալատի մի քանի անդամներ տեղեկատվություն պահանջեցին Ֆորին Օֆիսից հայ բանտարկյալների վիճակի մասին: Պատասխանելով հարցումին, փոխարտգործնախարար Էդուարդ Գրեյը45 նշում էր, որ չնայած բրիտանական դեսպանի կողմից օգտագործված իր ողջ ազդեցությանն ու ջանքերին, հինգ մեղադյալներ ենթարկվեցին մահապատժի, իսկ մնացած բանտարկյալների վիճակը, համաձայն բրիտանական հյուպատոսների տեղեկատվության, կարելի է համարել բավարար:46

Սեպտեմբերի 5-ին Նիկոլսոնի և մեծ վեզիրի միջև կայացած հանդիպման ընթացքում վերջինս իր անհանգստությունն էր հայտնում Թուրքիայի հանդեպ Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած դիրքորոշման փոփոխության մասին, նշելով հասարակայնության և մամուլի կողմից սուլթանական կառավարության դեմ կատարվող հարձակումները: Նրա կարծիքով, դժվար է հասկանալ, թե ինչ շահ ունի բրիտանական հասարակայնությունը, երբ միջամտում է

_____
43 Turkey, No 3 (1896)..., p. 149.
44 Նույն տեղում, էջ 166:
45 Գրեյ (Grey) Էդուարդ (1862-1933) - բրիտանացի քաղաքական գործիչ և դիվանագետ, լիբերալ կուսակցության անդամ: 1892-1895 թթ.՝ փոխարտգործնախարար, 1905-1916 թթ.՝ արտաքին գործերի նախարար:
46 Gabrielian M.S. Armenia. A Martyr Nation..., pp. 23-231.

274

Թուրքիայի ներքին գործերին: Նկատել տալով, որ ներկայումս նման մոտեցում են հանդես բերում Մեծ Բրիտանիայի բոլոր քաղաքական ուժերը, Նիկոլսոնը նշում էր, որ այս ամենի դեղամիջոցը գտնվում է սուլթանական կառավարության ձեռքում: Եթե վերջինս իրական և լուրջ բարենորոգումներ իրագործեր շրջաններում և «մաքրեր» տեղական իշխանություններն իրենց չարդարացրած շատ պաշտոնյաներից, վիճակն այսպիսին չէր լինելու: Բրիտանիայում համոզված են, շարունակում էր Նիկոլսոնը, որ Թուրքիայի քրիստոնյաները գտնվում են ծանր վիճակում, օրենքի առջև որևէ հավասարություն գոյություն չունի:

Մեծ վեզիրը պատասխանում էր, որ Քրդստանն անկասկած որոշ չափով կարելի է անկառավարելի համարել, սակայն բարենորոգումները մեկ օրվա մեջ չեն իրագործվում: Իր կարծիքով, վերջին երեսուն տարիների ընթացքում զգալի առաջադիմություն է տեղի ունեցել երկրում և արդարացի չէ, երբ քաղաքակրթված արևմտյան ազգերը դատում են արևելյան ազգությունների մասին իրենց չափանիշներով և պահանջում արագորեն հասնել իրենց մակարդակին:

Համաձայնելով մեծ վեզիրի հետ, Նիկոլսոնը սակայն նշում էր, որ Անգլիայի ժողովրդին զայրացնում է այն հանգամանքը, որ երբ քրդերը կամ թուրքերը հարձակումներ են գործում, թալանում և սպանում հայերին, նրանք երբևիցե չեն պատժվում, բայց երբ հայ

երիտասարդը «տաքարյուն» բառ է օգտագործում կամ մի խումբ հայեր հավաքվում են բարենորոգումների ծրագիր քննարկելու նպատակով, նրանք պատժվում են օրենքի ամբողջ խստությամբ: Նշելով, որ հայերի շարժումն «երեխայական և աննշան» է, Նիկոլսոնն առաջարկում էր, որ սուլթանական կառավարությունն ազատ արձակի և երկրից արտաքսի նաև մյուս բանտարկյալներին:47

Կոստանդնուպոլիս վերադառնալուն պես Ֆորդը զրույց է ունենում Աբդուլ Համիդի հետ (13 հոկտեմբերի), որը հիմնականում նվիրված էր Հայկական հարցին: Սուլթանը մեղադրում էր բրիտանական կառավարությունը անգլո-հայկական ընկերության գործունեության աջակցության մեջ: Բացառելով ընկերության գործունեության քաջալերումը կառավարության կողմից, դեսպանը նշում էր, որ բոլոր անգլիացիները ներկայումս մտահոգ են Օսմանյան կայսրության քրիստոնյաների վիճակով, որոնց հանդեպ վերաբերմունքը միշտ չէ, որ կարելի է համարել «պատշաճ և արդար»: Նա անհեթեթ համարեց այն տարածված

_____
47 Turkey, No. 3 (1896)..., pp. 184-185.

275

կարծիքը, թե իբր բրիտանական կառավարությունը փորձում է կյանքի բացառիկ պայմաններ ստեղծել Փոքր Ասիայի 13 մլն. մահմեդականների կողքին ապրող 1 մլն. քրիստոնյաների համար: Հայկական հարցի լուծումը, շարունակում էր դեսպանը, կայանում է «լավ կառավարման և թուրքերի ու քրիստոնյաների միջև հավասար արդարադատության» ապահովման մեջ:

Սուլթանը պատասխանում է, որ հայերի վիճակը կայսրությունում այդքան էլ ծանր չէ, ինչպես ներկայացվում է, քանի որ շատ հայեր միայն Կոստանդնուպոլսում ապրում են բարեկեցիկ կյանքով և զբաղեցնում կարևոր պաշտոններ: Իր համոզմամբ, «հայկական դժգոհության կրակը հիմնականում բորբոքում են օտար երկրներ գաղթած նրանց անբավարարված մասը»:

Ֆորդը նախազգուշացնում էր Աբդուլ Համիդին, որ եթե նա շուտափույթ կերպով հաջող նահանգապետներ չնշանակի տարբեր շրջաններում, ինչպիսին է, օրինակ, Անգորայի վալի Աբեդդին փաշան, ապա հնարավոր է տեղի ունենան նոր անկարգություններ: Ըստ դեսպանի, այդ խոսքերը զգալի տպավորություն թողեցին սուլթանի վրա, որը խոստացավ համագործակցել և խորհրդակցել բրիտանական կառավարության հետ Հայկական հարցում միայն այն դեպքում, եթե վերջինս չքաջալերի հայ քաղաքական գործակալներին, որոնք վարկաբեկում են իրեն և իր կառավարությունը:48

1893 թ. նոյեմբեր - 1894 թ. փետրվար ամիսների ընթացքում Անգորայում հյուպատոս Քամբերբատչը հաղորդում էր դեսպանությանը «հայկական շարժման» հետևանքով շրջանում տեղի ունեցող անկարգությունների մասին: Հյուպատոսի հաղորդագրությունները հիմնված էին գլխավորապես տեղական իշխանությունների տեղեկատվության վրա և չէին պարունակում որևէ լուրջ փաստարկ իբր շրջանում տեղի ունեցող հայ բնակչության ապստամբության վերաբերյալ: Քամբերբատչն ինքն էր զարմանք հայտնում այդ կապակցությամբ, քանի որ թուրք և հայ բնակչության

հարաբերակցությունը շրջանում կազմում էր համապատասխանաբար տասը մեկի: Հիմնականում խոսքը գնում էր տարբեր բնակավայրերում տեղի ունեցող ընդհարումների և առանձին սպանությունների, ինչպես նաև տարածվող հակասուլթանական բովանդակության թռուցիկների մասին: Հետաքրքրական է, որ այդ կոչերում նշվում էր, որ «հայկական շարժումն» ուղղված է ոչ թե մահմեդականների,

48 Նույն տեղում, էջ 201-202:



այլ իշխանությունների դեմ, որոնք հավասարապես կեղեքում են ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական բնակչությանը: Հյուպատոսի զեկուցագրերում տեղ գտած ամենից լուրջ իրադարձությունները տեղի էին ունեցել դեկտեմբերին և փետրվարին Յոզղաթում, երբ, առաջին դեպքում՝ հայկական եկեղեցու շուրջ կայացած հավաքի ժամանակ, իսկ երկրորդ դեպքում՝ հայի տուն ներխուժած թուրք ոստիկանի սպանությունից հետո տեղի էին ունեցել ընդհարումներ իշխանությունների հետ: Ի վերջո, «հայկական ապստամբության» պատրվակի ներքո փետրվարի սկզբին կառավարությունը ռազմական դրություն էր մտցրել Յոզղաթի սանջակում և նշանակել կառավարական հանձնաժողով՝ իրադարձությունների հետաքննություն կատարելու նպատակով:49

1894 թ. փետրվարի 14-ին Կոստանդնուպոլիս ժամանած նոր դեսպան Ֆիլիպ Քարրին Հայկական հարցի քննարկման նպատակով հանդիպում է Ռուսաստանի դեսպան Ալեքսանդր Նելիդովի50 հետ: Վերջինս «շատ լուրջ» է որակում այդ խնդիրը, նկատի առնելով իր երկրում բնակվող հայ բնակչության հանգամանքը: Ըստ Նելիդովի, շարժումը կարելի է բաժանել երկու մասի՝ առաջինը վերաբերվում է բարենորոգումներին, որոնց իրագործման պահանջով դեսպանությունը վերջերս կրկին դիմել է Բարձր Դռանը, իսկ երկրորդի նպատակը՝ հեղափոխությունն է, որի հանդեպ ռուսական կառավարությունը որևէ համակրանք չի տածում: Քարրին նշում էր, որ վերջին շրջանում իր դեսպանությունը նույնպես բազմաթիվ ոչ պաշտոնական դիմումներ է կատարել բարենորոգումների իրագործման կապակցությամբ, նույնիսկ, հաշվի առնելով գոյություն ունեցող դժվարությունները, համաձայն էր միայն «լավ նահանգապետերի» նշանակման կետի կատարմանը: Նելիդովը համաձայնում է համագործակցել սուլթանական կառավարության հետ այդ ուղղությամբ:51

Մարտի 7-ին Քարրին երկարատև և, ըստ իրեն, բարեկամական մթնոլորտում անցած զրույց է ունենում մեծ վեզիրի հետ: Դեսպանը նշում էր, որ բավականին երկար ժամանակ Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի հարաբերությունները կրել են մտերիմ և բարեկամական

49 FO 424/175, No. 227/1, p. 231; No. 229, p. 232; No. 250, p. 250; No. 252/1, p. 251; 424/178, No. 17/2, pp. 16-17; No. 17/3, pp. 17-18; No. 17/4, pp. 18-21; No. 34/1, p. 35.
50 Նելիդով Ալեքսանդր - ռուս դիվանագետ: 1883-1897 թթ.՝ դեսպան Թուրքիայում, 1897-1903 թթ.՝ Իտալիայում, 1903-1910 թթ.՝ Ֆրանսիայում:
51 Turkey, No. 6 (1896)..., p. 36.

բնույթ, սակայն վերջերս իրավիճակը փոխվել է և առաջացած անվստահության զգացումը գնալով ավելի է խորանում: Քարրին հավատացած էր, որ դրությունը կարելի է շտկել անկեղծ կարծիքների փոխանակման միջոցով: Ըստ դեսպանի, հնարավոր է երկու կողմերն էլ թույլ են տվել սխալներ, սակայն բրիտանական կառավարության քաղաքականությունն ու գործելակերպը վերջերս պարբերաբար խեղաթյուրվում և սխալ է ընկալվում Բարձր Դռան կողմից, որի հետևանքով այլ տերությունների ազդեցությունն ու շահերը դարձել են շատ ավելի նախընտրելի:

Բավարար համարելով Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության համագործակցությունը առևտրատնտեսական բնագավառում, մեծ վեզիրն անդրադառնում է սուլթանական կառավարությանը մտահոգող երեք հիմնական խնդիրներին՝ Եգիպտական հարցին, անգլիական մամուլի դիրքորոշմանն ու Հայկական հարցին:

Ինչ վերաբերում է առաջին խնդրին, ապա Քարրին նշում էր, որ Բրիտանիայի կողմից Եգիպտոսի գրավումը պարունակում է իր մեջ նաև դրական կողմ և նշանակություն Օսմանյան կայսրության համար, քանի որ արաբական շարժումն այդ երկրում կրում է հակաթուրքական և անջատողական բնույթ: Եթե բրիտանական կառավարությունը դուրս բերի իր զորքերը, շարունակում էր դեսպանը, Եգիպտոսի անջատումն Օսմանյան կայսրությունից դառնալու է անխուսափելի: Մեծ վեզիրը ընդունում է, որ այդ տեսակետն ունի իր որոշակի տրամաբանությունը:

Երկրորդ խնդրի կապակցությամբ Քարրին ասում էր, որ բրիտանական կառավարությունն անկարող է իր հսկողությունը սահմանել մամուլի նկատմամբ: Ուստի նա առաջարկում էր սուլթանական կառավարությանն իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք դրական ազդեցություն կգործեն անգլիական մամուլի դիրքորոշման վրա:

Անդրադառնալով Հայկական հարցին, մեծ վեզիրը շեշտում էր, որ Անգլիայի հասարակայնության որոշակի շրջանակներ բացասական ազդեցություն են գործում հայկական շարժման վրա, անկասկած քաջալերելով այն և բավականին վշտացուցիչ տպավորություն» ստեղծելով սուլթանական կառավարության մոտ:

278

Հանդիպման ավարտին մեծ վեզիրը հույս է հայտնում, որ այդ խնդիրների լուծումը պահպանելու է և էլ ավելի ամրապնդելու թուրք-բրիտանական բարեկամությունը, որն ունի մեծ նշանակություն Թուրքիայի համար:52

Այդ նույն օրերին 85-ամյա Գլադստոնը հրաժարվեց ինչպես վարչապետի պաշտոնից, այնպես էլ լիբերալ կուսակցության ղեկավարությունից, իր տեղը զիջելով ավելի երիտասարդ Ռոզբերիին: Ինչպես ցայտուն կերպով վկայում է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության դիվանագիտական նամակագրությունը, երկու տարվա իր իշխանության ընթացքում Գլադստոնի կառավարությունն էական ոչ մի փորձ չկատարեց բարենորոգումների իրագործման և հայ բնակչության իրավիճակի բարելավման հարցում՝ Բարձր Դռան նկատմամբ ճնշում գործադրելու ուղղությամբ, եթե հաշվի չառնենք բրիտանական դիվանագիտության ակտիվությունը Մարզվանի դեպքերի ժամանակ, որը

հիմնականում կարելի է համարել որպես Մեծ Բրիտանիայի հասարակական կարծիքի ազդեցության և այդ ընթացքում ԱՄՆ գործուն քաղաքականության արդյունք:

## 2. ՌՈԶԲԵՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1894 Թ. ՍԱՍՈՒՆԻ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ 1895 Թ. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1894 թ. մարտի 5-ից 1895 թ. հունիսի 21-ը Մեծ Բրիտանիայի կառավարության և լիբերալ կուսակցության ղեկին էր գտնվում լիբերալ-իմպերիալիստ Արչիբալդ Ռոզբերին, հայտնի միլիոնատեր, բանկիր Նաթանիել Ռոթշիլդի փեսան: Ռոզբերիին դասում էին բրիտանական կապիտալիստների հարավաֆրիկյան խմբին, նա համարվում էր Աֆրիկայի նվաճման մոլի կողմնակից: Ժամանակակիցները վկայում էին, որ արդեն այն ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության վրա մեծ ազդեցություն էին գործում

52 Նույն տեղում, էջ 47-48:



բրիտանական իմպերիալիստների խմբավորումները, որոնց հետաքրքրությունները կենտրոնացած էին մերձավորարևելյան և հարավաֆրիկյան ոլորտներում:

Սակայն չնայած նման հզոր աջակցության, քաղաքական իրադրությունն Անգլիայում գտնվում էր բավականին անկայուն վիճակում: Այդ օրերին թագուհուն ուղղված նամակում նոր վարչապետը տեղեկացնում էր, որ լիբերալ կառավարությունը կարողանում է գոյատևել խորհրդարանի անկայուն մեծամասնության շնորհիվ, որի արդյունքում իրավիճակն ամեն վարկյան կարող է ենթարկվել փոփոխության: Եվրոպական տերություններն ու Օսմանյան կայսրությունն իրենց հերթին ամեն պահ բրիտանական կառավարության և բնականաբար արտաքին քաղաքականության փոփոխության էին սպասում և օգտագործում ստեղծված իրավիճակն իրենց շահերին համապատասխան:53

Իրենց պարտականությունները նոր ստանձնած Ռոզբերին և արտաքին գործերի նախարար Ջոն Քիմբերլին54 Օսմանյան կայսրության նկատմամբ քաղաքականության հստակ ծրագիր չունեին, իսկ դեսպան Քարրին նոր էր նշանակված և դեռևս բավականաչափ վստահ չէր կողմնորոշվում Կոստանդնուպոլսի քաղաքական իրավիճակում: Հետևաբար Ռոզբերիի կառավարությունը շարունակեց իր նախորդների քաղաքական գիծն Օսմանյան կայսրության և, մասնավորապես, Հայկական հարցի հանդեպ. այն էր՝ ճգնաժամային իրավիճակի ստեղծման դեպքում դիմել միմիայն եվրոպական տերությունների հետ համատեղ գործողությունների քաղաքականությանը:55

Այդ ընթացքում Օսմանյան կայսրությունում բրիտանական դեսպանությունն ու հյուպատոսական ներկայացուցչությունները շարունակում էին ուսումնասիրել «հայկական շարժումն» ու թուրքական իշխանությունների գործելակերպը, ապահովում նախարարությունը մանրամասն տեղեկատվությամբ: Քարրիին ուղղված հյուպատոս Գոռեյվզի մարտի 23-ի զեկուցագրում նկարագրվում էր Երզնկայի շրջանի գյուղերից մեկում

53 Douglas R. Britain and the Armenian Question. 1894-97. - The Historical Journal, 1976, No. 19, p. 115.

54 Քիմբերլի (Kimberley) Ջոն Վուդհաուզ - բրիտանացի քաղաքական գործիչ: 1880-1882, 1892-1894 թթ.՝ գաղութների նախարար, 1882-1885, 1886 թթ.՝ Հնդկաստանի գործերի նախարար, 1894-1895 թթ.՝ արտաքին գործերի նախարար:
55 Dillon E.J. The Fiasco in Armenia. - The Fortnightly Review, 1896, vol. 65, March 1, p. 348.

280

տեղի ունեցած դեպքերը, երբ իշխանությունները մեղադրել էին տեղի հայ բնակչությանը ապստամբության մեջ, ձերբակալել և Երզնկայի բանտ նետել 35 հայերի: Թեև, ըստ հյուպատոսի, գրեթե անհնարին էր, որ զգալի փոքրամասնություն կազմող գյուղի հայերը ապստամբեին կառավարության դեմ, նրանք մեղադրվում էին զենք կրելու և հեղափոխական քարոզիչների հետ կապեր ունենալու մեջ: Գոեյվզն այն կարծիքին էր, որ հայկական քարոզչության ողջ իմաստը կայանում է խռովարար շարժման տպավորություն ստեղծելու միջոցով թուրքական բռնություններ հրահրելու մեջ՝ Եվրոպայի ուշադրությունը արևմտահայերի տանջանքներին ուղղելու նպատակով:56

Մարտի 28-ին Քարրին ներկայացնում է Քիմբերլիին դեսպանության գաղտնի տեղեկանքը «հայկական շարժման» մասին: Փաստաթղթում նշվում էր, որ շարժումը տեղական ծնունդ չէ, նրա բոլոր գործուն ղեկավարները ռուսահայեր են, որոնք Թուրքիա են թափանցել 1892 թ.՝ Կարսում կայացած հավաքում ընդունված որոշման արդյունքում: Թուրքիայում շարժման մեջ են ընգրկվում բնակչության տարբեր շերտերի և մտավոր կարողությունների ներկայացուցիչներ, որոնց մեծամասնությունը նույնիսկ չի ճանաչում հանձնարարականներ տվող իր ղեկավարներին: Ըստ տեղեկանքի, հայ հպատակների ճնշող մեծամասնությունը անտարբեր է շարժման հանդեպ, շատերը չեն ցանկանում մասնակցել այդ գործին, դատապարտում են հեղափոխականների մեթոդներն ու անհույս համարում նրանց նպատակները: Շարժմանը գործուն աջակցություն են ցուցաբերում հիմնականում անտեղյակ կամ էլ նախնական կրթություն ստացած անհատներ: Այս վերջին փաստը թուրքական իշխանությունների մոտ այն համոզումն է առաջացնում, որ ամերիկյան միսիոներները ուղղակի կամ անուղղակի կերպով պատասխանատվություն են կրում շարժման տարածման համար: Կառավարական շրջանակների կարծիքով, արևմտյան կրթության՝ անխոհեմ տարածումը՝ բացասական ազդեցություն է թողնում արևելյան ժողովուրդների գիտակցության վրա:

Տեղեկանքի համաձայն, ներկայիս իրավիճակի վտանգավոր միտումը կայանում է նրանում, որ հայ բնակչության պահպանողական մեծամասնությունը կարող է հեշտությամբ անցնել քաղաքական ընդդիմության և «ապստամբական դավադրության» սահմանագիծը: Այդ միտումը բացատրվում էր հետևյալ հանգամանքներով. ա/ թուրքական իշխանությունը

56 Turkey, No. 6 (1896)..., p. 56.

281

վերահսկում է երկրի ներքին իրավիճակը մահմեդական չափանիշներով. բ/ պաշտոնյաները անկարող են տարբերակել «անվնաս քննադատությունը գործուն խռովությունից». գ/ իշխանությունները կիրառում են զանգվածային բանտարկությունների և խոշտանգումների քաղաքականություն առանց խտրության՝ որևէ բան հայտնաբերելու և

ձերբակալություններն արդարացնելու նպատակով. դ/ օգտագործվում են տեղեկատուներ վարձելու և հայ կրոնական համայնքներին թշնամացնելու վտանգավոր միջոցներ, ինչպես դա տեղի ունեցավ Մարզվանում, երբ տեղի բողոքական հայերը ստորագրել էին տեղական իշխանությունների հետ համագործակցության փաստաթուղթ:57

Ծանոթանալով դեսպանության տեղեկանքին և ստանալով Քարրիի հաղորդագրությունը Յոզղաթում ձերբակալված 15 հայերին մահապատժի ենթարկելու սուլթանական կառավարության մտադրության մասին, Քիմբերլին գրում էր դեսպանին, որ բրիտանական կառավարությունը մեծապես մտահոգված է նման երևույթներով: Նա հանձնարարում էր սուլթանի ուշադրությունը հրավիրել «անտեղի խստություններից և առանց խտրության պատիժներից» խուսափելու անհրաժեշտության վրա:58

Ապրիլի 4-ին և 18-ին Ռուստեմ փաշայի հետ ունեցած հանդիպումների ժամանակ Քիմբերլին, փաստեր բերելով տեղական իշխանությունների կողմից բազմաթիվ անմեղ հայերի ձերբակալությունների մասին, պահանջում է սուլթանական կառավարությունից պատժել մեղավորներին օրենքի սահմաններում, խուսափել համատարած պատժամիջոցներից և ընդհանրապես արդարացի վերաբերմունք հանդես բերել հայ հպատակների հանդեպ: Դեսպանը պատասխանում է, որ հայկական շարժումն իրապես ունի խռովարար բնույթ, միաժամանակ բացառելով կրոնական հողի վրա հայերին հետապնդելու որևէ միտումները:59 Ապրիլի 29-ին մեծ վեզիրի հետ կայացած զրույցի ժամանակ Քարրին նշում էր, որ մահապատժի կիրառումը Յոզղաթի բանտարկյալների նկատմամբ մեծ աղմուկ է բարձրացնելու Անգլիայում: Օսմանյան կայսրության իրական շահերը պահանջում են,

---

57 Նույն տեղում, էջ 57-58:
58 Նույն տեղում, էջ 64:
59 Նույն տեղում, էջ 53, 65:

282

շարունակում էր դեսպանը, որպեսզի սուլթանական կառավարությունը «հաշտեցման քաղաքականություն» որդեգրի Հայկական հարցում:60

Հունիսի 21-ին Քարրին Քիմբերլիին տեղեկացնում էր, որ «հայ հեղափոխական կոմիտեն» (խոսքը գնում է հնչակյանների մասին - Ա.Կ.) նամակներ է հղել Կոստանդնուպոլսի բոլոր հայկական եկեղեցիներին՝ սպառնալով ընդհուպ մինչև մահապատժի ենթարկել այն եկեղեցականներին, որոնք կշարունակեն ծառայությունների ընթացքում հիշատակել պատրիարք Աշըգյանի անունը: Բանը նրանում է, բացատրում էր դեսպանը նախարարին, որ պատրիարքի հրաժարականն արդեն ընդունվել էր, սակայն նոր առաջնորդի թեկնածության բացակայության պատճառով որոշումը դեռևս հրապարակված չէր: Ըստ դեսպանի, ոստիկանությունը խոստացել է պաշտպանել եկեղեցականներին հնարավոր հարձակումներից և ուշադրություն չդարձնել սպառնալիքներին:61 Օգտագործելով այդ առիթը, իշխանությունները մեծ թվով հայեր ձերբակալեցին մայրաքաղաքում: Այդ կապակցությամբ Կոստանդնուպոլսի Հնչակյան հեղափոխական կոմիտեի նախագահ Արամյանը նամակ է հղում Քարրիին, ուր խնդրում դեսպանին պահանջել սուլթանական կառավարությունից ազատ արձակել անմեղ մարդկանց, քանի որ նամակները

պատրաստվել էին հնչակյանների կողմից: Մեծ վեզիրին և բրիտանական դեսպանին ուղղված նամակում հնչակյանների ներկայացուցիչը նշում էր, որ միմիայն օրինավոր գործելակերպի և հայ ժողովրդի արդար պահանջների բավարարման միջոցով սուլթանական իշխանությունները կկարողանան կանխել հեղափոխությունը, որը սպառնում է բռնկվել կայսրության ողջ տարածքում:62

Հուլիսի 10-ին սուլթանի գլխավոր քարտուղարը ներկայացնում է բրիտանական դեսպանության թարգման Բլոկին Եգիպտական, Բալկանյան և Հայկական խնդիրներին, ինչպես նաև թուրք-պարսկական հարաբերություններին վերաբերող հարցեր, որոնց մասին սուլթանը ցանկանում էր պարզել բրիտանական կառավարության դիրքորոշումը: Մասնավորապես, Հայկական խնդրին վերաբերող հարցապնդումը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Հայերը փորձում են համոզել Եվրոպային, որ Թուրքիան գտնվում է բարբարոս

60 Նույն տեղում, էջ 75-76:
61 Նույն տեղում, էջ 98:
62 Նույն տեղում, էջ 107; FO 424/178, No 170/1, p. 167:

283

իրավիճակում. ժամանակի ընթացքում նրանք դարձել են ավելի լկտի. նրանք վիրավորում են մահմեդական կրոնը, հուզում ժողովրդին և գոյություն չունի մեղադրանք, որը նրանք զրպարտաբար չուղղեն կառավարության դեմ. իրենց վերջնական նպատակներին հասնելու համար նրանք օգտագործում են նաև եվրոպական մամուլը: Նման իրավիճակին վերջ դնելու և Թուրքիայի շահերից ելնելու նպատակով արդյոք կարելի չէ՞ տեսակետներ փոխանակել այս հարցի շուրջ»:63

Սա սուլթանական իշխանությունների փաստորեն վերջին նախազգուշացումն էր բրիտանական կառավարությանը՝ հայ բնակչության համատարած կոտորածների կազմակերպման քաղաքականությանն անցնելուց առաջ: Սուլթանի հարցապնդումից պարզ երևում է, որ հանցագործների շարքին են դասվում ոչ թե առանձին հեղափոխական կազմակերպություններ կամ անհատներ, այլ հայերն ընդհանրապես: Այսինքն, հնարավոր պատիժը կրելու են «նրանք», հայերը, որոնք «վիրավորում են մահմեդական կրոնն» ու «հուզում ժողովրդին»:

Հինգ օր անց Քիմբերլին ներկայացնում էր Քարրիին բրիտանական կառավարության պատասխանները սուլթանի հարցապնդումներին: Եգիպտական հարցի կապակցությամբ բրիտանական կառավարությունը լիազորում էր դեսպանին քննարկել Բարձր Դռան հետ յուրաքանչյուր առաջարկ, որը կարող է հանգեցնել խնդրի վերջնական լուծմանը: Բալկանյան խնդիրներին վերաբերող պատասխանում նշվում էր, որ բրիտանական կառավարությունը մտադիր է շարունակել իր բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, պաշտպանել սուլթանի դիրքորոշումն իր տիրույթների անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու ուղղությամբ: Թուրք-պարսկական առնչությունների կապակցությամբ ասվում էր, որ բրիտանական կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում միջնորդելու Թուրքիայի և Պարսկաստանի միջև

լավագույն հարաբերությունների հաստատման, ինչպես նաև սահմանային դժվարությունների լուծման խնդիրներում:

«Ինչ վերաբերում է Ասիական Թուրքիայում վերջերս տեղի ունեցած հուզումներին, - նշվում էր նախարարի նամակում, - ապա Նորին Մեծության կառավարությունը հավատացած է, որ դրանց հետ (հուզումների - Ա.Կ.) պայքարելու միակ անվտանգ և հաջող

_____
63 Turkey, No 6 (1896)..., p. 104.



միջոցը կայանում է սուլթանի հայ հպատակների նկատմամբ արդար և հաշտարար վերաբերմունք դրսևորելու մեջ. մեր համակրանքն ու համագործակցությունը միշտ կընդարձակվի, եթե թուրքական կառավարությունը հետևի այդ գծին, որը, մենք հավատում ենք, համապատասխանում է անձամբ սուլթանի զգացմունքներին. նա կարող է հավատացած լինել, որ խռովարար շարժման քաջալերումն իր իշխանության դեմ հեռու է մեր մտադրություններից»:64

Ստանալով բրիտանական կառավարության հավաստիացումն այն մասին, որ հայկական շարժումը չի հովանավորվում և քաջալերվում Բրիտանիայի կողմից, համոզված լինելով, որ հայերն ընդհանրապես սկսում են հետզհետե սպառնալիք դառնալ կայսրության անվտանգության և տարածքային ամբողջականության համար, ինչպես նաև, օգտվելով հարմար միջազգային իրադրությունից, սուլթանական իշխանություններն անցնում են հայ բնակչության համատարած կոտորածների կազմակերպմանը:

Օգոստոսի 12-ից մինչև սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում իշխանությունները կազմակերպում են Բիթլիսի վիլայեթի Սասունի շրջանի հայ բնակչության ջարդը: Դեռևս 1893 թ. հունիսին Սասունի հայերի վրա հարձակում էր գործել քուրդ ցեղապետ Հուսսեյնի ջոկատը: Այն ժամանակ իշխանությունները ձերբակալեցին Հուսսեյնին և ուղարկեցին Էրզրում, սակայն շատ շուտով ազատ արձակեցին և հրավիրեցին Կոստանդնուպոլիս, ուր սուլթանի կողմից նրան հանձնվեց շքանշան, շնորհվեց փաշայի տիտղոս և գեներալի կոչում:65

Այս անգամ տեղական իշխանությունները միտումնավոր կերպով լրացուցիչ տուրքեր դրեցին Սասունի հայության վրա, սակայն վերջիններս հրաժարվեցին վճարելուց, պատճառաբանելով իրենց որոշումը քրդական ջոկատների մշտական հարձակումներով: Գնահատելով հայերի դիրքորոշումը որպես ապստամբություն, թուրք զինվորները, ոստիկաններն ու քրդական հեծելազորը Բիթլիսի վալի Թահսին փաշայի գլխավորությամբ շրջապատեցին Սասունը, սակայն բոլոր հարձակումները ետ մղվեցին սասունցիների կողմից:

_____
64 Նույն տեղում, էջ 105:
65 Turkey, No 1 (1895). Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty`s Concular Officers in Asiatic Turkey. London, 1896, Part 1, p. 2.

Ստանալով վալիի հաղորդագրությունը հայերի ապստամբության մասին, զայրացած սուլթանը հրամայեց դաժանորեն ճնշել այն:66

Սեպտեմբերի 3-ին Քարրին Քիմբերլիին հաղորդում էր, որ մեծ վեզիրը հրամայել է 4-րդ բանակի հրամանատար Զեքքի փաշային67 շարժվել Երզնկայից դեպի Սասուն՝ «կարգ ու կանոնը վերականգնելու» նպատակով: Գոեյվզից ստացված տեղեկության համաձայն, Մուշում 4-րդ բանակին պետք է միանան նաև քրդական հեծելազորի երեք գնդեր՝ Հուսսեյն փաշայի գլխավորությամբ:68 Այդ կապակցությամբ Քարրին նամակ է գրում մեծ վեզիրին, ուր բողոքում է ապստամբության ճնշման նպատակով քրդական ոչ կանոնավոր ջոկատներ օգտագործելու համար: Նա հիշեցնում էր մեծ վեզիրին, թե ինչ աղմուկ բարձրացրին Եվրոպայում և «այդքան մեծ անհաջողությունների» պատճառ հանդիսացան Թուրքիայի համար ոչ կանոնավոր զորքի գործողությունները Բուլղարիայում: Դեսպանը խնդրում էր մեծ վեզիրին «կանխել նման երևույթների կրկնումը» և թույլ չտալ Հուսսեյն փաշային մասնակցելու Սասունում տեղի ունեցող գործողություններին:69

Անմիջապես մյուս օրը մեծ վեզիրը պատասխանում է, որ քրդական ջոկատները տեղակայվելու են Մուշում՝ քաղաքի կայազորն ուժեղացնելու նպատակով, քանի որ հայերը

_____

66 Նույն տեղում, էջ 10; Shahid Bey S. Islam, Turkey and Armenia and How They Happened. St, Louis, 1898, pp. 198-199; Bliss E.M. Op. cit., pp. 368-373; Douglas R. Op. cit., p. 116; Лазарев Я.Д. Указ. соч., с. 34-35; Тароян К.З. Народные движения в Сасуне и других районах Западной Армении в 90-х годах Х1Х в.: Автореф. дис... канд. ист. наук. - Ереван, 1966.

67 Դեռևս 1891 թ. հայերի կողմից պատրաստվող ապստամբության և Ռուսաստանից սպասվող վտանգի վերաբերյալ Զեքքի փաշայի կեղծ զեկույցի հիման վրա Բարձր Դուռն Աբդուլ Համիդի հաստատմանը ներկայացրեց 4-րդ բանակի յուրաքանչյուր 64 գումարտակների զինվորների թիվն ավելացնել մինչև պատերազմական շրջանի քանակի, այսինքն՝ 800 մարդու: Սուլթանի որոշման համաձայն, շատ կարճ ժամանակահատվածում, 4-րդ բանակի զինվորների թիվը լրացվեց 2-րդ և 5-րդ բանակների հաշվին (ЦГВИА, ф. ВУА, д. 366, л. 23-24):

68 Turkey, No 1 (1895). Part 1..., p. 2.

69 Նույն տեղում, էջ 3-4:

286

փորձելու են տարածել շարժումը նաև մյուս շրջաններում: Միաժամանակ նա հավաստիացնում էր Քարրիին, որ համիդիե գնդերը ամենևին էլ անկազմակերպ չեն և ղեկավարվում են թուրք սպաների կողմից, Ռուսաստանի կազակների օրինակով: Մեծ վեզիրը տեղեկացնում էր նաև, որ Զեքքի փաշան հրաման է ստացել «անկարգություններ թույլ չտալու» վերաբերյալ:70

Սուլթանական կառավարությունը երկար ժամանակ կարողացավ թաքցնել տեղեկատվությունը Սասունում տեղի ունեցած դեպքերի մասին և ծածկել հանցագործության հետքերը, ամբողջությամբ մեկուսացնելով շրջանն արտաքին աշխարհից: Սակայն արդեն հոկտեմբերի սկզբին Վանում փոխհյուպատոս Հոլվորդը ոչ պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա հաղորդում էր

Սասունի շրջանում տեղի ունեցած ջարդի մասին:71 Քիմբերլին անմիջապես հանձնարարում է Քարրիին պահանջել իշխանություններից գործուղել Հոլվորդին Սասուն՝ դեպքերի իսկությունը պարզելու նպատակով:72 Հոկտեմբերի 9-ին Քարրին փոխանցում է բրիտանական կառավարության պահանջը մեծ վեզիրին, սակայն վերջինս, կասկածի տակ առնելով Հոլվորդի տեղեկատվության իսկությունը, մերժում է առաջարկը, պատճառաբանելով, որ բրիտանական հյուպատոսի ներկայությունը խռովարար շրջանում կդիտվի որպես Անգլիայի միջամտություն և պատճառ կհանդիսանա ապստամբության վերսկսման համար, որը ներկայումս ճնշված է: Նա խոստանում է դեսպանին թույլ տալ Հոլվորդին մեկնել Սասուն երկու ամսվա ընթացքում: Քարրին զգուշացնում էր մեծ վեզիրին, որ բրիտանական առաջարկի մերժումը զրկում է իր կառավարությանը նույնիսկ ամենաչնչին հնարավորությունից՝ որևէ կերպ հակազդելու իրադարձությունների մասին չափազանցված տեղեկությունների տարածմանն Անգլիայում: Մերժելով կոտորածի մասին վարկածը, մեծ վեզիրը պատասխանում է, որ Զեքքի փաշայի զեկուցագիրն արդեն իսկ ուղարկվել է դեսպան Ռուստեմ փաշային, համաձայն որի, գործողությունների ընթացքում կանայք և երեխաները դուրս են բերվել շրջանից: Ըստ մեծ վեզիրի, անասունների հոտերն ու տնային ունեցվածքը մնալու է իշխանությունների ձեռքին՝ մինչև նրանց տերերի վերադարձը: Մնացած մասը

70 Նույն տեղում, էջ 3:
71 Նույն տեղում, էջ 8:
72 Նույն տեղում, էջ 7:

287

(այսինքն կոտորվածների սեփականությունը - Ա.Կ.) վաճառվելու է, իսկ հասույթը բաժանվելու է որպես օգնություն:73

Հոկտեմբերի 15-ին Քարրին Քիմբերլիին հաղորդում էր, որ Հոլվորդից ստացված նոր տեղեկությունների համաձայն, Բիթլիսի վիլայեթում տեղի ունեցած վերջին հուզումները ճնշվել են թուրքական կառավարության կողմից մեծ դաժանությամբ: Կարծես թե կասկած չկա, որ սպանվել է մեծ թվով բնակիչ, շատերը փախել են, թողնելով իրենց հոտերն ու ունեցվածքը և շրջանն ամբողջությամբ զրկված է բնակչությունից: Ըստ Հոլվորդի, խոլերայի համաճարակի պատճառաբանությամբ իշխանությունները մեկուսացրել են շրջանը՝ Սասուն մեկնելու համար պետք էր անցնել հատուկ կարանտին:74

Նոյեմբերի 2-ին Քարրին հուշագիր է ներկայացնում սուլթանին, ուր Հոլվորդից ստացված տեղեկատվության հիման վրա ներկայացնում է Սասունի հայ բնակչության կոտորածի մանրամասները:75 Դեսպանը չէր կասկածում, որ ներկայացված փաստերը վիճարկվելու են և նույնիսկ հնարավոր է մերժվեն իշխանությունների կողմից, սակայն

73 Նույն տեղում, էջ 7-8:
74 Նույն տեղում, էջ 10:
75 Զեքքի փաշայի կողմից Բարձր Դռանն ուղղված զեկուցագրի համաձայն, գործողությունների ընթացքում Սասունում սպանվել էր շուրջ հազար հայ (Davey R. Turkey and Armenia. - The Fortnightly Review, 1895, vol. 63, p. 205), ըստ այլ անկողմնակալ

աղբյուրների՝ 5-12 հազ. (Peterson T. Turkey and Armenian Crisis. - The Catholic World, 1895, vol. 61, p. 667; Douglas R. Op. cit., p. 116; Shahid Bey S. Op. cit., p. 199): Իր զեկուցագրում Զեքքի փաշան գրում էր. «...Մենք այնպես մաքրեցինք երկիրը, որ ապագայում նրանք (հուզումները - Ա.Կ.)...այլևս տեղի ունենալ չեն կարող» (The Evil of the Turk. - The Outlook, 1895, vol. 52, August 24, p. 301):

Ամերիկացի հրապարակախոս Թեոդոր Պետերսոնն ընդգրկում էր Սասունի ջարդը 19-րդ դարի ընթացքում թուրք իշխանությունների կողմից իր հպատակների հանդեպ իրագործած կոտորածների ցանկում. 1822 թ.՝ 50 հազ. հույներ Էգեյան ծովի կղզիներում, 1850 թ.՝ 10 հազ. հայեր Մոսուլում, 1860 թ.՝ 11 հազ. սիրիացիներ Լիբանանում, 1876 թ.՝ 14 հազ. բուլղարացիներ Բուլղարիայում, 1877 թ.՝ 2 հազ. եզդիներ Մոսուլում, 1894 թ.՝ 12 հազ. հայեր Սասունում (Peterson T. Op. cit., p. 667):

288

անհրաժեշտ էր համարում կազմակերպել համապատասխան հետաքննություն: Ըստ Քարրիի, ամբողջ պատասխանատվությունը կատարվածի համար ընկնում է Թահսին փաշայի, զորքի հրամանատար, գնդապետ Իսմաիլ բեյի և Մուշի գումարտակի հրամանատար, մայոր Սալիհի վրա: Դեսպանը հավատացած էր, որ հայերի ապստամբության մասին պնդումներն իրականությանը չեն համապատասխանում և կրկին պահանջում սուլթանական կառավարությունից անցկացնել դեպքերի անկախ հետաքննություն:76

Քարրիին ուղղված Աբդուլ Համիդի պատասխանում վերջինս մերժում էր Հոլվորդի տեղեկատվությունը Սասունի դեպքերի մասին, համարելով այն ոչ հավաստի: Սուլթանն իր զարմանքն էր հայտնում այն փաստի կապակցությամբ, որ Բրիտանիայի պաշտոնյաները քաջալերում են հայ «նիհիլիստների, սոցիալիստների ու անարխիստների» կառավարության դեմ ուղղված գործողությունները: Ըստ սուլթանի, ներկայումս մի քանի անգլիացի ճանապարհորդներ են գտնվում այդ շրջաններում, որոնք հրահրում են հայերին: Նա նմանեցնում էր տեղի ունեցող դեպքերը Բուլղարիայի իրադարձություններին, երբ բուլղարացիները «նույն պատմություններն էին հորինում» կառավարության մասին և պաշտպանություն հայցում բրիտանական կառավարությունից, որի հետևանքով Բուլղարիան այսօր ՝առանձին մարզ է՞: Սուլթանի համոզմամբ, նման բան տեղի ունենալ չի կարող հայերի պարագայում, քանի որ հայ բնակչությունը ցրված է և որևէ տեղ մեծամասնություն չի կազմում: Այսպիսով, շարունակում էր Աբդուլ Համիդը, նրանց սպասումներն իրականանալ չեն կարող, իսկ նրանց բոլոր չափազանցված և եվրոպական համակրանքի վրա հիմնված պատմությունները կեղեքումների և հալածանքների մասին նույնպես անօգուտ են: Ըստ սուլթանի, դժբախտաբար այս կեղծ տեղեկատվությունը տրվում է ընթերցողին հիմնականում բրիտանական մամուլի կողմից: Բնականաբար, նշում էր նա, որ օսմանյան կառավարությունը խիստ միջոցների է դիմում խռովարարների դեմ, որոնք դիմում են զենքի և դիմադրում իշխանություններին: Աբդուլ Համիդը որպես օրինակ է բերում բրիտանական իշխանությունների կողմից որդեգրած խստագույն միջոցները Հնդկաստանի և Եգիպտոսի խռովարար շարժումների դեմ:

76 Turkey, No 1 (1895). Part 1..., pp. 19-20.

289

Նամակի վերջում, սակայն, սուլթանը տեղեկացնում էր, որ այնուամենայնիվ հանձնարարել է ներքին գործերի նախարարին կազմակերպել դեպքերի հետաքննություն և եթե բրիտանական դեսպանի տեղեկություններն իրոք համապատասխանեն իրականությանը, Բիթլիսի վալին կրելու է ողջ պատասխանատվությունը կատարվածի համար:77

Նոյեմբերի 7-ին Քիմբերլիի հետ ունեցած հանդիպման ընթացքում Ռուստեմ փաշան մեղադրում է բրիտանական կառավարությանը «դժգոհ հայերին» քաջալերելու մեջ: Հերքելով դեսպանի մեղադրանքը, նախարարը պատասխանում է, որ թուրքական կառավարությանը սպառնացող վտանգը գալիս է ոչ թե «ագիտատորներից», այլ«կաշառակեր և անբարոյական վարչակազմից»: Քիմբերլին հավատացած էր, որ սուլթանն անկեղծորեն ցանկանում է, որպեսզի հայերը հավասարապես արդար վերաբերմունքի արժանանան կառավարության կողմից, սակայն շատ դեպքերում տեղի իշխանությունները գործում են ճիշտ հակառակ, որի արդյունքում առաջանում է դժգոհություն և հարմար պայմաններ «ագիտատորների» գործունեության համար:78

Ռոզբերիի կառավարությունն ամեն կերպ փորձեց խոչընդոտել Սասունի ջարդի մասին լուրերի տարածմանը երկրում և երկար ժամանակ խուսափեց տպագրել Արևմտյան Հայաստանում տիրող ծանր վիճակը նկարագրող բրիտանական հյուպատոսների տագնապալի հաղորդագրությունները: Սակայն նոյեմբերի սկզբին անգլիական մամուլ թափանցած լուրերը Սասունի իրադարձությունների մասին բողոքի ալիք բարձրացրին երկրում: Լոնդոնում տեղի ունեցող հանրահավաքների մասնակիցները մեղադրում էին բրիտանական կառավարությունն անտարբերության և գործակցության մեջ: Այն ժամանակ, գրում էր Դիլլոնը, երբ բրիտանական հյուպատոսների «սպառիչ տեղեկությունները» և մամուլում հրապարակված փաստերը վկայում էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող «անվերջ, զազրելի և գարշելի» սպանությունների մասին, Ռոզբերիի կառավարությունն անտարբերությամբ վերաբերվեց այդ փաստերին, բնութագրելով դրանք որպես «կոպիտ չափազանցություններ»:79 Ինչպես նշում էր այդ օրերին «Spectator» քաղաքական

_____
77 Նույն տեղում, էջ 21:
78 Նույն տեղում, էջ 16:
79 Dillon E.J. Armenia: An Appeal. - The Contemporary Review, 1896, vol. 69, p. 5.

290

շաբաթաթերթը, կառավարությունը չհրապարակեց Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած «ողբերգական» իրադարձություններին վերաբերող հյուպատոսների հաղորդագրությունները միմիայն «...Անգլիայում հասարակական կարծիքը ծայրաստիճան գրգռելու վախից»:80 Անգլիական հասարակայնությունը, գրում էր հասարակական քաղաքական «Contemporary Review» ամսագիրը, «...տեղեկատվություն ստանալու համար պարտավոր է միմիայն մամուլի ձեռներեցությանը, քանի որ կառավարությունը համառորեն թաքցնում էր այն»:81

Այդ օրերին Անգլիայի հասարակայնությունն այն կարծիքին էր, որ թեև Օսմանյան կայսրության հայ բնակչության վիճակի համար մեղքը կիսում են Բեռլինի պայմանագիրը ստորագրած բոլոր եվրոպական տերությունները, բրիտանական կառավարության պատասխանատվությունն ամենից մեծն է, քանի որ այն ամենից ակտիվն էր Բարձր Դռնից բարենորոգումներ պահանջելու հարցում: Բացի այդ, անգլո-թուրքական կոնվենցիայի պայմանների համաձայն, սուլթանական կառավարությունը պարտավորվել էր կենսագործել Թուրքիայի հայ բնակչության կյանքի պայմանները բարելավող բարենորոգումներ՝ երկրի ամբողջականությունը Ռուսաստանից սպառնացող վտանգից պաշտպանելու փոխարեն: Այդ առումով Հայկական հարցի սրումը նոր բարդությունների առջև կանգնեցրեց Ռոզբերիի կառավարությանը, թեև վարչապետը միամտորեն ենթադրում էր, որ խնդիրը հարթվելու է ինքն իրեն: Ինչպես վկայում էր նախկին արտգործնախարար Դերբին, պարզ էր նաև, որ կառավարությունը երբեք միայնակ չի միջամտելու սուլթանական իշխանությունների ներքին գործերին և ամեն կերպ փորձելու է թաքցնել նրա չարագործությունները, նպատակ ունենալով չսրել Արևելյան հարցը:82

Նոյեմբերին բրիտանական կառավարությունը պաշտոնապես հանդես եկավ Հայկական հարցում եվրոպական տերությունների համատեղ գործողությունների քաղաքականության օգտին: Ռոզբերին դրսևորեց իրեն որպես Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի առանձին գործողությունների համոզված հակառակորդ, համարելով

---

80 Mr. Gladston on Armenia. - The Spectator, 1895, vol. 75, August 10, p. 164.
81 Armenia and the Powers: From Behind the Scenes. - The Contemporary Review, 1896, vol. 69, pp. 628-643.
82 Maccoll M. The Constantinople Massacre and its Lesson..., p.257.

291

տերությունների համատեղ միջամտությունը որպես «միակ հուսալի և անվտանգ միջոց»: Նա կտրուկ կերպով դատապարտում էր այլ հնարավոր միջոցները, համարելով դրանք «անօգուտ» և «վտանգավոր»:83

Նոյեմբերի 9-ին Լոնդոնի սիտիի ավանդական ճաշկերույթի ժամանակ արտասանած ելույթում վարչապետը հանդես եկավ Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավման օգտին՝ Եգիպտական և Հայկական հարցերում համաձայնության հասնելու միջոցով: Նա փաստորեն իրավունք էր վերապահում Ռուսաստանին Արևմտյան Հայաստանի գրավման հարցում, թեև ցարական կառավարությունն այդ ժամանակ առանձնակի հետաքրքրություն խնդրի նկատմամբ հանդես չէր բերում:84 Ի պատասխան, ռուսական կառավարությունն իր կողմից պետք է ճնշում գործադրեր Ֆրանսիայի վրա, որպեսզի վերջինս հրաժարվի Եգիպտոսում բրիտանական քաղաքականությանը դիմագրավելու գծից: Սակայն ցարական կառավարութունը կտրականապես հրաժարվեց այդ առաջարկից:85 Նիկոլայ 2-րդի թագադրության արարողության ժամանակ արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին հայտարարել էր, որ Ռուսաստանի դիրքորոշումը Հայկական հարցում պայմանավորված է 1878 թ. անգլո-թուրքական կոնվենցիայով: «Ինչպես կարող ենք մենք, ռուսներս, - ասում էր նա, - անտեսել Կիպրոսի կոնվենցիայի նշանակությունն ու կարևորությունը, որը պարտավորել է Անգլիային խանգարել Ռուսաստանին՝ Թուրքիայի

ամբողջականությանը սպառնացող լուրջ վտանգի դեպքում»: Երբ իրեն առարկում են, թե իբր բրիտանական կառավարությունը փոխել է իր դիրքորոշումը

83 Lord Rosebery`s Deliverance. - The Spectator, 1896, vol. 77, October 17, p. 504.
84 Ակադեմիկոս Ֆյոդոր Ռոտշտեյնի կարծիքով, բրիտանական կառավարությունը հետապնդում էր միանգամայն այլ նպատակ: «...Առաջարկելով Ռուսաստանին ընդհուպ զբաղվել Հայկական հարցով և հեռանկարում ակնարկելով նույնիսկ Թուրքական Հայաստանի գրավումը , անգլիական դիվանագիտությունը նկատի ուներ կանխել ռուսների զինված ելույթը Հեռավոր Արևելքում...» (Ротштейн Ф.А. Международные отношения в конце Х1Х века..., с. 273):
85 Восточный вопрос во внешней политике России (конец ХУ111 - начало ХХ века) /В.А. Георгиев, Н.С.Киняпина, М.Т.Панченкова и др. М., 1978, с. 264-265.

292

կոնվենցիյի նկատմամբ և ձգտում է մերձենալ Ռուսաստանի հետ, Լոբանով-Ռոստովսկին պատասխանում է, որ համաձայնագիրն այնուամենայնիվ գոյություն ունի և նույնիսկ եթե Անգլիան չեղյալ համարի իր պարտավորությունները, Ռուսաստանը չի պատրաստվում անմիջապես փոփոխության ենթարկել իր արտաքին քաղաքական գիծը:86 Այդ առիթով «Contemporary Review»-ն «ճակատագրական սխալ էր» համարում Ռոզբերիի ձգտումը ձևավորել ֆրանկո-ռուսական դաշինքն առանց ռուսական կառավարությանը անգլիական բարեկամության լուրջ երաշխիքներ տրամադրելու:87

Այսպիսով, հիմնվելով ռուսական կառավարության հայտարարությունների վրա, Ռոզբերին որդեգրեց Օսմանյան կայսրության գործերին չմիջամտելու քաղաքականություն՝ զգուշանալով բրիտանական շահերի դեմ իբր գոյություն ունեցող տերությունների դաշինքից: Հետագայում, 1896 թ. Էդինբուրգի իր ելույթներից մեկում նա ասում էր. «Ես համոզված եմ, որ Եվրոպայի մեծ տերությունների միջև գոյություն ունի անդրդվելի համաձայնություն՝ ...Արևելքի գործերում Անգլիայի յուրաքանչյուր առանձին միջամտությանն ուժով հակազդելու մասին»:88

Վարչապետի որոշումը, սակայն, քննադատության ենթարկվեց որոշ քաղաքական և հասարակական գործիչների կողմից: Այսպես, Լիվերփուլի իր ելույթում Գլադստոնը որպես «ցնորք» բնութագրեց լիբերալների ղեկավարի համոզվածությունը,89 իսկ Մալքոլմ Մակքոլն90 իր հրապարակումներում անհիմն էր համարում Ռոզբերիի պնդումներն այն մասին, թե իբր

86 Stead W.T. The Eastern Ogre; or St. George to Rescue. - The Review of Reviews, 1896, vol. 14, p. 578.
87 Armenia and the Powers..., p. 636.
88 Maccoll M. The Sultan and the Powers..., pp. 208-209.
89 Mr. Gladstone on Armenia..., p. 164.

90 Մակքոլ (Maccoll) Մալքոլմ - բրիտանացի հասարակական և կրոնական գործիչ, կանոնիկոս: Եղել է անգլո-հայկական «Գրովենոր Հաուզ» միության ակտիվ անդամներից,

կազմակերպել է հանրահավաքներ արևմտահայերի օգտին, Հայկական հարցին վերաբերող գրքերի և հոդվածների հեղինակ է:

293

Մեծ Բրիտանիայի անջատ միջամտությունը կհանգեցնի տերությունների հակազդեցությանն ու նույնիսկ կստեղծի պատերազմի վտանգ:91

Նոյեմբերի սկզբին բրիտանական դեսպանի և Բարձր Դռան միջև տեղի ունեցավ բավականին սուր բախում: Վերջինս մեղադրեց փոխհյուպատոս Հոլվորդին Սասունի դեպքերի մասին թյուր տեղեկատվություն տարածելու, ինչպես նաև Մուշի և Բիթլիսի հայ բնակչությանը կառավարության դեմ հրահրելու մեջ և պահանջեց բրիտանական կառավարությունից ետ կանչել նրան: Նոյեմբերի 9-ին Քարրին այդ կապակցությամբ բողոք հայտնեց արտգործնախարար Սաիդ փաշային, տեղեկացնելով նրան իր որոշման մասին՝ Սասունի դեպքերի և Հոլվորդի դեմ ուղղված մեղադրանքների հետաքննության նպատակով դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Չերմսայդին Բիթլիս գործուղելու վերաբերյալ:92 Երկու օր անց դեսպանությունը բավականին խիստ հուշագիր է ներկայացնում Բարձր Դռանն այդ կապակցությամբ, պահանջելով թույլ տալ Չերմսայդին մեկնել Բիթլիս:93

Նոյեմբերի 15-ին Սաիդ փաշան փոխանցում է Քարրիին Աբդուլ Համիդի որոշումը՝ Բիթլիսի վալիին պաշտոնից ազատելու, Սասունի դեպքերը հետաքննելու նպատակով հատուկ հանձնաժողով կազմավորելու, ինչպես նաև Հոլվորդի դեմ մեղադրանքները հանելու վերաբերյալ: Անմիջապես մյուս օրը Քիմբերլին իր գոհունակությունն էր հայտնում դեսպանին սուլթանի որոշման կապակցությամբ և հանձնարարում հետաձգել Չերմսայդի գործուղումը:94

Սաիդ փաշային ուղղված նոյեմբերի 18-ի իր նամակում Քարրին պահանջում էր սուլթանական կառավարությունից շուտափույթ կերպով կազմավորել և Բիթլիս գործուղել հատուկ հանձնաժողով՝ Սասունի իրադարձությունները հետաքննելու նպատակով: Նա նշում էր, որ նման հետաքննության իրականացումը ներկայումս դարձել է անհետաձգելի անհրաժեշտություն, քանի որ եվրոպական մամուլը սկսել է տեղեկատվություն հրապարակել Սասունի դեպքերի մասին, մեղադրելով սուլթանական իշխանություններին հայ բնակչության

91 Maccoll M. The Sultan and the Powers..., pp. 208-209.
92 Turkey, No. 1 (1895). Part 1..., pp. 17-18.
93 Նույն տեղում, էջ 24:
94 Նույն տեղում, էջ 22:

294

ջարդի կազմակերպման մեջ, որի հետևանքով սուլթանն ու իր կառավարությունը կարող են, Բուլղարիայի օրինակով, հայտնվել ոչ բարենպաստ իրավիճակում:95

Բրիտանական դեսպանության ճնշման տակ նոյեմբերի 21-ին սուլթանական կառավարությունը հայտարարում է հանձնաժողովի ստեղծման մասին, որի կազմում

ընգրկված էին սուլթանի համհարզներ, բրիգադային գեներալ Մեհմեդ Ալի փաշան (հետագայում վերջինիս փոխարինեց գլխավոր սպայակույտի բրիգադային գեներալ Հաֆըզ Թևֆիկ փաշան - Ա.Կ.) և դիվիզիայի գեներալ Աբդալլա փաշան, ներքին գործերի նախարարության թղթակցության տնօրեն Մեջիդ էֆենդին և Կոստանդնուպոլսի խնայբանկի տնօրեն Էյմեր բեյը:96 Սակայն միաժամանակ Բարձր Դուռը պաշտոնապես հայտարարեց մամուլում, որ հանձնաժողովը հանձնարարություն է ստացել հետաքննելու «հայ ավազակների հանցագործ վարքը» և բացարձակապես հերքեց ջարդի իրողությունը: Եվրոպական երկրներում հավատարմագրված թուրք դեսպաններին ուղարկվեց հատուկ շրջաբերական, ուր ասվում էր, որ կանոնավոր զորամասերն ուղարկվել են Սասուն՝«հայ խռովարարների» հանցագործություններին վերջ դնելու և կարգ ու կանոն հաստատելու նպատակով, սակայն «դժբախտաբար եվրոպական մամուլի որոշ միջոցներ թույլ են տալիս իրենց ղեկավարվելու ոչ բարեկամական տրամադրություններով, հրապարակում են ճշմարտությանը չհամապատասխանող երևակայական տեղեկություններ»:97

Բարձր Դռան նման վարքագիծը բավականին զայրացրեց բրիտանական կառավարությանը: Քիմբերլին իր «զարմանքն ու ցավն» էր հայտնում Քարրիին Բարձր Դռան հայտարարությունների կապակցությամբ, նշելով, որ որոշակի ցուցում կտա դեսպանին այդ առիթով՝ տերությունների արտգործնախարարների հետ խորհրդակցելուց անմիջապես հետո:98 Նոյեմբերի 26-ին նա բրիտանական կառավարության բողոքը հայտնեց Ռուստեմ փաշային, զգուշացնելով նրան, որ սուլթանական կառավարության գործելակերպը շուտով քննարկվելու է կառավարության խորհրդի կողմից: Շատ հավանական է, շարունակում էր արտգործնախարարը, որ դեպքերի նման ընթացքը կարող է դառնալ

95 Նույն տեղում, էջ 32:
96 Նույն տեղում, էջ 26:
97 Նույն տեղում, էջ 29:
98 Նույն տեղում, էջ 27:

295

տերությունների քննարկման առարկա, «եվրոպական հարց»:99 Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանությունը տեղեկացնում էր իր կառավարությանը, որ Ռուստեմ փաշայի հաղորդագրությունը Քիմբերլիի հայտարարության մասին բավականին անհանգստացրել էր սուլթանին:100

Նոյեմբերի 26-ին Սաիդ փաշայի հետ ունեցած հանդիպման ընթացքում Քարրին նշում էր, որ ստեղծված իրավիճակում սուլթանական կառավարության «միակ անվտանգ վարքագիծը» կայանում է հանձնաժողովի «ազնիվ և անկողմնակալ» հետաքննության կազմակերպման և դրա արդյունքում մեղավորներին պատասխանատվության ենթարկելու մեջ: Եվ եթե բրիտանական կառավարությունը, շարունակում էր դեսպանը, չբավարարվի հանձնաժողովի աշխատանքի արդյունքներով, այն անհրաժեշտ է համարելու, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով տրված իրավունքներով, հետաքննության նպատակով Սասուն զորձուղել Չերմսայդին, ինչպես նաև հրապարակել բրիտանական հյուպատոսների հաղորդագրությունները: Սաիդ փաշան խոստանում է փոխանցել բրիտանական կառավարության դիրքորոշումը սուլթանին, հավաստիացնելով

դեսպանին, որ Բարձր Դուռը կապահովի հանձնաժողովի աշխատանքի անկողմնակալությունն ու կպատժի մեղավորներին:

Փոխանցելով իր զրույցի մանրամասները Քիմբերլիին, Քարրին գրում էր, որ եթե բրիտանական կառավարությունը մտադրվել է լրջորեն զբաղվել Հայկական հարցով և հասնել նկատելի հաջողության, այն պետք է ղեկավարվի միմիայն Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի դրույթներով և ապահովի այդ խնդրում պայմանագիրը ստորագրած տերությունների աջակցությունը, քանի որ, ինչպես վկայում է 70-80-ական թթ. ձախողված փորձը, Անգլիան հնարավորություն չունի միայնակ լուծելու «Հայաստանի վարչակազմի» բարելավման խնդիրը: Ըստ դեսպանի, իր ռուս և ֆրանսիացի պաշտոնակիցները պատրաստակամություն են ցուցաբերում Հայկական հարցում համագործակցելու խնդրում, ինչը չի կարելի ասել Գերմանիայի, Ավստրիայի և Իտալիայի դեսպանների մասին: Քարրիի կարծիքով, եթե այս անգամ էլ հաջողություն չարձանագրվի այդ հարցում, հայերի վիճակն

99 Նույն տեղում, էջ 29-30:
100 АВПР, ф. Политический архив, д. 3435, л. 97-98.

296

ավելի կվատթարանա, իսկ նախաձեռնություն հանդես բերած տերությունը կարող է կորցնել իր ազդեցությունն ու հեղինակությունն Արևելքում:101

Նոյեմբերի 27-ին բրիտանական կառավարությունը որոշում է կայացնում գործուն քայլերի դիմել Հայկական հարցում և առաջարկել Ռուսաստանին և Ֆրանսիային մասնակցել Սասունի դեպքերի հետաքննությանը:102 Այդ առիթով Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանին ուղղված Ռուսաստանի արտգործնախարարության գաղտնի հրահանգում հանձնարարվում էր պահանջել Սասունի դեպքերի մանրազնին հետաքննության ու գլխավոր մեղավորներին պատժի ենթարկելու վրա և այդ ուղղությամբ համագործակցել բրիտանական կողմի հետ:103

Ի պատասխան թուրքական թերթերում տպագրված սուլթանական կառավարության հայտարարությանը, որը նույնությամբ կրկնում էր Բարձր Դռան նախորդ հայտարարությունները հանձնաժողովի նպատակների վերաբերյալ, Քիմբերլին հանձնարարում էր Քարրիին պաշտոնապես բողոք ներկայացնել նման մոտեցման կապակցությամբ և պահանջել տերությունների ներկայացուցիչների մասնակցությունը հետաքննության գործում, նշելով, որ առկա պայմաններում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը՝ գործողությունների ազատություն է վերապահում՝ եվրոպական տերություններին Հայկական հարցում:104

Դեկտեմբերի 5-ին Քարրին հանդիպում է Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Փոլ Կամբոնի105 և Ռուսաստանի հավատարմատար Ժադովսկու հետ և բրիտանական կառավարության անունից առաջարկում նրանց, որպեսզի Էրզրումում Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հյուպատոսները անցկացնեն Բիթլիսի վիլայեթում տեղի ունեցած իրադարձությունների անկախ հետաքննություն: Հավանություն տալով

101 Turkey, No. 1 (1895). Part 1..., p. 41.
102 Douglas R. Op. cit., p. 117.
103 АВПР, ф. Политический архив, д. 3435.
104 Turkey, No. 1 (1895). Part 1..., pp, 39-40.
105 Կամբոն Փոլ - ֆրանսիացի դիվանագետ: 1886-1891 թթ.՝ դեսպան Իսպանիայում, 1891-1898 թթ.՝ Թուրքիայում, 1898-1920 թթ.՝ Մեծ Բրիտանիայում:

297

բրիտանական առաջարկին, տերությունների ներկայացուցիչները խոստանում են անմիջապես փոխանցել այն իրենց կառավարություններին:106

Զգտելով սեպ խրել եվրոպական տերությունների համատեղ գործողությունների մեջ Հայկական հարցում, սուլթանական կառավարությունն առաջարկում է ամերիկյան դեսպանին իր մասնակցությունը բերել Սասունի դեպքերի հետաքննության գործում: Դեկտեմբերի 3-ին ԱՄՆ սենատը կայացնում է հատուկ որոշում, համաձայն որի ամերիկյան կառավարությունն իր պատրաստակամությունն էր հայտնում եվրոպական տերությունների հետ համատեղ մասնակցել թուրքական հետաքննչական հանձնաժողովի աշխատանքներին:107 Ամերիկյան միսիոներ Էդվին Բլիսը հպարտությամբ գրում էր, որ երբ սուլթանական կառավարությունը հրավիրեց ամերիկյան ներկայացուցչին մասնակցել Սասունի դեպքերի հետաքննության աշխատանքներին, իբր ԱՄՆ նախագահն անձամբ ինքն էր ցանկություն հայտնել մեկնել Թուրքիա:108

ԱՄՆ կառավարության մտադրությունները մեծ դժգոհություն առաջացրին Մեծ Բրիտանիայի կառավարող շրջաններում: Այդ առիթով Քարրիի մեղմ կեցվածքը ենթարկվեց բավականին ուժեղ քննադատության ոչ միայն խորհրդարանի համայնքների պալատի նախագահի, այլև նույնիսկ Քիմբերլիի կողմից, որը նշում էր, որ «դեսպանը միշտ պատրաստ է թեթևացնելու Դռան հոգսերը»:109 Սակայն շատ շուտով եվրոպական տերությունների կառավարությունները մերժեցին Բարձր Դռան առաջարկը: Մասնավորապես, ռուս դեսպանին ուղղված Ռուսաստանի արտգործնախարարության հրահանգում ասվում էր. «Քանի որ մենք...համաձայնել ենք Էրզրումում հյուպատոսներ ունեցող տերությունների պատվիրակների (հանձնաժողովում - Ա.Կ.) մասնակցության Անգլիայի նախնական առաջարկության օգտին, մենք հրաժարվեցինք պաշտպանել հյուսիսամերիկյան կառավարության...դիմումը՝ հանձնաժողովի կազմում իր պատվիրակներին նշանակելու վերաբերյալ»:110

_____
106 Turkey, No. 1 (1895). Part 1..., p. 42.
107 Gordon L.J. American Relations with Turkey (1830-1930). Philadelphia, 1932, p. 26.
108 Bliss E.M. Op. cit., pp. 384-385.
109 Douglas R. Op. cit., p. 119.
110 АВПР, ф. Политический архив, д. 3435, л. 10-11.

298

Դեկտեմբերի 7-ին Սաիդ փաշան Քարրիին տեղեկացնում էր, որ Բարձր Դուռն իր համաձայնությունն է տվել, որպեսզի Էրզրումում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հյուպատոսները մասնակցեն հանձնաժողովի աշխատանքներին:111

Հետաքննության հետ կապված խնդիրները Բրիտանիայի դեսպանի նստավայրում քննարկելու ընթացքում (13 դեկտեմբերի) Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպաններն առաջարկում և պնդում են, որպեսզի հյուպատոսներն անձամբ չմասնակցեն հանձնաժողովի աշխատանքներին, այլ գործուղեն այնտեղ իրենց ներկայացուցիչներին:112 Զգտելով խուսափել միջոցառման ձախողումից, Ֆորին Օֆիսը համաձայնում է այդ առաջարկի հետ և նշանակում որպես կառավարական պատվիրակ փոխհյուպատոս Շիպլիին, թեև Քիմբերլին այն կարծիքին էր, որ տերությունների մասնակցությունը պետք է ապահովված լինի հյուպատոսների մակարդակով:113 Սուլթանական կառավարության հետ համաձայնություն էր ձեռք բերվում, որ տերությունների ներկայացուցիչները իրավունք են ստանում մասնակցել հանձնաժողովի բոլոր միջոցառումներին, ծանոթանալ անհրաժեշտ նյութերի հետ, նախագահի թույլտվությամբ հարցաքննել ականատեսներին և վկաներին, առաջարկություններ ներկայացնել այցելությունների ու քննության ընթացակարգի վերաբերյալ, մշտապես զեկուցել և փաստաթղթեր ուղարկել Էրզրումում իրենց հյուպատոսներին, համատեղ զեկուցագիր ներկայացնել հանձնաժողովի գործունեության ու արդյունքների մասին:114

Դեկտեմբերի 29-ին Հավարդենի դղյակում տեղի ունեցավ Գլադստոնի հանդիպումն իր 85-ամյակը շնորհավորելու կապակցությամբ Փարիզից ժամանած հայկական պատվիրակության հետ: Իր ելույթում լիբերալ կուսակցության նախկին ղեկավարն իրեն հատուկ ոճով ներկայացրեց Օսմանյան կայսրության բացասական դերը մարդկության և քաղաքակրթության ճակատագրում, խստագույնս արտահայտվեց թուրքերին Եվրոպայից վտարելու և եվրոպական տերությունների համատեղ միջամտության անհրաժեշտության

111 Turkey, No. 1 (1895). Part 1..., p. 44.
112 Նույն տեղում, էջ 49-50:
113 Նույն տեղում, էջ 51-52:
114 Նույն տեղում, էջ 64:

299

մասին:115 Նշենք, որ լիբերալ կուսակցության Գլադստոնի կողմնակիցները թուրքահայերի ազատագրման գաղափարն առաջ էին քաշել որպես հանրամատչելի նշանաբան առաջիկա խորհրդարանական ընտրությունների ընթացքում և նրա համար հնարավորություն էր ընձեռնվել վերսկսելու իր քաղաքական գործունեությունը որպես լիբերալ կուսակցության ղեկավար: Սակայն նա որոշեց գործել կուսակցությունից անկախ, իր վրա չվերցնելով կուսակցության անմիջական ղեկավարությունն ու պատասխանատվությունն իր գործողությունների համար: Իռլանդացիների և ԱՄՆ քաղաքացիների հետ կայացած իր հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ Անգլիայի և Թուրքիայի մերձեցումը բացարձակ անօգուտ մի գաղափար է, որը երբևիցե չի կարող իրականանալ վերջինիս վարքագծի պատճառով:116

Շատ խիստ անհանգստանալով և զայրանալով Գլադստոնի ելույթների առիթով, Աբդուլ Համիդը պաշտոնապես բացատրություններ պահանջեց բրիտանական կառավարությունից:117 1895 թ. հունվարի 8-ին Քիմբերլին Քարրիին հանձնարարում է պատասխանել սուլթանին, որ բրիտանական կառավարությունը «ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ պ-ն Գլադստոնի արտահայտությունների նկատմամբ և որևէ

պատասխանատվություն կրել դրա համար չի կարող»: Նա որևէ նախարարության ներկայացուցիչ չէ, շարունակում էր նախարարը, ոչ էլ ղեկավարում է պետական հիմնարկություն, սակայն բրիտանական կառավարությունը չի թաքցնում, որ Գլադստոնը ներկայացնում է այս երկրի հասարակական կարծիքը, որը բավարարված կլինի միմիայն այն ժամանակ, երբ սուլթանական իշխանությունները կանցկացնեն արդար հետաքննություն և դրա արդյունքում կպատժեն մեղավորներին:118 Մյուս օրը Քիմբերլին ներկայացնում է իր պատասխանը Ռուստեմ փաշային: Չբավարարվելով նախարարի բացատրություններով, դեսպանը հայտարարում է, որ բրիտանական կառավարության մերժումը սուլթանի գոհացումն ապահովելու հարցում կարող է «կործանարար հետևանքներ» ունենալ երկու պետությունների հարաբերությունների համար: Քիմբերլին կրկին անգամ ընդգծում է, որ

_____
115 Magnus P. Gladstone. A Biography. London, 1954, p. 430.
116 Новое время, 1895, 9 января; Кавказ, 1895, 6 января.
117 FO 424/181, No. 2, p. 1.
118 FO 424/181, No. 18, p. 12.

300

բրիտանական կառավարությունը պատասխանատվություն կրել չի կարող մասնավոր անձանց արտահայտությունների համար և չի կարող բավարարել օտար պետությունների պահանջն այդ ուղղությամբ:119

Քիմբերլիին ուղղված հունվարի 14-ի նամակում Լոնդոնի Ազգային մահմեդական ընկերությունը, Մեծ Բրիտանիայում և, մասնավորապես, Հնդկաստանում բնակվող մահմեդականների անունից բրիտանական կառավարության ուշադրությունն էր հրավիրում երկրում սկսված Օսմանյան կայսրության դեմ ուղղված «վտանգավոր բնույթի քարոզչության» առնչությամբ, որը վիրավորում է մահմեդական կրոնն ընդհանրապես և առաջացնում նրա հետևորդների խորը վրդովմունքը: Փաստաթղթում նշվում էր, որ հետաքննությունից առաջ հնչող Հայաստանում կոտորածների կազմակերպման «մեծապես չափազանցված և թյուր» մեղադրանքները «դաժան անարդարության» դրսևորումներ են Թուրքիայի միապետի նկատմամբ, որը հանդիսանում է իսլամի խալիֆը և Բրիտանական կայսրության «հին և հավատարիմ դաշնակիցը»: Ընդգծելով, որ Մեծ Բրիտանիայի 60 մլն. մահմեդական հպատակների և միլիոնավոր այլ մահմեդականների շահերը սերտորեն շաղկապված են Բրիտանական կայսրության շահերի հետ, նամակի հեղինակները գրում էին, որ նման անհանդուրժողականությունը աղետալի թշնամություն կարող է առաջացնել մահմեդականության և քրիստոնեության միջև: Հիշեցնելով նախարարին Օսմանյան կայսրության դեմ ուղղված Ռուսաստանի վերջին հարձակումը և դրա արդյունքում մահնեդականների տառապանքները, ինչպես նաև Բալկաններում տեղի ունեցած կոտորածները, ընկերության ներկայացուցիչները բողոքում էին յուրաքանչյուր այն քայլի դեմ, որը կարող է քաջալերել թուրքական տարածքի զավթումը Ռուսաստանի կողմից:120

Պատասխան նամակում (17 հունվարի) Ֆորին Օֆիսը գրում էր, որ բրիտանական կառավարությունը պատասխանատվություն չի կրում մասնավոր անձանց

արտահայտությունների և տեսակետների համար: Նշվում էր, որ Մեծ Բրիտանիայի ջանքերն ուղղված են առաջին հերթին Սասունի դեպքերի անկողմնակալ հետաքննության

119 FO 424/181, No. 25, pp. 16-17.
120 FO 424/181, No. 50, pp. 37-38.



կազմակերպմանը, ինչը բխում է ինչպես թուրքական կառավարության, այնպես էլ կայսրության մահմեդական և քրիստոնյա հպատակների շահերից:121

Հանձնաժողովի մոտալուտ ժամանման առիթով իշխանությունները սկսեցին արագորեն վերացնել Սասունի ջարդի հետևանքները, ինչպես նաև հապճեպորեն բնակեցնել Արևմտյան Հայաստանի շրջանները թուրքերով և քրդերով՝ հայ բնակչությունն ամենուրեք որպես փոքրամասնություն ներկայացնելու և տերությունների հնարավոր պահանջը բարենորոգումների իրագործման կամ էլ ինքնավարության վերաբերյալ կանխելու նպատակով: Բացի այդ, ինչպես Քարրիին ուղղված հունվարի 10-ի զեկուցագրում վկայում էր Անգորայում հյուպատոս Քամբերբատչը, իշխանություններն ամենուրեք ստեղծում էին «Թուրքական գաղտնի պաշտպանության կոմիտեներ», որոնք հիմնականում կազմված էին կառավարական պաշտոնյաներից: Ըստ հյուպատոսի կողմից ստացված հավաստի տվյալների, այդ կազմակերպությունների նպատակն էր հրահրել հայ բնակչությունն իշխանությունների դեմ և ստեղծել հուզումներ՝ ողջ պատասխանատվությունը հայերի վրա բարդելու նպատակով: Քամբերբատչի կարծիքով, իշխանություններին հաջողվել էր հասնել դրված նպատակին, քանի որ թուրք բնակչությունն ամենուրեք համոզված էր հայերի կողմից նախապատրաստվող շարժման գոյության մեջ և արդեն իսկ պատրաստ էր դիմագրավելու այն:122

Հունվարի 16-ին Քարրին հաղորդում էր, որ երեք օր առաջ Սասունի հանձնաժողովը և Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի ներկայացուցիչներ՝ փոխհյուպատոսներ Շիպլին, Պրժևալսկին ու Վիլբերը Էրզրումից ուղեվորվեցին դեպի Մուշ:123 Նույն օրը նոր պատրիարք Իզմիրլյանն ասում էր բրիտանական դեսպանին, որ հայերը չեն համարձակվելու ցուցմունքներ տալ, ուստի հանձնաժողովի աշխատանքն արդյունավետ լինել չի կարող: Պատրիարքը տեղեկացնում էր դեսպանին, որ զրկված է որևէ տեղեկատվությունից, քանի որ իշխանությունները ամբողջությամբ դադարեցրել են նամակագրական կապը շրջաններից և բանտարկել հոգևորականների մեծ մասին:124 Քարրին խորհուրդ էր տալիս պատրիարքին,

121 FO 424/181, No. 59, pp. 40-41.
122 Turkey, No. 6 (1896)..., p. 199.
123 Turkey, No. 1 (1895). Part 1..., p. 79.
124 FO 424/181, No. 54, p. 39.



մինչև հանձնաժողովի աշխատանքի ավարտը, խուսափել Դռանն ուղղված գրգռիչ բնույթ ունեցող նամակներից:125 Դեսպանը հաղորդում էր Քիմբերլիին, որ սուլթանի կողմից նոր

պատրիարքի պատվին տրված պաշտոնական ընդունելության ժամանակ, երբ Իզմիրլյանը սկսում է խոսել հայերի տանջանքների մասին, սուլթանն ընդհատում է նրան և հայտարարում, որ առաջնորդի պարտականությունն է «հանդիմանել հայրենակիցների խռովարար և հանդուգն վարքագծին»: Ըստ Քարրիի, ընդունելությունը չի տևում նույնիսկ երկու րոպե, քանի որ պատրիարքին հրավիրում են մի այլ սրահ, ուր, ընդունված կարգի համաձայն, նա պետք է սուրճ խմեր, և հայտնում, որ նրա ներկայությունը սուլթանի համար այլևս ցանկալի չէ:126

Հունվարի 19-ին Քարրին ներկայացնում է Քիմբերլիին հայկական շրջանների համար բարենորոգումների ծրագրի մի նոր տարբերակ, որի հիմքում ընկած էր ժամանակին Վիլսոնի կողմից նախապատրաստված նախագիծը: Բարենորոգումների ծրագիրը, որը վերամշակել էր Չերմսայդը, բաղկացած էր հետևյալ կետերից. 1/ վալին նշանակվում է տերությունների համաձայնությամբ՝ հինգ տարի ժամկետով. 2/ վիլայեթի գլխավոր խորհուրդը, որը վերահսկում է նաև ֆինանսական գործունեությունը, կազմվում է սանջակներից ուղարկված պատգամավորներից, համայնքները ներկայացված են խորհրդում իրենց թվին համապատասխան. 3/ վիլայեթը բաժանվում է սանջակների, մյութեսարիֆները կարող են լինել մահմեդական և քրիստոնյա, հաշվի առնելով համայնքների թվի համամասնական հարաբերակցությունը. 4/ սանջակները բաժանվում են կազաների, կայմակամներն ընտրվում են նույն սկզբունքով. 5/ կազաները բաժանվում են նահիեների, մյուդիրներն ընտրվում են նույն սկզբունքով. 6/ կազաներն ունենալու են համայնքները ներկայացնող վարչական խորհուրդներ. 7/ վեքիլներն ընտրվում են համայնքների ղեկավարների կողմից և ներկայացնում համայնքի շահերը վիլայեթի գլխավոր քաղաքում. 8/ վիլայեթի դատարանը կազմվում է երկու քրիստոնյայից և երկու մահմեդականից, որոնք հաստատված ժամկետներում այցելում են տարբեր վայրեր, տեսչություն անցկացնում բանտերում, վերանայում դատավճիռները, լսում բողոքարկումները. 9/ ստեղծվում է խառը ժանդարմերիա,

---

125 FO 424/181, No. 57, p. 40.
126 FO 424/181, No. 60, p. 41.

303

ուր մահմեդականներն ու քրիստոնյաները ներկայացված են իրենց թվին համապատասխան. 10/ հատուկ միջոցներ են ձեռնարկվում հայերին քրդերից պաշտպանելու նպատակով:127

Քարրին ներկայացնում է դեսպանության նախագիծը հայ պատրիարքին, ինչպես նաև ծանոթացնում նրա հիմնական դրույթների հետ ռուս դեսպանին: Ընդհանուր առմամբ իր գոհունակությունը հայտնելով ծրագրի կապակցությամբ, Իզմիրլյանը ներկայացնում է իր դիտողությունները: Նա գտնում էր, որ. ա/ տերությունները պետք է գործուն կերպով մասնակցեն վալիի ընտրությանը և ամեն ինչ անեն, որպեսզի այդ պաշտոնում նշանակվի քրիստոնյա կամ լավագույն պարագայում հայ. բ/ ծրագրում անպայմանորեն պետք է նշվի տեղական կարիքների համար թողնվող ֆինանսական միջոցների տոկոսաչափը. գ/ մյութեսարիֆները, կայմակամները, մյուդիրներն ու դատավորները պետք է նշանակվեն վալիի, այլ ոչ թե Բարձր Դռան կողմից. դ/ վիլայեթի քրիստոնյա և մահմեդական բնակչության համաչափությունը հաշվարկելիս հարկավոր է նկատի չառնել քոչվոր քուրդ

բնակչության հանգամանքը. ե/ պետք է ուժեղացնել նախագծի վերջին կետը, քանի որ 1880 թ. համեմատությամբ իրավիճակը զգալի կերպով փոխվել է՝ իշխանությունները զինել են հայերի հիմնական հարստահարողներին՝ քրդերին:

Ռուս դեսպանն իր գոհունակությունն էր հայտնում քրիստոնյա պաշտոնյաների նշանակման գաղափարի ներկայացման կապակցությամբ, հիմնական գործնական դժվարությունը տեսնում էր տերությունների կողմից վալիի նշանակման համաձայնեցման մեջ, առաջարկում պարտադիր կերպով իրականացնել համիդիե գնդերի կարգապահությունը բարձրացնող և վերահսկողությունը սահմանող միջոցառումներ:128

Չնայած այն հանգամանքին, որ տեղական իշխանությունները նախորոք հանձնաժողովի անդամների հետ հանդիպումը դժվարեցնող համապատասխան միջոցներ էին ձեռնարկել, այնուամենայնիվ, սասունցիները խնդրագիր են ներկայացնում, ուր մանրամասն նկարագրում են Սասունում տեղի ունեցած դաժանությունները: Սակայն մի քանի օրից քննությունը դադարեցվում է, քանի որ իշխանությունները մեծ թվով հայեր են ձերբակալում Բիթլիսում և Մուշում: Եվրոպական պատվիրակները բողոք են ներկայացնում Բարձր Դռանը, որից հետո Թահսին փաշան հեռացվում է պաշտոնից, նրան փոխարինում է

127 FO 424/181, No 88/1, p. 57.
128 FO 424/181, No. 93, pp. 65-66.

304

հանձնաժողովի անդամ Էյմեր բեյը: Տերությունների փոխհյուպատոսների համոզմամբ, հանձնաժողովի թուրք անդամները խուսափում էին վկաների ցուցմունքները լսելուց, գլխավորապես որպես հիմք ընդունելով պաշտոնական փաստաթղթերն ու պաշտոնյաների վկայությունները:129 Փետրվարի 8-ին Շիպլին հաղորդում էր Քարրիին, որ թեև հանձնաժողովն այս ընթացքում կատարել է գործի 12 լսում, այն հանդիպել է ընդամենը մեկ հայ վկայի հետ: Ըստ փոխհյուպատոսի, հանձնաժողովի թուրք անդամները հանձնարարություն են ստացել ապացուցելու, որ ա/ «հայերի շրջանում գոյություն է ունեցել բաց ապստամբության իրավիճակ». բ/«բոլոր դեպքերում ագրեսորները հայերն էին, այլ ոչ թե քրդերը». գ/ «հայերն իրագործել են ապստամբական բարբարոս գործողություններ մահմեդականների դեմ»: Դրան հակառակ եվրոպական պատվիրակները այցելում էին հայկական բնակավայրեր և հաստատություններ, լսում բազմաթիվ հայերի վկայություններ, ինչն առաջացնում էր սուլթանական իշխանությունների դժգոհությունը:130

Մարտի 13-ին Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ֆռենկ Լասսելզը հաղորդում էր Լոբանով-Ռոստովսկու հետ կայացած հանդիպման մասին, որի ժամանակ վերջինս նշում էր, որ երբևիցե «գոհացուցիչ արդյունք» չի ակնկալել հանձնաժողովի աշխատանքից և համոզված է, որ Սասունի ջարդի իրական կազմակերպիչները պատասխանատվության չեն ենթարկվելու: Նա առաջարկում էր բրիտանական կառավարությանը մտածել, թե ինչ է՞ հարկավոր անել հանձնաժողովի աշխատանքի ավարտից հետո, միաժամանակ իր գոհունակությունը հայտնելով Հայկական հարցում երկու պետությունների դեսպանների համագործակցության կապակցությամբ:131

Բրիտանական դեսպանության և հյուպատոսությունների տեղեկությունների համաձայն, նույնիսկ Սասունի դեպքերի հետաքննության ընթացքում սուլթանական իշխանությունները շարունակում էին հետապնդել հայ բնակչությանը, անհիմն խուզարկությունների և անժամկետ բանտարկությունների ենթարկում մեծ թվով հայերի, որոնք մեղադրվում էին հեղափոխական գործունեության մեջ: Մարտի 16-ին Քիմբերլին գրում էր Քարրիին, որ Մեծ Բրիտանիայի խորհրդարանն ու հասարակական կարծիքը

129 Turkey, No. 1 (1895). Part 1..., pp. 74-75, 82; Кавказ, 1895, 24, 29 января.
130 Turkey, No. 1 (1895). Part 1..., pp. 76-78.
131 Նույն տեղում, էջ 92-93:

305

կառավարության ուշադրությունն էին հրավիրում բազմաթիվ նման փաստերի վրա: Մասնավորապես, հիշատակվում էր 80 հայերի բանտարկության փաստը Կոստանդնուպոլսում, որոնց հանցանքը կայանում էր նրանում, որ նրանք օգնություն էին փորձում հավաքել Սասունի դեպքերի ընթացքում տուժված իր հայրենակիցների համար: Նշվում էր նաև թուրքական բանտերում տիրող սարսափելի վիճակի և, մասնավորապես, հայերի հանդեպ կիրառվող տանջանքների մասին:

Քիմբերլին գրում էր, որ այս բոլոր փաստերը հակասում են սուլթանի և իր կառավարության կողմից տրված խոստումներին և Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններին՝ քրիստոնյա հպատակների կյանքի բարելավման մասին: Արտգործնախարարը հանձնարարում էր դեսպանին Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել նշված փաստերի վրա, պահանջել ազատ արձակել անհիմն մեղադրանքներով ձերբակալված հայերին և իրավունք վերապահել օտարերկրյա հյուպատոսներին՝ մասնակցել քրիստոնյաների դատավարություններին, ինչպես նաև առաջարկում էր խորհրդատվություններ անցկացնել տերությունների ներկայացուցիչների հետ:132

Մարտի 19-ին Քարրին Քիմբերլիին հաղորդում էր, որ խորհրդատվությունների արդյունքում պարզվել է, որ Ռուսաստանն ու Ֆրանսիան կողմնակից են առանձին ներկայացումներ կատարել Բարձր Դռանը բանտարկյալների հարցում և առայժմ խուսափել համատեղ գործողությունից, մինչև որ չհասունանա ընդհանուր ներում շնորհելու կամ բարենորոգումների ծրագիր առաջարկելու անհրաժեշտությունը: Ըստ դեսպանի, Գերմանիան և Իտալիան համաձայնել են մասնակցել տերությունների համատեղ միջոցառումներին, սակայն Ավստրիան դեռևս վերապահ է:133

Մարտի 21-ին մեծ վեզիրը Քարրիին հայտնում է, որ Աբդուլ Համիդը որոշում է կայացրել քննել դատապարտված բոլոր հայ հոգևորականների գործերը մայրաքաղաքում և ազատ արձակել բոլոր նրանց, ովքեր չեն մեղադրվում սպանության կամ այլ ծանր հանցանքի մեջ: Միաժամանակ Բարձր Դուռը պահանջելու է, շարունակում էր մեծ վեզիրը, որպեսզի այդ հոգևորականներն այլևս չզբաղեցնեն կարևոր պաշտոններ: Նա խոստանում է դեսպանին իր

132 Turkey, No. 1 (1896). Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty`s Consular Officers in Asiatic Turkey. London, 1896, pp. 9-10.
133 Նույն տեղում, էջ 10:

306

ողջ հեղինակությունն օգտագործել սուլթանի առջև՝ մյուս քաղաքական բանտարկյալների համար նույնպես նման որոշում ընդունելու հարցում: Քարրին պահանջում է նաև համապատասխան հրահանգ իջեցնել տեղական իշխանություններին՝ հայերի անհիմն ձերբակալություններն ու հալածանքները դադարեցնելու նպատակով:134

Մարտի 21-ին Աբդուլ Համիդը հրավիրում է Քարրիին Յըլդիզ Քիոշք «իֆթարի» (երեկոյան ճաշ Ռամադանի ընթացքում - Ա.Կ.), ուր երկար զրույց է ունենում բրիտանական դեսպանի հետ Հայկական հարցի շուրջ: Սուլթանն իր զարմանքն էր հայտնում Քարրիի այն տեղեկատվության կապակցությամբ, որի համաձայն կայսրության տարբեր շրջանների բանտերում գտնվում է շուրջ 700 հայ քաղբանտարկյալ: Ըստ սուլթանի տեղեկությունների, ներկայումս ընդամենը 30 հայ քաղբանտարկյալ կա, որոնք ձերբակալվել են Յոզղատում, Կեսարիայում և Թոքաթում տեղի ունեցած քաղաքական հուզումների հետևանքով: Դեսպանը նշում էր, որ ներկայումս այնպիսի բանտ չկա կայսրությունում, որը հայերով լեցուն չլինի: Աբդուլ Համիդը պատասխանում է, որ չի կարող նույնիսկ պատկերացնել ու հավատալ, որ տեղական իշխանությունները հայերին բանտերում են պահում առանց քննության և դատի: Քարրին հաստատում է իր ասածը գրեթե ամեն օր հյուպատոսներից ստացվող զանազան օրինակներով և ընդգծում կրկին, որ շատ դեպքերում նրանց ձերբակալում են ոչ քաղաքական և չհիմնավորված հանցանքների համար և պահում բանտերում միմիայն այն բանի համար, որ նրանք հայեր են:

Սուլթանը փորձում էր հավաստիացնել դեսպանին, որ ինչպես ինքը, այնպես էլ իր նախնիները միշտ «գթասրտությամբ և արդարությամբ» են վերաբերվել հայերին, սակայն վերջին տարիներին նրանք իրենց «լավ չեն պահում» և տարածում են «թյուր և չափազանցված» տեղեկություններ, որոնք «լիովին վստահությամբ» են ընդունվում Անգլիայում: Այդ կապակցությամբ նա զգուշացնում է դեսպանին, որ ներկայիս իրավիճակը կարող է ճակատագրական դառնալ երկու երկրների բարյացակամ հարաբերությունների համար, քանի որ իր մահմեդական հպատակները անտարբեր չեն կարող մնալ հայերի կողմից իրենց հասցվող վիրավորանքների հետևանքով, որոնք «քաջալերվում և պաշտպանվում» են Անգլիայի կողմից:

_____
134 Նույն տեղում, էջ 11:

307

Դեսպանը պատասխանում էր, որ բրիտանական հասարակայնության վրդովմունքն առաջացել է հիմնականում հայերի շարունակվող քաղաքական բանտարկությունների պատճառով և նշում, որ սուլթանի որոշումը բանտարկված հայ հոգևորականներին ազատ արձակելու մասին մեծ ազդեցություն կարող է ունենալ հասարակական կարծիքի վերաբերմունքի վրա: Նա խնդրում էր սուլթանին նման որոշում կայացնել նաև մյուս հայ բանտարկյալների համար: Վերջին տարիներին Անգլիայում առաջացած վրդովմունքը, շարունակում էր Քարրին, «ուժեղ է և անկեղծ», ժողովուրդն այլևս չի կարողանում կիսել

պատասխանատվությունը գործերի նման ընթացքի համար: Ուստի բրիտանական կառավարությունը ստիպված է լինելու պահանջել վարչական բարենորոգումների իրագործում և երաշխիքներ՝ հայերին քրդերից պաշտպանելու նպատակով:

Աբդուլ Համիդը պատասխանում է, որ իր նախորդների կողմից ընդունված օրենքները, ճիշտ կիրառելու դեպքում, ամբողջությամբ հնարավորություն են տալիս ապահովելու լավ կառավարում: Իրավիճակը բարելավելու համար, ըստ սուլթանի, հարկավոր է միայն ավելացնել ոստիկանների և զինվորների թիվն այն շրջաններում, ուր լարվածություն գոյություն ունի քրդերի ու հայերի միջև, դատավորների պաշտոններում նշանակել լավագույն մարդկանց, ինչպես նաև պետական ծառայության մեջ ընդգրկել որոշակի թվով հայերի: Աբդուլ Համիդի կարծիքով, նման բարելավումներ իրականացնելու դեպքում բարենորոգումների պահանջն ընդհանրապես կորցնում է իր իմաստը:

Պնդելով այն հանգամանքի վրա, որ գոյություն ունեցող օրենքներն ու սուլթանի ցանկությունները չեն համապատասխանում այն իրականությանը, որը գոյություն ունի կայսրության հեռավոր շրջաններում, Քարրին հասնում է նրան, որ Աբդուլ Համիդը խոստանում է Բայրամի տոնից անմիջապես հետո կազմել հանձնաժողով, որը կուսումնասիրի հայերի դժգոհության փաստերը և կառաջարկի անհրաժեշտ բարենորոգումների ծրագիր:135

Մարտի 28-ին Քիմբերլին քննարկում է Հայկական հարցը Ռուստեմ փաշայի հետ: Զրույցի ընթացքում վերջինս փորձում էր համոզել նախարարին, որ հայերի հետ կապված բոլոր բարդությունները ստեղծված են հեղափոխական գործակալների և կազմակերպությունների գործունեության մեղքով: Քիմբերլին չի մերժում

---

135 Նույն տեղում, էջ 12-15:

308

հեղափոխականների առկայության փաստը, սակայն համոզված կերպով նշում է, որ պատճառները շատ ավելի խորն են և բխում են Թուրքիայում ստեղծված անառողջ վարչական կացությունից:

Այնուհետև դեսպանը քննադատում է բրիտանական կառավարությանը Սասունի դեպքերի մասին Բարձր Դռանը չափազանցված և անհիմն մեղադրանքներ ներկայացնելու մեջ, երբ հանձնաժողովը դեռևս չի ավարտել իր աշխատանքը: Քիմբերլին պատասխանում է, որ բրիտանական կառավարության տրամադրության տակ գտնվող և իրականությանը համապատասխանող տեղեկություններն ու փաստերը վկայում են այն մասին, որ Սասունում տեղի են ունեցել «անօգնական և անզեն» հայերի «սարսափելի կոտորածներ»: Բրիտանական կառավարությունը պատրաստվում է, շարունակում էր նախարարը, հանձնաժողովի աշխատանքների ավարտից անմիջապես հետո պահանջել սուլթանական իշխանություններից վարչական բարենորոգումների իրագործում: Դեսպանի այն հարցին, թե ինչի՞ հիման վրա է պատրաստվում Մեծ Բրիտանիան միջամտել Թուրքիայի ներքին գործերին, Քիմբերլին, չթաքցնելով իր զարմանքը, հիշեցնում է նրան Բեռլինի պայմանագրով և Կիպրոսի կոնվենցիայով նախատեսված սուլթանական կառավարության պարտավորությունները, ինչպես նաև բրիտանական կառավարության և մյուս

տերությունների իրավունքները: Ֆորին Օֆիսի ղեկավարի համոզմամբ, իրավիճակը Փոքր Ասիայում գնալով ավելի է շիկանում, մահմեդականների և քրիստոնյաների միջև տեղի ունեցող բախումները կարող են հանգեցնել «լուրջ իրադարձությունների»:136

Նույն օրերին Լոբանով-Ռոստովսկին ասում էր դեսպան Լասսելզին, որ բավականին մտահոգված է Հայկական հարցի զարգացումներով և անհամբեր կերպով սպասում է Կոստանդնուպոլսում ռուսական, բրիտանական և ֆրանսիական դեսպանների միջև բարենորոգումների ներկայացման կապակցությամբ տեղի ունեցող խորհրդատվությունների արդյունքներին: Նրա կարծիքով, բարենորոգումների իրագործումը դժվարեցնում է այն հանգամանքը, որ հայերը ցրված են կայսրության ողջ տարածքով և բնակչության մեծամասնություն են կազմում միայն Բիթլիսում, Անգորայում և Ալեքսանդրետում, որոնք գտնվում են զգալի հեռավորության վրա մեկը մյուսից: Այդ առումով, շարունակում էր նախարարը, հայերի պարագան բավականին տարբերվում է Լիբանանի խնդրից, որտեղ

136 Նույն տեղում, էջ 12:



հեշտությամբ հնարավոր դարձավ սահմանել որոշակի մի շրջան և նշանակել քրիստոնյա նահանգապետ:137

Չնայած իր զառամյալ տարիքին, 1895 թ. գարնանը Գլադստոնը ծավալում է լայն հակաթուրքական քարոզչական գործունեություն երկրում: Ի տարբերություն լիբերալների իրական ղեկավար Ռոզբերիի և նրա կողմնակիցների, կուսակցության անդամների մեծամասնությունը, Գլադստոնի ղեկավարությամբ, հանդես էր գալիս Թուրքիայի դեմ ուղղված Մեծ Բրիտանիայի «անհապաղ և միանձնյա» գործողությունների օգտին: Ապրիլին Գլադստոնը հուշագիր է ներկայացնում կառավարությանը, ուր, բազմաթիվ օրինակներ բերելով պատմությունից, փորձում էր ապացուցել, որ թուրքերը միշտ նահանջել են Մեծ Բրիտանիայի կողմից սպառնացող ռազմական վտանգի առջև: Նա գրում էր. «Ներկայիս պայմաններում միակ ճիշտ միջոցը՝ Թուրքիայի նկատմամբ հարկադրական ճնշման անհրաժեշտությունը, առաջացել է Հայաստանի հանդեպ գոյություն ունեցող հարգանքից, իսկ «տերությունների համերգի» հարցը մեզ ամենևին չպետք է անհանգստացնի...»:138 Ապրիլի 10-ին Սաիդ փաշան հերթական անգամ Աբդուլ Համիդի դժգոհությունն էր հայտնում Քարրիին Գլադստոնի ծավալած գործունեության կապակցությամբ, խնդրելով բրիտանական կառավարությունից, հնարավորության դեպքում, կանխել նրա հաջորդ ելույթները կամ խորհուրդ տալ նրան չափավորելու իր լեզուն: Արտգործնախարարը ոչ նպատակահարմար էր գտնում Գլադստոնի նման ոճի ելույթներն այն պահին, երբ դեռևս շարունակվում է Սասունի դեպքերի հետաքննությունը, իսկ սուլթանը պատրաստվում է ստեղծել հատուկ հանձնաժողով՝ բարենորոգումների նախապատրաստման և իրագործման նպատակով:139

Ապրիլի 10-ին Քարրին տեղեկացնում էր Քիմբերլիին Աբդուլ Համիդի հետ ունեցած իր նոր հանդիպման մասին: Սուլթանը հայտնում էր բրիտանական դեսպանին իր որոշման մասին՝ Կրետեի նախկին վալի Թուրխան փաշային «Հայաստանի հարցերով քննության

հանձնաժողովի» նախագահ նշանակելու վերաբերյալ, որն անցնելու է իր պարտականությունների կատարմանը տասնօրյա ժամկետում: Այնուհետև սուլթանը

137 Նույն տեղում, էջ 16:
138 Knaplund P. Op. cit., pp. 267-268.
139 FO 424/182, No. 35, p. 28.



տեղեկացնում է իր կողմից քաղաքական բանտարկյալների ցուցակի ուսումնասիրման և շատ հայերի ազատ արձակելու իր որոշման մասին:

Քարրին բրիտանական կառավարության անունից շնորհակալություն է հայտնում սուլթանին կատարված լուրջ քայլերի համար, միաժամանակ հայտնելով նրան, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պատրաստվում են պաշտոնապես Բարձր Դռանը ներկայացնել բարենորոգումների ծրագիր: Աբդուլ Համիդն իր մտահոգությունն է հայտնում այդ կապակցությամբ, պնդելով, որ շատ ավելի նպատակահարմար կլիներ նախագիծը տրամադրել և քննարկել նորաստեղծ հանձնաժողովի հետ, այլ ոչ թե պաշտոնականացնել խնդիրը: Դեսպանը խոստանում է տեղեկացնել այդ մասին իր գործընկերներին, որոնք իր հետ միասին ներկայումս աշխատում են բարենորոգումների ծրագրի վրա: Երբ այն պատրաստ կլինի, շարունակում էր նա, տերությունները կմտածեն ներկայացման ձևի մասին: Չթաքցնելով իր դժգոհությունը, սուլթանը հարցնում է Քարրիին ծրագրի բովանդակության մասին: Վերջինս պատասխանում է, որ այն լիովին համապատասխանում է ներկայումս մեռած տառ դարձած օսմանյան օրենքներին, սակայն դեռևս չի կարող խոսել նախագծի մանրամասների մասին:

Այնուհետև Աբդուլ Համիդը կրկին սկսում է խոսել իր և իր նախորդների կողմից հայերին տրված արտոնությունների, պետական ծառայության մեջ գտնվող նրանց մեծ թվի մասին: Քարրին միջամտում է սակայն, ասելով, որ ներկայումս հայերի ուզածը ոչ թե պաշտոններն են, այլ կյանքի, ունեցվածքի և պատվի անվտանգության ապահովումը: Սուլթանը ձևական ջերմությամբ նշում է, որ «հայերի շարունակական գոյությունը պարզագույն ապացույցն է այն բանի, որ նրանք օգտվել են այդ անվտանգությունից»: Եթե իր նախորդները չհետևեին այդ քաղաքականությանը, շարունակում էր սուլթանը, ապա ներկայումս ոչ մի հայ չէր մնալու երկրում: Սակայն, ըստ իրեն, տեղի է ունեցել հակառակը՝ հայերը հարուստ են, իսկ թուրքերը աղքատ:

Քարրին պատասխանում է, որ սուլթանի բարի մտադրությունները ոչ մի կասկած չեն հարուցում բրիտանական կառավարությանը, սակայն անկողմնակալ հյուպատոսական գործակալների բազմաթիվ զեկուցագրերը վկայում են այն մասին, որ կայսրության շրջանների իշխանությունները կեղծ տեղեկություններ են ներկայացնում սուլթանական կառավարությանը: Դեսպանը հավաստիացնում է սուլթանին, որ իր կառավարությունը թշնամական որևէ մտադրություն չունի Թուրքիայի հանդեպ և անում է ամեն ինչ երկու

երկրների միջև հարաբերությունները բարելավելու ուղղությամբ: Սուլթանը հույս է հայտնում, որ բրիտանական կառավարությունը կկարողանա չեզոքացնել մամուլի թշնամական վերաբերմունքն իր երկրի նկատմամբ: Քարրին ընդգծում է, որ իր կառավարությունը հնարավորություն չունի վերահսկելու մամուլը և ամեն ինչ կախված է թուրքական կառավարությունից, որը ներկայումս արգելել է օտար լրագրողների մուտքը երկիր: Աբդուլ Համիդը պատասխանում է դեսպանին, որ այդ որոշումը կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ լրագրողները կարող են խանգարել Սասունի դեպքերի հետաքննությանը:140

Մարտի վերջին - ապրիլի սկզբին բրիտանական հյուպատոսները Էրզրումից, Տրապիզոնից և Դիարբեքիրից Քարրիին հաղորդում էին հայ բնակչության վիճակի վատթարացման, տեղական իշխանությունների և մահմեդականների կողմից անհանդուրժողական վերաբերմունքի արտահայտման փաստերի մասին:141 Ապրիլի 16-ին Քարրին Սաիդ փաշայի ուշադրությունն է հրավիրում այդ փաստերի վրա, նշելով, որ նման կացության շարունակումը կարող է հանգեցնել լուրջ ճգնաժամի, որը աղետալի հետևանքներ կունենա Թուրքական կայսրության համար: Նա խորհուրդ է տալիս նախարարին բացատրել տեղական իշխանություններին, որ հայերի հանդեպ նման վերաբերմունքի յուրաքանչյուր փաստ դժվար կացության է մատնելու կառավարությանը և ենթարկվելու է խստագույն քննադատության:142

Ապրիլի 22-ին Քարրին Քիմբերլիին հաղորդում էր, որ Բարձր Դուռը հրապարակել է կայսրության վիլայեթների ներկայիս վիճակը քննող հանձնաժողովի կազմը, որը բաղկացած էր կառավարական մի շարք պաշտոնյաներից:143

Ապրիլի 27-ին Քարրին Քիմբերլիին տեղեկացնում էր, որ ռուսական և ֆրանսիական կառավարություններն ընդհանուր առմամբ համաձայնել են բարենորոգումների բրիտանական առաջարկների հետ: Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպաններն այն կարծիքին են, գրում էր Քարրին, որ նախագիծը պետք է ներկայացվի սուլթանին անպաշտոն: Սակայն բրիտանական դեսպանի կարծիքով, այն պետք է ներկայացվի սուլթանական

140 Turkey, No. 1 (1896)..., pp. 18-20.
141 Turkey, No. 6 (1896)..., pp. 268-269, 271,274, 276.
142 Turkey, No. 1 (1896)..., p. 20.
143 Նույն տեղում, էջ 29:



կառավարությանը երեք դեսպանությունների կողմից առանձին՝ համաձայնեցված և նույնանման հայտագրերով:144

Թեև ռուսական կառավարությունն իր համաձայնությունն էր հայտնել բարենորոգումների բրիտանական ծրագրին, այն համոզված էր, որ Մեծ Բրիտանիայի դիվանագիտությունը փորձում է օգտագործել Հայկական հարցն իր շահերին համապատասխան: Ռուսական կառավարությունն այն կարծիքին էր, որ հայերի կյանքի պայմանների բարելավմանն ուղղված Մեծ Բրիտանիայի բարենորոգումների քաղաքականության գլխավոր նպատակը կայանում էր Ռուսաստանին Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության

հովանավորության և դրա պատրվակով նրա ներքին գործերին միջամտելու հնարավորությունից զրկելու մեջ: Մայիսի 8-ին իր կառավարությանն ուղղված զեկուցագրում գեներալ-լեյտենանտ Զելյոնին գրում էր, որ Հայկական հարցում բրիտանական դիվանագիտությանը ղեկավարում է ոչ թե մարդասիրությունը և սերը հայերի հանդեպ, այլ այն վտանգը, որը նա տեսնում է ռուսական սևծովյան նավատորմի վերածնման, դեպի Աֆղանստանի և Հնդկաստանի սահմաններն ուղղված Ռուսաստանի առաջխաղացման, վերջին պատերազմից հետո Թուրքիայի հետ հաստատված բարիդրացիական հարաբերությունների մեջ: Անգլիան ձգտում է ստեղծել հայերով բնակեցված «արտոնյալ նահանգ», շարունակում էր Զելյոնին, ինչն ուղղված է Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքական շահերի դեմ: Նա գրում էր, որ Ռուսաստանը չի կարող անտարբեր մնալ իր սահմանի մոտ եվրոպական քաղաքական և ռազմական խարիսխի, «Հայկական Բուլղարիայի» ստեղծմանը, որը զրկելու է իրեն տարածաշրջանում «օրինական գերակշիռ ազդեցությունից»:145

Բրիտանական կառավարության ծրագիրը ներկայացնում էր իրենից սուլթանական կառավարությանն ուղղված, հայերով բնակեցված Վանի, Էրզրումի, Սեբաստիայի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթների վարչական կառավարման բարելավմանը վերաբերող առաջարկներ: Համաձայն նախագծի. 1/ գերազանցապես հայերով բնակեցված շրջանների կառավարական պաշտոնյաների մեկ երրորդը պետք է կազմված լինի քրիստոնյաներից. 2/ ժանդարմերիան հավասարապես պետք է ներկայացված լինի ինչպես

144 FO 424/182, No. 104, p. 175.
145 АВПР, ф. Политический архив, д. 3440, л. 5-6, 9-10.

313

մահմեդականներով, այնպես էլ քրիստոնյաներով. 3/ հարկահավաքը պետք է կատարվի ոչ թե ժանդարմների, այլ հատուկ պաշտոնյաների կողմից, որոնք նշանակվում են համայնքային խորհուրդների կողմից. 4/ տերությունների համաձայնությամբ վիլայեթների ղեկավար է նշանակվում նահանգապետ-քրիստոնյա, որի գործունեությունը պետք է վերահսկի Կոստանդնուպոլսում գտնվող մահմեդականներից և քրիստոնյաներից բաղկացած խառը հանձնաժողովը. 5/ բարենորոգումների իրագործման գործընթացը պետք է անցկացվի տերությունների ներկայացուցչի՝ գերագույն կոմիսարի հսկողության ներքո:146 Այսպիսով, բրիտանական նախագծի համաձայն, Արևմտյան Հայաստանը ստանում էր փաստորեն եվրոպական հովանու տակ գտնվող ինքնավարության կարգավիճակ:

Ռուսական կառավարությունը համաձայն չէր բրիտանական նախագծի հետ երկու հիմնական հարցերի կապակցությամբ: Առաջինը՝ նա բացարձակապես չէր ցանկանում սահմանափակել Բարձր Դռան իրավունքները, պարտադրելով նրան ընդունել տերությունների առաջարկները: Երկրորդը՝ նա ձգտում էր հասնել այն բանին, որ բարենորոգումներն իրականացվեին կամ ամբողջ քրիստոնյա բնակչության, կամ էլ ընդհանրապես կայսրության ողջ տարածքի համար: Զելյոնին խորհուրդ էր տալիս իր կառավարությանը «երբեք չհամաձայնել ոչ միայն 9 վիլայեթից, այլև նույնիսկ 2 սանջակից կազմված արտոնյալ հայկական նահանգի ստեղծմանը...»:147

Ռուսաստանի դիրքորոշումը լիովին համապատասխանում էր սուլթանական կառավարության քաղաքականությանը, որը կտրականապես դեմ էր եվրոպական տերությունների որևէ միջամտությանն իր ներքին գործերին: Այդ օրերին Զեքքի փաշան ասում էր ռուս գնդապետ Պուտյատային, որ՝ եթե հայերին բարենորոգումներ շնորհել այն տեսքով, ինչպես որ դա շարադրված է նախագծում, դա կնշանակի անել ամեն հնարավորը՝ անկախ Մեծ Հայաստան ստեղծելու ճանապարհին, և առաջացնել շատ ավելի համառ պահանջներ նրանց կողմից՝:148

_____

146 The Armenian Reforms. - The Spectator, 1895, vol. 74, May 18, p. 675.
147 АВПР, ф. Политический архив, д. 3440, л. 22-23.
148 ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ, ֆ. «Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո», ց. 1, գ. 339, 2-րդ մաս, էջ 95-96:

314

Այն բանից հետո, երբ Ռուսաստանն ու Ֆրանսիան միացան բրիտանական կառավարությանը բարենորոգումներ պահանջելու հարցում, հայտարարելով միաժամանակ, որ սուլթանական կառավարության նկատմամբ հարկադրական որևէ միջոցների չեն գնալու, մայիսի 11-ին Բարձր Դռանը ներկայացվեց ռուս և ֆրանսիացի դեսպանների կողմից էապես խմբագրված և կրճատված բրիտանական նախագիծը: Բարենորոգումների ծրագիրը բաղկացած էր հետևյալ հիմնական առաջարկություններից. 1/ վիլայեթների թվի պակասեցում. 2/ վալիների ընտրություն և նշանակում տերությունների կիսապաշտոնական համաձայնությամբ. 3/ հայ քաղբանտարկյալների ընդհանուր ներում, աքսորված և փախստական հայերի վերադարձ. 4/ դատական համակարգի և բանտերի վիճակի բարելավում. 5/ բարենորոգումների իրագործումը վերահսկող, տերությունների հավանությունը ստացած գերագույն կոմիսարի նշանակում. 6/ պետական երեք մահմեդական և երեք քրիստոնյա պաշտոնյաներից բաղկացած մնայուն հսկող հանձնաժողովի կազմավորում. 7/ Սասունի, Տալվորիկի և այլ տեղերում դեպքերի զոհ դարձած հայերի փոխհատուցում. 8/ կրոնական հավատափոխության ազատ իրավունք. 9/ հայերի առանձնաշնորհումների պահպանում. 10/ Փոքր Ասիայի մյուս շրջանների հայ բնակչության վիճակի բարելավում. 11/ վիլայեթների պաշտոնյաների կարգավիճակին, ոստիկանությանը և ժանդարմերիային, քրդերի և համիդիե հեծելազորի նկատմամբ վերահսկողությանը, հարկահավաքին վերաբերող վարչական բարելավումներ:149

Այսպիսով, ռուսական և ֆրանսիական կառավարությունների ճնշման տակ բրիտանական բարենորոգումների ծրագրից հանվել էին այնպիսի կարևոր հիմնադրույթներ, ինչպիսիք էին վեց վիլայեթների միավորումն ու փաստորեն մեկ հայկական շրջանի ստեղծումը և տերությունների հետ համաձայնեցված քրիստոնյա նահանգապետի նշանակումը:

Արդեն այն ժամանակ Լոնդոնում կանխագուշակում էին, որ նույնիսկ այդ տեսքով ներկայացված բարենորոգումների ծրագիրը դատապարտված է անհաջողության: «Contemporary Review»-ն գրում էր, որ ծրագիրը ներկայացնելուց առաջ Ռոզբերիի

_____

149 Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) /Պրոֆ. Ջ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ: Երևան, 1972, էջ 130-147:

315

կառավարությունը պետք է առաջին հերթին բարելավեր հարաբերությունները Ռուսաստանի հետ, իսկ այնուհետև՝ գումարեր Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետությունների համաժողով:150 «Spectator»-ը նույնպես խորհուրդ էր տալիս կառավարությանը իր ողջ ջանքերն ուղղել Հայկական հարցում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ մերձեցման ու համագործակցության վրա, քանի որ, առաջինը՝ ռուսական կառավարությունը երբեք թույլ չի տալու, որ հայերն ընկնեն բողոքական պետության ազդեցության տակ, իսկ երկրորդը՝ Ֆրանսիան չի ցանկանում Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրապնդմամը Միջերկրականի ավազանում, ինչպես որ դա տեղի ունեցավ Եգիպտոսի պարագայում:151 Շաբաթաթերթը նշում էր, որ Բարձր Դռանը ներկայացված «...բարենորոգումները, հավանաբար, չեն իրագործվելու, քանի դեռ չեն ստացել սուլթանի հավանությունը և...որոշակի պայմանագրի տեսք»:152 Իսկ Մակքոլի համոզմամբ, «բարենորոգումների ծրագրի ճակատագրական ճեղքը դարձավ հատկապես բոլոր եվրոպական տերությունների կողմից հսկողության բացակայության հանգամանքը»:153

Բարենորոգումների առաջարկների ներկայացումից անմիջապես հետո Եռյակ Դաշինքի տերություններն արտահայտեցին իրենց դժգոհությունը Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միակողմանի գործողությունների կապակցությամբ: Մայիսի 18-ին Բեռլինում դեսպան Մալլետը հաղորդում էր Քիմբերլիին, որ գերմանական կառավարության նման դիրքորոշման ձևավորմանը նպաստել է նաև Աբդուլ Համիդի դիմումը գերմանական կայսր Վիլհելմ 2-րդին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի գործողությունները «սանձելու» խնդրանքով:154 Քննադատելով երեք տերությունների նախաձեռնությունը, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար, կոմս Ագենոր Գոլուխովսկին առաջարկում էր բրիտանական կառավարությանը ստեղծել վեց

150 Armenia and the Powers..., pp. 636-637.
151 The Armenian Meeting. - The Spectator, 1895, vol. 74, May 11, p. 643.
152 The Armenian Reforms..., p. 674.
153 Maccoll M. The Sultan and the Powers..., p. 11.
154 Turkey, No. 1 (1895). Part 2..., p. 66.

316

տերությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով, որն ավելի արդյունավետ կհսկի բարենորոգումների գործընթացը:155

Աբդուլ Համիդն ուշադրությամբ հետևում էր եվրոպական դիվանագիտության գործողություններին, մամուլի և հասարակական կարծիքի դիրքորոշման յուրաքանչյուր փոփոխությանը: Մասնավորապես, եթե սովորաբար բրիտանական հասարակայնությունը անտարբեր էր իր երկրում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, կարելի էր առանց որևէ վտանգի ոչինչ չձեռնարկել, սակայն երբ մամուլն ու հասարակական կարծիքը

միասնաբար հանդես էին գալիս իր իշխանության դեմ, ապա դիմադրությունն անօգուտ էր: Նման պարագայում նա որդեգրում էր խոստանալու և ձգձգելու քաղաքականություն: Ինչպես նշում էր «Spectator»-ը, «ներկայումս սուլթանը մոլեգնաբար դիմադրում է տերությունների առաջարկություններին և փորձում դիվանագիտական խուսահնարքների միջոցով, իսկ ինչպես հայտնի է, թուրքերի դիվանագիտական խուսահնարքները նույնքան անթիվ են, որքան ավազահատիկն օվկիանոսում, խուսափել Հայաստանում բարենորոգումների իրագործումից»:156

Եռյակ Դաշինքի տերությունների դիրքորոշումն անմիջապես արտահայտվեց բարենորոգումների առաջարկների կապակցությամբ հունիսի 3-ին Աբդուլ Համիդի հրապարակած պատասխանում: Քարրին տեղեկացնում էր Քիմբերլիին, որ սուլթանը մերժեց բարենորոգումների իրագործման բոլոր առաջարկված երաշխիքները՝ գերագույն կոմիսարի նշանակմանը, հսկողության հանձնաժողովի ստեղծմանը, տերությունների հետ վալիների նշանակման համաձայնեցմանը վերաբերող կետերը: Նա նույնիսկ չընդունեց դատարանների, ժանդարմերիայի և ոստիկանության աշխատանքի բարելավման, փախստականների վերադարձի, իրավական հանձնաժողովների, ներման, ջարդի ենթարկվածների փոխհատուցման, բանտերում ստուգումներ կատարելու, հայ բնակչության իրավունքները մյուս վիլայեթներում պաշտպանելու առաջարկները:157 Այսպիսով, սուլթանական կառավարությունը փաստորեն ամբողջությամբ մերժեց Մեծ Բրիտանիայի,

155 Armenia and the Powers..., pp. 637.
156 Mr. Gladstone on Armenia..., p. 164.
157 Turkey, No. 1 (1895). Part 2..., p. 66.

317

Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից ներկայացված բարենորոգումների մայիսյան նախագիծը:

Եկավ պահը, երբ եվրոպական տերությունները որևէ կերպ պետք է պատասխանեին սուլթանական իշխանությունների հանդուգն հայտարարությանը: Սակայն պատասխան այդպես էլ չտրվեց: Անմիջապես հաջորդ օրը դեսպան Լասսելզի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ռուսաստանի արտգործնախարարն ասում էր, որ ռուսական կառավարությունը «...բարենորոգումների ծրագրի ներկայացումն ամենևին էլ չէր դիտում որպես վերջնագիր սուլթանին և այդ պատճառով էլ նրա մերժումի կամ դեսպաններին հասցեագրված սուլթանի հակաառաջարկների դեպքում չէր նախատեսում և չի քաջալերելու յուրաքանչյուր հարկադրական միջոցի կիրառում»:158

Ռոզբերիի կառավարությունը անվճռական գտնվեց անկախ գործողություն ձեռնարկելու մեջ: Միջերկրական նավատորմը գտնվում էր Բեյրութում՝ Արևմտյան Հայաստանից ընդամենը 200-300 կմ հեռավորության վրա: Հունիսի 19-ին կառավարությունը քննարկեց Թուրքիայի դեմ նավատորմն օգտագործելու հնարավորությունը, սակայն որևէ որոշում այդպես էլ չընդունեց: Երեք օր անց կառավարությունը վայր դրեց իր լիազորությունները, իսկ հաջորդ օրը թագուհին ՝հրավիրեց՞ պահպանողական կուսակցության ղեկավար Սոլսբերիին կազմավորել իր կառավարությունը:159

3. ՍՈԼՍԲԵՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ (ՀՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ)

1895 թ. Սոլսբերիի հեղինակությունը բավականին բարձր էր ինչպես Մեծ Բրիտանիայում, այնպես էլ արտասահմանում: Նա 65 տարեկան էր և հույս ուներ հանգիստ ավարտել իր հաջող պետական գործունեությունը վարչապետի պաշտոնում: Տկար

158 Նույն տեղում, էջ 73:
159 Douglas R. Op. cit., pp. 121-122.



առողջության պատճառով նա ստիպված էր ձմեռներն անցկացնել Ֆրանսիայի հարավում: Սոլսբերիի հետաքրքրությունների ընդգրկումը բավականին լայն էր: Նա լավ գիտեր համաշխարհային դասական գրականությունը, ազատորեն տիրապետում էր ֆրանսերենին, սիրում էր ժամանակ անցկացնել Հաթֆիլդի դղյակի քիմիական լաբորատորիայում: Բրիտանական հասարակայնության աչքերում նա զուգակցում էր իր մեջ վիկտորիանական Անգլիայի քաղաքական գործչին բնորոշ ծանրակշռությունն ու պատկառելիությունը:160

Բրիտանական հասարակայնությունը մեծ հույսեր էր կապում Սոլսբերիի իշխանության գալու հետ, ենթադրելով, որ պահպանողական կուսակցության ղեկավարը կարողանալու է ելք գտնել մերձավորարևելյան ճգնաժամից և վերջ դնել սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությանը: Նույնիսկ ընդդիմադիր կուսակցության ղեկավար Ռոզբերին օգոստոսին իր համոզվածությունն էր հայտնում այն մասին, որ «լորդ Սոլսբերին ստանալու է ոչ միայն կուսակցության, այլև ողջ ժողովրդի աջակցությունը»:161

1895 թ. ընթացքում հրապարակած հոդվածաշարում «Spectator»-ը մեծարում էր նոր վարչապետի կարողություններն ու հնարավորությունները, համարելով նրան արևելյան քաղաքականության մեծ գիտակ՝ միակն Անգլիայում, որը կկարողանա ելք գտնել ստեղծված իրավիճակից և փրկել Օսմանյան կայսրության կոտորվող հայ բնակչությունը:162 «Հայկական հարց» հոդվածում ասվում էր. «Մենք նույնիսկ մեկ րոպե չենք կասկածում, որ Սոլսբերին անկեղծորեն մտահոգված է այն բանով, թե ինչպես կարելի է օգնել Հայաստանի քրիստոնյա բնակչությանը և վերջ դնել թուրքական բռնություններին»: Ըստ «Spectator»-ի, Սոլսբերիի միակ թերությունը կայանում է իր այն համոզվածության մեջ, որ Թուրքիայի հայ

160 Grenville J.A.S. Lord Salisbury and Foreign Policy. London, 1964, pp. 4-6.
161 Russell G.W.E. Armenia and the Forward Movement. - The Contemporary Review, 1897, vol. 71, p. 21.
162 The Armenian Meeting..., p. 643; The Armenian Question. - The Spectator, 1895, vol. 75, July 27, p. 105; Lord Salisbury in Turkey. - The Spectator, 1895, vol. 75, December 7, p. 808; Our Failure in Turkey. - The Spectator, 1895, vol. 75, December 14, p. 884.

բնակչությունը փրկելու Անգլիայի միջամտության արդյունքում կարող է ծագել եվրոպական պատերազմի վտանգ:163

Լիբերալների ներկայացուցիչները Սոլսբերիին մեղադրում էին այն բանում, որ նրա ներկայիս կեցվածքը չի համապատասխանում նրա դիրքորոշմանը Բեռլինի համաժողովի ժամանակ, երբ նա թուրքական իշխանության լծի տակ թողեց Սան-Ստեֆանոյի պայմանագրով «ազատագրված» միլիոնից ավելի քրիստոնյաների: Ջորջ Ռասսելը164 գրում էր, որ այն ժամանակ Սոլսբերին գտնվում էր լորդ Բիքոնսֆիլդի ազդեցության ներքո և նման էր «բանտարկյալի, որը գամված էր շղթաներով իր հաղթական առաջնորդի հաղթակառքին»: Թեև 19-րդ դ. վերջին իրավիճակը փոխվել էր, շարունակում էր Ռասսելը, և «լորդ Սոլսբերին, որը 1878 թ. զբաղեցնում էր ետևի նստատեղը և նվագում երկրորդ ջութակը», 1895 թ. դարձավ «Բրիտանական կայսրության բացարձակ տերը..., սակայն քսան տարվա պատմությունը կրկնվում է իր բոլոր մանրամասներով»:165

Գալով իշխանության, Սոլսբերին որոշեց իր վրա վերցնել նաև Ֆորին Օֆիսի ղեկավարությունը և համատեղության կարգով իրեն տեղակալ նշանակեց Օսմանյան կայսրությունում դեսպան Քարրիին, որի հետ գտնվում էր մտերիմ հարաբերությունների մեջ: Այդ հանգամանքը վկայում է այն մասին, թե ինչպիսի նշանակություն ուներ բրիտանական կառավարության համար արևելյան քաղաքականությունը և, մասնավորապես, Հայկական հարցը: Առաջին հայացքից կարող էր թվալ, որ Սոլսբերին փորձում էր հեռանալ պահպանողականների ավանդական քաղաքականությունից Արևելյան հարցում և պատրաստ էր սատարել Ռուսաստանին՝ նեղուցները վերահսկելու իր պատմական առաքելությունն իրագործելու խնդրում: Իրականում Սոլսբերին եկել էր այն համոզման, որ Օսմանյան կայսրության փլուզումն անխուսափելի է, սակայն որոշել էր ոչինչ չձեռնարկել այդ ընթացքն արագացնելու ուղղությամբ: Մի կողմից՝ Բրիտանական կայսրության շահերը

---

163 The Armenian Question..., p. 105.
164 Ռասսել (Russell) Ջորջ Ուիլյամ (1853-1919) - բրիտանացի քաղաքական գործիչ, լիբերալ կուսակցության ղեկավար անդամ: 1880-1885 թթ.՝ խորհրդարանի անդամ, 1892-1894 թթ.՝ Հնդկաստանի գործերի փոխնախարար, 1894-1895 թթ.՝ ներքին գործերի փոխնախարար, 1889-1895 թթ.՝ Լոնդոնի քաղաքապետարանի, 1907 թ.՝ գաղտնի խորհրդի անդամ:
165 Russell G.W.E. Op. cit., p. 22.

320

պահանջում էին պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և պաշտպանել սուլթանական կառավարությունը Ռուսաստանի ազդեցությունից, իսկ մյուս կողմից՝ առանց Ռուսաստանի աջակցության և եվրոպական տերությունների համաձայնության Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ կորցնում էր իր իմաստն ու նշանակությունը: Այդ իսկ պատճառով Սոլսբերին ուղղեց իր ջանքերը Հայկական հարցում ռուս-բրիտանական համագործակցության հաստատմանը, փորձելով համոզել սուլթանին համակերպվել Եգիպտոսի գրավման հետ, փոխել ռուսական բարեկամությունը բրիտանականի հետ՝ Մեծ Բրիտանիայի ազդեցությունը Օսմանյան կայսրության հանդեպ վերականգնելու նպատակով: Այսպիսով, ճկուն կերպով քողարկելով իր քաղաքականության իրական էությունը Հայկական

հարցում, բրիտանական կառավարությունը փորձում էր Գերմանիայի կամ Ռուսաստանի հետ բարեկամություն և համագործակցություն հաստատելու մասին հայտարարություններով ստիպել Աբդուլ Համիդին վերադառնալ իր ազդեցության ոլորտը:

Հունիսին Ֆորին Օֆիսը հրապարակեց արտաքին քաղաքականության ծրագիրը, որի հիմնադրույթներն էին իռլանդական հոմռուլի (ինքնավարության) անվերապահ ժխտումը, Գերմանիայի և Ռուսաստանի հետ մտերիմ բարեկամական հարաբերությունների վերականգնումը, Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ հակասությունների վերացումն Ասիայում և Աֆրիկայում, Հայկական հարցի հմուտ լուծումը: Վերջին խնդրում Սոլսբերին փաստորեն շարունակեց նախկին վարչապետի քաղաքականությունը: Նա պահանջում էր սուլթանական կառավարությունից պատժել Սասունի ջարդի մեղավորներին և իրագործել Բեռլինի պայմանագրով նախատեսված բարենորոգումները: Հայկական հարցին վերաբերող Սոլսբերիի հրահանգները գրեթե ոչնչով չէին տարբերվում նախորդ կառավարության հանձնարարականներից:166

Քարիին ուղղված առաջին նամակում Սոլսբերին հանձնարարում էր դեսպանին ուսումնասիրել Օսմանյան կայսրության դեմ բրիտանական նավատորմի օգտագործման հնարավորությունը՝ առաջարկված բարենորոգումների ծրագիրը հարկադրաբար իրագործելու նպատակով: Իր հերթին Քարրին վարչապետին է ներկայացնում Կոստանդնուպոլսում բրիտանական առևտրի պալատի նախագահ Ուիտալի նամակը, ուր

166Kennedy A.L. Salisbury. 1830-1903. Portrait of a Statesman. London, 1953, pp. 256-257.

321

նշվում էր, որ բարենորոգումների իրագործումը միմիայն Հայաստանի քրիստոնյա բնակչության կյանքի պայմանները բարելավելու նպատակով ներկայումս անհնարին է՝ երկրում տիրող մահմեդական մոլեռանդության պատճառով: Նա նպատակահարմար էր գտնում պահանջել սուլթանական կառավարությունից բարենորոգումների իրագործումը ողջ երկրի համար: Հունիսի 27-ի իր նամակում Քարրին ծանոթացնում էր Սոլսբերիին Ֆրանսիայի դեսպան Կամբոնի և մեծ վեզիրի միջև կայացած զրույցի մանրամասները: Դեսպանն ասում էր, որ բրիտանական կառավարության տեղում նա նավատորմը նեղուցներ ուղարկելու փոխարեն կգրավեր ցամաքից Ալեքսանդրետը: Մեծ վեզիրն առարկում էր, որ մյուս տերությունները երբեք այդ բանը թույլ չեն տա: Կամբոնը պատասխանում է. «Եթե Անգլիան պաշտոնապես հայտարարի, որ իր առջև նպատակ է դրել միմիայն բարենորոգումների իրականացումը, համագործակցելու է մյուս տերությունների հետ և իր պահանջների կամ էլ հարցը կարգավորելու նպատակով համաժողով կազմակերպելու Եվրոպայի համաձայնության դեպքում անմիջապես կհեռանա այնտեղից, եվրոպական տերությունների կողմից որևէ առարկություն չի լինի»:167

Ալեքսանդրետի գրավման գործողությունը Սոլսբերիին թվում էր դժվար իրականանալի մի խնդիր՝ Մերձավոր Արևելքում բրիտանական զորքի փոքրաթիվ լինելու պատճառով: Հուլիսի 1-ին Քարրիին ուղղված նամակում Սոլսբերին առաջարկում է «սրամիտ» մի գաղափար՝ Տիգրիսով մինչև Հայաստան ծովային արշավ իրագործելու վերաբերյալ: Դեսպանը պատասխանում էր վարչապետին, որ նման ծրագրի իրագործումն անհնարին է

գետի բազմաթիվ ծանծաղուտների պատճառով, որոնք կարող են մեծ վնաս հասցնել ռազմանավերին:168

Հուլիսի 10-ին Սոլսբերին իր մոտ է հրավիրում Ռուստեմ փաշային՝ Հայկական հարցում բրիտանական կառավարության դիրքորոշումը ներկայացնելու նպատակով: Նա նշում էր, որ Օսմանյան կայսրության պահպանումն ու սուլթանի օրինական իրավունքների պաշտպանությունը հանդիսանում են իր կառավարության «լուրջ ցանկությունն» ու մտահոգությունը: Սակայն, շարունակում էր Սոլսբերին, սուլթանը ոչ մի քայլ չի ձեռնարկում Եվրոպայի և, մասնավորապես, Անգլիայի հասարակական կարծիքի պահանջները

_____
167 Douglas R. Op. cit., p. 122.
168 Նույն տեղում, էջ 123:

322

բավարարելու ուղղությամբ: Մերժելով և «անմտություն» համարելով ինքնավարության մասին բոլոր գաղափարները, նա նշում էր, որ հարցի էությունը կայանում է ընդամենը հայերի համար անաչառ և արդարացի վարչակարգ ապահովելու, քրդերի հալածանքը կանխելու մեջ: Սոլսբերին գտնում էր, որ հարցի լավագույն լուծումը կլիներ Եվրոպային վստահություն ներշնչող «վճռական, ազնիվ և չեզոք» նահանգապետի նշանակումը:

Անդրադառնալով երեք տերությունների դեսպանների կողմից սուլթանական կառավարությանը ներկայացված բարենորոգումների ծրագրին, Սոլսբերին ասում էր, որ ամբողջությամբ պաշտպանելու է նախորդ կառավարության քաղաքական գիծն այդ ուղղությամբ և վճռականորեն պահանջելու է Աբդուլ Համիդից նրա շուտափույթ իրագործումը: Իր համոզմամբ, ոչ Գերմանիան, ոչ էլ Ավստրիան և Իտալիան չեն հակառակվելու Մեծ Բրիտանիայի քաղաքականությանը, իսկ Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ արդեն իսկ գոյություն ունի որոշակի համաձայնություն: Ըստ Սոլսբերիի, Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ապահովում է Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև գոյություն ունեցող անհամաձայնության հանգամանքը: Սակայն եթե դեպքերի զարգացումը բերի նրան, որ երկու տերությունների քաղաքականությունն ու հասարակայնության կարծիքը համընկնի, շարունակում էր վարչապետը, Օսմանյան կայսրությունը «պետք է անհայտանա»: Ուստի Սոլսբերին առաջարկում էր ժամանակ չկորցնել և միջոցներ ձեռնարկել բարենորոգումներն իրականացնելու ուղղությամբ:

Ներկայացնելով զրույցի մանրամասները Քարրիին, Սոլսբերին հանձնարարում էր նրան շարունակել պահանջել սուլթանական կառավարությունից մայիսյան ծրագրի իրագործումը: Սակայն եթե Աբդուլ Համիդը շարունակի համառություն ցուցաբերել այդ հարցում, առաջարկվում էր անմիջապես խորհրդակցել Ռուսաստանի կառավարության հետ:169

Հուլիսի 18-ին Օսմանյան կայրության արտգործնախարարը տեղեկացնում էր Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանություններին, որ սուլթանը համապատասխան ցուցում է իջեցրել Բարձր Դռանը՝ երկրի օրենքներին համապատասխան բարենորոգումների իրականացումն արագացնելու ուղղությամբ:

Մասնավոր հանձնարարականներ պետք է իջեցվեն նաև տեղերի վարչական մարմիններին և

169 FO 424/183, No. 57, p. 63.

323

ոստիկանությանը՝ բախումները կանխելու և քրդերի քոչի հսկողություն սահմանելու մասին: Բարենորոգումների իրականացման հսկողությունը դրվում էր Շաքիր փաշայի վրա:170 Երեք օր անց Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները համաձայնեցված հայտագրեր են ներկայացնում Բարձր Դռանը, ուր ասվում էր, որ իրենց կառավարություններն առարկություն չունեն Շաքիր փաշայի նշանակման կապակցությամբ, սակայն ցանկանում են նախ պարզել, թե ինչ բարենորոգումների մասին է գնում խոսքը և թե ինչ լիազորություններով է օժտված լինելու փաշան:171 Բրիտանական դեսպանը ներկայացնում է իր կառավարության կարծիքը հուլիսի 25-ին: Բարձր Դռանը ներկայացված հայտագրում նշվում էր, որ եթե իրագործվելիք բարենորոգումները բավարարեն բրիտանական կառավարության պահանջներին, ապա վերջինս չի առարկելու Շաքիր փաշայի նշանակման կապակցությամբ, սակայն միաժամանակ չի կարող պատասխանատվություն կրել նրա համար, քանի որ նրա թեկնածությունը չի համաձայնեցվել տերությունների հետ:172 Մյուս օրը տեղի ունեցած զրույցի ընթացքում Աբդուլ Համիդը հավաստիացնում էր Քարրիին, որ նախարարների խորհուրդը հաստատելու է բարենորոգումների ծրագիրը մի քանի օրից և անմիջապես սկսելու է նրա իրագործումը: Դեսպանը խնդրում էր սուլթանին հաստատումից հետո ծրագրի օրինակներն ուղարկել Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանություններին:173

Միաժամանակ բրիտանական կառավարությունը փորձում էր համոզել Ռուսաստանին, որ Մեծ Բրիտանիայի ռազմական նավատորմի ժամանակավոր մուտքը Կոստանդնուպոլիս ռուսական շահերին վնասելու բացարձակ նպատակ չի հետապնդում: Հուլիսի 26-ին Սոլսբերին հանձնարարում էր Լասսելզին հավաստիացնել Լոբանով-Ռոստովսկուն, որ բրիտանական կառավարությունը «մտադիր է ապահովել հայ բնակչության համար միմիայն արդարություն և կյանքի ու ունեցվածքի անվտանգություն» և ցանկություն չունի շնորհել նրան «որևէ բացառիկ արտոնություն»:174

170 FO 424/183, No. 78, pp. 89-90.
171 FO 424/183, No. 87, p. 96.
172 FO 424/183, No. 111, p. 115.
173 FO 424/183, No. 119, p. 118.
174 FO 424/183, No. 120, p. 118; Grenville J.A.S. Op. cit., p. 30.

324

Հուլիսի 16-ին, լսելով շուրջ 200 վկաների, Սասունի դեպքերի հետաքննության հանձնաժողովն ավարտեց իր աշխատանքը, սակայն վերջնական արդյունքներն այդպես էլ չհրապարակվեցին: Հուլիսի 20-ին հանձնաժողովի եվրոպացի անդամները ներկայացրեցին իրենց դեսպանություններին համատեղ զեկույց հետաքննության

վերաբերյալ, ուր ասվում էր, որ Սասունի շրջանուն իրապես տեղի է ունեցել հայ բնակչության համատարած ջարդ, որին մասնակցել է նաև կանոնավոր թուրքական բանակը: Համաձայն զեկուցագրի, հայերի ապստամբ գործողությունների վերաբերյալ փաստերը հետաքննությամբ չեն հաստատվել: Նշվում էր, որ քանի որ ի սկզբանե նախատեսված չէր տեղական իշխանությունների գործողությունների քննությունը, նրանց պատասխանատվության խնդիրն այդպես էլ չբարձրացվեց:175 Այսպիսով, բրիտանական դիվանագիտությունը չկարողացավ հասնել իր առջև դրված հիմնական նպատակին՝ պատասխանատվության ենթարկել Սասունի ջարդի մեղավորներին:

Օգոստոսի 1-ին սուլթանական կառավարությունը ներկայացնում է երեք տերությունների դեսպանություններին բարենորոգումների թուրքական ծրագիրը: Համեմատելով փաստաթուղթը մայիսյան ծրագրի հետ, Քարրին հաղորդում էր Սոլսբերիին, որ այն փաստորեն լիովին մերժում էր վալիների հինգ տարվա նշանակման, կայմակամների և մյութեսարիֆների խառը համամասնության, մյուդիրների ընտրության, հարկահավաքի և դատարանների բարեկարգման, ժանդարմերիայում քրիստոնյա սպաների ընդգրկման, գյուղական ոստիկանության և այլ կարևոր առաջարկները: Օգոստոսի 3-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները քննարկում են Բարձր Դռան ծրագիրը և համաձայնում, որ այն ոչ թե բարենորոգումների ծրագիր է, այլ ընդամենը մայիսյան առաջարկների մերժում:176

Որպես ոչ լուրջ և անբավարար փաստաթուղթ համարելով սուլթանական կառավարության ծրագիրը, օգոստոսի 5-ին Սոլսբերին հանձնարարում էր Լասսելզին պարզել, թե որքան հեռու կարող է գնալ Ռուսաստանը Բարձր Դռան վրա ճնշում գործադրելու հարցում, քանի որ բրիտանական կառավարությունն այլևս համոզվել է, որ բոլոր

175 Turkey, No. 1 (1895). Part 1..., p. 134-146; Americans and Armenians. - The Spectator, 1896, vol. 76, February 1, pp. 156-157.
176 Turkey, No. 1 (1896)..., p. 98-100.

325

դիվանագիտական միջոցները սպառված են: Նա առաջարկում էր, որպեսզի Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ձեռնարկեն սուլթանին ստիպելու «ավելի եռանդուն միջոցներ»:177 Կրկին անգամ հավաստիացնելով Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի հավատարմատար Կոռուպենսկուն, որ բրիտանական կառավարությունը Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու ոչ մի մտադրություն չունի, Սոլսբերին առաջարկում էր օգտագործել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով տերություններին տրված բարենորոգումների իրագործման հանդեպ հսկողություն սահմանելու իրավունքը և համատեղ կերպով ձեռնարկել «ավելի գործուն և արդյունավետ միջոցներ»:178 Օգոստոսի 9-ին Լոբանով-Ռոստովսկին ասում էր Լասսելզին, որ Օսմանյան կայսրության նկատմամբ ուժի կիրառման գաղափարը մեկ կամ բոլոր տերությունների կողմից ընդհանրապես անընդունելի է և անհանդուրժելի ռուսական կառավարության համար: Նա հավատացած էր, որ Կոստանդնուպոլսում երեք տերությունների դեսպանների վճռական և համատեղ գործունեության միջոցով միմիայն կարելի է հասնել դրական արդյունքների:179

Օգոստոսի 6-ին Չեստերում արտասանած իր ելույթում Գլադստոնը դատապարտում էր սուլթանական իշխանությունների հակահայկական քաղաքականությունը, բնութագրում հայերին որպես «քրիստոնեական քաղաքակրթության հնագույն և աշխարհի ամենից խաղաղ, գործունյա և խելամիտ ժողովուրդը», Հայկական հարցի միակ լուծումը տեսնում «թուրքերին Հայաստանից վտարելու մեջ», մեղադրում եվրոպական տերությունների կառավարությունների անտարբեր դիրքորոշումը:180 Հետաքրքրական է, որ չնայած պահպանողական կուսակցության ղեկավար Սոլսբերիի հետ ունեցած թվացող հակամարտությանը, Գլադստոնի հայ ժողովրդի օգտին արտասանած բազմաթիվ ելույթները հետապնդում էին իշխանությունների հեղինակությունը պաշտպանելու նպատակ: Այսպես, Չեստերի հանրահավաքը և Գլադստոնի ելույթը կայացել էին Սոլսբերիի գիտությամբ և համաձայնությամբ, այն նախագահում էր պահպանողական կուսակցության ղեկավար

177 FO 424/183, No. 151, pp. 154-155.
178 Turkey, No. 1 (1896)..., pp. 118-119.
179 Նույն տեղում, էջ 121:
180 Mr. Gladstone on Armenia..., p. 164; Նոր կյանք, 1898, 1 հունիսի, էջ 163:

326

անդամ Վեստմինստերի դուքսը:181 Իր ելույթի վերջում Գլադստոնը հայտարարեց, որ հանրահավաքը կազմակերպված է ոչ թե ներկայիս կառավարության գործողությունների դեմ բողոքի ի նշան, այլ հակառակը, «նրա դիրքերն ամրապնդելու», «նրան ազգային և բարոյական աջակցություն ցուցաբերելու» նպատակով, առանց որի այն բացարձակ իշխանություն ունենալ չի կարող:182 Այսպիսով, լիբերալների պատվավոր ղեկավարը փորձում էր ուղղել հասարակական կարծիքը կառավարության համար ցանկալի հունով:183

Չեստերի հանրահավաքն ընդունեց Գլադստոնի կողմից առաջարկված հետևյալ բանաձևը. «Ներկայիս հանրահավաքը համոզվածություն է հայտնում, որ ողջ ազգը, առանց կուսակցությունների տարբերության, սրտանց պաշտպանելու է Նորին Մեծության կառավարության ձեռնարկած յուրաքանչյուր միջոցառում, որն ուղղված կլինի Թուրքական Հայաստանի բնակչության համար վարչական կառավարման այնպիսի բարենորոգումների ապահովմանը, որոնք կստեղծեն բնակիչների կյանքի, պատվի, կրոնի ու ունեցվածքի լուրջ երաշխիքներ. իրական նշանակություն կարող են ունենալ միայն այն բարենորոգումները, որոնք գտնվում են Եվրոպայի մեծ տերությունների անդուլ հսկողության ներքո»:184 Այսպիսով, ոչ հեռավոր անցյալում Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի անկախ և միանձնյա գործողությունների մասին արտահայտվող Գլադստոնն այս անգամ հանդես եկավ եվրոպական տերությունների համատեղ քաղաքականության օգտին: Այդ օրերին Սոլսբերին խոստովանում էր, որ «ազգային պատվի» մասին մտահոգված էր ոչ միայն իր կուսակցությունը, այլև Մեծ Բրիտանիայի ողջ հասարակայնությունը:185

Բրիտանական խորհրդարանը սկսեց իր աշխատանքը օգոստոսի 15-ին, Վիկտորիա թագուհու թագաճառի ընթերցումով, որի Հայկական հարցին վերաբերող մասն

ուշադրություն էր գրավում իր խիստ ոճով: Թագուհին նշում էր, որ անհամբերությամբ սպասում է Մեծ

181 Lord Salisbury and Armenia. - The Nation, 1895, vol. 61, August 15, pp. 110-111.
182 Mr. Gladstone on Armenia..., p. 164.
183 Այդ հանգամանքը բացատրվում է հիմնականում նրանով, որ հուլիսի 12-ին սկսված խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին պահպանողական կուսակցության լիարժեք հաղթանակով:
184 Lord Salisbury and Armenia..., p. 110; Mr. Gladstone on Armenia..., p. 164.
185 Grenville J.A.S. Op. cit., p. 8.

327

Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանների կողմից առաջարկված բարենորոգումների իրագործմանը վերաբերող սուլթանական կառավարության որոշմանը: Սոլսբերին հանդես եկավ մեղադրական ելույթով սուլթանական կառավարության հասցեին: Նա սպառնում էր Բարձր Դռանը լուրջ հետևանքներով, եթե վերջինս չընդունի Հայաստանում բարենորոգումների իրագործման վերաբերյալ երեք տերությունների առաջարկները: Միաժամանակ նա ափսոսանք էր հայտնում, որ Ռուսաստանի և Ֆրանսիայի կառավարությունները չեն համաձայնում հարկադրական միջոցներ կիրառել սուլթանական կառավարության դեմ: Նույն ամսին Դուվրում արտասանած ելույթում Սոլսբերին բնութագրում էր Թուրքիան որպես քայքայված կենտրոն, որտեղից հիվանդությունը կարող է տարածվել թուրքական տիրույթներին սահմանակից Եվրոպայի առողջ մասերի վրա՝, կանխագուշակում Օսմանյան կայսրության մոտալուտ կործանումը:186

Օգոստոսի 13-ին Սոլսբերին իր համոզվածությունն էր հայտնում Մեծ Բրիտանիայում Ֆրանսիայի դեսպանի Դե Կուրսելին, որ ներկայիս պայմաններում երեք տերությունները պետք է խիստ դիրքորոշում որդեգրեն Հայկական հարցում և պահանջեն սուլթանական կառավարությունից բարենորոգումների իրագործման հսկողության իրավունք, որն իրենց տրված է Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով: Համոզված լինելով, որ Կոստանդնուպոլսից անհնարին է որևէ հսկողություն սահմանել բարենորոգումների իրագործման գործընթացի նկատմամբ, վարչապետն առաջարկում էր պահանջել սուլթանական իշխանություններից ստեղծել հատուկ հանձնաժողով, որը կտեղակայվի հայկական շրջաններում և որի կազմում ընդգրկված կլինեն չորս թուրք պաշտոնյաներ և տերությունների երեք ներկայացուցիչներ: Վերջիններս պետք է օժտված լինեն լիարժեք և հավասար իրավունքներով՝ ընդհուպ մինչև անկախ հետաքննության անցկացման և դեսպանություններին առանձին զեկույց ներկայացնելու հնարավորությամբ: Հավանություն տալով գաղափարին, դեսպանն իր համոզվածությունն էր հայտնում, որ այն կարժանանա նույնպես ռուսական կառավարության հավանությանը, քանի որ չի ենթադրում հարկադրական որևէ միտումներ և համապատասխանում է պայմանագրի դրույթներին: Նա նշում էր, որ ֆրանսիական կառավարության քաղաքականությունն այս խնդրում կրում է

186 Новое время, 1912, 19 декабря, 1913, 31 мая.

328

«միջնորդական» բնույթ. Ֆրանսիան պաշտպանելու է յուրաքանչյուր որոշում, որը կընդունվի Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կողմից:187

Օգոստոսի 14-ին Քարրին Սոլսբերիին հաղորդում էր, որ վերջին մի քանի օրվա ընթացքում սուլթանական իշխանությունների դիրքորոշումը Հայկական հարցում բավականին խստացել է և ձեռք է բերել մոլեռանդ բնույթ: Իրեն հասած հավաստի տեղեկության համաձայն, Բարձր Դռան կողմից դեսպան Ռուստեմ փաշային ուղղված հեռագրում ասվում էր, որ սուլթանն արդեն իսկ ընդունել է բարենորոգումների իրագործման իր ծրագիրը և այլ առաջարկների ներկայացումն ու քննարկումն այլևս դիտվելու է որպես հարձակում մահմեդական կրոնի հանդեպ, ինչպես նաև շարժառիթ կհանդիսանա հայերի կողմից այնպիսի հանցագործությունների կազմակերպման համար, ինչպիսիք ժամանակին իրագործել են բուլղարացիները Մակեդոնիայում:188

Երկու օր անց Ռուսաստանի հավատարմատար Կոռուպենսկին կրկին Սոլսբերիին հայտնում է իր կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում: Հավանություն տալով Սոլսբերիի հսկողություն սահմանելու գաղափարին, նա նշում էր, որ Բարձր Դռանը ներկայացված բարենորոգումների մայիսյան ծրագիրը Ռուսաստանը վերջնագիր չէր համարում և նմանապես չի ցանկանում, որպեսզի տերություններն այն պարտադրեն սուլթանին: Ռուսական կառավարության քննարկմանը ներկայացնելով հսկողության հանձնաժողովի կազմավորման և տեղակայման մասին իր առաջարկը, վարչապետը միաժամանակ փորձում էր համոզել, որ երեք տերությունների դեսպանները պետք է շարունակեն ճնշում գործադրել Բարձր Դռան վրա՝ վալիների նշանակման ժամկետի սահմանափակման և քրիստոնյա պաշտոնյաների տոկոսի բարձրացման հարցերում:189 Օգոստոսի 19-ին Կոռուպենսկին Սոլսբերիին հայտնում էր Լոբանով-Ռոստովսկու պատասխանը: Վերջինիս կարծիքով, վալիների նշանակման և քրիստոնյա պաշտոնյաների հարցերը հնարավոր չէ բարձրացնել, քանի որ դրանք Աբդուլ Համիդի ամենից անընդունելի

187 FO 424/183, No. 177, p. 187.
188 FO 424/183, No. 178, p. 194.
189 Turkey, No. 1 (1896)..., p. 120.

329

խնդիրներն են: Հսկողության խառը հանձնաժողովի կապակցությամբ Ռուսաստանի արտգործնախարարը ոչ մեկ առարկություն չուներ:190

Սակայն օգոստոսի 21-ին Սոլսբերիի հետ ունեցած հանդիպման ժամանակ Ռուստեմ փաշան սուլթանի անունից կտրականապես մերժում է նույնիսկ հսկողության խառը հանձնաժողովի առաջարկը: Ավելին, նշելով, որ նման առաջարկները հեղինակազրկում են սուլթանին իր մահմեդական հպատակների աչքում, դեսպանը սպառնում էր վարչապետին Թուրքիայի քաղաքականության հնարավոր փոփոխմամբ, որի արդյունքում նա կարող է հայտնվել Ռուսաստանի ձեռքում: Սոլսբերին պատասխանում է, որ հանձնաժողովի պահանջը՝ ամենից փոքրագույն երաշխիքն էր, որը, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պարտավորությունների համաձայն, տերությունների

կառավարությունները կարող էին ներկայացնել Բարձր Դռանը: «Եթե հանձնաժողովը պարունակում է իր մեջ ոտնձգություն սուլթանի բացառիկ իրավունքների նկատմամբ, - շարունակում էր վարչապետը, - ապա այդ ոտնձգությունը տեղի է ունեցել դեռևս տասնյոթ տարի առաջ, երբ նա վավերացրել է պայմանագիրը»: Ափսոսանք հայտնելով Աբդուլ Համիդի նման մոտեցման կապակցությամբ, ինչը կարող է մեծ վտանգ ներկայացնել Թուրքիայի համար, Սոլսբերին նշում էր, որ այդ երաշխիքն անհրաժեշտ էր տերություններին և կարող էր հանդիսանալ նրանց վերջին զոհացումը:191

Օգոստոսի 24-ին Քարրին Սոլսբերիին հաղորդում էր, որ բարենորոգումների իրագործման հանձնաժողովի կազմում ընդգրկված են Շաքիր փաշան (նախագահ), Դռան հյուպատոսական բաժանմունքի տնօրեն Դանիշ բեյը (տեղակալ), սուլթանի համհարզը և կայսերական դատարանի պաշտոնյաներ: Ըստ դեսպանի տեղեկությունների, Շաքիր փաշան անմիջապես մյուս օրը պետք է մեկներ Էրզրում:192

Իր հերթական գաղտնի զեկուցագրում ( 26 օգոստոսի ) դեսպանը, հավաստի տեղեկատվություն ստանալով մասնավոր աղբյուրից, գրում էր, որ սուլթանական պալատի պաշտոնյաների մի մասը նախընտրում է դիմադրել բրիտանական առաջարկներին, համոզված լինելով, որ դրանք նպատակ ունեն միմիայն վախեցնել Աբդուլ Համիդին, քանի որ

190 Նույն տեղում, էջ 122:
191 FO 424/183, No. 198, p. 233.
192 Turkey, No. 1 (1896)..., p. 123.

330

Ռուսաստանը երբեք չի համագործակցելու Մեծ Բրիտանիայի հետ: Պաշտոնյաների մյուս խումբն այն կարծիքին է, որ նման դիմադրությունը չափազանց վտանգավոր է: Ըստ Քարրիի, ստանալով Ռուստեմ փաշայի զեկուցագիրը Սոլսբերիի վերջին հայտարարությունների մասին, սուլթանը բավականին մտահոգվել է: Բացի այդ, գաղտնի ոստիկանության տվյալների համաձայն, մահմեդական բնակչության շրջանում տիրում է «լուրջ դժգոհություն»:193

Երկու օր անց Քարրիին է այցելում նախկին արտգործնախարար Սաիդ փաշան, որը փոխանցում է նրան Աբդուլ Համիդի հետևյալ ուղերձը. «Եթե կառավարությունը (Մեծ Բրիտանիայի - Ա.Կ.) համաձայնի, որ հսկողության հանձնաժողովը մշտապես գտնվելու է արտաքին գործերի նախարարության ղեկավարության ներքո, իսկ թարգմանները (երեք տերությունների դեսպանությունների - Ա.Կ.) հաղորդակցվեն հանձնաժողովի հետ արտաքին գործերի նախարարության միջոցով, Դուռը կընդունի երեք տերությունների առաջարկների հետևյալ կետերը. գյուղական պահակախմբերի կազմավորում, ժանդարմերիային վերաբերող առաջարկներ, վարչական մարմիններում աշխատող քրիստոնյաների թվի համաչափություն, մյուդիրների նշանակում տեղական իշխանությունների առաջարկով, բանտերի բարելավում»:194 Քարրին նոր էր Լոնդոն հեռագրել ստացված տեղեկատվությունը, երբ հաջորդ առավոտյան Սաիդ փաշան կրկին հայտնվում է դեսպանությունում և, դժգոհելով սուլթանական պալատում տիրող մթնոլորտից, փոխանցում է դեսպանին Բարձր Դռան պայմանների հետևյալ

փոփոխության մասին. եթե տերություններն ընդունեն հանձնաժողովի աշխատաձևի այդ տարբերակը, Դուռը կքննարկի տերությունների հետ նաև մյուս հինգ կետերը:195 Մի քանի օր անց նույն պայմանը երեք տերությունների դեսպաններին ներկայացնում է նաև արտգործնախարար Թուրխան փաշան: Հանդիպման ժամանակ Քարրին հայտարարում է, որ ներկայումս տերությունները պահանջում են եվրոպական ներկայացուցիչների մասնակցություն հանձնաժողովի աշխատանքներում: Թուրխան փաշան կտրականապես մերժում է այդ գաղափարը:196

193 FO 424/183, No. 216, p. 254.
194 FO 424/183, No. 224, p. 258.
195 FO 424/183, No. 230, p. 261.
196 FO 424/183, No. 239, p. 264.

331

Սեպտեմբերի 4-ին Լոբանով-Ռոստովսկին Կոռուպենսկուն գրում էր, որ ռուսական կառավարությունը բավարարված է, քանի որ Սոլսբերիի առաջարկած հսկողության հանձնաժողովից խուսափելու պատճառով Դուռը համաձայնում է թույլ տալ ուղիղ կապ թարգմանների ու թուրքական հանձնաժողովի միջև և բավարարում է տերությունների գրեթե բոլոր պահանջները՝ ոչ այնքան կարևոր ձևափոխումներով:197

Քարրին այլ կարծիք ուներ սուլթանական կառավարության առաջարկության մասին: Նա համաձայն չէր այն կարծիքին, որ Բարձր Դուռն ամբողջությամբ ընդունել է երեք դեսպանների ծրագիրը: Ըստ դեսպանի, թուրքական առաջարկը չէր նախատեսում հանձնաժողովի նախագահի քրիստոնյա տեղակալի, հսկողություն վալիների նշանակման նկատմամբ, հայ բնակչության անվտանգության ապահովման միջոցառումներ վեց վիլայեթների սահմաններից դուրս, եկամուտների մի մասի օգտագործում տեղական կարիքների համար, դատարանների աշխատանքի բարեկարգում և այլն: Քարրին առաջարկում էր Սոլսբերիին շարունակել ճնշում գործադրել Բարձր Դռան վրա դեսպանների մայիսյան ծրագիրն ամբողջությամբ ընդունելու նպատակով՝ խառը հանձնաժողովի գաղափարից հրաժարվելու պայմանով: Նա բացատրում էր իր նոր առաջարկը նրանով, որ իր ռուս և ֆրանսիացի գործընկերներն այնքան էլ հակված չեն ընդունելու խառը հանձնաժողովի գաղափարը, համոզված լինելով, որ, առաջինը՝ սուլթանն այն կընդունի միմիայն ուժի գործադրման դեպքում և, երկրորդը՝ հանձնաժողովի եվրոպացի անդամները որևէ ազդեցություն չեն կարող հաստատել թուրք անդամների նկատմամբ, քանի որ նրանք հրահանգներ են ստանալու միմիայն Կոստանդնուպոլսից: Քարրին առաջարկում էր նաև պնդել, որ Բարձր Դուռը հրապարակի բարենորոգումների ծրագիրը հրովարտակի տեսքով և, որպեսզի այն չդառնա «մեռած տառ», շուտափույթ կերպով նշանակել զինվորական փոխհյուպատոսներ արևելյան շրջաններում: Դեսպանը համոզված էր, որ ռուսներին դժվար է լինելու ընդդիմանալ բրիտանական կառավարության յուրաքանչյուր գործողությանը, բացառությամբ Դարդանելի վրա հարձակմանը, քանի որ այն ուղղված է լինելու հայերի իրավիճակի բարելավմանը: Միաժամանակ կասկած չի հարուցում այն փաստը, շարունակում էր Քարրին, որ ռուսներին դուր չի գալիս Բրիտանիայի միջամտությունը Հայկական հարցում, ինչպես նաև այն ազդեցությունը, որը վերջինս ձեռք է բերել Փոքր

197 FO 424/183, No. 262, p. 403.

332

Ասիայի քրիստոնյա բնակչության շրջանում, որն այսօր օգնություն է հայցում միմիայն Անգլիայից:198

Քարրիին ուղղված պատասխան նամակում Սոլսբերին գրում էր, որ եթե Բարձր Դռան բարենորոգումների ծրագիրը ներկայացվի դեսպանություններին գրավոր տեսքով և տարբերվի մայիսյան առաջարկներից ոչ այնքան կարևոր փոփոխություններով, ապա այն կարելի է ընդունել: Միաժամանակ նա նշում էր, որ չի կարելի վստահել մի հանձնաժողովի, որը բաղկացած լինի միմիայն թուրք հպատակներից: Նա վախենում էր, որ հանձնաժողովի աշխատանքը կարող է ձգվել մի քանի տարով: Սոլսբերին իր համաձայնությունն էր հայտնում Քարրիին ծրագրի հրապարակման և ռազմական փոխհյուպատոսներ նշանակելու թույլտվություն ստանալու առաջարկների կապակցությամբ:199

Սեպտեմբերի 9-ին Թուրխան փաշան հայտնում է երեք տերությունների դեսպանություններին, որ սուլթանական կառավարությունը պատրաստ է ընդունելու և իրագործելու բարենորոգումների վեց լրացուցիչ կետերը: Մասնավորապես, նա հույս էր հայտնում, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը բավարարված է Բարձր Դռան այդ առաջարկներով, որոնց իրագործումով վերջնականապես լուծում կստանա Հայկական հարցը, ինչպես նաև խաղաղություն ու կարգ ու կանոն կհաստատվի կայսրության արևելյան շրջաններում: Միաժամանակ արտգործնախարարը նշում էր, որ եթե, հակառակ սպասածի, Թուրքիայում և արտասահմանում բանսարկություններ ստեղծող «հայկական հեղափոխական կոմիտեներն» օգտագործեն ժանդարմերիայում, ոստիկանությունում և վարչական մարմիններում աշխատանքի ընդունված քրիստոնյաների հանգամանքը մահմեդական բնակչության դեմ բռնություններ գործադրելու նպատակով, ամբողջ պատասխանատվությունն ընկնելու է երեք տերությունների վրա: Որպես օրինակ բերելով վերջերս Երզնկայում և Սեբաստիայում հայկական ջոկատների կազմակերպած բռնությունները, Թուրխան փաշան ասում էր, որ ներկայումս «հայկական հեղափոխական կոմիտեները» փորձում են իրենց գործողություններով հրահրել մահմեդական բնակչությանը հայերի դեմ: Ըստ նախարարի, Բարձր Դուռը հատուկ հրահանգներ է իջեցրել տեղական իշխանություններին՝ մահմեդականների կողմից պատասխան բռնությունները կանխելու

198 FO 424/183, No. 263, pp. 403-404.
199 FO 424/183, No. 269, p. 405.

333

նպատակով: Եզրակացնելով իր խոսքը, Թուրխան փաշան նշում էր, որ նախկինում հայ բնակչությունը «շատ խաղաղ էր», սակայն ներկայումս, ոգևորված Անգլիայի և մյուս տերությունների համակրանքով, դարձել է «դժգոհ և անկայուն»: Ցանկանալով վերջ դնել այս հարցին, շարունակում էր նախարարը, Բարձր Դուռն ընդունել է բարենորոգումների իրագործման ծրագիր և առաջարկում է տերություններին զգուշացնել հայերին, որ այլ սպասելիքներ նրանք այլևս ունենալ չեն կարող:200

Նույն օրերին Քարրին առանձին հանդիպումներ է ունենում կաթոլիկ հայերի առաջնորդ Ազարյանի և Կոստանդնուպոլսի պատրիարք Իզմիրլյանի հետ:

Ազարյանը հավաստիացնում էր դեսպանին, որ իր համայնքը բացարձակապես չի մասնակցում լուսավորչական հայերի քարոզչությանը, իսկ անձամբ ինքը փորձում է միջնորդ հանդիսանալ վերջիններիս և թուրքական կառավարության միջև: Սակայն հարցը հասել է նրան, շարունակում էր առաջնորդը, որ այդ դիրքորոշման հետևանքով հայ կաթոլիկները դարձել են այն աստիճանի անհանդուրժելի լուսավորչականների համար, որ պատրիարքն ընդհանրապես չի ցանկանում կապ պահել իր հետ: Համոզված լինելով, որ երկու հայ եկեցիների միջև ծագած հակասությունները պետք է լուծվեն խաղաղ միջոցներով, առանց թուրքական դատարանի միջամտության, Ազարյանը խնդրում էր դեսպանին օգտագործել իր ազդեցությունը երկու առաջնորդներին հաշտեցնելու համար: Քարրիի տեղեկությունների համաձայն, Ազարյանն ունի դավաճանի համբավ և նրա դիրքորոշման նման փոփոխությունը կատարվել է «հեղափոխական կոմիտեից» ստացված մահվան սպառնալիքի պատճառով:201

Քարրին հավաստիացնում էր պատրիարքին, որ բրիտանական կառավարությունը մտադիր է ջանք չխնայել քրիստոնյաների կյանքն ու ունեցվածքի անվտանգությունն ապահովելու համար, սակայն նա շարունակելու է գործել այդ հարցում Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ համատեղ: Դեսպանը հարցնում է պատրիարքին, թե արդյոք ինչ՞ տեղեկատվություն ունի նա «հայկական հեղափոխական կոմիտեների» մտադրությունների մասին: Պատրիարքը պատասխանում է, որ որոշակի ոչինչ չգիտի այդ մասին, սակայն հայերի վիճակը վերջերս ավելի է վատթարացել, Անգլիայի և մյուս տերությունների աջակցությամբ զայրացած թուրքական իշխանությունների վերաբերմունքն ընդունել է շատ

200 FO 424/183, No. 318, pp. 434-435.
201 FO 424/183, No. 316, p. 433.

334

ավելի դաժան բնույթ: Պատրիարքի համոզմամբ, միայն եվրոպական տերությունների ճնշման տակ իրականացված բարենորոգումները կարող են վերականգնել խաղաղությունը հայկական շրջաններում:202

Սեպտեմբերի 11-ին Սոլսբերին հայտնում է Ռուստեմ փաշային, որ բրիտանական կառավարությունը պատրաստ է ընդունել Բարձր Դռան առաջարկները և վերջնական լուծում տալ Հայկական հարցին, սակայն մինչ այդ սուլթանը պետք է ապահովի բնակիչների կյանքի ու ունեցվածքի անվտանգության երաշխիքներ: Նա առաջարկում էր սուլթանական կառավարությանը երկու տարբերակ: Առաջինը կայանում էր վարչական մարմիններում համաչափության սկզբունքով քրիստոնյաներին աշխատանքի ընդունելու և մահմեդական ղեկավար պաշտոնյաներին քրիստոնյա տեղակալներ նշանակելու մեջ: Երկրորդ տարբերակի համաձայն, մահմեդական վարչակազմը շարունակում է իր աշխատանքը շրջաններում տեղակայված և մասնակիորեն եվրոպական

ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի հսկողությամբ: Վերջիններս պետք է զեկուցեն դեսպաններին կատարվող չարաշահումների մասին:

Նույն օրը Սոլսբերին հանձնարարում է Լասսելզին ներկայացնել իր առաջարկները ռուսական կառավարության քննարկմանը:203

Սեպտեմբերի 14-ին Բարձր Դուռը հանձնարարում է Ռուստեմ փաշային ներկայացնել Սոլսբերիին իր դիրքորոշումը: Սուլթանական կառավարությունը միանշանակ մերժում էր եվրոպական ներկայացուցիչներից բաղկացած հսկողության հանձնաժողովի ստեղծման գաղափարը, քանի որ այն միջամտություն է կայսրության ներքին գործերին և նսեմացնում է սուլթանի ինքնիշխան իրավունքները, որոնք երեք տերությունները բազմիցս խոստացել են հարգել: Քրիստոնյա պաշտոնյաների համաչափության առնչությամբ նշվում էր, որ այդ խնդիրը նախատեսված է Բարձր Դռան բարենորոգումների ծրագրի լրացուցիչ վեց առաջարկների երկրորդ կետում, որի համաձայն, վիլայեթների և սանջակների մահմեդական ղեկավարներն ունենալու են քրիստոնյա օգնականներ, իսկ ոստիկանության և ժանդարմերիայի կազմում ընդգրկվելու են նաև քրիստոնյա սպաներ: Բարձր Դռան պատասխանում նշվում էր, որ Սոլսբերիի առաջարկը վեց վիլայեթների կառավարման

202 FO 424/183, No. 317, p. 434.
203 Turkey, No. 1 (1896)..., pp. 142-143.

335

մարմիններում քրիստոնյաների հավասարաչափ ընգրկման մասին փաստորեն կատարված է և հարցը կարելի է համարել փակված:204

Սակայն բրիտանական կառավարությունը չի բավարարվում Բարձր Դռան պատասխանով: Սեպտեմբերի 23-25-ին Ֆորին Օֆիսը քննարկում էր Ֆրանսիայի դեսպանի և Ռուսաստանի հավատարմատարի հետ Կոստանդնուպոլսում երեք տերությունների դիվանագիտական ներկայացուցչությունների հետագա գործողությունները: Բրիտանական դիվանագետների կարծիքով՝ 1/ բոլոր վալիները կարող են լինել քրիստոնյա. 2/ պետք խստորեն պահպանվի քրիստոնյա մյութեսարիֆների համաչափությունը. 3/ մահմեդական վալիներն ու մյութեսարիֆները պետք է պարտադիր ունենան քրիստոնյա տեղակալներ: Քննարկումների արդյունքում դիվանագետները համաձայնում են Կոստանդնուպոլսում երեք դեսպանների կողմից ներկայացնել Բարձր Դռանը համատեղ մի հայտագիր, որում պետք է բացի վեց կետից պահանջվեր ևս մեկ էական լրացում, և նշվեր, որ եթե 15 օրվա ընթացքում դեսպանությունները չստանան սուլթանական կառավարությունից գրավոր հավանություն, տերությունները վերաբարձրացնելու են խառը հանձնաժողովի ստեղծման առաջարկը:205

Սեպտեմբերի սկզբին սուլթանական կառավարության հանձնաժողովի ղեկավար Շաքիր փաշան ժամանեց Տրապիզոն: Հյուպատոս Լոնգուորթը Քարրիին գրում էր, որ նրա «իշխանությունը բավականին սահմանափակ է», մասնավորապես, տնտեսական և ֆինանսական հարցերում: Իսկ դա նշանակում է, շարունակում էր հյուպատոսը, որ նրա առաքելությունը չափազանց դժվար իրականանալի է, եթե ոչ ապարդյուն:206

Սեպտեմբերի 9-ին Էրզրումում Շաքիր փաշան զրույց է ունենում բրիտանական հյուպատոս Գոեյվզի հետ: Ծանոթացնելով հյուպատոսին ճանապարհաշինության և 210 քրիստոնյա ժանդարմ նշանակելու իր ծրագրերի հետ, Շաքիր փաշան միաժամանակ ավելացնում էր, որ դրանց իրագործումը կապված է դժվարությունների հետ, որոնք են մեծ ծախսերը և, շատ դեպքերում, կառավարական պաշտոնյաների կողմից մահմեդականների և քրիստոնյաների միջև հրահրվող թշնամությունը:207

_____
204 Նույն տեղում, էջ 143-145:
205 FO 424/183, No. 355, 356, pp. 463-465.
206 FO 424/183, No. 338/1, p. 450.
207 FO 424/183, No. 362/1, p. 469.

336

Հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում բրիտանական հյուպատոսներ Լոնգվորթը (Տրապիզոն), Գոեյվզը (Էրզրում), Քամբերբատչը (Անգորա), Բերնհեմը (Ալեքսանդրետ), փոխհյուպատոսներ Հոլվորդը (Վան), Հեմփսոնը (Մուշ), Բոյաջյանը (Խարբերդ) հաղորդում էին դեսպանությանը հայ բնակչության ծանրագույն վիճակի, մահմեդականների և քրիստոնյաների միջև տեղի ունեցող բախումների, քրդական հարձակումների, թուրք պաշտոնյաների կողմից մահմեդական բնակչությանը հայերի դեմ հրահրելու, հայ հեղափոխականների գործողությունների ակտիվացման փաստերի մասին:208 Մասնավորապես, օգոստոսի 26-ին Հեմփսոնը զեկուցում էր Գոեյվզին, որ հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն, մահմեդականների ցածր դասի շրջանում ստեղծված է կազմակերպություն, որի խնդիրն է քրիստոնյա բնակչության դեմ բռնի գործողություններ սկսելու միջոցով տապալել ծրագրված բարենորոգումների իրագործումը:209

4. 1895 Թ. ԲՐԻՏԱՆԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1890-ական թթ. կեսերին գերմանական դիվանագիտության մերձավորարևելյան քաղաքականության հիմնական նպատակն էր՝ սրել ռուս-բրիտանական հակասությունները, խոչընդոտել Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի համաձայնությանը Օսմանյան կայսրության բաժանման հարցում, հանդես գալ որպես սուլթանական կառավարության անկեղծ բարեկամ: Նման դիրքորոշումը պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ Թուրքիայի բաժանման հարցում ռուս-բրիտանական հնարավոր համաձայնության դեպքում Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին հասնելու էր ավարի առյուծի բաժինը: Իր հերթին, Աբդուլ

_____
208 Turkey, No. 1 (1895). Part 1..., pp. 198, 200-203; Turkey, No. 1 (1896)..., pp. 118-119; Turkey, No. 2 (1896). Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty`s Concular Officers in Asiatic Provinces. London, 1896, pp. 2-4, 9-10, 14, 16-17, 21; FO 424/183, No. 208/2, p. 240; No. 219/2, pp. 255-256; No. 251/2, pp. 398-399; No. 280/1, p. 413.
209 FO 424/183, No. 339/2, p. 451.

337

Համիդը ձգտում էր ի դեմս Գերմանիայի հզոր հակակշիռ ստեղծել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համաձայնեցված քաղաքականության դեմ: Քանի որ 1895 թ. կեսերին ռուսական և բրիտանական կառավարությունները բավականին մոտ էին Հայկական հարցում համաձայնության հասնելու հարցում, գերմանական դիվանագիտությունը որոշեց կանխել այն, փորձելով համապատասխան բանակցություններ վարել սկզբից Մեծ Բրիտանիայի, իսկ նոյեմբերին՝ Ռուսաստանի հետ: Կայսրության հնարավոր բաժանման դեպքում նա առաջարկեց վերջինիս Կոստանդնուպոլիսն ու նեղուցները: Այսպիսով, գերմանական կառավարության արտաքնապես բարեկամական հարաբերությունները Աբդուլ Համիդի հետ, նրա հոգատարությունը Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության մասին պարզապես պատրանք էին, երիտասարդ գաղութատիրական ախորժակը քողարկելու միջոց:210

Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի շահերի բախումը Պարսկաստանում և Տիբեթում, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հակասությունները Չինաստանում ստիպում էին բրիտանական կառավարությանը մերձեցման եզրեր փնտրել Գերմանիայի հետ: Օգտագործելով Հայկական հարցը, բրիտանական դիվանագիտությունը հմտորեն վարում էր երկակի խաղ՝ մի կողմից նա վախեցնում էր ռուսական կառավարությանը Գերմանիայի հետ մերձեցման հնարավորությամբ, իսկ մյուս կողմից՝ առաջարկում գերմանական կառավարությանը համաձայնության հասնել Օսմանյան կայսրության բաժանման հարցում:

1895 թ. հուլիս-օգոստոսին տեղի ունեցած բրիտանա-գերմանական բանակցությունները համարվում են «...նոր ժամանակաշրջանի դիվանագիտության

---

210 «Այն փաստը, թե ինչ հեշտությամբ և արագությամբ գերմանական կառավարությունը համաձայնեց նպաստել Թուրքիայի բաժանմանը և այդ կապակցությամբ նույնիսկ հանդես բերեց մեծ եռանդ, - գրում էր ռուս պատմաբան Ա.Ս.Սիլինը , - ապացուցում է, թե որքան ոչ ամուր և կեղծ էր Օսմանյան կայսրության պահպանմանն ու նրա հետ բարեկամական հարաբերություններն ամրապնդելուն ուղղված Գերմանիայի պաշտոնական գիծը» (Силин А.С. Из истории политики Бисмарка в восточном вопросе в 1870-1890 годах. - В кн. Вопросы истории внешней политики СССР и международных отношений. М., 1976, с. 217.):



պատմության ամենից մութ էջերից մեկը»,211 քանի որ Սոլսբերիի զրույցները գերմանական դեսպանի և կայսր Վիլհելմ 2-րդի հետ ընթանում էին գաղտնի և մինչև օրս իրենց վերջնական լուսաբանումը չեն ստացել:

Գերմանիայի դեսպան Փաուլ Հացֆելդի հետ հուլիսի 9-ին կայացած հերթական հանդիպման ժամանակ Սոլսբերին, խոսելով Թուրքիայում տիրող ծանր և լուրջ կացության մասին, հայտնեց կայսրության բաժանման վերաբերյալ ռուս-բրիտանական համաձայնագիր ստորագրելու իր մտադրության մասին: Ընկալելով վարչապետի խոսքերը որպես ակնարկ, դեսպանը համոզում է Գերմանիայի արտգործնախարար Մարշալ ֆոն Բիբերշտեյնին և նախարարության խորհրդական Ֆրիդրիխ Գոլշտեյնին, որ բրիտանական կառավարությունն իրապես ծրագրել է իրականացնել Օսմանյան կայսրության բաժանում:

Հուլիսի 27-ին Սոլսբերին գրում էր Լասսելզին, որ գերմանական դեսպանը չափազանց անհանգստացած է ռուս-բրիտանական համաձայնագրի ստորագրության հնարավորությամբ: Ըստ վարչապետի, Հացֆելդը փորձում էր համոզել իրեն նման համաձայնագիր ստորագրել ոչ թե Ռուսաստանի, այլ Գերմանիայի հետ:212

Բրիտանացի պատմաբան Ջ. Գրենվիլը բացառում է Սոլսբերիի կողմից գերմանական կառավարությանը նման առաջարկի հնարավորությունը, քանի որ նման գործարքի համար ավելի հարմար էր Ռուսաստանը: Նրա կարծիքով, Հացֆերդը պարզապես խեղաթյուրել էր հարցը հանուն Գերմանիայի առջև դրված կարևոր մի նպատակի՝ գերմանա-բրիտանական հարաբերությունների բարելավման:213 Բրիտանացի պատմաբան Մ. Ջեֆերսոնը նույնպես համոզված է, որ բրիտանական կառավարությունը նման առաջարկով հանդես չի եկել: Վկայակոչելով Սոլսբերիի օրագիրը, նա գրում է, որ Սոլսբերին, լսելով Հացֆելդի իր արտահայտությունների մեկնաբանության մասին, պատասխանում է. «Ես երբեք նման բան չեմ ասել»:214

_____
211 Силин А.С. Экспансия Германии на Ближнем Востоке в конце Х1Х в. М., 1971, с. 209.
212 Grenville J.A.S. Op. cit., pp. 33-34.
213 Նույն տեղում, էջ 25:
214 Jefferson M.M. Lord Salisbury and the Eastern Question, 1890-1898. - The Slavonic and Eastern European Review, 1960, vol. 39, No. 92, December, p. 49.

339

Օգոստոսի սկզբին, համատեղ ծովային զինավարժություններին մասնակցելու առիթով Անգլիա է ժամանում Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-րդը: Թագուհու կողմից հյուրին տրված ճաշի ժամանակ կայանում է կայսրի զրույցը Սոլսբերիի հետ: Հացֆելդի համաձայն, այս անգամ Մեծ Բրիտանիայի վարչապետը չակնարկեց Օսմանյան կայսրության բաժանման մասին, այլ խոսեց միմիայն սուլթանի քրիստոնյա հպատակների ծանր կացության շուրջ: Վիլհելմ 2-րդը լավատեսությամբ էր արտահայտվում ապագայում Թուրքիայի ներքին իրավիճակի բարելավման կապակցությամբ և խորհուրդ էր տալիս Սոլսբերիին համոզել Աբդուլ Համիդին ազատվել միմիայն կաշառակեր պաշտոնյաներից: Զրույցից հետո Սոլսբերին եկել էր այն համոզմանը, որ Գերմանիան թշնամաբար է վերաբերվում բրիտանական կառավարության «հայամետ» քաղաքականությանը և պահանջում չանհնգստացնել սուլթանին: Հետագայում նա գրում էր Քարրիին. «Իմ զրույցները Ավստրիայի և Գերմանիայի դեսպանների հետ առավելագույնս պարզ են դարձնում այն հանգամանքը, որ ամբողջ Եվրոպան ընդդիմության մեջ է գտնվում մեր հայկական քաղաքականության կապակցությամբ: Երկու գերմանական տերություններն այն հստակորեն չեն ընկալում, համարելով այն դոնքիշոտյան և վտանգավոր: Ֆրանսիան համակրանք չի տածում այդ քաղաքականության հանդեպ, սակայն նա պետք է աջակցի Ռուսաստանին: Ռուսաստանը նույնպես չի հավանում մեր քաղաքականությունը, սակայն նա ունի հավատի պաշտպանի համբավ և միաժամանակ որոշ չափով նյարդայնանում է իր հայերի (այսինքն ռուսահայերի - Ա.Կ.) պատճառով: Այսպիսով, նա և հետևաբար նաև Ֆրանսիան, պետք է որ մեզ աջակցեն...» 215

Օգոստոսի 6-ին Սոլսբերին հրաժարվում է այցելել Վիլհելմ 2-րդին «Հոգենցոլլերն» զբոսանավի վրա: «Պատմական նշանակություն ունեցող այդ միջադեպը» զգալի

լարվածություն մտցրեց երկու երկրների հարաբերությունների մեջ: Բեռլին վերադառնալուն պես կայսրը կազմակերպում է բրիտանական վարչապետին քննադատող հոդվածաշարի հրապարակում «Շտանդարտ» թերթի էջերում:216

Այնուամենայնիվ Վիլհելմ 2-րդը փորձում էր կանխել ռուս-բրիտանական համաձայնությունը Հայկական հարցում: Գերմանական կառավարությունը մտադիր չէր

_____
215 Grenville J.A.S. Op. cit., p. 38.
216 Նույն տեղում, էջ 39:

340

հրաժարվելու Օսմանյան կայսրության բաժանման գաղափարից: Բեռլին ժամանած Մեծ Բրիտանիայի ռազմական կցորդ, գնդապետ Լեոփոլդ Սուեյնի միջոցով կայսրը ծանոթացնում էր բրիտանական կառավարությանը կայսրության բաժանման իր ծրագրի հետ: Նա խոստանում էր աջակցել Մեծ Բրիտանիային սուլթանական կառավարության դեմ ուժի գործադրման հարցում այն պայմանով, որ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան կստանան համապատասխան փոխհատուցում: Գերմանական կայսրն իր համոզվածությունն էր հայտնում, որ Թուրքիայում հասունացել է քաղաքական ճգնաժամ, որին շուտով հետևելու է պալատային հեղաշրջում: Նա առաջարկում էր Անգլիային Եգիպտոսը, Ռուսաստանին՝ Կոստանդնուպոլիսը, Փոքր Ասիան և մինչև Սալոնիկ ընկած տարածքը, Ավստրո-Հունգարիային՝ Սալոնիկը, Իտալիային՝ Միջերկրականի ավազանի տարածքը և Սուդանը: Բացի այդ, Վիլհելմը խորհուրդ էր տալիս բրիտանական կառավարությանը խոստանալ Ռուսաստանին նաև Սիրիան՝ ռուս-ֆրանսիական հարաբերությունները փչացնելու նպատակով:217

Այսպիսով, այժմ արդեն Գերմանիան էր հանդես գալիս Օսմանյան կայսրության բաժանման նախաձեռնությամբ: Գերմանական կառավարության նման համառությունը շփոթության էր մատնել Սոլսբերիին: Նա սկսում էր արդեն մտածել, որ նման զարգացումները կարող են բերել նրան, որ Մեծ Բրիտանիան, Ղրիմի պատերազմի օրինակով, այս անգամ ինքը կարող է հայտնվել Ռուսաստանի վիճակում:218 Այդ իսկ պատճառով էլ բրիտանական կառավարությունն անտարբերությամբ վերաբերվեց Վիլհելմ 2-րդի ծրագրին, փաստորեն մերժելով այն: Ակնարկելով գերմանական կառավարությանը Թուրքիայի բաժանման տարբերակը, Սոլսբերին հավանաբար փորձում էր շոշափել Գերմանիայի դիրքորոշումը, ինչպես նաև սրել ռուս-գերմանական հարաբերությունները Մերձավոր Արևելքում:

Սուլթանական կառավարությունն այդպես էլ չիմացավ Լոնդոնի և Բեռլինի միջև տարվող գաղտնի բանակցությունների մասին: Իսկ գերմանական կառավարությունը շարունակեց առաջվա պես ցուցաբերել իր «անտարբերությունը» Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

_____
217 Նույն տեղում, էջ 40-41:
218 Силин А.С. Экспансия Германии на Ближнем Востоке..., с. 215.

341

## 5. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1895 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1896 Թ. ՕԳՈՍՏՈՍ)

Սուլթանական իշխանության դեմ ուղղված Սոլսբերիի, Գլադստոնի, բրիտանական քաղաքական և հասարակական բազմաթիվ այլ գործիչների խորհրդարանային և հրապարակային ելույթները որևէ դրական ազդեցություն չկարողացան գործել Հայաստանում բարենորոգումների իրականացման գործընթացի վրա: Հակառակը, բրիտանական կառավարության գործուն միջնորդությունից և տարբեր գործիչների հայտարարություններից ոգևորված հայ հեղափոխականները, որոնք իրենցից առանձնակի ուժ չէին ներկայացնում, շտապեցին հանդես գալ սուլթան Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության դեմ: Իրադարձությունների ժամանակակիցներից շատերը նշում էին այն հանգամանքը, որ սուլթանական կառավարությունը հաջողությամբ օգտագործեց հայ հեղափոխական կուսակցությունների գործունեությունը որպես հարմար առիթ՝ կայսրության հայ բնակչության բնաջնջման ծրագիրն իրականացնելու համար:219 Արտասահմանյան կենտրոններից ղեկավարվող հայ ազգային կուսակցություններն այդ շրջանում իրապես ակտիվացրել էին իրենց գործունեությունը, ձգտելով գլխավորել արևմտահայության հակասուլթանական ելույթները և հրավիրել եվրոպական տերությունների ուշադրությունը Բեռլինի պայմանագրի պարտականությունների կատարմանը: Համոզված լինելով, որ հայ հեղափոխական կոմիտեներն իրենց գործողություններով ձգտում են ապահովել Եվրոպայի միջամտությունը Հայկական հարցում, ամերիկյան հեղինակ էդվին Փիրսը համարում էր այդ հույսն «անմիտ» և «վտանգավոր»:220

---

219 Hepworth H. Through Armenia on Horseback. London, 1898, p. 282; Pears E. Turkey and its People. London, 1911; Paelian G.H. Landmarks in Armenian History. New York, 1942, p. 62.
220 Pears E. Life of Abdul Hamid. New York, 1917, p. 232.

342

Սեպտեմբերի 28-ին, երբ Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանությունները քննարկում էին բարենորոգումների իրագործման հնարավորություններն ու սուլթանական կառավարության հետ այդ հարցում բանակցելու նոր տարբերակները, դեսպանները նույն բովանդակությամբ նամակներ ստացան «Հնչակյան հայ հեղափոխական կոմիտեից», ուր տեղեկացվում էր, որ մայրաքաղաքի հայ բնակչությունը որոշել է դուրս գալ խաղաղ ցույցի՝ հայկական շրջաններում բարենորոգումներն իրականացնելու իր ցանկությունն արտահայտելու նպատակով: Փաստաթղթում հույս էր հայտնվում, որ նկատի առնելով ցույցի խաղաղ բնույթը, իշխանությունները չեն օգտագործելու ոստիկանությունն ու բանակը ցուցարարների դեմ: «Ցավալի հետևանքների» պարագայում հեղափոխական կոմիտեն հրաժարվում էր պատասխանատվությունից:221

Սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսի հայերը դուրս եկան խաղաղ ցույցի սուլթանի նստավայր Բաբը Ալիի շրջակայքում, պահանջելով սուլթանական կառավարությունից անհապաղ իրականացնել բարենորոգումների ծրագիրը: Ցուցարարները մայիսյան ծրագրի ոգով կազմել էին մի փաստաթուղթ՝ վարչատարածքային, տնտեսական,

դատաիրավական բարեփոխումների պահանջով: Սոլսբերիին ուղղված իր հոկտեմբերի 1-ի հեռագրում Քարրին, հիմնվելով հավաստի աղբյուրների վրա, հետևյալ կերպ է նկարագրում տեղի ունեցած իրադարձությունները: Շուրջ 2 հազ. հայեր (հայ պատմագրության տվյալների համաձայն՝ 4 հազ. - Ա.Կ.), հիմնականում միջին դասակարգի պատկանող երիտասարդներ, դուրս էին եկել ցույցի՝ խնդրագիր հանձնելու նպատակով: Ոստիկանությունը կանգնեցնում է նրանց և պահանջում ցրվել: Հայերը մերժում են պահանջը և երբ հրաման է տրվում ձերբակալել ցուցարարների ղեկավարներին, տեղի է ունենում փոխհրաձգություն, որի արդյունքում սպանվում են ոստիկանապետ Սերվեր բեյը, շուրջ 15 ոստիկաններ և 60 հայեր: Ոստիկանությունը ցրում է ցույցը և ձերբակալում մեծ թվով հայերի: Մահակներով զինված թուրքերը բռնում էին հայերին փողոցներում և ոստիկանների ներկայությամբ ծեծելով շատերին սպանում: Ձերբակալվեց շուրջ 500 հայ, որոնց հետ վերաբերվում էին մեծ դաժանությամբ: Ցույցեր տեղի ունեցան նաև քաղաքի այլ շրջաններում, շուրջ հազար զինված հայեր, կանայք և երեխաներ պաշարվել էին ոստիկանության կողմից

221 FO 424/183, No. 371, p. 476.

343

պատրիարքարանի եկեղեցում: Չնայած կարգ ու կանոնը հաստատելու մասին պաշտոնական հայտարարություններին, սպանությունները շարունակվում էին:222

Օգտագործելով թուրք ոստիկանապետի վրա կատարված կրակոցը որպես հարմար պատրվակ, սուլթանական կառավարությունը կազմակերպեց շուրջ 6 հազ. հայերի ջարդ մայրաքաղաքում:223 Մակքոլի կարծիքով, հայերի ցույցը «...միանգամայն օրինական էր և բացարձակապես խաղաղ», սակայն «ճակատագրական» կրակոցն առիթ հանդիսացավ Կոստանդնուպոլսի հայերի ջարդ կազմակերպելու համար: «Ապացույց չկա, - գրում էր նա, - որ սպայի վրա կրակ արձակողը հայ էր: Հռոմի թերթերից մեկում տպագրված վկայության համաձայն, կրակոցը կատարվել էր մեծ վեզիրի թիկնապահներից մեկի կողմից՝ ...ջարդի համար պատրվակ ստեղծելու նպատակով»:224

«Spectator» շաբաթաթերթը հետևյալ կերպ էր նկարագրում Կոստանդնուպոլսում տեղի ունեցածը. «Բռնության ոչ մի անհրաժեշտություն չկար: Այն ժամանակ, երբ քրիստոնյաների աննշան մի մասը զինված էր միայն ատրճանակներով, քաղաքը բառացիորեն վխտում էր օսմանյան զինվորներով և Օսման Գազին երեք ժամվա ընթացքում կարող էր առանց արյունահեղության անդորր և կարգ ու կանոն հաստատել Կոստանդնուպոլսում...Սակայն մոլեռանդ պալատական վերնախավը որոշեց դաս տալ քրիստոնյաներին. նշան տրվեց սոֆթաներին կամ ինչպես ներկայումս պարզվում է վերազգեստավորված ոստիկաններին...և հայերը հայտնվեցին նրանց իշխանության ներքո... Ընդ որում ոստիկանությունը հրազեն չէր օգտագործում... 24 ժամ անընդմեջ Կոստանդնուպոլսում տիրում էին տեռորն ու բռնությունը...»:225 Միաժամանակ բրիտանական մամուլի որոշ միջոցներ դատապարտեցին ցույցի դուրս եկած հայերին: Այսպես, «Saturday Review»-ն ցույցին հետևած ջարդի ողջ պատասխանատվությունը բարդում էր կազմակերպիչների վրա: Թերթը համարում էր, որ Կոստանդնուպոլսի հայերի կյանքի և ունեցվածքի անվտանգությունն ապահովված էր և բացարձակ կարիքը չկար բողոքելու կառավարության դեմ:226

222 Turkey, No. 2 (1896)..., p. 22.
223 Shahid Bey S. Op. cit., p. 201.
224 Maccoll M. The Constantinople Massacre and its Lesson..., p. 756.
225 The Suspense in Constantinople. - The Spectator, 1895, vol. 75, October 12, p. 476.
226 Saturday Review, 1895, October 5.

344

Հոկտեմբերի 2-ի առավոտյան Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանի տանը կայացավ վեց տերությունների դեսպանների հանդիպումը, ուր որոշում ընդունվեց հանդես գալ համատեղ հայտարարություն՝ մայրաքաղաքում տեղի ունեցող դեպքերի առնչությամբ: Հետագա արյունահեղությունից խուսափելու նպատակով դեսպանները պահանջեցին Բարձր Դռնից վերականգնել կարգ ու կանոնը քաղաքում միմիայն կառավարական ուժերի միջոցով, բողոքեցին հայերի վրա հարձակում գործող անհատների քաջալերումի, ինչպես նաև ոստիկանության կողմից ձերբակալվածների դաժան սպանությունների դեմ:227

Նույն օրը Քարրին հաղորդում էր Սոլսբերիին, որ արտգործնախարարն ընդունել էր դեսպանների բողոքն անտարբերությամբ, հայտարարելով, որ կառավարությունը ձեռնարկել է բոլոր միջոցները կարգ ու կանոնը և հասարակական անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, իսկ ներկայացված փաստերը իրականությանը չեն համապատասխանում: Ըստ դեսպանի, կառավարությունը մեղադրում էր հուզումները հրահրելու մեջ հայ պատրիարքին: Քարրին գաղտնի տեղեկատվություն էր ստացել այն մասին, որ սուլթանն անձամբ ինքն էր մասնավոր հրամաններ իջեցրել պատերազմի և ոստիկանության նախարարներին՝ վարվել հայերի հետ ծայր աստիճան դաժանությամբ:228 Մեծ վեզիրին ուղղված հեռագրում Քարրին նրա ուշադրությունն էր հրավիրում դեսպանների կողմից արտգործնախարարին ներկայացված հայտարարության վրա և բրիտանական կառավարության անունից պահանջում դադարեցնել հայերի կոտորածները մայրաքաղաքի տարբեր շրջաններում:229

Հոկտեմբերի 4-ին Քարրին այցելում է մեծ վեզիր Քյամիլ փաշային և ներկայացնում նրան իր տրամադրության տակ եղած բազմաթիվ փաստերը՝ քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Դեսպանը խստագույնս պահանջում էր մեծ վեզիրից անհապաղ միջոցներ ձեռնարկել եկեղեցիներում ապաստանած հայերին անվտանգության երաշխիքներ և հնարավորություն տալու՝ իրենց տները վերադառնալու համար: Ձևացնելով, թե իբր ծանոթ չէ բերված փաստերին, Քյամիլ փաշան, այնուամենայնիվ, իր տրամադրվածությունն էր հայտնում արդար հետաքննություն անցկացնելու մեջ, հրավիրելով

227 Turkey, No. 2 (1896)..., pp. 22, 36.
228 FO 424/184, No. 6, p. 3.
229 Turkey, No. 2(1896)..., p. 23.

345

դեսպանի ներկայացուցչին մասնակցել ստեղծվելիք հանձնաժողովի աշխատանքներին: Նա անհրաժեշտ համարեց նաև անհապաղ լուծում գտնել Հայկական հարցին, նշելով, որ տերությունների և Բարձր Դռան միջև արդեն իսկ համաձայնություն գոյություն ունի բարենորոգումների բոլոր կետերի վերաբերյալ: Նկատելով, որ քննարկվելիք որոշ կետեր դեռևս մնացել են, Քարրին անհրաժեշտ էր համարում հրապարակել բարենորոգումների իրագործման վերաբերյալ որոշումը սուլթանի հրամանագրի տեսքով:230

Հոկտեմբերի 4-ին Սոլսբերիին ուղղված նամակում Վիկտորիա թագուհին, վրդովված Կոստանդնուպոլսում տեղի ունեցող իրադարձություններով, գրում էր նեղուցների գրավման անհրաժեշտության մասին: Նրա կարծիքով, միմիայն այդ միջոցառման իրականացումը կարող է կանխել Օսմանյան կայսրության հայ բնակչության նոր կոտորածները:231

Հաջորդ օրը Քարրին Սոլսբերիին հաղորդում էր, որ մայրաքաղաքի հայ բնակչության շրջանում դեռևս խուճապ է տիրում, եկեղեցիներում կուտակվել են մեծ քանակությամբ փախստականներ, ձերբակալությունները շարունակվում են: Պատրիարքը հայտնել էր բրիտանական դեսպանության թարգմանին, որ անկարող է զսպել ժողովրդին, որը գտնվում է հուսահատության եզրին:

Ըստ դեսպանի, միայն հայկական հիվանդանոցում գտնվող շուրջ 80 դիակների վիճակի քննությունը վկայում է տեղի ունեցած սոսկալի բռնությունների մասին: Դեսպանության կողմից պարբերաբար ստացվող տվյալների համաձայն, սպանված հայերի թիվը պետք է որ շատ մեծ լինի, չհաշված անհայտ կորած, անզեն ծառաների և աշխատավոր մարդկանց զգալի քանակը:

Երեկոյան կայացած դեսպանների հանդիպման ընթացքում որոշում կայացվեց Բարձր Դռանը համատեղ հայտագիր ներկայացնելու մասին: Միաժամանակ բրիտանական կառավարությունը որոշեց վեց ռազմանավ ուղարկել Լեմնոս կղզի:232 Հոկտեմբերի 6-ի հայտագրում, ամփոփելով հավաքված բոլոր փաստերը, տերությունների ներկայացուցիչները մասնավորապես նշում էին, որ իրավիճակը Կոստանդնուպոլսում ոչ միայն չի բարելավվել, այլ ավելի է վատթարացել և եթե ներկայիս իրավիճակը շարունակվի,

---

230 FO 424/184, No. 14, p. 5.
231 Douglas R. Op. cit., pp. 124-125.
232 Turkey, No. 2 (1896)..., p. 25.

346

հասարակական կարգը լրջորեն կվտանգվի, իսկ անկարգությունները կտարածվեն կայսրության ողջ տարածքով: Նրանք կոչ էին անում Բարձր Դռանը համապատասխան միջոցառումներ ձեռնարկել մահմեդական և քրիստոնյա բնակչության անհանդուրժողականությունը վերացնելու, հասարակական կարգը վերականգնելու, քրիստոնյաների և օտարերկրյա հպատակների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, իրենց աջակցությունն էին առաջարկում խաղաղության հաստատման, տեղեկատվության տրամադրման և հետաքննություն անցկացնելու հարցերում:233

Նույն օրը, սուլթանի կարգադրությամբ, Արթին փաշան այցելում է պատրիարքարան, ջանալով պատրիարքի հետ միասին համոզել ապաստան գտած հայերին դուրս գալ եկեղեցուց, սակայն վերջիններս հրաժարվում են ենթարկվել, քանի որ հեղափոխական կոմիտեն խորհուրդ էր տվել նրանց մնալ տեղերում և փակ պահել խանութները:234 Ըստ բրիտանական դեսպանության տվյալների, պատրիարքարանի և Գում Գափուի եկեղեցում, որոնք պաշարված էին ոստիկանների կողմից, պատսպարվել էին շուրջ 2 հազ. հայեր:235

Հոկտեմբերի 7-ին Աբդուլ Համիդը Քարրիի մոտ է ուղարկում Զեքքի փաշային: Վերջինս փորձում էր համոզել դեսպանին, որ բրիտանական նավատորմի ներկայությունը Կոստանդնուպոլսի մոտակայքում ավելի է քաջալերում հայ հեղափոխական կոմիտեին և դրդում նրան նոր գործողությունների: Նա խնդրում էր համապատասխան հրաման իջեցնել՝ ռազմանավերը դեպի Սալոնիկ հեռացնելու մասին: Զեքքի փաշայի համոզմամբ, կարգ ու կանոնը վերականգնվել չի կարող այնքան ժամանակ, քանի դեռ ռազմանավերը գտնվում են Լեմնոսում: Հեղափոխական կոմիտեն հույս ունի, շարունակում էր հրամանատարը, որ, հրահրելով թուրք բնակչությանն արյունահեղության, նա ստիպելու է բրիտանական կառավարությանը մտցնել նավատորմը Կոստանդնուպոլիս և պահանջել ինքնավարություն հայերի համար:

Քարրին պատասխանում է, որ ներկայիս անկարգությունները, եթե նույնիսկ նրանք հրահրել են հայերը, կազմակերպվել են թուրք բնակչության կողմից, ոստիկանության թողտվության պայմաններում, և թուրք կառավարությունը պարտավոր է վերականգնել կարգ

---

233 Նույն տեղում, էջ 41-42:
234 Նույն տեղում, էջ 25-26:
235 Նույն տեղում, էջ 37:

347

ու կանոնը և փոխադարձ վստահությունը: Եթե դեսպանների հայտագրի պատասխանում Բարձր Դուռը կբավարարի տերությունների պահանջներն այդ ուղղությամբ, ասում էր դեսպանը, նա կփոխանցի բրիտանական կառավարությանը ռազմանավերը Լեմնոսից դուրս բերելու մասին սուլթանի խնդրանքը:

Զրույցի ժամանակ Զեքքի փաշան, փորձելով արդարացնել մայրաքաղաքում տեղի ունեցածը, շարունակաբար կրկնում էր, որ առաջին կրակոցը կատարել են հայերը: Դեսպանը պատասխանում է նրան, որ «տեղի ունեցած անմեղ հայերի համընդհանուր կոտորածներն ու ձերբակալությունները չեն կարող արդարացվել մի քանի հեղափոխականի քրեական գործողությամբ»:236

Հոկտեմբերի 8-ին Քարրին Սոլսբերիին հաղորդում էր նույն օրը Տրապիզոնում տեղի ունեցած հայերի ջարդի մասին: Բրիտանական հյուպատոսից ստացված տեղեկության համաձայն, «հայերի կողոպուտն ու կոտորածները սկսվեցին 10:30-ին և շարունակվեցին մինչև մայրամուտ, կորսվեցին շատ կյանքեր: Գիշերվա ընթացքում կարգ ու կանոնը վերականգնվեց, սակայն սարսափը չի վերացել և զինվորների քանակը բավարար չէ»:

Անկարգությունների ընթացքում սպանվել էր 182 հայ և 11 թուրք, վիրավորվել 19 հայ, 26 թուրք և 1 հույն:237 Տրապիզոնում տեղակայված զորքը մասնակցել էր հայերի ջարդին: Նույն փաստը հաստատում էր նաև Ռուսաստանի դեսպան Նելիդովը: Տրապիզոնում ռուսական հյուպատոսության քարտուղարի վկայությամբ, վալին անձամբ ինքն էր զինում քաղաք ժամանած լազերին: Ըստ ռուս դեսպանի տվյալների, հայերի կոտորածները կազմակերպվում են «չափազանց կանխամտածված» ձևով: Սպանվել էին միմիայն հայ լուսավորչականներ, կաթոլիկ և ռուսահպատակ հայերի տները բացարձակ վնաս չէին կրել:238

Հոկտեմբերի 9-ին Բարձր Դուռը պատասխանում է տերությունների համատեղ հայտագրին, ուր հավաստիացնում էր, որ ձեռնարկված միջոցառումները կանխելու են նոր անկարգություններն ու ապահովելու են քրիստոնյաների և օտարերկրյա քաղաքացիների անվտանգությունը: Մասնավորապես նշվում էր, որ մայրաքաղաքի փողոցներով օր ու գիշեր

236 FO 424/184, No. 38, p. 26.
237 Turkey, No. 2 (1896)..., p. 37.
238 FO 424/184, No. 279, pp. 168-169.

348

շրջելու են զինվորական և ոստիկանական պարեկներ, թերթերի և շեյխ-ուլ-իսլամի միջոցով կոչեր ու նախազգուշացումներ են կատարված բնակչությանն ու սոֆթաներին:239

Նույն օրն արտգործնախարար Սաիդ փաշան այցելում է Ֆրանսիայի դեսպանություն, ուր հանդիպում է վեց տերությունների դեսպաններին: Նա հավաստիացնում է նրանց, որ կառավարությունը որոշում է ընդունել թույլատրել եկեղեցիներում պատսպարված հայերին անարգել վերադառնալ իրենց տները՝ զենքը հանձնելու պայմանով: Դեսպանները որոշում են ուղարկել իրենց թարգմաններին անմիջապես հայկական եկեղեցիներ՝ հայերին այդ մասին տեղեկացնելու և համոզելու նպատակով: Արդեն իսկ մյուս օրը հայերը սկսում են դուրս գալ եկեղեցիներից և վերադառնալ իրենց տները: Բրիտանական դեսպանության թարգմանի հաշվարկով, եկեղեցիներում պատսպարված հայերի թիվը կազմում էր 2414, որոնցից զինված էր միայն 12 %-ը:240

Հոկտեմբերի 10-ին Քարրին Սոլսբերիին տեղեկացնում էր Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների հետ ունեցած իր հանդիպման մասին, որի ժամանակ նրանք քննարկել էին Բարձր Դռանը ներկայացվելիք առաջարկները բարենորոգումների և հայերի կյանքն ու ունեցվածքը պաշտպանելու վերաբերյալ: Դեսպանների պատկերացմամբ, բարենորոգումների ծրագիրը պետք է ձևակերպվեր որպես պայմանագիր, ստորագրվեր Օսմանյան կայսրության և տերությունների կողմից և հրապարակվեր սուլթանի հրամանագրի տեսքով: Այն նախատեսում էր. 1/ քրիստոնյա օգնական Շաքիր փաշայի համար, որի անունը պետք է անպաշտոն կերպով ներկայացվեր տերությունների հաստատմանը. 2/ քրիստոնյաների որոշակի մասմակցություն վարչական մարմիններում, ինչպես նաև վալիի և մյութեսարիֆի պաշտոններում. 3/ թարգմանների անմիջական կապը հսկողության հանձնաժողովի հետ՝ բարենորոգումների իրագործմանը վերաբերող բողոքների, հաղորդագրությունների և տեղեկատվության ներկայացման միջոցով. 4/

յուրաքանչյուր վիլայեթի բնակչության համաչափությանը համապատասխան քրիստոնյա պաշտոնյաների քանակի սահմանումը հսկողության հանձնաժողովի կողմից. 5/ քրիստոնյա օգնականների նշանակում մահմեդական վալիների և մյութեսարիֆների համար. 6/ դեսպանների բողոքարկման իրավունքը անկարող, ոչ ազնիվ և մոլեռանդ վալիների նշանակման

239 Turkey, No. 2(1896)..., p. 37.
240 Նույն տեղում, էջ 38-39, 43:



կապակցությամբ. 7/ գյուղական պահակախմբերի թվի սահմանումը վալիի կողմից՝ մյուդիրի ներկայացմամբ և տեղական կարիքների պահանջարկով. 8/ դեսպանների դիմումների բավարարումը՝ բանտերի վիճակի բարելավման, անհիմն ձերբակալությունների բացառման, ներման շնորհման, փախստականների վերահաստատման, համիդիե հեծելազորի գործելակերպի կարգավորման կապակցությամբ. 9/ բարենորոգումների ծրագրի իրագործումը Փոքր Ասիայի բոլոր սանջաներում և կազաներում, որտեղ քրիստոնյաները կազմում են բնակչության զգալի մասը:241

Հոկտեմբերի 11-ին Քարրին հանդիպում է ունենում Աբդուլ Համիդի հետ: Վերջինիս համոզմամբ, անգլիացիների համակրանքը հայերի հանդեպ քաջալերեց նրանց դիմելու «բռնի գործողությունների», որի արդյունքում անգլիական մամուլն էլ ավելի ուժեղացրեց հարձակումներն իր դեմ: Ի պատասխան դեսպանը հայտարարում է, որ բրիտանական կառավարությունը պատասխանատվություն կրել չի կարող ոչ մամուլում տպագրված հոդվածների, ոչ էլ տեղի ունեցած «բռնի գործողությունների» համար, նրա միջամտությունը Հայկական հարցում պայմանավորված է միմիայն ասիական շրջանների հայ բնակչության վիճակի բարելավման ձգտումով: Ըստ Քարրիի, այդ նպատակին է ծառայում բրիտանական կառավարության ցանկությունը բարենորոգումների իրականացման գործընթացն արագացնելու վերաբերյալ: Այդ կապակցությամբ դեսպանը խնդրում է Աբդուլ Համիդին հանձնարարել արտգործնախարարին համագործակցել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների հետ՝ բարենորոգումների նոր առաջարկները քննարկելու, հրապարակելու և շուտափույթ կերպով իրագործելու հարցում: Մասնավորապես, շարունակում էր Քարրին, բարենորոգումների իրականացման մասին հայտարարությունը ներկայումս ոչ միայն կբավարարի Եվրոպայի հասարակական կարծիքի պահանջները, այլև կհանդարտեցնի հայերի «քարոզչությունը»: Քարրին հավաստիացնում էր Աբդուլ Համիդին, որ բրիտանական կառավարության պահանջները թշնամական որևէ նպատակ չեն հետապնդում և ուղղված չեն ոչ սուլթանի, ոչ էլ նրա մահմեդական հպատակների դեմ: Հակառակը, նշում էր դեսպանը, բրիտանական կառավարությունը հավատացած է, որ վարչական բարենորոգումների իրագործումն ասիական շրջաններում էական նշանակություն

241 Turkey, No. 1(1896)..., p. 158.

ունի կայսրության գոյության համար և բացարձակապես չի կարող վիրավորել մահմեդական բնակչության «դյուրազգացությունը»:242

Այդ օրերին Ավստրո-Հունգարիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Էդմունդ Մոնսոնի243 և արտաքին գործերի նախարար Գոլուխովսկու միջև կայացած զրույցների ժամանակ վերջինս իր մտահոգությունն էր հայտնում Հայկական հարցի զարգացումների, Օսմանյան կայսրությունում և, մասնավորապես, Կոստանդնուպոլսում տիրող իրավիճակի կապակցությամբ և ամբողջապես հավանություն էր տալիս բրիտանական կառավարության կողմից այդ ուղղությամբ տարվող գործունեությանը: Փորձելով օգտագործել այդ հանգամանքը, Սոլսբերին հանձնարարում է դեսպանին ամեն կերպ համոզել նախարարին համապատասխան հրահանգ իջեցնել Թուրքիայում իր դեսպանին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանների հետ համատեղ Բարձր Դռնից բարենորոգումների իրագործում պահանջելու վերաբերյալ: Սակայն Գոլուխովսկին հասկացնել է տալիս բրիտանական կառավարությանը, որ չի կարող բացահայտորեն միանալ երեք տերությունների պահանջներին՝ իր դաշնակից Գերմանիայի «անտարբեր» վերաբերմունքի պատճառով, միաժամանակ տեղեկացնելով, որ իր դեսպանը Կոստանդնուպոլսում ցուցում է ստացել, հնարավորության սահմաններում, համոզել սուլթանին ընդունել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի բարենորոգումներին վերաբերող առաջարկները:244

Հոկտեմբերի 13-ին երեք տերությունների դեսպանները հանդիպում են արտաքին գործերի նախարարի Սաիդ փաշային և հանձնում նրան բարենորոգումներին վերաբերող լրացուցիչ առաջարկները: Երկու օր անց նախարարը Քարրիին տեղեկացնում էր, որ հարցը քննարկվելու է նախարարների խորհրդում, որից հետո հրապարակվելու է սուլթանի հրովարտակը բարենորոգումների մասին: Նույն հավաստիացումները տալիս էր նաև մեծ վեզիրի պաշտոնում նշանակված Քյամիլ փաշան:245

242 Turkey, No. 2(1896)..., p. 50.
243 Մոնսոն (Monson) Էդմունդ - բրիտանացի դիվանագետ: 1893-1896 թթ.՝ դեսպան Ավստրո-Հունգարիայում, 1896-1905 թթ.՝ Ֆրանսիայում:
244 Նույն տեղում, էջ 43; FO 424/184, No. 81, p. 47.
245 Turkey, No. 1(1896)..., p. 158; Turkey, No. 2 (1896)..., p. 57.

351

Միաժամանակ սուլթանական կառավարությունը նախազգուշացնում էր Քարրիին, որ հայերի համար նախատեսվող բարենորոգումները դժգոհության և վիրավորանքի զգացում են առաջացնում կայսրության մահմեդական հպատակների շրջանում: Մասնավորապես, այդ նպատակով սուլթանի կողմից հոկտեմբերի 15-ին դեսպանի մոտ ուղարկված Զեքքի փաշան նշում էր, որ բրիտանական կառավարության շարունակ պահանջներն այդ ուղղությամբ վտանգավոր իրավիճակ կարող են ստեղծել երկրում, ինչպես նաև վնաս հասցնել երկու պետությունների միջև գոյություն ունեցող հարաբերություններին: Քարրին պատասխանում էր, որ սուլթանի համար «միակ անվտանգ քաղաքականությունը»՝ առանց հապաղումների բարենորոգումների վերաբերյալ հայտարարության հրապարակումն է, քանի որ Անգլիայի հասարակական կարծիքը ճնշում է գործադրում կառավարության վրա, պահանջելով ձեռնարկել «ուժեղ միջոցներ» և, մասնավորապես,

օգտագործել նավատորմը: Հակառակ պարագայում, զգուշացնում էր դեսպանը, ոչ սուլթանը, ոչ էլ իր կայսրությունը չեն փրկվելու իրենց սպառնացող վտանգից:246

Հոկտեմբերի 17-ին Քարրին Սոլսբերիին հաղորդում էր, որ իրեն հասած տեղեկությունների համաձայն, Աբդուլ Համիդը որոշում է ստորագրել՝ արտգործնախարարի և դեսպանների կողմից համաձայնեցված բարենորոգումների ծրագիրը հաստատելու մասին: Ըստ դեսպանի, հավանաբար ծրագիրը հրապարակվելու է որպես սուլթանի հրովարտակի կամ մեծ վեզիրին ուղղված նամակի լրացում: Իր պատասխան հեռագրում Սոլսբերին «սրտանց շնորհավորում էր» Քարրին այդ «հաջողության» համար: Այդ կապակցությամբ հայ պատրիարքն իր գոհունակությունն էր հայտնում Քարրին և հայերի անունից իր շնորհակալությունները հաղորդում բրիտանական դեսպանությանը, խոստանալով համագործակցել իշխանությունների հետ ծրագիրն իրականացնելու գործում և զսպել ապագայում «հեղափոխական քարոզչությունը»: Ինչ վերաբերում է Աբդուլ Համիդին, ապա այդ օրերին նա գտնվում էր «շատ վատ տրամադրության մեջ»: Ռուս դեսպանի հետ ունեցած հանդիպման ժամանակ նա ասում էր, որ որոշել է իրագործել տերություններին խոստացած բարենորոգումների ծրագիրը, սակայն իր մահմեդական հպատակները «լուրջ դժվարություններ» են ստեղծում իրենց պահանջներով: Սուլթանն իր դժգոհությունն էր

246 FO 424/184, No. 135, p. 83.

352

հայտնում հայ պատրիարքից, որը հանդիսանում է «բարենորոգումների քարոզչության հիմնական շարժիչը և անարժան կերպով է իրեն դրսևորում զբաղեցրած պաշտոնում»:247

Հոկտեմբերի 20-ին Քարրին պաշտոնական հայտագիր է ստանում Բարձր Դռնից բարենորոգումների ծրագիրը գործի դնելու վերաբերյալ, որին կցված էր մեծ վեզիրի հանձնարարական նամակը Շաքիր փաշային:248

Մյուս օրը բարենորոգումների նախագծի հրապարակման կապակցությամբ մեծ վեզիրն ասում էր Քարրիին, որ կայսրության մահմեդականների շրջանում գոյություն ունի լուրջ դժգոհություն: Իսկ ըստ դեսպանին հասած տեղեկատվության, մահմեդական բնակչությունն ընդհանուր առմամբ գոհունակությամբ է ընդունել բարենորոգումների գաղափարը, առաջարկելով կիրառել այն երկրի ողջ տարածքում:249

Միաժամանակ Քարրին Սոլսբերիին հաղորդում էր, որ Դարդանելի Մեջիդիե ամրոցից ոչ հեռու գտնվող բլուրի վրա թուրքերն ավարտել են քողարկված մարտկոցի շինարարությունը և արդեն իսկ տեղադրել են այնտեղ 12 թնդանոթ և ականանետ: Նեղուցի ասիական մասի Համիդիե ու Սուլթանիե և եվրոպական մասի Նամազիե ամրոցներում վերջերս տեղադրվեցին նոր տորպեդներ:250 Այս փաստը վկայում է այն մասին, որ սուլթանական կառավարությունը ոչ մի մտադրություն չուներ իրականացնել բարենորոգումների ծրագիրը և գաղտնի կերպով պատրաստվում էր պաշտպանել նեղուցները Մեծ Բրիտանիայի կամ տերությունների միացյալ նավատորմի հնարավոր հարձակումից:

Հոկտեմբերի 22-ին Քարրին Սոլսբերիին գրում էր, որ ի կատարումն սուլթանական պալատից իջեցված հրահանգների, Տրապիզոնում և Ակիսարում զինվորական իշխանություններն ու ոստիկանությունը քաջալերում են թուրքերին կոտորել հայերին, քանի որ վերջիններս պատրաստվում են հարձակում գործել մահմեդականների վրա: Միաժամանակ մեծ վեզիրը տեղեկացրել էր դեսպանության թարգման Մարինիչին, որ Հալեպի վիլայեթի Անդրինի և Զեյթունի հայերը զինված հարձակում են գործել թուրքերի վրա: Դեսպանի համոզմամբ, քանի որ զեյթունցիները համարվում են հայ ժողովրդի ամենից

247 FO 424/184, No. 118, p. 68; No. 140, p. 95; No. 121, p. 68; No. 124, p 69; No. 126, p. 69.
248 FO 424/184, No. 127, p. 70.
249 FO 424/184, No. 143, p. 104.
250 FO 424/184, No. 144, p. 104.



խիզախ հատվածը, սուլթանական իշխանությունները նախապատրաստում են նրանց ջարդը: Այդ կապակցությամբ նա առաջարկում էր հրաման իջեցնել ծովակալին՝ դեպքերի նման զարգացման պարագայում Ալեքսանդրետ կամ մոտակա այլ նավահանգիստ ռազմանավեր ուղարկելու մասին: Քարրին անհրաժեշտ էր համարում նաև մյուս տերությունների հետ համատեղ գործողությունների միջոցով կանխել սպասվող «աղետը»:251

Բրիտանացի միսիոներ Չամբերսի վկայությամբ, Ակիսարում տեղի ունեցած ջարդի ժամանակ սպանվել էին հիմնականում հայ առևտրականներ և խանութպաններ, կողոպտվել և թալանվել էր շուրջ 200 հայերին պատկանող խանութների մեծամասնությունը: Մարդասպանները հիմնականում Բոսնիայից, Բուլղարիայից և Ռումելիայից գաղթած և շրջանում բնակեցված թուրքեր էին, որոնց գործողությունները ղեկավարվում և քաջալերվում էին տեղի իշխանությունների, ոստիկանների և զինվորների կողմից: Ըստ միսիոների, Ակիսարում հեղափոխական գործունեության ոչ մի հետք գոյություն չուներ, հայերը զինված չէին և բացարձակ ոչ մի դիմադրություն հանդես չեն բերել:252 Ակիսարի դեպքերի կապակցությամբ սուլթանական կառավարությունը շրջաբերական էր հղել արտասահմանյան երկրներում գործող իր բոլոր ներկայացուցչություններին, ուր փաստերն ամբողջովին խեղաթյուրված էին ի վնաս հայերի, որոնք իբր հարձակում են գործել մահմեդականների վրա:253

Հոկտեմբերի 23-ին Քարրին, հիմնվելով Էրզրումից ստացված հյուպատոս Քամբերբատչի տեղեկությունների վրա, հաղորդում էր Սոլսբերիին Երզնկայում տեղի ունեցած հուզումների մասին, որոնց ժամանակ սպանվել էր մի քանի մահմեդական և շուրջ 60 հայ: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, դեպքերը սկսվել էին այն բանից հետո, երբ մի հայ կրակել էր մոլլայի վրա: Միաժամանակ հյուպատոսը տեղեկացնում էր, որ լազերի և քրդերի հրոսակախմբերը շարունակում են թալանել Էրզրումի շրջանի հայկական գյուղերը:254

251 Turkey, No. 2(1896)..., p. 57.
252 FO 424/184, No. 195/1, pp. 126-128.

253 FO 424/184, No. 153, p. 108.
254 FO 424/184, No. 156, p. 109.

354

Հոկտեմբերի 23-ին մեծ վեզիրը հաղորդում է թարգման Մարինիչին, որ Զեյթունի հայերը հարձակում են գործել Անդրինի շրջանի թուրք բնակչության վրա, տարել անասուններին և վիրավորել երկու ոստիկանների ու 30 մահմեդականների: Ներկայումս հայերն իբր հավաքվում են Դերեդինում և նրանց թիվն օրստօրե մեծանում է: Մարինիչը Քարրիի անունից զգուշացրել էր մեծ վեզիրին հայերի ջարդը կանխելու մասին: Մեծ վեզիրը պատասխանել էր, որ իր հերթին համոզել է պատրիարքին հանգստացնող բնույթի հրահանգներ իջեցնել Զեյթունի և Մարաշի հոգևորականներին:255

Նույն օրը Սոլսբերին հանձնարարում է Ռուսաստանում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում հավատարմագրված իր դեսպաններին բանակցել տերությունների կառավարությունների հետ՝ Զեյթունում և այլուր կոտորածները կանխելու նպատակով Բարձր Դռան և նրա միջոցով տեղական իշխանությունների նկատմամբ համատեղ ճնշում գործադրելու հարցով: Միաժամանակ նա տեղեկացնում էր դեսպաններին, որ ծովակալությունը հավանաբար շուտով կստանա լիազորություններ՝ Հալեպի վիլայեթի առափնյա շրջանները ռազմանավեր ուղարկելու վերաբերյալ:256 Միաժամանակ Ֆորին Օֆիսը նամակ է հղում ծովակալությանը, ուր, հաղորդելով Զեյթունում սպասվող թուրքերի և հայերի միջև ընդհարման և դրա արդյունքում հայ բնակչության հնարավոր կոտորածի մասին, առաջարկում էր անհրաժեշտության դեպքում քննարկել Ալեքսանդրետ կամ մեկ այլ մոտակա նավահանգիստ մի քանի ռազմանավ ուղարկելու հարցը: Նշվում էր նաև, որ ճգնաժամի ստեղծման դեպքում Սոլսբերին նպատակահարմար է գտնում, որպեսզի ծովակալին հրամաններ տրվեն անմիջապես դեսպան Քարրիի կողմից: Պատասխան նամակում ծովակալությունն իր դրական կարծիքն էր հայտնում այդ ծրագրի կապակցությամբ:257

Ընդունելով Սոլսբերիի առաջարկը, տերությունների կառավարությունները հանձնարարում են իրենց դեսպաններին բրիտանական դեսպանության հետ համատեղ ձեռնարկել միջոցներ՝ Հալեպի վիլայեթում և այլուր հայերի կոտորածները կանխելու ուղղությամբ: Հոկտեմբերի 24-ին վեց դեսպանությունների թարգմանները հանդիպում են մեծ

_____
255 FO 424/184, No. 155, pp. 108-109.
256 FO 424/184, No. 157, p. 109.
257 FO 424/184, No. 158, p. 109.

355

վեզիրի հետ և ներկայացնում նրան կառավարությունների պահանջը: Քյամիլ փաշան տեղեկացնում է, որ Բարձր Դռան և հայ պատրիարքի կողմից ձեռնարկված միջոցների շնորհիվ խաղաղություն է հաստատված գրեթե բոլոր շրջաններում: Նա նշում է նույնիսկ, որ բարենորոգումների ծրագրի ընդունման առթիվ Այնթափ քաղաքը ներկայումս տոնական լուսավորության մեջ է:258

Նույն առավոտյան Աբդուլ Համիդն ընդունում է դեսպան Քարրիին՝ նրա երկու շաբաթով Անգլիա արձակուրդի մեկնելու կապակցությամբ: Սուլթանը հույս էր հայտնում, որ բրիտանական կառավարությունը բավարարված է հայկական բարենորոգումների առնչությամբ ձեռնարկված քայլերով և համարում է հարցը փակված: Դեսպանը պատասխանում է, որ ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես են իրագործվելու բարենորոգումները և, մասնավորապես, թե ինչ որակի և կարողության մարդիկ են նշանակվելու շրջանների ղեկավարության պաշտոններում և հսկողության հանձնաժողովի կազմում: Աբդուլ Համիդը հավաստիացնում է Քարրիին, որ ամեն ինչ անելու է՝ բարենորոգումներն ՝ազնվորեն՝ իրագործելու ուղղությամբ: Միաժամանակ նա ցանկություն հայտնեց, որպեսզի բրիտանական կառավարությունը հրապարակայնորեն արտահայտի իր դրական կարծիքը բարենորոգումների իրագործման կապակցությամբ, որը հնարավոր է կփոխի անգլիական մամուլի թշնամական կեցվածքն իր և իր երկրի նկատմամբ:259

Հոկտեմբերի 26-ին Անգորայում բրիտանական հյուպատոսի պաշտոնակատար Ֆոնտանան հաղորդում էր դեսպանին, որ այն բանից հետո, երբ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած լուրերը հասնում են քաղաք, մահմեդականները սկսում են գաղտնի կերպով զենք ու զինամթերք ձեռք բերել և բացահայտորեն սպառնալ բնաջնջել բոլոր քրիստոնյաներին: Ստեղծվել էր վեց մոլեռանդ մահմեդականներից կազմված կոմիտե, որը որոշում էր ընդունել հանկարծակի և միաժամանակ հարձակում կազմակերպել քրիստոնյաների դեմ՝ քաղաքի տարբեր թաղամասերում: Ըստ Ֆոնտանայի, Յոզղատում և Կեսարիայում լարվածությունն ավելի մեծ էր՝ հայերը փակել էին իրենց խանութները և պատրաստել բարիկադներ:

258 FO 424/184, No. 160, p. 110.
259 FO 424/184, No. 159, p. 110.

356

Մասնավորապես Յոզղատում վիճակը լարում էին վերջերս Մեքքայից վերադարձած և Աբդուլ Համիդի կողմից շքանշաններ ստացած 28 մոլեռանդ և ազդեցիկ մահմեդականներ:260

Հոկտեմբերի 26-ին մեծ վեզիրը տեղեկացնում էր Քարրիին, որ Մարաշում, Էրզրումում և Բիթլիսում հայերը զինված հարձակումներ են գործել մահմեդական բնակչության և մզկիթների վրա, փորձելով հրահրել պատասխան գործողություններ մահմեդականների կողմից: Դեսպանը Սոլսբերիին գրում էր, որ չի կարող առանց կասկածանքի չվերաբերվել այդ տեղեկատվությանը, քանի որ սուլթանական իշխանության կողմից փորձ էր կատարվում ամեն պարագայում մեղավոր համարել հայերին: Քյամիլ փաշան ավելացնում էր, որ Բարձր Դուռը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները հուզումները կանխելու ուղղությամբ և դիմել է նաև հայ պատրիարքին՝ հոգևորականներին ուղղված շրջաբերականի միջոցով հայ բնակչությանը հանգստացնելու նպատակով:261

Անմիջապես հաջորդ օրը Տրապիզոնում Բրիտանիայի հյուպատոսը Քարրիին հաղորդում էր Գյումուշհանեյում տեղի ունեցած հուզումների մասին, սակայն դեռևս հստակ տվյալներ չուներ իրադարձությունների մանրամասների և սպանվածների թվի վերաբերյալ:262 Իսկ

փոխհյուպատոս Հեմփսոնը զեկուցում էր Մուշից, որ Բիթլիսում տեղի ունեցած ջարդի ժամանակ սպանվել էր շուրջ 630 հայ: Այդ լուրերի հետևանքով Մուշի հայերը գտնվում էին «սարսափելի խուճապի մեջ» և փակել էին իրենց խանութները: Փոխհյուպատոսը համոզված էր, որ ոչ Մուշում, ոչ էլ այլուր հայերը ցանկություն և հնարավորություն չունեին հարձակումներ գործել մահմեդականների վրա:263

Հոկտեմբերի 28-ին արտգործնախարար Սաիդ փաշան տեղեկացնում էր Մեծ Բրիտանիայի ժամանակավոր հավատարմատար Մայքլ Հերբերտին, որ Մարաշում, Զեյթունում, Բիթլիսում, Գյունեշհանեյում, Բաբերդում և Խարբերդում տեղի ունեցած դեպքերի ժամանակ նախահարձակները հայերն են եղել: Նա հայտարարում էր, որ Բիթլիսում հայերը հարձակվել են մահմեդականների վրա մզկիթում և տեղի ունեցած ընդհարումների ժամանակ սպանվել ու վիրավորվել էր 173 մահմեդական և 179 հայ: Ըստ

_____
260 FO 424/184, No. 301/1, p. 189.
261 FO 424/184, No. 172, p. 115.
262 FO 424/184, No. 179, p. 117.
263 FO 424/184, No. 186, p. 119; No. 188, p. 120.

357

Սաիդ փաշայի, վերջերս ստացված տեղեկությունների համաձայն, հայկական 2 հազ. հրոսակախումբը սպանել էր Զեյթունում 5 ոստիկանի և նրանց հրամանատարին:264

Հոկտեմբերի 28-ին հայ պատրիարքը շրջաբերական նամակ է հղում բրիտանական և մյուս տերությունների դեսպանություններին, ուր խնդրում է նրանց միջամտել և կանխել կոտորածների շարունակումը Փոքր Ասիայում: Հերբերտը պատասխանում էր պատրիարքին, որ դեսպանությունը պարբերաբար բողոքներ է ներկայացնում Բարձր Դռանն այդ կապակցությամբ և նախատեսում է քննարկումներ կազմակերպել մյուս տերությունների դեսպանությունների հետ՝ համատեղ քայլեր ձեռնարկելու համար:265

Հայ բնակչության կոտորածների առիթով սուլթանական իշխանություններին բողոք ներկայացնելու Հերբերտի առաջարկության կապակցությամբ հոկտեմբերի 29-ին Սոլսբերին խորհուրդ էր տալիս նրան հանդես չգալ «շատ խիստ» հայտարարությամբ, քանի որ այն կարող էր բացասական ազդեցություն ունենալ և ավելի սրել իրավիճակը շարունակվող ջարդի պայմաններում, ինչպես նաև առիթ տալ թուրքերին, որպեսզի նրանք պահանջեն օգնության դադարեցում «թշվառ» հայերին և ստիպեն միսիոներներին հեռանալ այդ շրջաններից:266

Սոլսբերին կարծես թե կանխագուշակեր սուլթանական իշխանությունների հերթական գործողությունները: Արդեն իսկ հաջորդ օրը Հերբերտը հաղորդում էր, որ Բարձր Դուռը՝ Բիթլիսի իշխանությունների առաջարկով, պահանջել էր միսիոներներին հեռանալ Սասունից: Այդ առիթով թարգման Մարինիչը դատապարտեց այդ որոշումն ու իր ափսոսանքը հայտնեց արտաքին գործերի նախարարին՝ միսիոներների «բարեգործական մտադրությունները» չհասկանալու համար: Նման բողոք է ներկայացնում նաև ԱՄՆ դեսպանությունը, քանի որ միսիոներների մեծամասնությունը ամերիկյան քաղաքացիներ էին:267

Հոկտեմբերի 30-ին Սաիդ փաշան հարցնում էր Հերբերտին, թե արդյոք բրիտանական կառավարությունը առարկություն կունենա՞, եթե ինքը համատեղության կարգով նշանակվի բարենորոգումների իրագործման հսկողության հանձնաժողովի նախագահ: Հերբերտը

264 FO 424/184, No. 190, p. 120.
265 FO 424/184, No. 298, pp. 185-186.
266 FO 424/184, No. 208, p. 142.
267 FO 424/184, No. 297, pp. 184-185.

358

պատասխանում է, որ բրիտանական կառավարությունը առարկելու է նման համատեղության կապակցությամբ, քանի որ նրա պատկերացմամբ, հանձնաժողովի գործունեությունը պետք է կրի վարչական, այլ ոչ թե քաղաքական բնույթ և ամբողջապես անկախ լինի Բարձր Դռնից: Եթե նախարարը կհրաժարվի իր պաշտոնից, շարունակում էր հավատարմատարը, բրիտանական կառավարությունը միայն կողջունի Սաիդ փաշայի նշանակումը հանձնախողովի նախագահի դիրքում: Նախարարը համաձայնում է Հերբերտի տեսակետի հետ: Հավատարմատարը հույս էր հայտնում, որ Բարձր Դուռը կկարողանա անկախ թեկնածություն ընտրել այդ պաշտոնի համար:268

Հոկտեմբերի 31-ին փոխհյուպատոս Հեմփսոնը հաղորդում էր Մուշից, որ վիլայեթում տիրող իրավիճակը շատ լուրջ է և ինքը, մասնավորապես, շատ է վախենում Սասունից: Նա հավատացած էր, որ տեղի իշխանությունները անկարող են հսկողություն սահմանել քրդերի նկատմամբ, որոնք ամենուրեք հարձակումներ են գործում հայկական գյուղերի վրա, թալանում և սպանում հայերին: Հեմփսոնի վկայությամբ, միսիոներների վերաբերյալ որոշումն ընդունվել է այն պարզ պատճառով, որ շրջանի մահմեդականները հավատացած են, որ նրանք հրահրում են Սասունի հայերին հարձակվելու Մուշի մահմեդական բնակչության վրա:269 Նույն օրը Հերբերտը Սոլսբերիին տեղեկացնում էր, որ Հալեպի վիլայեթի մահմեդականների վերաբերմունքը հայերի հանդեպ օրըստօրե ավելի սպառնալից է դառնում, ընդհանուր վիճակը գնալով ավելի է վատթարանում: Զեյթունցիները շրջապատել են թուրքական զորքը Զեյթունի և Մարաշի միջև, սպասվում է զինվորների համալրում Հալեպից: Ըստ Հերբերտի, թուրքական զորքի պարտությունը կարող է ստեղծել լուրջ հետևանքներ:270

Նոյեմբերի 1-ին Հեմփսոնը հեռագրում էր, որ դեռևս պաշտոնական ոչ մի տեղեկություն չունի Բիթլիսում կատարված դեպքերի մասին, սակայն այլ աղբյուրներից ստացված վկայությունների համաձայն, զոհերի թիվը շատ մեծ է, իսկ ընդհանուր վիճակը քաղաքում բավականին լարված և անվտանգ: Քաղաքի միակ հայկական եկեղեցում հաշվել են շուրջ 400 հայի դիակ: Մուշում տիրող վիճակը նույնպես շատ ծանր է: Ըստ

268 FO 424/184, No. 213, p. 143.
269 FO 424/184, No. 221, p. 146.
270 FO 424/184, No. 224, p. 147.

359

փոխհյուպատոսի, մահմեդականները ներկայումս պահանջում են ոչ միայն հեռացնել քաղաքից միսիոներներին, այլև ստիպում են հայերին ստորագրել խնդրագիր՝ իրեն ետ կանչելու մասին:271 Իսկ Էրզրումում հյուպատոսի պաշտոնակատարից նույն օրը ստացված տվյալների համաձայն, քաղաքում տեղի ունեցած անկարգությունների ժամանակ կողոպտվել էին հիմնականում հայկական խանութները, սպանվել էր շուրջ 60 մարդ, որոնց մեծամասնությունը հայեր էին:272

Հերբերտն այցելում է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքին և, տեղեկացնելով նրան, որ բրիտանական հյուպատոսներից ստացված տեղեկատվության համաձայն, Փոքր Ասիայում տեղի ունեցած բազմաթիվ դեպքերի նախահարձակները հանդիսացել են հայերը, խնդրում էր նրան ամեն ինչ անել՝ ժողովրդին հանգստացնելու համար: Ընդունելով հեղափոխական շարժման գոյությունը, պատրիարքը պատասխանում էր, որ չի կարող վերահսկել իրավիճակը, քանի որ այն հրահրվում է ռուս գործակալների կողմից, որոնք ֆինանսավորում են քարոզչությունը Թիֆլիսից: Հերբերտի ճնշման տակ պատրիարքը համաձայնում է հանգստության կոչ պարունակող շրջաբերականներ հղել բոլոր եկեղեցիներին:273

Նույն օրը Բլոկը հանդիպում է ունենում մեծ վեզիրի հետ և իր ուշադրությունը հրավիրում արևելյան շրջաններում տիրող լուրջ իրավիճակի վրա: Մեծ վեզիրը փորձում էր համոզել բրիտանացի դիվանագետին, որ կառավարությունն ամեն ինչ անում է կարգ ու կանոնը վերականգնելու համար և արդեն իսկ համապատասխան հրահանգներ է իջեցրել մահմեդականներին՝ վրեժխնդրությունից խուսափելու ու հանգստությունն ապահովելու կոչերով: Պատկերացնելով, թե ինչ վտանգ է սպառնում Օսմանյան կայսրությանը դեպքերի նման շարունակության դեպքում, նա բարդում էր ողջ մեղքը հայերի վրա, որոնք, գործելով հայկական ընկերությունների հրահանգներով, ամենուրեք նախահարձակ էին և փորձում էին մահմեդական բնակչությանը բռնությունների հրահրելու միջոցով ապահովել տերությունների միջամտությունը: Ըստ մեծ վեզիրի, կառավարությունը մտադիր է կանգնեցնելու շարժումը,

271 Turkey, No. 2(1896)..., p. 79.
272 Նույն տեղում:
273 FO 424/184, No. 237, p. 150.

360

սակայն քանի որ միայն ոստիկանության ուժերով դա անհնար է անել, այն զենքի է կոչել պահեստի 40 գումարտակ, որոնք կկարողանան զսպել մահմեդական բնակչությունը:274

Նոյեմբերի 2-ին Հերբերտը Սոլսբերիին հաղորդում էր, որ Հալեպում բրիտանական հյուպատոս Հենրի Բորնհեմի տեղեկությունների համաձայն, թուրքերը ներխուժել էին Ուրֆայի հայկական թաղամասը և սպանել մեկ հայի: Իշխանությունները ձերբակալում են թուրքերից մի քանիսին, որից հետո արաբներից, քրդերից և թուրքերից կազմված ամբոխը թալանում է հայկական թաղամասը և սպանում մեծ թվով հայերի: Չկարողանալով վերահսկել իրավիճակը, իշխանությունները պահեստային զինվորներ են բերում քաղաք, սակայն նրանք նույնպես միանում են ջարդարարներին:275 Հաջորդ օրը հուզումներ են

սկսվում Հալեպում: Մահակներով զինված մեծաթիվ մահմեդական ամբոխը սկսում է թալանել հայերի տները, սակայն քաղաքի իշխանությունները իրենց միջամտությամբ կարողանում են կանխել կոտորածը:276 Դիարբեքիրից ստացված հեռագրի համաձայն, հայերի կողոպուտն ու ջարդը քաղաքում շարունակվում է երեք օր: 500 քրիստոնյա պատսպարվել էին ֆրանսիական հյուպատոսարանի շենքում: Ֆրանսիայի դեսպանությունը խիստ բողոք է ներկայացնում մեծ վեզիրին, սակայն վերջինս հայտարարում է ինչպես միշտ, որ հուզումները սկսվել են այն բանից հետո, երբ հայերը հարձակվել են մահմեդականների վրա մզկիթում: Հերբերտը հավատացած էր, որ մեծ վեզիրի պատասխանը իրականությանը չի համապատասխանում:277 Իսկ Էրզրումում բրիտանական հյուպատոսի պաշտոնակատարի տեղեկության համաձայն, քաղաքի շրջակայքի գրեթե բոլոր հայկական բնակավայրերը թալանված են մեծաթիվ հրոսոկախմբերի կողմից: Երզնկայում սպանվել էր 260 հայ և ընդամենը մի քանի թուրք, Բիթլիսում՝ 120-ից ավելի հայ և 39 թուրք:278

Չնայած բրիտանական դեսպանության առարկություններին, նոյեմբերի 3-ին Շեֆիկ բեյը նշանակվեց հսկողության հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի մահմեդական անդամներ էին ընտրված Գյուղատնտեսական դրամատան տնօրեն Ջեմալ բեյը, Պետական

274 Turkey, No. 2(1896)..., p. 81.
275 Նույն տեղում, էջ 82:
276 Նույն տեղում, էջ 84:
277 Նույն տեղում, էջ 85:
278 Նույն տեղում, էջ 85-86:

361

խորհրդի անդամ Աբդուլլա բեյը և վճռաբեկ դատարանի քրեական մասի տնօրեն Ջեմալ բեյը: Քրիստոնյա անդամներն էին Պետական խորհրդի անդամ, հույն Կոնստանտին Կարաթեոդորին, գլխավոր հաշվապահի գրասենյակի դատախազ, հայ քաթոլիկ Սարգիս Հովհաննես էֆենդին, Դռան իրավական խորհրդատու, նախկինում արդարադատության փոխնախարար, հայ լուսավորչական Դիլբեր էֆենդին:279

Նոյեմբերի 4-ին Հերբերտը Սոլսբերիին տեղեկացնում էր, որ մայրաքաղաքում անհանգիստ լուրեր են շրջում նախապատրաստվող մահմեդական հեղափոխության մասին, սակայն ակնհայտ է, որ շարժումն այսօր չունի իր ղեկավարները: Մեծ վեզիրն անձամբ ինքն էր բավականին մտահոգված մահմեդականների շրջանում տիրող դժգոհության կապակցությամբ, սակայն համոզված էր, որ սուլթանը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները վտանգից խուսափելու համար:

Նույն օրը կայացած տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների հանդիպման ժամանակ որոշվել էր, որ կայսրությունում տիրող իրավիճակի պայմաններում նպատակահարմար չէ համատեղ գործողությունների ձեռնարկումը սուլթանական կառավարության դեմ՝ օտարերկրյա քաղաքացիների անվտանգության ապահովման տեսանկյունից:280 Միաժամանակ վեց տերությունների ներկայացուցիչները քննարկեցին և Բարձր Դռանը ներկայացրին հետևյալ բովանդակության հայտագրերը. «Վեց մեծ տերությունների ներկայացուցիչներն իրենց տեսակետները փոխանակեցին իրենց բոլոր

գործակալներից ստացված լուրջ կացության վերաբերյալ: Նրանք լուրջ մտահոգված են շրջանների իրավիճակի կապակցությամբ, որտեղ տիրում է բացարձակ անիշխանություն, որը ոչ մի առնչություն չունի հայկական քարոզչության հետ և որը սպառնում է բոլոր ազգությունների քրիստոնյաներին:

Դիարբեքիրում տարբեր դավանանքների քրիստոնյաները, առանց բացառության, դարձան կոտորածների և կողոպուտի զոհեր, առանց որևէ սադրիչ գործողության իրենց կողմից:

Մոսուլում, Բաղդադում, Սիրիայում, որտեղ որ հայ չկա, հուզումները ստացան վտանգավոր բնույթ:

_____
279 Նույն տեղում, էջ 85:
280 FO 424/184, No. 311, p. 192.



Դուռը պետք է որ իմանա, թե ինչ պատահեց 1860 թ. Սիրիայում, որ անիշխանությունը չի կարող մնալ անպատիժ:

Տերությունների ներկայացուցիչները պարտավորվում են ներկայացնել խնդիրն իրենց կառավարություններին, որոնք գործելու են միասին, եթե Դուռն անմիջապես չձեռնարկի արդյունավետ միջոցներ:

Նրանք խնդրում են արտաքին գործերի նախարարին տեղեկացնել, թե ինչ է պատրաստվում անել օսմանյան կառավարությունը՝ ներկայիս անկարգություններին վերջ դնելու նպատակով»:281

Նույն օրը Հերբերտը հանձնարարում է Բլոկին Աբդուլ Համիդի առաջին քարտուղարի միջոցով զգուշացնել «ներկայիս կացության վտանգի» և համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին: Ի պատասխան, երեկոյան սուլթանն իր ուղերձն է փոխանցում Հերբերտին: Նա տեղեկացնում էր, որ արդեն իսկ վաղը թերթերը տպագրելու են բարենորոգումների ծրագիրը, իր կողմից հատուկ հրահանգներ են իջեցված տեղական իշխանություններին՝ մահմեդականների նոր հարձակումները քրիստոնյաների նկատմամբ, և հակառակը, կանխելու, ինչպես նաև հուզումների հեղինակներին պատժելու ուղղությամբ: Դժբախտաբար, շարունակում էր սուլթանը, կարգ ու կանոնը վերականգնելու նպատակով անհրաժեշտ համարվեց ներգրավել մեծ թվով զինվորների, սակայն նրանց հրահանգված էր զենք օգտագործել միմիայն ծայրահեղ դեպքերում: Աբդուլ Համիդը խնդրում էր Հերբերտին, չնայած բրիտանական մամուլի վերաբերմունքին իր հանդեպ, փոխանցել Սոլսբերիին իր հարգանքի հավաստիքները: Նա հավատացած էր, որ Սոլսբերին նույնպես շարունակում է բարեկամական զգացմունքներ տածել անձամբ իր և Թուրքիայի նկատմամբ:282

Այդ օրերին Հերբերտը Սոլսբերիին տեղեկացնում էր Զեյթունում տեղի ունեցող դեպքերի մասին: Հալեպում բրիտանական հյուպատոսի տվյալների համաձայն, թեև իշխանությունները 25 հազ. բանակ էին ուղարկել Մարաշ և Զեյթուն, հայերը, որոնց թիվը կազմում էր շուրջ 8 հազ., գրավել էին Զեյթունի միջնաբերդը, փախուստի մատնել կայազորը,

281 Turkey, No. 2(1896)..., p. 116.
282 FO 424/184, No. 322, pp. 195-196.

363

գերի վերցրել 420 թուրք և բռնագրավել երկու թնդանոթ: Ըստ հյուպատոսի, շրջան ուղարկված է ևս 20 գումարտակ և զորքի ընդհանուր թիվը ներկայումս կազմում է 60 հազ.:283

Զեյթունի և Մարաշի իրադարձությունների կապակցությամբ Հերբերտը պատրիարքի մոտ է ուղարկում դեսպանության քարտուղար Էլիոտին: Վերջինս համոզում է պատրիարքին նոր շրջաբերական ուղարկել հայերով բնակեցված շրջանները՝ նրանց կողմից խաղաղությունն ու հանգստությունն ապահովելու նպատակով: Պատրիարքը կրկնում էր, որ ոչ մի ազդեցություն չունի հեղափոխական շարժման վրա, քանի որ այն ֆինանսավորվում ու զինվում է Թիֆլիսից և ղեկավարվում ռուսական գործակալների կողմից: «Խեղճ, կոտրված հոգու տեր» և «բավականին երկչոտ» արևմտահայությունը, շարունակում էր նա, երբեք ձեռք չէր բարձրացնելու թուրքի վրա: Ըստ պատրիարքի, Եվրոպայի կողմից Սան-Ստեֆանոյի պայմանագիրը տապալելուց հետո Ռուսաստանը ոչինչ չի ձեռնարկում Թուրքիայի քրիստոնյաների վիճակը բարելավելու ուղղությամբ, սպասելով այն օրվան, երբ իրեն, որպես միակ կարող ուժի, կհրավիրեն լուծելու այդ խնդիրը: Պատրիարքը համոզված էր, Ռուսաստանն ինքն է քաջալերում կոտորածները Փոքր Ասիայում այն հույսով, որ պետք է պաշտոնապես հրավիրվի Հայաստանը գրավելու համար: Նա ասում էր, որ թեև ատում է ռուսներին իրենց եսասերության և բռնակալության համար, որոնք ձգտում են ոչնչացնել հայոց լեզուն և կրոնը, սակայն եթե կոտորածները Թուրքիայում շարունակվեն, նա միայն կաղաչի, որպեսզի ռուսական բանակը մտնի Էրզրում և փրկի իր ժողովրդին ջարդից: Համեմատելով Բուլղարիայի և Հայաստանի իրադարձությունները, պատրիարքը նշում էր, որ առաջին դեպքում, երբ բուլղարացիները թուրքերի համատարած ջարդ էին կազմակերպում, Եվրոպան չէր դադարում համակրել նրանց, սակայն երբ որ հուսահատության հասած հայերը մի քանի թուրք են սպանում, տերությունները մեղադրում են ողջ ժողովուրդին և կասկածի տակ դնում նրան օգնելու հարցը:284

Աբդուլ Համիդն այդպես էլ չկատարեց իր խոստումը՝ բարենորոգումների ծրագիրը հրապարակելու վերաբերյալ: Նոյեմբերի 7-ին Հերբերտը սուլթանի առաջին քարտուղարի մոտ է ուղարկում Բլոկին՝ բրիտանական կառավարության դժգոհությունն այդ կապակցությամբ հայտնելու համար: Նրան պատասխանում են, որ սուլթանն այն կարծիքին

283 Turkey, No. 2(1896)..., pp. 104-105.
284 FO 424/184, No 376/1, pp. 217-218.

364

է, որ ծրագրի հրապարակումը ներկայումս բացասական ազդեցություն կունենա իր մահմեդական հպատակների շրջանում, որոնք իրենց ամբողջ զայրույթը կթափեն

քրիստոնյաների վրա: Մամուլում արդեն իսկ տպագրվել է հաղորդագրություն բարենորոգումների ծրագրի ընդունման կապակցությամբ, հայերն այդ մասին քաջատեղյակ են և ամենևին անհրաժեշտություն չկա ծրագրի մանրամասները հրապարակելու մեջ: Նշվում էր նաև, որ թեև տերությունները գոհունակությամբ են ընդունել բարենորոգումների ծրագրի հաստատման լուրը, պատրիարքը չի բարեհաճել այդ առիթով նույնիսկ շնորհակալություն հայտնել Աբդուլ Համիդին:285

Նոյեմբերի 9-ին Լոնդոնի սիտիի քաղաքապետի ավանդական ճաշկերույթին արտասանած իր ճառում Սոլսբերին նշում էր, որ Աբդուլ Համիդի ծրագիրը լիովին կարող էր բավարարել կայսրության հայ բնակչության պահանջները, եթե սուլթանական կառավարությունն անկեղծսրեն և լրջորեն զբաղվեր խոստացված բարենորոգումների իրագործմամբ: Վարչապետի խոսքերի համաձայն, տերությունները միահամուռ կերպով ցանկանում են պաշտպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը՝ նոր հիմքերի վրա Թուրքիայի բարեկարգման պայմանով: Հակառակ պարագայում, շարունակում էր Սոլսբերին, Եվրոպան ինքը կզբաղվի այդ հարցով և կստեղծի նոր քաղաքական կազմավորումներ կայսրության փլատակների վրա: Սոլսբերին զգուշացնում էր սուլթանին, որ «եթե նա չդադարեցնի իր դաժանությունները, ապա իր վրա է թափվելու աստծո ցասումը»:286

Անմիջապես հաջորդ օրը Աբդուլ Համիդն իր հերթական ուղերձն է փոխանցում Հերբերտին: Նա գրում էր. «Ես հույս ունեմ Անգլիայի աջակցության վրա և կրկնում եմ, որ Անգլիան պետք է համոզվի իմ խոստումները կատարելու լուրջ ցանկությանս մեջ: Բարենորոգումները շնորհված են և պատճառ չկա կասկածելու, որ նրանք ազնվորեն չեն իրականացվելու: Իմ և այս երկրի շահերից ելնելով բարենորոգումները պետք է իրագործվեն..., սակայն այն կախում ունի կարգ ու կանոնի վերականգնումից և նրանք կարող են ուժի մեջ մտնել հանգստության պայմաններում: Հայերն իրենց բանսարկություններով ու խռովության կոչերով և անկարգությունների հրահրումով ուշացրել են և դեռևս ձգձգում են

285 Turkey, No. 2(1896)..., pp. 107-108.
286 Bliss E.M. Op. cit., pp. 401-402; Russell G.W.E. Op. cit., pp. 23-24; Grenville J.A.S. Op. cit., p. 47.

365

բարենորոգումները: ...Անկարգությանը վերջ դնելու և բարենորոգումներն ինչքան հնարավոր է շուտ իրագործելու հիմնական նպատակով ես մեծ զոհողության գնով զինակոչել եմ մեծ թվով զորքեր և կարծում եմ, որ երկու ամսից պակաս ժամկետում կկարողանամ...վերականգնել կարգ ու կանոնը: ...Թող Անգլիան օգնի ինձ հայերին բարի խորհուրդ տալու գործում..., ասելով նրանց, որ հակառակ պարագայում բարենորոգումները հնարավոր չի լինելու իրագործել այնքան ժամանակ, որքան նրանք շարունակում են քարոզչությունը և ստեղծում անկարգություններ: Ինչու՞ Անգլիան ինձ չի օգնում: Ես դա չեմ կարող հասկանալ: Արդյոք լորդ Սոլսբերին չի՞ ցանկանում ինձ օգնած լինել: Չնայած իմ բոլոր անկեղծ փորձերին ես տեսնում եմ, որ անգլիական թերթերը դեռ վիրավորում են ինձ: Արդյոք նրանք չեն՞ տեսնում, որ ես լրջորեն ջանում եմ ամեն ինչ իր ճիշտ տեղը դնել: Արդյոք հնարավոր չէ՞ մի բան անել նրանց կանգնեցնելու համար: Ես սպասում եմ, որ Անգլիան ինձ մեծ աջակցություն է ցուցաբերեու»: 287

Նոյեմբերի 11-ին Սոլսբերին Հերբերտին հանձնարարում էր իր հիասթափությունն ու զայրույթը հայտնել սուլթանին բարենորոգումների ծրագրի հրապարակումը հետաձգելու կապակցությամբ: Ըստ վարչապետի, բրիտանական կառավարությունը դեռևս ցանկություն ունի աջակցելու սուլթանական իշխանություններին, սակայն միայն այն դեպքում, երբ նրանք պարտադիր կերպով միջոցներ ձեռնարկեն մահմեդականների հարձակումները քրիստոնյա բնակչության նկատմամբ դադարեցնելու և կանխելու ուղղությամբ: Բրիտանական կառավարությանը հասնող տեղեկությունները վկայում են, շարունակում էր Սոլսբերին, որ սուլթանը մեծապես սխալվում է իր այն համոզման մեջ, թե իբր հայերն են հրահրում այդ անկարգությունները: Հակառակը, բրիտանական կառավարության կողմից ստացված տեղեկատվության համաձայն, շատ դեպքերում թուրքական իշխանություններն ու զորքերն են քաջալերում և նույնիսկ մասնակցում տեղի ունեցող բռնություններին:288

Անմիջապես նույն օրը Հերբերտը փոխանցում է սուլթանին հասցեագրված Սոլսբերիի ուղերձը մեծ վեզիրին: Վերջինս կրկնում էր սուլթանի տեսակետն այն մասին, որ այս պահին, երբ մահմեդականները գտնվում են՝ պաղպաջուն՝ վիճակում, բացարձակ վտանգավոր կլինի հրապարակել բարենորոգումների ծրագիրը մամուլում: Միաժամանակ նա բրիտանական

287 Turkey, No. 2(1896)..., p. 127.
288 Նույն տեղում, էջ 122.



կառավարության օժանդակությունն էր խնդրում կայսրության համար դժվարին այս պահին: Հերբերտը պատասխանում է, որ քանի որ Բարձր Դուռը շարունակաբար անտեսել և մերժել է բրիտանական կառավարության կողմից ներկայացված կառավարման համակարգը բարելավելու վերաբերյալ բոլոր առաջարկները, ամբողջ պատասխանատվությունը երկրում ստեղծված վիճակի համար ընկնում է իր վրա:289

Նոյեմբերի 11-ին Կոստանդնուպոլսում կայացած մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների հերթական հանդիպման ընթացքում Նելիդովը ռուսական կառավարության անունից առաջարկում է քննարկել ռազմանավերը նեղուցներ մտցնելու հարցը:290 Իր համոզմամբ, տերությունների վեց ռազմանավերի ներկայությունը Կոստանդնուպոլսում կարող է դրական ազդեցություն գործել սուլթանական կառավարության վրա, կանխել ճգնաժամի հետագա խորացումը, ինչպես նաև հնարավորություն կտա խուսափելու քաղաքական բարդույթներ առաջացնող գործողությունների կիրառումից: Տեղեկացնելով Սոլսբերիին, որ մյուս տերությունների ներկայացուցիչները բավականին դրական արձագանքեցին ռուս դեսպանի առաջարկին, Հերբերտը խնդրում էր քննարկել այն և ընդունել համապատասխան որոշում:291

Նոյեմբերի 15-ին Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունները ընդունում են ռուս դեսպանի առաջարկը, տրամադրելով մեկական

289 Նույն տեղում, էջ 124:

290 Հատկանշական է, որ դեսպան Նելիդովը հանդիսանում էր Ռուսաստանի կողմից Բոսֆորի և Դարդանելի գրավման կրքոտ կողմնակիցներից մեկը : Առաջին անգամ նա բարձրացրել էր այդ հարցը 1892 թ., հիմնավորելով իր առաջարկը Օսմանյան կայսրության ներքին հարցերին տերությունների և, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի միջամտության վտանգով: 1895 թ. Կոստանդնուպոլսի հայերի ջարդի ժամանակ դեսպանը կրկին բարձրացնում է այդ հարցը , սակայն մերժում է ստանում, քանի որ արտաքին գործերի նախարար Լոբանով-Ռոստովսկին ընդհանրապես չէր ցանկանում այն քննարկել (Хвостов В.М. Проблемы захвата Босфора в 90-х годах X1X в. - Историк-марксист, 1930, т. 20, с. 109-110):
291 Turkey, No. 2(1896)..., pp. 123-124.

367

ռազմանավ՝ 100 հոգանոց անձնակազմով:292 Մյուս օրը Հերբերտին ուղղված հեռագրում Սոլսբերին նույնպես հաստատում է բրիտանական կառավարության որոշումն այդ կապակցությամբ:293 Նեղուցներում տերությունների ռազմածովային ցույց կազմակերպելու նպատակով Մեծ Բրիտանիայի ծովակալությունը տրամադրում է Միջերկրական նավատորմին պատկանող «Կոկատրիս» ռազմանավը:294

Նոյեմբերի 16-ին Գերմանիայում Մեծ Բրիտանիայի դեսպանը հաղորդում էր Սոլսբերիին, որ գերմանական կառավարությունը նույնպես համաձայնել է ռուսական առաջարկի հետ և տրամադրել է այդ կապակցությամբ «Մոլտկե» ռազմանավը:295

Այն ժամանակ, երբ եվրոպական տերությունները զբաղվում էին Կոստանդնուպոլսում ուժի անօգուտ ցուցադրության կազմակերպմամբ, սուլթանը հայտարարում էր, որ Մեծ Բրիտանիան երբեք չի կարողանալու օգնել հայերին իրականացնելու իրենց երազանքներն ու ձգտումները: Աբդուլ Համիդի խոսքերով, եվրոպական համաժողովի կամ ռազմական միջամտության միջոցով ինքնավարություն ստանալու հայերի պատրանքներին պետք է վերջ դնել: Նա հայտարարում էր, որ հայերն այսօր պարծենում են, որ Մեծ Բրիտանիայի նավատորմը ավելացավ ևս վեց ռազմանավով, իսկ ֆրանսիական նավատորմը դուրս է եկել Միջերկրական, համոզված լինելով, թե իբր Եվրոպան այդ ամենն անում է հատուկ իրենց օգուտի համար:296 Աբդուլ Համիդն այդ օրերին համոզված էր, որ եվրոպական տերությունների կողմից միացյալ ռազմական ելույթ տեղի ունենալ չի կարող, քանի որ Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը երբեք չեն կարողանալու որևէ համաձայնության գալ այդ հարցում:297

Այդ ընթացքում բրիտանական դեսպանությունը շարունակում էր տեղեկատվություն ստանալ շրջաններից հայ բնակչության կոտորածների մասին: Նոյեմբերի 15-ին Հերբերտը

---

292 Նույն տեղում, էջ 131:
293 Նույն տեղում, էջ 132:
294 FO 424/184, No. 411, p. 231.
295 Turkey, No. 2(1896)..., pp. 137-138.
296 Նույն տեղում, էջ 176:
297 Williams A.W., Gabrielian M.S. Bleeding Armenia. Its History and Horrors. Nez York, 1896, p. 198.

368

Սոլսբերիին տեղեկացնում էր, որ Ալեքսանդրետում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսի տվյալների համաձայն, երեք օր առաջ թուրքերն ամբողջությամբ ավերել են 300 տուն ունեցող հայկական Օջախլի գյուղը և հրկիզել 30 ագարակ: Հաջորդ օրը նույն ճակատագրին են արժանացել Ուզուլի և Չոք Մարզվան գյուղերը: Ըստ փոխհյուպատոսի, շրջանում տեղակայված կանոնավոր զորքը ոչինչ չի ձեռնարկում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ, իսկ իշխանությունները շարունակում են մեղքը բարդել հայերի վրա:

Հավատարմատարի հաջորդ հեռագրերի համաձայն, Գյուրունում սպանվել է 4 հազ., Խարբերդում՝ 500-800 հայ, Սեբաստիայում՝ 800 հայ և մահմեդական,298 Դիարբեքիրում՝ 200, Արաբկիրում՝ 250 հայ:299

Նոյեմբերի 19-ին Բրայտոնում ունեցած իր հերթական ելույթում Սոլսբերին տեղեկացնում էր հավաքվածներին իրեն ուղղված Աբդուլ Համիդի նամակի մասին, ուր սուլթանն իր դժգոհությունն էր հայտնում վարչապետի նոյեմբերի 9-ի ելույթի կապակցությամբ և խնդրում հանդես գալ թուրք-բրիտանական ավանդական բարեկամական հարաբերություններին համապատասխանող նոր ճառով: Սուլթանը հերթական անգամ խոստանում էր շուտով իրագործել բարենորոգումները և հավաստիացնում, որ անձամբ է հսկելու ծրագրի յուրաքանչյուր հոդվածի կատարման ընթացքը: Նա նաև հույս էր հայտնում, որ բրիտանական կառավարությունը որոշում չի կայացնելու ռազմանավերի կապակցությամբ, ինչը կարող է գրգռել հասարակական կարծիքն իր երկրում և խոչընդոտել բարենորոգումների համար անհրաժեշտ խաղաղության հաստատման գործընթացին: Իր ելույթում սակայն Սոլսբերին ընդգծում էր, որ Հայկական հարցում Մեծ Բրիտանիան գործում է համատեղ մյուս տերությունների հետ և ետ չի նահանջելու այդ քաղաքականությունից:300

Աբդուլ Համիդն ամեն կերպ փորձում էր կանխել տերությունների ռազմանավերի մուտքը նեղուցներ: Նոյեմբերի 19-ին դեսպանություններին հասցեագրված իր ուղերձում նա համոզում էր նրանց ետ կանգնել ընդունված որոշումից, վստահեցնելով, որ ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր միջոցները կարգ ու կանոնը երկրում վերականգնելու ուղղությամբ: Իրենց

298 Turkey, No. 2(1896)..., p. 130.
299 Նույն տեղում, էջ 138:
300 Вестник Европы, 1895, т. 6, кн. 12, с. 862-863; Turkey, No. 2(1896)..., p. 140.

369

պատասխաններում դեսպանությունները խորհուրդ էին տալիս սուլթանին խոչընդոտներ չհարուցել և ստորագրել ռազմանավերի մուտքը նեղուցներ թույլատրող հրովարտակ, ինչը հնարավորություն կտա կանխելու շատ ավելի խիստ միջոցների կիրառումը և խաղաղեցնելու երկրում ստեղծված իրավիճակը: Միաժամանակ Հերբերտն իր մտահոգությունն էր հայտնում Սոլսբերիին այն մասին, որ այս հարցում սուլթանն առանց պայքարի չի զիջելու:301

Աբդուլ Համիդը Հերբերտի մոտ է ուղարկում նոր նշանակված կայսրության արտաքին գործերի նախարար Թևֆիկ փաշային, որը կրկին փորձում էր համոզել, որ սուլթանական կառավարությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները՝ կարգ ու կանոնը երկրում վերականգնելու ուղղությամբ: Ըստ նախարարի, զինակոչի է ենթարկվել 120 գումարտակ, բոլոր վալիները խիստ կարգադրություններ են ստացել պատժել հայերի վրա հարձակում գործած յուրաքանչյուր մահմեդականի, հատուկ լիազորություններով պաշտոնյաներ են ուղարկված Հայաստանի տարբեր շրջաններ՝ իշխանություններին իջեցվող հանձնարարությունների կատարումը ստուգելու նպատակով, հուզումների ընթացքում տուժած ինչպես քրիստոնյաները, այնպես էլ մահմեդականները ստանալու են համապատասխան փոխհատուցում պետությունից, համիդիե գնդերը ներկայումս պաշտպանում են հայ բնակչությունը մահմեդականների հարձակումներից:302 Միաժամանակ Հերբերտը տեղեկատվություն է ստանում Ռուսաստանի դեսպանից այն մասին, որ տեղական իշխանություններին իջեցված հանձնարարականների հետ մեկտեղ սուլթանական պալատից նրանց գաղտնի կերպով հրահանգվել է ոչ մի պարագայում կրակ չարձակել մահմեդականների վրա:303

Նոյեմբերի 20-ին Հերբերտի հանձնարարությամբ Բլոկը Աբդուլ Համիդին է հանձնում Սոլսբերիի ուղերձը, ուր վերջինս բրիտանական կառավարության անունից խնդրում էր նրան ներում շնորհել և գթասրտությամբ վերաբերվել ապստամբ զեյթունցիներին: Սուլթանը պատասխանում էր, որ ինչպես իր նախորդներն, այնպես էլ ինքը միշտ գթասրտություն են հանդես բերել նրանց հանդեպ, ովքեր խնդրել են իրենց ներում շնորհել: Եթե զեյթունցիներին որոշվի ներում շնորհել, շարունակում էր սուլթանը, դա պետք է արվի այնպես, որպեսզի

301 Turkey, No. 2(1896)..., p. 141.
302 FO 424/184, No. 554, pp. 198-299.
303 FO 424/184, No. 520, p. 273.



օսմանյան կառավարության պատիվը չարատավորվի: Ըստ Աբդուլ Համիդի, զեյթունցիները պետք է դիմեն նման խնդրանքով կամ կառավարությանը կամ Մարաշի պարետին: Սակայն ամեն պարագայում, նշում էր սուլթանը, ինքն արդեն հրամաններ է տվել շրջանի զինվորական և քաղաքացիական իշխանություններին՝ ամեն կերպ փորձել վերականգնել կարգ ու կանոնը խաղաղ միջոցներով և վնաս չհասցնել նրանց, ովքեր չեն դիմադրելու զորքին: Նա նույնպես հանձնարարել էր Մարաշի պարետին, որն արդեն պատրաստ էր շարժվել դեպի Զեյթուն, սպասել ևս երկու օր, որի ընթացքում հնարավոր է զեյթունցիները հանձնեն իրենց զենքը, ինչպես նաև հուզումների մեղավորներին: Աբդուլ Համիդը խնդրում էր նաև Սոլսբերիին խորհուրդ տալ հայոց պատրիարքին, որպեսզի վերջինս հանգիստ մնալու և բարենորոգումներով բավարարվելու կոչ ուղղի հայերին:304

Նոյեմբերի 20-ին Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան Գոշենը տեղեկացնում էր Սոլսբերիին Լոբանով-Ռոստովսկու հետ Հայկական հարցի շուրջ ունեցած իր զրույցի մասին: Վերջինս նշում էր, որ թեև տերություններն իրավունք ունեն պահանջելու սուլթանից վերականգնելու կարգ ու կանոնը կայսրության շրջաններում, սակայն ներկայումս, երբ նրա հպատակները գտնվում են չափազանց գրգռվածության վիճակում,

սուլթանին պետք է ժամանակ տալ և վնաս չտալ նրա «բարոյական հեղինակությանը»: «Միջամտության սպառնալիքները», շարունակում էր նախարարը, միայն քայքայում են սուլթանի հեղինակությունը, առանց որի նա ոչինչ չի կարողանալու անել: Դեսպանը համաձայնում էր, որ «միջամտությունը» պետք է պահել որպես վերջին միջոց, սակայն ներկայումս, ըստ իրեն, սուլթանը չի տիրապետում իրավիճակին ու հեղինակություն էլ չունի երկիրը խաղաղեցնելու համար և եթե Փոքր Ասիայի «սարսափելի տեսարանները» կրկին շարունակվեն, տերությունները պետք է կատարեն իրենց պարտականությունները, վերջ դնելով նման «անտանելի» կացությանը: Լոբանով-Ռոստովսկին պատասխանում է դեսպանին հետևյալ կերպ. «Իմ փորձառությունն Արևելքում հուշում է ինձ, որ ներկայումս տեղի ունեցող նման հուզումները շուտով մեռնում են բնական մահով, բացառությամբ այն դեպքերի, երբ ինչ-որ մի տերություն, ելնելով իր սեփական քաղաքական շահերից, հրահրում է ընդդիմադիր տարրերին շարունակել գործողությունը»:305 Ռուսաստանի արտգործնախարարն «ինչ-որ

_____
304 FO 424/184, No. 613/1, p. 328.
305 FO 424/184, No. 570, p. 307.

371

տերության» տակ նկատի ուներ Մեծ Բրիտանիային, իսկ «ընդդիմադիր տարրերի»՝ հայերին: Ռուսական կառավարությունը համոզված էր, որ հայկական շարժումը հրահրվում և կազմակերպվում է Լոնդոնի կողմից, որը փորձում է այն որպես միջամտության լծակ օգտագործել ինչպես սուլթանական իշխանությունների, այնպես էլ Ռուսաստանի դեմ:

տերության» տակ նկատի ուներ Մեծ Բրիտանիային, իսկ «ընդդիմադիր տարրերի»՝ հայերին: Ռուսական կառավարությունը համոզված էր, որ հայկական շարժումը հրահրվում և կազմակերպվում է Լոնդոնի կողմից, որը փորձում է այն որպես միջամտության լծակ օգտագործել ինչպես սուլթանական իշխանությունների, այնպես էլ Ռուսաստանի դեմ:Զգտելով խուսափել քննարկման խորացումից, Գոշենը պատասխանում է, որ բարեբախտաբար դա չի վերաբերվում ներկայիս իրավիճակին, քանի որ տերությունները համատեղ կերպով համաձայնության են եկել հայկական բարենորոգումների հարցում: Սակայն Լոբանով-Ռոստովսկին շարունակում է քննարկումը, անդրադառնալով Փոքր Ասիայում տերությունների ռազմական միջամտության գործնական դժվարություններին: Առաջին հերթին նա նկատի ուներ տարածքի մեծությունը, ուր տեղի են ունենում ներկայիս իրադարձությունները: Այդ դժվարությունը գոյություն չուներ, շարունակում էր նախարարը, երբ Եվրոպայի կողմից Ֆրանսիային մանդատ տրվեց Դամասկոսում վիճակը վերականգնելու համար, քանի որ խոսքը գնում էր մեկ շրջանի մասին: Սակայն ներկայիս պարագայում, նշում էր Լոբանով-Ռոստովսկին, երբ հուզումները տեղի են ունենում Զեյթունում, այնուհետև Դիարբեքիրում և տարածվում այլուր, տերությունները չեն կարողանալու բարեհաջող կերպով միջամտել, քանի որ այդ գործողության համար պետք է գալու հսկայական մի բանակ: Ռուս նախարարը վախենում էր նաև, որ ռազմական միջամտության սպառնալիքները կարող են ոգևորել հայերին նոր գործողությունների, որոնք կհրահրեն թուրքերին նոր արյունահեղությունների և իրապես կստեղծեն տերությունների միջամտության հնարավորություն:306

Նոյեմբերի 21-ին Հերբերտը Սոլսբերիին տեղեկացնում էր Գերմանիայի դեսպանի և Աբդուլ Համիդի միջև կայացած հանդիպման մասին, որի ընթացքում դեսպանը խստագույնս պահանջել էր ենթարկվել տերությունների խորհուրդներին՝ կայսրությունում կարգ ու կանոնը վերականգնելու կապակցությամբ, ակնարկելով ձեռնարկել այնպիսի համատեղ գործողություններ, որոնց արդյունքում սուլթանը կարող է նույնիսկ գահնկեց լինել: Դեսպանը փոխանցել էր Աբդուլ Համիդին կայսր Վիլհելմի ուղերձը, ուր մասնավորապես ասվում էր. Գերմանիան ամբողջովին համաձայն է Եվրոպայի հետ ինչ կվերաբերի Արևելյան հարցին և կայսրը զգուշացնում է Նորին Մեծությանը, որ նրան տապալելու մեծ վտանգ գոյություն ունի,

306 Նույն տեղում, էջ 308:



եթե նա չընդունի քաղաքական այն ուղեգիծը, որը կվերականգնի Եվրոպայի վստահությունը: Սուլթանը խոստանում է դեսպանին այսուհետ խորհրդակցել տերությունների ներկայացուցիչների հետ և վերականգնել այսպիսով նրանց վստահությունը:307

Այդ հանդիպման արդյունքում տեղի է ունենում տերությունների ներկայացուցիչների հերթական հանդիպում, ուր որոշվում է Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ, ավագ դեսպան Մոնսոնի միջոցով սուլթանի ուշադրությունը հրավիրել տերությունների հետևյալ խորհուրդների վրա. պաշտոններից հեռացնել հայ բնակչության կոտորածների համար պատասխանատու բոլոր պաշտոնյաներին, հետաքննություն անցկացնել բռնություններին զինվորների մասնակցության կապակցությամբ և պատժել մեղավորներին, հրապարակել մամուլում վալիներին և զինվորական հրամանատարությանը վերջերս իջեցված հանձնարարությունները՝ կարգ ու կանոնը վերականգնելու ուղղությամբ, արձակել համապատասխան Հաթթ սուլթանի կողմից, ուր պետք է հնազանդության ու անկարգություններից խուսափելու կոչ արվի իր հպատակներին, լուծել նեղուցներ տերությունների ռազմանավերի մուտքի հարցը, Կոստանդնուպոլսի քրիստոնյա բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով քաղաքի տարբեր շրջանների համար նշանակել պատասխանատու զինվորական հրամանատարներ:308

Նոյեմբերի 22-ին Աբդուլ Համիդը Հերբերտի մոտ է ուղարկում Միդհաթ փաշայի հետևորդ, կայսրության ազատականացման կողմնակից Իսմաիլ Քեմալ բեյին: Վերջինս նշում էր, որ սուլթանը «զզվել է Ռուսաստանից, որին մինչև վերջերս հավատում էր և ցանկանում է շրջվել դեպի Անգլիա և ընդունել ավելի լիբերալ քաղաքականություն»: Դրա փոխարեն սուլթանն առաջարկում էր բրիտանական կառավարությանը հրաժարվել ռազմածովային ցույց կազմակերպելու որոշումից, որը, իր համոզմամբ, ուղղված է անձնապես իր դեմ: Հերբերտը պատասխանում էր, որ քաղաքականության նման փոփոխությունը մեծ ազդեցություն կարող է ունենալ վստահության վերականգնման ուղղությամբ, սակայն տերությունները համոզված կերպով շարունակելու են պնդել ռազմանավերի մուտքի իրենց իրավունքի վրա, որն ուղղված է ոչ թե սուլթանի դեմ, այլ

307 FO 424/184, No. 607, p. 323.
308 FO 424/184, No. 556, pp. 299-300.

373

նպատակ է հետապնդում հանգստացնելու և վերականգնելու օտարերկրյա համայնքների վստահությունը: Եթե նման փոքր հարցը չստանա իր լուծումը, շարունակում էր հավատարմատարը, այն նոր դժվարություններ կստեղծի սուլթանի համար և ավելի կգրգռի հասարակական կարծիքն ինչպես կայսրությունում, այնպես էլ Եվրոպայում: Հերբերտն առաջարկում էր, որպեսզի սուլթանը, իր իսկ շահերից ելնելով, առանց հետաձգման թույլ տա ռազմանավերին մուտք գործել Կոստանդնուպոլիս: Զրույցի վերջում Հերբերտը խորհուրդ է տալիս Իսմաիլ Քեմալ բեյին հայտնել Աբդուլ Համիդին, որպեսզի վերջինս նման առաջարկներով դիմի ոչ միայն բրիտանական, այլև մյուս տերությունների կառավարություններին, որոնք ռազմանավերի հարցում գործում են համատեղ:309

Նույն օրը Հերբերտը Սոլսբերիին տեղեկացնում էր, որ սուլթանական պալատի պաշտոնյաները և ոստիկանության ներկայացուցիչները այցելում են հայերի տները Պերայում ու Ստամբուլում և ցուցակագրում նրանց նոր համընդհանուր ջարդ կազմակերպելու նպատակով: Նման տեղեկատվություն էր ստանում այդ օրերին նաև Ռուսաստանի դեսպանությունը: Հերբերտն անմիջապես ուղերձ է հղում Աբդուլ Համիդին, ուր նշում էր, որ նման փաստերը վտանգում են հասարակական անդորրը և պահանջում էր ձեռնարկել համապատասխան միջոցներ: Նա հիշեցնում էր սուլթանին տերությունների դաշինքի մասին և զգուշացնում, որ նոր հուզումները Կոստանդնուպոլսում կստեղծեն եվրոպական ռազմական միջամտության հնարավորություն և կվտանգեն Օսմանյան կայսրության հետագա գոյությանը:310

Նոյեմբերի 25-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած դեսպանների հերթական հանդիպումը նվիրված էր սուլթանական կառավարության կողմից ռազմանավերի մուտքի թույլտվության ձգձգմանը: Քննարկման արդյունքում որոշվեց պնդել պայմանագրերով ամրագրված իրենց իրավունքի վրա և եթե սուլթանական կառավարությունն այս անգամ էլ հրաժարվի, նրանք կսահմանեն ժամկետ, որից հետո կձեռնարկվեն այդ իրավունքը ապահովող միջոցառումներ:311

_____
309 FO 424/184, No. 617, p. 330.
310 FO 424/184, No. 618, p. 331.
311 FO 424/184, No. 567, p. 306.

374

Հաջորդ օրը Մեծ Բրիտանիայում Թուրքիայի ժամանակավոր հավատարմատար Մորել բեյը Բարձր Դռան անունից խնդրում էր Սոլսբերիին հրաժարվել բրիտանական ռազմանավի Կոստանդնուպոլիս մտցնելու պահանջից, քանի որ եվրոպական քաղաքացիներին ոչ մի վտանգ չի սպառնում: Նա ընգծում էր, որ «մահմեդական բնակչության մոլեռանդ զգացմունքներն ուղղված էին միմիայն հայերի դեմ» և չէին վերաբերում ոչ արտասահմանցիներին, ոչ էլ մյուս քրիստոնյաներին: Հրաժարվելով քննարկելու հավատարմատարի հետ ռազմանավերի օգտագործման նպատակները, Սոլսբերին հայտարարում է, որ բրիտանական կառավարության քաղաքականությունն

այդ հարցում առայժմ մնում է անփոփոխ:312 Նույն պատասխանը Սոլսբերին տալիս է Ռուսաստանի դեսպան Եգոր Ստաալին313, որն իր կառավարության անունից առաջարկում էր հետաձգել իր իսկ կողմից առաջարկված ռազմանավերի խնդրի արծարծումը:314

Նույն օրը մեծ վեզիրը Քարրիին տեղեկացնում էր, որ կառավարությունը հանձնարարական է իջեցրել Մարաշի իշխանություններին, որպեսզի վերջիններս կազմեն քրիստոնյա նշանավոր մարդկանցից բաղկացած հանձնաժողով, որը պետք է մեկնի Զեյթուն և բանակցի նրա բնակիչների հետ: Դեսպանը դրական էր գնահատում Բարձր Դռան որոշումը:315

Նոյեմբերի 27-ին Աբդուլ Համիդն առաջարկում էր Քարրիին Շեֆիկ փաշայի փոխարեն բարենորոգումների իրագործման հսկողության հանձնաժողովի նախագահ նշանակել Դիարբեքիրի վալի Սիրրի փաշային: Նկատի առնելով վերջինիս դրական հատկանիշները, դեսպանն առաջարկում էր Սոլսբերիին համաձայնել նրա թեկնածության հետ:316

Նոյեմբերի 29-ին Աբդուլ Համիդը հրավիրում է Քարրիին զրույցի: Խոսելով բարենորոգումների մասին, սուլթանը նշում էր, որ դժբախտաբար տերությունների մոտ

312 Turkey, No. 2(1896)..., p. 166.
313 Ստաալ Եգոր - ռուս դիվանագետ: 1884-1903 թթ.՝ դեսպան Մեծ Բրիտանիայում, 1889 թ. Հաագայի համաժողովի նախագահ:
314 Նույն տեղում, էջ 170-171:
315 Նույն տեղում, էջ 170:
316 FO 424/184, No. 586, p. 314.

375

այնպիսի տպավորություն է ստեղծված, որ ինքը անկեղծ չէ դրանք առանց ուշացման իրագործելու իր մտադրությունների մեջ: «Նման միջոցառումը, - շարունակում էր նա, - բնականաբար, պահանջում է երկարատև քննարկում, սակայն..., լինելով մեկ անգամ հավանություն ստացած և ընդունված, այն պետք է ամբողջությամբ իրագործվի: Այնուամենայնիվ, առաջին անհրաժեշտ գործը դա կարգ ու կանոնի վերականգնումն է, որից հետո միայն կարելի կլինի կիրառել բարենորոգումները»: Ըստ սուլթանի, առաջին քայլերն արդեն կատարված են. ընտրված են թեկնածուներ հսկիչների, վալիների և մյութեսարիֆների պաշտոնների համար, Շաքիր փաշան սկսել է կազմավորել քրիստոնյա ոստիկանությունը վեց վիլայեթներում, սակայն գործընթացն ուշացնում են տեղի ունեցող հուզումները:

Քարրին ասում էր, որ բրիտանական կառավարությունը գոհունակությամբ է ընդունել բարենորոգումների հաստատման մասին սուլթանի որոշումը, սակայն, դժբախտաբար, վերջին իրադարձությունները կորցրեցին գոյություն ունեցող վստահությունը: Բարենորոգումների ծրագրի ընդունմանը հետևեցին կոտորածներ հայկական շրջաններում, իրենց տներն ու ունեցվածքը կորցրած և անօգնական մնացած հազարավոր մարդիկ սովի են դատապարտված ձմռան ընթացքում: Դեսպանը տեղեկացնում էր սուլթանին բռնի կերպով հայերին կրոնափոխության ենթարկման փաստերի, ինչպես նաև

Մուշում բրիտանական փոխհյուպատոսից ստացված հեռագրի մասին, որի համաձայն, Բիթլիսի իշխանությունները ուժի սպառնալիքի տակ ստիպել են քաղաքի հայերին հեռագիր ուղարկել Կոստանդնուպոլիս, որ տեղի կոտորածները սկսել են հայերը:

Սուլթանն անմիջապես խոստանում է հետաքննություն անցկացնել նշված փաստերի կապակցությամբ և տեղեկացնել դեսպանությանն արդյունքների մասին:

Քարրին շարունակում էր, որ բրիտանական կառավարությունը դժգոհ է սուլթանական կառավարությունից հիմնականում երկու հանգամանքի կապակցությամբ: Առաջինը՝ դեռևս ոչ ոք չի պատժվել կոտորածների կազմակերպման համար: Երկրորդը՝ սուլթանը դեռևս չի ստորագրել խոստացված Հաթթը բարենորոգումների մասին:

Անիմաստ համարելով Հաթթի հրապարակումը, Աբդուլ Համիդն ասում էր, որ գործն ավելի կարևոր է, քան խոսքերը կամ հայտարարությունները և եթե ինքը որոշում է ընդունել բարենորոգումների իրագործման վերաբերյալ, նա անպայմանորեն այն պետք է կատարի:

Քարրին փորձում էր բացատրել սուլթանին, որ Հաթթի հրապարակումը չափազանց կարևոր է հետևյալ երեք հանգամանքների համար. 1/ համոզել տերություններին սուլթանի



անկեղծության մեջ. 2/ համոզել հայերին, որ իրենք իրապես ստացել են բարենորոգումները. 3/ համոզել մահմեդականներին, որ բարենորոգումներն իրենց շահերը վիրավորող ոչինչ չեն պարունակում: Չհամաձայնելով վերջին երկու փաստարկների հետ, Աբդուլ Համիդն ամեն դեպքում խոստանում է կրկին քննարկել հարցը մեծ վեզիրի ու նախարարների հետ և արդյունքների մասին տեղեկացնել դեսպանին:

Այնուհետև Քարրին անդրադառնում է «ստացիոնարների»՝ տերությունների ռազմանավերի հայտնի խնդրին և ափսոսանք հայտնում, որ սուլթանը նման կասկածամտությամբ է ընկալում այն: Ըստ դեսպանի, Փարիզի պայմանագրի համաձայն, յուրաքանչյուր տերություն իրավունք ունի Կոստանդնուպոլիս մտցնել երկու «ստացիոնար», որոնց նպատակն է պաշտպանել օտարերկրյա համայնքների անվտանգությունը: Չնայած այն բանին, շարունակում էր դեսպանը, որ սուլթանական կառավարությունը հավաստիացնում է, որ նրանց անվտանգությունն ապահովված է, այնուամենայնիվ, վերջին իրադարձությունները ստեղծել են անվստահության մթնոլորտ, որը պետք է կարգավորվի ռազմանավերի ներկայությամբ: Ըստ դեսպանի, տերությունների կողմից ընդունված որոշումը ելնում է ոչ միայն արտասահմանցիների, այլև Թուրքիայի շահերից, քանի որ նոր պայթյունի դեպքում այս անգամ նավատորմերն են մտնելու Կոստանդնուպոլիս:

Չհամաձայնելով այդ տեսակետի հետ, Աբդուլ Համիդը նշում էր, որ ոստիկանության նախարարության համոզմամբ, ռազմանավերի առկայությունը ոչ թե կկանխի ընդվզումներն, այլ հակառակը, կհրահրի նորերը: «Վտանգ գոյություն չունի: Արդյոք երբևիցե արտասահմանցու քթից արյուն հոսել՞ է մայրաքաղաքում կամ շրջաններում» - հարցնում էր նա դեսպանին: Սուլթանը պնդում էր, որ բրիտանական կառավարությունը հրաժարվի այդ գաղափարից, որին կհետևեն նաև մյուս տերությունները:

Քարրին կրկին անգամ նկատում էր, որ «ստացիոնարները» «...հարկավոր են տերություններին ոչ թե ռազմածովային ցույց կազմակերպելու, այլ վստահությունը վերականգնելու և Նորին Մեծությանն աջակցելու՝ կարգ ու կանոնը պահպանելու նպատակով: Ուստի որպես Նորին Մեծության և Թուրքիայի բարեկամ ես լրջորեն խնդրում եմ թույլ տալ նավերին մտնել Դարդանել: Նրանք կգան մեկը մյուսի ետևից և ուշադրություն չեն գրավի...»:

377

Կրկին անգամ խնդրելով բրիտանական կառավարությունից հրաժարվել այդ որոշումից, Աբդուլ Համիդն այնուամենայնիվ խոստանում է քննարկել այդ հարցը և տեղեկացնել դեսպանին:317

Դեկտեմբերի 1-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարարն ասում էր Քարրիի, որ Աբդուլ Համիդը դեռևս իր հույսը չի կորցրել, որ Անգլիան վերականգնելու է բարեկամությունն իր երկրի հետ և ստիպելու է մյուս տերություններին նույնպես հանել իրենց պահանջները ռազմանավերի վերաբերյալ:318 Հաջորդ օրը դեսպանը գրում էր Սոլսբերիին, որ, իր կարծիքով, ժամանակը եկել է, որպեսզի տերությունների ներկայացուցիչների վերջին հանդիպման ընթացքում ընդունված որոշման համաձայն, ժամկետ սահմանվի սուլթանական կառավարության կողմից ռազմանավերի համար թույլտվություն ստանալու համար:319 Խոսելով «ստացիոնարների» խնդրի շուրջ Մեծ Բրիտանիայում Ավստրո-Հունգարիայի դեսպանի հետ, Սոլսբերին նշում էր, որ քանի որ ռուսական կառավարությունը մերժում է սուլթանի նկատմամբ որևէ ճնշում գործադրելու փորձերը, տերությունները ստիպված են լինելու, Բարձր Դռան կողմից թույլտվությունը չստանալու դեպքում, կամ լիովին ընդունել իր հաղթանակը կամ էլ հայտարարել, որ եթե նեղուցներ առանց թույլտվության մտնող ռազմանավերի վրա կրակ բացվի, ապա այն դիտվելու է որպես «թշնամական գործողություն», որին կհետևեն պատժամիջոցներ կայսրության տարբեր շրջաններում:320 Դեկտեմբերի 3-ին Ավստրո-Հունգարիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Մոնսոնը հաղորդում էր Սոլսբերիին արտգործնախարար Գոլուխովսկու հետ ունեցած իր հանդիպման մասին: Վերջինս կարծիք էր հայտնում, որ սուլթանն այլևս համառել չի կարող, քանի որ Ռուսաստանը, իր տեղեկությունների համաձայն, հանել է իր առարկությունները թույլտվություն պահանջելու վերաբերյալ: Հնարավոր է, շարունակում էր նա, որ մի քանի օրվա ընթացքում սուլթանը թույլ տա նավերին մտնել Կոստանդնուպոլիս: Նախարարի

317 Turkey, No. 2(1896)..., pp. 198-200.
318 FO 424/184, No. 603, p. 322.
319 FO 424/184, No. 643, p. 353.
320 FO 424/184, No. 645, p. 354.

378

համոզմամբ, Ռուսաստանը վախենում էր ջարդել «եվրոպական համերգը», քանի որ այդ դեպքում ամբողջությամբ կարձակի Անգլիայի ձեռքերը:321

1895 թ. ավարտին հստակորեն բացահայտվեց Մեծ Բրիտանիայի արևելյան քաղաքականության ճգնաժամը: Նրա քաղաքականությունն Օսմանյան կայսրության նկատմամբ մշտապես նախատեսում էր բարենորոգումների իրագործման պահանջ հպատակ քրիստոնյա ժողովուրդների համար՝ սուլթանական կառավարությանը վախեցնելու և իր հովանավորությունն ու շահերի իրականացումն ապահովելու նպատակով: Հովանավորությունն ու բարենորոգումները հանդիսանում էին 1878 թ. Կիպրոսի կոնվենցիայի քաղաքականության բովանդակությունը: Եվ հենց այդ առումով 1895 թ. ճգնաժամային շրջան հանդիսացավ բրիտանական արևելյան քաղաքականության համար: Հայերի ողբերգությունը վերջնականապես կործանեց բրիտանական կառավարության հույսերը՝ բարենորոգումների գործընթացի նկատմամբ հսկողություն սահմանելու կապակցությամբ: Սուլթան Աբդուլ Համիդի խորամանկ քաղաքականությունը, հայկական կոտորածների ժամանակավոր դադարն ու այդ ընթացքում Հայկական հարցում տերությունների միջև լիարժեք համաձայնության անհնարինությունը նշանակում էին, որ բրիտանական դիվանագիտության քաղաքականությունը չկարողացավ ապահովել որևէ դրական կամ գործնական արդյունքներ: Նույնիսկ «ստացիոնարների» թույլտվությունը հետագայում ստանալու և ռազմանավերը Դարդանել մտցնելու պարագայում չարձանագրվեց որևէ դրական միտում բարենորոգումների իրագործման և կոտորածների դադարեցման հարցում, որում Սոլսբերին մեղադրում էր իր նախորդներին՝ Ռոզբերիին և Քիմբերլիին, որոնք չկարողացան կանխորոշել Ռուսաստանի և Ֆրանսիայի դիրքորոշումը բարենորոգումների քաղաքականության հանդեպ:322

Սոլսբերին հուսախաբություն ապրեց այն ժամանակ, երբ վերջնականապես պարզ դարձավ, որ ռուսական կառավարությունն իրեն չի սատարելու Հայկական հարցում: Ռուսաստանում մեծ կասկածանքով էին վերաբերվում բրիտանական քաղաքականությանը:

_____
321 FO 424/184, No. 655, p. 361.
322 Penson L.M. The Principles and Methods of Lord Salisbury`s Foreign Policy. - Cambridge Historical Journal, 1935, vol. 87-106, p. 101; Papadopoulos G.S. England and the Near East. 1896-1898. Thessalonika, 1969, pp. 45-47; Grenville J.A.S. Op. cit., p. 50.

379

Ռուսաստանը չէր ցանկանում Մեծ Բրիտանիայի հետ համատեղ հանդես գալ Հայկական հարցում, քանի որ վախենում էր բրիտանական նավատորմի հայտնվելուց Կոստանդնուպոլսում, ինչպես նաև ինքնավար Հայաստանի կազմավորումից, որը կարող էր անմիջապես հայտնվել բրիտանական քաղաքականության ոլորտում և սպառնալիք դառնալ իր հայաբնակ շրջանների համար:323

Իր կողմից Սոլսբերին նույնպես մշտապես պատրաստ էր անմիջապես հակազդելու և կանխելու ռուսական նավատորմի հարձակումը Կոստանդնուպոլսի վրա: Թեև նա կասկածանքով և թերահավատորեն էր վերաբերվում Օսմանյան կայսրության ստատուս քվոն երկար ժամանակ պահպանելու և սուլթանական իշխանության ինքնակալ համակարգի փոփոխության հնարավորությանը, չբացառելով նաև այն հանգամանքը, որ Ղրիմի պատերազմի շրջանի հակառուսական քաղաքականությունը սխալ դուրս եկավ,

այնուամենայնիվ շարունակում էր հավատալ և հուսալ, որ Մեծ Բրիտանիայի ավանդական՝համբավն ու հեղինակությունը՝կարողանալու են դեռևս ձեռքից բաց չթողնել Կոստանդնուպոլիսը: Վարչապետը փորձում էր այդ օրերին համոզել կառավարությանը, որպեսզի Քարրիին իրավունք տրվի նեղուցներ մտցնել Միջերկրականի ողջ նավատորմը՝ սուլթանին սարսափի մեջ պահելու և բրիտանական ազդեցությունը վերականգնելու նպատակով, սակայն այդ առաջարկն այդպես էլ չանցավ: Ծովակալության փորձագետներն այն կարծիքին էին, որ ռուս-ֆրանսիական դաշինքը թեքել է ռազմածովային հավասարակշռությունը Միջերկրականում ոչ Բրիտանիայի օգտին:324 Դեկտեմբերի 3-ին Սոլսբերին գրում էր Գոշենին. «Ես ամենևին էլ Ռուսաստանը Կոստանդնուպոլիսը գրավելուց պահելու քաղաքականության կողմնակից չեմ: Հակառակը, ես մտածում եմ, որ Անգլիայի ղեկավարները, որոնց գործունեությունը բերեց Ղրիմի պատերազմին, սխալ են թույլ տվել: Սակայն Կոստանդնուպոլսի պաշտպանությունը ռուսների գրավումից մոտավարապես կես դար, եթե ոչ ավելի, հանդիսանում է մեր քաղաքական հավատամքը... Մեր փառքն ու համբավը կախված են դրանից... Հրաժարումն այդ սկզբունքից կբերի սարսափելի

---

323 МИД РФ, Политический архив, д. 3440, 1895 г., л. 5-23; д. 3448, л. 56-70.
324 Clayton C.D. Britain and the Eastern Question: Missolonghi to Gallipoli. London, 1971, pp. 185-186; Taylor R. Salisbury. London, 1975, p. 169.

380

հետևանքների... Քարրիին քարտ բլանշ տրամադրելու մասին կաբինետի մերժումը նշանակում է...հանձնել Կոստանդնուպոլիսը Ռուսաստանին: Եթե Ռուսաստանը վերցնի այն մեզնից շուտ, ապա դարդանելյան ամրոցներն իր զինվորներով անառիկ կդարձնեն քաղաքը. սակայն, մյուս կողմից, եթե մենք առաջինները հայտվենք այնտեղ, մենք կդառնանք շատ ավելի ուժեղ, իսկ մեր ձայնը կլինի շատ ավելի ծանրակշիռ...»:325

1895 թ. նոյեմբերին և դեկտեմբերին Սոլսբերին գտնվում էր չափազանց անհանգիստ վիճակում: Նա պետք է արդարացներ իր քաղաքականությունը բրիտանական հասարակայնության աչքերում, որը գտնվում էր չափազանց գրգռված վիճակում հայկական կոտորածների հետևանքով:326 Այդ շրջանում Ֆորին Օֆիսը բազմաթիվ մեղադրական բնույթի նամակներ էր ստանում տարբեր բրիտանական հասարակական, մարդասիրական և կրոնական կազմակերպություններից: Բացի այդ, Օսմանյան կայսրության հայ բնակչության կոտորածների մասին տեղեկությունները նոր լիցք հաղորդեցին Գլադստոնին, որը նոր կամպանիա գլխավորեց «մեծ մարդասպանի» դեմ:327 Գրգռված հասարակական կարծիքը, կառավարության աջակցության բացակայությունն ու բրիտանա-ռուս-ֆրանսիական համագործակցության տապալումը ստիպում էին Սոլսբերիին մտածել նոր քաղաքականության ձևավորման մասին: Վախենալով իր դեմ տրամադրել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության եռանդուն կողմնակիցներին՝ հինգ եվրոպական տերություններին, բրիտանական կառավարության ղեկավարը չկարողացավ և չհամարձակվեց գործել միայնակ: Նրա միակ կոնկրետ առաջարկությունն այժմ կայանում էր սուլթան Աբդուլ Համիդին գահնկեց անելու տերությունների համատեղ գործողությունների մեջ: Դեկտեմբերի կեսերին Սոլսբերին հրաժարվեց ընդունել բրիտանական հայասերների ներկայացուցիչներին Վեստմինստերի

դուքսի գլխավորությամբ և նույնիսկ ճնշում գործադրեց ու հետաձգել տվեց վերջինիս և Գլադստոնի հովանավորությամբ հայերին ի

325 Taylor R. Op. cit., p. 170; Grenville J.A.S. Op. cit., p. 28.
326 Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի հասարակական կարծիքի դիրքորոշումը տես՝ Киракосян А.Дж. Великобритания и Армянский вопрос (90-е годы Х1Х века). Ереван, 1990, с. 154-197.
327 Grenville J.A.S. Op. cit., p. 47.



պաշտպանություն կազմակերպվող հանրահավաքը:328 Այսպիսով, ակնհայտ դարձավ, որ Հայկական հարցում բրիտանական կառավարության չափազանց ակտիվ քաղաքականության հետևանքով նա հայտնվեց մեկուսացման մեջ ինչպես միջազգային հարաբերությունների ոլորտում, այնպես էլ իր երկրում:

Ի վերջո Աբդուլ Համիդը թույլ տվեց տերությունների «ստացիոնարներին» մտնել Կոստանդնուպոլիս, սակայն այդ բանը տեղի ունեցավ ռուսական կառավարության միջամտության շնորհիվ:329 Դեկտեմբերի 12-16-ը Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Ավստրո-Հունգարիայի ռազմանավերը հերթով մտան Դարդանել:330

Դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած Թուրքիայում տերությունների դեսպանների հերթական հանդիպման ժամանակ Քարրին պնդում էր, որպեսզի տերություններն ինչ-որ մի բան ձեռնարկեն Փոքր Ասիայում տեղի ունեցած կոտորածների և կողոպուտի առնչությամբ: Մասնավորապես, նա առաջարկում էր, որպեսզի կառավարությունները ձևավորեն միջազգային հանձնաժողով, որն այցելի շրջանները, հետաքննի կատարվածը, լուծի փոխհատուցման և մեղավորների պատժման հետ կապված խնդիրները: Քարրիի տեսակետը պաշտպանում են Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի դեսպանները, սակայն Նելիդովը հայտարարում է, որ ինքը հրահանգ ունի մասնակցելու տերությունների միայն այն համատեղ միջոցառումներին, որոնք վերաբերվում են միմիայն օտարերկրացիների պաշտպանությանը: Փոխարենը նա առաջարկում էր շարունակել Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել կատարվող փաստերի վրա: Միաժամանակ նա չէր բացառում, որ եթե բրիտանական կառավարությունը հաստատի Քարրիի առաջարկությունը միջազգային հանձնաժողովի վերաբերյալ, ապա դեսպանները կներկայացնեն այն իրենց կառավարությունների քննարկմանը: Տեղեկացնելով Սոլսբերիին այդ հանդիպման մասին, Քարրին խնդրում էր նրան քննարկել իր առաջարկությունը, չնայած տերությունների միջև գոյություն ունեցող հակասություններին:

328 Кавказ, 1895, 12 декабря.
329 FO 424/184, No. 701, p. 385.
330 Turkey, No. 2(1896)..., pp. 208, 211, 224.

Ըստ դեսպանի, կայսրության արևելյան շրջաններում տիրող իրավիճակը սարսափելի է, ավերիչ իրադարձությունները տեղի էին ունեցել այն շրջաններում, որտեղ որ պետք է իրագործվեին բարենորոգումները: Դրանց արդյունքում հայերը կոտորվել են բոլոր մեծ քաղաքներում, բացառությամբ Վանի, Սամսունի և Էրզրումի, գրեթե ամբողջությամբ կողոպտվել և քանդվել են հայկական գյուղերը, շուրջ 300 հազ. քրիստոնյաներ ներկայումս գտնվում են ծայրահեղ չքավորության և զրկանքների մեջ:331

Այդ նույն օրերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ կառավարության փոփոխություն, մասնավորապես, մեծ վեզիր Սաիդ փաշային փոխարինեց Իզզեթ բեյը: Փոփոխությունից անմիջապես առաջ Սաիդ փաշան հայտնվում է բրիտանական դեսպանությունում և ողջունում Քարրիին հետևյալ բառերով. «Սուլթանը խելագարվել է»: Կայացած զրույցի ժամանակ նա անվանում էր սուլթանին «սուտասան, ավազակ և մարդասպան»: Նա հիշում էր Սասունի ջարդից առաջ սուլթանի հետ ունեցած իր զրույցը, երբ վերջինս ասում էր, որ Հայկական հարցը պետք է լուծվի ոչ թե բարենորոգումների, այլ արյան միջոցով: Սաիդ փաշան ասում էր Քարրիին. «Սկզբում ես նշանակություն չէի տալիս նրա խոսքերին: Ես որոշեցի, որ նա նկատի ունի պատերազմը օտար տերության հետ, սակայն միայն հետո հասկացա, որ նա նկատի ուներ հենց ջարդը»: Դեկտեմբերի 11-ին Քարրին գրում էր Սոլսբերիին, որ Սաիդ փաշայի և Գլադստոնի կարծիքները սուլթանի մասին ամբողջապես համընկնում են՝ երկուսն էլ համարում են Աբդուլ Համիդին Թուրքիայի չարիքը:332

Դեկտեմբերի 16-ին Քարրին Սոլսբերիին հաղորդում էր, որ որոշ տեղեկությունների համաձայն, Աբդուլ Համիդը, բրիտանական հասարակական կարծիքը հանգստացնելու նպատակով, մտադրություն է հայտնել ստեղծել ջարդերի փաստերի հետաքննության հանձնաժողով, որի գործունեությունը գլխավորելու է անձամբ ինքը: Դեսպանը կասկած էր հայտնում, որ այդ հանձնաժողովը, ինչպես և նախկինում ստեղծված բոլոր նման կառույցները, կկարողանա արդյունավետ կերպով կատարել իր առջև դրված խնդիրները:333

---

331 FO 424/184, No. 703, p. 386; No. 750, pp. 424-425; Turkey, No. 2(1896)..., p. 210.
332 Douglas R. Op. cit., p. 125.
333 FO 424/184, No. 755, p. 427.

383

Սոլսբերիի հանձնարարությամբ այդ օրերին տերությունների մայրաքաղաքներում հավատարմագրված դեսպանները խորհրդատվություններ էին անցկացնում արտգործնախարարների հետ Հայկական հարցի կապակցությամբ: Մասնավորապես, դեկտեմբերի 16-ին Լասսելզը հաղորդում էր Բեռլինից, որ Գերմանիայի արտգործնախարարի կարծիքով, ոչ մի կասկած չկա «սարսափելի ջարդերի կազմակերպման» փաստի առնչությամբ, սակայն ինքն այն տպավորության տակ է, որ որոշ դեպքերում նրանք հրահրված են եղել հայերի կողմից: Նախարարի համոզմամբ, ձմեռվա ընթացքում Օսմանյան կայսրությունում որևէ արտասովոր իրադարձություն տեղի չի ունենալու, սակայն զարնանը, նկատի առնելով սուլթանի իշխանության թուլությունը, հնարավոր են բարդություններ Մակեդոնիայում և Բուլղարիայում:334

Նույն օրը Մոնսոնը հաղորդում էր Վիեննայից, որ Գոլուխովսկու կարծիքով, ներկայումս տերությունները ոչ մի անելիք չունեն Հայկական հարցում, նրանք պետք է ժամանակ տան սուլթանին իրագործելու իր խոստումները՝ շրջաններում կարգ ու կանոնը վերականգնելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է տերությունների միջամտությանը, շարունակում էր նախարարը, ապա ակնհայտ է, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի բարենորոգումների իրականացմանը վերաբերող վերջին նախաձեռնությունը աղետալի արդյունք ունեցավ հայերի համար:335

Դեկտեմբերի 17-ին Լոբանով-Ռոստովսկին ասում էր Գոշենին, որ Անգլիայում ապրելու իր երկու տարվա փորձառության ընթացքում իր համար պարզ դարձավ, որ անգլիացիներն աշխարհի ամենա «դյուրագրգիռ» ժողովուրդն են: Իր համոզմամբ, այդ հատկությունն ամբողջությամբ իր արտահայտությունը գտավ Հայկական հարցում, երբ բրիտանական հասարակական կարծիքն իր մարդասիրական գաղափարներով քաջալերեց հայկական կոմիտեներին, հրահրեց հայերին ապստամբության և գրգռեց թուրքերի մոլեռանդությունը: Գոշենը չի համաձայնում նախարարի և ընդհանրապես Ռուսաստանում տարածված այն կարծիքի հետ, թե իբր Մեծ Բրիտանիան պատասխանատու է տեղի

_____
334 FO 424/184, No. 813, p. 482.
335 FO 424/184, No. 816, p. 454.

384

ունեցած ջարդերի համար, քանի որ հրահրել է Հայկական հարցը, ելնելով իր սեփական շահերից:336

Նելիդովի համոզմամբ, տերությունների գործողություններն այսուհետ պետք է սահմանափակվեն միմիայն երկրում ընդհանուր կարգ ու կանոն հաստատելու ձգտումով:337 Դեկտեմբերի 13-ին Լոբանով-Ռոստովսկուն ուղղված հեռագրում նա տեղեկացնում էր, որ Աբդուլ Համիդը թանգարժեք նվերներ և թութուն է ուղարկել Նիկոլայ 2-րդին: Ըստ դեսպանի, Սոլսբերին ամբողջությամբ կորցրել է իր ազդեցությունն ու վստահությունը Թուրքիայի մահմեդական շրջանակներում:338

Դեկտեմբերի 18-ին Քարրիի և Թուրքիայի արտգործնախարարի միջև կայացած հանդիպման ժամանակ վերջինս տեղեկացնում էր, որ զորքը շրջապատել է զեյթունցիներին, սակայն սուլթանը ուշացնում է հարձակումը, հույս ունենալով, որ նրանք ի վերջո հանձվելու են: Բարձր Դռան տեղեկությունների համաձայն, զեյթունցիները այրել և ավերել են մահմեդական գյուղերը, կոտորել գերի ընկածներին, բռնություններ են գործում կանանց և երեխաների հանդեպ:339 Սոլսբերիին հասցեագրված իր դեկտեմբերի 19-ի հերթական զեկուցագրում Քարրին գրում էր, որ դժբախտաբար իրավիճակը կայսրությունում այդպես էլ չի բարելավվում. շրջաններում շարունակվում են քրդերի հարձակումները, ջարդերի պատասխանատուները մնում են անպատիժ, բազմաթիվ անմեղ հայեր դեռևս գտնվում են բանտերում, կառավարությունը չի կարողանում ֆինանսավորել պահեստից կանչված զորքը, վերջինս թալանում է բնակչությանը, բանակը շրջապատել է զեյթունցիներին և իշխանությունները սպառնում են կոտորել նրանց, փորձելով արդարացնել նախատեսվող ջարդը հայերի կողմից իրագործված բռնություններով, անկարգություններ են տեղի ունեցել Կրետեյում, հուզումներ են

սպասվում Մակեդոնիայում: «Ֆինանսական դրությունն անհույս է, - շարունակում էր դեսպանը, - և կարծես հնարավոր է, որ հաջորդ գարնանը թուրքական կառավարությունն անկարող գտնվի հաղթահարել իր դժվարությունները»: Քարրիի

336 FO 424/184, No. 815, pp. 483-484.
337 Turkey, No. 2(1896)..., pp. 254-255.
338 Из дневника В.Н.Ламздорфа. - Вопросы истории, 1977, No. 6, с. 103-104.
339 Turkey, No. 2(1896)..., p. 226.

385

համոզմամբ, նման իրավիճակն ամբողջությամբ կարող է արդարացնել տերությունների համատեղ գործողությունները՝ կարգ ու կանոնը կայսրությունում վերականգնելու և ընդհանուր խաղաղությանը սպառնացող հետագա անկարգությունները կանխելու ուղղությամբ: Սակայն դժբախտաբար, գրում էր դեսպանը, Կոստանդնուպոլսում հավատարմագրված տերությունների դեսպանները, Նելիդովի գլխավորությամբ, արտասահմանցիների պաշտպանության հարցով սահմանափակվելու մասին հրահանգներ են ստացել իրենց կառավարություններից և հրաժարվում են համագործակցել այլ խնդիրների շուրջ:340

Դեկտեմբերի 21-ին Քարրին գրում էր Սոլսբերիին, որ զեյթունցիներին կարծես թե առաջարկվել են նախապայմաններ, որոնցից ամենակարևորներն են զենքի վայր դնելն ու ղեկավարների հանձնումն իշխանություններին: Դեսպանի կարծիքով, հայերը չեն ընդունելու այդ պայմաններն ու կոտորվելու են: Այդ կապակցությամբ Քարրին դիմում է Բարձր Դռանը՝ ամեն պարագայում կոտորածը կանխելու միջոցառումներ ձեռնարկելու պահանջով:341

Այդ օրերին տերությունների դեսպանները խնդրագրեր են ստանում լուսավորչական և կաթոլիկ հայերի առաջնորդներից, ուր առաջարկվում էր, զեյթունցիների պահանջով, որպեսզի տերությունների հյուպատոսները միջնորդներ հանդիսանան Զեյթունի հայերի և իշխանությունների միջև: Քարրիի առաջարկությամբ, դեկտեմբերի 23-ին տեղի է ունենում դեսպանների հանդիպում, ուր որոշվում է դիմել տերությունների կառավարություններին՝ Հալեպում գտնվող հյուպատոսներին Զեյթուն գործուղելու հարցով:342 Սակայն նույն օրը, Հալեպում բրիտանական հյուպատոսի համաձայն, թուրքական բանակը ռմբակոծում և այրում է Զեյթունի ամրոցն ու գրավում քաղաքը, պաշտպանվողները հեռանում են քաղաքից Քիլիսի ուղղությամբ: Պաշտոնական տվյալների համաձայն, հարձակման ժամանակ սպանվել և վիրավորվել էր ընդամենը 21 թուրք զինվոր, զեյթունցիների կորուստների մասին տեղեկություն դեռևս չկա: Ըստ հյուպատոսի, իշխանությունները թույլ են տվել, որ անզեն հայերը շարժվեն դեպի Մարաշ, միաժամանակ կասկած հայտնելով, որ նրանք դժվար թե անվտանգ տեղ հասնեն, քանի որ քրդերն ու չերքեսները սպասում են նրանց ճանապարհին:

340 Նույն տեղում, էջ 254-255:
341 Նույն տեղում, էջ 227:
342 FO 424/184, No. 821, p. 487.

386

343 Բարձր Դռան հայտարարության համաձայն, թեև բանակը գրավել է ամրոցն ու շրջապատել քաղաքը, դրանով իսկ վերացնելով հիմնական վտանգը, հրամանատարին հրահանգ է իջեցված առաջ շարժվել շատ դանդաղ, հանձնվելու հնարավորություն տալով զեյթունցիներին:344 Բրիտանական հյուպատոսի հաջորդ հեռագրի համաձայն, շուրջ 5 հազ. զեյթունցիներ ներկայումս նահանջել են և ամրապնդվել հարմարավետ մի բարձրունքի վրա, հսկողության տակ առնելով ողջ շրջակայքը: 345

Դեկտեմբերի 28-ին կայացած դեսպանների հանդիպման ժամանակ որոշվում է, որ քանի որ զեյթունցիները դեռևս չեն հանձնվել, պետք է առաջարկել Բարձր Դռանը տերությունների հյուպատոսների միջնորդությունը և եթե այն ընդունվեց, անմիջապես ներկայացնել իշխանություններին զինադադարի ընդունման պահանջ:346 Այդ կապակցությամբ Բարձր Դռանն է ներկայացվում դեսպանությունների թարգմանների համատեղ հաղորդագրությունը:347

Հաջորդ օրը Քարրին Սոլսբերիին գրում էր, որ վստահաբար սուլթանը հրաժարվելու է ընդունել դեսպանների առաջարկը, քանի որ ներկայումս ուժն իր ձեռքում է և հնարավորություն չի կորցնելու ոչնչացնել զեյթունցիներին այնպես, ինչպես դա տեղի ունեցավ սասունցիների պարագայում: Նկատի առնելով մյուս տերությունների և, մասնավորապես, Ռուսաստանի ներկայիս դիրքորոշումը Հայկական հարցում, դեսպանն առաջարկում էր, որ եթե Բարձր Դուռը մերժի կամ ձգձգի վերջին նախաձեռնությունը, ապա պետք է տեղեկացնել դեսպաններին, որ Մեծ Բրիտանիան չի պատրաստվում այս անգամ սառնասրտորեն դիտել, թե ինչպես են կոտորելու զեյթունցիներին և որոշում է կայացրել ամեն պարագայում Զեյթուն ուղարկել գնդապետ Չերմսայդին: Քարրիի համոզմամբ, նման որոշումը ստիպելու է տերություններին ավելի գործուն կերպով մոտենալու հարցին և պահանջելու սուլթանից ընդունել դեսպանների վերջին նախաձեռնությունը:348

_____
343 FO 424/184, No. 828, p. 490.
344 FO 424/184, No. 830, p. 491.
345 FO 424/184, No. 831, p. 491.
346 FO 424/184, No. 834, p. 492.
347 Turkey, No. 2(1896)..., p. 285.
348 FO 424/184, No. 836, p. 492.

387

Դեկտեմբերի 31-ին Քարրին գրում էր Սոլսբերիին, որ «Զեյթունի միջնորդությանը» վերաբերող Բարձր Դռան պատասխանը չի բավարարել դեսպաններին, որոնք որոշել են թարգմանների միջոցով շատ ավելի խիստ պահանջ ներկայացնել իշխանություններին:349 Դեսպանությունների գործունեության արդյունքում 1896 թ. հունվարի 2-ին Թուրքիայի արտգործնախարարը Քարրիին տեղեկացնում էր, որ Բարձր Դուռն ընդունել է Հալեպի հյուպատոսների միջնորդության առաջարկը, որի կապակցությամբ արդեն իսկ իջեցված են համապատասխան հրահանգներ:350 Հալեպում բրիտանացի հյուպատոսից ստացված հեռագրի համաձայն, հունվարի 6-ին զեյթունցիներն ընդունում են տերությունների միջնորդության առաջարկը:351

Հունվարի 1-ին Սոլսբերին ընդունում է Թուրքիայի նոր դեսպան Կոստակի փաշային: Զրույցն ընթանում է հիմնականում 1895 թ. ընթացքում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած «սարսափելի դեպքերի» վերաբերյալ: Դեսպանը չէր ժխտում տեղի ունեցած «բախումների և ցավալի միջադեպերի» փաստերը, սակայն համարում էր, որ նրանք մեծապես չափազանցված են: Նրա համոզմամբ, նրանց պատճառը կայանում է հայերի շրջանում գոյություն ունեցող «վտանգավոր և լայնածավալ դավադրության» մեջ, որի նպատակն է ոչ թե Թուրքիայի կառավարության բարելավումն, այլ «ինքնավար հայկական պետության ստեղծումը», սակայն ինչն անհնարին է բնակչության ներկայիս տրոհվածության հետևանքով: Սուլթանական կառավարությունն, ըստ դեսպանի, ստիպված էր ճնշել շարժումը, սակայն այն առաջացրեց միաժամանակ նաև մահմեդական հպատակների վրդովմունքն ու բերեց քաղաքացիական պատերազմի, որն անխուսափելիորեն հղի է «սարսափելի բռնություններով» և բնորոշ է բոլոր երկրներին: Կոստակի փաշայի կարծիքով, ներկայումս սուլթանին հնարավորություն է պետք տալ վերականգնելու կարգ ու կանոնը երկրում, որից հետո միմիայն նա կկարողանա իրականացնել բարենորոգումները:

Սոլսբերին դեսպանին պատասխանում է, որ բարենորոգումների իրագործումից շատ ավելի կարևոր է վերականգնել կյանքի և ունեցվածքի անվտանգության խնդիրը կայսրության գրեթե ողջ տարածքում: Անցյալում Անգլիան Թուրքիայի «մտերիմ բարեկամն էր»,

349 Turkey, No. 2(1896)..., p. 280.
350 Նույն տեղում, էջ 281:
351 Նույն տեղում, էջ 289, 291:

388

շարունակում էր վարչապետը, սակայն ներկայումս այն ոչ մի տրամադրություն չունի վերականգնելու այդ բարեկամությունը, քանի դեռ երկրում արյուն է հոսում և քանի դեռ «տիրապետող ազգը» «սարսափելի ճնշումների է» ենթարկում «թույլին»:352

Հունվարի 3-ին Քարրին, հիմնվելով Հալեպում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Բառնհեմից ստացված տեղեկությունների վրա, հաղորդում էր Սոլսբերիին Ուրֆայում համիդիե հրոսակախմբերի կողմից կազմակերպված հայերի ջարդի մասին: Պաշտոնական տվյալների համաձայն, սպանվել էր 900 հոգի, սակայն հյուպատոսի կարծիքով՝ շուրջ 2 հազ.:353 Նույն օրը Սոլսբերին հանձնարարում էր Քարրիին Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանների հետ համատեղ հրավիրել սուլթանի ուշադրությունը երկրում տիրող իրավիճակի և հայկական շրջանների համար նախատեսված հսկողության հանձնաժողովի կազմավորման անհրաժեշտության վրա:354

Սոլսբերին բավականին հոռետեսորեն էր տրամադրված այդ օրերին Հայկական հարցի զարգացումների առնչությամբ: Թուրքիայի հանդեպ անցյալի քաղաքական ազդեցության վերականգնման անհնարինությունը նա փորձում էր բացատրել հայկական կոտորածներով: Հունվարի 15-ին նա գրում էր թագուհուն, որ «...միայն խոսքերը բավարար չեն նկարագրելու համար այդ սարսափները», սակայն Մեծ Բրիտանիան միայնակ չի

կարող գործել Թուրքիայի դեմ:355 Բրիտանական կառավարությունն ամեն կերպ փորձում էր ցույց տալ, որ հանուն հայ ժողովրդի վիճակի զոհաբերում է իր քաղաքական ազդեցությունը Կոստանդնուպոլսում: Սակայն իրականում այն չափազանց մտահոգված էր ռուսական ազդեցության ուժեղացմամբ: Ռուսաստանն ամեն կերպ խուսափում էր Հայկական հարցի կապակցությամբ սուլթանական կառավարության հանդեպ որևէ ճնշում գործադրելուց և նույնիսկ դադարեցրել էր պահանջել ռուս-թուրքական պատերազմի արդյունքում իրեն հասանելիք ռազմատուգանքները: Հունվարի կեսերին Սոլսբերիին հասցեագրած հույժ գաղտնի զեկուցագրում Քարրին գրում էր, թե իբր սուլթանը դիմել էր Նիկոլայ 2-րդին հովանավորության խնդրանքով և առաջարկել դրա փոխարեն տաս տարի ժամկետով գրավել

352 Նույն տեղում, էջ 280-281:
353 Նույն տեղում, էջ 282:
354 Նույն տեղում:
355 Taylor R. Op. cit., p. 168.



կայսրության վեց արևելյան նահանգները: Այդ հաղորդագրությունը մեծ խառնաշփոթ առաջացրեց Ֆորին Օֆիսում, սակայն շուտով Սոլսբերին հերքում ստացավ Լոբանով-Ռոստովսկուց: Սակայն այնուամենայնիվ ռուս-թուրքական համաձայնության մասին լուրերն արագ տարածում էին ստանում Անգլիայում: Մասնավորապես, Սոլսբերին չափազանց անհանգստացել էր հունվարի 25-ին «Pall Mall Gazette» թերթում հրապարակված տեղեկատվության կապակցությամբ, որի համաձայն, ռուս-թուրքական համաձայնագիրն իրապես ստորագրված է և որի հիմքում ընկած են Ունքյար-Իսքելեսիի պայմանագրի դրույթները:356 Բրիտանական դիվանագիտությունն իր ակտիվ գործելակերպով փորձում էր խանգարել ռուս-թուրքական դաշինքի կայացմանը, Ռուսաստանում իր դեսպանի հայտարարությունների և դեսպանության հայտագրերի միջոցով ձգտում ապացուցել Հայկական հարցում և կայսրության ընդհանուր վիճակի բարելավման խնդրում համատեղ միջամտության անհրաժեշտությունը: Պատասխանելով հունվարի 16-ի հայտագրին Լոբանով-Ռոստովսկին սակայն նշում էր, որ իրավիճակը Թուրքիայում սկսվել է բարելավվել և ներկայումս անհրաժեշտություն չկա տերությունների միջամտության մեջ: Այնուհետև նա արտահայտվում էր Օսմանյան կայսրության ստատուս քվոյի փոփոխության դեմ, քանի որ սուլթանի կողմից հայտարարված բարեփոխումները լիովին բավարար են երկրում կարգ ու կանոն հաստատելու համար:357

Զեյթունի միջնորդային բանակցություններն ավարտվեցին հունվարի 30-ին՝ ապստամբության ղեկավարների և իշխանությունների պատվիրակների միջև ստորագրված համաձայնությամբ: Փաստաթղթի պայմանների համաձայն. 1/ զեյթունցիներն ու հովտում ապրող մահմեդականները պարտավորվում էին հանձնել ռազմական զենքը. 2/ հայտարարվում էր ընդհանուր ներում, մի քանի օտարահպատակ հնչակյան ղեկավարներ պետք է վտարվեն երկրից. 3/ զեյթունցիների համար կրճատվում էր ՝միրի՝ հարկը և չեղյալ էին հայտարարվում նախորդ տուրքերը. 4/ քրիստոնյա կայմակամ նշանակելու խնդիրը կարգավորվելու էր բարենորոգումների ընդհանուր ծրագրի համաձայն:358 Համաձայնագրի

356 Papadopoulos G.S. Op.cit., pp. 56-57.
357 Turkey, No. 2(1896)..., pp. 292-293, 295-296.
358 Turkey, No. 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey (In Continuation of Turkey No. 2 (1896)). London, 1896, pp. 51-54.

390

ստորագրումը մեծ հաղթանակ էր զեյթունցիների և պարտություն իշխանությունների համար: Սուլթանական կառավարությունը պարտադրվեց համաձայնագիր ստորագրել իր իսկ հպատակների հետ, ճանաչելով նրանց որոշ պահանջներն ու իրավունքները: Բանակցությունների հաջող ավարտման գործում մեծ դեր խաղաց Հալեպում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Բառնհեմը, որը դրամական նպաստներ ցուցաբերեց զեյթունցիներին և դեռ մի քանի ամիս շարունակեց մնալ Զեյթունում: Հետագայում, 1896 թ. ապրիլին, սուլթանական կառավարությունը փորձեց ազգությամբ թուրք կայմակամ նշանակել Զեյթունի համար, սակայն հիմնականում բրիտանական դեսպանության միջամտության արդյունքում հնարավոր դարձավ բեկանել որոշումը՝ այդ պաշտոնում նշանակվեց ազգությամբ հույն մի քրիստոնյա:359

Փետրվարի սկզբին Սոլսբերին ելույթ ունեցավ «Nonconformist Unionist Assosiation» -ի առջև ճառով, որը «Spectator» շաբաթաթերթն անվանեց «վերջին ներողությունն» այն բանի համար, որ Մեծ Բրիտանիան չկարողացավ օգնություն ցուցաբերել Օսմանյան կայսրության հայ բնակչությանը: Իր ելույթում բրիտանական կառավարության ղեկավարը հրաժարվեց Մեծ Բրիտանիայի միջամտությունից Հայկական հարցում «ոչ միայն ներկայումս, այլև ապագայում» և հայտարարեց, որ իր երկիրը հատուկ պարտավորություններ չի վերցնում այդ հարցում: Իր կարծիքով, Բեռլինի պայմանագրի պարտավորությունները պետք է հավասարապես կատարվեն այն ստորագրած բոլոր տերությունների կողմից և ուստի Մեծ Բրիտանիան պարտավոր չէ ավելին անել Հայկական հարցում, քան մյուս տերությունները: Իր խոսքերի համաձայն, սուլթանն արել է հնարավորին ամեն ինչ Հայաստանում բարենորոգումներն իրականացնելու համար:360 Այնուհետև նա հայտարարեց տառապող հայ բնակչության պաշտպանության նպատակով ռազմական միջամտության անհնարինության մասին: Նա նշում էր, որ «բաց ծովում նա կհաղթեր հինգ կամ նույնիսկ վեց սուլթանների...»:

359 1895-1896 թթ. Զեյթունի ապստամբության պատմության, տերությունների քաղաքականության, բանակցային գործընթացի մանրամասները տես՝ Մկրտչյան Լ. Զեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ., Երևան, 1995, էջ 180-182, 188, 190-191:
360 Lord Salisbury and Armenia..., p. 193; Gulesian M.H. England`s Hand in Turkish Massacres. - The Arena, 1897, vol. 17, p. 271; Stride W.K. The Immediate Future of Armenia; The Suggestion. - The Forum, 1896, vol. 22, p. 311.

391

361 Ավելի ուշ, ապրիլի 30-ին նա հայտարարեց լորդերի պալատում, որ «մեր նավերը չեն կարող բարձրանալ Տավրոսի գագաթներին»:362

Փետրվարի 10-ին Հայկական հարցի առնչությամբ բրիտանական խորհրդարանում տեղի ունեցած քննարկումների ժամանակ արտգործնախարարի խորհրդարանական տեղակալ Ջորջ Քերզոնը363 հայտարարում էր, որ կառավարության մտադրություններն ու ծրագրերը Աբդուլ Համիդի նկատմամբ հարկադրական միջոցներ կիրառելու վերաբերյալ խափանվեցին Ռուսաստանի կողմից, որին պաշտպանեցին բոլոր եվրոպական տերությունները: Հայտնի ռուսատյաց Աշմեդ Բարտլետը կոչ էր անում Սոլսբերիին վերադառնալ Ռուսաստանի հանդեպ բաց թշնամական Դիզրայելիի քաղաքականությանը: Այդ տրամադրություններին ի պատասխան լիբերալների ղեկավար Ռոզբերին հայտարարեց կուսակցության ակումբում. «Եթե մենք ժամանակին մինչև երկինք էինք բարձրացնում Բեռլինի պայմանագրի հերոսներին, ապա արդյոք մենք իրավունք ունենք՞ նախատելու Ռուսաստանին այն բանի համար, որ նա հրաժարվեց Արևելքում գործողությունների դիմել նույն պայմանագրի հեղինակներից մեկի ընկերակցությամբ»:364

Խորհրդարանական քննարկումների ժամանակ ծովակալության լորդ Գոշենը հայտարարում էր, որ այն պահից, երբ սուլթանը հրաժարվեց անհրաժեշտ բարենորոգումների իրագործումից, «մենք ազատ ենք Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման որևէ պարտավորություններից, քանի որ այն այլևս ոչ մի կարևորություն մեզ համար չի ներկայացնում»: Նման գաղափարներ արտահայտում էին

_____
361 Lord Salisbury and Armenia..., p. 193.
362 Taylor R. Op. cit., p. 168.
363 Քերզոն (Curzon) Ջորջ (1859-1925) - լորդ , բրիտանացի քաղաքական գործիչ և դիվանագետ: 1891-1892 թթ. ՝ արտգործնախարարի տեղակալ Հնդկաստանի հարցերով, 1895-1898 թթ. ՝ արտգործնախարարի խորհրդարանական տեղակալ, 1898-1905 թթ. ՝ Հնդկաստանի փոխթագավոր, 1916 թ. ՝ ավիացիայի նախարար, 1916-1919 թթ. ՝ խորհրդի լորդ նախագահ, 1919-1924 թթ. ՝ արտաքին գործերի նախարար, 1916-1924 թթ. ՝ լորդերի պալատի ղեկավար:
364 Кавказ, 1896, 28 февраля.



շատերը և նույնիսկ կառավարության անդամները: Այսպես, Ջոզեֆ Չեմբերլենը365 պատրաստ էր Կոստանդնուպոլիսը հանձնել Ռուսաստանին և համագործակցել նրա հետ՝ Օսմանյան կայսրությունը փլուզելու նպատակով:

Սակայն Սոլսբերիի դիրքորոշման մեջ այդպես էլ որևէ փոփոխություն տեղի չունեցավ: Նա համաձայն էր Քարրիի հետ, որ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները ուժեղացրին Ռուսաստանի ազդեցությունը Թուրքիայի նկատմամբ և, հակառակը, թուլացրին Մեծ Բրիտանիայի դիրքերը, սակայն երբևիցե նույնիսկ չէր էլ ենթադրում, որ Կիպրոսի կոնվենցիան կորցրել է իր ուժը: Եվ եթե Սոլսբերին պարտավորվել էր այսուհետ որևէ գործուն միջոցների չդիմել Հայկական հարցում, դա բացատրվում էր ավելի խոշոր և լուրջ ճգնաժամից խուսափելու իր ցանկությամբ: Նշելով, որ ժառանգություն է ստացել Հայկական հարցը լիբերալներից, նա հայտարարում էր լորդերի պալատում, որ ստիպել սուլթանին ներկայումս արդարացիորեն կառավարել իր

հայ հպատակներին, դա նշանակում է կանգնել պատերազմի վտանգի առջև ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև Ռուսաստանի հետ:366 Մարտին Քերզոնը նույնիսկ հայտարարեց համայքների պալատում, որ Մեծ Բրիտանիայի պարտավորությունը Թուրքիայի ամբողջականությունը պաշտպանելու վերաբերյալ այլևս կորցրել է իր ուժը: Ժամանակակիցների վկայությամբ, Սոլսբերին աշխատում էր այսուհետ հրապարակային ելույթներ չունենալ մինչև «հայկական գործերի սառեցումը»:367

Այսպիսով, բրիտանական կառավարությունը հրաժարվում էր Ռուսաստանի կողմից թշնամություն առաջացնող որևէ քաղաքական դրսևորումներից, մինչև որ Ռուսաստանն ինքը քայլ չձեռնարկի Թուրքիայի դեմ: Նման միջազգային իրավիճակում սուլթան Աբդուլ Համիդը

_____

365 Չեմբերլեն (Chamberlain) Ջոզեֆ (1836-1914) - բրիտանացի քաղաքական գործիչ: Հարում էր լիբերալ կուսակցության ռադիկալ թևին: 1873-1876 թթ. ՝ Բիրմինգհեմի քաղաքապետ, 1876 թ. ՝ խորհրդարանի անդամ, 1880-1885, 1886 թթ. ՝ Գլադստոնի կառավարությունների անդամ, 1895-1903 թթ. ՝ գաղութների նախարար Սոլսբերիի պահպանողական կառավարությունում:
366 Papadopoulos G.S. Op. cit., p. 48; Marsh P. Lord Salisbury and the Ottoman Massacres. - The Journal of British Studies, 1972, May, vol. X1, No. 2, p. 81.
367 Marsh P. Op.cit., p. 81.

393

զգում էր իրեն բավականին անվտանգ՝ կայսրության հայ բնակչության նոր կոտորածներ կազմակերպելու համար:

1895 թ. սեպտեմբերին - 1896 թ. հունվարին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայ բնակչության կոտորածները368 տեղի ունեցան սուլթանական կառավարության կողմից նախապես մշակված ծրագրով: Մահմեդական բնակչության կրոնական մոլեռանդությունն արհեստականորեն գրգռելու նպատակով իշխանություններն ուղարկում էին կայսրության բոլոր մասերն իր գործակալներին: Վերջիններս, ըստ սովորականի մզկիթներում հավաքվող մահմեդականներին հայտնում էին սուլթանի կարծիքն այն մասին, որ բոլոր հայերը խռովարարներ են, որոնց նպատակն է հարված հասցնել իսլամին և կոչ էին անում պաշտպանել իրենց հավատն ու պատժել ապստամբ հայերին: Գործակալները հայտարարում էին նաև, որ համաձայն սուրբ օրենքի կանոնների, ապստամբների ունեցվածքը պետք է խլվի հավատացյալների օգտին, իսկ ունեցվածքը պաշտպանող քրիստոնյաները ենթակա են մահվան:369 Կոտորածները սկսելու ազդանշաններն էին քաղաքների մահմեդական թաղամասերից լսվող առանձին կրակոցները կամ շեփորի ձայնը:370 Քաղաքների ջարդերին նախորդում էին քրդական ցեղերի ավերիչ հարձակումները հայկական գյուղերի վրա: Այնուհետև քրդերի, լազերի և չերքեսների ամբոխները ներխուժում էին քաղաք և թուրք բնակչության, զինվորների և ոստիկանների հետ միասին ենթարկում հայ բնակչությանը ջարդի ու թալանի:371 Տեղական իշխանությունները հրահանգներ էին իջեցնում սպանել միմիայն տղամարդկանց: Այսպես, Ակիսարում մահմեդական բնակչության շրջանում հետևյալ կոչն էր տարածված. «Սպանեք տղամարդկանց, կանայք և երեխաները վերջում հասնելու են մեզ»:372 Կոտորածների զոհ դարձան բացառապես հայերը: Քաղաքների

368 1894-1896 թթ. հայկական կոտորածների տեսական քննությունը տես ` Melson R. A Theoretical Inqiry into the Armenian Massacres of 1894-1896. - Comparative studies in Society and History, 1982, vol. 24, No. 3, July, pp. 481-505:
369 Pears E. Life of Abdul Hamid..., pp. 232-234; Turkey, No. 2(1896)..., pp. 318-322.
370 Russell G.W.E. Op. cit., pp. 11-12; Bliss E.M. Op. cit., p. 463; Pears E. Life of Abdul Hamid..., pp. 234-235.
371 Turkey, No. 2 (1896)..., p. 325; Bliss E.M. Op. cit., pp. 428-434, 475-476.
372 Bliss E. M. Op. cit., p. 477.

394

հույն և հրեա բնակչությունը գրեթե չտուժեց: Հայ բնակչության կոտորածները կրում էին կազմակերպված բնույթ, քանի որ սպանություններին և թալանին մասնակցում էին կանոնավոր զորամասերն ու ոստիկանությունը: Գործողություններն ավարտվում էին նույնքան հանկարծակի, ինչպես որ սկսվում էին՝ շեփորի ազդանշանով:373 Կոտորածներից հետո շատ քաղաքներում տեղական իշխանությունները ստիպում էին հայերին ստորագրել կեղծ փաստաթուղթ այն մասին, որ անկարգություններն առաջինը սկսել է հայ բնակչությունը:374

1896 թ. սուլթանական կառավարությունը հրապարակեց անհավատալի աստիճանի խեղաթյուրված տվյալներ 1895թ. ընթացքում Փոքր Ասիայում «անկարգությունների» ժամանակ սպանվածների մասին: Համաձայն այդ տվյալների, ընդամենը սպանվել էր 10 հազ. 135 մարդ, որից 1828 մահմեդական, 7863 հայ լուսավորչական, 152 հայ կաթոլիկ և 292 հայ ավետարանական:375 Ռուս գիտնական Լ.Կամարովսկու տվյալներով, միայն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում զոհվել էր 20 հազ. հայ:376 «Times»-ի տեղեկությունների համաձայն, նոյեմբերի 1-22-ը սպանվել էր 12 հազ. 550,377 ամերիկյան միսիոներ Բլիսի տվյալներով՝ 40 հազ.,378 ըստ ամերիկյան ամսագրերի՝ 50 հազ. հայ:379

Ստորև ներկայացնում ենք մի շարք եվրոպական և ամերիկյան աղբյուրների հիման վրա կազմված կոտորածների աղյուսակը.

Կոտորածի վայրը Ժամանակը Զոհերի թիվը
Տրապիզոն Հոկտեմբեր 3-8, 1895 1 100
Ակհիսար ---------- 9 50

373 Turkey, No. 2 (1896)..., pp. 320-322; Bliss E.M. Op.cit., pp. 425, 451-466, 478.
374 Turkey, No. 2 (1896)..., pp. 323-330.
375 Кавказ, 1896, 11 июля.
376 Новое слово, 1896, кн. 3, декабрь, с. 176.
377 Вестник Европы, 1895, т. 6, кн. 12, с. 854.
378 Bliss E.M. Op. cit., p. 553.
379 Massacre in Turkey. From Oct. 1, 1895, to Jan. 1, 1896. - Review of Reviews, 1896, vol. 13, p. 197; Mangasarian M. Armenia's Impending Doom. - The Forum, 1896, vol. 21, p. 452.

395

Գյումուշխանե ---------- 11 350
Բայբուրդ ---------- 13 800
Երզնկա ---------- 21 2 000
Բիթլիս ---------- 25 3 000
Բալու ---------- 25 650
Դիարբեքիր ---------- 25 3 000
Կարահիսար ---------- 25 800
Էրզրում ---------- 30 1 500
Բուլանըխ և Խնուս ---------- 30 700
Ուրֆա

---------- 27 Դեկտեմբեր 30 10 000
Մալաթիա Նոյեմբեր 6 5 000
Արաբկիր ---------- 6 4 000
Գյուրուն ---------- 10 2 000
Սեբաստիա ---------- 12 1 500
Խարբերդ

---------- 11 2 000
Մուշ ---------- 15 350
Մարզվան ---------- 15 130
Այնթապ ---------- 15 400
Մարաշ

---------- 18 1 000
Զիլե ---------- 26 300
Կեսարիա ---------- 30 400
Բիրեջիկ Հունվար 1, 1896 900
Ընդամենը 41 930 380

380 Bliss E.M. Op. cit., p. 553; Gabrielian M.S. Op. cit., pp. 257-258; Turkey, No. 2 (1896)..., pp. 318-337; Shahid Bey S. Op. cit., p. 201; Antoine E. Les Massacres d'Armenie. Bruxelles, 1897, pp. 72-79.

396

Այսպիսով, 1895 թ. Օսմանյան կայսրության հայ բնակչության ջարդի զոհերի քանակը հասավ մի թվի, որը բնորոշ էր 19-րդ դ. պատերազմների ժամանակ կանոնավոր բանակների մարտական գործողությունների հետևանքներին, միմիայն այն տարբերությամբ, որ այստեղ կորուստ տվեց միայն մեկ կողմը: Ինչպես գրում էր «Вестник Европы» ամսագիրը, Հայկական հարցը «...ստացավ իր լուծումը ճիշտ թուրքական ճաշակով. մի կողմից՝ միջոցառումներ են ձեռնարկված հեղափոխական կամ ընդդիմադիր ոգով տոգորված հայերի բնաջնջման համար, մյուս կողմից՝ հրապարակված է մեծախոստում հրամանագիր, որը կարող է զինաթափել օտարերկրյա դիվանագետներին սուլթանի բարի մտադրությունների և միջոցառումների պերճախոս թվարկումով»:381

1896 թ. գարնան և ամառվա ամիսների ընթացքում Օսմանյան կայսրությունում տիրում էր համեմատական անդորր: Բրիտանական դիվանագիտությունը զգալի կերպով նվազեցրեց

իր ակտիվությունը Հայկական հարցում, դեսպանությունը դադարեց բողոքի հայտագրեր ներկայացնել Բարձր Դռանն, այլևս հազվադեպ էին հնչում բրիտանացի քաղաքական և հասարակական գործիչների մեղադրական ճառերն ու ելույթները: Սակայն Օսմանյան կայսրությունում իրականում այդպես էլ ոչինչ չփոխվեց, սուլթանական կառավարությունը նույնիսկ չէր էլ պատրաստվում բարենորոգումներ իրագործել արևելյան շրջաններում:

Ապրիլի 6-ին Սոլսբերին Քարրիին գրում էր, որ թեև որոշ դեպքերում թուրքական իշխանությունները դրսևորեցին իրենց կարողությունը, սակայն «սպառիչ փորձ» չկատարեցին վարչակազմը բարելավելու, քրդական ցեղախմբերը հսկողության տակ առնելու, բարենորոգումներն իրականացնելու և հսկողության հանձնաժողովի գործունեությունը կազմակերպելու կամ նույնիսկ գոյություն ունեցող օրենքներն իրագործելու ուղղությամբ: Նա նշում էր, որ ներկայումս թեև լուրջ որևէ հուզումներ չկան երկրում, սակայն համատարած անհանգստության ու տագնապի իրավիճակն ամբողջապես կանգնեցրել է արդյունաբերությունն ու առևտուրը: Վարչապետը հանձնարարում էր դեսպանին շարունակել երկրում տիրող իրավիճակի ուսումնասիրությունն ու իշխանությունների ուշադրությունը հրավիրել կեղեքումների և վատ կառավարման փաստերի ու նրանց կանխելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության վրա: Եվ եթե դեսպանի

381 Вестник Европы, 1895, т. 6, кн. 11, с. 409.

397

ջանքերը որևէ արդյունք չտվեցին և շուտով սկսվեն Օսմանյան կայսրության բարօրությանն և կայունությանը սպառնացող շատ ավելի լուրջ իրադարձություններ, շարունակում էր Սոլսբերին, բրիտանական կառավարությունը, որն իր «բարեկամական խորհուրդներով և նախազգուշացումներով» արել է ամեն ինչ աղետը կասեցնելու ուղղությամբ, բացարձակապես ոչ մի պատասխանատվություն այլևս չի կրելու կատարվածի համար:382

Քրդական հրոսակախմբերի և իշխանությունների կեղեքումների դեմ պայքարի հերոսական փորձ հանդիսացան 1896 թ. հունիսին Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունների կողմից կազմակերպված Վան քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչության ինքնապաշտպանական մարտերը: Հունիսի 17-18-ին բրիտանական դեսպանությունում ստացված Բարձր Դռան հեռագրերի համաձայն, 1895 թ. անկարգությունների ժամանակ Վանի վիլայեթը զերծ էր մնացել հուզումներից, սակայն ներկայումս հեղափոխականները փորձում են խառնել իրավիճակը, հայերը հարձակումներ են գործում մահմեդականների վրա, քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը բարիկադվել է Վանի թաղամասերից մեկում և սպանել զգալի թվով մահմեդական հպատակների: Օսմանյան իշխանությունները, նշվում էր հեռագրերում, ձեռնարկել են անհրաժեշտ բոլոր միջոցները քաղաքը շրջապատելու և ապստամբներին մեկուսացնելու ուղղությամբ:383 Հունիսի 20-ին ժամանակավոր հավատարմատար Հերբերտը հաղորդում էր Սոլսբերիին, որ Վանում Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Ուիլյամսից ստացված տեղեկությունների համաձայն, իրավիճակը քաղաքում չափազանց ճգնաժամային է. քրդերը շրջապատել են քաղաքը, հայերը հաջողությամբ պաշտպանվում են, իսկ տեղական իշխանությունները սպասում են սուլթանի որոշմանը՝ հայերին ներում

շնորհելու և անվտանգությունն ապահովելու վերաբերյալ:384 Ինքնապաշտպանները հաջողությամբ կասեցնում էին քրդական հրոսակախմբերի հարձակումները, սակայն զենքի և զինամթերքի պակասը ստիպում է նրանց ղեկավարներին համաձայնելու Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսի առաջարկությանը՝ դիմադրությունը դադարեցնելու մասին: Ուիլյամսի միջնորդության շնորհիվ շուրջ 1500 հայ մարտիկ հեռանում են քաղաքից դեպի

382 Turkey, No. 8 (1896)..., pp. 118-119, 121.
383 Նույն տեղում, էջ 206:
384 Նույն տեղում, էջ 206-207:



Պարսկաստան: Սակայն սուլթանական կառավարությունը չի կատարում հայ մարտիկների և բնակչության անվտանգությունն ապահովելու իր խոստումը: Պարսկաստանի ճանապարհին թուրքերը հարձակվում են նրանց վրա, որի արդյունքում մեծամասնությունը զոհվում է: Ինչ վերաբերում է Վանին, ապա հունիսի 23-ին թուրք զինվորներն ու համիդեականները անարգել ներխուժում են քաղաքի հայկական թաղամասերը, թալանում և կոտորում հայ բնակչությանը: Ուիլյամսի տեղեկությունների համաձայն, այդ օրը միայն զոհվեց 400 հայ, սակայն իր և տեղական իշխանությունների համագործակցության շնորհիվ, բրիտանական դրոշի ներքո հաջողվեց փրկել շուրջ 15 հազ. հայի կյանք:385

Այսպիսով, արևմտահայերի ազգային ազատագրական պայքարը, իրենց կենսապայմանները բարելավելու, տեղական թուրք իշխանությունների և քոչվոր ցեղերի կողմից հալածանքներն ու կեղեքումները դադարեցնելու նրանց արդարացի պահանջները, եվրոպական և, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի հասարակական կարծիքի ճնշման ներքո Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու բրիտանական քաղաքականությունը վերջին հաշվով հանգեցրին Օսմանյան կայսրության հայ բնակչության ծրագրված բնաջնջման իրագործմանը: Սուլթանական կառավարությունը հաջողությամբ մշակեց և իրականացրեց հայերին կոտորելու մի ամբողջ համակարգ այն շրջաններում, որտեղ նրանք կազմում էին բնակչության զգալի տոկոս, որպեսզի ի չիք դարձնի բարենորոգումներ անցկացնելու տերությունների պահանջները:

## 6. 1896 Թ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ

1896 թ. օգոստոսի 26-ի առավոտյան 31 հոգուց բաղկացած հայ ազատամարտիկների մի խումբ (հիմնականում Դաշնակցություն կուսակցության անդամներ), որոնք զինված էին ատրճանակներով և ուժանակային ռումբերով, գրավեց Օտոմանյան բանկը, սպառնալով պայթեցնել շենքը, եթե սուլթանը շտապ միջոցներ չձեռնարկի Արևմտյան Հայաստանում կոտորածները դադարեցնելու և բարենորոգումներն իրագործելու համար: Միաժամանակ

385 Նույն տեղում, էջ 222:

Կոստանդնուպոլսում եվրոպական տերությունների դեսպանությունները ստացան ՀՀԴ վիմատիպ ազդագրերը, ուր ներկայացված էին ազատամարտիկների պահանջները:386

Դրամատան գրավումը չափազանց անհանգստացրեց տերությունների կառավարություններին և այդ պատճառով էլ Կոստանդնուպոլսում իրեց դեսպանները խոստացան կատարել հայերի պահանջները, միայն թե նրանք հեռանան և անվնաս թողնեն դրամատունը: Եվրոպական տերությունների կառավարությունները հույժ շահագրգռված էին դրամատան պահպանմամբ, քանի որ պարբերաբար և կայուն կերպով ֆինանսավորում էին Բարձր Դռանը: 1890-1898 թթ. ընթացքում դրամատունը տերություններից ստացել էր 12 փոխառություն, որոնց ընդհանուր գումարը կազմում էր 12 միլիարդ ֆրանկ:387 Բացի այդ, Օտոմանյան բանկի միջոցով սուլթանական կառավարությունը մշակել էր բարենորոգումների ծրագիր՝ կայսրության ֆինանսական վիճակը բարելավելու նպատակով: Իրագործելով ֆինանսական վերափոխումներ, Բարձր Դուռը կկարողանար ապահովել իր համար հարաբերական անկախություն և եվրոպական տերությունների, գլխավորապես, Մեծ Բրիտանիայի ճնշումից ազատվելու երաշխիք և անորոշ ժամանակով հետաձգել բարենորոգումների ձեռնարկումն Արևմտյան Հայաստանում:

Սուլթանական իշխանությունները նախապես տեղյակ էին դրամատան գրավման ծրագրի մասին, բայց Աբդուլ Համիդը գիտակցաբար չկասեցրեց հարձակումը, որպեսզի հակահայկական տրամադրություններ հրահրի մայրաքաղաքի մահմեդական բնակչության շրջանում և վանի հայերից եվրոպական հասարակական կարծիքը:388 Այդ օրերին Կամարովսկին գրում էր, որ «թուրք իշխանությունները, նախապես իմանալով Օտոմանյան բանկի վրա հայերի կողմից նախապատրաստվող հարձակման մասին, ոչ միայն միջոցներ չձեռնարկեցին կանխելու դրա իրագործումը, այլև ճարպիկ ոստիկանական գործակալների

---

386 ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ, «Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո», ց. 1, գ. 51, 2-րդ մաս, էջ 10:
387 Оруджев М.Г. Из истории проникновения германского империализма в Турцию. Баку, 1961, с. 11.
388 The Constantinople Massacre. - The Contemporary Review, 1896, vol. 70, p. 458; The Massacres. - The Spectator, 1896, September 5, vol. 77, p. 292; Kurkjan V.M. A History of Armenia. New York, 1958, p. 296.



միջոցով ամեն կերպ բորբոքեցին ոգևորվող հայերի հայրենասիրական խանդավառությունը և այնուհետև օգտվեցին այդ առիթից՝ զանգվածային կոտորած կազմակերպելու համար...»:389 Իսկ Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպանության քարտուղար Ռոբերտսի կարծիքով, Աբդուլ Համիդի կառավարությունը հատկապես թույլ տվեց Օտոմանյան բանկի գրավումը, որպեսզի մարդկության աչքում արդարացնի նրան հաջորդած կոտորածը:390

1896 թ. օգոստոսի ընթացքում սուլթանական կառավարությունն առիթ էր փնտրում Կոստանդնուպոլսի հայ բնակչության հերթական ջարդ կազմակերպելու համար: Դրամատան հարձակումից դեռևս մի քանի շաբաթ առաջ մայրաքաղաքի թուրք

բնակչությունը սկսել էր հաց պահանջել կառավարությունից: Հակառակ պարագայում մահմեդականները սպառնում էին կողոպուտի ու ջարդի ենթարկել մայրաքաղաքի հայկական թաղամասերը:391 Ամերիկացի միսիոներ Փիրսը վկայում էր, որ կոտորածից առաջ, նամազի ժամանակ Աբդուլ Համիդը մոլեռանդորեն կոչ էր անում մահմեդականներին անխնա կոտորել հայերին:392

Հետաքրքիր է, որ 1896 թ. մայրաքաղաքի հայերի ջարդը սկսվեց սուլթանի հրովարտակի հրապարակման նախորեին, որով հայտարարվում էր, թե եվրոպական տերությունների հետ բանակցություններ են սկսվում Կրետե կղզին Հունաստանին միացնելու հույն բնակչության պահանջի առնչությամբ, իսկ 1895 թ. կոտորածը սկսվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին սուլթանի հայտարարությունից անմիջապես հետո: Հրապարակավ տեղեկացնելով տերություններին կայսրության որևէ քրիստոնյա փոքրամասնության կենսապայմանների բարելավման համար վերափոխումներ իրականացնելու իր ցանկության մասին, սուլթանը դրանով իսկ քրիստոնյաների դեմ էր գրգռում կայսրության մահմեդական բնակչությանը և կազմակերպած ջարդերի միջոցով կանխում քրիստոնյաներին ինչ-ինչ զիջումներ անելու հանգամանքը:

_____
389 Камаровский Л. Восточный вопрос и его жертвы. - Новое слово, 1896, декабрь, с. 177.
390 Roberts Ch. A Mother of Martyrs. - the Atlantic Monthly, 1899, vol. 83, p. 95.
391 Հնչակ, 1896, 1 սեպտեմբերի, էջ 129:
392 Pears E. Turkey and its People, London, 1911, pp. 40-41.

401

Օգոստոսի 27-ին Կոստանդնուպոլսի տարբեր շրջաններում միաժամանակ հայտնվեցին մոլեռանդ մահմեդականների զինված խմբեր, որոնք միանգամայն բացեիբաց սկսեցին ջարդել հայերին, չհանդիպելով ոչ մի դիմադրություն թուրք ոստիկանների և զինվորների կողմից:393 Ռուս դեսպան Նելիդովը վկայում էր. «...Թուրքական տարբեր թաղամասերից դուրս թափվեցին դանակներով և մահակներով զինված բաշիբոզուկների ամբոխներ, որոնք սկսեցին հարձակվել բոլոր նրանց վրա, ում հայի տեղ էին դնում, և սկսվեց անպաշտպան ու միանգամայն անմեղ քրիստոնյաների ամենաբարբարոս ջարդը: Ոստիկանությունը ոչ միայն մնում էր տեղի ունեցող սարսափների անվրդով ականատեսը, այլև շատ դեպքերում մասնակցում էր սպանություններին ու կողոպուտներին: Զորքերը, որ շատ ուշ երևացին անկարգությունների վայրում, նույնպես ոչինչ չէին ձեռնարկում դրանց դադարեցման համար: Այսպիսով, Ստամբուլի տարբեր վայրերում՝ Գալաթայում, Բերայում և անգամ մի քանի հեռավոր թաղերում, ընդհուպ մինչև երեկո, ահավոր հաշվեհարդար էր գործադրվում քրիստոնյաների նկատմամբ, ինչը դադարեցնելու համար ոչ մի միջոց չձեռնարկվեց»:394

Կոտորածը տարածվեց հիմնականում հայերի վրա, մայրաքաղաքի մնացած քրիստոնյա բնակչությունը գրեթե չտուժեց: Ռոբերտսի կարծիքով, կոտորածի շարժառիթները ոչ թե կրոնական, այլ քաղաքական բնույթ էին կրում: Նրա խոսքերով, թուրքերը համոզված էին, որ հայերը դավադրություն էին նյութում «սրբազան» սուլթանական կառավարության դեմ: Հայերին թույլատրված էր սպանել, քանի որ թուրք իշխանությունները չէին ցանկանում

ընդհարվել իրենց «գազազած» մահմեդական հպատակների հետ, չցանկանալով կորցնել առանց այդ էլ երերված հեղինակությունը:395

Դրամատունը զավթած հայերը պալատ ուղարկեցին դրամատան տնօրենի օգնական Օբուանոյին, որին հանձնարարվել էր հայտնել Աբդուլ Համիդին, որ իրենք դուրս կգան, եթե ապահովվի իրենց բոլոր պահանջների կատարումը: Հենց այդ նույն ժամանակ պալատ էր ներկայացել Ռուսաստանի դեսպանության առաջին թարգման Մաքսիմովը, որին Նելիդովն

393 Вестник Европы, 1896, октябрь, с. 835.
394 ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ, «Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո», ց. 1, գ. 51, 2-րդ մաս, էջ 10:
395 Roberts Ch. Op.cit., p. 92.



ուղարկել էր ստեղծված կացության առնչությամբ իր ծառայություններն առաջարկելու սուլթանին: Սուլթանը խնդրում է նրան մասնակցել դրամատունը գրաված հայերի հետ բանակցելուն, խոստանալով նրանց ազատորեն դուրս գալ շենքից և մեկնել Թուրքիայից, եթե հրաժարվեն դրամատունը պայթեցնելու իրենց մտադրությունից: Դրամատան տնօրեն Վինցենտի և Օբուանոյի հետ Մաքսիմովը գնում է դրամատուն՝ հայերի հետ բանակցելու նպատակով: Երեք ժամ տևած բանակցություններից հետո նրանց վերջապես հաջողվում է համոզել հայերին «...ի շահ իրենց պաշտպանած գործի, որին արդեն հնարավոր ամեն մասնակցություն է ցուցաբերել Եվրոպան, կամովին դուրս գալ դրամատնից և փոխադրվել անգլիական նավ, որպեսզի հաջորդ օրը մեկնեն արտասահման»:396

Թեև «անկարգությունների» գլխավոր պատճառը վերացված էր՝ դրամատունը գրաված հայերը նրա տնօրեն Վինցենտի զբոսանավով հեռացել էին Կոստանդնուպոլսից, սակայն անդորրը քաղաքում այդպես էլ չվերականգնվեց: Այն միջոցին, երբ Օտոմանյան բանկը դեռ գտնվում էր հայերի ձեռքում, սուլթանական կառավարությունը կազմակերպեց զինված քրդերի, ալբանացիների և լազերի հրոսակախմբերի փոխադրում Կոստանդնուպոլիս, որոնք քաղաքի մոլեռանդ խաժամուժի հետ ձեռք ձեռքի տված սարքեցին հայ բնակչության արյունահեղ սպանդ:397 Նախապես մշակված ծրագրի համաձայն, մարդասպանները զինված էին միատեսակ կապարե ծայրակալներ ունեցող հատուկ մահակներով, դանակներով ու հրազենով: Ինչպես պնդում էր Ալմա Ուիթլինը, արյունոտ գործողության անաղմուկ իրականացման գաղափարը պատկանում էր անձամբ Աբդուլ Համիդին:398 Միջոցներ էին ձեռնարկվել, որ ջարդարարներից ոչ մեկը չմասնակցեր սպանություններին ու կողոպուտներին իր թաղում, որպեսզի հետագայում, եթե տերությունների դեսպանությունները պահանջեն նրանց պատժել, ոչ ոք չկարողանար ճանաչել ու մեղադրել մարդասպանին: Ոստիկանությունն ու զորքերը հրահանգ էին ստացել խոչընդոտել հայերի ամեն մի դիմադրություն և անհրաժեշտության դեպքում աջակցել ամբոխին: Կոտորածի միջոցին, որն անարգել շարունակվել էր երեք օր, ոստիկանությունն ու զորքերը չէին կորցրել հսկողությունը

396 ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ, ‘Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո’, ց. 1, գ. 51, 2-րդ մաս, էջ 11:
397 История дипломатии. Т.2, М., 1963, с. 336.
398 Wittlin A. Abdul Hamid. The Shadow of God. London, 1949, pp. 177-178.



քաղաքի ընդհանուր իրադրության նկատմամբ: Որոշ թաղամասեր՝ Սկյուտարը, Գում Գափուն և ուրիշներ, անհայտ պատճառներով լիովին վերահսկվում էին և թվում սովորականի նման խաղաղ ու հանգիստ: Կոտորածն ու թալանը առավել դաժան էին ամբողջ Ոսկեղջյուրի երկայնքով՝ Դոլմաբախչեի դղյակից մինչև Գատըգյուղ և Սառայ Բուռտնիե հրվանդանից մինչև Այվան ապարանքը ձգվող թաղերում, ինչպես նաև Սամաթիայում, Յոթնաշտարակ դղյակի և Ադրիանապոլսյան դարպասի մոտ: Ամենից շատ հայեր սպանվեցին Բերայում: Բազմաթիվ ականատեսների վկայությամբ, որոշ տեղերում արյունը բառացիորեն հոսում էր փողոցներով: Առանց որևէ կարեկցանքի սպանում էին յուրաքանչյուրին, եթե պարզում էին, որ նա հայ է: Զոհ գնացած հայերի մեծամասնությունը բանվորներ էին, հիմնականում բեռնակիրներ, սակայն մոտավորապես հիսուն կանանց հետ ջարդի զոհ դարձան զգալի թվով մտավորականներ, վաճառականներ և ուսնոր այլ մարդիկ:399

Նավամատույցի մոտ կանգնած անգլիական «Ռամզես» նավի սպա Ուիլյամ Ջոնսոնը վկայում էր. «Ես երբեք նման դաժանություն չէի տեսել: Հայերին սպանում էին ինչպես առնետների՝ ոտքերով ու քարերով...Ամեն առավոտյան անհամբերությամբ սպասում էինք անգլիական նավատորմի հայտնվելուն, որպեսզի նա հողմացրիվ աներ այդ վայրը...»:400

Հայերի կոտորածի մասին մի շարք վկայություններ կան «Contemporary Review» հանդեսի «Կոստանդնուպոլսի կոտորածը» խմբագրական հոդվածում: Այսպես, թարգման Մաքսիմովը հանդիպել էր փողոցում երկու թուրքի, որոնք ծեծելով մահվան դուռն էին հասցրել մի հայի: Իր թիկնապահի օգնությամբ նա բռնել էր դրանցից մեկին և տարել մոտակա ոստիկանական տեղամաս, պահանջելով բանտարկել մարդասպանին: Մերժում ստանալով, դիվանագետը տանում է նրան սուլթանական պալատ, որտեղ պարզվում է, որ այդ մարդը թուրք զինվորական սպա է:401

Շատ դեպքերում, երբ դիվանագետները դիմել էին թուրք սպաներին՝ պահանջելով միջամտել և դադարեցնել անզեն մարդկանց սպանությունները, նրանց պատասխանում էին.

---

399 ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ, «Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո». ց. 1, գ. 51, 2-րդ մաս, էջ 14:
400 McDermot G. The Great Assassin and the Christians of Armenia. - The Catholic World, 1896, vol. 64, December, pp. 295-305.
401 The Constantinople Massacre. - The Contemporary Review, 1896, vol. 70, p. 460.



«Մենք մեր կարգերն ունենք»:402 Մի ականատես պատմում էր, թե ինչպես էր ամբոխը ծեծում հայ քահանայի մի ֆրանսիացու տան առջև: Երբ բնակիչները փորձում են բողոքել,

թուրք սպան նրանց պատասխանում է, որ կառավարությունն իրավունք է տվել սպանելու գյավուրներին:403 Հայ բնակչության կոտորածին մասնակցում էին նաև կանայք: Այսպես, դեպքերի ականատեսը վկայում էր, թե ինչպես էր «թուրք կանանց ամբոխը, ճչալով, ծիծաղելով ու ոտքերով տրորելով այն ամենը, ինչ չէր կարող տանել իր հետ, թալանում իրենց կողմից սպանած հայի փոքր կրպակը»:404

Մայրաքաղաքի որոշ շրջաններում հայերը փորձում էին կազմակերպել ինքնապաշտպանություն, սակայն նման դեպքերում գործին միջամտում էին թուրք զինվորները: ԱՄՆ դեսպանության թարգման Լեմլեի վկայությամբ, սպառելով դիմադրության բոլոր հնարավորությունները, Սամաթիայի շրջանի հայ եկեղեցում բարիկադված հայերը մեծ թվով զինվորների էին ներս թողել եկեղեցի և պայթեցրել այն:

Սուլթան Աբդուլ Մեջիդի հավատարիմ քարտուղարի դուստր՝ հայուհի Մանելյանի վկայությամբ, կոտորածի ժամանակ զոհվել էին նրա երեք որդիները: Երկու օր շարունակ եղբայրները ետ էին մղել թուրք զինվորների գրոհները, սակայն երբ վերջանում են փամփուշտները, նրանք ինքնասպան են լինում: Կինը նետվում էր մի մահացած որդուց մյուսը: Տուն ներխուժած զինվորները մի որոշ ժամանակ լուռ դիտում էին այդ տեսարանը, ապա նրանցից մեկն ասաց. «Թողեք այդ պառավ շանն իր սատկած լակոտների հետ»:405

Կոստանդնուպոլսի կոտորածը մանրամասնորեն նկարագրել էր ռուս հրապարակախոս Օլգա Կայդանովան: «Մեր տեսած ահավոր պատկերները հիմա էլ աչքիս առաջ են, - գրում էր նա, - հազիվ եմ հավատում, որ դա իրոք եղել է...Թուրքերը ջարդում են հայերին: Մի քանի հայեր, որոնք աշխատում էին նավահանգստում, սպանվեցին ակնթարթորեն, տեղնուտեղը՝ փայտերով գլխներին հասցված մի քանի հարվածով: Մյուսներին նետում էին ամբոխի մեջ, որը վերջ էր տալիս նրանց, քարշ տալիս փողոցով, ոտնակոխ անում փոշու մեջ...Ոստիկանությունն այդ օրը ասպարեզում էր հայտնվում այն

_____

402 Նույն տեղում, էջ 461:
403 Kalopothakes D. The Constantinople Massacres. - The Nation, 1896, October 8, p. 266.
404 The Constantinople Massacre..., p. 460
405 Roberts Ch. Op. cit., pp. 92, 94-96.

405

ժամանակ, երբ ջարդից հետո փողոցները մաքրվում էին դիակներից...Նողկալի թալանը շարունակվեց ամբողջ օրը: Երբ ամբողջ ունեցվածքը կողոպտված էր, սկսեցին ջարդել լուսամուտների շրջանակները, դռները, կողոպտած բարիքը քարշ էին տալիս տարբեր կողմեր...Արևը ծագելուն պես նորից սկսվեց նույնը. հավանաբար գիշերն էլ չդադարած գազանությունները, որոնք մի առ ժամանակ քողարկել էր խավարը, նորից սկսեցին երևալ ամենուրեք: Հայերի բոլոր խանութներն ու կրպակները թալանված էին: Ռուս նավաստիները պատմում էին, որ սպանվածների դիակները չէին հասցնում դուրս տանել»: Կայդանովան այդ ամենն անվանում էր «համատարած և զանգվածային կոտորած, մարդորս»:406

Դիակները քաղաքից դուրս բերելու համար վաղօրոք նախապատրաստվել էին մեծ քանակությամբ սայլեր ու սայլակներ: Ականատեսների վկայությամբ, երեկոյան ժամը տասի մոտ Կոստանդնուպոլսի փողոցներում «հայտնվում էին սպանվածների

մարմիններով բեռնված հսկայական սայլեր»:407 Հաշվել էին, որ օրվա ընթացքում Գալաթայից ու Բերայից դուրս էին տարել ամբողջությամբ բեռնված 28 եզնասայլ և 136 սովորական սայլ, մայրաքաղաքի ուրիշ շրջաններից Գատըգյուղի ճանապարհով անցել էր 71 սայլ: Հույն դիվանագետ Կալոպոտակեսը բերում է մի երիտասարդ հայի պատմածը, որը բեռնակիր էր աշխատել Կոստանդնուպոլսի ոստիկանական գլխավոր տեղամասում և ապաստան էր գտել Հունաստանի դեսպանատանը: Ջարդի ժամանակ ոստիկանության պետը բեռնակիրներին ուղարկում էր գերեզմանատուն, ուր սայլերով բերում էին սպանվածների դիակները: Բեռնակիրները, որոնք հիմնականում հայեր էին, առանձնացնում էին մահմեդականների ու հայերի դիակները և թաղում առանձին: Նրանք աշխատում էին ոստիկանների հսկողության ներքո և հնարավորություն չունեին հարյուրավոր դիակների միջից փրկելու ողջ մնացած

406 Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898, с. 75-80.
407 Амфитеатров А. Армянский вопрос. С.Петербург, 1906, с. 5-6.



հայերին, որոնք տնքում էին ու օգնություն աղերսում:408 Մեծ քանակությամբ դիակներ ուղղակի նետվում էին ծովը:409

Կոստանդնուպոլսի իրադարձությունների ականատեսների տեղեկությունները սպանվածների թվաքանակի վերաբերյալ հիմնականում համընկնում են: Ռուսաստանի ռազմական գործակալ, գնդապետ Պեշկովի տվյալների համաձայն, երկու օրվա ընթացքում սպանվել էր ավելի քան 5 հազ. 500 հայ,410 որոշ ականատեսների վկայությամբ՝ 8 հազ. 750,411 ուրիշների՝ 10 հազ.,412 և նույնիսկ 13 հազ. 600:413

Այդ օրերին վեց տերությունների դեսպանությունները ապարդյուն փորձեր էին կատարում հայ բնակչության ջարդը դադարեցնելու ուղղությամբ՝ օգոստոսի 27-ին, 31-ին և սեպտեմբերի 15-ին անօգուտ միացյալ բողոքի հայտագրեր ներկայացնելով Բարձր Դռանը:414 Աբդուլ Համիդի ծննդյան օրը տերությունների դեսպանները հրաժարվեցին դեսպանատներում տոնական հրավառություններ անցկացնելուց: Սակայն բողոքի այդ նշանը նույնպես օգուտ չտվեց: Սեպտեմբերի 5-ին «Spectator»-ը գրում էր. «Տերությունները, անկասկած, անկեղծորեն ձգտում էին կանխել անցած շաբաթ տեղի ունեցած սարսափները, երբ Գալաթան վերածվեց սպանդանոցի. թուրք խաժամուժը տղամարդկանց, կանանց և երեխաներին սպանում էր զինվորների ու ոստիկանության աչքի առաջ...Սուլթանը հիմար չէ, որ վախենա իր ծննդյան օրվա պատվին մոմեր ի ցույց դնելուց դեսպանների

408 Kalopothakes D. Op.cit., pp. 266-267:
409 1896 թ. աշնանը ռուսական «Новое время» պարբերականը բազմանշանակալից գրում էր. «Եվրոպացիները հիմա Կոստանդնուպոլսում ձուկ չեն ուտում: Ես էլ եմ զզվում Բոսֆորի ձկից. այն անչափ ճարպոտ է»:
410 ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ, ֆ. «Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո», ց. 1, գ. 51, 2-րդ մաս, էջ 14:
411 Abbott L. Armenian Question. - The Outlook, 1896, vol. 54, p. 1036; The Constantinople Massacre..., pp. 459-460; Bryce J. Transcaucasia and Ararat. London, 1896, p. 516.

412 Тыркова А. Старая Турция и младотурки. Петроград, 1916, с. 62: Roberts Ch. Op.cit., p. 90.
413 Antoine E. Op.cit., p. 90.
414 Turkey, No. 1(1897). London, 1897, pp. 21, 29, 52.

407

հրաժարվելուց...Սուլթանն այժմ վստահ է, որ Եվրոպայի հակասությունները իրեն տեր դարձրին սեփական տանը և որ հետագայում ինքն այլևս ոչինչ չունի վախենալու արտաքին ճնշումից»:415

Կոստանդնուպոլսի ջարդի օրերին բրիտանական դեսպանությունն առաջվա պես ակտիվ չէր և այս անգամ աչքի չընկավ առանձին նախաձեռնություններով: Քարրին գտնվում էր Լոնդոնում, դեսպանությունը ղեկավարում էր Հերբերտը: Սոլսբերիին ուղղված օգոստոսի 28-ի, 30-ի, 31-ի, սեպտեմբերի 3-ի իր զեկուցագրերում նա գրում էր, որ կոտորածը դադարեցնելու դեսպանությունների փորձերը գլխավորում էր Ռուսաստանի դեսպան Նելիդովը, որը չէր բավարարվում բողոքի անարդյունավետ հայտագրերով: Նա նախազգուշացրել էր սուլթանին, որ եթե կոտորածը չդադարեցվի, ինքը հրամայելու է ռուսական նավերին կրակել Բույուկդերեի վրա: Ինչպես վկայում էր Հերբերտը, ռուս դեսպանի վճռական կեցվածքը հարկադրեց սուլթանին ցրվելու հրաման տալ վայրենի խաժամուժին:416

Եվրոպական դիվանագիտական ներկայացուցչությունները մեծ աշխատանք տարան հազարավոր հայ գաղթականներին փրկելու ուղղությամբ: Դրա շնորհիվ 12 հազ. հայ ապաստան գտավ Բուլղարիայում, շուրջ հազար՝ Ալեքսանդրիայում, 1200՝ Աթենքում և Պիրեյում, մի քանի հարյուր՝ Մարսելում:417

Կոստանդնուպոլսի իրադարձությունները հերթական կոտորածն էին Օսմանյան կայսրության հայ բնակչության ջարդերի շղթայում, որոնք կազմակերպեց Աբդուլ Համիդի կառավարությունը, նպատակ ունենալով բնաջնջել հայերին ոչ միայն իրենց պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի տարածքում, այլև ամբողջ երկրում:
7. 1896 թ. ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

_____
415 The Massacres. - The Spectator, 1896, vol. 77, September 5, p. 292.
416 Grenville J.A.S. Op.cit., pp. 75-76.
417 Gulesian M.H. Armenian Refugees. - The Arena, 1897, vol. 17, p. 652; Kalopothakes D. Op.cit., pp. 265-266.

408

Սեպտեմբերի սկզբին «Spectator»-ը հույս էր հայտնում, որ տերությունների կառավարություններն ի վերջո համաձայնության կգան Հայկական հարցում: Ամենից ճիշտ լուծումն, ըստ շաբաթաթերթի, կայանում է Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ տերությունների համաձայնության ստորագրման մեջ, եթե իհարկե Ռուսաստանը դա թույլ տվեց: «Եթե տերությունները համաձայնության չգան, քանի որ Թուրքիայի ստատուս քվոյի քաղաքականությունը հանդիսանում է Եվրոպայում

խաղաղության պահպանման երաշխիքը, ապա այդ դեպքում անհրաժեշտ է գահնկեց անել Աբդուլ Համիդին, փոխարինելով նրան նոր սուլթանով»:418

Սեպտեմբերի 22-ին Բրիտանիա ժամանեց Ռուսաստանի կայսր Նիկոլայ 2-րդը կայսրուհու հետ, որոնք թագադրումից հետո շրջագայում էին եվրոպական մայրաքաղաքներով: Այցելության ժամանակ Վիկտորիա թագուհու ամառային նստավայր Բալմորալի ամրոցում (Շոտլանդիա) տեղի ունեցան անգլո-ռուսական բանակցությունները, որոնք հիմնականում նվիրված էին Օսմանյան կայսրությունում տիրող կացությանը և նրա ապագային:

Բրիտանական հասարակայնությունը մեծ հույսեր էր կապում Բալմորալի բանակցությունների հետ: «Spectator»-ն այդ օրերին նշում էր, որ բանակցությունների ընթացքում Նիկոլայ 2-րդը պետք է համոզվի, որ Մեծ Բրիտանիան ոչ մի «գեշ մտադրություններ» չունի, երբ առաջարկում է Ռուսաստանին գահնկեց անել Աբդուլ Համիդին: Շաբաթաթերթը նշում էր, որ Բալմորալում բանակցողները չպետք է մոռանան, որ Եվրոպայում պատերազմի կամ խաղաղության հարցը կախված է Նիկոլայ 2-րդի որոշումից, քանի որ եթե նա նույնիսկ մի քանի խոսք ասի հնագույն քրիստոնյա ժողովրդի օգտին, ապա վերջինս կփրկվի տանջանքներից և հալածանքներից: Ընդգծվում էր այն դրական դերը, որը կարող է խաղալ Ռուսաստանի կայսրը Հայկական հարցում:419 Իսկ «Հնչակ»-ը լավատեսորեն հայտարարում էր, որ իր դիվանագիտական տաղանդի շնորհիվ Սոլսբերին կկարողանա համոզել երիտասարդ կայսրին, որ բրիտանական կառավարությունը որևէ նկրտումներ չունի Հայկական հարցում:420

_____
418 The Massacres..., p. 292.
419 Czar`s Visit. - The Spectator, 1896, vol. 77, September 26, p. 389.
420 Հնչակ, 1896, No. 17:

409

Բալմորալի գաղտնի բանակցությունների միակ աղբյուր են հանդիսանում 1960 թ. բրիտանացի պատմաբան Մարգարետ Ջեֆերսոնի կողմից հրապարակված Սոլսբերիի և Նիկոլայ 2-րդի միջև կայացած զրույցների գրառումները, որոնք կատարել էր անձամբ վարչապետը և ներկայացրել այնուհետև կառավարության քննարկմանը:421 Ռուսական արխիվներում կայսրի զրույցների գրառումները Վիկտորիա թագուհու և Սոլսբերիի հետ հայտնաբերված չեն: Հայտնի է, որ Նիկոլայից բացի բանակցություններին մասնակցում էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Նիկոլայ Շիշկինը: Ռուս պատմաբան Բոլխովիտինովի կարծիքով, կայսրի և նախարարի պաշտոնակատարի ներկայությունը բանակցություններին ոչ պարտադիր էր դարձնում պաշտոնական հաշվետվության անհրաժեշտությունը:422 Մեծ Բրիտանիայի իրական դերը Հայկական հարցում պարզաբանելու համար մեծ նշանակություն ունի Բոլխովիտինովի կողմից հրապարակված դեսպան Ստաալի գաղտնի հուշագիրը՝ հոկտեմբերի 3-ին Սոլսբերիի հետ ունեցած իր զրույցի մասին, որը դեսպանն անվանում էր Բալմորալի բանակցությունների «արձագանքը»:423

Բանակցությունների ժամանակ կողմերն անդրադարձան միջազգային հարաբերությունների տարբեր խնդիրներին, սակայն քննարկման ամենից հիմնական

առարկան էր Արևելյան հարցը: Սոլսբերին համոզվեց, որ կայսրը «ներկայումս որոշակիորոն տրամադրված էր Թուրքիայի տարածքային ստատուս քվոյի պահպանման օգտին»: Սակայն միաժամանակ նա ընդունում էր, որ եթե, մի կողմից՝ յուրաքանչյուր տերության Թուրքիայի որևէ տարածքի գրավման փորձը կարող է սրել հակասությունները տերությունների միջև և պատճառ հանդիսանալ պատերազմի համար, ապա մյուս կողմից՝ ներկայիս իրավիճակը վտանգավոր է թողնել այնպես, ինչպես որ այն կա, քանի որ մոտ

421 Lord Salisbury`s Conversations with the Tzar at Balmoral, 27 and 29 September, 1896. – The Slavonic and East European Review, 1960, vol. 34, No. 92, December, pp. 216-218.
422 Болховитинов Н.Н. О позиции Солсбери в Восточном вопросе осенью 1896 г. - В кн.: Проблемы британской истории, М., 1973, с. 267.
423 Секретная записка русского посла в Лондоне Е.Е.Стааля о беседе с лордом Солсбери. - В кн.: Проблемы британской истории, М., 1973, с. 272.

410

ապագայում ֆինանսական դժվարությունները կարող են բերել Օսմանյան կայսրության լիիրավ սնանկության, որի արդյունքում հնարավոր կդառնա որևէ տերության, մասնավորապես, Ավստրո-Հունգարիայի միջամտությունը, ինչը նույնպես առիթ կդառնա եվրոպական պատերազմի համար: Կողմերը հանգեցին այն կարծիքին, որ «այնուամենայնիվ անհրաժեշտ է ինչ-որ մի բան ձեռնարկել»:424 Կարելի է եզրակացնել, որ կողմերը միանշանակորոն պաշտպանում էին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը, պատճառաբանելով իրենց դիրքորոշումը հնարավոր պատերազմի վտանգով: Հետագայում, Սոլսբերիի հետ կայացած զրույցի ժամանակ Ստաալը նշում էր, որ «...Թուրքիայի ներկայիս ստատուս քվոյի պաշտպանությունը հանդիսանում է մեր քաղաքականության գլխավոր ուղեգիծն այդ շրջանում»: Նա ապացուցում էր, որ այն «...համապատասխանում է բոլոր տերությունների շահերին և...կստանա եվրոպական համերգի աջակցությունը»:425

Բալմորալում Սոլսբերին առաջարկում էր ուղղել տերությունների գործողությունները ոչ թե Օսմանյան կայսրության ամբողջականության, այլ անձամբ սուլթանի դեմ: Իր հերթին Նիկոլայ 2-րդն «ընդունեց, որ ներկայիս սուլթանի զահընկումը պետք է հանդիսանա անհրաժեշտ միջոց...» կայսրության իրավիճակի բարելավման համար:426 Բրիտանական կառավարության ղեկավարը նույնիսկ առաջարկեց հրահանգներ իջեցնել Կոստանդնուպոլսում երկու տերությունների դեսպաններին այն մասին, «որ սուլթանի փոխարինումը հանդիսանում է խնդիրը լուծելու հարմարագույն միջոցը»: Նա նշում էր, որ սեպտեմբերի 27-ին Ռուսաստանի կայսրը նկատելի հավանությամբ ընդունեց իր այդ առաջարկը,427 սակայն հաջորդ հանդիպման ժամանակ (29 սեպտեմբերի), քննարկելով խնդիրն իր խորհրդատուների հետ, նա հայտարարեց, որ Աբդուլ Համիդի տապալումը ներկայացնում է իրենից բավականին դժվար խնդիր, քանի որ հայտնի չէ, թե ինչպես կվերաբերվեն այդ իրադարձությանը մահմեդականները: Նիկոլայ 2-րդի կարծիքով, «...շատ հավանական է, որ նրանք կհամարեն նոր սուլթանին որպես քրիստոնյաների դրածո և

424 Lord Salisbury`s Conversations..., p. 216.
425 Секретная записка..., с. 273.

426 Lord Salisbury`s Conversations..., p. 216.
427 Նույն տեղում, էջ 217:

411

կիրաժարվեն ենթարկվել նրան կամ էլ հնարավոր է սպանեն նրան»: Սոլսբերին ընդունում էր, որ կայսրի մտավախությունները ոչ անհիմն են, սակայն համարում էր, որ իրադարձությունների զարգացումը կարող է հանգեցնել շատ ավելի լուրջ ճգնաժամի, որին կհետևի Օսմանյան կայսրության ամբողջական փլուզումն ու բաժանումը:428 Հետագայում Ստաալն ասում էր Սոլսբերիին, որ Ռուսաստանը չի կարող ընդունել Մեծ Բրիտանիայի առաջարկը սուլթանին «խնամակալության» տակ առնելու կապակցությամբ: Ռուս դեսպանի կարծիքով, «...ոչինչ չի կարող ապացուցել, որ նույնիսկ գահի փոփոխությունը կարող է իրապես ուղղել ներկայիս կացությունը»: Նա ենթադրում էր, որ օտարերկրյա միջամտության արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները ՝կարող են սնունդ տալ մահմեդական մոլեռանդությանը, որն այսօր արդեն բավականին ահարկու է՝:429

Բալմորալյան բանակցությունների ընթացքում Սոլսբերին եկավ այն եզրահանգման, որ Ռուսաստանի շահերը կենտրոնացած են հիմնականում նեղուցների շուրջ: Նիկոլայ 2-րդը նշում էր, որ Բոսֆորն ու Դարդանելը պետք է գտնվեն Ռուսաստանի հսկողության ներքո, քանի որ դրանք «...հանդիսանում են այն սենյակի դուռը, որտեղ որ նա է ապրում և ուստի համառորոն պահանջում է այդ դռան բանալիները»:430 Այսպիսով, չնայած Օսմանյան կայսրության ստատուս քվոյի պաշտպանության քաղաքականությանը, ցարական կառավարությունը միաժամանակ ձգտում էր հսկողություն սահմանել Բոսֆորի և Դարդանելի նկատմամբ: Նեղուցների տիրապետումը նշանակում էր Ռուսաստանի համար ոչ միայն նավերի ազատ ելք Միջերկրական ծով և այնուհետև Սուեզի ջրանցքով դեպի Հնդկական

_____
428 Նույն տեղում, էջ 221:
429 Секретная записка..., с. 272.
430 Դեռևս 1879 թ. Բեռլինում Ռուսաստանի դեսպան Սաբուրովը ասում էր, որ ռուսական շահերի տեսանկյունից գոյություն ունի նեղուցների հարցի մեկ բավարար լուծում, որը ձևակերպված է Նիկոլայ 1-ի հետևյալ խոսքերում. «Մենք պետք է տիրանանք մեր տան բանալիին: Այդ բանալին կարող է ապահովել մեր հարավային սահմանների անվտանգությունը: Բոսֆորի մուտքին տեղադրված մեկ մարտկոցը կփոխարինի մեզ սևծովյան ափի հսկայական տարածքների պաշտպանության համար ներկայումս անհրաժեշտ նավատորմը, բանակը և առաջնակարգ ամրոցների ողջ շղթան» (Сказкин С. Конец австро-русско-германского союза. Т. 1, М., 1928, с. 124):

412

օվկիանոս, այլև փաստացի հսկողություն ամբողջ Թուրքիայի տարածքի հանդեպ, թեև Բալմորալում կայսրը մի քանի անգամ ընդգծում էր, որ ոչ Կոստանդնուպոլսը, ոչ էլ նեղուցների երկու կողմն ընկած Օսմանյան կայսրության տարածքները Ռուսաստանին բացարձակ չեն հետաքրքրում:431

Սոլսբերին ասում էր Նիկոլային, որ Մեծ Բրիտանիան հետաքրքրված չէ նեղուցների հսկողության մեջ և նույնիսկ ակնարկում էր դրանք Ռուսաստանին տրամադրելու

հնարավորության մասին, թեև հետագայում չէր թաքցնում Ստաալից, որ չէր ցանկանա տեսնել Բոսֆորի ափերին «հզորագույն Ռուսաստանի կողքին և նրա անունից գործող սուլթանի ուրվականին»:432 Վարչապետը նախազգուշացնում էր կայսրին, որ Ռուսաստանի կողմից նեղուցների միանձնյա տիրապետումը խորապես դիպչելու է Միջերկրական համաձայնագիրը ստորագրած երկրների՝ Ռումինիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և Ավստրո-Հունգարիայի շահերին:433 Ավստրո-հունգարական կառավարության համոզմամբ, «նեղուցների տիրուհին դարձած տերությունն ամբողջությամբ հսկելու է Բուլղարիայի և Էգեյան ծովի միջև գտնվող Օսմանյան կայսրության շրջանները: Ռուսաստանի հսկողությունը Եվրոպական Թուրքիայի շրջանների նկատմամբ վտանգելու է Ավստրո-Հունգարիայի ամբողջականությանը, սպառնալով խախտել կայսրության սլավոնական և ոչ սլավոնական տարրերի միջև գոյություն ունեցող հավասարակշռությունը»: «Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային,- նկատում էր Սոլսբերին, - ապա նրա շահերը Միջերկրական ծովում սահմանափակվում են միմիայն Մալթայով և Եգիպտոսով»:434 Բրիտանական

431 Lord Salisbury`s Conversations..., pp. 218-221.
432 Секретная записка..., с. 273.
433 Համաձայնագիրը ստորագրված էր 1887 թ. փետրվարի 12-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի և Իտալիայի կողմից, իսկ նույն թվականի մարտի 24-ին նրանց միացավ նաև Ավստրո-Հունգարիան: Ստորագրող կողմերը պարտավորվում էջն պահպանել Սև, Էգեյան, Ադրիատիկ և Միջերկրական ծովերի ավազանների ստատուս քվոն:
434 Lord Salisbury`s Conversations..., p. 219. Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան Կալիցեի և Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս լորդ Կրոմերի միջև կայացած զրույցի ժամանակ վերջինս նշում էր, որ Եգիպտոսի տիրապետումից հետո Բոսֆոր և Դարդանել նեղուցներն, ինչպես և Կոստանդնուպոլիսը դարձել են քիչ կարևոր Մեծ



կառավարության ղեկավարը փաստորեն հասկացնել էր տալիս Նիկոլային, որ եթե Ավստրո-Հունգարիան, Ֆրանսիան և Իտալիան հավանություն տան Ռուսաստանի կողմից նեղուցների միանձնյա հսկողության հաստատմանը, ապա Մեծ Բրիտանիան նույնպես այդ բանին չի խոչընդոտելու:

Բանակցությունների ժամանակ կողմերը քննարկեցին նաև Եգիպտոսի և Սուեզի ջրանցքի հարցերը: Նկատի առնելով այն հանգամանքը, որ ցարական Ռուսաստանի քաղաքականությունն այդ ժամանակ ուղղված էր դեպի Հեռավոր Արևելք, ռուսական նավերի ազատ անցումը Սուեզի ջրանցքով ստանում էր հատուկ նշանակություն: Սակայն առանց համապատասխան ազատ մուտքի երաշխիքներ ունենալու Բոսֆորի և Դարդանելի նեղուցները փաստորեն արժեքազրկվում էին: Եգիպտոսի վերաբերյալ Նիկոլայ 2-րդը հայտարարում էր, որ ոչ մի առարկություն չունի Մեծ Բրիտանիայի կողմից նրա գրավման առնչությամբ, սակայն այդ հարցում բավականին մեծ շահագրգռվածություն ունի Ֆրանսիան: Սոլսբերին պատասխանում էր, որ անձամբ ինքը ոչ մի պատասխանատվություն չի կրում Եգիպտոսի գրավման համար և հույս ունի, որ շատ շուտով բրիտանական զորքը դուրս է բերվելու այնտեղից: Միաժամանակ նա նշում էր,

բրիտանական բանակը մեծ հաջողությամբ իրականացնում է քաղաքակրթական առաքելություն Եգիպտոսում և եգիպտական ժողովուրդն ինքն է շահագրգռված Մեծ Բրիտանիայի կողմից իր երկրի ժամանակավոր գրավման մեջ: Սոլսբերին հիշեցնում էր Նիկոլայ 2-րդին, որ 1851 թ. Նիկոլայ 1-ինն առաջարկել էր բրիտանական կառավարությանը գրավել Եգիպտոսը Օսմանյան կայսրության բաժանման պարագայում: Կայսրը կրկին ընդգծում էր, որ Ռուսաստանը չի առարկում Մեծ Բրիտանիայի կողմից Եգիպտոսի գրավման կապակցությամբ, իրեն պետք է միմիայն նավերի ազատ անցումը Սուեզի ջրանցքով: Ինչ վերաբերում էր Ֆրանսիայի դիրքորոշմանը, ապա Սոլսբերին առաջարկում էր, որպես փոխհատուցում, տրամադրել նրան Սիրիան:435

Բալմորալյան բանակցությունները ցույց տվեցին, որ Ռուսաստանը շահագրգռված չէր Թուրքիայի մասնատման մեջ, թեև Բոսֆորն ու Դարդանելը չէին կորցրել նրա համար իրենց

---

Բրիտանիայի, քան Ավստրո- Հունգարիայի համար (Kedourie E. Young Turks, Freemasons and Jews. - Middle Eastern Studies, 1971, No. 1, p. 103)
435 Lord Salisbury`s Conversations..., p. 217.

414

նախկին նշանակությունը: Միաժամանակ ցարական կառավարությունը բավականին անվստահ կեցվածք էր դրսևորում բրիտանական իշխանությունների հանդեպ:436 Հասկանալով դա, Վիկտորիա թագուհին և Սոլսբերին փորձում էին հրապուրել Նիկոլայ 2-րդին անգլո-ռուսական մերձեցման գաղափարով, համոզել, որ երկու տերությունների միջև այլևս հակասություններ գոյություն չունեն ոչ Հեռավոր, ոչ էլ Մերձավոր Արևելքում:437 Իր օրագրում Սոլսբերին գրում էր. «Ես կարծիք արտայտեցի, որը նա (կայսրը) պաշտպանեց, այն մասին, որ ներկայումս պատճառ չկա Ռուսաստանի և Անգլիայի միջև թշնամության համար, բացառությամբ նեղուցների հարցի: Ես նշեցի, որ Անգլիայի հետաքրքրությունն այդ հարցի նկատմամբ այնքան էլ մեծ չէ, ինչպես մյուսների մոտ և կրում է զուտ ծովային բնույթ: Ես համաձայնեցի, որ գոյություն ունեցող տեսությունն այն մասին, որ Կոստանդնուպոլսի թուրքական ղեկավարությունը հանդիսանում է մեր հնդկական կայսրության բաստիոնը, այլևս չպետք է պաշտպանվի»:438

Բանակցությունների ընթացքում կողմերն այդպես էլ որևէ կոնկրետ համաձայնության չեկան: Հոկտեմբերի 3-ին «Spectator»-ը գրում էր, որ դեռևս տեղեկություն չկա, թե արդյոք կողմերն «էֆեկտիվ համաձայնության» հասել են Բալմորալում, թե ոչ, սակայն ակնհայտորեմ հայտնի է, որ նրանք «մի քանի ժամ խորհրդակցել են և որ հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև գոյություն ունեցող խորը ճեղքվածքը չի լայնացել»:439

Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի փոխադարձ մրցակցությունը հանդիսանում էր Մերձավոր Արևելքում միջազգային քաղաքականության հիմքը, որը կարևորագույն գրավականն էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման համար: Այդ հանգամանքն, իր հերթին, չէր բացառում և նույնիսկ կանխորոշում էր թուրք իշխանությունների կողմից այլևս որդեգրած Օսմանյան

կայսրության հայ բնակչության բնաջնջման քաղաքականության անպատիժ շարունակությունը: Բալմորալում կողմերից ոչ

436 Դեռևս 1895 թ. Լոբանով-Ռոստովսկին համարում էր, որ Սոլսբերիի վարքագիծը «հեռու է անբասիր լինելուց և միանգամայն կարող է կասկած հարուցել» (Из дневника В.Н.Ламздорфа. – Вопросы истории, 1977, No. 6, с. 102):
437 Grenville J.A.S. Op.cit., pp. 78-79.
438 Lord Salisbury`s Conversations..., p. 218.
439 Grenville J.A.S. Op.cit., pp. 78-79.



մեկը անհանգստություն կամ կարեկցանք չարտահայտեց 1894-1896 թթ. հայերի ջարդի կապակցությամբ, մտածելով միմիայն իրենց տերությունների շահերի մասին: Նրանց քիչ էր մտահոգում սուլթանական լծի տակ տառապող հայ ժողովրդի բախտը: Այսպես, Բալմորալում Նիկոլայ 2-րդը «...ծաղրում էր Անգլիայի որոշ ֆիլանտրոպների առաջարկները, որոնք պահանջում են, որպեսզի Ռուսաստանին իրավունք տրվի Հայաստանը գրավելու համար»: Ռուս կայսրի արտահայտությամբ, Հայաստանի գրավումը կդառնա «բավականին թանկ ձեռնարկում, որը Ռուսաստանին փոխհատուցում չի բերելու...», ինչպես նաև չի օգնելու Օսմանյան կայսրության տարածքով ցրված բոլոր հայերին:440 Իսկ բրիտանական կառավարության ղեկավարը բանակցությունների վերջում հայտարարեց, որ տերությունները պետք է միջոցներ ձեռնարկեն Կոստանդնուպոլսում ապագայում հնարավոր անկարգությունները կանխելու նպատակով, քանի որ նրանք սպառնում են օտարերկրյա հպատակների և դեսպանությունների անձնակազմերի անվտանգությանը:441

## 8. ՍՈԼՍԲԵՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

Ճիշտ այնպես, ինչպես մեկ տարի առաջ 1896 թ. Կոստանդնուպոլսի հայ բնակչության կոտորածները տարածվեցին Օսմանյան կայսրության ողջ տարածքով, ընդունելով շատ ավելի համատարած և դաժան բնույթ: Բելգիացի հեղինակ Էմիլ Անտուանի հաշվարկներով, 1896 թ. աշնանը Փոքր Ասիայում սպանվեց 186 հազ. 655 հայ:442 Մակքոլի տվյալների

440 Lord Salisbury`s Conversations..., p. 220.
441 The Situation of To-day. - The Spectator, 1896, vol. 77, October 3, p. 426. Պատմաբան Բոլխովիտինովի կարծիքով, «...հին հակասությունների գոյությունը Միջին և նորերի առաջացումը Հեռավոր Արևելքում վերջնական հաշվով կանխորոշեցին այն տարիներին ռուս-անգլիական համաձայնության անհնարինությունը Մերձավոր Արևելքի և նեղուցների խնդիրների շուրջ» (Болховитинов Н.Н. Указ. соч., с. 270):
442 Antoine E. Op.cit., p. 79.



համաձայն, 1896 թ. հայկական կոտորածների զոհերի ընդհանուր թիվը հասավ 200 հազ.:443 Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում տեղի ունեցած

կոտորածների հետևանքով հրդեհվել էր 12 հազ. տուն և կրպակ, թալանվել 47 հազ. տուն, պարտադրաբար մահմեդականություն էին ընդունել 40 հազ., անօթևան մնացել և զրկվել ապրուստի միջոցներից շուրջ 400 հազ. հայեր:444

Այսպիսով, 1894-1896 թթ. ընթացքում կոտորված հայերի թիվը գերազանցեց 300 հազարից: Քննության առնելով բազմապիսի աղբյուրներ հայ բնակչության ջարդի մասին, կարելի է գալ հետևյալ եզրահանգումների. կոտորածները կրում էին համատարած, կանխամտածված և կազմակերպված բնույթ, նրանց իրականացնողներն էին ինչպես մոլեռանդ մահմեդական բնակչությունն, այնպես էլ ոստիկանությունն ու կանոնավոր բանակը, աչքի ընկած բոլոր մասնակիցները ստացան շքանշաններ և պաշտոնի բարձրացում, ինչպես 1895, այնպես էլ 1896 թթ. ջարդը հիմնականում սկսվում էր միաժամանակ բոլոր վիլայեթներում, գրեթե բոլոր դեպքերում ջարդը սկսվելու և ավարտվելու ազդանշաններ էին հանդիսանում շեփորի ձայնը կամ հատ կրակոցը:445

Գերմանացի հասարակական քաղաքական գործիչ Փաուլ Ռորբախը, որը 1898 թ. այցելել էր բոլոր հայկական շրջանները, նշում էր, որ այդ սարսափները նման չափերի չէին հասնելու, եթե 1878 թ. տերությունները չպարգևատրեին հայերին «կործանարար նվերով»՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով:446 Այդ հոդվածի շնորհիվ, նշում էր ռուս պատմաբան Խվոստովը, «90-ական թթ. ճգնաժամի ժամանակ Աբդուլ Համիդն ամբողջությամբ հասավ իր նպատակին՝ պահպանեց նեխած ավատամենատիրական ռեժիմն ու ազգային կրոնական կեղեքումը»:447

Չնայած նրան, որ երկու տարվա ընթացքում Օսմանյան կայսրությունում բնաջնջվեց 300 հազ. ավելի հայ, սուլթանական կառավարությունն այդպես էլ մնաց անպատիժ, իսկ

443 Maccoll M. The Sultan and the Powers..., p. 53.
444 Gabrielian M.S. Op.cit., pp. 257-258.
445 Melson R. Op.cit., pp. 481-505.
446 Rohrbach P. The Contribution of the Armenian Question. - The Forum, 1900, vol. 29, No. 4, pp. 488-489.
447 История дипломатии. Т. 2, М., 1963, с. 344-345.

417

եվրոպական դիվանագիտությունը՝ ողջ ժողովրդի ողբերգության անտարբեր հանդիսատես: Տերությունների փոխադարձաբար բացառող շահերը փաստորեն հանդիսանում էին քայքայվող Օսմանյան կայսրության պահպանման գլխավոր գործոնը: Իսկ Աբդուլ Համիդը հմտորեն օգտվեց այդ իրավիճակից, որպեսզի ազատվի ոչ ցանկալի քրիստոնեական տարրից, որն, իր համոզմամբ, հանդիսանում էր անհանգստության աղբյուր և կարող էր պատճառ դառնալ օսմանների կայսրության փլուզման համար:

1896 թ. սեպտեմբերի 24-ին Լիվերպուլում կայացավ բազմամարդ բողոքի հանրահավաք սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականության դեմ: Մեծ մեղադրական ելույթով հավաքին հանդես եկավ Գլադստոնը: Այն տևեց մեկ ժամ և քսան րոպե և, Գլադստոնի կենսագիր Ֆիլիպ Մագնուսի կարծիքով, հանդիսանում է «նրա կյանքի ամենալավագույն հրապարակային ելույթը»:448 Գլադստոնը սկսեց իր ելույթը նրանով, որ հանդես է գալիս անկախ որևէ կուսակցական պլատֆորմից և իր

պարտականությունն է համարում ընդհանրապես հրաժարվել կուսակցական համակրանքից և հիշողություններից: Անցնելով Թուրքիայում հայերի ջարդի հարցին, նա կոչ արեց կառավարությանը անվստահություն հայտնել սուլթանի և նրա իշխանության տեղի ունեցած իրադարձությունները ժխտելու քաղաքականությանը: Գլադստոնը հիշեցնում էր, որ 1876 թ. թուրք կառավարությունը նույնպես փորձում էր ողջ մեղքը բարդել «բուլղարացի խռովարարների և քարոզիչների» վրա: Անդրադառնալով հանրահավաքի նպատակին, նա հայտարարեց, որ այն կայանում է ոչ թե պատժելու կամ վրեժխնդրության, այլ նոր սպանությունները կանխելու մեջ: Ըստ Գլադստոնի, եվրոպական դիվանագիտության որդեգրած քաղաքականությունը չի կարող կանխել նոր կոտորածները, «եվրոպական համերգն» ընդհանրապես էական օգնություն չցուցաբերեց Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչությանը: Նա հիշեցնում էր, որ ներկայիս և նախկին բրիտանական կառավարությունները փորձում էին գործել Հայկական հարցում մյուս տերությունների հետ միասին, սակայն անհաջողություն կրեցին և այսօր կառավարությանն անհրաժեշտ է իմանալ ժողովրդի կամքը: Այդ նպատակով Գլադստոնն առաջարկեց ընդունել բանաձև, ուր Ֆորին Օֆիսին պարտադրվեր միջոցներ ձեռնարկել Թուրքիայում հետագա դաժանությունները կանխելու համար և հայտարարվեր լիվերպուլյան բնակչության պատրաստակամության

448 Magnus Ph. Op.cit., p. 430.



մասին՝ այդ հարցում կառավարությանն աջակցելու մեջ: Գլադստոնի կարծիքով, Անգլիային հարկավոր է հայտարարել, որ նա որևէ շահ չի հետապնդում իր համար և համապատասխան երաշխիքներ ներկայացնել մյուս տերություններին: Անվանելով Աբդուլ Համիդին «մեծ մարդասպան», նա հայտարարեց, որ միջազգային իրավունքի և, մասնավորապես, Կիպրոսի կոնվենցիայի պայմանների համաձայն, Բրիտանիան պարտադրված է միջամտել և եթե անհրաժեշտ է, նույնիսկ միայնակ:449

Չնայած իր տարիքին, Գլադստոնը բավականին գործուն աշխատանք էր տանում համոզելու «ալարկոտ» բրիտանական կառավարությանը որդեգրել «քրիստոնեական բարոյականությանը վայել» քաղաքականություն: Իր որդիներին նա ասում էր, որ ցանկանում է միայն, որպեսզի աստված իրեն ուժ տա՝ անմարդկային թուրքի դեմ նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու համար:450 «Եթե ես լինեի այն տարիքում, որքան 1876 թ., - հայտարարում էր նա, - ես հաճույքով նոր կամպանիա կսկսեի»:451

Գլադստոնի գործունեությունը Հայկական հարցում դարձավ վերջին և ամենից կարևոր պատճառներից մեկը, որը ստիպեց Ռոզբերիին հրաժարվել լիբերալ կուսակցության ղեկավարությունից: 19-րդ դ. վերջին լիբերալների կուսակցությունը շատ լուրջ ճգնաժամ էր ապրում: Նրա ղեկավար անդամներից մեկի, Ջորջ Ռասսելի կարծիքով, լիբերալ կուսակցությունն արտաքին քաղաքականությամբ և, մասնավորապես, Հայկական հարցով զբաղվող ղեկավար չուներ, Ռոզբերին ինքնակառավարում էր հայտարարել և փաստորեն չէր ղեկավարում կուսակցությունը:452 Ռոզբերին պաշտպանում էր Գլադստոնի գաղափարը Հայկական հարցի «անկուսակցականության» մասին: Այդ քաղաքականության համաձայն, առաջինը՝ Մեծ Բրիտանիան շահադիտական որևէ նկրտում ունենալ չէր կարող, երկրորդը՝ Հայկական հարցը չպետք է իշխանության համար

պայքարի միջոց դառնար քաղաքական կուսակցությունների միջև և երրորդը՝ խնդրի վերջնական լուծման մեջ պետք է շահագրգռված լիներ ողջ բրիտանական ժողովուրդը: Սակայն կուսակցության պաշտոնական ղեկավարը չէր համաձայնում Գլադստոնի այն տեսակետի հետ, որ Մեծ Բրիտանիան ունի Թուրքիայի

449 Knaplund P. Op.cit., pp. 267-268; Magnus Ph. Op.cit., p. 430.
450 Magnus Ph. Op.cit., p. 431.
451 Knaplund P. Op.cit., p. 268.
452 Russell G.W.E. Op.cit., pp. 27-28.

419

սուլթանական կառավարության դեմ առանձին և անշահախնդիր կերպով հանդես գալու իրավունք: Այդ տեսակետը պաշտպանեց կուսակցության անդամների մեծամասնությունը, իսկ Ռոզբերին հրաժարվեց միանալ տարվող «հայասիրական քարոզչությանը»: Հոկտեմբերի 6-ին կուսակցության խորհրդարանական կազմակերպչին ուղղված նամակում նա գրում էր, որ «իմ և լիբերալ կուսակցության զգալի մեծամասնության միջև գոյություն ունեն ակնհայտ տարաձայնություններ Արևելյան հարցի առնչությամբ, իմ կարծիքն այդ հարցում տարբերվում է նաև Գլադստոնի տեսակետի հետ, որը մեծ հեղինակություն է վայելում կուսակցության շարքերում...»:453 Անմիջապես հաջորդ օրը Ռոզբերին նամակ է գրում Գլադստոնին. «Ես ցանկանում եմ, որ Դուք ինձնից իմանաք լիբերալ կուսակցության ղեկավարությունից հրաժարվելու իմ որոշման մասին, թեև այնքան էլ վստահ չեմ, որ ես այն իրապես ղեկավարել եմ: Ես չեմ թաքցնելու, որ Դուք առաջ քաշեցիք և պաշտպանեցիք մի քաղաքականություն, որը ես չէի կարող քաջալերել..., հնարավորություն տալով դժգոհ լիբերալներին ճնշել ինձ Ձեր հեղինակությամբ»: Գլադստոնը նրան պատասխանում էր. «Մեր պաշտոնական հարաբերություններն...ունեցան ողբերգական ավարտ, սակայն Դուք ձգտում եք անել այնպես, որ վարակը չթափանցի մեր անձնական հարաբերությունների մեջ: Արդյոք՞ կզարմացնի Ձեզ, եթե ասեմ, որ առաջին անգամ զգացի մեր միջև գոյություն ունեցող տարբերությունը, երբ կարդացի Ձեր նամակը, որում հաստատվում էր, որ միանձնյա գործողությունը (Թուրքիայի նկատմամբ - Ա.Կ.) կբերի եվրոպական պատերազմի: ...Ես միշտ հավատարիմ եմ եղել հարկադրական միջոցի կիրառմանը, ինչպես նրա փակ, այնպես էլ բաց տեսքով, որպես իմ ողջ քաղաքականության հիմքերից մեկին: Իմ համոզմունքը եղել և մնում է այն, որ առանց նման վերապահ իրավունքի քարոզչությունը ոչ միայն անօգուտ է, այլև նույնքան վնասակար, ինչպես Կոստանդնուպոլսում տեղի ունեցող դիվանագիտական փաստաթղթերի պատերազմը...»:454 Այս խոսքերում էր ամփոփված Թուրքիայի հանդեպ գլադստոնյան քաղաքականության ողջ էությունը, որը, սակայն, 19-րդ դ. ավարտին այլևս ոչ մի հաջողություն ունենալ չէր կարող:

Հոկտեմբերի 10-ին Լոնդոնում կայացավ լիբերալ կուսակցության համաժողովը, որը նվիրված էր Օսմանյան կայսրության հայ բնակչության կոտորածներին: Ռասսելը վկայում

453 At Colchester. - Liberal Magazine, 1896, october 20, p. 483.
454 Magnus Ph. Op.cit., p. 431; Douglas R. Op.cit., p. 131.

420

էր, որ հանդիպման ժամանակ հաղորդվեց Ռոզբերիի հրաժարականի մասին և ընթերցվեց նրա հոկտեմբերի 9-ի ելույթը Էդինբուրգում, որն ամբողջովին «ներծծված էր» Հայկական հարցի «անկուսակցականության» գաղափարով և զուրկ էր որևէ հիմքից: Իրապես, Ռոզբերիի Էդինբուրգի ելույթը դարձավ իր վերջին արդարացումը հայ կոտորածների հանդեպ որդեգրած իր «անտարբեր» քաղաքականության համար: Իր ելույթում նա նշում էր, որ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը «...բաղկացած է հազար մասերից ու շահերից և մենք իրավունք չունենք զոհաբերելու մնացած ինն հարյուր իննսուն ինը միայն մեկի պատճառով, եթե այն նույնիսկ պահանջում է անհապաղ գործողությունների իրականացում»: Լիբերալների նախկին ղեկավարը նույնիսկ հայտարարեց, որ «հայ ժողովրդի կործանումը հանդիսանում է Մեծ Բրիտանիայի հոգսերի հազարերորդական մասը, ...դատարկ մի բան»:455 «Ես վճռականորեն ընդդիմանալու եմ միանձնյա միջամտության քաղաքականությանը, - շարունակում էր Ռոզբերին, - ...Ես համարում եմ, որ բոլոր կամ գրեթե բոլոր մեծ տերությունները որոշել են դիմադրել նման միջամտությանը: Մեր միանձնյա ելույթը կբերի եվրոպական պատերազմի»:456 Այսպիսով, Ռոզբերիի կարծիքն ամբողջությամբ համընկնում էր Սոլսբերիի պահպանողական կառավարության կողմից որդեգրված պաշտոնական քաղաքականության հետ: Փաստորեն այնպես ստացվեց, որ երբ հին գլադստոնյան կուսակցությունը կշտամբեց Ռոզբերիին Հայկական հարցում իր կողմից հանդես բերած երկչոտության մեջ, նա դադարեց կուսակցության ղեկավար լինելուց:

Լիբերալ կուսակցության համաժողովի կողմից ընդունված բանաձևում ասվում էր. «...Ներկայումս Արևելքում ստեղծված կացությունը գլխավորապես հանդիսանում է անցյալում պահպանողական կուսակցության քաղաքականության արդյունքը: ...Բեռլինի վեհաժողովի մասնակից լորդ Սոլսբերին մասնավորապես պատասխանատու է Հայաստանում գոյություն ունեցող գործերի վիճակի համար և, հետևապես, ...ներկայիս վարչապետին չի կարելի վստահել Հայկական հարցով զբաղվելու իրավունքը»:457 Սակայն իրականում Սոլսբերիի արտաքին քաղաքականության դեմ երկրում որևէ լուրջ ընդդիմություն

455 Lord Rosebery`s Deliverance..., p. 504.
456 Галеви Э. История Англии в эпоху империализма. Т. 1, М., 1957, с. 34; At Colchester..., p. 483.
457 Russell G.W.E. Op.cit., pp. 25-26.

421

գոյություն չուներ: Առանց ղեկավարի մնացած լիբերալ կուսակցության անդամները սթափվեցին բավականին ուշ, քանի որ շուտով Հայկական հարցն ընդհանրապես հանվեց միջազգային քաղաքականության օրակարգից:

Հոկտեմբերի 20-ին Սոլսբերին շրջաբերական նամակ հղեց եվրոպական տերությունների կառավարությունների ղեկավարներին, որում ապացուցում էր Հայկական հարցում համատեղ գործողությունների անհրաժեշտությունը, ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր տերություն իր շահերն ուներ Օսմանյան կայսրությունում: Նա առաջարկում էր հրավիրել համաեվրոպական համաժողով՝ մերձավորարևելյան ճգնաժամը վերջնականապես կարգավորելու նպատակով:458 Բրիտանական

կառավարության ղեկավարը հավատացած էր, որ Ավստրո-Հունգարիայի և Ֆրանսիայի կառավարությունները կհամաձայնեն համաժողովի անցկացմանը, քանի որ չափազանց անհանգստացած էին նեղուցների միակողմանի գրավման հնարավորության կապակցությամբ, իսկ Իտալիան անկասկած հետևելու է Մեծ Բրիտանիային: Սոլսբերին վստահ չէր միմիայն Գերմանիայի դիրքորոշման վրա, թեև հույս ուներ, որ կանցլերը պաշտպանելու է Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը: Վարչապետի համոզմամբ, համաժողովի հաջողությունը կախում ուներ հիմնականում Ռուսաստանի դիրքորոշումից: Ռուսաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ ունեցած զրույցի ընթացքում Շիշկինն իր համաձայնությունն է տալիս Կոստանդնուպոլսում համաժողովի անցկացման կապակցությամբ այն պայմանով, որ տերությունները ճնշում չեն գործադրելու սուլթանի վրա: Միաժամանակ նա նշում էր, որ վերջին խոսքը Նիկոլայ 2-րդինն է, որը դեռևս մտածում է այդ հարցի շուրջ:459

Լոնդոնի նոր քաղաքապետի պատվին հոկտեմբերի 29-ին տրված ճաշկերույթի ժամանակ արտասանած իր ճառում Սոլսբերին հայտարարում էր, որ եթե անգլիացիներն «...ուղղակի ցանկանային կամ պատժել թուրքական կառավարությունը, կամ էլ անախորժություն պատճառեին նրան, ապա Մեծ Բրիտանիայի մոտ բավականին միջոց կգտնվեր իր մտադրությունն իրագործելու համար, սակայն եթե դուք ցանկանում եք ազատել դաժան ռեժիմից...ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ մահմեդականներին, ապա մեր պարտականությունը պետք է կայանա նրանում, որպեսզի հնարավորին չափ մեծ թվով

458 Langer W.L. Diplomacy of Imperialism. 1890-1902. Vol. 1, New York, 1935, pp. 333-334.
459 Grenville J.A.S. Op.cit., p. 85.

422

ազգեր համոզենք գործելու մեզ հետ»: «Եթե եվրոպական համերգը, - շարունակում էր նա, - ցանկություն ունի գործելու, ապա նա իր տրամադրության մեջ ունի այնպիսի միջոցներ, որոնք մենք չունենք: Եթե նա գործել չի ցանկանում կամ եթե դեմ է յուրաքանչյուր սեպարատ գործողությանը, ապա մենք վտանգի և անհաջողության կենթարկենք ոչ միայն մեր ձեռնարկը, այլև առիթ կտանք ընդհարման, որը կարթնացնի եվրոպական պատերազմի բոլոր սարսափները»: Այնուհետև Սոլսբերին նշում էր, որ եվրոպական տերությունների հակասություններն ու շահերն այնքան բարդ են, որ չարժի նրանց բախտախաղի դնել Արևմտյան Հայաստանի համար: Իր ելույթի վերջում նա ասում էր, որ միմիայն սուլթանի միջոցով կարելի կլինի ապահովել Օսմանյան կայսրության քրիստոնյա և մահմեդական բնակչության անվտանգությունն ու կյանքի բարելավումը:460

Նոյեմբերի 23-ին Պետերբուրգում, Նիկոլայ 2-րդի նախագահությամբ կայացած կառավարության նիստի ընթացքում քննարկվում էր Նելիդովի կողմից առաջարկած նեղուցների գրավման ծրագիրը: Դեսպանը զեկուցեց Թուրքիայի ծանր վիճակի և նեղուցներն անհապաղ գրավելու անհրաժեշտության մասին՝ մոտ ապագայում սպասվող աղետը կանխելու նպատակով: Նելիդովի կարծիքը պաշտպանեցին ռազմական նախարարը և գլխավոր սպայակույտի պետը: Դեմ արտահայտվեց միայն ֆինանսների նախարար Վիտտեն: Վերջինս համոզված էր, որ «այդ խնդիրն ի վերջո կբերի եվրոպական պատերազմի և կխախտի այն հոյակապ քաղաքական և ֆինանսական իրավիճակը, որը ժառանգություն էր մնացել Ռուսական կայսրությանը կայսր Ալեքսանդր 3-րդից»:

Քննարկման ավարտին Նիկոլայ 2-րդը հայտարարեց, որ համաձայն է Նելիդովի առաջարկի հետ: Որոշում կայացվեց այնպիսի իրադարձություններ հրահրել Կոստանդնուպոլսում, որոնք իրավունք և հնարավորություն կստեղծեն Բոսֆորը գրավելու համար: Այնուհետև պետք էր կապի մեջ մտնել սուլթանի հետ և, եթե նա կանգներ Ռուսաստանի կողքին, խոստանալ նրան ռուսական հովանավորություն: Դեսպանն անմիջապես մեկնում է Կոստանդնուպոլիս՝ ծրագիրը նախապատրաստելու նպատակով, սակայն Ֆրանսիայի դիրքորոշումն, ինչպես նաև

460 Кавказ, 1896, 8 ноября.



բավականին ուժեղ հակազդեցությունը Վիտտեի և սուրբ սինոդի օբեր-պրոկուրոր Պոբեդոնոսցևի կողմից ստիպեցին կայսրին փոխել իր որոշումը:461

Նոյեմբերի 25-ին Սոլսբերին ստանում է Ռուսաստանի կառավարության համաձայնությունը դեսպանների համաժողովի կազմակերպման կապակցությամբ միայն այն պայմանով, որ տերությունների ներկայացուցիչները «չեն նեղացնելու» սուլթանին:462

Մեծ տերությունների դեսպանների համաժողովը սկսեց իր աշխատանքը դեկտեմբերի 22-ին: Տերությունների միջև անվստահությունն ավելի ուժեղացավ, երբ Նելիդովն առաջին իսկ նիստի ժամանակ հայտարարեց առաջին հերթին Մակեդոնական հարցի քննարկման անհրաժեշտության մասին: Քարրին անհանգստացած էր, որ Մակեդոնական հարցի լուծումը կարձակի Ռուսաստանի ձեռքերը հետագա քայլերի դիմելու համար և այդ իսկ պատճառով էլ պնդեց Օսմանյան կայսրության ընդհանուր վիճակը քննարկելու առաջնահերթության վրա: Այս հարցում նրան պաշտպանեց Ավստրո-Հունգարիայի դեսպան Կալիցեն, որն ընդգծեց, որ Մակեդոնական հարցի լուծումն անկարգություններ կստեղծի Ավստրո-Հունգարիային սահմանակից շրջաններում, կարթնացնի բալկանյան ժողովուրդների ազգային շարժումները և կբերի Օսմանյան կայսրության փլուզմանը: Երբ մասնավոր զրույցի ընթացքում Քարրին անդրադառնում է Եվրոպական Թուրքիայում բարենորոգումներ անցկացնելու գաղափարին, Կալիցեն առարկում է, որ այդ հանգամանքն անպայմանորեն կուժեղացնի Ռուսաստանի ազդեցությունը Բալկաններում:463 Բացի այդ, բրիտանական կառավարությունը եկավ այն եզրահանգման, որ Դարդանելում բրիտանական նավատորմի գործողություններին անխուսափելիորեն հետևելու է Բոսֆորի գրավումը Ռուսաստանի կողմից, որի արդյունքում լրջորեն վտանգվելու են Ավստրո-Հունգարիայի շահերը:464

Մեծ հույսեր կապելով դեսպանների հավաքի հետ, անմիջապես մյուս օրը հայ հեղափոխականները սպառնացին պայթեցնել Ռուսաստանի դեսպանությունը Կոստանդնուպոլսում, եթե նրանց երաշխիքներ չտրվեն, որ երեք ամսից հետո Արևմտյան

461 Витте С.Ю. Воспоминания. Т. 2, М., 1960, с. 100-102; Grenville J.A.S. Op.cit., pp. 87-89.
462 Douglas R. Op.cit., p. 132.
463 Papadopoulos G.S. Op.cit., p. 103.
464 Նույն տեղում, էջ 107:

424

Հայաստանում կիրագործվեն խոստացված բարենորոգումները: Այս անգամ հայերը համոզված էին, որ համաժողովի հաջող ավարտը կախում ունի ռուսական կառավարության դիրքորոշումից:465

1897 թ. հունվարի 6-ին Քարրին հաղորդում էր Սոլսբերիին, որ ձգտում է խուսափել սեփական նախաձեռնություններից համաժողովի ընթացքում, ինչը կարող է պառակտել դեսպաններին երկու հակադիր ճամբարի: Այդ պատճառով էլ նա փորձում էր հասնել միաբանության մասնավոր զրույցների միջոցով:466 Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի դեսպանների հետ ունեցած մասնավոր քննարկումների ժամանակ Քարրին համաձայնության է հասնում Կոստանդնուպոլսում հնարավոր նոր անկարգությունները կանխելու ուղղությամբ համատեղ գործողություններ ձեռնարկելու հարցում: Որոշում ընդունվեց, որ մայրաքաղաքում նոր ճգնաժամային իրավիճակի ստեղծման և սուլթանական կառավարության կողմից իրավիճակն անմիջապես վերականգնելու անկարողության կամ չկամության դեպքում ռուսական և ավստրիական ռազմանավերը շարվելու են սուլթանական պալատի առջև և կրակ բացեն նրա ուղղությամբ, ընդ որում առաջինը կրակելու է ռուսական, իսկ երկրորդը՝ ավստրիական «ստացիոնարները»:467

Հունվարի 19-ին Քարրին զեկուցում էր Սոլսբերիին, որ ի վերջո դեսպանները համաձայնեցին, որ Օսմանյան կայսրության եվրոպական և ասիական նահանգներում բարենորոգումներ մշակելու և իրականացնելու նպատակով անհրաժեշտ է կազմել երկու առանձին միջազգային հանձնաժողովներ:468

Համաժողովի ընթացքում Աբդուլ Համիդը բազմիցս փորձում էր պարզել եվրոպական տերությունների մտադրությունները: Երբ իր դեսպանը Մեծ Բրիտանիայում հերթական անգամ դիմում է բրիտանական կառավարությանն այդ հարցով, Սոլսբերին պատասխանում է, որ «խնդրի միակ հնարավոր և անհրաժեշտ լուծումը կայանում է սուլթանի չափազանց

465 Grenville J.A.S. Op.cit., p. 89.
466 Papadopoulos G.S. Op.cit., p. 103.
467 Նույն տեղում, էջ 111:
468 Նույն տեղում, էջ 103:

425

բռնապետական իշխանության սանձահարման մեջ: Այդ կարծիքին էին եվրոպական տերությունների բոլոր դեսպանները»:469

Օսմանյան կասրության փրկության համար առաջնային նշանակություն ուներ նրա ֆինանսական վիճակը: Ֆինանսական դժվարությունները միշտ կարող էին բերել նրան, որ երկիրն ամբողջապես ընկնի տերությունների ֆինանսական հսկողության տակ: Այդ օրերին Ռուսաստանը բազմիցս նախազգուշացնում էր Բարձր Դռանը Ազգային պարտքի ղեկավարման գործերում յուրաքանչյուր միջամտության անթույլատրելիության մասին:470

Հնարավոր է, որ ռուսական կառավարության խորհուրդները յուրովի հասկանալու պատճառով էր, որ համաժողովի աշխատանքի ընթացքում սուլթանը հրապարակում է 1897 թ. երկրի բյուջեն: Նա հատուկ ցույց էր տալիս 781 հազ. 912-ի ավելցուկ, երբ իրականում գոյություն ուներ 2 մլն. 500 հազ. ֆունտ ստեռլինգի դեֆիցիտ: Նման խաբեբայությունը չէր կարող բարձրացնել թուրքական վարկը: Լավագույն պարագայում կառավարությունը կարող էր բարձրացներ տարեկան եկամուտը ազգային պարտքի հաշվին, կամ էլ ուղղակի պարտք վերցնել տերություններից: Սակայն երկարատև քննարկումներից հետո դեսպանները համաձայնեցին երկրի հասարակական կարծիքն իրենց կողմը գրավելու նպատակով ապահովել քաղաքացիական և զինվորական աշխատավարձի վճարումը: Բացի այդ, նրանք նույնպես որոշեցին ստեղծել Թուրքիայի և տերությունների հավասար ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր կայսրության ֆինանսական դրությունը, կազմեր իրական բյուջեն և հսկեր նրա կատարման ընթացքը:471

Տերությունների կողմից Օսմանյան կայսրությանը ֆինանսական օգնություն ցուցաբերելու կապակցությամբ հունվարի 25-ին Սոլսբերին գրում էր Քարրիին. «Չի կարելի համոզված կերպով ասել, որ փոխառությունը կարող է փրկել թուրքական կայսրությունը: Մեծ թվով մարդիկ երկրում թուրքական կայսրությունը պահպանելու ցանկություն չունեն և մենք

469 Նույն տեղում, էջ 103-104:
470 Blaisdell D.C. European Financial Control in the Ottoman Empire. New York, 1929, pp. 100-101.
471 Papadopoulos G.S. Op.cit., p. 104.

426

իրավունք չունենք անտեսելու իրենց կարծիքը, մինչև չկարողանանք ապացուցել, որ փրկում ենք այն, ունենալով ապագայի բարելավված կառավարման երաշխիք»:472

Փետրվարի 2-ին եվրոպական տերությունների դեսպաններն ավարտեցին բարենորոգումների ծրագրի քննարկումը, որը բաղկացած էր ընդամենը յոթ կետից. 1/ գերագույն խորհրդի հիմնադրում. 2/ բարենորոգումների իրագործման նկատմամբ հսկողություն իրականացնող հանձնաժողովի ստեղծում. 3/ հսկողության սահմանում երկրի ֆինանսական գործունեության նկատմամբ. 4/ արդարադատության համակարգի բարելավում. 5/ ոստիկանության աշխատանքի բարեկարգում. 6/ քաղաքապետարանների ստեղծում. 7/ մամուլի իրավունքի սահմանում:473 Սակայն շատ շուտով բարենորոգումների այդ ծրագիրը նույնպես մոռացվեց, քանի որ սկսվեց 1897 թ. հույն-թուրքական պատերազմը, որի ժամանակ եվրոպական տերությունները Բարձր Դռան կողքին հանդես եկան Կրետե կղզու ապստամբների դեմ: Դեսպանները եկան միահամուռ կարծիքի, որ «ներկայիս ճգնաժամի ընթացքում անօգուտ է լինելու պահանջել բարենորոգումների իրականացում»:474

Այդ օրերին Աբդուլ Համիդի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ ԱՄՆ դեսպան Ալեքսանդր Տերրելն ասում էր. «Ես իրապես կարծում եմ, որ Ձերդ Կայսերական Մեծությունն անհանգստանալու հատուկ պատճառ չունի, քանի որ Դուք հանդիսանում եք միակ միապետը, որի կայսրության ամբողջականությունը երաշխավորված է մեծ տերությունների կողմից: Ոչ մի տերություն չի պաշտպանում Ֆրանսիայի, Անգլիայի,

Գերմանիայի, Ռուսաստանի, Ավստրիայի կամ Իտալիայի տիրույթների ամբողջականությունը, սակայն նրանք բոլորը ոչ միայն ձգտում են պահպանել Ձեր կայսրության ամբողջականությունը, այլև սպանում են Կրետեյում հույն-քրիստոնյաներին՝ իրենց հավատարմությունն ապացուցելու համար»:475

Եվրոպական տերությունների դիվանագիտական ներկայացուցիչների համաժողովը ցույց տվեց, որ տերությունները չէին պատրաստվում փչացնել առանց այդ էլ լարված

_____
472 Նույն տեղում, էջ 106:
473 Նույն տեղում, էջ 111:
474 Նույն տեղում, էջ 112:
475 Terrell A.W. An Interview with Sultan Abdul Hamid. – The Century Magazine, 1897, vol. 55, p. 136.

427

հարաբերությունները Բարձր Դռան հետ: Սուլթանի ինքնիշխան իրավունքները նվաստացնող պահանջներ ներկայացնելով Աբդուլ Համիդին, նրանք սպառնում էին վերաբացել Հայկական հարցը և այդ միջոցով նոր զիջումներ կորզել նրանից: Իսկ Աբդուլ Համիդը կազմակերպում էր հայ բնակչության նոր կոտորածներ, որոնք դառնում էին առևտրի առարկա եվրոպական դիվանագիտության և Բարձր Դռան միջև: Թուրքիայի հազթանակը Հունաստանի նկատմամբ էլ ավելի բարձրացրեց մահմեդականության ոգին և սուլթանի հեղինակությունը, անհնարին դարձնելով հայկական բարենորոգումների իրականացումը:

Այսպիսով, Թուրքիայում բարենորոգումներ իրագործելու բրիտանական դիվանագիտության վերջին փորձը փաստորեն տապալվեց, ինչը նշանակում էր Մեծ Բրիտանիայի ավանդական մերձավորարևելյան քաղաքականության ավարտը: Միաժամանակ անհաջողությամբ պսակվեցին Ռուսաստանի և Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու բրիտանական դիվանագիտության փորձերը: 1897 թ. սկսած Սոլսբերին հող էր նախապատրաստում Մերձավոր Արևելքում բրիտանական քաղաքականության վերափոխության համար: Նույն թվականի հոկտեմբերին Սոլսբերին գրում էր Քարրիին, որ այսուհետ բրիտանական քաղաքականությունը հանգելու է «մեր դիրքերի ուժեղացմանը Նեղոսում և ամեն տեսակի պարտավորություններից խուսափելուն Կոստանդնուպոլսում»:476

_____
476 Clayton C.D. Op.cit., p. 187.

Լրացուցիչ տեղեկություններ

Տրամադրել է՝ Արման Կիրակոսյան:
HTML կոդավորում՝ Լինա Քամալյան:

Հեղինակային իրավունքները՝ Արման Կիրակոսյան։
Հրապարակված է հեղինակի թույլտվությամբ։ Առանց հեղինակի թույլտվության արտատպումը կամ հրապարակումը արգելվում է։
Տես նաև

Арман Киракосян — Великобритания и Армянский вопрос
Джон Киракосян — Младотурки перед судом истории

Գլխավոր | Ֆորում | Անվանացանկ

Արման Կիրակոսյան

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

428

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ
1. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 1900-1914 ԹԹ.

20-րդ դ. սկզբին եվրոպական տերությունների պայքարը Մերձավոր Արևելքում մտավ նոր փուլ: Նրանց միջև աշխարհի բաժանման գործընթացի ավարտի և վերաբաժանման պայքարի սրման պայմաններում Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ վաճառահանման շուկաների, հումքի աղբյուրների և ներդրումային ոլորտների համար մրցակցության խոշորագույն առարկա: Երկիրը փաստորեն վերածվել էր եվրոպական տերությունների կիսագաղութի, տնտեսության կարևորագույն ոլորտները գրավված էին օտարերկրյա կապիտալի կողմից: Կայսրության տարածքների հետզհետե կրճատումն1 էլ ավելի էր սրում տերությունների հակասությունները թուրքական տիրույթների համար մղվող պայքարում: Միաժամանակ թափ էր առնում մրցակցությունը նորանկախ բալկանյան պետությունների միջև, որը միահյուսված էր Թուրքիայի և Ավստրո-Հունգարիայի ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների հետ: Օսմանյան կայսրության տարբեր հատվածներում բռնկվող ապստամբությունները թուլացնում էին կենտրոնական

1 1881 թ. Ֆրանսիան գրավեց Թունիսը, 1882 թ. Մեծ Բրիտանիան՝ Եգիպտոսը, 1885 թ. Արևելյան Ռումելիան վերամիավորվեց Հյուսիսային Բուլղարիայի հետ, 1897 թ. Կրետե կղզին ձեռք բերեց ինքնավարություն:

429

իշխանությունը, հող նախապատրաստելով երիտթուրքական շարժման ակտիվացման և եվրոպական տերությունների հետագա միջամտության համար:

Մերձավոր Արևելքում տերությունների պայքարի նոր գործոն էր հետզհետե դառնում Գերմանիայի քաղաքականության ակտիվացումը: Բաղդադի երկաթգծի կոնցեսիայի ձեռքբերումը 1903 թ. մեծապես ամրապնդեց գերմանական կառավարության դիրքն Օսմանյան կայսրությունում: Գերմանական խոշոր կապիտալի ներդրումները պայմանավորեցին Գերմանիայի կողմից Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանն ուղղված հստակ քաղաքականության հաստատմանը, ինչը խոչընդոտում էր ոչ թուրք ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների զարգացումը: Իր հերթին Աբդուլ Համիդը ձգտում էր գերմանական կառավարության և նրա կապիտալի միջոցով ամրապնդել իր գահը, պայքարել ներքին ընդդիմության և ազգային ազատագրական շարժումների դեմ:

1878 թ. Բոսնիայի և Հերցեգովինայի ձեռքբերումից հետո Ավստրո-Հունգարիան զգալիորեն ուժեղացրեց իր դիրքերը Բալկաններում և Մերձավոր Արևելքում: Չունենալով անդրծովյան գաղութներ, և, դիտելով Եվրոպական Թուրքիան որպես քաղաքական և տնտեսական ազդեցության հաստատման առարկա, ավստրիական կապիտալը բավականին ինտենսիվ կերպով ներդրվում էր բալկանյան պետությունների տնտեսության մեջ: 20-րդ դ. սկզբին ավստրո-հունգարական դիվանագիտության հիմնական նպատակը կայանում էր Սերբիայի ճնշման և հարավսլավոնական ընդհանուր պետության ստեղծման կանխարգելման մեջ:

Մեծ հետաքրքրություն Արևելյան հարցի հանդեպ սկսեց ցուցաբերել նաև մեծ տերություններից ամենից թույլը՝ Իտալիան, որը փորձում էր Բալկաններ ներթափանցել կարևոր աշխարհաքաղաքական դիրք ունեցող Ալբանիայի վրայով:

Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան շարունակում էին կարևորագույն առևտրական և ֆինանսական դիրքեր զբաղեցնել Օսմանյան կայսրությունում: Ֆինանսների բնագավառում առաջատար դերը պատկանում էր Ֆրանսիային, իսկ առևտրում՝ Մեծ Բրիտանիային: 1895-1914 թթ. ֆրանսիական ֆինանսական կապիտալի մասնաբաժինը Օսմանյան կայսրության արտաքին պարտքի մեջ 46%-ից աճեց մինչև 60%-ի:2 1899-1901 թթ. ցուցանիշների

---

2 Внешнеэкономические связи..., с. 123.



համաձայն, բրիտանական ապրանքների ներմուծման և արտահանման բաժինն Օսմանյան կայսրության արտաքին առևտրում կազմում էր 35%-ը:3

Գտնվելով ֆինանսական կախվածության մեջ իր դաշնակիցներից, Ռուսաստանը չէր կարող մրցել արևմտաեվրոպական տերությունների հետ՝ Օսմանյան կայսրության նկատմամբ տնտեսական ակտիվ քաղաքականության անցկացման հարցում: Ռուսական առևտրի հաշվեկշիռը Բալկաններում և Փոքր Ասիայում շարունակում էր մնալ չնչին: Օսմանյան կայսրության հետ իր առևտրում Ռուսաստանը զբաղեցնում էր 5-րդ տեղը

ներմուծման և 8-րդը՝ արտահանման ցուցանիշներով, ռուսական կապիտալը գրեթե բացակայում էր իրագործվող ներդրումային ծրագրերում:4 Միաժամանակ Ռուսաստանը շարունակում էր առաջատար դեր խաղալ թուրքական լծից բալկանյան ժողովուրդների ազատագրման հարցում, ակտիվորեն մասնակցել բալկանյան խնդրի լուծման գործընթացում: Թեև նեղուցներին և Կոստանդնուպոլսին տիրանալու հարցը ռուսական վերնախավի կողմից համարվում էր Ռուսաստանի հիմնական խնդիրը, սակայն ներքին անկայունության և արտաքին քաղաքականության ոլորտում դիրքերի թուլացման հետևանքով 20-րդ դ. սկզբին այն հանվել էր օրակարգից: Ռուսական դիվանագիտության առջև դրված էր շատ ավելի սահմանափակ խնդիր՝ ապահովել ռուսական ռազմանավերի ազատ անցումը նեղուցներով: Ավստրո-գերմանական քաղաքականության ակտիվացումը Մերձավոր Արևելքում սրեց ավստրո-ռուսական և ռուս-գերմանական հարաբերությունները, ստիպելով ռուսական կառավարությանը մերձեցման եզրեր փնտրել Մեծ Բրիտանիայի հետ: Անգլո-գերմանական հակասությունների սրումը Մերձավոր Արևելքում իր հերթին բերեց նրան, որ 1907 թթ. երկու տերությունները ստորագրեցին համաձայնագիր՝ Իրանում, Աֆղանստանում և Տիբեթում շահերի սահմանազատման մասին: Այդ և 1904 թ. անգլո-ֆրանսիական համաձայնագրերի ստորագրումով, ի հակադրություն ավստրո-գերմանական դաշինքին, փաստորեն ավարտվեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի եռյակ համաձայնության՝ Անտանտի ձևավորումը:

Գերմանիայի կողմից Մեծ Բրիտանիայի ազդեցության դուրս մղումը Կոստանդնուպոլսից ստիպում էր բրիտանական դիվանագիտությանը հրաժարվել

---

3 Նույն տեղում, էջ 149:
4 Восточный вопрос во внешней политике России..., с. 287.

431

բալկանյան ժողովուրդների և հայերի դեմ տարվող սուլթանական կառավարությանն աջակցելու քաղաքականությունից: Թեև Բեռլինի համաժողովի տարիներին որդեգրված բարենորոգումների իրագործման միջոցով իր ազդեցության ամրապնդման և Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ապահովող քաղաքականությունը ոչ միայն ցանկալի արդյունք չտվեց, այլև վատթարացրեց անգլո-թուրքական հարաբերությունները, բրիտանական կառավարությունն ամբողջությամբ չհրաժարվեց այդ ուղեգծից: Բարենորոգումների իրագործման շարունակական առաջարկներն ու Օսմանյան կայսրությունում սահմանադրական և խորհրդարանական կարգեր հաստատելու ուղղությամբ տարվող բրիտանական դիվանագիտության գործունեությունը դիտվում էր սուլթանական իշխանությունների կողմից որպես չափազանց վտանգավոր:

1876 թ. բուլղարական և 1894-1896 թթ. հայկական կոտորածները վերջնականապես հիմնավորեցին բուլղարների, սերբերի, հույների և հայերի քաղաքական ձգտումները վերանայելու և քաջալերելու բրիտանական դիվանագիտության քաղաքականությունը: Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության ղեկավարները եկել էին այն համոզման, որ սուլթանի քրիստոնյա հպատակների հարցը կարող է լուծում ստանալ միմիայն «գորդյան հանգույցը կտրելու, այսինքն, կայսրության հետագա անդամահատության միջոցով»:5 1908 թ. հունվարին Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպան

Նիկոլաս Օ՝Կոնորը6 գրում էր արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին, որ «քանի դեռ Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև հարաբերությունները կախում ունեն սուլթանից, նրանք պակաս քան հանդուրժելի են: Նորին Մեծության (Աբդուլ Համիդի - Ա.Կ.) կառավարության Մակեդոնիայի, Հայաստանի և այլ ճնշված ազգությունների նկատմամբ տարվող քաղաքականությունը դատապարտելի է և նույնիսկ զարշելի»:7 Իսկ բրիտանական դեսպանության նախկին թարգման, Կոստանդնուպոլսում Մեծ Բրիտանիայի առևտրական պալատի նախագահ Ադամ Բլոկը նույն թվականի մարտին գրում էր մշտական փոխարտգործնախարար Չարլզ

_____
5 Heller J. British Policy Towards the Ottoman Empire. 1908-1914. London, 1983, p. 2.
6 Օ՝Կոնոր (O՝Conor) Նիկոլաս (1843-1908) - բրիտանացի դիվանագետ: 1892-1895 թթ.՝ դեսպանորդ Չինաստանում, 1895-1896 թթ.՝ դեսպան Ռուսաստանում, 1898-1908 թթ.՝ դեսպան Թուրքիայում:
7 Heller J. Op.cit., p. 2.

432

Հարդինգին,8 որ քանի դեռ Աբդուլ Համիդը գտնվում է իշխանության գլխին, բարելավումների և բարենորոգումների ոչ մի սպասելիք լինել չի կարող:9 Մայիսին Գրեյը գրում էր Օսմանյան կայսրությունում ժամանակավոր հավատարմատար Ջորջ Բարկլեյին. «Ինչ էլ որ լինի, մենք վատ վերաբերմունք չունենք Թուրքիայի հանդեպ, սակայն Դուռը մեզ հնարավորություն չի տալիս բարելավելու մեր հարաբերությունները նրա հետ»:10

Մակեդոնական հարցում բրիտանական դիվանագիտությունը գործում էր համագործակցաբար Ռուսաստանի հետ: Եթե խնդրի առաջին փուլում՝ երբ Ռուսաստանը զբաղված էր ռուս-ճապոնական պատերազմով, ինչպես պահպանողական, այնպես էլ լիբերալ կառավարությունները փորձում էին համագործակցել բոլոր մեծ տերությունների հետ Մակեդոնիայում բարենորոգումների իրագործման հարցում, ապա երկրորդ փուլում՝ Մեծ Բրիտանիան ավելի հեռու գնաց իր պահանջներում, համաձայնեցնելով իր դիրքորոշումը Ռուսաստանի հետ: 1908 թ. մարտին բրիտանական կառավարությունը դիմեց մեծ տերություններին, առաջարկելով բարենորոգումների այնպիսի մի ծրագրի իրականացում, որը, ձևական դարձնելով թուրքական իշխանությունը շրջանում, փաստորեն նշանակում էր Մակեդոնիայի անջատում Օսմանյան կայսրությունից: 1908 թ. հունիսին Ռևելում կայացած Նիկոլայ 2-րդի և Մեծ Բրիտանիայի թագավոր Էդուարդ 7-րդի հանդիպման ժամանակ երկու տերությունների համագործակցությունը Մակեդոնական հարցում դարձավ հատուկ քննարկման առարկա: Թեև ռուսական կողմի ճնշման տակ Մեծ Բրիտանիան մեղմացրեց իր պահանջները մակեդոնական բարենորոգումների կապակցությամբ, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան մերժեցին բարենորոգումների ծրագիրը, գնահատելով այն որպես իրենց շահերին և Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության դեմ ուղղված քայլ: Բարենորոգումների քաղաքականության հերթական այս անհաջողությունը ստիպեց բրիտանական կառավարությանը մտածել՝ եվրոպական համերգի՝ գաղափարի վերջնական

_____

8 Հարդինգ (Hardinge) Չարլզ (1958-1944) - բրիտանացի դիվանագետ: 1906-1910, 1916-1920 թթ.՝ մշտական փոխարտգործնախարար, 1910-1916 թթ.՝ Հնդկաստանի փոխարքա, 1920-1922 թթ.՝ դեսպան Ֆրանսիայում:
9 Heller J. Op.cit., p.4.
10 Նույն տեղում, էջ 5:

433

տապալման և Արևելյան հարցում տերությունների վերախմբավորման անհրաժեշտության մասին:11

Աբդուլ Համիդի հակահայկական քաղաքականության և Արևմտյան Հայաստանում ստեղծված անմխիթար իրավիճակի հետևանքով հազարավոր հայեր թողեցին իրենց հայրենիքը և ապաստան գտան Արևելյան Հայաստանում, Պարսկաստանում, Եվրոպայում ու Ամերիկայում: Չնայած հայ քաղաքական հիմնական կուսակցությունների՝ դաշնակցականների և հնչակյանների ծրագրերի և գործունեության միջև եղած տարբերություններին, նրանք միասնական էին Արևմտյան Հայաստանի ազատագրության, հայկական անկախ պետության ստեղծման հարցում: Բայց հայ կուսակցությունները այդպես էլ չհամախմբվեցին ազգային այդ գաղափարի շուրջ, չմիավորեցին իրենց ուժերը ժողովրդական միասնական հզոր շարժում առաջացնելու նպատակով, ինչպես վարվեցին կայսրության մյուս ճնշված ժողովուրդները: Անհաջողության մատնվեցին նաև ոչ թուրք ժողովուրդների՝ մասնավորապես քրդերի հետ միասնական ճակատ ստեղծելու փորձերը: Ընդհակառակը, թուրքական իշխանություններին հաջողվեց օգտագործել քրդական ցեղերին իրենց նպատակների համար, հրահրել նրանց հայերի դեմ: 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին հայ ազատագրական շարժման վերելքը, այն բացառապես սուլթանական իշխանության դեմ օգտագործելու ձգտումն ընդդիմադիր երիտթուրքական կուսակցությանը հանգեցրեց հայ կուսակցությունների, գլխավորապես, Դաշնակցության հետ հարաբերություններ հաստատելու գաղափարին, թեև ազգային հարցում երիտթուրքերի և Աբդուլ Համիդի միջև սկզբունքային տարբերություններ գոյություն չունեին: Շարունակելով ազգային- ազատագրական պայքարը, հայ քաղաքական կուսակցություններն իրենց մասնակցությունն ունեցան Աբդուլ Համիդի վարչակարգի դեմ ընդդիմադիր ուժերի միություն ստեղծելու գործում, ինչը հանգեցրեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջմանը:12

_____
11 Նույն տեղում, էջ 5-6; История дипломатии. Т. 2..., с. 638-645; Восточный вопрос во внешней политике России..., с. 307-308.
12 Հայ քաղաքական կուսակցությունների և երիտթուրքերի հարաբերությունների մասին տես՝ Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1982; Кочар М. Армяно-турецкие общественно-

434

1898-1907 թթ. հայ ազատագրական շարժումն իր վերելքն ապրեց 1903-1904 թթ., որի գագաթնակետը հանդիսացավ Սասունի ապստամբությունը: Հայդուկային պայքարն Արևմտյան Հայաստանում ընթանում էր հայերի համար ոչ բարենպաստ միջազային պայմաններում, երբ Հայկական հարցն ընդհանրապես մոռացության էր մատնվել

եվրոպական տերությունների կողմից: Թեև Մեծ Բրիտանիայի դիվանագիտությունը խուսափում էր այդ շրջանում բարձրացնել Հայկական հարցը, բրիտանական դեսպանությունը շարունակում էր հետևել և միջամտել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների ընթացքին:

1904 թ. մարտին դեսպանությունը տեղեկություններ ստացավ Մուշի և Սասունի հայերի շրջանում տիրող «լուրջ անհանգիստ իրավիճակի» և այդ կապակցությամբ «հայ հեղափոխականների» նկատմամբ թուրքական իշխանությունների մտադրության մասին: Մարտի 11-ին Աբդուլ Համիդի հետ կայացած հանդիպման ժամանակ դեսպան Օ`Կոնորը պնդում էր հայերի ղեկավարների հետ խաղաղ բանակցություններ սկսելու անհրաժեշտության վրա, առաջարկելով նրանց ընդհանուր ներման շնորհում և երկրից ազատորեն դուրս գալու հնարավորություն: Մինչ այդ, դեսպանի խորհրդի համաձայն, պատրիարքը նույնպես դիմել էր սուլթանական իշխանություններին նման խնդրանքով: Նա առաջարկում էր Մուշի եկեղեցականների միջոցով համոզել «հեղափոխականներին» ցրվել՝ կառավարության կողմից ներում շնորհելու և երկրից դուրս արտաքսելու երաշխիք ունենալու դեպքում:

Բանակցությունների ձախողման պարագայում Օ`Կոնորն առաջարկել էր նաև իր և ռուսական կառավարությունների պատրաստակամությունը՝ համապատասխան հյուպատոսների միջնորդության միջոցով օգտակար լինել խնդրի կարգավորմանը: Հետագայում այդ առաջարկությանը միանում է նաև Ֆրանսիայի կառավարությունը: Եվ երբ «հեղափոխականները» հրաժարվեցին եկեղեցականների միջնորդությունից, երեք տերությունների հյուպատոսները հանձնարարություն ստացան բանակցություններ սկսել հայերի հետ: Սակայն «ապստամբների հանդուգն վերաբերմունքի» և թուրքական զորքի վրա կատարած հարձակման արդյունքում հյուպատոսների միջնորդությունն այդ պահին դարձավ

_____
политические отношения и Армянский вопрос в конце Х1Х – начале ХХ в. Ереван, 1988.

435

անօգուտ: Իրավիճակն ավելի բարդացավ, երբ հայերի վրա «մեծ դաժանությամբ» հարձակում գործեցին քրդերը, որոնք ավերեցին և այրեցին մի քանի գյուղ:13

Մայիսի 24-ին Օ`Կոնորը պահանջում էր մեծ վեզիրից հայերի վրա հարձակումներ գործելու համար պատժել մի քանի քրդերի, որպեսզի վերջիններս հասկանան, որ կենտրոնական իշխանությունները որոշ չափով վերահսկում են նրանց «վայրագ գործողությունները»: Մեծ վեզիրը պատասխանում է, որ քրդերին ընդհանրապես արգելված է հայտնվել հուզումների ենթակա շրջաններում, իսկ կառավարությունն արդեն մեծ ռազմական ուժ է ուղարկել ապստամբների դեմ՝ արյունահեղությունը կանխելու համար: Այնուհետև նա նշում էր, որ հայերի կողմից դավադրության կազմակերպման փաստերը լիովին հաստատված են, վերջերս նրանք հեղափոխական հավաքներ են գումարել Կարսում և սահմանակից այլ վայրերում, որից հետո շուրջ 600 «ապստամբներ» խախտել են սահմանն ու թափանցել Թուրքիա: Հունիսի 13-ին դեսպանը կրկին անգամ զգուշացնում էր մեծ վեզիրին, որ թուրքական կառավարության վրա «սարսափելի պատասխանատվություն է» ընկնելու, եթե ապացուցվի, որ քրդերին թույլ է տրվել

մասնակցել «վերջին անկարգություններին»: Դեսպանության տեղեկությունների համաձայն, իշխանությունները հատուկ ստիպում են հայերին շարժվել դեպի հարթավայրեր, որտեղ նրանք ընկնելու են քրդերի ձեռքը: Օ՝Կոնորը պահանջում էր մեծ վեզիրից հրահանգներ իջեցնել Բիթլիսի վալիին, որպեսզի վերջինս թույլատրի փախստական հայերին ետ վերադառնալ իրենց տները և ապահովել նրանց անվտանգությունը:14

Հունիսի 21-ին մեծ վեզիրը տեղեկացնում էր Օ՝Կոնորին, որ, քննարկելով Մուշում և Սասունում ստեղծված իրավիճակը, կառավարությունն ընդունել է հետևյալ որոշումը. 1/ Մուշում և այլ վայրերում գտնվող փախստականներին շնորհվելու է Սասուն վերադառնալու թույլտվություն. 2/ փախստականների տները վերականգնելու նպատակով Բիթլիսի վալիին ուղակվելու է 5 հազ. թուրքական ոսկի. 3/ քրդերի ավերիչ հարձակումներից և հեղափոխական հնարավոր ընդվզումը կանխելու նպատակով Սասունի շրջակայքում կառուցվելու են զորանոցներ. 4/ ընդհանուր ներում է շնորհվելու բոլոր նրանց, ովքեր կամավոր հանձնվելու են

_____
13 FO 881/8556, No. 1262, T.R. Memorandum respecting the Armenians, December 11, 1905, pp. 1-2.
14 Նույն տեղում, էջ 2:

436

և ովքեր չեն մասնակցել հանցագործությունների կազմակերպմանը. 5/ վերակազմակերպվելու է Բիթլիսի և հարևան վիլայեթների ժանդարմերիան, անցկացվելու է հատուկ հետաքննություն՝ տեղական իշխանությունների չարաշահումները հայտնաբերելու նպատակով:15

Հուլիսի 6-ին Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Հիթկոթը Մուշից Օ՝Կոնորին հաղորդում էր, որ իրավիճակը շրջանում բավականին բարելավվել է: Թուրքական իշխանությունները ջանում են բավարարել իրենց տները վերադարձած փախստականների անմիջական կարիքները, վալին խոստանում է ապահովել հայերի անվտանգությունը քրդերից: Օգոստոսի 12-ին, պատասխանելով բրիտանական խորհրդարանի անդամների արտգործնախարարությանը հասցեագրցած հարցմանը, փոխարտգործնախարարը հայտարարում էր, որ հյուպատոսական գործակալներից ստացված տեղեկությունների համաձայն, հունիսի վերջին թուրքական իշխանությունները ձեռնարկել են մի շարք միջոցառումներ՝ իրավիճակը զգալիորեն բարելավելու ուղղությամբ: Հատուկ հանձնաժողովի հսկողության ներքո, որի կազմում ընդգրկված են նաև հայերի նշանավոր ներկայացուցիչներ, փախստականները վերահաստատվել են իրենց տներում, վերակառուցվում են տներն ու անասունները, նրանց համար առաքվում է սննդամթերք: Քրդերի մասնակցությունը վերջին անկարգություններին, շարունակում էր փոխարտգործնախարարը, դեռևս չի հաստատվում, սակայն իշխանությունները միջոցներ են ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Վերջին տաս օրերի ընթացքում թուրք-պարսկական սահմանամերձ տարածքներում արձանագրվել են ընդհարումներ թուրքական զորքերի և հայկական «հեղափոխական» ջոկատների միջև: Ընդհանուր իրավիճակն Օսմանյան կայսրության ասիական վիլայեթներում նախարարության ներկայացուցիչը համարում էր «բնականոն»:

Սեպտեմբերի 27-ին մեծ վեզիրը տեղեկացնում էր Օ՝Կոնորին հատուկ խառը հանձնաժողով ստեղծելու մասին, որը զբաղվելու է փախստականներին ետ վերադարձնելու, ավերված տները վերակառուցելու և հատկացված միջոցներն իրենց նպատակին ծառայեցնելու համադրման աշխատանքներով: 1905 թ. հունվարին Սասուն այցելած Վանում

---

15 Նույն տեղում, էջ 2-3:



փոխհյուպատոս, կապիտան Թայրելը հաղորդում էր, որ սուլթանական կառավարությունն իրապես զգալի աշխատանք է կատարել իրավիճակը Սասունում բարելավելու ուղղությամբ:16

Օգոստոսին Օ՝Կոնորը հաղորդում էր, որ սուլթանական իշխանությունները հայտնաբերել են Զմյուռնիայում մեծ քանակությամբ ռումբեր և «դժոխային մեքենաներ», որի հետևանքով ամեն օր ձերբակալվում էին 100-200 հայեր, մեկ հայ ենթարկվել էր նույնիսկ մահապատժի: Սեպտեմբերի 19-ի դեսպանի զեկուցագրում կարդում ենք, որ Կոստանդնուպոլսի թուրք բնակչությունը հավատացած էր, որ հայերը ծրագրում են ընդհանուր հարձակում սկսել իշխանությունների դեմ, օգտագործելով ռումբեր և այլ միջոցներ: Նմանօրինակ տեղեկությունները ստացել էին այնպիսի տարածում, շարունակում էր դեսպանը, որ մահմեդականներն իրապես վախեցել էին իրենց կյանքի համար և հայերի հարձակման դեպքում պատրաստվում էին կիրառել «արյունարբու միջոցներ»:

Ըստ Օ՝Կոնորի, սուլթանի դեմ իրագործված մահափորձը ստեղծել էր «անհանգստության և կասկածանքի» ընդհանուր մթնոլորտ: Սեպտեմբերի 26-ին Մեծ Բրիտանիայի դեսպանի և Աբդուլ Համիդի միջև կայացած հանդիպման ժամանակ վերջինս պնդում էր, որ այդ դավադրության հեղինակները հայերն են: Նա նշում էր, որ Կոստանդնուպոլսի 12 տարբեր թաղամասերում հայտնաբերված են հայերի կողմից տեղադրված ռումբեր, որոնք պետք է պայթեցվեին հեղաշրջման հաջող իրականացման դեպքում: Սուլթանը շարունակում էր. «Հայերը երևակայում են, որ պաշտպանված են տերությունների կողմից, սակայն եթե նրանք բարկացնեն մեզ, մենք կսպանենք բոլոր հայերին մինչև տերությունների հնարավոր միջամտությունը: Եվ հետո, ինչ՞ կարող են անել տերությունները: Ես արդեն ծեր մարդ եմ»:17

Բրիտանական դիվանագիտությունն այդքան էլ մեծ նշանակություն չտվեց 1908 թ. երիտթուրքական հեղաշրջմանը նախորդող իրադարձություններին, սակայն արդեն հուլիսի 23-24-ին, երբ Աբդուլ Համիդը ստիպված եղավ հրաժարվել իր բացարձակ իշխանությունից, Ֆորին Օֆիսն անմիջապես որոշում կայացրեց կտրուկ փոփոխության ենթարկել իր դիրքորոշումն Օսմանյան կայսրության հանդեպ: Հուլիսի 25-ին Գրեյին ուղղված հեռագրում

---

16 Նույն տեղում, էջ 3-4:
17 Նույն տեղում, էջ 4-5:

438

Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի հավատարմատար Ջորջ Բարկլայը18 գրում էր Գրեյին, որ Կոստանդնուպոլսում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ՝ մեծ վեզիր Սաիդ փաշայի խորհրդով սուլթանը ընդհանուր ներում է շնորհել քաղբանտարկյալներին, գրաքննություն այլևս գոյություն չունի: Նա մանրամասնորեն նկարագրում էր ժողովրդի ցնծությունը, կառավարական շենքերի առջև տեղի ունեցող ցույցերը, մահմեդականների և քրիստոնյաների, մասնավորապես, հայերի հետ եղբայրացման նկատելի երևույթները:19

Հուլիսի 27-ին Բարկլային ուղղված հեռագրում Գրեյը գրում էր սուլթանի կողմից սահմանադրության հրապարակման և մեծ վեզիրի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ Սաիդ փաշային շնորհավորելու անհրաժեշտության մասին: Նա նշում էր, որ մեծ վեզիրը պետք է վստահ լինի բրիտանական կառավարության Թուրքիայի հանդեպ ունեցած բարի վերաբերմունքի մեջ: Ըստ Գրեյի, Մեծ Բրիտանիան համարում է տեղի ունեցած իրադարձությունը որպես նոր քայլ երկրի բարեկեցության ճանապարհին: Նա հանձնարարում էր Բարկլային հավաստիացնել Սաիդ փաշային, որ Հայաստանում և Մակեդոնիայում տիրող իրավիճակի առնչությամբ բրիտանական կառավարության կողմից ժամանակ առ ժամանակ ձեռնարկված գործողությունները նպատակ են հետապնդել այդ շրջանների կառավարման բարելավումը պայմանագրային պարտավորությունների համաձայն և ամենևին էլ թշնամական բնույթ չեն կրել Թուրքիայի հանդեպ: Բրիտանական կառավարությունը համարում է, շարունակում էր Գրեյը, որ Մակեդոնական և նման բոլոր հարցերը կարող են լուծում ստանալ միմիայն այն դեպքում, երբ թուրքական իշխանության տակ գտնվող բոլոր «տիրույթներում» կհաստատվի «լավ կառավարում»: Բրիտանական կառավարությունը պատրաստ է, ըստ նախարարի, աջակցել Թուրքիային այդ հարցում:20

Այդ կապակցությամբ նույն օրը Գրեյը հանդես եկավ ելույթով խորհրդարանում: Նա ասում էր. «Եթե Թուրքիան պատրաստ է բարելավել ողջ կառավարման համակարգը երկրում

---

18 Բարկլայ (Barclay) Ջորջ (1862-1921) - բրիտանացի դիվանագետ: 1906-1908 թթ.՝ հավատարմատար Թուրքիայում, 1908-1912 թթ.՝ դեսպանորդ Իրանում, 1912-1918 թթ.՝ Ռումինիայում:
19 Turkey, No. 1 (1909). Correspondence Respecting the Constitutional Movement in Turkey. 1908. London, 1909, p. 11.
20 Նույն տեղում, էջ 14:

439

և երաշխավորելու է, որ մահմեդականներն ու քրիստոնյաները հավասարապես շահելու են բարելավումից, ապա ավելի լավ կլինի, եթե Մակեդոնական հարցը լուծում ստանա թուրքերի կողմից այնպես, ինչպես որ մենք տարիներ շարունակ ստիպել ենք իրենց այդ անելու...: Մեր անձնական համակրանքը պետք է լինի նրանց հետ, ով փորձելու է իրագործել բարենորոգումները...:21

Սակայն ոչ բոլոր բրիտանացի դիվանագետներն էին կիսում Գրեյի տեսակետները: Բարկլայը բավականին թերահավատ էր «հեղափոխության հաջողության»

կապակցությամբ, իսկ Հարդինգն այդ օրերին գրում էր, որ «վերջին օրերի իրադարձություններն այնքան անսպասելի էին, որ անհնարին է ասել, թե որն է լինելու մեր հաջորդ քայլը մակեդոնական բարենորոգումների ծրագրերի առնչությամբ»: Նա համարում էր, որ «եթե միայն այդ երիտասարդ թուրքերի կուսակցությունը կարողանա իրեն հաստատել ու ստեղծել իրապես լավ վարչակարգ երկրում, նրանք ամբողջությամբ կխաղան մեր...խաղը»: Ֆորին Օֆիսը նույնպես հավատացած էր, որ «հեղափոխությունը հարված է հասցնելու գերմանական ազդեցությանը Կոստանդնուպոլսում»:22 Իսկ ինչ վերաբերում է այդ կապակցությամբ ռուս-բրիտանական հարաբերություններին, ապա Գրեյը նշում էր. «Ներկայումս ամենից նրբազգաց կետը դա Ռուսաստանն է՝ մենք չենք կարող վերադառնալ լորդ Բիքոնսֆիլդի հին քաղաքականությանը, մենք ներկայումս վարելու ենք թուրքամետ գիծ, առանց որևէ կասկած հարուցելու, որ այն կրելու է հակառուսական բնույթ»:23

Հուլիսի 30-ին Կոստանդնուպոլիս ժամանեց Մեծ Բրիտանիայի նոր դեսպան Ջերարդ Լոութերը,24 որին հետագայում մեղադրեցին Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև հարաբերությունները վատթարացնելու մեջ: Անմիջապես հաջորդ օրը Գրեյը տեղեկացնում էր նրան Թուրքիայի դեսպանի հետ կայացած իր զրույցի մասին: Հանդիպման ժամանակ դեսպանը հետաքրքրվում էր Թուրքիայի իրադարձությունների կապակցությամբ Մեծ Բրիտանիայի կառավարության վերաբերմունքի մասին: Գրեյը պատասխանում էր, որ

21 Heller J. Op.cit., p. 10.
22 Նույն տեղում, էջ 10-11:
23 Նույն տեղում, էջ 11:
24 Լոութեր (1858-1916) Ջերարդ - բրիտանացի դիվանագետ: 1908-1913 թթ.՝ դեսպան Թուրքիայում:



բրիտանական կառավարությունը ողջունում է Թուրքիայի նոր կառավարությունը: «Մեր միակ ցանկությունը եղել է լավ կառավարման ապահովումը և եթե թուրքերն այսօր պատրաստվում են ստեղծել նմանն իրենց համար, - շարունակում էր նախարարը, - մենք ուրախ կլինենք արտահայտելու մեր բավարարվածությունն ու համակրանքը...: Մեր վեճերը երբեք չեն եղել թուրք ժողովրդի հետ, այլ միայն կառավարության հետ, նրա ղեկավարման առանձին թերությունների պատճառով, ինչի դեմ այսօր բողոքում են թուրքերը»:25

Օգոստոսի 3-ին Էրզրումում Մեծ Բրիտանիայի հյուպատոս Շիպլին Լոութերին զեկուցում էր, որ քաղաքի բանտից ազատ են արձակվել 92 քաղբանտարկյալներ, որոնցից 60-ը հայեր են: Նրանք բոլորը մեղադրված էին հեղափոխական գրականության տարածման, ռուս-թուրքական սահմանը խախտելու և զենքի փոխադրման մեջ: Ըստ հյուպատոսի, քաղաքի հայ բնակչությունը արտակարգ խանդավառությամբ էր ընդունել նոր իշխանությունների այդ քայլը:26 Հաջորդ օրը Լոութերը Գրեյին հաղորդում էր Կոստանդնուպոլսի Շիշլիի գերեզմանոցում կատարված արտասովոր մի երևույթի մասին. հայերի և թուրքերի մի մեծ բազմություն՝ կրոնական դասերի ներկայացուցիչների մասնակցությամբ, նշում էր 1895 և 1896 թթ. հայկական կոտորածների զոհերի հիշատակը:27 Օգոստոսի 12-ին հյուպատոս

Սթիվենսը հաղորդում էր Բաթումից, որ Թուրքիայի հյուպատոսարանը հայտարարել է սուլթանի կողմից Անդրկովկաս գաղթած փախստականներին, հիմնականում հայերին, ներում շնորհելու մասին և կոչ է անում վերադառնալ հայրենիք:28 Մուշում և Բիթլիսում հայ բնակչության խանդավառության, ինչպես նաև մահմեդականների և քրիստոնյաների եղբայրացման փաստերի մասին տեղեկացնում էր (1 սեպտեմբերի) Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոս Սաֆրաստյանը:29

Միաժամանակ սեպտեմբերի 20-ին Լոութերը գրում էր Գրեյին, որ չնայած հեղաշրջման որոշակի դրական ազդեցությանը, իրավիճակը Հայաստանում դեռևս մնում է

_____
25 Turkey, No. 1 (1909)..., p. 18.
26 Նույն տեղում, էջ 61-62:
27 Walker Ch. Op.cit., p. 181.
28 Turkey, No. 1(1909)..., p. 61.
29 Նույն տեղում, էջ 89:

441

անբավարար, մասնավորապես, Մուշի և Բիթլիսի շրջանում քրդերը շարունակում էր հարձակումներ գործել և թալանել հայ բնակչությանը:30

Ֆորին Օֆիսը շարունակում էր իր գլխավոր խնդիրը համարել Օսմանյան կայսրության վարչական համակարգի բարենորոգումների իրագործումը, խոստանալով ամեն կերպ քաջալերել նոր իշխանություններին: Գրեյի կարծիքով, երիտթուրքերը պետք չէ շտապեն այդ հարցում, նրանց նպատակը պետք է լինի կառավարական հիմնական լծակների փոխանցումը ՝ազնիվ և կարող՝ մարդկանց ձեռքը: Նա նույնպես հույս ուներ, որ նոր վարչակարգը բրիտանական կապիտալի ներդրման մեծ հնարավորություններ պետք է ստեղծի, սակայն միաժամանակ հուսախաբություն ապրեց, երբ ֆինանսները վերակարգելու համար երիտթուրքերն ընտրեցին ֆրանսիացի փորձագետի:31

Իր առաջին կապը երիտթուրքերի հետ Լոութերը հաստատեց սեպտեմբերի 2-ին, երբ հանդիպում ունեցավ Մեհմեդ Թալաաթի և Բեհաեդդին Շաքիրի հետ: Դեսպանը չափազանց տպավորված էր իրենց ժամանակակից գաղափարներից և ապագա դժվարությունների իրական ըմբռնումներից: Նրանք երկուսն էլ հաստատեցին իրենց բրիտանական կողմնորոշումը, նշելով, որ նայում են բրիտանական կառավարության վրա ՝հավանությամբ և համակրանքով՝:32

Սակայն միջազգային իրադրությունը թելադրում էր բրիտանական դիվանագիտությանը խաղի այլ կանոններ: Իրավիճակը կտրուկ կերպով փոխվեց հոկտեմբերի սկզբին, երբ Բուլղարիան հայտարարեց իր անկախությունը, իսկ Ավստրիան գրավեց Բոսնիան և Հերցեգովինան: Բուլղարիայի անկախության պարագայում բրիտանական կառավարությունը նախընտրեց պաշտպանել Ռուսաստանի դիրքորոշումը, սակայն մերժեց Ֆրանսիայի առաջարկը՝ Ավստրո-Հունգարիայի քայլը քննարկելու նպատակով տերությունների համաժողով գումարելու վերաբերյալ: Մեծ Բրիտանիայում Թուրքիայի դեսպանի միջոցով Գրեյը խորհուրդ էր տալիս նոր իշխանություններին ընդունել ինչպես Բուլղարիայի անկախությունն, այնպես էլ Բոսնիայի ու Հերցեգովինայի գրավումը և

խուսափել պատերազմից, քանի որ Թուրքիան ներկայումս կարիք ունի միայն ժամանակի ու

30 Նույն տեղում, էջ 80, 88:
31 FO 371/545, No. 235.
32 FO 371/549, No. 541.

442

ֆինանսների: Փոխարենը թուրքական կառավարությանն առաջարկվում էր ֆինանսական աջակցություն և համակրանքի հավաստիացումներ նոր իշխանությունների նկատմամբ: Հոկտեմբերի 5-ին Թուրքիայի արտգործնախարար Թևֆիկ փաշան այցելեց Լոութերին և կրկին անգամ փորձեց համոզել բրիտանական կառավարությանը փոխել իր դիրքորոշումը:33

Բուլղարիայի անկախացումը, Բոսնիայի և Հերցեգովինայի գրավումն ու Կրետեյի կողմից Հունաստանի հետ վերամիավորման հռչակումը ծանր հարված հասցրին Օսմանյան կայսրության նոր իշխանություններին և բողոքի մեծ ալիք բարձրացրին երկրում: Փորձելով շահել երիտթուրքերի համակրանքը և փոխհատուցել կայսրության տարածքային կորուստները, Ֆորին Օֆիսը որոշում ընդունեց առաջարկել Թուրքիային իր աջակցությունը՝ Բեռլինի պայմանագրի 23 և 61-րդ հոդվածների վերացման հարցում, համաձայն որոնց թուրքական կողմը պարտավորվել էր վարչական բարենորոգումներ իրագործել կայսրության եվրոպական և հայկական շրջաններում: Օսմանյան վարչակարգի բարեփոխման դեպքում բրիտանական կառավարությունը խոստանում էր նաև կապիտուլյացիոն բնույթի պայմանագրերը փոխարինել քաղաքակիրթ պետությունների միջև ստորագրվող կանոնավոր համաձայնագրերով: Փոխարենը օսմանյան կառավարությունը պետք է ճանաչեր Բուլղարիայի անկախությունը և Բոսնիայի ու Հերցեգովինայի գրավումը: Երբ մեծ վեզիր Քյամիլ փաշան մերժեց Լոութերի կողմից իրեն ներկայացված բրիտանական առաջարկը, Ֆորին Օֆիսն ընդունեց բավականին կոշտ դիրք: Գրեյն ասում էր Թուրքիայի դեսպանին, որ օսմանյան կառավարությունն իրավունք չունի վիճաբանելու, երբ խոսքը գնում է Թուրքիայի քաղաքական շահերի մասին: Իր հերթին Հարդինգը հայտարարում էր, որ եթե Թուրքիան նույնիսկ հաղթի Բուլղարիային, Ռուսաստանը և Եվրոպան թույլ չեն տա, որպեսզի Արևելյան Ռումելիան վերադարձվի Օսմանյան կայսրությանը: Անհաջողությամբ ավարտվեց նաև Ֆորին Օֆիսի հերթական նախաձեռնությունը՝ Ավստրո-Հունգարիայի նկրտումների դեմ պայքարելու նպատակով Օսմանյան կայսրություն-Բալկանյան պետություններ դաշինք ստեղծելու վերաբերյալ:34

1908 թ. Լոութերը հաղորդում էր Կոստանդնուպոլսում հետզհետե գերմանական ազդեցության ուժեղացման նշանների մասին: Միաժամանակ բրիտանական

33 FO 371/550, No. 294.
34 Heller J. Op.cit., p. 18-19.

443

դիվանագիտության գնահատականները երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականության վերաբերյալ սկսում են կրել քննադատական բնույթ: Դեսպանի կարծիքով, երիտթուրքերը ներկայացնում են թուրքական, այլ ոչ թե օսմանյան շահերը: Հարդինգը գրում էր Լոութերին, որ «ցանկալի կլիներ, որ այդ երիտթուրքերի կոմիտեն անհետանա մոտ ապագայում, այլապես նրանք կփչանան ժամանակի ընթացքում և կորդեգրեն ճիշտ նույն քաղաքականությունը, որը նախկինում իրագործում էր պալատական վերնախավը»: Իսկ Կոստանդնուպոլսի բրիտանական դեսպանության նախկին ռազմական կցորդ Մաունսելը համարում էր, որ անհույս է սպասել երիտթուրքերից բարենորոգումների իրագործում, քանզի «դա նույն հին թուրքն է, որը փոխել է միայն իր վերնազգեստը...»: Այս պայմաններում բրիտանական դիվանագիտությունը շարունակ փորձում էր խուսափել երիտթուրքական կառավարության ներկայացված երկու պետությունների միջև դաշնակցային հարաբերություններ ստեղծելու առաջարկներից: Այդ կապակցությամբ Հարդինգը նշում էր, որ «բարեկամ Թուրքիան շատ ավելի հարմար կարգավիճակ է մեզ համար, քան դաշնակից Թուրքիան»:35

1909 թ. գարնանը Աբդուլ Համիդի և մեծ վեզիր Քյամիլ փաշայի կողմնակիցները բրիտանական կառավարության գաղտնի աջակցությամբ փորձեցին տապալել երիտթուրքական ռեժիմը, սակայն հեղաշրջումն ավարտվեց անհաջողությամբ: Երիտթուրքերը ոչ միայն վերականգնեցին իրենց իշխանությունն, այլև գահնկեց արեցին Աբդուլ Համիդին, փոխարինելով նրան նոր սուլթանով, անդեմ Մեհմեդ 5-րդով: Մեծ վեզիրի պաշտոնը ստանձնեց գերմանական ազդեցության տակ գտնվող Հիլմի փաշան: Հայտնվելով նոր իրականության առջև, բրիտանական դիվանագիտությունը շատ արագ մոռացավ «սահմանադրական միապետ Աբդուլ Համիդին աջակցելու իրենց նախկին փորձերը»: Այդ օրերին Գրեյը գրում էր. «...Պարզ դարձավ, որ մենք մեծապես թերագնահատեցինք կոմիտեի (Միություն և առաջադիմություն երիտթուրքական կոմիտե, Իթթիհատ - Ա.Կ.) տրամադրության ներքո գտնվող ուժերի հզորությունը..., Թուրքիայի լավագույն տարրերը կարծես թե հայտնվել են իրենց կողմում և մենք պետք է աջակցենք և համակրենք այդ տարրերին..., մենք պետք է մոտենանք նրանց պակաս քննադատությամբ և ավելի

35 Նույն տեղում, էջ 24-25:



համակրանքով»:36 Միաժամանակ Լոութերի զեկուցագրերի ընդհանուր ոճը շարունակում էր մնալ չափազանց քննադատական: Նա համարում էր, որ երիտթուրքական իշխանությունը կրկնում է կառավարման Աբդուլ Համիդի նույն մեթոդները, բացարձակապես ոչինչ չի փոխվել ազգային քաղաքականության բնագավառում, բարելավում չի նկատվում քրիստոնյաների նկատմամբ իրենց դիրքորոշման մեջ:37 Դեսպանի գնահատականներն ամբողջությամբ դրսևորվեցին ապրիլին Ադանայում տեղի ունեցած արյունալի իրադարձությունների ժամանակ:

Ապրիլի 13-ին բրիտանական հյուպատոսության թարգման Աթանասիոս Տրիպանիսը հաղորդում էր Ադանայից Մերսինում փոխհյուպատոս Դուրի-Ուայլիին քաղաքում սկսված անկարգությունների մասին: Փոխհյուպատոսն անմիջապես մեկնում է Ադանա և ականատես դառնում երեք օր տևած քաղաքի հայ բնակչության ջարդին, որին

մասնակցում էին ինչպես մահմեդական խաժամուժը, այնպես էլ տեղի թուրք իշխանությունները: Երկու օր անընդմեջ Դութի-Ուայլին փորձում էր քաղաքի իշխանությունների միջոցով կանգնեցնել հայերի ջարդը, սակայն իր բոլոր ջանքերն ավարտվում են ապարդյուն:38 Իր տվյալների համաձայն, ապրիլի 13-16-ը Ադանայում սպանվել էր 2 հազ., իսկ շրջակա գյուղերում՝ 15-25 հազ. հայ:39

Լոութերին ուղղված զեկուցագրում Դութի-Ուայլին կտրականապես մերժում էր հայերի կողմից անկարգությունները հրահրելու գաղափարը, նշելով, որ «կոտորածները սկսվեցին տարբեր վայրերում նույն օրը և գրեթե նույն ժամին»: Նա համոզված էր, որ տեղի իշխանությունները նախօրոք տեղյակ էին նախապատրաստվող ջարդի մասին:40 Ապրիլի 24-ին կրկին իշխանության գլուխ անցած երիտթուրքերի առաջին իսկ քայլը հանդիսացավ կարգ ու կանոնը վերականգնելու պատրվակով Բեյրութից և Դամասկոսից դեպի Ադանա Ռումելիայից բերված զորքի ուղարկումը, որը նոր թափ հաղորդեց հայերի կոտորածին: Բրիտանացի ականատեսների վկայությամբ, թուրք զինվորների համար գլխավոր թիրախ էր

_____
36 Նույն տեղում, էջ 30:
37 Նույն տեղում, էջ 31:
38 FO 424/219, pp. 80-85.
39 Նույն տեղում, էջ 84:
40 Somakian M. Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920. London-New York, 1995, p. 42.

445

դարձել քաղաքի հայկական թաղամասը, մասնավորապես Մուշեղյան դպրոցն ու եկեղեցին, որտեղ ապաստան էին գտել մեծ քանակությամբ հայ փախստականներ: Բանակի և իշխանությունների գործողությունների արդյունքում Ադանայում հրկիզվել էր 4 հազ. 437 հայի տուն: Կոտորածներ տեղի ունեցան Ադանայի նահանգի գրեթե բոլոր գավառների և Հալեպի նահանգի հայաբնակ վայրերում: Ընդհանուր առմամբ զոհվեցին շուրջ 30 հազ. հայեր:41

Քննարկելով բրիտանական դիվանագիտության գործելակերպի հնարավոր փոփոխությունն Ադանայի ջարդի առնչությամբ, Ֆորին Օֆիսն ընդհանրապես բացառեց մեծ տերությունների միջամտության հարցի բարձրացումը: Գրեյը համարում էր դիվանագիտական միջամտությունն անիմաստ և անհեռատես քայլ, որը կարող էր հրահրել հայերին սարքել այնպիսի անկարգություններ, որոնց կհետևեր նոր ջարդ և տերությունների այս անգամ ռազմական միջամտություն:42

1909-1910 թթ. ընթացքում ինչպես բրիտանական դեսպանությունն, այնպես էլ Ֆորին Օֆիսն իրենց դժգոհությունն էին արտահայտում Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի առնչությամբ, բնութագրելով այն որպես անբավարար: Ըստ Լոութերի, երկրի ներքին քաղաքական վիճակը դարձավ ընդհանրապես անհուսալի, երբ Կոստանդնուպոլսում սպանվեց ընդդիմության «վերջին վերապրուկը», Սեդաի Միլլեթ թերթի խմբագիրը: Ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր «զինվորական բռնապետ» Շեֆքեթ փաշայի ձեռքում, որի խոսքն ուներ «բացարձակ օրենքի» ուժ:43 Հունիսի 28-ին

Գերմանիայում դեսպան Գոշենին ուղղված նամակում Հարդինգը գրում էր. «Իրավիճակը Թուրքիայում ներկայումս շատ վատն է և մեր ազդեցությունը մեծապես նվազում է, մինչդեռ Մարշալն (Գերմանիայի դեսպանը Օսմանյան կայսրությունում - Ա.Կ.) ակնհայտորեն մեծ գործարք է կայացրել թուրքերի հետ՝ իր կորցրած հեղինակությունը վերականգնելու համար: Իթթիհատը կարծես թե հաստատել է

41 Նույն տեղում, էջ 92-93; Woods Ch. The Danger Zone of Europe. London, 1911, pp. 136-138, 155-161; Abbott G. Turkey in Transition. London, 1909, p. 304-305; Walker Ch. Op. cit., pp. 182-186; Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor , during April, 1909. London, 1913.
42 Heller J. Op.cit., p. 82.
43 FO 371/1007, No. 268.



նույնիսկ շատ ավելի կարծր բռնապետություն, քան թե այն, որը գործադրում էր մեր բարեկամ Աբդուլ Համիդը»:44

Իրականում Գերմանիան հաղթած էր դուրս եկել Բարձր Դռան նկատմամբ ազդեցություն հաստատելու երկու տերությունների մրցակցության պայքարում, որի հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ Մեծ Բրիտանիան, իր կենսական շահերից ելնելով, շարունակում էր վճռական կեցվածք հանդես բերել Միջագետքի, Պարսից ծոցի, Եգիպտոսի և Կրետեի հարցերում, ինչը չափազանց ցավագին էր ընդունվում երիտթուրքերի կողմից:

Բրիտանական դիվանագետները մեղադրում էին նաև երիտթուրքերին օսմանիզմի գաղափարախոսությունը պանիսլամիզմով փոխարինելու մեջ, ինչն օգտագործվում էր նրանց կողմից մահմեդական բնակչության կրոնական զգացմունքներն ազգայնական նպատակներին ծառայեցնելու համար: Այդ հարցում Ֆորին Օֆիսն ընդունեց ընդգծված կարծր դիրք, մասնավորապես, Մոնաստիրում տեղի ունեցած Իթթիհատի հերթական համագումարից հետո, որտեղ որոշում էր կայացվել մերժել Մակեդոնիայի քրիստոնյաների իրավունքներն ու ազատությունները: Գրեյը գրում էր. «Մեկ ազգությունը մյուսի դեմ հանելը դա Աբդուլ Համիդի հին քաղաքականությունն է, ինչը կբերի նույն արդյունքի»:45 Ավելին, Ֆորին Օֆիսը պատրաստ էր նույնիսկ պաշտպանելու Բուլղարիայի և Սերբիայի երիտթուրքերի Ալբանիայի և Մակեդոնիայի թուրքացման ծրագրերի դեմ ուղղված քաղաքականությունը: Այդ կապակցությամբ Մեծ Բրիտանիայի նոր մշտական փոխարտգործնախարար Նիկոլսոնը նշում էր. «Ես նոր ռեժիմի մեծ կողմնակից չեմ և թերահավատ եմ, որ յուրաքանչյուր թուրք, լինի դա նոր կամ հին, կամ էլ նրանց միջինը, կարողանա հավասար հիմքի վրա դնել մահմեդականին և քրիստոնյային»:46

Սակայն ոչ բոլորն էին կիսում Գրեյի, Նիկոլսոնի և Լոութերի կարծիքը երիտթուրքերի մասին: Այսպես, 1910 թ. Թուրքիա այցելած և Թալաաթի ու Ջավիդի հետ հանդիպում

44 Heller J. Op.cit., p. 33.
45 FO, 371/1012, No. 512.
46 Heller J. Op.cit., pp. 34-35.

447

ունեցած ներքին գործերի նախարար Ուինսթոն Չերչիլը47 չափազանց տպավորված էր երիտթուրքական կառավարության անդամների «որակով, եռանդով և գործնական բնույթով»: «...Նրանց հարաբերությունները գործընկերների հետ և նրանց ընդհանուր կեցվածքը, - գրում էր Չերչիլը, - ավելի հիշեցնում են ինձ գործի նկատմամբ մեր ունեցած մոտեցումները...» 48

1910 թ. նոյեմբերին Սալոնիկում կայացած Իթթիհատի տարեկան համագումարն էլ ավելի ամրապնդեց Ֆորին Օֆիսի համոզվածությունն այն բանում, որ երիտթուրքերը որդեգրել են թուրքիզմի և պանիսլամիզմի քաղաքական ուղեգիծ: Ֆորին Օֆիսի վերլուծության համաձայն, երիտթուրքերի դիրքորոշումն «ամբողջությամբ գերմանամետ» է և «ընդգծված վերապահ» Անտանտի տերությունների հանդեպ, նրանք շարունակելու են «չնշումների և հնարավորությունների սահմաններում քրիստոնյա տարրը ոչնչացնելու քաղաքականությունը», ինչպես նաև ակտիվացնելու են պանիսլամիստական քարոզչությունը կայսրության սահմաններից դուրս:49 Այդ կապակցությամբ Նիկոլսոնը գրում էր. «Հետաքրքիր կլիներ, եթե այս քսաներորդ դարում մենք ականատես դառնայինք տասնյոթերորդ դարի Օսմանյան կայսրության վերակենդանացմանը...: Ես կարծում եմ, որ այդ պանիսլամական շարժումն ապագայում ամենից մեծ վտանգն է ներկայացնելու մեզ համար և իրականում շատ ավելի մեծ, քան «դեղին վտանգը»...:50 Լոութերը սակայն չէր կիսում Նիկոլսոնի այդ մտավախությունը, համարելով, որ պանիսլամիզմը կարող է ստեղծել շահերի, այլ ոչ թե կրոնի ընդհանրություն: Նա գրում էր, որ շիա պարսիկները զզվում են

---

47 Չերչիլ (Churchill) Ուինսթոն (1874-1965) - բրիտանացի պետական և քաղաքական գործիչ, պահպանողական կուսակցության ղեկավար: 1900-1922, 1924-1964 թթ.՝ խորհրդարանի համայնքների պալատի անդամ, 1906-1908 թթ.՝ գաղութների փոխնախարար, 1910-1911 թթ.՝ ներքին գործերի նախարար, 1911-1915 թթ.՝ ռազմածովային նախարար, 1917 թ.՝ ռազմական մատակարարման նախարար, 1919-1921 թթ.՝ ռազմական նախարար և ավիացիայի նախարար, 1921-1922 թթ.՝ գաղութների նախարար, 1924-1929 թթ.՝ ֆինանսների նախարար, 1939-1940 թթ.՝ ռազմածովային նախարար, 1940-1945 թթ.՝ վարչապետ և պաշտպանության նախարար, 1951-1955 թթ.՝ վարչապետ և պաշտպանության նախարար:
48 Gilbert M. Winston S. Churchill. Vol. 3: 1914-1916. London, 1971, pp. 188-189.
49 FO 371/1000, No. 158.
50 Heller J. Op.cit., p. 39.

448

սուննիներից և չեն ցանկանում համագործակցել օսմանների հետ, արաբները հարգանք չեն տածում թուրքերի հանդեպ, համարելով, որ խալիֆայությունը պետք է գտնվի իրենց մոտ, իսկ Հնդկաստանի սուննիներն անվանում են երիտթուրքերին «սրբապիղծ հեղափոխականներ»:51 Իսկ դեսպանության գլխավոր թարգման Ջերալդ Ֆիցմորիսն52 այն կարծիքին էր, որ Մակեդոնիայում, Ալբանիայում, Յեմենում և Արաբիայում տիրող ընդհանուր դժգոհությունը երիտթուրքական իշխանություններից բերելու է Օսմանյան կայսրության փլուզմանը: Նա իր ափսոսանքն էր հայտնում, որ երիտթուրքերը չեն

հասկանում «բարոյական ուժի» արժեքը ներքին քաղաքականության մեջ և նախընտրում են «բռնի միջոցները», որոնք և տանելու են նրանց դեպի կործանում:53

Առաջին համաշխարհային պատերազմը նախորդող տարիների Մեծ Բրիտանիայի կառավարության քաղաքականությունն Օսմանյան կայսրության հանդեպ մեծապես պայմանավորված էր իր տնտեսական շահերով և հետաքրքրություններով: Բրիտանական դիվանագիտությունն այդ տարիներին անզիջում պայքար էր մղում Բաղդադի երկաթգծի, Մոսուլի և Բաղդադի նավթային կոնցեսիաների ձեռքբերման, Միջագետքի առևտրի և ռոգման համակարգը բարելավելու իրավունքներն ապահովելու ուղղությամբ: Սակայն երիտթուրքական և գերմանական կառավարությունները հզոր պատնեշներ էին ստեղծում Միջագետքում և Պարսից ծոցում բրիտանական գերակայության ու հեղինակության վերահաստատմանն ուղղված ձգտումների առջև: Երիտթուրքերը մտահոգված էին, որ բրիտանական կառավարության հետաքրքրությունը երկաթգծի կառուցման հարցում մեծապես պայմանավորված է Օսմանյան կայսրության հետագա մասնատման նպատակով, իսկ Գերմանիան չէր կարող հանդուրժել Միջագետքի տարածքով դեպի Պարսից ծոց բրիտանական անկախ երկաթգծի շինարարությունը:

_____
51 FO 371/1017, No. 93.
52 Ֆիցմորիս (Fitzmaurice) Ջերալդ (1865-1939) - բրիտանացի դիվանագետ: 1891-1892 թթ.՝ փոխհյուպատոս Վանում, 1892-1893 թթ.՝ Էրզրումում, 1893 թ.՝ Տրապիզոնում, 1894-1895 թթ.՝ դեսպանության երրորդ թարգման, 1895-1896 թթ.՝ փոխհյուպատոս Զմյուռնիայում, 1896 թ.՝ Ադանայում, 1900-1901 թթ.՝ հյուպատոս Սալոնիկում, 1902 թ.՝ Դարդանելում, 1906 թ.՝ դեսպանության երկրորդ թարգման, 1907-1914 թթ.՝ դեսպանության գլխավոր թարգման:
53 Heller J. Op.cit., p. 40.

449

1910 թ. գարնանը, երբ կառավարության գլուխ անցած Հաքքի փաշան ընդունեց էլ ավելի անհանդուրժողական կեցվածք բրիտանական շահերի հանդեպ, Գրեյը պատրաստակամություն հայտնեց պարտավորեցնող հավաստիացումներ ներկայացնել երիտթուրքերին այն մասին, որ բրիտանական կառավարությունը որևէ քաղաքական նպատակ չի հետապնդում Միջագետքում: Ավելին, Լոութերը հրահանգ ստացավ Ֆորին Օֆիսից առաջարկել Դռանը, որպեսզի երկաթգծի Տիգրիսի հատվածը պայմանականորեն կառուցվի թուրքական ընկերության կողմից:54 Մարտին Թուրքիայի արտգործնախարար Ռիֆաատ փաշան ներկայացնում է բրիտանական կառավարությանը Բաղդադ-Ծոց երկաթգծին վերաբերող առաջարկ, համաձայն որի Մեծ Բրիտանիայի մասնաբաժինը կազմում էր ընդամենը 20%, ընդ որում Քուվեյթի վերջնակայարանը նախատեսվում էր թողնել Դռան հսկողության ներքո:55 Սակայն հետագա բանակցություններն այդպես էլ արդյունք չտվեցին:

Մայիսին Մեծ Բրիտանիայի Կայսերական պաշտպանության կոմիտեն մանրամասնորեն քննարկեց անգլո-թուրքական հարաբերություններում ստեղծված իրավիճակը: Գլխավոր սպայակույտի հրամանատար, գեներալ Նիկոլսոնը զգուշացնում էր, որ քանի որ օսմանյան բանակը իր թվով շատ մեծ է և արագորեն բարելավվում է, Մեծ Բրիտանիայի ծովային կամ ցամաքային գործողությունները Օսմանյան կայսրությունում կարող են կրել միմիայն ժամանակավոր բնույթ: Ըստ իրեն, պատերազմի դեպքում Դուռը կարող է նաև

դժվարություններ ստեղծել Մեծ Բրիտանիայի համար Եգիպտոսում: Կոմիտեի անդամ Կիտչենների կարծիքով, եթե Մեծ Բրիտանիան թույլ տա երիտթուրքերին իրենց հսկողությունը հաստատել Քուվեյթում, ապա այդ հանգամանքը կարող է լուրջ վտանգ ներկայացնել բրիտանական շահերին Հնդկաստանում: Իր հերթին Հնդկաստանում փոխարքա նշանակված Հարդինգը հաղորդում էր, որ տեղի մահմեդականներից որևէ վտանգ չի սպառնում, քանի որ երիտթուրքերի կողմից հռչակած պանիսլամիստական քաղաքականությունը ոչ այլ ինչ է, քան «սոփեստություն»: Ընդունելով բավականին ռազմատենչ դիրք, Գրեյն առաջարկում էր ռազմական գործողություններ սկսել Յեմենում: Ի վերջո կոմիտեն եկավ այն եզրահանգման, որ ռազմական գործողությունների միջոցով

54 Նույն տեղում, էջ 47:
55 Նույն տեղում, էջ 50:



հարկադրել Դոանը լինելու է անհնար:56 Հուլիսին կոմիտեն որոշում ընդունեց ներկայացնել երիտթուրքական կառավարությանը հետևյալ առաջարկները. 1/ ընտրել Բասրան որպես Բաղդադի երկաթգծի վերջնակայարան. 2/ ընդունել օսմանյան ավատիշխանությունը Քուվեյթի նկատմամբ և ճանաչել շեյխին որպես օսմանյան կայմակամ. 3/ պահանջել 20% մասնաբաժին Բաղդադի երկաթգծի շինարարությունից ինչպես Մեծ Բրիտանիայի, այնպես էլ Ռուսաստանի և Ֆրանսիայի համար: Մնացած 40%-ը պետք է բաժին հասներ Գերմանիային և Ավստրո-Հունգարիային:57

1912 թ. ապրիլին Օսմանյան կայսրության կառավարությունը կրկին մերժեց բրիտանական առաջարկը, պահանջելով ընդհանրապես հրաժարվել Ռուսաստանի մասնաբաժնից և ընդունել քառապատիկ բաժանման սկզբունքը: Ի պատասխան, փաստորեն հրաժարվելով ռուսական մասնաբաժնի համար հետագա պայքարից, հուլիսին բրիտանական կառավարությունը ներկայացնում է նոր պահանջներ. 1/ մասնաբաժնի քառակողմ բաժանման սկզբունքը պետք է տարածվի նաև կայսրության ասիական շրջաններում կառուցվելիք բոլոր երկաթգծերի վրա. 2/ երկու բրիտանացի ընդգրկել Բաղդադ-Բասրա երկաթուղային ընկերության խորհրդի կազմում. 3/ երաշխավորել, որ առանց բրիտանական կառավարության համաձայնության երկաթգիծը Բասրայից հետո նոր ճյուղավորում չի ստանալու. 4/ Բաղդադի և Բասրայի միջև աշխատելու է ևս երեք բրիտանական շոքեքարշ. 5/ իրավունք վերապահել բրիտանական կառավարությանը հսկողություն սահմանել և կարգ ու կանոն ապահովել Պարսից ծոցի ջրերում:58

Բրիտանական կառավարությունը հույս ուներ, որ Կոստանդնուպոլսում տեղի ունեցած փոփոխությունները59 ցանկալի ազդեցություն կարող են գործել երկաթուղու խնդրի լուծման

56 FO 371/1245/18946.
57 FO371/1234/29868.
58 FO 371/1484/16000.
59 1912 թ. հուլիսին, օգտագործելով երիտթուրքերի նկատմամբ երկրում ստեղծված դժգոհությունը, 1911 թ. նոյեմբերին ձևավորված «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունը և նրա կողմնակիցները կարողացան ստիպել կառավարությանը տալ

հրաժարական, իսկ այնուհետև ցրեցին նաև երիտթուրքերի ազդեցության տակ գտնվող խորհրդարանը:

451

վրա: Սակայն հուլիսին, հասկանալով, որ որևէ հաջողության հասնել չի կարողանում երկաթգծի հարցում, բրիտանական կառավարությունը փաստորեն հրաժարվեց այդ ծրագրից, նպատակադրվելով ձեռքբերել Մոսուլի և Բաղդադի նավթային կոնցեսիաները: Ֆորին Օֆիսի մասնագետները հաշվարկել էին, որ ներկա պայմաններում նավթի խնդիրը դառնում է շատ ավելի կարևոր գործոն, քան Բաղդադի երկաթուղու հարցը: Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի միջև բանակցություններն ավարտվեցին 1914 թ. մարտին համաձայնագրի ստորագրումով, համաձայն որի նավթային կոնցեսիաների 75 %-ը հասավ բրիտանական «D`Arcy» և «Anglo-Persian Petroleum» ընկերություններին, իսկ 25 %-ը՝ «Deutsche Bank»-ին:60

Բրիտանական դիվանագիտությունը սպասողական և չեզոք դիրք գրավեց Տրիպոլիի համար Իտալիայի և Օսմանյան կայսրության միջև ծագած պատերազմի ընթացքում (1911 թ. սեպտեմբեր – 1912 թ. հոկտեմբեր): Չնայած օսմանյան կառավարության կողմից Մեծ Բրիտանիային ներկայացված օգնություն դիմումներին, Գրեյը նախընտրեց, որպեսզի ոչ Մեծ Բրիտանիան, ոչ էլ Ֆրանսիան հանդես չգան Իտալիայի դեմ՝ վերջինիս Անտանտայի կողմը գրավելու, Օսմանյան կայսրությունը թուլացնելու և Եռյակ Դաշինքի շարքերում խառնաշփոթ ստեղծելու նպատակով: Բարեկամանալու համար բրիտանական կառավարությունը երեք նախապայման էր ներկայացնում երիտթուրքերին. 1/ Իտալիայի հետ պատերազմի անմիջապես դադարեցում. 2/ փոխել գերմանական բարեկամությունը բրիտանականի հետ. 3/ էական բարելավումներ իրականացրել երկրի ներքին կառավարման մեջ: Ավելին, 1911 թ. հոկտեմբերին Ֆորին Օֆիսը փորձում էր նույնիսկ համոզել Դռանը, որ դիմադրությունն անիմաստ է, քանի որ Տրիպոլին արդեն կարելի է կորսված համարել: Սակայն պատերազմի հետագա ընթացքը՝ Դարդանելի ռմբակոցումը և Ռոդոսի ու Դոդեկանեսյան 12 կղզիների գրավումն Իտալիայի կողմից, սկսեց անհանգստացնել բրիտանական դիվանագիտությանը: Եռյակ Դաշինքի տերությունների հետ հնարավոր պատերազմի դեպքում իտալական ռազմածովային բազաներն Էգեյանում և արևելյան Միջերկրականում կարող էին մեծ վտանգ ներկայացնել ինչպես Եգիպտոսի, այնպես էլ Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան և

_____
60 Heller J. Op.cit., pp. 90-92.

սևծովյան առևտրի համար:61 Թուրք-իտալական պատերազմն ավարտվեց 1912 թ. հոկտեմբերի 18-ի Լոզանի պայմանագրի ստորագրությամբ, համաձայն որի Թուրքիան ճանաչեց Իտալիայի իրավունքները Տրիպոլիի նկատմամբ:

Նույն միջոցին Բալկանների վրա կրկին սկսվեցին կուտակվել ամպեր: 1912 թ. մարտին Սերբիան և Բուլղարիան ստորագրեցին դաշինքի և բարեկամության գաղտնի պայմանագիր: Սկզբնական շրջանում Ֆորին Օֆիսն ուշադրություն չդարձրեց ձևավորվող դաշինքի մասին ստացվող տեղեկություններին, սխալ ենթադրելով, որ այն ուղղված է Ավստրո-Հունգարիայի դեմ: Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ դաշինքն ունի ընդգծված հակաթուրքական բնույթ և գաղտնի կերպով պաշտպանվում է Ռուսաստանի

կառավարության կողմից: Բրիտանական դիվանագիտությունը կրկին հայտնվեց անհարմար իրավիճակում: Մի կողմից նա չէր կարող փչացնել Ռուսաստանի հետ հաստատված բարեկամությունը, սակայն մյուս կողմից գիտակցում էր, որ նման հակաթուրքական դաշինքի պաշտպանությունը կարող է ստեղծել պանիսլամիստական շարժման լուրջ վտանգ:62

Իրավիճակը Մակեդոնիայում էլ ավելի վատթարացավ օգոստոսին, երբ մակեդոնական հեղափոխականների կողմից Կոչանայում պայթեցված ռումբին ի պատասխան տեղական թուրք իշխանությունները կազմակերպեցին 700 քրիստոնյայի կոտորած: Փորձելով կանխել բալկանյան պետությունների հարձակումը, որոնք ինքնավարություն էին պահանջում Մակեդոնիայի և Թրակիայի համար, բրիտանական դիվանագիտությունը համոզում էր Դռանը շուտափույթ կերպով իրագործել քրիստոնյաների իրավունքներն ապահովոց բարենորոգումներ և պատժել Կոչանայի ջարդի մեղավորներին:63 Սակայն դա նրան այդպես էլ չհաջողվեց, հոկտեմբերին Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ հայտարարեցին Օսմանյան կայսրությանը:

Սկզբնական փուլում Ֆորին Օֆիսը համոզված էր, որ կողմերը հաջողության չեն հասնելու պատերազմի դաշտում, սակայն դաշնակիցների առաջին իսկ հաղթանակներն

_____
61 FO 371/1535/2334, No. 425; FO 371/1491, No. 133; Heller J. Op. cit., pp.53-56, 64; Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А. Очерки истории Турции. М., 1983, с. 55.
62 FO 371/1492,No. 129.
63 Heller J. Op.cit., pp. 68-69.

օսմանյան բանակի նկատմամբ փոխեցին բրիտանական դիվանագիտության տեսակետը: Գրեթե ամբողջությամբ համաձայնելով Ռուսաստանի բալկանյան քաղաքականության հետ, այն պատրաստ էր այսուհետ պաշտպանելու բալկանյան պետությունների շահերը, համոզվելով, որ թուրքերը վերջնականապես կորցնում են Օսմանյան կայսրության եվրոպական մասը: Երկու տերությունների դիրքորոշումների մեջ գոյություն ունեցող միակ չնչին տարբերությունը դա Կոստանդնուպոլսի ապագայի հարցն էր: Եթե Ռուսաստանն առաջարկում էր միջազգային հսկողություն սահմանել քաղաքի և նեղուցների նկատմամբ, ապա բրիտանական կառավարությունը՝ ապահովել նրա չեզոքությունն ու վերածել այն ազատ նավահանգստի:64 Անգլո-ռուսական և անգլո-ֆրանսիական բարեկամությունը տվյալ պահին Ֆորին Օֆիսը համարում էր շատ ավելի կարևոր բրիտանական շահերի համար, քան Կոստանդնուպոլսի հնարավոր անկումն ու Բրիտանական կայսրության մահմեդական հպատակների հակազդեցությունն այդ կապակցությամբ:

Զգալով մոտալուտ պարտության և նրա հնարավոր հետևանքների վտանգը, Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնակատար Գաբրիել էֆենդին, իսկ այնուհետև մեծ վեզիր Քյամիլ փաշան Լոութերի միջոցով առաջարկեցին բրիտանական կառավարությանը նախաձեռնություն հանդես բերել տերությունների միջնորդությունն ապահովելու հարցում: Ռազմական գործողություններն անմիջապես դադարեցնելու մասին բրիտանական դիվանագետների խորհուրդների արդյունքում դեկտեմբերի 3-ին օսմանյան կառավարությունը ստորագրեց զինադադար: Գրեյն այն կարծիքին էր, որ եթե Դուռն իրապես ցանկանում է խուսափել հետագա պարտություններից և բարդություններից, այն

պետք է ամբողջությամբ եվրոպական տերություններին թողնի հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը:65 Մեծ Բրիտանիայի դեսպանն իր հերթին առաջարկում էր Դոանը Լոնդոնում կայանալիք բանակցությունների ընթացքում հանդես բերել «խոհեմություն և չափավորություն»: Հակառակ պարագայում, բանակցությունների հնարավոր փակուղի մտնելու դեպքում, բրիտանական կառավարությունը մտադիր էր նույնիսկ կիրառել ռազմական միջամտություն:66

64 Նույն տեղում, էջ 74:
65 FO 371/1502, No. 524.
66 Heller J. Op.cit., pp. 75-76.

Լոնդոնի բանակցություններն ընթանում էին բավականին ծանր Թուրքիայի համար, քանի որ բրիտանական կառավարությունն ամբողջությամբ պաշտպանում էր դաշնակիցների շահերը, պահանջելով Ադրիանուպոլիսի զիջումը Բուլղարիային, Ալբանիայի ինքնավարությունն ու Էգեյան ծովի կղզիների միավորումը Հունաստանի հետ: Այդ օրերին Ֆորին Օֆիսի Մերձավոր Արևելքի հարցերով փորձագետ Ալվին Պարկերը կանխատեսում էր, որ բանակցությունների ձախողմանն ու պատերազմական գործողությունների վերսկսմանն անխուսափելիորեն հետևելու է Օսմանյան կայսրության ընդհանուր անկումը, քանի որ ասիական շրջաններում սպասվող հնարավոր պայթյունի հետևանքով Ռուսաստանը գրավելու է Հայաստանը, Ֆրանսիան՝ Սիրիան, իսկ Գերմանիան՝ Անատոլիան:67 Բրիտանական դիվանագետներն այն կարծիքին էին, որ ներկա պայմաններում Օսմանյան կայսրությունը պետք է համախմբի իր ուժերը՝ ասիական տերություն դառնալու համար: Ֆիցմորիսը համոզված էր, որ Դոանը վտանգ է սպառնում «մեծ Արաբական և Հայկական հարցերի» կողմից:68 Իր հերթին Լոութերը նախազգուշացնում էր Ֆորին Օֆիսին, որ բալկանյան պետությունների շահերի պաշտպանությունը Մեծ Բրիտանիայի կողմից կարող է վերականգնել երիտթուրքերի իշխանությունը, ինչպես նաև հանձնել Օսմանյան կայսրությունը Եռյակ Դաշինքի տերություններին:69

1913 թ. հունվարի 22-ին Քյամիլ փաշայի կառավարությունը բրիտանական դիվանագիտության ճնշման տակ համաձայնեց զիջել Ադրիանուպոլիսը Բուլղարիային: Անմիջապես հաջորդ օրը երիտթուրքերը վերականգնեցին իրենց իշխանությունը և վերսկսեցին ռազմական գործողությունները Բուլղարիայի դեմ, սակայն այդպես էլ որևէ հաջողության չհասան: Մայիսի վերջին ստորագրված Լոնդոնի խաղաղ պայմանագրի համաձայն, Օսմանյան կայսրության գրեթե բոլոր եվրոպական տարածքները բաժանվեցին բալկանյան պետությունների միջև, իսկ Ալբանիան ձեռքբերեց ինքնավարություն՝ միջազգային հսկողության ներքո:

1913 թ. հունիսին Ֆորին Օֆիսը քննարկում էր Օսմանյան կայսրության հետ պաշտպանական դաշինքի ստեղծման գաղափարը, որը սակայն մերժվեց առաջատար

67 FO 371/1507, No. 177.
68 Heller J. Op.cit., p. 77.
69 FO 371/1798, No. 120; 371/1757, No. 521.

դիվանագետների կողմից: Գրեյը հանդես էր գալիս եվրոպական տերությունների չեզոք «համերգային քաղաքականության» օգտին, որի խախտումը կարող էր հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Իսկ Լյուիս Մալլետը,70 որը հոկտեմբերին նշանակվեց դեսպան Օսմանյան կայսրությունում, այն կարծիքին էր, որ պաշտպանական դաշինքը Թուրքիայի հետ կմիավորի ողջ Եվրոպան Մեծ Բրիտանիայի դեմ: Նա առաջարկում էր որդեգրել քաղաքականություն, համաձայն որի բոլոր տերությունները պետք է հանդես բերեն չեզոք ուղեգիծ, պաշտպանեն Օսմանյան կայրության ներկայիս տարածքների անկախությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև հսկողություն սահմանեն երկրի ֆինանսների և բարենորոգումների իրագործման նկատմամբ:71

Լոնդոնի պայմանագրի ստորագրումով սակայն Բալկաններում խաղաղություն այդպես էլ չհաստատվեց: Սկսվեց երկրորդ բալկանյան պատերազմը, այս անգամ Բուլղարիայի դեմ հանդես եկան նրա երեկվա դաշնակիցները՝ Սերբիան, Հունաստանը և Չեռնոգորիան: Օգտվելով պատեհ առիթից, Թուրքիան կրկին գրավեց Ադրիանուպոլիսը: Մեծ Բրիտանիայի կառավարությունն, ի դեմս «թուրքատյաց» համարվող վարչապետ Հերբերտ Ասկվիթի,72 կտրականապես մերժեց ռուսական կառավարության առաջարկը Կովկասում ճակատ բացելու վերաբերյալ, քանի որ համոզված էր, որ նման զարգացումը վերջնականապես կարող է փլուզել Օսմանյան կայսրությունը: Ֆորին Օֆիսը սահմանափակվեց միայն Դոնան ուղղված նախազգուշացումով այն մասին, որ օսմանյան բանակի առաջխաղացումը Էնոս-Միդիա գծից կարող է ստեղծել եվրոպական միջամտության վտանգ և բարձրացնել Կոստանդնուպոլսի հարցը: Նույնիսկ երբ օսմանյան բանակը գրավեց Մարիցան, բրիտանական կառավարությունը մերժեց Ռուսաստանի առաջարկը Անտանտայի հարաբերությունները Դոնան հետ խզելու վերաբերյալ: Ֆորին Օֆիսը որոշում էր

---

70 Մալլետ (Mallet) Լյուիս (1864-1936) - բրիտանացի դիվանագետ: 1907-1913 թթ.՝ փոխարտգործնախարարի օգնական, Արևելյան դեպարտամենտի տնօրեն, 1913 թ. հոկըտեմբեր – 1914 թ. նոյեմբեր՝ դեսպան Թուրքիայում:
71 Heller J. Op.cit., p. 80.
72 Ասկվիթ (Asquith) Հերբերտ (1852-1928) - բրիտանացի քաղաքական գործիչ, լիբերալ կուսակցության ղեկավար: 1892-1895 թթ.՝ ներքին գործերի նախարար, 1905-1908 թթ.՝ գլխավոր գանձապահ, 1908-1916 թթ.՝ վարչապետ:

կայացրել բողոքարկել երիտթուրքական կառավարության ռազմական գործողությունների դեմ ոչ թե միայն Անտանտի, այլ բոլոր եվրոպական տերությունների կողմից:73

Ինչպես արդեն նշվեց, 1913 թ. հոկտեմբերին Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դեսպանի պաշտոնում Լոութերին փոխարինեց Մալլետը: Ֆորին Օֆիսը մեղադրում էր Լոութերին Դոնան հետ բրիտանական կառավարության հարաբերությունների վատթարացման մեջ: Ավելին, նրա հետ միասին Լոնդոն ետ կանչվեց նաև դեսպանության ողջ անձնակազմը: Մալլետը համաձայնեց ընդունել այդ առաջարկը, քաջ գիտակցելով կառավարության կողմից իր վրա դրված թուրք-բրիտանական հարաբերությունների բարելավումն ապահովելու դժվարին խնդիրը: Այդ օրերին նա գրում էր, որ հավանաբար իրեն սպասում է նույն ճակատագիրը, որին արժանացել էին բրիտանացի բոլոր դեսպանները Ռեդկլիֆից հետո: Միաժամանակ նա համոզված էր, որ Մեծ Բրիտանիան հետևողականորեն պետք է վարի Օսմանյան կայսրության

պահպանումն ու ուժեղացումն ապահովող քաղաքականություն, քանի որ նրա փլուզումն ու դրա հետևանքով հայկական վեց վիլայեթների, Փոքր Ասիայի և Սիրիայի գրավումը համապատասխանաբար Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի կողմից վտանգելու է Բրիտանական կայսրության շահերը Հնդկաստանում:74 Մալլետի երիտթուրքամետ մոտեցումները դրսևորվեցին իր պաշտոնավարման առաջին իսկ օրերից: Նա հավատացած էր, որ ներկայիս կառավարությունը երբևիցե գոյություն ունեցող օսմանյան վարչակարգերից ամենից կարողն ու արդյունավետն է: Համոզված լինելով, որ հարաբերությունները Դռան հետ գնալով ավելի բարելավվում են, Մալլետը կտրականապես մերժում էր բոլոր հաստատումներն այն մասին, որ երիտթուրքերը թշնամական դիրք են որդեգրել Բրիտանիայի հանդեպ և ամբողջությամբ դարձել Գերմանիայի դաշնակիցները:75

Բրիտանական կառավարությունը համապատասխանաբար չարձագանքեց նույնիսկ համատեղության կարգով Թուրքիայում Գերմանիայի ռազմական միսիայի ղեկավար, գեներալ Լիման ֆոն Սանդերսի նշանակմանը Կոստանդնուպոլսում տեղակայված առաջին ռազմաբանակի հրամանատարի պաշտոնում: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ

_____
73 Heller J. Op.cit., pp. 81-82.
74 Նույն տեղում, էջ 101-102:
75 Նույն տեղում, էջ 104, 106:

Սազոնովը76 բրիտանական նավատորմի օգտագործման պատրաստակամություն պահանջեց հանդես բերել Գրեյից, սակայն վերջինս կտրականապես հրաժարվեց այդ գաղափարից, առաջարկելով ընդամենը Թուրքիայում Անտանտի դեսպանների կողմից նույնանման (նույնիսկ ոչ համատեղ) հայտագիր ներկայացնել Դռանը՝ Գերմանիային բացառիկ իրավունքներ տրամադրելու կապակցությամբ: Ֆորին Օֆիսն այն կարծիքին էր, որ բրիտանական շահերը և Օսմանյան կայսրության հանդեպ որդեգրված քաղաքականությունը պահանջում են կարելիին չափ նվազեցնել Լիման ֆոն Սանդերսի նշանակման կարևորությունը՝ խնդրի կարգավորումը թողնելով անմիջապես Ռուսաստանին և Գերմանիային:77 Ֆորին Օֆիսի ուշադրությանը չարժանացան նաև դեսպանության ռազմական կցորդի նախազգուշացումներն այն մասին, որ գերմանական ռազմական միսիայում ծառայող 47 սպաները արտակարգ կարևորություն ունեցող դիրքեր են զբաղեցրել օսմանյան բանակի կազմում ոչ միայն մայրաքաղաքում, այլև կայսրության տարբեր շրջաններում:78

Թեև Բալկանյան պատերազմի շրջանից սկսած Մեծ Բրիտանիայի կառավարությունը համակրանքով էր վերաբերվում Հունաստանի կողմից Էգեյան ծովի կղզիների գրավման փաստի առնչությամբ, առաջին համաշխարհային պատերազմի նախորյակին Մալլետն ամեն կերպ փորձում էր չեզոքացնել այդ քաղաքականությունը, համարելով, որ այն կարող է վտանգել Թուրքիայի ասիական շրջանների ամբողջականության պահպանմանը, ինչպես նաև նպաստել Եռյակ Դաշինք-Օսմանյան կայրություն հարաբերությունների բարելավմանը: Նա առաջարկում էր Ֆորին Օֆիսին աշխատանք տանել Մեծ Բրիտանիայի մամուլի հակաերիտթուրքական կեցվածքը փոխելու և բրիտանական կապիտալը դեպի Թուրքիա նպատակաուղղելու ուղղությամբ:79

76 Սազոնով Սերգեյ (1860-1927) – ռուս պետական գործիչ և դիվանագետ: 1883-1909 թթ.՝ դեսպանությունների քարտուղար և խորհրդական Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և Վատիկանում, 1909-1910 թթ.՝ փոխարտգործնախարար, 1910-1916 թթ.՝ արտգործնախարար:
77 FO 371/1847, No. 385.
78 Trumpener U. Liman von Sanders and the German-Ottoman Alliance. – Journal of Contemporary History, 1966, pp. 179-192.
79 FO 371/2114, No. 1512.

1914 թ. ընթացքում բրիտանական կառավարությունը որդեգրել էր մի քաղաքականություն, որն ուղղված էր հակաօսմանյան կամ հակաերիտթուրքական որևէ շարժման դեմ: Ֆորին Օֆիսը հայտարարում էր, որ չի աջակցելու որևէ վտանգալից քաղաքականություն, որը միայն կարող է վնաս հասցնել Բրիտանիայի տնտեսական շահերին Միջագետքում: Խոսքը հիմնականում գնում էր արաբական անջատողական շարժման մասին, որը կարող էր հիմնովին փլուզել Օսմանյան կայսրությունը: Մալլետն առաջարկում էր Ֆորին Օֆիսին հանդես բերել ավանդական բրիտանական քաղաքականություն և նույնիսկ փոքր հետաքրքրություն չցուցադրել Արաբական հարցի հանդեպ: Նույն մոտեցումը որդեգրվեց նաև այդ շրջանում շատ ավելի փոքր նշանակություն ունեցող Հրեական հարցի և սիոնիստական շարժման նկատմամբ:80

Սակայն բրիտանական կառավարությանն այդպես էլ չհաջողվեց վերականգնել երբեմնի անգլո-թուրքական բարեկամությունն ու ապահովել Թուրքիայի չեզոքությունը գալիք աշխարհամարտում: Մեծ Բրիտանիայի ընդգծված բալկանամետ և ռուսամետ քաղաքականությունը, ինչպես նաև Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ դաշինք ստեղծելու Թալաաթի և Ջեմալի անհաջող փորձերը, մեծապես նպաստեցին Էնվերի պրոգերմանական ուղեգծի ուժեղացմանն ու վերջնական հաստատմանը: Գերմանա-թուրքական բանակցությունները սկսվեցին հուլիսին և ավարտվեցին օգոստոսին մեծ վեզիր և արտգործնախարար Սաիդ Հալիմ փաշայի ու Գերմանիայի դեսպան Վանգենհայմի միջև ստորագրված ռազմական դաշինքի պայմանագրով, որին անմիջապես հետևեց գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերի մուտքը Կոստանդնուպոլիս և օսմանյան բանակի զորահավաքը:

Չնայած իր ակնհայտ դիվանագիտական պարտությանը, բրիտանական կառավարությունը շարունակեց փորձեր կատարել իրավիճակը փրկելու ուղղությամբ: Օգոստոսի 15-ի իր գաղտնի նամակում Չերչիլը փորձում էր համոզել Էնվերին հրաժարվել Գերմանիայի հետ դաշինք կնքելու գաղափարից, նկատի առնելով Անտանտի ռազմածովային գերաշռությունը և խոստանալով Թուրքիայի չեզոքության դեպքում ապահովել ու պաշտպանել նրա տարածքային ամբողջականությունը:81 Իր հերթին Մալլետը

80 Heller J. Op.cit., pp. 129-130.
81 Նույն տեղում, էջ 136:

ջանք ու եռանդ չէր խնայում համոզելու երիտթուրքերին՝ իրենց որոշումից ետ կանգնելու նպատակով, թեև Ֆորին Օֆիսն արդեն իսկ կորցրել էր իր հույսը և մտածում էր միմիայն Բրիտանիայի հպատակներին, դիվանագիտական ու հյուպատոսական անձնակազմին

երկրից անվտանգ կերպով դուրս բերելու, ինչպես նաև պատերազմի դեպքում արաբական շարժումը երիտթուրքերի և Գերմանիայի դեմ օգտագործելու մասին: Գրեյը նույնիսկ բանակցություններ էր սկսել ԱՄՆ-ի հետ, որպեսզի պատերազմի շրջանում բրիտանական շահերը Կոստանդնուպոլսում ներկայացնի ամերիկյան դեսպանությունը:82

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ բրիտանական դիվանագիտությունն այլևս ոչինչ անել չէր կարող Թուրքիայի չեզոքությունն ապահովելու հարցում: Հոկտեմբերի 3-ին երիտթուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց գերմանացիների կողմից ականապատված Դարդանելը փակելու մասին, հոկտեմբերի 25-ին Էնվերը հրաման արձակեց գերմանացի ծովակալ Սուշոնին ռուսական նավատորմի վրա հարձակում գործելու վերաբերյալ, նոյեմբերի 1-ին Մալլետը, իսկ մի քանի օր անց թուրք դեսպան Թևֆիկ փաշան համապատասխանաբար մեկնեցին Կոստանդնուպոլսից և Լոնդոնից, նոյեմբերի 5-ին Մեծ Բրիտանիան պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

## 2. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹԹ.

1910-1912 թթ. ընթացքում բրիտանական հյուպատոսները շարունակ հաղորդում էին հայկական վիլայեթներում տիրող ծանր իրավիճակի, Հայկական հարցի օրըստօրե սրման մասին: Ըստ այդ տեղեկությունների, երիտթուրքական իշխանությունները ոչ միայն չէին

82 Նույն տեղում, էջ 139-140, 149:

պատրաստվում բարենորոգումների միջոցով բարելավել իրավիճակը հայկական շրջաններում, այլև հրահրում էին ազգամիջյան թշնամություն, սատարում և քաջալերում տեղական իշխանությունների անօրինականությունները, հայերին պատկանող հողատարածքների բռնագրավումը, Բալկաններից գաղթած փախստականների բնակեցումը, քրդական ջոկատների ավերիչ հարձակումները հայկական բնակավայրերի վրա, հայ բնակչության թալանն ու կոտորածները: Սակայն Ֆորին Օֆիսը հրաժարվում էր որևէ դիվանագիտական միջամտությունից Հայկական հարցում, վախենալով արագացնել Փոքր Ասիայի բաժանման գործընթացը, որը կարող էր ավարտվել ոչ իր օգտին, և, դեռևս հույս ունենալով, որ թուրք իշխանությունները կբարելավեն իրավիճակն այդ շրջաններում:

Փորձելով կանխել հայերի հնարավոր դիմումը եվրոպական տերություններին, մասնավորապես Ռուսաստանին, Բարձր Դուռն ինքը նախաձեռնեց բարենորոգումների ծրագրի մշակումը: 1912 թ. դեկտեմբերի սկզբին ներքին գործերի նախարար Ռեշիդ փաշայի ղեկավարությամբ պատրաստված նախագիծը ներկայացվեց մեծ վեզիրի կողմից գլխավորած հատուկ հանձնաժողովի քննարկմանը: Ծրագիրը նախատեսում էր Դռան կողմից վեց տարով գլխավոր տեսուչի նշանակումո արևելյան վիլայեթների համար, որին ենթարկվելու էին վալին, ռազմական պարետը, ոստիկանությունն ու ժանդարմերիան: Համաձայն նախագծի, ստեղծվող հատուկ հանձնաժողովը կազմված էր լինելու երեք մահմեդականներից ու երեք քրիստոնյաներից և ղեկավարվելու էր թուրքական կառավարության ծառայության մեջ գտնվող, երկրի վարչական գործերին ու սովորություններին ծանոթ արտասահմանցի, որը միաժամանակ հանդիսանալու էր գլխավոր տեսուչի խորհրդականը: Հատուկ հանձնաժողովի պարտավորությունների մեջ էր մտնում կարգ ու կանոնի ապահովումը, քրդերի և հայերի միջև ծագող հողային վեճերի

լուծումը, ժանդարմերիայի բարեփոխումը, ճանապարհների շինարարության ապահովումը և այլն: Նախագիծը չէր նախատեսում գոյություն ունեցող վարչական, ֆինանսական, իրավական օրենքների փոփոխություն և կիրառվելու էր միայն Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում:83 Հայերից ստացված առաջարկությունների շնորհիվ նախագիծը ենթարկվեց որոշակի փոփոխությունների: Նոր տարբերակի համաձայն, հայկական վեց վիլայեթները բաժանվում էին երկու սեկտորների, որոնք ղեկավարվելու էին

83 АВПР, ф. Политический архив, 1912, д. 1044, л. 319.

թուրք գլխավոր տեսուչների կողմից: Հատուկ հանձնաժողովները կազմված էին լինելու երկու մահմեդականից, երկու քրիստոնյայից ու երկու արտասահմանցուց և ղեկավարվելու էին գլխավոր տեսուչների արտասահմանցի-խորհրդականների կողմից:84 Սակայն Բարձր Դուռը ձգձգեց և այդպես էլ չիրագործեց այդ ծրագիրը:

Ռուսաստանի քաղաքականության ակտիվացումը Հայկական հարցում 1912 թ. վերջին85 լրջորեն անհանգստացրեց բրիտանական դիվանագետներին: 1913 թ. հունվարի կեսերին Լոութերը գրում էր, որ հայերն այլևս չեն բավարարվելու կիսամիջոցներով և ձգտելու են խնդրի արմատական լուծմանը, պահանջելով ինքնավարություն Ռուսաստանի հովանու ներքո: Մալլետի կարծիքով, Հայկական հարցի բարձրացմանը կհաջորդի Փոքր Ասիայի բաժանումը մեծ տերությունների միջև, իսկ Նիկոլսոնը համոզված էր, որ հայկական վիլայեթների գրավումը Ռուսաստանի կողմից այլևս ժամանակի հարց է:86

Կանխատեսելով, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ Հայկական հարցի բարձրացումը միջազգային առկա պայմաններում, գերմանական դիվանագիտությունն իր հերթին որոշակի դեր խաղաց բրիտանական կառավարության կասկածանքը Ռուսաստանի «հայկական» ծրագրերի նկատմամբ գրգռելու հարցում: Գերմանիան հույս ուներ՝ Կիպրոսի կոնվենցիայի օրինակով, Մեծ Բրիտանիայի հետ համատեղ հանդես գալ Թուրքիայի ասիական շրջանների ամբողջականության երաշխավորողի դերում՝ ընդդեմ Ռուսաստանի նկրտումների:87 Միաժամանակ գերմանական դիվանագիտությունը զգալիորեն աշխուժացրեց իր աշխատանքը Բարձր Դռան հետ՝ հայկական շրջանների համար

84 ЦГИА РА, ф. 57, оп. 5, д. 55, л. 13.
85 Տես Коджоян Р. Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны. Дис., канд., ист., наук. – Ереван, 1989, 200 с.; Восточный вопрос во внешней политике россии..., с. 367-372:
86 FO 371/1773, No. 1229.
87 Истягин Л.Г. Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу, 1912-1914 гг. – В кн.: Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959, с. 27.

բարենորոգումների ծրագիր նախապատրաստելու համար: Համաձայն 1913 թ. հունվարին կրկին իշխանության անցած երիտթուրքերի ծրագրի, հայկական վիլայեթները բաժանվում էին «հյուսիսային անատոլիական» (Էրզրում, Սըվազ, Տրապիզոն) և «արևելյան անատոլիական» (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր) սեկտորների:88 Նոր նախագիծը ոչ

միայն հաշվի չէր առնում հայկական վիլայեթների յուրահատկություններն, այլև նպատակ էր հետապնդում լուծել հայերին մահմեդական բնակչության մեջ:

Զգալով, թե ինչ առավելություններ կարող են ստանալ Ռուսաստանը և Գերմանիան Հայկական հարցը բարձրացնելու դեպքում, Գրեյը նույնպես շտապեց գրավել ակտիվ դիրք, առաջարկելով իր դաշնակիցներին հետաձգել խնդրի արծարծումը և, խորհուրդ տալով Բարձր Դռանը շտապ կերպով անդրադառնալ բարենորոգումների իրականացմանը: Հունվարի 23-ին նա գրում էր Ֆրանսիայում դեսպան Ֆռենսիս Բերտիին,89 որ ներկայումս նպատակահարմար չէ բարձրացնել Հայկական հարցը. առաջին հերթին հարկավոր է ապահովել խաղաղությունը բալկանյան պետությունների և Թուրքիայի միջև, ապա նոր ստիպել Թուրքիային բարենորոգումներ իրագործել Փոքր Ասիայում:90

Գերմանիան նույնպես արտահայտեց իր անհանգստությունը Ռուսաստանի՝հայկական՝ քաղաքականության առթիվ: Հունվարի 27-ին Մեծ Բրիտանիայում Գերմանիայի դեսպանն ասում էր Գրեյին, որ իր կառավարությունը մեծ նշանակություն է տալիս Փոքր Ասիայի տարածքային ամբողջականության պահպանմանը և անհանգստացած է Ռուսաստանի մեծ հետաքրքրությամբ Հայաստանով, ինչպես նաև Կովկասում նրա զորքերի կուտակման փաստով: Գերմանիան չի կարող անտարբեր մնալ այն դեպքում, շարունակում էր դեսպանը, եթե Ռուսաստանը մտնի Հայաստան, իսկ Ֆրանսիան՝ Սիրիա:91 Միաժամանակ գերմանական դիվանագիտությունը սկսել էր եռանդուն կերպով հանդես գալ բարենորոգումների երիտթուրքական ծրագրի իրագործման օգտին: Ապրիլի 24-ին Լոութերը գրում էր Գրեյին, որ գերմանական գործակալները աշխատանք են տանում հայերի շրջանում

_____
88 Djemal Pasha. Memories of a Turkish Statesman, 1913-1919. London, 1922, p. 226.
89 Բերտի (Bertie) Ֆռենսիս (1844-1919) – բրիտանացի դիվանագետ: 1903-1904 թթ.՝ դեսպան Իտալիայում, 1905-1918 թթ.՝ Ֆրանսիայում:
90 British Documents on the Origins of the War. 1898-1914. Vol. X, London, 1936, p. 424.
91 Նույն տեղում:

այդ ուղղությամբ, փորձելով համոզել, որ գոյություն ունեցող ծրագիրն ամբողջովին համապատասխանում է Բեռլինի պայմանագրի և Կիպրոսի կոնվենցիայի դրույթներին: Դեսպանը բնութագրում էր գերմանական դիվանագիտության գործունեությունը որպես Ռուսաստանի հեղինակության և նրա «հայկական» ծրագրերի դեմ ուղղված շարժում, որը սակայն մեծ կասկածանքով է ընդունվում հայ բնակչության կողմից:92

1913 թ. ապրիլի սկզբին, երբ Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանությունը ստանում է պատրիարքարանի և Դաշնակցության բարենորոգումների ծրագրերը և սկսում աշխատել իր նախագծի վրա, Ֆորին Օֆիսը հրահանգում է իր դեսպանությանը ձեռնարկել բոլոր միջոցները՝ Դռան կողմից բարենորոգումներն իրագործելու նպատակով, համարելով խնդիրն «անհետաձգելի»: Հավաստիացնելով մեծ վեղիր Շևքեթ փաշային, որ Բրիտանիան ոչ մի շահ չի հետապնդում բարենորոգումների հարցում և բացառում է ուժային որևէ միջամտություն այդ կապակցությամբ, Ֆիցմորիսը խորհուրդ էր տալիս շտապ կերպով միջոցներ ձեռնարկել բարենորոգումների իրականացման ուղղությամբ, ինչպես նաև հրահանգներ իջեցնել բոլոր վալիներին՝ հայ բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով: Այդ օրերին Մալլետը գրում էր. «Մենք ցանկանում ենք,

որպեսզի Թուրքիան մնա մեծ տերություն Ասիայում և մենք ուզում ենք բարենորոգումներ հայերի համար: Եթե բարենորոգումները չիրագործվեն, ապա բացարձակ պարզ է դառնում, որ թուրքական հզորությունը նվազելու է և բոլոր այդ նահանգներում տեղի կունենան կոտորածներ և տարբեր տեսակի անկարգություններ...: Մենք միակն ենք, ով կարող ենք պարտավորություն վերցնել և հաջողությամբ կատարել այն, ինչպես նաև միակ մեծ տերությունը, որին մյուս մեծ տերությունները թույլ կտան դա անել, քանի որ հայտնի է, որ այդ նահանգներում մենք քաղաքական և տարածքային նկրտում չունենք: Նման առաջարկությունը միակ հնարավորությունն է տալիս մեզ ինչ-որ մի բան հայերի համար անելու և եթե մենք այն բաց թողնենք և թույլ տանք մյուսներին գրավել մեր տեղը, ապա մեր ազդեցությունն ու հեղինակությունը կնվազի և մեզ այստեղ (Անգլիայում - Ա.Կ.) շատ կքննադատեն»:93

Մայիսի սկզբին Բարձր Դուռը, նպատակ հետապնդելով խուսափել Հայկական հարցի վերաբացումից և սրել հակասությունները եվրոպական տերությունների միջև, Լոնդոնում իր

---

92 Նույն տեղում, էջ 426:
93 Heller J. Op.cit., pp. 84-85.

դեսպանի միջոցով առաջարկում էր բրիտանական կառավարությանն իր գործուն մասնակցությունը բերել բարենորոգումների իր ծրագրի իրականացման գործում: Մասնավորապես, խնդրվում էր Բարձր Դռանը տրամադրել տեսուչներ ժանդարմերիայի, գյուղատնտեսության և հանրային աշխատանքների բնագավառների, յոթ ժանդարմերիայի սպա յուրաքանչյուր վիլայեթի համար, ինչպես նաև գլխավոր տեսուչի խորհրդականի թեկնածու:94 Գրեյն ու Նիկոլսոնն առանձնապես ոգևորված չէին Բարձր Դռան առաջարկով, քանի որ այն կարող էր առաջացնել մյուս տերությունների, առաջին հերթին Ռուսաստանի, դժգոհությունը: Մյուս կողմից, Մալլետը համարում էր, որ Մեծ Բրիտանիայի կողմից առաջարկի մերժման դեպքում Բարձր Դուռն ամբողջությամբ կարող է շրջվել դեպի Գերմանիան:95 Մայիսի 15-ին, ընդունելով թուրք դեսպանին, Գրեյն ու Նիկոլսոնը պատասխանում են, որ, ցանկանալով օգտակար լինել Բարձր Դռանը բարենորոգումների իրագործման և, մասնավորապես, բրիտանացի պաշտոնյաների տրամադրման հարցում, բրիտանական կառավարությունը միաժամանակ առաջարկում է, զգուշանալով տերությունների միջև հակասությունների սրումից, տեղեկացնել և ընդգրկել գործընթացում նաև Ռուսաստանը, Ֆրանսիան և Գերմանիան:96

Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը բավականին կարծր դիրքորոշում զբաղեցրեց այդ հարցում: Մայիսի 21-ին Ռուսաստանում բրիտանական դեսպանության խորհրդական Օ՝Բիրնը, ինչպես նաև ռուս դեսպանը Մեծ Բրիտանիայում հայտնում էին Գրեյին, որ ռուսական կառավարությունը համաձայն չէ բաժանել իրարից ժանդարմերիայի և ընդհանուր բարենորոգումների խնդիրները, առաջարկելով հետաձգել առաջինի քննարկումը մինչև Անտանտի անդամ-տերությունների դեսպանները Կոստանդնուպոլսում համաձայնության չգան Փոքր Ասիայում իրագործվելիք բարենորոգումների ծրագրի վերաբերյալ, որից հետո միայն խորհրդատվություններ սկսել Եոյակ Դաշինքի տերությունների հետ: Համաձայնելով Սազոնովի գաղափարի հետ, Գրեյը միաժամանակ չէր ցանկանում մերժել Թուրքիայի առաջարկը, ինչը կարող էր

հիասթափեցնել թուրքերին և առավելություններ ապահովել գերմանական դիվանագիտությանը: Նա այն կարծիքին էր, որ

94 British Documents..., pp. 430.
95 Heller J. Op.cit., p. 85.
96 British Documents..., pp. 431-432.

ժանդարմերիայի աշխատանքի բարելավման խնդիրը կարող է օգտակար լինել անկախ բարենորոգումների որևէ ծրագրից:97 Մայիսի 23-ին Գրեյը հանձնարարում էր Օ՝Բիրնին հաղորդել Սազոնովին, որ բրիտանական կառավարությունը որոշել է իր համաձայնությունը տալ թուրքական առաջարկին, սահմանափակվելով միմիայն հայկական վիլայեթների ժանդարմերիայի համար բրիտանացի սպաների ընտրությամբ, և միաժամանակ համագործակցել Ռուսաստանի հետ բարենորոգումների ընդհանուր ծրագրի մշակման հարցում:98 Անմիջապես հաջորդ օրը Գրեյը հայտնում է Ֆորին Օֆիսի որոշման մասին Թուրքիայի դեսպան Թևֆիկ փաշային, խոստանալով թեկնածություններ տրամադրել Բարձր Դռանը ներքին գործերի նախարարության կազմում նշանակվելիք գլխավոր տեսուչի, ինչպես նաև ժանդարմերիայի տեսուչների և սպաների համար: Ըստ Գրեյի, գլխավոր տեսուչը պետք է ապահովի հայկական վիլայեթներում տեղակայված տեսուչների կապը կենտրոնական իշխանությունների հետ:99

Մայիսի 26-ին Օ՝Բիրնը ընթերցում է Սազոնովին Գրեյի հեռագիրը, ուր վերջինս ներկայացնում է ժանդարմերիայի հարցի կապակցությամբ ընդունված որոշումը: Ռուս նախարարը պատասխանում է, որ դժբախտաբար երկու տերությունների դիրքորոշումն այդ հարցում կտրուկ կերպով տարբերվում է, պնդելով, առաջին հերթին, Կոստանդնուպոլսում Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանների կողմից բարենորոգումների ծրագրի քննարկման վրա: Նա խնդրում էր բրիտանացի դիվանագետին փոխանցել Գրեյին, որ վերջերս հայերի ներկայացուցիչները դիմել էին ռուսական կառավարությանը՝ Թուրքահայաստանը Ռուսաստանին կցելու խնդրանքով: Նրանք գիտակցում են, շարունակում էր նախարարը, որ ինքնավար պետություն կազմել չեն կարող, քանի որ հայերը կազմում են այդ շրջաններում ողջ բնակչության 30 %-ը: Սազոնովը կտրականապես մերժել էր ընդունել հայերի առաջարկը, խոստանալով ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Հայաստանում բարենորոգումներ իրագործելու ուղղությամբ: Ըստ նախարարի, Ռուսաստանը հատուկ պարտավորություններ ունի հայերի առջև, ուստի նա չի կարող ՝երկրորդ ջութակի՝ դեր խաղալ այդ հարցում: Նա նշում էր, որ հայերն այլևս չեն կարող

97 Նույն տեղում, էջ 433-434:
98 Նույն տեղում, էջ 436:
99 Նույն տեղում, էջ 437-438:

ապրել այդ պայմաններում, իսկ Ռուսաստանն այս անգամ վստահորեն չի կրկնելու անցյալում գործած իր սխալը, երբ անտարբեր դիրք էր գրավել 1894-1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ: Սազոնովն առաջարկում էր, որպեսզի բարենորոգումների հարցը քննարկելու ընթացքում Անտանտի դեսպաններն անմիջական կապ պահեին

հայերի ներկայացուցիչների հետ, որոնք քաջատեղյակ են Թուրքահայաստանում տիրող իրավիճակի մասին:100

Հաջորդ օրը Գրեյն իր համաձայնությունն էր հայտնում բարենորոգումների ծրագիրը քննարկելու կապակցությամբ, նախաձեռնությունն ամբողջովին տրամադրելով ռուսական կառավարությանը: Իր համոզմամբ, ծրագիրը նախապատրաստելիս դեսպանները որպես հիմք պետք է ընդունեն 1895 թ. նախագիծը, որի վերամշակված տարբերակը հետագայում հարկավոր է ներկայացնել մյուս տերությունների քննարկմանը:101

Նույն օրերին Մեծ Բրիտանիայում Ֆրանսիայի դեսպանն ասում էր Նիկոլսոնին, որ իր կառավարությունը գտնում է, որ ժամանակը դեռևս չի հասունացել բարենորոգումների իրագործման ուղղությամբ կոնկրետ միջոցառումներ ձեռնարկելու համար: Իր կարծիքով, հարցը կարելի է բարձրացնել միմիայն Փարիզի համաժողովի ավարտից հետո, ուր քննարկվելու են Օսմանյան կայսրության ֆինանսական իրավիճակին վերաբերող խնդիրներ: Նա նույնպես գտնում էր, որ Ասիական Թուրքիայի բարենորոգումների հարցը վերաբերում է ոչ միայն Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային և Ռուսաստանին, այլև բոլոր եվրոպական տերություններին:102

Հունիսի 2-ին Մեծ Բրիտանիայում Գերմանիայի դեսպանը հայտնում էր Գրեյին իր կառավարության մտահոգությունն Ասիական Թուրքիայի հարցի բարձրացման կապակցությամբ: Ըստ դեսպանի, Գերմանիան պաշտպանում է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, սակայն եթե մյուս տերությունները հետապնդում են որոշակի նկրտումներ, գերմանական կառավարությունը նույնպես կներկայացնի իր պահանջները: Գրեյը հավաստիացնում է դեսպանին, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև որևէ համաձայնություն գոյություն չունի Ասիական Թուրքիայի բաժանման

---

100 Նույն տեղում, էջ 438, 441-442:
101 Նույն տեղում, էջ 442:
102 Նույն տեղում, էջ 443:

վերաբերյալ, խոսքը միայն գնում է 1895 թ. օրինակով բոլոր տերությունների կողմից բարենորոգումների ծրագիր մշակելու և իրագործելու մասին: Դեսպանի այն հայտարարությանը, թե այն ժամանակ նախագիծը վերաբերում էր միայն հայերին, Գրեյը պատասխանում է, որ այս անգամ խոսքը գնալու է Փոքր Ասիայի ողջ տարածքի մասին, թեև որոշ դրույթներ հայկական վիլայեթների համար կարելի է պահպանել:103

Հունիսի 4-ին Օ՝Բիրնը Գրեյին հաղորդում էր Ռուսաստանի արտգործնախարության կարծիքն այն մասին, որ 1895 թ. բարենորոգումների ծրագիրը կարիք ունի որոշակի վերափոխությունների, որոնց շուրջ երեք տերություններն անպայմանորեն պետք է հասնեն անհրաժեշտ համաձայնության: Անմիջապես հաջորդ օրը Գրեյը հանձնարարում էր Օ՝Բիրնին փոխանցել Ռուսաստանի արտգործնաժարարությանը, որ Մեծ Բրիտանիայի դեսպանը Կոստանդնուպոլսում պատրաստ է այդ հարցում ոչ պաշտոնական քննարկումներ սկսել ռուս և ֆրանսիացի դեսպանների հետ:104

Իր հերթին Լոութերն առաջարկում էր Փոքր Ասիան տերությունների ազդեցության ոլորտների: Նա գրում էր Գրեյին, որ վերջին 35 տարվա փորձառությունը, ինչպես նաև 2 մլն. Կովկասի հայ բնակչության համար ստեղծված կյանքի խաղաղ պայմանները, հայերին բերել են այն համոզման, որ բարենորոգումների իրագործումը հնարավոր է միմիայն Ռուսաստանի հովանու ներքո՝ անգլո-ռուսական համաձայնության դեպքում: Առաջարկելով բրիտանական կառավարությանը 17 բրիտանացի սպայի թեկնածություն ներկայացնել յոթ «քուրդ-հայկական» վիլայեթներում ծառայելու համար, շարունակում էր դեսպանը, Բարձր Դուռը նպատակ է հետապնդում սրել անգլո-ռուսական հակասություններն ու անհնարին դարձնել բարենորոգումների իրագործումը թուրք տարրից փաստորեն զուրկ շրջաններից: Լոութերը համոզված էր, որ երիտթուրքական կառավարությունը նպատակադրվել է բարենորոգումների հարցը լուծել անգլո-գերմանական համաձայնության շրջանակներում, ընդհանրապես անտեսելով Ռուսաստանի մասնակցությունը: Ուստի նա առաջարկում էր բաժանել Փոքր Ասիան տերությունների ազդեցության ոլորտների, ընդ որում հայկական վիլայեթներում պետք է տեղակայվեին ռուս, Միջագետքում՝ բրիտանացի, Սիրիայում՝ ֆրանսիացի, իսկ

---

103 Նույն տեղում, էջ 444-445:
104 Նույն տեղում, էջ 446:

Ադանայում և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում՝ գերմանացի խորհրդականները:105 Այդ կապակցությամբ Ֆիցմորիսն արտահայտվում էր շատ ավելի ազատ և պարզ, քան դեսպանը: Նա առաջարկում էր Ռուսաստանին իրական հսկողության իրավունք վերապահել հայկական վիլայեթների նկատմամբ, ինչպես որ այն տրամադրվել էր Ավստրո-Հունգարիային և Մեծ Բրիտանիային՝ համապատասխանաբար Բոսնիայի և Հերցեգովինայի (1878 թ.) ու Եգիպտոսի (1882 թ.) պարագաներում:106

Ստանալով բրիտանական և ֆրանսիական կառավարությունների համաձայնությունը, առաջին բալկանյան պատերազմի ավարտից անմիջապես հետո Թուրքիայում Ռուսաստանի դեսպանությունը ներկայացնում է երեք տերությունների դեսպանությունների ներկայացուցիչներից կազմված նախապատրաստական հանձնաժողովի նախնական քննարկմանը հայերի առաջարկների հիման վրա ռուսական դեսպանության թարգման Անդրեյ Մանդելշտամի պատրաստած բարենորոգումների նախագիծը: Բացի Մանդելշտամից հանձնաժողովի կազմում էին Ֆիցմորիսը և ֆրանսիական դեսպանության քարտուղար Սեն-Կանտենը: Նախագծի համաձայն, Թուրքիայի վեց արևելյան վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Սըվազ, Խարբերդ) կազմվում է մեկ նահանգ եվրոպացի կամ կայսրության քրիստոնյա հպատակի գլխավորությամբ, որը նշանակվում է սուլթանի կողմից, եվրոպական տերությունների համաձայնությամբ: Քրիստոնյա և մահմեդական բնակչությունը պետք է հավասար ներկայացուցչության իրավունք ստանար նահանգի ազգային ժողովում, վարչական մարմիններում և ժանդարմերիայում: Նախատեսվում էր ազգային դպրոցների հիմնում, լեզուների իրավահավասարություն, համիդիե հեծելազորի լուծարում, հայերից անօրինական միջոցներով խլված հողատարածքների վերադարձ և այլն:107

Այն բանից հետո, երբ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանները տալիս են իրենց նախնական համաձայնությունը նախագծի վերաբերյալ, այն ներկայացվում է նաև մյուս

105 Նույն տեղում, էջ 448; Heller J. Op.cit., p. 86.
106 Heller J. Op.cit., p. 86.
107 Сборник дипломатических документов. Реформы в Армении, 26 ноября 1912 г. – 10 мая 1914 г. (Оранжевая книга). Петроград, 1915, с. 61-69.

տերությունների քննարկմանը: Հայտնելով իր ծայրահեղ դժգոհությունը Հայկական հարցում Ռուսաստանի գրաված առաջատար դերով, գերմանական դիվանագիտությունը փորձում է տապալել ռուսական նախագիծը, առաջարկելով Հայկական հարցին վերաբերող համաժողովն անցկացնել Լոնդոնում, այլ ոչ թե Կոստանդնուպոլսում, որտեղ հայերի և ռուսների ճնշումը կարող է բավականին զգալի լինել, ինչպես նաև տերությունների քննարկմանը ներկայացնել նաև բարենորոգումների թուրքական ծրագիրը:108 Փորձելով չսրել խնդիրը, Գրեյը հանձնարարում էր Ռուսաստանում Մեծ բիտանիայի դեսպան Ջորջ Բյուքենենինառաջարկել ռուսական կառավարությանը հրավիրել դեսպանների համաժողովը 109 Կոստանդնուպոլսում, սակայն ընդունել Գերմանիայի պահանջը՝ քննարկել նաև Բարձր Դռան կողմից տրամադրվելիք նախագիծը, որից հետո միայն ներկայացնել թուրքերին լրամշակված ծրագիր:110 Հունիսի 16-ին դեսպանը պատասխանում է Գրեյին, որ Ռուսաստանի արտգործնախարարությունն առարկում է այդ առաջարկի առնչությամբ, քանի որ այն կհուսահատեցնի հայերին և հնարավորություն կտա Գերմանիային պնդելու թուրքական նախագծի ընդունման վրա, ստեղծելով տարաձայնություններ տերությունների միջև:111 Գրեյը շարունակում էր պնդել իր առաջարկի վրա, համոզված լինելով, որ վաղ թե ուշ Թուրքիան և Գերմանիան կօգտվեն իրենց իրավունքից և կպահանջեն քննարկել նաև բարենորոգումների իրենց ծրագիրը: Նա առաջարկում էր ժամանակ չկորցնել, սկսել աշխատանքը ռուսական նախագծի վրա և եթե այդ ընթացքում Բարձր Դուռը ներկայացնի նաև իր տարբերակը, օգտագործել այն՝ վերջնական փաստաթուղթ նախապատրաստելու նպատակով:112

Հունիսի 17-ին Լոութերը տեղեկացնում էր Գրեյին, որ ռուս և ֆրանսիացի դեսպանների հետ ունեցած քննարկումների ընթացքում նրանք համաձայնության են եկել բարենորոգումների նախագծի վերաբերյալ, որը ներկայումս կարելի է արդեն ներկայացնել

108 Davison R. The Armenian Crisis, 1912-1914. New York, 1948, p. 15.
109 Բյուքենեն (Buchanan) Ջորջ (1854-1924) - բրիտանացի դիվանագետ: 1903-1908 թթ.՝ գլխավոր հյուպատոս և դեսպանորդ Սոֆիայում, 1910-1918 թթ.՝ դեսպան Ռուսաստանում:
110 British Documents..., p. 450.
111 Նույն տեղում, էջ 452:
112 Նույն տեղում, էջ 453:

մյուս տերությունների դեսպաններին: Ըստ Լոութերի, նախագծի հիմք են հանդիսացել 1895 թ. ծրագիրը, 1880 և 1913 թթ. օսմանյան օրենքները, ինչպես նաև Կրետեի և Լիբանանի կանոնագրությունները: Նախագիծը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպաններին ներկայացնելուն պես, շարունակում էր դեսպանը, գերմանացի ներկայացուցիչը հայտարարել է Ռուսաստանի դեսպան Միխաիլ Գիրսին, որ համաձայն կլինի քննարկել փաստաթուղթը երկու հետևյալ նախապայմանների դեպքում. 1/ սուլթանի ինքնիշխանությունը շրջաններում պետք է պահպանվի. 2/ քննարկումներին պետք է մասնակցի նաև թուրք ներկայացուցիչը: Լոութերի կարծիքով, երկրորդ նախապայմանը

կարող է ստեղծել լրացուցիչ բարդություններ, թեև Գիրսը հույս ուներ, որ Գերմանիան կփոխի իր այդ տեսակետը:113 Թեև Սազոնովը կտրականապես դեմ էր արտահայտվել գերմանական նախապայմանի կապակցությամբ, Գիրսը փորձում էր նրան համոզել, որ միևնույն է որոշակի փուլում անհրաժեշտ է լինելու խորհրդակցել Բարձր Դռան հետ:114

Հունիսի 30-ին կայացավ հինգ տերությունների դեսպանների առաջին հանդիպումը, ուր ներկայացվեց բարենորոգումների ծրագրի ռուսական տարբերակը: Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպանները հայտարարեցին, որ Բարձր Դուռը ներկայումս նախապատրաստել է ծրագրի իր նախագիծը, որը շուտով նույնպես պաշտոնապես ներկայացվելու է դեսպանների քննարկմանը:115

Հուլիսի 2-ին Գերմանիայում Մեծ Բրիտանիայի դեսպան Ուիլյամ Գոշենը116 հաղորդում էր Գրեյին, որ գերմանական կառավարությունը չափազանց անհանգստացած է ռուսական առաջարկի կապակցությամբ, համարելով, որ նրա գործադրումը հանդիսանալու է երկրի բաժանման սկիզբը: Ըստ դեսպանի, Գերմանիան ցանկանում է ամեն գնով պահպանել Թուրքիայի ասիական տիրույթների ամբողջականությունը, սակայն եթե բանը հասնի բաժանմանը, այն պահանջելու է իր մասնաբաժինը:117

_____

113 Նույն տեղում, էջ 454-455:
114 Նույն տեղում, էջ 463:
115 Նույն տեղում, էջ 468:
116 Գոշեն (Goschen) Ուիլյամ (1847-1924) – բրիտանացի դիվանագետ: 1905-1908 թթ.՝ դեսպան Ավստրո-Հունգարիայում, 1908-1914 թթ.՝ դեսպան Թուրքիայում:
117 Նույն տեղում, էջ 470:

Նույն օրը Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանության խորհրդական, այդ օրերին ժամանակավոր հավատարմատար Չարլզ Մարլինգը տեղեկացնում էր Գրեյին, որ Բարձր Դուռը պաշտոնապես ներկայացրել է դեսպաններին բարենորոգումների նախագծի իր տարբերակը: Մարլինգի համոզմամբ, դեսպանների հաջորդ հանդիպման ընթացքում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպանները պահանջելու են որպես քննարկումների հիմք ընդունել թուրքական նախագիծը: Իր հետ ունեցած զրույցների ժամանակ երկուսն էլ մատնանշում էին Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում ռուսական ազդեցության ոլորտի ստեղծման վտանգը, առաջարկելով պաշտպանել այդ շրջանների համար անգլիացի նահանգապետի թեկնածությունը: Մարլինգը համոզված էր, որ այդ առաջարկն արվում է անգլո-ռուսական հակասությունները սրելու նպատակով:118

Համաձայն Բյուքենենի տեղեկությունների, թուրքական նախագիծը ներկայացնելու կապակցությամբ այդ օրերին Սազոնովը հայտարարում էր Թուրքիայի դեսպանին, որ սա առաջին դեպքը չէ, երբ Բարձր Դուռը, փորձելով խառնել տերությունների մտադրությունները, ներկայացնում է իր հակադիր տարբերակը: Չնայած դրան, շարունակում էր նախարարը, տերությունները ներկայացնելու են Բարձր Դռանը իրենց կողմից մշակված տարբերակը: Իսկ Գերմանիայի դեսպանի այն հարցադրմանը, թե ռուսական նախագիծն այնքան հեռու է գնում, որ մյուս շրջանների բնակչությունը նույնպես պահանջելու է տերություններից նման կարգավիճակ, Սազոնովը պատասխանում էր, որ Ռուսաստանը հնարավորին ամեն ինչ անելու է, որպեսզի Թուրքիայի ամբողջականությունն Ասիայում պահպանվի, սակայն այն երբեք չի

բավարարվելու կիսամիջոցներով, երբ խոսքը գնում է իրեն սահմանակից տարածքների մասին: Ուստի Ռուսաստանը, ըստ նախարարի, պնդելու է նախագծի իր տարբերակի վրա, միաժամանակ պատրաստակամություն հայտնելով բարեկամաբար քննարկելու Գերմանիայի կողմից ներկայացված յուրաքանչյուր առաջարկ:119

Ֆորին Օֆիսում գոյություն ունեին տարբեր կարծիքներ ստեղծված իրավիճակի և այդ կապակցությամբ բրիտանական կառավարության դիրքորոշման վերաբերյալ: Այսպես, արևելյան դեպարտամենտի քարտուղար Հերման Նորմանի կարծիքով, թուրքական նախագիծը արժանի է ուշադրության և կարող է հիմք հանդիսանալ բանակցությունների

118 Նույն տեղում, էջ 471:
119 Նույն տեղում, էջ 472:

համար, քանի որ այն ավելի համապարփակ է, քան ռուսականը: Նա համոզված չէր, որ հայերը ցանկանում են անցնել ռուսական հովանու ներքո, քանի որ ռուսահայերն այդքան էլ գոհ չեն իրենց կյանքից: Ըստ Նորմանի, որոշակի անհրաժեշտ երաշխիքների դեպքում թուրքահայերի մեծամասնությունը նախընտրելու է մնալ թուրքական տիրապետության տակ:120 Նույն կարծիքին էր դեպարտամենտի տնօրեն Մալլետը, որը գտնում էր, որ Հայկական հարցի միջոցով Ռուսաստանը փորձում էր պառակտել Եվրոպան: Նա նշում էր, որ Հայկական հարցը կարևոր և կենսական նշանակություն ունի բալոր եվրոպական տերությունների և, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի համար, քանի որ Թուրքիայի մասնատումը շատ լուրջ վտանգ կարող է ներկայացնել բրիտանական շահերին Միջերկրականում և Հնդկաստանում:

Կոստանդնուպոլսի բրիտանական դեսպանությունում տիրում էին հակագերմանական և ռուսամետ տրամադրություններ: Մարլինգը համոզված էր, որ հայերն ընդհանրապես մերժելու են թուրքական նախագիծը և կարող են հրահրել Ռուսաստանի ռազմական միջամտություն:

Շատ ավելի զգույշ և չափված մոտեցում էր հանդես բերում փոխնախարար Նիկոլսոնը: Ընդունելով այն փաստը, որ Ռուսաստանն անմիջական շահեր ունի Թուրքիայի հայկական շրջաններում, նա առաջարկում էր «հանգիստ և զուսպ» քաղաքականություն դրսևորել այդ տերության նկատմամբ: Ի վերջո, բրիտանական կառավարության դիրքորոշումը ձևավորվեց իր պնդման արդյունքում: Նիկոլսոնը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան պատրաստ է զիջումների գնալ և համաձայնվել Ռուսաստանի պահանջների հետ այն դեպքում, եթե բարենորոգումների ծրագրի նկատմամբ հաստատվի «համերաշխություն մեծ տերությունների միջև» և Թուրքիան ընդունի այն առանց հարկադրական միջոցների կիրառման:121

Ձգտելով չվտանգել անգլո-ռուսական և անգլո-գերմանական հարաբերությունները, Գրեյը որոշում է ընդունում միջնորդի դեր խաղալ ռուսական և թուրք-գերմանական տեսակետների միջև,122 թեև իրականում նա դեմ էր ռուսական նախագծի իրագործմանը: Նա

120 Նույն տեղում, էջ 473:

121 Heller J. Op.cit., p. 87.
122 Davison R. Op.cit., p. 15.

զեկուցում էր կառավարությանը, որ Հայաստանում բարենորոգումների ռուսական ծրագիրը իրականում կվերածի այն ինքնավար նահանգի, որը հարմար պահին կգրավվի Ռուսաստանի կողմից:123

Հուլիսի 12-ին Մարլինգը հաղորդում էր Գրեյին, որ Գերմանիայի դեսպան Վանգենհայմի համաձայն, ռուսական նախագծի ընդունումը հավասարազոր է լինելու Ռուսաստանի ազդեցության ոլորտի հաստատմանը, ինչը հետագայում անխուսափելիորեն բերելու է նրա կողմից այդ շրջանների, ինչպես նաև Կոստանդնուպոլսի գրավմանը: Դեսպանը հիշեցնում էր նաև, որ Թուրքիայում հայերն ապրում են ոչ միայն հյուսիս-արևելյան, այլև այլ շրջաններում, օրինակ, Կիլիկիայում, ուր Գերմանիան ունի մեծ շահեր: Եվ եթե Ռուսաստանը պետք է ազդեցության ոլորտ հաստատի Հայաստանում, Գերմանիան կպահանջի նույնանման առավելություններ իր համար Կիլիկիայում:124 Մեկնաբանելով Վանգենհայմի հետ կայացած իր հանդիպման արդյունքները, Մարլինգը գրում էր Գրեյին, որ Գերմանիայի այդ դիրքորոշումը բացարձակապես հիմնավորված չէ, քանի որ առաջին հերթին բարեկարգման կարիք ունեն հայկական վեց վիլայեթները, ուր թուրք իշխանությունները երեք տասնամյակ շարունակ այդպես էլ չեն կարողացել հաստատել կարգ ու կանոն և կյանքի համեմատաբար բարվոք պայմաններ: Թուրքիայի այլ շրջանների հայ բնակչության հետ կապված խնդիրները, շարունակում էր դիվանագետը, իր լուծումը պետք է ստանան երկրի ընդհանուր բարենորոգումների շրջանակներում, ինչպես որ դա նախատեսված էր 1895 թ. և ներկայիս ռուսական նախագծերում: Ինչ վերաբերում է գերմանական կառավարության մտահոգություններին այն մասին, թե ռուսական ծրագրի իրագործումը կարող է նպաստել Ռուսաստանի ազդեցության հզորացմանն այդ շրջաններում, Մարլինգը հավատացած էր, որ բարեկեցիկ Հայաստանը երբեք չի անցնի ռուսական ազդեցության ներքո, քանի որ հայերը ոչ լեզվական, ոչ էլ կրոնական կապեր ունեն Ռուսաստանի հետ, ինչպես որ դա գոյություն ունի բալղարների պարագայում: Մարլինգի կարծիքով, ռուսական կառավարության հետագա գործողությունները կախում ունեն հայկական կոտորածների հնարավորությունից և եթե Գերմանիան՝ իր դաշնակիցների և Թուրքիայի հետ համատեղ, թույլ չտան բարենորոգումների իրագործումն այդ շրջաններում և

_____
123 Heller J. Op.cit., p. 89.
124 British Documents..., p. 493.

բավարարվեն կիսամիջոցներով, ապա հայերի կողմից անկարգությունների հրահրումն ու դրա արդյունքում Ռուսաստանի ռազմական միջամտությունը կդառնա անխուսափելի:125

Հուլիսի 22-ին Մեծ Բրիտանիայում Գերմանիայի դեսպանը ներկայացնում է Գրեյին հայկական բարենորոգումների հանդեպ իր կառավարության դիրքորոշումն արտահայտող հուշագիր: Փաստաթղթում նշվում էր, որ միացյալ Հայաստանի ստեղծումը վեց վիլայեթների փոխարեն ոչ միայն չի ընդգրկելու բոլոր հայերին, այլև առաջին քայլն է հանդիսանալու Ասիական Թուրքիայի էթնիկական և աշխարհագրական մասնատման ճանապարհին, քանի որ մյուս ազգությունները, օրինակ Սիրիան և Արաբիան, նույնպես ձգտելու են որոշակի ինքնակառավարման: Նկատի առնելով այն հանգամանքը, ասվում էր

հուշագրում, որ վարչական ինքնորոշման գաղափարը պետք է ընդունվի երկրի կառավարության կողմից, տերություններն առաջին հերթին պետք է քննարկեն բարենորոգումների թուրքական ծրագիրը: Գերմանական կառավարության համոզմամբ, տերությունները որոշակի փոփոխություններ պետք է կատարեն թուրքական նախագիծը քննարկելիս: Օրինակ, առաջարկվում էր ստեղծել բարենորոգումների իրագործման նկատմամբ հսկողություն սահմանող հանձնաժողով, որի կազմում հավասարաչափ հարկավոր է ընդգրկել թուրքերին և տերությունների ներկայացուցիչներին: Փաստաթղթում ընդգծվում էր, որ գերմանական կառավարությունը միանշանակորեն նախընտրում է թուրքական ծրագիրը:126

Կոստանդնուպոլսի ավստրո-հունգարական դեսպանությունում կայացած թարգմանների քննարկումները վերածվեցին մի կողմից՝ Ռուսաստանի և մյուս կողմից՝ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի միջև սուր հակամարտության և ավարտվեցին անարդյունք: Ավստրո-գերմանական կողմը կտրականապես հրաժարվում էր ընդունել ռուսական նախագծի հիմնական երկու կետերը՝ հայկական միացյալ նահանգի ստեղծումը և տերությունների համաձայնությամբ նահանգապետի նշանակումը, համաձայնելով այնպիսի երկրորդական դրույթների հետ, ինչպիսիք էին համիդիե հեծելազորի լուծարումը, լեզուների իրավահավասարությունը, դպրոցների ստեղծումը և այլն:127 Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիվանագետները երկակի խաղ էին խաղում քննարկումների ընթացքում, քաջ

---

125 Նույն տեղում, էջ 495-496:
126 Նույն տեղում, էջ 501-502:
127 АВПР, ф. Политический архив, 1913, д. 3465, л. 147.

գիտակցելով, որ երկու հակադիր տեսակետների հաշտեցումը գրեթե անհնարին է: Վերջապես հուլիսի 10-ին, երբ Գերմանիայի ներկայացուցիչը պահանջեց բարենորոգումների հիմքում դնել թուրքական ծրագիրը, լրացնելով այն ռուսական նախագծի երկրորդական կետերով, Մանդելշտամը մերժեց այն, որի արդյունքում տերությունների դեսպանությունների հանձնաժողովը դադարեցրեց իր աշխատանքները:128

Ռուսական դիվանագիտության պարտությունը բարենորոգումների խնդրում և Բալկանյան երկրորդ պատերազմի ընթացքում զգալի բացասական ազդեցություն ունեցան Ռուսաստանի միջազգային հեղինակության վրա, թուլացրին նրա դիրքերը Բալկաններում և Փոքր Ասիայում: Իրադրությունը չկարողացան փոխել նաև ռուսական զորքի կուտակումները թուրքական սահմանի վրա և Արևմտյան Հայաստանի գրավման սպառնալիքները: Գերմանական կառավարությունն այդ կապակցությամբ հայտարարեց, որ ռուսական բանակի մուտքը Արևմտյան Հայաստան կդիտվի իր կողմից որպես պատերազմի պատճառ, իսկ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բացարձակապես անընդունելի համարեցին Ռուսաստանի նման ծրագրերը:129

Այդ պայմաններում ռուսական դիվանագիտությունը որոշում է կայացնում գնալ զիջումների և անմիջական բանակցություններ սկսել Գերմանիայի հետ: Բանակցությունները սկսվում են օգոստոսի վերջին Կոստանդնուպոլսում, երկու տերությունների դեսպանությունների առաջին թարգմանների մակարդակով, և, դժվարին

դիվանագիտական պայքարի պայմաններում, ավարտվում սեպտեմբերի կեսերին, երկու տերությունների դեսպանների միջև ձեռքբերված համաձայնությամբ: Սեպտեմբերի 26-ին Մարլինգը զեկուցում էր Գրեյին համաձայնության հիմնական կետերի վերաբերյալ: Արևելյան Անատոլիան բաժանվում էր «հյուսիսային» (Էրզրումի, Տրապիզոնի և Սըվազի վիլայեթներ) և «հարավային» (Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներ) սեկտորների, որոնք ղեկավարվելու էին տերությունների համաձայնությամբ նշանակվող եվրոպացի գլխավոր տեսուչմերի կողմից: Ընդ որում՝ 1/ Բարձր Դուռը հինգ տարով համապատասխան

128 Davison R. Op.cit., p.18; Восточный вопрос во внешней политике России..., с. 370; Коджоян Р. Указ.соч., с. 122.
129 Howard H. The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1923. University of Oklahoma Press, 1931, pp. 49-50.

պայմանագիր էր ստորագրում գլխավոր տեսուչների հետ. 2/ գլխավոր տեսուչներին իրավունք էր վերապահվում Բարձր Դռան հաստատմանը ներկայացնել սեկտորների բարձր պաշտոնյաների և դատավորների թեկնածություններ, ինչպես նաև նշանակել և պաշտոնից ազատել մյուս այլ պաշտոնյաների. 3/ ամեն սեկտորում ստեղծվում էր ընտրովի խորհուրդ, որը հավասարաչափ կազմված էր լինելու մահմեդականներից և քրիստոնյաներից. 4/ նույն հավասարության սկզբունքը կիրառվելու է երկու սեկտորների բոլոր վարչական մարմինների կազմավորման պարագայում. 5/ Բարձր Դուռը իրավունք է վերապահելու մեծ տերություններին, իրենց դեսպանների և հյուպատոսների միջոցով, հսկելու բարենորոգումների իրագործումը. 6/ Բարձր Դուռը համագործակցելու է տերությունների հետ Արևելյան Անատոլիայի երկու սեկտորներում այլ բարենորոգումների կիրառման հարցում:130

Բրիտանական կառավարությունն անմիջապես հավանություն տվեց ռուս-գերմանական ծրագրին, համարելով այն «փոքրասիական շահերի հողի վրա վտանգավոր բարդություններից խուսափելու ամենից ճիշտ միջոցը»131 Հայտնելով բրիտանական կառավարության որոշման մասին Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի հավատարմատար Էտտերին, Ֆորին Օֆիսի արևելյան բաժանմունքի տնօրեն Էյր Քրոուն ասում էր, որ Գրեյը մեծ բավարարվածությամբ ընդունեց երկու շահագրգռված տերությունների այդ նախաձեռնությունը, քանի որ ինքն անձամբ համարում էր բարենորոգումների հարցի վերաբացումն անհետաձգելի անհրաժեշտություն:132

Ստանալով նաև մյուս տերությունների համաձայնությունը, Ռուսաստանի և Գերմանիայի դեսպաններ Գիրսն ու Վանգենհայմը ներկայացնում են ծրագիրը Բարձր Դռան քննարկմանը: 1913 թ. աշնան և ձմեռվա ամիսներին ռուս և գերմանացի դիվանագետները դժվարին և բարդ բանակցություններ են վարում Բարձր Դռան հետ, մասնավորապես, տերությունների հսկողության և սեկտորներում օտարերկրյա նշանակումների շուրջ, որոնց մանրամասները լայնորեն լուսաբանված են պատմագրության մեջ:

130 British Documents..., pp. 515-516.
131 Сборник дипломатических документов..., с. 95.
132 ЦГИА РА, ф. Коллекция копий и выписок документов, оп. 1, д. 37, л. 35.

Դիտարկելով նոր ռուս-գերմանական ծրագիրը որպես Թուրքիան մասնատելու տերությունների հերթական փորձ, երիտթուրքական կառավարությունը միջոցներ է ձեռնարկում այն տապալելու ուղղությամբ: Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալաաթ փաշան առաջարկում է բրիտանական կառավարությանը Արևելյան Անատոլիայի երկու սեկտորների գլխավոր տեսուչների պաշտոններում նշանակել Բարձր Դռան մոտ ծառայություն մեջ գտնվող ֆինանսների նախարարության խորհրդական Ռիչարդ Կրոուֆորդին և ներքին գործերի նախարարության խորհրդական Ռոբերտ Գռեյվզին: Համոզված լինելով, որ նման առաջարկության միջոցով Բարձր Դուռը ձգտում է հակասություններ ստեղծել տերությունների միջև, բրիտանական կառավարությունն անմիջապես մերժում է այն:133 Նույն բախտին է արժանանում նաև երիտթուրքական կառավարության կողմից հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի դեսպան Մալլետին ներկայացված Կրոուֆորդին որպես բարենորոգումների օսմանյան ծրագրի ոչ պաշտոնական խորհրդատվական հանձնաժողովի նախագահ նշանակելու առաջարկը:134

Այդ կապակցությամբ նոյեմբերի 4-ին Գրեյը գրում էր Գերմանիայում դեսպան Գոշենին. ՝Ես գործնական առաջարկներ եմ ստանում թուրքական կառավարությունից՝ տարբեր պետական գերատեսչություններում արդեն իսկ ծառայության մեջ գտնվող մի շարք բրիտանացի պաշտոնյաներին հայկական շրջաններում նոր պաշտոններում նշանակելու կապակցությամբ: Ես տրամադիր չեմ քաջալերել որևէ քայլ, որը կարող է դիտվել որպես անկախ գործողություն Նորին Մեծության կառավարության կողմից թուրքական նահանգային վարչակազմի բարենորոգման հարցում, և, հետևաբար, առանց խորհրդակցելու բոլոր մեծ տերությունների հետ, առարկելու եմ օտարերկրյա պաշտոնյաների նոր նշանակումների և պաշտոնների ստեղծման կապակցությամբ: Այնուամեհայնիվ, որոշակիորեն ցանկալի է, որ հայկական բարենորոգումների հարցի լուծումը ուշացնել չի կարելի: Քանի որ Ռուսաստանն ու Գերմանիան ղեկավար դեր են ստանձնել Թուրքիայի կողմից իրականացվելիք նախագծի ուրվագծերը մեծ վեզիրին երաշխավորելու գործում, ինչի հետ Նորին Մեծության կառավարությունն ամբողջությամբ համաձայն է, ես հավատացած եմ, որ երկու կառավարությունները կարող են օգտվել առկա առիթից և համոզել Դռանն՝

133 Heller J. Op.cit., p. 90.
134 Նույն տեղում, էջ 107-108; Davison R. Opcit., p. 21.

առաջարկներն ընդունելու և գործի դնելու նպատակով:135 Գոշենը փոխանցում է Գրեյի տեսակետները Գերմանիայի արտգործնախարարի պաշտոնակատարին և հավաստիացումներ ստանում նրանից, որ գերմանական կառավարությունն իր ուժերի ներածին չափով ամեն ինչ անելու է հարցին լուծում տալու համար, սակայն Բարձր Դուռը շարունակ դժվարություններ է ստեղծում այդ ճանապարհին: Ըստ իրեն, երիտթուրքական կառավարությանը մտահոգում է տերությունների կողմից գլխավոր տեսուչների թեկնածուների ընտրության հարցը, ինչը դիտարկվում է որպես Թուրքիայի ինքնիշխան իրավունքների խախտում և միջամտություն երկրի ներքին գործերին, գլխավորապես Ռուսաստանի կողմից: Սակայն գերմանական կառավարությունը փորձում է համոզել թուրքերին, որ Սազոնովի Բեռլինում արված հավաստիացումների համաձայն, Ռուսաստանն ամբողջապես կիսում է Գերմանիայի տեսակետները Թուրքիայի ասիական շրջանների ամբողջականությունը պահպանելու հարցում:136

Չնայած Արևմտյան Հայաստանի բրիտանական հյուպատոսություններից մշտապես ստացվող տագնապալի լուրերին հայ բնակչության վատթարացող վիճակի մասին, հոկտեմբերին Կոստանդնուպոլիս ժամանած և Մեծ Բրիտանիայի դեսպանի պարտավորությունները ստանձնած Մալլետը լավատեսորեն էր տրամադրված երիտթուրքական կառավարության բարենորոգումների քաղաքականության նկատմամբ: Մասնավորապես, նա բարձր կարծիքի էր Թալաաթի և Ջեմալի մասին, որոնք իբր «չափազանց նրբազգաց» վերաբերմունք էին հանդես բերում հայերի հանդեպ: Մալլետը որպես օրինակ էր բերում նրանց մասնակցությունը հայկական այբուբենի ստեղծման 1500 ամյակին նվիրված հանդիսություններին, ուր նրանք հայտարարում էին Օսմանյան կայսրության սահմանադրական վերածննդի ուղղությամբ հայերի հետ ձեռք ձեռքի աշխատելու կառավարության հաստատուն ցանկության մասին: Միաժամանակ Մալլետը չէր բացառում նաև այն հանգամանքը, որ երիտթուրքերի կեցվածքը պայմանավորված էր տերությունների կողմից պարտադրված բարենորոգումներից խուսափելու հույսով:137

---

135 British Documents..., p. 523.
136 Նույն տեղում, էջ 524-525:
137 Heller J. Op.cit., p. 107.

Մալլետը հանձնարարություն էր ստացել Գրեյից անմիջականորեն հետևել ռուս-թուրքական ու գերմանա-թուրքական բանակցությունների ընթացքին և իր հերթին ամեն կերպ փորձել համոզել երիտթուրքական կառավարությանը՝ ընդունել և իրագործել տերությունների ծրագիրը: Նոյեմբերի 11-ին մեծ վեզիրի հետ կայացած հանդիպման ժամանակ դեսպանն ընդգծում էր բրիտանական կառավարության «խորագույն շահագրգռվածությունը» բարենորոգումների հարցում, համարելով ծրագրի ընդունումը Բարձր Դռան կողմից որպես Օսմանյան կայսրության համար «կենսական» նշանակություն ունեցող խնդիր: Մալլետն իր համոզվածությունն էր հայտնում այն մասին, որ Բարձր Դռան մտավախությունները Ռուսաստանի հայկական բարենորոգումների քաղաքականության տակ թաքնված տարածքային նկրտումների մասին ամբողջապես անհիմն են, ինչի վառ ապացույցն են հանդիսանում ռուսական կառավարության առաջարկներն ընդհանուր եվրոպական հսկողություն սահմանելու վերաբերյալ, որն ամենալավագույն երաշխիքն է որևէ տերության կողմից ռազմական միջամտություն կիրառելու դեմ:138

Հաղորդելով Գրեյին երիտթուրքական կառավարության երկրում տիրող ներկայիս իրավիճակը շտկելու ուղղությամբ լուրջ միջոցառումներ իրականացնելու մտադրությունների մասին, Մալլետը նշում էր, որ Թալաաթն անձամբ ինքն է ցանկություն հայտնել այցելել արևելյան վիլայեթները: Դեսպանը համոզված էր, որ Թալաաթի այցելությունը դրական արդյունքներ կարող է ունենալ ծրագրի ընդունման և իրականացման գործում, թեև, երկրի ընդհանուր իրավիճակից ելնելով, «լուրջ կասկածներ» ուներ բարենորոգումների ընթացքի և շարունակականության մասին: Նա «մեծագույն կարևորության» խնդիր էր համարում զգույշ քաղաքականության կիրառումը Բարձր Դռան նկատմամբ և առաջարկում խուսափել «գրգռիչ քայլերից», որոնք կարող են շատ ավելի վատթարացնել կացությունը:139 Ռուս-թուրքական և գերմանա-թուրքական բանակցությունների ողջ ընթացքում Մալլետը խորհուրդ էր տալիս խուսափել որևէ գործողություններից, որոնք կարող են ընկալվել Բարձր Դռան կողմից որպես Օսմանյան

կայսրության դեմ ուղղված սպառնալիք: Նա իրապես հավատում էր երիտթուրքական կառավարության «բարի կամքի» քաղաքականության դրսևորումներին ու ապագայում հայ-թուրքական բնականոն հարաբերությունների բարելավմանը և

138 British Documents..., p. 528.
139 Նույն տեղում, էջ 529:

բավականին լուրջ էր ընկալում թուրքերի նախազգուշացումներն այն մասին, որ եվրոպական հսկողությունը կարող է վերածել արևելյան վիլայեթներն իսկական «հրաբուխի»:140

Դեկտեմբերի 1-ին մեծ վեզիրի հետ ունեցած իր հերթական հանդիպման ժամանակ Մալլետը բրիտանական կառավարության անունից դժգոհություն հայտնեց բարենորոգումների վերաբերյալ տարվող բանակցությունների ընթացքի և առաջադիմության բացակայության կապակցությամբ: Մեծ վեզիրը պատասխանում էր, որ թուրքական կառավարությունը չի կարող իրավունք տալ տերություններին ուղարկել խորհրդատուներ, որոնք միջամտելու են ներքին վարչակազմի խնդիրներին և մշտական կապի մեջ են լինելու դեպանների հետ: Իր կարծիքով, այդ հանգամանքը վիրավորում է թուրքերի արժանապատվությունը և կյանքում իրականանալ չի կարող: Դեսպանն իր համոզվածությունն էր հայտնում, որը վերջերս հաստատել էր նաև իրեն այցելած հայ պատրիարքը, որ հայերը չեն մտածում անկախության մասին, այլ ցանկանում են ապրել օսմանյան իշխանության ներքո և, եթե նրանց կյանքի ու ունեցվածքի անվտանգությունն երաշխավորված լինի, նրանք կապացուցեն սուլթանի հավատարիմ հպատակներ հանդիսանալու իրենց կամքը: Ըստ Մալլետի, Եվրոպայի և, մասնավորապես, Անգլիայի ժողովուրդները խորապես հետաքրքրված են բարենորոգումների հարցով, սակայն եթե տերությունների օժանդակությունը նրանց իրականացման գործում մերժվի, ապա նրանք բավականին ցավագին են ընկալելու այդ փաստը: Ուժի միջոցով բարենորոգումներն իիրագործելու խնդիր լինել չի կարող, շարունակում էր դեսպանը, քանի որ բրիտանական կառավարությունը «անկեղծորեն մտադիր է օգնել Դռանը», սակայն եթե իր «բարեկամական խորհուրդները մի կողմ դրվեն, դա կընկալվի Անգլիայում որպես հակահարված»: Մալլետի համոզմամբ, եթե Հայկական հարցը ստանա գոհացուցիչ լուծում, մի քանի տարի անց վերանալու է տերությունների հսկողության անհրաժեշտությունը, իսկ արևելյան վիլայեթները դառնալու են օսմանյան կառավարության «ուժի աղբյուրը»:141

Սակայն Մալլետի լավատեսությունը հետզհետե սկսում է նվազել: Դեկտեմբերի սկզբին նա գրում էր Գրեյին, որ Կոստանդնուպոլսում բավականին զգալի են դարձել որևէ եվրոպական միջամտության դեմ ուղղված ազգայնամոլական զգացմունքներ, որոնք մեծ

140 Heller J. Op.cit., p. 108.
141 British Documents..., pp. 534-535.

վտանգ են ներկայացնում բարենորոգումների իրագործման ծրագրին: Նա տեղեկացնում էր նաև, որ վերջերս հայ պատրիարքն իրեն կյանքին սպառնացող նամակներ է ստացել «երիտասարդ մահմեդականներ» կազմակերպությունից, հայ քահանան քարկոծվել է

մահմեդական խաժամուժի կողմից, իսկ հայկական եկեղեցին ծեփել են կարմիր ներկով:142

1913-1914 թթ. ձմեռվա ամիսների ընթացքում Մալլետը շարունակում էր ընդհանուր առմամբ արդարացնել երիտթուրքերի վարած ներքին քաղաքականությունը, ինչն, ըստ իրեն, բացատրվում էր «ինքնապահպանման բնական բնազդով», քանի որ թուրքերը փոքրամասնություն էին կազմում երկրում և իրենց մտավոր ու գործարար կարողություններով զիջում էին արաբներին, հույներին, հրեաներին և հայերին: Միաժամանակ դեսպանն իր գոհունակությունն էր հայտնում 1913 թ. դեկտեմբերի 24-ին Հայաստանի համար երկու օտարերկրյա տեսուչ նշանակելու մասին Բարձր Դռան կողմից Ռուսաստանին տրված համաձայնության կապակցությամբ: Նրա կարծիքով, տերությունների այդ առաջարկության ընդունումն ունենալու է «դրական արդյունքներ», թեև թերահավատորեն էր վերաբերվում այն բանին, որ տեսուչները կարողանալու են կատարել իրենց վրա դրված դժվարին պարտականություններն ընդարձակ այդ տարածքի վրա: Մալլետի համոզմամբ, շատ բան կախում ունի ընտրված տեսուչների կարողություններից, որոնք պետք է կարողանան պատժել հանցագործներին և օրենքները խախտողներին: Հետաքրքրական է, որ դեսպանն ամբողջովին համաձայնում էր Վանում փոխհյուպատոս Սմիթի այն տեսակետի հետ, որ հայերի մեծամասնության ձգտումները կրում են ավելի տնտեսական, քան քաղաքական բնույթ, քանի որ հայերն առաջին հերթին «վաճառականների ազգ են»: Եթե Դուռը կառուցի ճանապարհներ, երկաթգիծ, շարժիչավոր մակույկներ աշխատեցնի Վանա լճում, համապատասխան պայմաններ ստեղծի այդ վիլայեթներում առևտրի զարգացման համար, գրում էր Սմիթը Մալլետին, Հայկական հարցը ընդհանրապես կդադարի գոյություն ունենալուց:143

Սակայն Ռուսաստանի կառավարությունը չի բավարարվում Բարձր Դռան դեկտեմբերի 24-ի պատասխանով, քանի որ նրանում բացակայում էին այնպիսի կարևոր կետեր, ինչպիսիք էին սեկտորները կազմող վիլայեթների անվանումները, գլխավոր

---

142 Նույն տեղում, էջ 535:
143 Heller J. Op.cit., p. 110.
տեսուչների բարձրաստիճան պաշտոնյաներին կառավարության հաստատմանը ներկայացնելու և մնացածին նշանակելու իրավունքները, սեկտորների պաշտոնյաների կեսը մշտապես քրիստոնյա նշանակելու, իրավական համակարգը բարենորոգելու, բնակիչների կողմից միմիայն իրենց սեկտորներում զինվորական պարտականության կատարման առաջարկները: Դեկտեմբերի 26-ին Սազոնովը հանձնարարում էր Գիրսին շարունակել բանակցությունները Բարձր Դռան հետ նշյալ կետերը բարենորոգումների ծրագրում նախատեսելու կապակցությամբ:144 Գերմանական դիվանագիտությունն անմիջապես փորձեց կանխել բանակցությունների հետագա ընթացքը, համարելով, որ արձանագրված արդյունքները կարևոր հիմք են հանդիսանում այլևս գլխավոր տեսուչների միջոցով բարենորոգումներն իրագործելու ճանապարհին: Մեծ Բրիտանիայում Գերմանիայի դեսպանությունն իր անհամաձայնությունն էր հայտնում բրիտանական կառավարությանը ռուսական առաջարկների կապակցությամբ, հայտարարելով, որ դրանք նոր են և ուստի չեն կարող ընդունվել Բարձր Դռան կողմից:145 Ֆորին Օֆիսն առանձնահատուկ ուշադրության չի արժանացնում գերմանական կառավարության Մեծ Բրիտանիայի աջակցությունն այդ հարցում ստանալու դիմումները: Գրեյը հանձնարարում է Մալլետին ներկայացնել իր տեսակետներն այդ կապակցությամբ: 1914 թ. հունվարի 25-

ին Մալլետը գրում էր Գրեյին, որ գերմանական դիվանագիտության պնդումներն իրականությանը չեն համապատասխանում և խնդիր են հետապնդում ստեղծել «սխալ տպավորություն» Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանության գործունեության մասին և կանխարգելել ռուս-թուրքական բանակցությունների հետագա ընթացքը:146

Չնայած Բարձր Դռան և գերմանական դիվանագիտության դիմադրությանը, ռուս դիվանագետները շարունակեցին բանակցությունները և պարտադրեցին երիտթուրքական կառավարությանը հունվարի 26-ին ստորագրել ռուս-թուրքական համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ: Փաստաթուղթը ստորագրեցին Կոստանդնուպոլսում Ռուսաստանի ժամանակավոր հավատարմատար Գուլկևիչը և մեծ վեզիր ու արտգործնախարար Սաիդ Հալիմ փաշան: Ըստ համաձայնագրի հիմնական դրույթների. 1/

_____
144 Sazonov S. Fateful Years. New York, 1928,
145 FO 371/2116/426, No. 37.
146 FO 371/2116/426, No. 41.

Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթներից կազմվում էր երկու սեկտոր (Էրզրում, Տրապիզոն, Սըվազ և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր), որոնց կառավարումը հանձնարարվում էր տերությունների համաձայնությամբ Բարձր Դռան կողմից նշանակվող երկու օտարերկրացի գլխավոր տեսուչների. 2/ տեսուչների իրավասությանն էր հանձնվում այդ հատվածների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի վերահսկողությունը, իսկ հարկ եղած դեպքում նաև բանակը. 3/ նրանք իրավունք էին ստանում պաշտոնից ազատել անընդունակ և նշանակել ստորին պաշտոնյաներին, դատի տալ պատժի ենթակա հանցանքների մեջ մեղադրվողներին, առաջարկություններ ներկայացնել Բարձր Դռանը բարձրաստիճան պաշտոնյաների թեկնածություններ, լուծել հողային վեճերը, առանձին դեպքերում ազատել դատական պաշտոնյաներին. 4/ օրենքները, հրովարտակները և պաշտոնական հաղորդագրությունները յուրաքանչյուր սեկտորում հրապարակվելու էին տեղական լեզուներով. 5/ կենտրոնական իշխանությունները չէին խոչընդոտելու համայնքներին հոգալու իրենց դպրոցների ծախսերը. 6/ խաղաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանյան հպատակ իր զինվորական պարտականությունը կատարելու էր այն շրջանում, որտեղ որ բնակվում էր. 7/ համիդիե հեծելազնդերը վերափոխվում էին պահեստի հեծելազորի. 8/ մինչև երկու սեկտորներում եղած տարբեր կրոնների, ազգությունների և լեզուների հարաբերակցությունը վերջնականապես պարզվելը (ինչը տեղի էր ունենալու մարդահամարի միջոցով՝ տեսուչների հսկողությամբ) Վանի և Բիթլիսի վիլայեթների ընդհանուր խորհուրդների և կոմիտեների անդամներն ընտրվելու էին հավասար թվով՝ մահմեդականներից և քրիստոնյաներից. 9/ եթե մեկ տարվա ընթացքում մարդահամար տեղի չունենար, Էրզրումի վիլայեթում նույնպես ընդհանուր խորհրդի անդամներն ընտրվելու էին հավասարության նույն սկզբունքով. 10/ մնացած վիլայեթների խորհուրդներն ընտրվելու էին համեմատական սկզբունքով. 11/ տեսուչների որոշմամբ հավասարության սկզբունքը կարող էր կիրառվեր ոստիկանության ու ժանդարմերիայի հավաքագրման ժամանակ, ինչպես նաև մյուս պաշտոնյաների բաշխման դեպքում:147

_____

147 Համաձայնագրի ամբողջ տեքստը տես՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 339-342; Сборник договоров России..., с. 421-424; Сборник дипломатических документов..., с. 162-165.

1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումը կարևոր իրադարձություն էր ինչպես արևմտահայության, այնպես էլ տերությունների դիվանագիտության, մասնավորապես, ռուս դիվանագետների համար, քանի որ 1878 թ. սկսած Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը կոնկրետ արտահայտություն գտավ միջպետական երկկողմ պայմանագրում: Թեև համաձայնագիրը հայերին չէր տալիս ակնկալվող ինքնակառավարման լայն իրավունքներ և նույնիսկ մի քայլ ետ էր նախապես ներկայացված ռուսական նախագծից, այնուամենայնիվ կիրառվելու դեպքում այն կարող էր ունանալ որոշակի դրական արդյունք: Հայկական շրջանների կառավարումը դրվում էր օտարերկրյա ներկայացուցիչների վերահսկողության ներքո, հաստատվում էր Ռուսաստանի առաջատար դերը Հայկական հարցում, նպաստավոր պայմաններ էին ստեղծվում հետագայում Արևմտյան Հայաստանի ազատագրման համար:

Ռուս-թուրքական համաձայնագիրը նկատելի ոգևորությամբ և լավատեսությամբ ընդունվեց բրիտանական կառավարության կողմից, քանի որ այն իրական հնարավորություններ էր ստեղծում բարենորոգումներն իրագործելու համար և, որ շատ ավելի կարևոր էր, ոչ Գերմանիային և ոչ էլ Ռուսաստանին առանձնակի առավելություններ և ազդեցություն չէր ապահովում Օսմանյան կայսրության այդ շրջաններում, այսինքն, չէր հակասում Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության շահերին: Այսպես, փոխարտգործնախարար Նիկոլսոնը մեծ լավատեսությամբ էր արտահայտվում ռուսական դիվանագիտության այս հաղթանակի կապակցությամբ, հույս հայտնելով, որ այն ունի բոլոր նախադրալները հաջողությամբ իրագործվելու համար, թեև մինչ այդ նախապատրաստված բոլոր ծրագրերը «բացարձակ անպտուղ էին իրենց արդյունքով»:148

Ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո սկսվում են գլխավոր տեսուչների թեկնածությունների քննարկումները: Հունվարի 30-ին Սազոնովը հանձնարարում է մեծ տերություններում իր դեսպաններին հայտարարել, որ համաձայնագրի դրույթների համաձայն և Ռուսաստանի կառավարության համոզմամբ, տերություններն առաջին հերթին պետք է համաձայնեն տեսուչների թեկնածությունների վերաբերյալ, որից

148 Heller J. Op.cit., p. 110.

հետո միայն ներկայացնեն Բարձր Դռան հաստատմանը: Գրեյը պատասխանում է, որ սկզբունքորեն կիսում է ռուսական կողմի կարծիքն այդ կապակցությամբ:149

Միաժամանակ ռուսական կառավարությունը կազմում և տերությունների քննարկմանն է ներկայացնում հետևյալ թեկնածությունները, որոնք ընտրված էին Եվրոպայի չեզոք պետությունների պաշտոնյաներից. Արևելյան Հնդկաստանում Հոլանդիայի մշտական ներկայացուցչի օգնական Վեստենենկը, Հոլանդիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Դուռմանը, գեներալ-մայոր Դեգիզն ու բելգիական Կոնգոյի նախկին փոխնահանգապետ Հենրին Բելգիայից, Նորվեգիայի ռազմական նախարարության

գլխավոր քարտուղար Հոֆը: Թեև Ֆորին Օֆիսը որոշակի դժգոհություն արտահայտեց Ռուսաստանի չափազանց ակտիվ մասնակցությամբ այդ հարցում,150 այնուամենայնիվ մարտի 10-ին Գիրսը հաղորդում էր Սազոնովին, որ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դեսպանները հայտնել են իրենց կառավարությունների համաձայնությունը ներկայացված թեկնածությունների առնչությամբ: Եռյակ Դաշինքի տերությունների հաստատումը ստանալու պես, մարտի 24-ին, Կոստանդնուպոլսում ավագ դեսպան, Ավստրո-Հունգարիայի ներկայացուցիչ Պալլավիչինին Բարձր Դռան քննարկմանն է ներկայացնում թեկնածությունների ցուցակը:151 Փետրվարի սկզբին Մալլետը հաղորդում էր Գրեյին, որ հայ առաջնորդարանը չէր ցանկանում ընդունել բելգիացիների թեկնածությունները, քանի որ Բելգիան որոշակի տնտեսական շահեր ուներ Թուրքիայում, ինչը կարող էր, ըստ հայերի, «վնասակար լինել իրենց անկախության համար»:152 Հետաքրքրական է, որ նույն կարծիքին էր նաև Բարձր Դուռը, սակայն այլ պատճառով: Նա հայտարարում էր, որ այդ պարագայում «Թուրքիայի մահմեդականները հայտնվելու են նույն մակարդակի վրա Կոնգոյի նեգրերի հետ»:153

_____

149 Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 354:
150 Heller J. Op.cit., p. 111.
151 Сборник дипломатических документов..., с. 177.
152 FO 371/2116/426, No. 34, 73, 82.
153 Van der Dussen W. The Question of Armenian Reforms in 1913-1914. – The Armenian Review, 1986, vol. 39, No. 1, p. 26.

Ապրիլի 15-ին Մալլետը հաղորդում էր Գրեյին, որ Բարձր Դուռն ընտրել է տեսուչների պաշտոնների համար նորվեգացի Հոֆին և հոլանդացի Վեստենենկին:154 Մայիսին տեսուչները ստորագրում են իրենց պայմանագրերը և հուլիսին պատրաստվում անցնել իրենց պարտականությունների կատարմանը: Վեստենենկը տեսուչ նշանակվեց Էրզրումի, Տրապիզոնի և Սըվազի վիլայեթները կազմող սեկտորի (նստավայրը՝ Սըվազ), իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները կազմող սեկտորի համար (նստավայրը՝ Վան): Տեսուչների բանակցությունները Բարձր Դռան նույնպես ընթանում էին բավականին բարդ պայմաններում: Մեծ վեզիր Հալիմ փաշան այդ օրերին արհամարանքով էր արտահայտվում ընտրված «ազահ» տեսուչների մասին, իսկ Մալլետը համոզված էր, որ տեսուչները Բարձր Դռան աջակցությունը երբևէ չեն ունենալու:155

Սակայն հայկական բարենորոգումների այդ ծրագիրը նույնպես մնաց թղթի վրա: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես երիտթուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց ռուս-թուրքական համաձայնագիրը և գլխավոր տեսուչների հետ ստորագրած պայմանագրերը: Վեստենենկն այդպես էլ չհասցրեց մեկնել Սեբաստիա, իսկ Հոֆն օգոստոսին ետ կանչվեց Բարձր Դռան կողմից:

1914 թ. օգոստոսից մինչև նոյեմբեր ընկած ժամանակաշրջանը Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը գրեթե ոչ մի տեղեկատվություն չէր ստանում երկրի արևելյան վիլայեթներում տիրող իրավիճակի մասին: Սեպտեմբերի վերջին Մալլետը զեկուցում էր Գրեյին, որ երիտթուրքերի և հայերի հարաբերությունները զգալիորեն սրվել են:156 Սեպտեմբերի 18-ին բրիտանացի հայտնի հասարակական և քաղաքական գործիչ Աննրին Ուիլյամսը գրում էր Գրեյին, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության վրա կախվել է ֆիզիկական ոչնչացման սպառնալիք, որովհետև թուրք նախարարները

որոշում են կայացրել «ազատել երկիրը հպատակ քրիստոնյա ազգություններից», որոնց վերագրվում էր կայսրության ներկայիս թուլությունը:157 Գրեյը պատասխանում էր, որ Մեծ Բրիտանիան իր

154 British Documents..., p. 548.
155 Heller J. Op.cit., p. 111.
156 Նույն տեղում:
157 Nassibian A. Britain and the Armenian Question. New York, 1984, p. 31.

ուժերի ներածին չափով փորձել է համոզել Բարձր Դռանը «պահպանել խաղաղությունը» և այլևս անկարող է անել ավելին:158

158 Heller J. Op.cit., p. 111.

## ԱՄՓՈՓՈՒՄ

19-րդ դ. սկզբին Մեծ Բրիտանիան դառնում է աշխարհի առաջատար և հզոր արդյունաբերական, առևտրական, գաղութատիրական տերություններից մեկը: Առաջ անցնելով Եվրոպայի մյուս տերություններից տնտեսական զարգացման մակարդակով, Մեծ Բրիտանիան ձգտում էր ամրապնդել իր առևտրաարդյունաբերական գերակշռությունը: Այդ նպատակի իրագործումն ուղեկցվում էր հարաբերությունների սրմամբ մյուս տերությունների հետ: Ձգտելով խոչընդոտել տերությունների գաղութատիրական ծրագրերին, բրիտանական կառավարությունը մշակեց ուժերի հավասարակշռության պահպանման քաղաքականություն, այն է՝ խուսափել որևէ եվրոպական տերության չափազանց հզորացումից և համապատասխանաբար իրականացնել նրա հանդեպ մերձեցման կամ թշնամության, սատարելու կամ ճնշելու քաղաքականություն:

19-րդ դ. 30-ական թթ. սկսած աստիճանաբար աճում է Մերձավոր Արևելքի և Բալկանյան թերակղզու նշանակությունը եվրոպական տերությունների քաղաքականության մեջ, սրվում նրանց մրցակցությունն Օսմանյան կայսրության նկատմամբ՝ քաղաքական և տնտեսական ազդեցություն հաստատելու նպատակով: Օսմանյան կայսրությունը գտնվում էր կարևորագույն ռազմավարական և առևտրական ճանապարհների քառուղիներում, որոնց նկատմամբ հսկողություն հաստատած յուրաքանչյուր եվրոպական պետություն կարող էր դառնալ աշխարհի հզորագույն տերություններից մեկը: Նման աշխարհաքաղաքական իրավիճակի ձևավորման արդյունքում Օսմանյան կայսրությունը դարձավ ուժերի հավասարակշռության եվրոպական համակարգի վճռորոշ հանգույցներից մեկը:

Նապոլեոնական Ֆրանսիայի պարտությունից հետո Մեծ Բրիտանիան սկսում է դիտել Ռուսաստանը որպես Եվրոպայում ուժերի հավասարակշռության պահպանմանը վտանգ ներկայացնող պետություն: Դեռևս 18-րդ դ. վերջին ռուս-թուրքական պատերազմների արդյունքում Ռուսաստանի տարածքային ձեռքբերումները սկսում են անհանգստացնել բրիտանական իշխանություններին, վկայել Եվրոպայում նոր հզոր ուժի երևան գալու մասին: Ռուսաստանի նոր հաջողությունները 1826-1828 թթ. ռուս-պարսկական և, հատկապես, 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ընթացքում էլ ավելի սրեցին Մեծ Բրիտանիայի մտահոգությունը: Բրիտանական կառավարության հակառուսական դիրքորոշումը վերջնականապես ձևավորվեց 1833 թ. Ունքյար-Իսքելեսիի ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումից հետո, որի համաձայն, կողմերը պարտավորվում էին մշտապես խորհրդակցել փոխադարձ անվտանգությանը վերաբերող հարցերի շուրջ, ինչպես նաև օգնել միմյանց երրորդ տերության հարձակման դեպքում:

Օսմանյան կայսրության նկատմամբ բրիտանական նոր արտաքին քաղաքական գծի մշակումն ու ձևավորումը համընկավ արտգործնախարար, իսկ հետագայում վարչապետ Փալմերսթոնի գործունեության հետ: Մերձավորարևելյան ուղղությունը նա համարում էր բրիտանական արտաքին քաղաքականության առաջնային և կարևորագույն խնդիրներից մեկը: Սկսած 30-ական թթ. Մեծ Բրիտանիան հանդես է գալիս Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման օգտին: Փալմերսթոնի մերձավորարևելյան քաղաքականությունը հետապնդում էր հետևյալ հիմնական նպատակները. ա/ թույլ չտալ Ռուսաստանի նոր միջամտություն և վերացնել Օսմանյան կայսրության հանդեպ հովանավորության հրա իրավունքը. բ/ ուժեղացնել Մեծ

Բրիտանիայի քաղաքական և տնտեսական ազդեցությունը Օսմանյան կայսրության հանդեպ, ապահովել նրա կախվածությունը բրիտանական իշխանություններից. գ/ ապահովել ռազմական, տնտեսական, իրավական բնույթի, քրիստոնյա ժողովուրդների իրավունքներին վերաբերող բարենորոգումների իրագործումը կայսրությունում: Թուրք պետական գործիչները հիմնականում ընդունեցին այդ առաջարկները, ենթադրելով, որ դաշինքն աշխարհի հզորագույն պետության հետ և բարենորոգումների իրագործումն առաջին քայլն է կայսրության գոյության, պահպանման և եվրոպականացման ճանապարհին:

Էթնիկական տեսակետից Օսմանյան կայսրությունն իրենից ներկայացնում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական տարբեր մակարդակների վրա գտնվող, մշակութային ու կրոնադավանական զանազան ընդհանրություններին պատկանող 60-ից ավելի ազգերի ու ցեղերի խառնարան: Քրիստոնյա ժողովուրդների տնտեսական դիրքերի ամրապնդումը, ազգային ինքնագիտակցության զարթոնքն ու եվրոպական տերությունների ճնշման ուժեղացումն անհնարին դարձրին սուլթանական իշխանությունների կողմից տարվող կայսրության համընդհանուր մահմեդականացման քաղաքականությունը: Թանզիմաթի առաջին շրջանը նշանավորվեց կայսրության քրիստոնյա հպատակների իրավիճակի հանդեպ նոր գաղափարների ծնունդով: Բարենորոգումների հեղինակ Ռեշիդ փաշան առաջ քաշեց կայսրության բոլոր հպատակների, առանց բացառության, կյանքի, ունեցվածքի և պատվի երաշխիքների ապահովման գաղափարը: Մինչև Ղրիմի պատերազմի սկիզբը կայսրությունում տարածում ստացավ բոլոր հպատակների միասնականության գաղափարը, որը հետզհետե սկսեց օգտագործվել որպես կայսրության թշնամիների և, առաջին հերթին, Ռուսաստանի դեմ երկրի բնակչության համախմբված պայքարի միջոց:

Բրիտանական դիվանագիտությունը լիովին պաշտպանեց և նպաստեց օսմանյան պետական գործիչների բարենորոգչական ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ազգային հարցում: Նրա մտահղացմամբ, միայն բարենորոգումների իրագործման միջոցով կարելի էր կանխել ազգային ազատագրական շարժումների աճը, կայսրության քրիստոնյա հպատակների ձգտումը՝ թոթափել օսմանյան լուծը Ռուսաստանի օգնությամբ: 1840-ական թթ. վերջին բրիտանական կառավարությունը մշակում և Բարձր Դռանն է ներկայացնում կայսրության քրիստոնյա բնակչության իրավիճակի բարելավման հետ առնչվող ծրագիր, որն արտահայտում էր ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլև մյուս արևմտաեվրոպական տերությունների քաղաքականությունը, որը կայանում էր Օսմանյան կայսրության ճնշված քրիստոնյա բնակչության իրավունքների պաշտպանության նախաձեռնությունը Ռուսաստանի ձեռքից առնելու մեջ:

Ղրիմի պատերազմի նախօրյակին աննախադեպ սրվեց Արևելյան հարցը՝ Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների ու Ռուսաստանի հարաբերություններին, թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի հաշվին ռազմաքաղաքական և տնտեսական առավելությունների հասնելու նրանց մրցապայքարին վերաբերող հիմնախնդիրների ամբողջությունը, որը դարձավ եվրոպական տերությունների մերձավորարևելյան քաղաքականության առանցքը: Իրենց յուրահատուկ շահերի հետ մեկտեղ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային և Ավստրիային միավորում էր երկու հիմնական խնդիր՝ բարենորոգումների միջոցով ապահովել Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ու տնտեսական հզորացումը և կանխարգելել քրիստոնյա հպատակների ազատագրական շարժումները:

1850-1853 թթ. բրիտանական դիվանագիտությունը և սուլթանական իշխանությունները համագործակցում էին կայսրության ոչ թուրք հպատակների ազատագրական շարժումների ճնշման խնդրում: Մեծ Բրիտանիան պահանջում էր Բարձր Դռնից պատժիչ միջոցներ կիրառել կայսրության այս կամ այն հատվածում ծագող հակաթուրքական ելույթները ճնշելու համար՝ Ռուսաստանի դիվանագիտական միջամտությունը կանխելու նպատակով: Հետզհետե աճում է բրիտանական հյուպատոսների դերն Օսմանյան կայսրության գավառներում: Այդ պաշտոններին նշանակվում էին չափազանց գործունյա և կարող անձնավորություններ, որոնք շատ դեպքերում ձեռք էին բերում զգալի հեղինակություն և ազդեցություն՝ նպատակ ունենալով հսկել բարենորոգումների իրագործումը տեղերում:

1853 թ. սկզբին Ռուսաստանի և Բրիտանիայի միջև սկսվում է ակտիվ քաղաքական երկխոսություն Օսմանյան կայսրության ապագայի և քրիստոնյա հպատակների իրավիճակի վերաբերյալ: Բրիտանական կառավարությունը հրաժարվում է Ռուսաստանի առաջարկից՝ համաձայնության գալու Օսմանյան կայսրության հնարավոր փլուզման դեպքում, և միաժամանակ զգուշացնում, որ չի հանդուրժելու սուլթանին հարկադրող որևէ քաղաքականություն:

Ղրիմի պատերազմի ողջ ընթացքում բրիտանական դիվանագիտությունն ակտիվորեն զբաղվում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների դրությունը բարելավելու և անհրաժեշտ բարենորոգումների գործընթացը եվրոպական բոլոր տերությունների հսկողության տակ դնելու խնդիրներով: 1856 թ. Փարիզի վեհաժողովի նախօրյակին հրապարակվեց կայսրության փոքրամասնությունների արտոնություններին և իրավունքներին, ֆինանսական, հարկային, իրավական և ոստիկանության համակարգերի բարենորոգումներին վերաբերող սուլթանի շնորհագիրը՝ Հաթթը Հումայունը: Օգտագործելով այդ հանգամանքը, բրիտանացի դիվանագիտները պնդեցին ձևակերպել պայմանագրում այն միտքը, որ տերությունները այսուհետ իրավունք չունեն, միասնաբար կամ առանձին, միջամտել կայսրության ներքին գործերին:

Թեև Փարիզի պայմանագրում հատուկ հիշատակում չկար Արևմտյան Հայաստանի մասին, սակայն այն անմիջականորեն վերաբերում էր արևմտահայության հետագա ճակատագրին: Պարտություն կրելով պատերազմում, ռուսական բանակն այնուամենայնիվ հաղթանակ էր տարել Կովկասյան ռազմաճակատում, գրավել Կարսն ու հայաշատ այլ շրջաններ: Ռուսաստանի ռազմական հաջողություններն ի ճիգ դարձվեցին Փարիզում, հիմնականում բրիտանական կառավարության քաղաքականության շնորհիվ: Ղրիմի պատերազմի արդյունքում բրիտանական դիվանագիտությունն էլ ավելի ամրապնդեց իր դիրքերն Օսմանյան կայսրությունում, սահմանափակելով իր գլխավոր հակառակորդի՝

Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը: Թեև Օսմանյան կայսրությունը ձևականորեն հայտնվեց պատերազմում հաղթանակած երկրների շարքում, այդուհանդերձ չկարողացավ լուծել իր առջև ծառացած լուրջ քաղաքական և տնտեսական դժվարությունները: Էլ ավելի մեծացավ երկրի կախվածությունն արևմտյան տերություններից, ուժեղացավ իշխանությունների ճնշումը քրիստոնյա փոքրամասնությունների հանդեպ, նոր թափ ստացան ազգային ազատագրական շարժումները:

1850-60-ական թթ. ընթացքում բրիտանական դիվանագետները փորձում էին համոզել սուլթանական իշխանություններին իրականացնել Հաթթը Հումայունում խոստացված բարենորոգումները, բարելավել ոչ թուրք ժողովուրդների դրությունը, հավասարեցնել մահմեդական և քրիստոնյա հպատակների իրավունքները, համոզված լինելով, որ, հակառակ դեպքում, Օսմանյան կայսրությանը սպառնում է մասնատում, նրա փլատակների վրա անկախ պետությունների ստեղծում, որոնք անմիջապես կհայտնվեն Ռուսաստանի ազդեցության ոլորտում: Մեծ Բրիտանիան ողջունեց բարեփոխումների շրջանի թուրք գործիչներ Ալի փաշայի և Ֆուադ փաշայի կողմից մշակված ձուլման կամ օսմանիզմի գաղափարախոսությունը, որի համաձայն, կայսրության բոլոր բնակիչները՝ անկախ նրանց ազգային կամ կրոնական պատկանելիությունից, հռչակվում էին օսմանյան պետության հպատակներ՝ օսմանցիներ, զրկելով ոչ թուրք ժողովուրդներին իրենց ազգային ինքնությունից:

Մեծ Բրիտանիան շարունակում էր աջակցել Բարձր Դռանը՝ ազգային ազատագրական շարժումների դեմ իր մղած պայքարում: Բրիտանական կառավարությունը ֆինանսական և բարոյական աջակցություն ցուցաբերեց Օսմանյան կայսրությանը Հերցեգովինայի և Զեյթունի ապստամբությունների ճնշման, իտալացի հեղափոխականների ակտիվությունը Բալկաններում կանխարգելելու, ինչպես նաև Չեռնոգորիայի հետ պատերազմում շահելու հարցերում: Բրիտանացի դիվանագետներին հետզհետե սկսում է անհանգստացնել թուրք իշխանությունների կողմից հայ բնակչության հանդեպ, մասնավորապես, Զեյթունում և Դիարբեքիրում իրագործվող հալածանքը, ինչը նույնպես կարող էր դառնալ Ռուսաստանի միջամտության առիթ:

Գլադստոնի կառավարման օրոք (1868-1874 թթ.) Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության առաջնային նպատակն է դառնում Եգիպտոսի և Սուեզի ջրանցքի նկատմամբ անմիջական հսկողության հաստատումը, ինչը հակասության մեջ էր մտնում Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման բրիտանական դիվանագիտության հիմնական սկզբունքի հետ: Դրանով է բացատրվում այդ ընթացքում Բրիտանիայի անտարբեր վերաբերմունքը Օսմանյան կայսրության ներքին խնդիրների՝ բարենորոգումների իրագործման, քրիստոնյա բնակչության ծանր կացության հանդեպ, թեև բրիտանական հյուպատոսները շարունակում էին ուսումնասիրել և տեղեկություններ հաղորդել կայսրության արևելյան վիլայեթներում քրիստոնյա բնակչության և, հիմնականում, հայերի հանդեպ կիրառվող, հետզհետե սաստկացող ճնշումների մասին:

Սուլթանական իշխանությունների քաղաքական, տնտեսական և ազգային ճնշումների հետևանքով 1875 թ. հունիսին Բոսնիայում և Հերցեգովինայում ծագած հզոր հակաթուրքական ապստամբությունն առաջացրեց խորը միջազգային ճգնաժամ: Օսմանյան կայսրության փլուզման և նրա փլատակների վրա նոր, ռուսամետ դիրքորոշում ունեցող պետությունների առաջացման վտանգը վերածվեց եվրոպական դիվանագիտության սուր մրցակցության խնդրի, որը սպառնում էր պատերազմի մեջ ներքաշել ողջ Եվրոպան: Բարենորոգումների անցկացման վերաբերյալ սուլթանական իշխանությունների բոլոր խոստումները մնացին չիրագործված: Մեծ Բրիտանիայի պնդմամբ 1856 թ. Փարիզի վեհաժողովում եվրոպական տերություններին տրված քրիստոնյա ժողովուրդներին հովանավորելու իրավունքը նրանց կողմից օգտագործվեց միմիայն Ռուսաստանի քաղաքականության սահմանափակման նպատակով:

1874-1880 թթ. Մեծ Բրիտանիայում իշխանության գլուխ էր կանգնած պահպանողական կուսակցության ղեկավար Դիզրայելին: Բալկանյան ապստամբության սկզբնական շրջանում բրիտանական դիվանագիտությունն այն կարծիքին էր, որ Բարձր Դուռն իր սեփական ուժերով պետք է լուծի ապստամբների հարցը: Սակայն երբ Ռուսաստանը, Ավստրո-Հունգարիան և Գերմանիան պայմանավորվեցին համատեղ դիվանագիտական քայլեր ձեռնարկել բալկանյան խնդրում, բրիտանական կառավարությունը սկսեց որոնել տերությունների համատեղ գործողությունների այնպիսի ձևեր, որոնք չկապեին նրան որոշակի պարտավորություններով: Մի կողմից Դիզրայելիին ձեռնտու չէր բալկանյան խնդրի խաղաղ կարգավորումը, սակայն մյուս կողմից նա չէր կարող հաշվի չառնել Մեծ Բրիտանիայի և ընդհանրապես Եվրոպայի հասարակական կարծիքը, որը տերությունների կառավարություններից պահանջում էր խնդրի շուտափույթ լուծում:

Միաժամանակ Գլադստոնի կողմից ղեկավարվող ուժեղ ընդդիմադիր լիբերալ կուսակցությունը շատ արագ էր արձագանքում պահպանողականների սխալներին, հարցերն անմիջապես ներկայացնելով խորհրդարանի քննարկմանը:

1876 թ. վերջին Դիզրայելին Փարիզի պայմանագիրը ստորագրած պետություններին առաջարկեց հրավիրել համաժողով Կոստանդնուպոլսում՝ Արևելյան հարցի քննարկման նպատակով: Միաժամանակ բրիտանական դիվանագիտությունը ձգտում էր ամեն ինչ անել, որպեսզի սուլթանական կառավարությունը մերժի տերությունների բոլոր առաջարկները: Նման քաղաքականության միջոցով բրիտանական դիվանագիտությունը փորձում էր պատերազմի մեջ ներքաշել Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը՝ նոր գաղութային տարածքներ ձեռք բերելու, Մերձավոր Արևելքում հզոր քաղաքական և տնտեսական ազդեցություն հաստատելու հեռանկարով:

1875-1878 թթ. ընթացքում, թուրքական իշխանությունների կողմից արևմտահայության հանդեպ իրագործվող ճնշման քաղաքականության ուժեղացմանը զուգընթաց, մեծանում է բրիտանական դիվանագիտության հետաքրքրությունը Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում տիրող իրավիճակի, քրիստոնյա բնակչության դրության նկատմամբ: Եթե մինչ այդ բրիտանական դիվանագիտական փաստաթղթերում հիմնականում տեղ էին գտնում Լիբանանի քրիստոնյաների կամ սլավոնների կացությանը, Բարձր Դռան և տեղական իշխանությունների կողմից մրանց հանդեպ կիրառվող քաղաքականությանը վերաբերող նյութեր, ապա սկսած 70-ական թթ. կեսերից արևմտահայության վիճակը և նրա նկատմամբ արդեն իսկ որոշակի քաղաքականություն դարձած թուրք պաշտոնյաների և քուրդ ֆեոդալակամ վերնախավի ճնշումները, հարստահարությունները, հրկիզումներն ու սպանությունները դառնում են բրիտանացի դիվանագետների ուշադրության առարկա: Նման հետաքրքրության պատճառը կայանում էր նրանում, որ բրիտանացի դիվանագետների գնահատմամբ, Արևմտյան Հայաստանն ուներ ռազմավարական կարևորագույն նշամակություն, որի գրավումը Ռուսաստանի կողմից կարող էր մեծագույն վնաս հասցնել Բրիտանական կայսրության շահերին:

Ստանալով Սան-Ստեֆանոյի ռուս-թուրքական հաշտության պայմանագրի տեքստը, բրիտանական կառավարությունն անհապաղ միջոցների դիմեց՝ Ռուսաստանին զրկելու Թուրքիայի հանդեպ տարած ռազմական հազթանակի պտուղներից: Դիզրայելին առաջարկեց նույնիսկ դիմել զենքի, բրիտանական ռազմանավերը ուղղություն վերցրին դեպի Մարմարա ծով, երկրում հայտարարվեց մասնակի զորահավաք: Ստեղծված ոչ նպաստավոր պայմաններում Ռուսաստանը հարկադրված էր ստորագրել

համաձայնագիր, որով նա հրաժարվեց Արևմտյան Հայաստանում իր գրված Բայազետ քաղաքից և Ալաշկերտի դաշտից: Բացի այդ, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցով զբաղվելու էր ոչ միայն Ռուսաստանը, այլև Մեծ Բրիտանիան: Բրիտանական կառավարությանը հաջողվեց նաև գաղտնի պայմանագիր պարտադրել Բարձր Դռանը, որի համաձայն Մեծ Բրիտանիան գրավում էր Կիպրոս կղզին՝ փոխարենը պարտավորվելով վերադարձնել պատերազմի ընթացքում Ռուսաստանի գրված հայկական տարածքները, ինչպես նաև պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ու շահերը:

1878 թ. Բեռլինի վեհաժողովում Մեծ Բրիտանիայի պատվիրակությունն օգտագործեց Հայկական հարցը սոսկ Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով: Նրան հաջողվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով, որը նշանակում էր զրկել Ռուսաստանին Արևմտյան Հայաստանի խնդիրների լուծման մենաշնորհի իրավունքից: Եթե 16-րդ հոդվածի համաձայն ռուսական զորքի ներկայությունը Արևմտյան Հայաստանում կարող էր հանդիսանալ բարենորոգումների իրագործման իրական երաշխիք, ապա 61-րդ հոդվածից չէր երևում, թե ինչպես են Եվրոպայի տերություններն հսկողություն իրականացնելու Բարձր Դռան կողմից ձեռնարկված միջոցառումների հանդեպ: Սան-Ստեֆանոյի պայմանագրում հիշատակվում էր Հայաստան անվանումը, իսկ Բեռլինի դաշնագրում խոսվում էր միայն հայաբնակ մարզերի մասին: Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն ընդհանրապես խուսափում էր Հայաստան աշխարհագրական անվանման օգտագործումից՝ ապագայում նույնիսկ ինքնավար շրջանի ստեղծումը բացառելու նպատակով: Օգտվելով բրիտանական քաղաքականության բարենպաստ դրսևորումներից, 61-րդ հոդվածի ոչ հստակ, հեղհեղուկ ձևակերպումներից, անմիջապես Բեռլինի վեհաժողովից հետո սուլթան Աբդուլ Համիդը որդեգրեց հակահայկական քաղաքականություն՝ վարչական միավորների վերաձևման և հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման միջոցով՝հայաբնակ շրջաններ՝հասկացությունը վերացնելու նպատակով:

19-րդ դ. 70-ական թթ. վերջին և 80-ական թթ. սկզբին բրիտանական դիվանագիտությունը զգալի եռանդ ցուցաբերեց հայկական բարենորոգումների հարցում: Մեծ Բրիտանիայի կառավարության նախաձեռնությամբ 1880 թ. եվրոպական տերությունները հայտագրեր ներկայացրին սուլթանական կառավարությանը՝ պահանջելով անհապաղ իրագործել բարենորոգումների վերաբերյալ ստանձնած իր պարտավորությունները: Մեծ Բրիտանիայի շահագրգիռ քաղաքականությունը Հայկական հարցում պայմանավորված էր Ռուսաստանին Արևմտյան Հայաստանից հեռու պահելու, ինչպես նաև Բարձր Դռան վրա մշտական ճնշում գործադրելով Եգիպտոսի գրավմանը հասնելու ձգտումով: 1882 թ. իրեն օգտին լուծելով Եգիպտական հարցը, 1880-ական թթ. երկրորդ կեսին բրիտանական կառավարությունը թուլացրեց իր քաղաքականությունը Հայկական հարցում, թեպետ Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ բրիտանական դիվանագիտության սևեռուն ուշադրության կենտրոնում:

1890-ական թթ. սկսած հակահայկական քաղաքականության սաստկացման կապակցությամբ Մեծ Բրիտանիայի կառավարությունը կրկին սկսեց եռանդուն կերպով հանդես գալ բարենորոգումների օգտին: Սակայն բրիտանական դիվանագիտության ձևական բողոքներն ու սպառնալիքները, Մեծ Բրիտանիայի հանրային կարծիքի ընդվզումը չկարողացան կանխել 1894-1896 թթ. Օսմանյան կայսրության բնակչության

կոտորածները: 1894 թ. Սասունի իրադարձությունները բողոքի ալիք բարձրացրին Մեծ Բրիտանիայում: Հասարակական կարծիքը մեղադրում էր բրիտանական կառավարությանը հայերի ողբերգության նկատմամբ անտարբերության և մեղսակցության մեջ: Ռոզբերիի լիբերալ կառավարությունը ստիպված էր միանալ եվրոպական տերությունների համատեղ գործողություններին՝ ի պաշտպանություն արևմտահայերի, պահանջելով Բարձր Դռնից հատուկ հանձնաժողով ստեղծել Սասունի ջարդը հետաքննելու համար: 1895 թ. սկզբին լիբերալ կուսակցությունը որպես խորհրդարանական ընտրությունների կարգախոս առաջ քաշեց հայկական բարենորոգումների և հայերի ազատագրության խնդիրը, իսկ Գլադստոնը ծավալեց հակասուլթանական քարոզչություն՝ պահանջելով Մեծ Բրիտանիայի անհապաղ միջամտությունը հայկական բարենորոգումների իրականացմանը:

1895 թ. ապրիլին բրիտանական կառավարությունը մշակեց բարենորոգումների նախագիծ, համաձայն որի Արևմտյան Հայաստանին փաստորեն տրվում էր ինքնավարություն՝ եվրոպական տերությունների հովանու ներքո: Մայիսին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Բարձր Դռանը ներկայացրին բարենորոգումների փոքր-ինչ ձևափոխված բրիտանական նախագիծը, որը սուլթանն այդպես էլ չիրագործեց: Հունիսին բրիտանական կառավարությունը քննարկեց Օսմանյան կայսրության դեմ նավատորմ օգտագործելու հնարավորությունը, սակայն որևէ որոշակի եզրակացության չհանգեց: Ռոզբերիի կառավարության անվճռական դիրքորոշումը Հայկական հարցում դարձավ նրա հրաժարականի պատճառը:

Բրիտանական հասարակայնությունը մեծ հույսեր էր կապում Սոլսբերիի պահպանողական կառավարության իշխանության գալու հետ՝ հավատացած, որ նա ելք կգտնի դուրս գալու մերձավորարևելյան ճգնաժամից և վերջ կտա սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությանը: Մի կողմից՝ բրիտանական կառավարության շահերը պահանջում էին պաշտպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, մյուս կողմից՝ առանց Ռուսաստանի աջակցության ու եվրոպական մյուս տերությունների համաձայնության Մեծ Բրիտանիան արդյունքի հասնել չէր կարող: Սոլսբերին ուղղեց իր ամբողջ ջանքերը Հայկական հարցում անգլո-ռուսական համագործակցություն հաստատելու նպատակին: Հմտորեն քաղարկելով Հայկական հարցում իր քաղաքականության իրական իմաստը՝ բրիտանական կառավարությունը փորձում էր մերթ Գերմանիայի, մերթ Ռուսաստանի հետ մերձեցմամբ օգտագործել այն իր ազդեցությունը Մերձավոր Արևելքում ընդլայնելու համար:

1895 թ. սեպտեմբերի Կոստանդնուպոլսի հայկական կոտորածների ժամանակ բրիտանական դիվանագետները բավականին եռանդ ցուցաբերեցին՝ հետագա ջարդը կանխելու համար: Սակայն ո՞չ հայտագրերը, ո՞չ էլ բրիտանական խորհրդարանում Թուրքիայի դեմ հնչող ելույթները շոշափելի դրական արդյունք չտվեցին՝ կոտորածները տարածվեցին նաև կայսրության շրջաններում: 1895 թ. վերջում Մեծ Բրիտանիայի կառավարությունը հայտարարեց, որ որևէ մեղք չունի Հայկական հարցում ստեղծված բարդ իրավիճակի համար և հանդես է գալիս միմիայն հօգուտ տերությունների համատեղ գործողությունների: Արևմտահայերի ողբերգությունը վերջնականապես ի դերև հանեց բարենորոգումները վերահսկելու բրիտանական կառավարության հույսերը:

Բրիտանական կառավարության և հասարակական շրջանակների հետաքրքրությունը Հայկական հարցի հանդեպ վերստին ուժեղացավ 1896 թ. աշնանը տեղի ունեցած

հայկական կոտորածների նոր ալիքի կապակցությամբ: Հոկտեմբերին Սոլսբերին դիմեց եվրոպական տերությունների կառավարություններին՝ հիմնավորելով համատեղ քայլերի անհրաժեշտությունը Հայկական հարցում և առաջարկեց հրավիրել տերությունների համաժողով՝ մերձավորարևելյան ճգնաժամը վերջնականապես կարգավորելու նպատակով:

Շուտով Կոստանդնուպոլսում գումարված տերությունների դեսպանների համաժողովը մշակեց նոր նախագիծ հայկական բարենորոգումների համար, սակայն այն նույնպես մոռացության տրվեց՝ սկսված հույն-թուրքական պատերազմի պատճառով:

20-րդ դ. սկզբին բրիտանական դիվանագիտությունը հրաժարվեց որևէ միջամտությունից Հայկական հարցում, վախենալով արագացնել Փոքր Ասիայի մասնատման գործընթացը, որը կարող էր ավարտվել ոչ իր օգտին, և, դեռևս հույս ունենալով, որ թուրքական իշխանությունները կփորձեն բարենորոգումների միջոցով բարելավել իրավիճակը հայկական շրջաններում: Սակայն երիտթուրքական կառավարությունը ոչ միայն չէր պատրաստվում իրականացնել որևէ բարենորոգումներ երկրի արևելյան շրջաններում, այլև հրահրում էր ազգամիջյան թշնամանք, սատարում և քաջալերում տեղական իշխանությունների անօրինականությունները, հայերին պատկանող հողատարածքների բռնագրավումը, Բալկաններից գաղթաց փախստականների բնակեցումը, քրդական ջոկատների ավերիչ հարձակումները հայկական բնակավայրերի վրա, հայկական բնակչության թալանն ու կոտորածները:

Թուրքիայի պարտությունն առաջին Բալկանյան պատերազմում միայն անուղղակիորեն էր շոշափում Մեծ Բրիտանիայի շահերը: Նրա համար ամենամեծ վտանգը կարող էր լինել Ռուսաստանի հաջողությունը Արևմտյան Հայաստանում, որը կսպառնար բրիտանական քաղաքական և տնտեսական նկրտումներին Մերձավոր և Միջին Արևելքում: Տերությունների միջև ստեղծված ոքժերի հավասարակշռության պայմաններում Թուրքիայի արևելյան շրջանների տարածքային ամբողջականության պահպանումը համապատասխանում էր Մեծ Բրիտանիայի շահերին: Հենց այդ դիրքերից էր բրիտանական կառավարությունը մոտենում այդ ընթացքում Ռուսաստանի կողմից արծարծված հայկական բարենորոգումների հարցի քննարկմանը, ձգտելով առավելագույնս օգտագործել այդ բանակցությունները իր նպատակների համար:

1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը բարենորոգումների վերաբերյալ լավատեսորեն ընդունվեց բրիտանական կառավարության կողմից, քանի որ այն իրական հնարավորություն էր ստեղծում բարենորոգումներն իրագործելու համար և, որ շատ ավելի կարևոր էր, ոչ Գերմանիային, ոչ էլ Ռուսաստանին առանձնակի առավելություններ չէր ապահովում Օսմանյան կայսրության այդ շրջաններում, այսինքն չէր հակասում Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության շահերին: Սակայն հայկական բարենորոգումների այդ ծրագիրը նույնպես մնաց թղթի վրա: Առաջին համաշխարհային պատերազմը սկսելուն պես երիտթուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց ռուս-թուրքական համաձայնագիրը: Նոյեմբերի սկզբին, այդպես էլ չկարողանալով ապահովել երիտթուրքական կառավարության չեզոքությունը պատերազմում, Մեծ Բրիտանիայի կառավարությունը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

Այսպիսով, 1830-ական – 1914 թթ. ընթացքում բրիտանական դիվանագիտությունը հաջողությամբ իրականացրեց Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից իր առջև

դրված Կոստանդնուպոլիսը, նեղուցներն ու Արևմտյան Հայաստանը Ռուսաստանից պաշտպանելու գերխնդիրը, սակայն այդպես էլ չկարողացավ կյանքի կոչել հայկական բարենորոգումների ծրագրերն ու ապահովել արևմտահայության անվտանգությունը գալիք աշխարհամարտի ընթացքում: 1915 թ. գարնանը, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից, երիտթուրքական կառավարությունը կազմակերպեց և իրագործեց արևմտահայերի տեղահանությունն ու ջարդը, իր համար վերջնականապես «լուծելով» հայկական բարենորոգումների և ընդհանրապես արևմտահայության հարցը: Մեծ Բրիտանիայում բարձրացավ զայրույթի և բողոքի հսկայական ալիք, սակայն այս անգամ բրիտանական դիվանագիտությունը հնարավորություն չունեցավ միջամտելու այլևս նոր բնույթ և բովանդակություն ստացած Հայկական հարցին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԱՌԱՋԱԲԱՆ 2

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 19-ՐԴ ԴԱՐԻ 30-70-ԱԿԱՆ ԹԹ. 14
1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
2. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ 25
3. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ 1850-ԱԿԱՆ ԹԹ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ 32
4. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԻՆ - 70-ԱԿԱՆ ԹԹ. ՍԿԶԲԻՆ 57

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 1875-1878 թթ. ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 77
1. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱԼԿԱՆՅԱՆ ԽՆԴԻՐԸ 1875-1877 թթ 77
2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՍՏ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ 95
3. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1877-1878 թթ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 104
4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ 115

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1878-1892 ԹԹ 132
1. ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 1878-1880 ԹԹ. 132
2. ԳԼԱԴՍՏՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ 1880-1885 ԹԹ 173
3. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1885-1892 ԹԹ. 221

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ 236
1. ԳԼԱԴՍՏՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1892-1894 թթ. 236

517 2. ՌՈԶԲԵՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1894 Թ. ՍԱՍՈՒՆԻ ԴԵՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ 1895 Թ. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ 278
3. ՍՈԼՍԲԵՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ (ՀՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ) 317
4. 1895 Թ. ԲՐԻՏԱՆԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ336
5. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1895 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1896 Թ. ՕԳՈՍՏՈՍ) 341
6. 1896 Թ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾԸ 398
7. 1896 թ. ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 407
8.ՍՈԼՍԲԵՐԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ 415

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ 428
1. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 1900-1914 ԹԹ. 428
2. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹԹ. 459

ԱՄՓՈՓՈՒՄ 488

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 500
1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ 500
2. ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 500
3. ՕՐԱԳՐԵՐ, ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 504
4. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ 505
5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ 513

Գլխավոր | Ֆորում | Անվանացանկ

Արման Կիրակոսյան

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Բովանդակություն Տիտղոսաթերթ Առաջաբան
Գլուխ առաջին Գլուխ երկրորդ Գլուխ երրորդ Գլուխ չորրորդ Գլուխ հինգերորդ
Ամփոփում Գրականության ցանկ Բովանդակություն (ըստ աղբյուրի)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

1.Public Record Office, London: FO 424: Confidential Print, Turkey; 371: Foreign Office Political Correspondence; 881: Confidential Papers Relating to Foreign Affairs; CAB 37: Cabinet Papers, 1880-1914.

2.ՀՀ Կենտրոնական Պատմական Արխիվ. ֆ. «Փաստաթղթերի քաղվածքների հավաքածո», 57:

3.Архив внешней политики России (АВПР): ф. Политический архив, Канцелярия.

2. ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

British Documents on Ottoman Armenians (Ed. by Bilal Simsir). Vol. 2 (1880-1890). Ankara, 1983; Vol. 3 (1891-1895), Ankara, 1989, Vol. 4 (1895), Ankara, 1990.

British Documents on the Origin of War. 1898-1914. Vol. X, London, 1936.

Correspondence Respecting the Condition of Protestants in Turkey. 1853-1854 (In Continuation of Papers presented to both Houses of Parliament in 1851). London, 1854.

Correspondence Respecting Protestant Missionaries and Converts in Turkey. London, 1865.

Eastern Papers. Part V. Communications Respecting Turkey made to Her Majesty`s Government by the Emperor of Russia, with the Answers returned to them. January to April 1853. London, 1854.

Eastern Papers. Part V111. Protocol Signed at Vienna on the 8th of April, 1854, by the Representatives of Austria, France, Great Britain and Prussia. London, 1854.

Eastern Papers. Part 1X. Protocol Signed at Vienna on the 23rd of May, 1854 by the Representatives of Austria, France, Great Britain and Prussia. London, 1854.

Eastern Papers. Part X111. Papers Relating to the Negotiations at Vienna on the Eastern Question. London, 1855.

Eastern Papers. Part XV1. Instructions to Lord John Russell on Proceeding to Vienna. London, 1855.

Eastern Papers. Part XV. Communications with the Austrian Government. London, 1855.

Eastern Papers. Part XV11. Firman and Hatti-Sherif by the Sultan, Relative to Privilegies and Reforms in Turkey. London, 1856.

Eastern Papers. Part XV111. Correspondence Respecting Christian Privileges in Turkey. London, 1856.

Eastern Papers. Part LXVII (1875-1876). London, 1883.

Eastern Papers. Part LXVIII (1876-1877). London, 1884.

German Diplomatic Documents. 1871-1914. Vol. 1. London, 1928.

Hansard Parliamentary Debates. 3-rd Series. Vol. 97, London, 1848; B-rd Series. Vol. 79, London, 1853.

Hansard`s Parliamentary Debates. Vol. 240, London, 1878.

House of Commons, 1833, July 11. Opinions and Policy of Palmerston. London, 1852.

Lord Salisbury`s Conversations with the Tzar at Balmoral, 27 and 29 September, 1896. – The Slavonic and East European Review, 1960, vol. 34, No. 92, December.

Papers Relating to Administrative and Financial Reforms in Turkey. 1858-1861. London, 1861.

Protocol of Conferences Held at Paris Relative to the General Treaty of Peace. London, 1856.

Reports received from Her Majesty`s Consuls Relating to the Condition of Christians in Turkey, 1860. London, 1861.

Reports received from Her Majesty`s Ambassador and Consuls Relating to the Condition of Christians in Turkey, 1867. London, 1867.

Russia No 2 (1877). Correspondence Respecting the War between Russia and Turkey. London, 1877.

Turkey, No 2. (1876). Correspondence Respecting Affairs in Bosnia and Herzegovina (1875-1876). London, 1876.

Turkey, No 16 (1877). Reports by Her Majesty`s Diplomatic and Consular Agents in Turkey Respecting the Condition of the Christian Subjects of the Porte. 1868-1875. London, 1877.

Turkey, No 17 (1877). Instructions Addressed to Her Majesty`s Embassy at Constantinople Respecting Financial and Administrative Reforms and the Protection of Christians in Turkey, 1856-1875. London, 1877, Part 1.

Turkey, No 1 (1876-1877). Correspondence Respecting the Conference in Constantinople and the Affairs in Turkey. London, 1877.

Turkey, No 15 (1877). Further Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1877.

Turkey, No 16 (1877). Reports by Her Majesty`s Diplomatic and Consular Agents in Turkey Respecting the Condition of the Christian Subjects of the Porte. 1865-1875. London, 1877.

Turkey, No 1 (1878). Further Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1878.

Turkey, No 27 (1878). Further Correspondence Respecting the Preliminary Treaty of Peace between Russia and Turkey signed at San-Stefano. London, 1878.

Turkey, No 36 (1878). Correspondence Respecting the Convention between Great Britain and Turkey of June 4, 1878. London, 1878.

Turkey, No 39 (1878). Correspondence Relating to the Congress of Berlin with the Protocol of the Congress. London, 1878.

Turkey ,No 51 (1878). Correspondence Respecting Reforms in Asiatic Turkey, London, 1878.

Turkey, No 53 (1878). Further Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1878.

Turkey, No 54 (1878). Further Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1878.

Turkey, No 1 (1880). Correspondence Respecting the Comission sent by the Porte to Inqure into the Condition of the Vilajet of Aleppo. London, 1880.

Turkey, No 10 (1879). Correspondence Respecting the Condition of the Population in Asia Minor and Syria. London, 1879.

Turkey, No 4 (1880). Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1880.

Turkey, No 23 (1880). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1880.

Turkey, No 7 (1880). Correspondence Respecting the Affairs of Turkey. London, 1880.

Turkey, No 6 (1881). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asia Minor and Syria. London, 1881.

Turkey, No 1 (1889). Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey. 1888-1889. London, 1889.

Turkey, No 1 (1890). Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey and the Trial of Moussa Bey. London.

Turkey, No 1 (1890-1891). Correspondence Respecting the Condition of the Population in Asiatic Turkey and the Proceedings in the Case of Moussa Bey. London, 1891.

Turkey, No 1 (1892). Further Correspondence Respecting the Condition of the Populations in Asiatic Turkey. London, 1892.

Turkey, No 3 (1896). Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey. 1892-1893. London, 1896.

Turkey, No 1 (1895). Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty`s Concular Officers in Asiatic Turkey. London, 1896, Part 1.

Turkey, No. 1 (1896). Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty`s Consular Officers in Asiatic Turkey. London, 1896.

Turkey, No. 2 (1896). Correspondence Relative to the Armenian Question and Reports from Her Majesty`s Concular Officers in Asiatic Provinces. London, 1896.

Turkey, No. 8 (1896). Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey (In Continuation of Turkey No. 2 (1896)). London, 1896.

Turkey, No. 1 (1909). Correspondence Respecting the Constitutional Movement in Turkey. 1908. London, 1909.

Turkey, No. 1(1897). London, 1897.

58. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) /Պրոֆ. Ջ.Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ: Երևան, 1972:

59. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов / Под редакцией проф. М.Г.Нерсисяна. Ереван, 1982.

60. Сборник договоров России с другими государствами. 1856-1917. М., 1952.

61. Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 – 10 мая 1914 гг. (Оранжевая книга). Петроград, 1915.

62. Секретная записка русского посла в Лондоне Е.Е.Стааля о беседе с лордом Солсбери. - В кн.: Проблемы британской истории, М., 1973.

3. ՕՐԱԳՐԵՐ, ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

63. Cecil G. Life of Robert Marquis of Salisbury. London, 1921.

64. Djemal Pasha. Memories of a Turkish Statesman, 1913-1919. London, 1922.

65. Jenkins R. Gladstone. London, 1996.

66. Kennedy A.L. Salisbury. 1830-1903. Portrait of a Statesman. London, 1953.

67. Knaplund Paul. Gladstone`s Foreign Policy. New York, London, 1935.

68, Magnus P. Gladstone. A Biography. London, 1954.

69. Malcolm-Smith E.F. The Life of Stratford Canning. London, 1933.

70. Monypenny W.F. and Buckle G. The Life of Disraeli. Vol. VI.

71. Taylor R. Salisbury. London, 1975.

72. The Memoirs of Ismail Kemal. London, 1920.

73. Pears E. Life of Abdul Hamid. New York, 1917.

74. Pears E. Forthy Years in Constantinople. The Recollections of Sir Edwin Pears (1873-1915). London, 1915.

75. Sazonov S. Fateful Years. New York, 1928.

76. Victoria Queen. Letters. Vol. II. London, 1926.

77. Gilbert M. Winston S.Churchill. Vol. 3: 1914-1916. London, 1971.

78. Виноградов К.Б., Науменков О.А. На службе британского колониализма (Страницы политической биографии лорда Солсбери). – Новая и новейшая история, 1981, No. 1.

79. Витте С.Ю. Воспоминания. Т. 2, М., 1960.

80. Из дневника В.Н.Ламздорфа. – Вопросы истории, 1977, No. 6.

4. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

81. A Vanishing Treaty. - The Spectator, 1890, vol. 65, August 9.

82. Abbott G. Turkey in Transition. London, 1909.

83. Abbott L. Armenian Question. – The Outlook, 1896, vol. 54.

84. At Colchester. - Liberal Magazine, 1896, úctober 20.

85. Americans and Armenians. - The Spectator, 1896, vol. 76, February 1.

86. Antoine E. Les Massacres d'Armenie. Bruxelles, 1897.

87. Armenia and the Powers: From Behind the Scenes. - The Contemporary Review, 1896, vol. 69.

88. Beales D. From Castlereagh to Gladstone. 1815-1885. London, 1971.

89. Blaisdell D.C. European Financial Control in the Ottoman Empire. New York, 1929.

90. Bliss E.M. Turkey and Armenian Atrocities. Philadelphia, 1896.

91. Bourne K. The Foreign Policy of Victorian England. 1830-1902. Oxford, 1970.

92. Bryce J. Transcaucasia and Ararat. London, 1896.

93. Clayton C.D. Britain and the Eastern Question: Missolonghi to Gallipoli. London, 1971.

94. Cunningham A. Stratford Canning and the Tanzimat. Beginnings of Modernization in the Middle East. Chicago, 1968.

95. Czar`s Visit. - The Spectator, 1896, vol. 77, September 26.

96. Davey R. Turkey and Armenia. - The Fûrtnightly Review, 1895, vol. 63.

97. Davison R. The Armenian Crisis, 1912-1914. New York, 1948.

98. Dawson W.H. Richard Cobden and Foreign Policy. London, 1926.

99. De Novo J. American Interests and Policies in the Middle East. 1900-1939. Mineapolis, 1963.

100. Dillon E.J. The Fiasco in Armenia. - The Fortnightly Review, 1896, vol. 65.

101. Dillon E.J. Armenia: An Appeal. - The Contemporary Review, 1896, vol. 69.

102. Douglas R. Britain and the Armenian Question. 1894-97. - The Historical Journal, 1976, No. 19.

103. Gabrielian M.S. Armenia: A Martyr Nation. A Historical Sketch of the Armenian People from Tradition Times to the Present Tragic Days. New York, 1918.

104. Gladstone W.E. Bulgarian Horrors and the Question of the East. London, 1876.

105. Gleason J.H. The Genesis of Russophobia in Great Britain. London, 1950.

106. Godkin E.L. The Armenian Resolutions. - The Nation, 1896, vol. 62, January 30.

107. Gordon L.J. American Relations with Turkey (1830-1930). Philadelphia, 1932.

108. Grenville J.A.S. Lord Salisbury and Foreign Policy. London, 1964.

109. Gulesian M.H. England`s Hand in Turkish Massacres. - The Arena, 1897, vol. 17.

110.Gulesian M.H. Armenian Refugees. - The Arena, 1897, vol. 17.

111. Heller J. British Policy Towards the Ottoman Empire. 1908-1914. London, 1983.

112. Hepworth H. Through Armenia on Horseback. London, 1898.

113. Hovannisian R. Armenia on the Road of Independence 1918. Berkeley-LA., 1967.

114. Hovannisian R. The Armenian Holocaust. Cambridge-Mass., 1978.

115. Howard H. The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1923. University of Oklahoma Press, 1931.

116. Jefferson M.M. Lord Salisbury and the Eastern Question, 1890-1898. - The Slavonic and Eastern European Review, 1960, vol. 39, No. 92, December.

117. Kalopothakes D. The Constantinople Massacres. - The Nation, 1896, October 8.

118. Kedourie E. England and the Middle East. The Destruction of the Ottoman Empire. 1914-1921. London, 1956.

119. Kedourie E. Young Turks, Freemasons and Jews. - Middle Eastern Studies, 1971, No. 1.

120. Kirakossian J. The Armenian Genocide: The Young Turks Before the Judgment of History. Madison-Connecticut, 1992.

121. Kurkjan V.M. A History of Armenia. New York, 1958.

122. Langer W.L. Diplomacy of Imperialism. 1890-1902. Vol. 1, New York, 1935.

123. Lanin E.B. Armenia and the Armenian People. - The Fortnightly Reviw, 1890, vol. 54.

124. Lee Dwight E. Great Britain and the Cyprus Convention Policy of 1878. Cambridge, 1934.

125. Lord Rosebery`s Deliverance. - The Spectator, 1896, vol. 77, October 17.

126. Lord Salisbury and Armenia. - The Nation, 1895, vol. 61, August 15.

127. Lord Salisbury in Turkey. - The Spectator, 1895, vol. 75, December 7.

128. Maccoll M. The Constantinople Massacre and its Lesson. - The Contemporary Review, 1895, vol. 68.

129. Mangasarian M. Armenia's Impending Doom. - The Forum, 1896, vol. 21, p. 452.

130. Marsh P. Lord Salisbury and the Ottoman Massacres. - The Journal of British Studies, 1972, May, vol. X1, No. 2.

131. Massacre in Turkey. From Oct. 1, 1895, to Jan. 1, 1896. - Review of Reviews, 1896, vol. 13.

132. McDermot G. The Great Assassin and the Christians of Armenia. - The Catholic World, 1896, vol. 64, December.

133. Melson R. A Theoretical Inqiry into the Armenian Massacres of 1894-1896. - Comparative studies in Society and History, 1982, vol. 24, No. 3, July.

134. Mirak R. Armenian Emigration to the United States to 1915. - Journal of Armenian Studies, 1975, Autumn, vol. 1.

135. Mr. Gladstone on Armenia. - The Spectator, 1895, vol. 75, August 10.

136. Nassibian A. Britain and the Armenian Question. London, 1984.

137. Our Failure in Turkey. - The Spectator, 1895, vol. 75, December 14.

138. Paelian G.H. Landmarks in Armenian History. New York, 1942.

139. Papadopoulos G.S. England and the Near East. 1896-1898. Thessalonika, 1969.

140. Park J.H. British Prime Ministers of the Nineteenth Century. Policies and Speeches. New York, London, 1950.

141. Pears E. Turkey and its People. London, 1911.

142. Penson L.M. The Principles and Methods of Lord Salisbury`s Foreign Policy. - Cambridge Historical Journal, 1935, vol. 87-106.

143. Peterson T. Turkey and Armenian Crisis. - The Catholic World, 1895, vol. 61.

144. Roberts Ch. A Mother of Martyrs. - the Atlantic Monthly, 1899, vol. 83.

145. Rohrbach P. The Contribution of the Armenian Question. - The Forum, 1900, vol. 29, No. 4.

146. Russell G.W.E. Armenia and the Forward Movement. - The Contemporary Review, 1897, vol. 71.

147. Sarkissian A.O. History of the Armenian Question to 1885. Urbana, 1938.

148. Seton-Watson R.W. Disraeli, Gladstone and the Eastern Question. A Study in Diplomacy and Party Politics. New York, 1962.

149. Shahid Bey S. Islam, Turkey and Armenia and How They Happened. St, Louis, 1898.

150. Somakian M.J. Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920. London, 1995.

151. Stead W.T. The Eastern Ogre; or St. George to Rescue. - The Review of Reviews, 1896, vol. 14.

152. Stride W.K. The Immediate Future of Armenia; The Suggestion. - The Forum, 1896, vol. 22.

153. Temperley H.W.V. The Victorian Age in Politics, War and Diplomacy. Cambridge, 1928.

154. Temperley H.W.V. England and the Near East. The Crimea. London, 1936.

155. Temperley H.W.V. and Penson L.M. Foundations of British Foreign Policy from Pitt (1792) to Salisbury (1902). Cambridge, 1938.hgggffddss hjkkkk.hhh hhhhhhhhhh ...,,,...,,,

156. Terrell A.W. An Interview with Sultan Abdul Hamid. – The Century Magazine, 1897, vol. 55.

157. The Constantinople Massacre. - The Contemporary Review, 1896, vol. 70.

158. The Evil of the Turk. - The Outlook, 1895, vol. 52, August 24.

159. The Massacres. - The Spectator, 1896, September 5, vol. 77.

160. The Suspense in Constantinople. - The Spectator, 1895, vol. 75, October 12.

161. The Armenian Question. - The Spectator, 1895, vol. 75, July 27.

162. The Armenian Reforms. - The Spectator, 1895, vol. 74, May 18.

163. The Situation of To-day. - The Spectator, 1896, vol. 77, October 3.

164. Trumpener U. Liman von Sanders and the German-Ottoman Alliance. – Journal of Contemporary History, 1966.

165. Turkish Atrocities. The Joung Turks and the Truth about the Holocaust at Adana in Asia Minor, during April, 1909, London, 1913.

166. Van der Dussen W. The Question of Armenian Reforms in 1913-1914. – The Armenian Review, 1986, vol. 39, No. 1.

167. Walker J. Christopher. The Survival of a Nation. New York, 1980.

168. Webster C.K. The Foreign Policy Of Palmerston: Britain, the Liberal Movement and the Eastern Question. Vol. 2, London, 1951.

169. Williams A.W., Gabrielian M.S. Bleeding Armenia. Its History and Horrors. Nez York, 1896.

170. Williams Ch. The Armenian Campaign. A Diary of the Campaign of 1878 in Armenia and Koordistan. London, 1878.

171. Wittlin A. Abdul Hamid. The Shadow of God. London, 1949.

172. Woods Ch. The Danger Zone of Europe. London, 1911.

173. Zeidner Robert F. Britain and the Launching of the Armenian Question. - International Journal of Middle East Studies, 1976, No 7.

174. Բայրամյան Լ. Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում: Երևան, 1982:

175. Բայրամյան Լ. Հայկական հարցը և Անգլիան 1890-ական թթ. – Պատմաբանասիրական հանդես, 1979, No 1:

176.Գալոյան Գ. Պատմության քառուղիներում: Երևան, 1982:

177. Գանգրունի Հ. Հայ հեղափոխությունը Օսմանյան բռնատիրության դեմ (1890-1910): Բեյրութ, 1983:

178. Ինճիկյան Հ.Գ. Օսմանյան կայսրության անկումը: Երևան, 1984:

179.Լեռ. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը: Հ. Ա.: Փարիզ, 1934:

180.Խուրշուդյան-Լ. Հայկական Հարցը: Երևան, 1995:

181.Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (X1X դարի 70-ական թթ.): Երևան, 1978:

182.Կիրակոսյան Ջ. Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և անգլիական դիվանագիտությունը. - Բանբեր Երևանի Համալսարանի, 1878, Հ. 1:
183.Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.): Երևան, 1980:

184.Կիրակոսյան Ջ. Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1982:

185.Կիրակոսյան Ա.Ջ. Հայկական հարցը ԱՄՆ-ի ամսագրերի էջերում (19-րդ դարի 90-ական թթ.): - ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1984, No 1:

186.Համբարյան Ա. Երիտթուրքերի ազգային ու 0հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914): Երևան, 1979:

187.Հայկական Հարց. Հանրագիտարան: Երևան, 1996:

188.Պողոսյան Ս.Կ. Գոյատևման պայքարի քառուղիներում: Երևան, 1988:

189.Մարկոսյան Ս.Մ. Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին: Երևան, 1968:

190.Մկրտչյան Լ. Զեյթունի ապստամբությունը 1895-1896 թթ., Երևան, 1995:

191.Սիմոնյան Հր.Ռ. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը: Երևան, 1986:

192.Վարդանյան Հ.Գ. Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները 19-րդ դարի վերջին քառորդում: Երևան, 1967:

193.Տիգրանյան Տ. Անգլիան և հայերը: Երևան, 1994:

194.Амфитеатров А. Армянский вопрос. С.Петербург, 1906.

195Арутюнян Г.М. Англия и Армянский вопрос в середине 90-х годов Х1Х века. – Новая и новейшая история, 1959, No. 6.

196.Арутюнян Г.М. Политика Англии в Армянском вопросе в 90-х годах Х1Х века и позиция великих держав (проблематика, источниковедческий и историографический обзор). – Вестник Ереванского университета. Общественные науки, 1988, No. 2-3.

197.Болховитинов Н.Н. О позиции Солсбери в Восточном вопросе осенью 1896 г. - В кн.: Проблемы британской истории, М., 1973.

198.Бондаревский Г.А. Английская политика и международные отношения в бассейне Персидского залива (конец Х1Х – начало ХХ вв.). М., 1968.

199.Борьян Б.А. Армения, международная дипломатия и СССР. Ч. 1, М.-Л., 1928.

200.Братская помощь пострадавшим в Турции армянам. М., 1898.

201Вандаль А. Армяне и турецкие реформы. СПб, 1908.

202.Внешнеэкономические связи Османской империи в ховое время (конец ХУ111 – начало ХХ в.). М., 1989.

203.Восточный вопрос во внешней политике России (конец ХУ111 - начало ХХ века) /В.А. Георгиев, Н.С.Киняпина, М.Т.Панченкова и др. М., 1978.

204.Галеви Э. История Англии в эпоху империализма. Т. 1, М., 1957.

205.Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А. Очерки истории Турции. М., 1983.

206.Гринвальд М. Английская дипломатия за 25 лет (1892-1916). – Морской сборник, 1926, No 8-9.

207.Гутор М.Д. Новейшая история Турции и Персии. Ч. 1, Тифлис, 1913, с. 67-68.

208.История дипломатии. Т. 1, М., 1959; Т. 2, М., 1963.

209.Истягин Л.Г. Экспанция германского империализма в Турции и русско-германские противоречия по Армянскому вопросу, 1912-1914 гг. – В кн.: Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959.

210.Камаровский Л. Восточный вопрос и его жертвы. - Новое слово, 1896, декабрь.

211.Киракосян А.Дж. Великобритания и Армянский вопрос (90-е годы Х1Х века). Ереван, 1990.

212.Киракосян А.Дж. Армянский вопрос на страницах журналов Великобритании (середина 90-х гг. Х1Х в.). – ЦНИОН АН, Ереван, 1980.

213.Киракосян А.Дж. Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника Спектейтор (90-е гг. Х1Х в.). – ЦНИОН АН, Ереван, 1982.

214.Коджоян Р. Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны. Дис., канд., ист., наук. – Ереван, 1989.

215.Кочар М. Армяно-турецкие общественн-политические отношения и Армянский вопрос в конце Х1Х – начале ХХ в. Ереван, 1988.

216.Кургинян Е.А. Европейская дипломатия и Армянский вопрос в 90-х годах Х1Х в. – Ученые записки Московского областного пединститута, 1968, Т. 191, вып. 9.

217.Лазарев Я.Д. Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна. Тифлис, 1895.

218.Оруджев М.Г. Из истории проникновения германского империализма в Турцию. Баку, 1961.

219.Петросян Ю.А. Турция. – В кн.: Зарождение идеологии национально-освободительного движения (Х1Х – начало ХХ вв.), М., 1973.

220.Положение армян до вмешательства держав в 1895 году. М., 1896.

221.Ротштейн Ф.А. Международные отношения в конце Х1Х века. М.-Л., 1960.

222.Саркисян Е.К. Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти Х1Х и начале ХХ вв. Ереван, 1972.

223.Сафрастян Р.А. Доктрина османизма в политической жизни Османской империи (50-70 гг. Х1Х в.). Ереван, 1985.

224.Силин А.С. Из истории политики Бисмарка в восточном вопросе в 1870-1890 годах. - В кн. Вопросы истории внешней политики СССР и международных отношений. М., 1976.

225.Силин А.С. Экспансия Германии на Ближнем Востоке в конце Х1Х в. М., 1971.

226.Сказкин С. Конец австро-русско-германского союза. Т. 1, М., 1928.

227.Степанян С. Армения в политике империалистической Германии (конец Х1Х – начало ХХ века). Ереван, 1975.

228.Тарле Е.В. Англия и Турция. Исторические корни и развитие конфликта. – Анналы, 1923, No 3.

229.Тароян К.З. Народные движения в Сасуне и других районах Западной Армении в 90-х годах Х1Х в.: Автореф. дис... канд. ист. наук. - Ереван, 1966.

230.Тодорова М.Н. Англия, Россия и Танзимат. М., 1983.

231.Тыркова А. Старая Турция и младотурки. Петроград, 1916.

232.Фадеева И.Л. Османская империя и англо-турецкие отношения в середине Х1Х в. М., 1982.

233.Хвостов В.М. Проблемы захвата Босфора в 90-х годах Х1Х в. - Историк-марксист, 1930, Т. 20.

234.Хвостов В.М. Ближневосточный кризис 1895-1897 гг. Х1Х в. – Историк-марксист, 1929, Т. 13.

235.Чихачев П.А. Великие державы и Восточный вопрос. М., 1970.

236.Шеремет В.И. Османская империя и Западная Европа. Вторая треть Х1Х в. М., 1986.

237.Шпаро О.Б. Захват Кипра Англией. М., 1974.

238.Шпилькова В.И. Из истории проникновения американского капитала в Турцию в Х1Х и начале ХХ века. – Ученые записки МГПИ им. Ленина, 1957, Т. С1Х, No 6.

5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Arena, 1895-1897, Boston.

Armenian Review, 1986.

Atlantic Monthly, 1899, Boston.

Cambridge Historical Journal, 1935.

Catholic World, 1895-1897, New York.

Century Magazine, 1895-1897, New York.

Contemporary Review, 1894-1897, London.

Fortnightly Review, 1890, 1895, 1896, London.

Forum, 1896, 1900, New York.

Historical Journal, 1976, London.

Journal of Armenian Studies, 1975, Cambridge.

Journal of British Studies, 1972, London.

Journal of Contemporary History, 1966, London.

Liberal Magazine, 1896, London.

Middle Eastern Studies, 1971, London.

Nation, 1895-1899, New York.

Outlook, 1895-1897, New York.

Review of Reviews, 1895-1897, New York.

Saturday Review, 1895, London.

Slavonic and East European Review, 1960, London.

Spectator, 1890, 1891, 1895, 1896, London.

260.Բանբեր Հայաստանի արխիվների, 1971, Երևան:

261.Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, 1984, Երևան:

262.Հայաստան, 1891, Լոնդոն:

263.Հայք, 1893-1895, Նյու-Յորք:

264.Հնչակ, 1894-1896, Լոնդոն:

265.Նոր կյանք, 1898, Լոնդոն:

266Պատմաբանասիրական հանդես, 1979, Երևան:

267.Анналы, 1923, М.

268.Вестник Европы, 1895-1897, СПб.

269.Вестник Ереванского университета. Общественные науки, 1988.

270.Историк-марксист, 1929-1934, М.

271.Кавказ, 1895-1897, Тифлис.

272.Морской сборник, 1926, Л.

273.Новая и новейшая история, 1959, 1978, 1981, М.

274.Новое время, 1895, 1912-1914, СПб.

275.Новое слово, 1895-1896, СПб.

276.Ученые записки МГПИ им. Ленина, 1957, М.